ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՀՐԱՄԱՆԱՒ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆԻԿՈԼԱՅ ՎԱՍԻԼԻԱԴԻՍ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ուսումնաօժանդակ ձեռնարկ

Թարգմանությունը ռուսերենից՝
Գրիգոր Դարբինյանի

Հունարեն բնագրի հետ համեմատությունը և խմբագրումը՝
Շահե վրդ. Անանյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2014

ՀՏԴ 22:902 (07)
ԳՄԴ 86.37+63.4 g7
Վ 262

Տպագրվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի
և ԳՀՃ գիտխորհրդի

Թարգմանությունը ռուսերենից՝
Գրիգոր Դարբինյանի
Հունարեն բնագրի հետ համեմատությունը և խմբագրումը՝
Շահե վրդ. Անանյանի

Լեզվաոճական խմբագիր՝ Անահիտ Ավետիսյան

Վասիլիադիս Նիկոլայ

Վ 262 Աստվածաշունչը և հնագիտությունը/ Ն. Վասիլիադիս; Թարգմ.՝ Գ. Դարբինյան; Խմբագիր՝ Տ. Շահե վրդ. Անանյան.- Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2014.- 504 էջ:

Ն. Վասիլիադիսի Աստվածաշունչը և հնագիտություն գիրքը թարգմանված է աշխարհի բազմաթիվ լեզուներով: Այն միաժամանակ աստվածաշնչական հնագիտության բնագավառի հիմնական դասագիրք է համարվում բազմաթիվ քրիստոնեական ճեմարաններում: Հեղինակի կողմից ի մի է բերվել հնագիտության բազմաբնույթ և չափազանց հետաքրքրական տվյալներ, որոնք փաստում են Աստվածաշունչ մատյանում ներկայացված պատմական իրողությունների վավերականությունը:

Գիրքն իբրև լրացուցիչ ձեռնարկ կարող է սեղանի գիրք դառնալ հոգևոր ճեմարանների ուսանողների, ինչպես նաև աստվածաշնչագիտությամբ հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 22:902 (07)
ԳՄԴ 86.37+63.4 g7

Հունարեն բնագրի հետ համեմատությունը կատարվել է ըստ՝
Νικολάου Π. Βασιλειάδη, Ἀρχαιολογία καὶ Ἁγία Γραφή.
Ἔκδ. δευτέρα, Αθήναι, 1996.

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ

ISBN 978-9939-59-143-8 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014

ԳԱՍԱԳԻՐՔԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
140-ԱՄՅԱԿԻՆ

ԽՈՍՔ ԹԱՐԳՄԱՆՉԻ

«Ամեն մարմին նման է խոտի, և մարդու ամբողջ փառքը նման է խոտածաղկի: Խոտը չորանում է, ծաղիկը թափվում, բայց Տիրոջ խոսքը մնում է հավիտյան» (Եսայի 40. 6-8):

Աստվածաշունչը՝ քրիստոնեության սրբազնագույն և նվիրական Մատյանը, եզակի արժեք ու հարգ ունի և իրավամբ մարդկության մշակութային ժառանգության և համամարդկային բազմադարյա գրականության գլուխգործոցն է: Շնորհվել է մարդկությանը շուրջ 1500 տարիների ընթացքում՝ Սուրբ Հոգու ներշնչանքով և Նրա իսկ կողմից ընտրյալ շուրջ 40 մատենագիր մարգարեների, ավետարանիչների և առաքյալների ձեռամբ: Աստվածաշունչը մատենագրվել է ստուգիվ և անսխալաբար սերնդեսերունդ փոխանցվելու (Բ Օր. 31. 24–26, Հեսու 24. 26) համար, որպեսզի «բոլոր մարդիկ փրկվեն և հասնեն ճշմարտության գիտությանը» (Ա Տիմ. 2. 4) և որ «կատարյալ լինի Աստծո մարդը և պատրաստ՝ բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմ. 3. 17): Գրքի աստվածային ծագումն իր արտացոլումն է գտել թե՛ անվանումների և թե՛ բնագրերում հանդիպող բազմապիսի և բազմաթիվ ուղղակի ու անուղղակի վկայությունների ձևով:

Այսպես՝ Աստվածաշունչն իբրև հատուկ անուն, որ բնորոշ է միայն հայերիս, փոխառված է Պողոս առաքյալի թղթերից. «Աստծո շնչով գրված ամեն գիրք» (Բ Տիմ. 3. 16), գրաբարում՝«Ամենայն գիրք աստուածաշունչք»: Իսկ Սուրբ Գիրք է կոչվում, քանզի սրբությունը Աստծո ստորոգելիներից է և ըստ այդմ սուրբ է կոչվում այն ամենը, ինչն իր վրա երկնային դրոշմն է կրում: Աստծո խոսքը նաև Գիրք գրոց է կոչվում, քանզի իրապես նրանից գերիվեր գիրք չկա:

Ընդսմին Սուրբ Գրքի աստվածային ծագումը՝ աստվածաշնչականությունը, ըստ Հայաստանյայց Եկեղեցու ուղղափառ

վարդապետության, օժտված է նաև արտաքին և ներքին հավատի այլ նշաններով՝ ապացույցներով: Արտաքին նշանը հավատն է, որը թե՛ խոր ներքին համոզմունք է անտեսանելիի մեջ, թե՛ ըստ ս. Գր. Տաթևացու՝ ճանաչողության միջոց: Այսպես՝ աչքերով տեսնում ենք ֆիզիկական աշխարհը, մտքի աչքերով՝ իմանալի աշխարհը, իսկ հավատի աչքերով՝ հոգևոր աշխարհը, այսինքն՝ Աստծուն: «Ընդ որում,– գրում է եռամեծ վարդապետը,– բանականությունը, քանի որ ստեղծված է և սահմանափակ, չի կարող տեսնել անեզր ու անչափ Աստծուն: Այսպես է, օրինակ, իմաստունների պարագայում, ովքեր թեև մտքի գիտություն ունեն, սակայն Աստծուն չեն կարող ճանաչել առանց հավատքի»: Իսկ ըստ ս. Ն. Շնորհալու՝ հավատավորը նա է, ով «Սուրբ Գրքում գրված խոսքերը սուտ և առասպել չի համարում, այլ հավատում է, որ ճշմարիտ և ուղիղ են, որպես թե իր աչքերով է տեսնում այն բոլորը, ինչ եղել է, պիտի լինի և որ է»:

Բնագրի քննությամբ կամ բանականությամբ ճանաչվող մյուս չորս ներքին հավաստի նշաններից առաջինը Սուրբ Գրքի բովանդակության՝ օրենքների, պատվիրանների, իմաստության վսեմությունն է, որոնք ընդհանրության եզր իսկ չունենալով հեթանոսականի հետ՝ միանգամայն համահունչ են մարդու խղճմտանքին, որը աստվածաբանության մեջ, ի տարբերություն գրավոր օրենքի, այսինքն՝ Աստծո խոսքի, բանավոր օրենք է կոչվում՝ մարդու մեջ հաստատված: Եվ այս իմաստությունն ընկալելու ու այս օրենքների գործադրումով է, որ վերափոխվեց հեթանոսական ամբարիշտ ու չար աշխարհը, և նրանցով հունցվեցին համաշխարհային քաղաքակրթության նվաճումներն ու ընթացքը, ինչպես թթխմորը՝ ալյուրի զանգվածի մեջ:

Նվազ ուշագրավ չեն նաև գիտության հետ Սուրբ Գրքի ընդհանուր եզրերը, թեև այն բացառապես մարդու հոգու փրկության խորհուրդն ունի: Այսպես օրինակ՝ Եսայի մարգարեն գրում է. «Նա է, որ նստած է երկրի շրջածիրից վերև» (40. 22): Ընդ որում հայերեն «շրջածիրին» համարժեք եբրայերեն բառը «գնդի» և «սֆերայի» (ոլորտ՝ բոլորակ) իմաստն ունի: Այսինքն՝ Եսայի մարգարեն Քրիստոսի ծննդից մոտ 700 տարի առաջ և 2200 տարի առաջ նախքան մարդկանց՝ այդ մասին իմանալն արդեն ասում է, որ երկիրը գունդ է: Հոբի գրքում ասվում է. «Ոչնչի շուրջ փռեց երկինքը, կախեց երկիրը ոչնչի վրա» (Հոբ 26. 7): Ինչպե՞ս կարող է մեր

մոլորակն առանց ձգողականության կախված մնալ երկնքում՝ ոչնչի վրա: Այս հարցին հեթանոսական դիցաբանությունը պատասխանում էր յուրովի ու պարզունակ՝ փղի, կետ ձկան, ցուլի և այլնի վրա:

Երկրորդ հավաստի նշանը աստվածային մարգարեություններն են, որոնք Աստծո ամենագիտության ու ամենազորության ապացույցներից են: Աշխարհի բախտորոշ իրադարձությունների կանխասացությունները ինքնանպատակ չեն, այլ բացահայտում են Աստծո՝ բովանդակ տիեզերքը և պատմությունը տնօրինելու խորհուրդը, Նրա ծրագրերի անփոփոխելիությունը: «Քեզ պատմվեց մինչև այժմ կատարվածը, դեռ չեղած՝ դրանց մասին լուր տվի քեզ, որպեսզի երբեք չասես, թե՝ «Դրանք իմ կուռքերը կատարեցին», չասես, թե՝ «Քանդակվածները և ձուլածո կուռքերը պատմեցին ինձ»» (Եսայի 48. 5): Հիմնականում հինկտակարանյան 16 և մեկ նորկտակարանյան գրքերում և ամենուր ամփոփված այս մարգարեությունները, որոնք ծառայում են նաև մեր հավատքի զորացմանը, ս. Հ. Ոսկեբերանի բնորոշմամբ՝ «համոզում են ոչ պակաս, քան հրաշքները», և ինքնին բավական են՝ խոր համոզմունք ներշնչելու նրա երկնային ծագման նկատմամբ:

Երրորդ հավաստի նշանը ոճն է՝ վեհասքանչորեն պարզ, բայց ոչ պարզունակ, իր գեղեցկության մեջ անզուգական, դժվարըմբռնելի, անորսալի և, ինչպես վկայում է գերմանացի հանճարեղ բանաստեղծ Հ. Հայնեն. «Սա ի՞նչ գիրք է՝ մեծ ու ընդգրկուն՝ տիեզերքի խորքից մինչև երկնքի խորհրդավոր կապույտը ծավալված: Արդարև, դա Աստծո խոսքն է, մինչդեռ մյուս բոլոր գրքերը մարդկային արվեստի արգասիք են. Աստվածաշնչում արվեստի հետք իսկ չկա. անհնար է քննել նրա ոճը»:

Խոսելով վեհագույն ճշմարտություններից և շարադրելով կրոնաբարոյական ուսմունքներ և պատմական փաստեր՝ Աստվածաշունչն այնքան պարզ ու հստակ է, որ իր խորությամբ գերազանցում է մարդկային բանականությունը, բայց և մնում միշտ մատչելի անգամ երեխաների համար:

Վերջին հավաստի նշանը Սուրբ Գրքի բարերար ազդեցությունն է մարդու մտքի, հոգու և սրտի վրա, որը ճանաչվում է ոչ այնքան բանականությամբ, որքան փորձառությամբ: Աստվածաշունչը մյուս գրքերի նման տեղեկությունների, գիտելիքի և իմաստության ու խրատների պարզ հավաքածու չէ, թեև պարունակում

է այդ բոլորը, այլ «Աստծո զորություն է՝ ի փրկություն բոլոր հավատացյալների» (Հռոմ. 1. 16): Նրա խոսքն օժտված է ներգործուն զորությամբ՝ ունակ բուժելու, մխիթարելու, իմաստնացնելու, մաքրագործելու, բարությամբ և սիրով տոգորելու մեր հոգիները: Այլ կերպ ասած՝ այն մեր հոգիների սնունդն է. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից» (Մատթ. 2. 4): Իսկ Սուրբ Գրքի հանապազ ընթերցանության անտեսումը, Ամոս մարգարեի խոսքի համաձայն, «հոգու սով» (8. 11) է առաջացնում, ապականում բարի բարքերն ու խոր ճգնաժամ առաջացնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Աստծո խոսքը անդրաշխարհային և գերբնական է, սակայն մեզ է հասել պատմության ճանապարհով, ձեռք բերել ժամանակի և տարածության հատկանիշներ, ինչը նշանակում է, որ սրբազան մատյանի մեջ ընդգրկված 75 ամբողջական և ավարտուն գրքերից յուրաքանչյուրն ունի իր հեղինակը, ում շնորհվել է հայտնությունը, գրության տարեթիվը, վայրը, շարժառիթը, պատմական և գրական շրջանակը: Հետևաբար սրբազան բնագրերի արժանահավատության ու հարազատության խնդիրները, որոնք իրենց աներկբա ակնհայտությամբ հանդերձ աստվածաբանության մեջ աստվածաշնչականության ապացույցների շարքին չեն էլ դասվում, լույս են սփռում հայտնության վրա, քանզի վերջինս մեծավ մասամբ ի հայտ է գալիս պատմական դեպքերի մեջ: Ընդ որում պատմական արժանահավատություն կամ հարազատություն ասելով՝ հասկանում ենք՝ արդյո՞ք տվյալ գիրքը ճշմարտապատում է, ինչն ի հայտ է գալիս բնագրերի քննությամբ և արտաքին աղբյուրների վկայությամբ, և պատկանում է արդյո՞ք այն ժամանակին ու հեղինակին, ինչին և ում որ վերագրվում է: Եվ երկրորդ՝ արդյո՞ք մեզ է հասել նախնական ձևով: Աստվածաբանությունը սույն հարցերին վստահաբար դրական պատասխան է տալիս: Փաստորեն աստվածաշնչականությունն այն առանձնահատկությունն է, որը պայմանավորում է Սուրբ Գրքի անառարկելի հեղինակությունը, անսխալականությունն ու տարբերությունը մարդկանց ձեռքով գրված միլիոնավոր գրքերից, այդ թվում՝ նաև կոթողայիններից: Այս, ինչպես և անտեսանելի աշխարհն ու մարդու սրտի առեղծվածային խորքերը մտահայելու, մարդկային ամենանվիրական զգացմունքներին ու հարցումներին (որտեղի՞ց ենք, ո՞ւր ենք գնում, որտեղի՞ց են չարն ու բարին, կյանքն ու մահը,

ո՞րն է կյանքի իմաստն ու ճշմարտությունը) արձանգանքելու շնորհիվ Գիրք գրոցը եղել և այսօր էլ՝ գիտատեխնիկական դարաշրջանում, մնում է աշխարհի ամենաընթերցվող և ամենաշատ հրատարակվող գիրքը:

Սակայն միշտ չէ, որ այդպես է եղել: Թեև նրա հարգը գցելու փորձերը խոր անցյալ են գնում, սակայն այսօր Սուրբ Գրքի բացասական քննադատություն անվամբ հայտնի դպրոցը սկսել է աստիճաբար ձևավորվել բողոքական աշխարհում XVI–XVII դարերում: Սպինոզան, Լոկը, Սոմերսը և, իհարկե, Վոլտերն ու ուրիշները կասկածի տակ առան Սուրբ Գրքի արժանահավատությունն ու հարազատությունը: XVIII դ. արդեն մի խումբ «գիտնականներ» պնդում էին, թե իբր Մովսեսի գրչին է պատկանում Հնգամատյանի ընդամենը մի մասը, իսկ մնացյալը ուշ շրջանի ընդմիջարկումներ են: Ընդ որում Աստրյուկը՝ Լյուդիվիկոս թագավորի անձնական բժիշկը, այն թյուր կարծիքը հայտնեց, թե իբր Մովսեսը Հնգամատյանը պարզապես հավաքել է զանազան փոքր գրքերից, որոնցից յուրաքանչյուրի հիմքում մի առանձին ավանդություն է ընկած: Իսկ այդ ավանդությունների «ապացույցները» նա տեսավ Հնգամատյանում և այլ գրքերում գործածված Աստծո անուններից մեկին նախապատվություն տալու մեջ: Զարմանալիորեն այս անհիմն կարծիքը լայն տարածում գտավ, իսկ ավելի ուշ քննադատները Յահվեական և Էլոհիմական ավանդություններին հավելեցին նաև այլ ավանդություններ՝ Քահանայականն ու Բ Օրինացինը*: Ցավալի է, սակայն այս հեղինակներն առաջնորդվում էին միայն անձնական կարծիքներով, առանց արտաքին աղբյուրների վկայության, և ի վերջո Սուրբ Գիրքը հռչակեցին հրեաների հանճարեղ երևակայության արգասիք, յուրովի հոմերոսյան վիպասանություն կամ պարզապես մերձավորարևելյան քաղաքակրթություններից փոխառած մտացածին, ոչ պատմական կամ պարզապես առասպելների ժողովածու: Սակայն սրան զուգընթաց հնագիտության աստիճանական ձևավորումն ու առաջընթացը ծանր ու ջախջախիչ հարված էր հասցնելու այս դպրոցին:

Հնագիտությունը (ἀρχαιολογία՝ հին հունարեն հին և խոսք բառերից) վաղնջական ժամանակներից է ծնունդ առել, քանզի

* Այս մասին առավել հանգամանալից տես **Արշակ Տէր-Միքելեան**, Ուսումն Սուրբ Գրոց, Թիֆլիզ, 1900, էջ 33-43:

մարդկանց միշտ էլ հետաքրքրել է անցյալի մշակույթը: Ասորեստանցի արքա Աշուրբանիպալի հռչակավոր գրադարանում բազմաթիվ բնօրինակ կավե սալիկներ ու պատճեններ կային: Բաբելոնի արքա Նաբոնիդը պեղումներ է անցկացրել: Իսկ հույն պատմիչ Թուկիդիդեսը (Ք. ա. V դ.) և մեր քերթողահայր Մ. Խորենացին գործածում են հնախոս և հնախոսություն բառերը, որոնց տակ այնժամ հասկանում էին վաղնջականի մասին գիտելիքի ամբողջությունը: Սակայն ժամանակակից իմաստով առաջին նշանակալից քայլերն արվեցին 1798 թ. Նապոլեոնի եգիպտական արշավանքի ժամանակ, ով իր հետ գիտնականների, նկարիչների և անգամ բանաստեղծների մեծ խումբ էր վերցրել: 1824 թ. Շամպոլյոնին հաջողվում է վերծանել եգիպտական հիերոգլիֆները՝ մեհենագրերը: Կ. Յ. Ռիչի, Հ. Լեյարդի, Ժ. Պ. Բոտտայի և Հ. Ռոուիլսոնի, Չ. Ուորենի, Ֆ. Պետրիի և այլոց ջանքերով հողից կորզվեցին պատմության իրեղեն ապացույցները, վերծանվեցին մեռյալ լեզուներով սեպագիր արձանագրությունները: Միով բանիվ՝ հնագիտության և ի մասնավորի սուրբգրային հնագիտության արդյունքները ապշեցուցիչ էին և համահունչ աշխարհի հնագույն գրքի՝ Աստվածաշնչի տվյալներին:

Հենց այս չափազանց արդիական թեմային է նվիրված հույն աստվածաշնչագետի՝ Ն. Վասիլիադիսի «Աստվածաշունչ և հնագիտություն» գիրքը՝ գրված գիտական բարեխղճությամբ, որը այս թեմայով առաջին ամբողջական գիրքն է հայերեն (չհաշված առանձին գրքերի ոչ մեծ գլուխները և այսպես կոչված ժխտական քննադատության դպրոցի դիրքերից լույս տեսած մի քանի հրատարակություններ):

Ընդ որում հեղինակը, ի մի բերելով սուրբգրային հնագիտության պրպտումների արդյունքները, բանավիճում և կետ առ կետ հերքում է այդ դպրոցի կողմնակիցների տեսակետները, երբ էլ, ում կողմից էլ, ինչպես էլ դրանք արտահայտված լինեին: Հաշվի են առնվել նաև ռուսերեն թարգմանության ծանոթագրությունները:

Գ. Դարբինյան

ԻՆՉ Է ՏԱԼԻՍ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ

Ուրբ Գիրքն ուսումնասիրելիս կարիք ենք զգում կարելվույն չափ ավելին իմանալ աստվածաշնորհ մատենագիրների ավանդած անձանց ու դեպքերի մասին, որպեսզի արժանին հատուցենք նրանց առաքինություններին ու ըմբռնենք, թե այդ ամենն ինչ նշանակություն կարող է ունենալ մեր ժամանակների համար: Աբրահամ նահապետը, օրինակ, ապրել ու գործել է հեթանոսական աշխարհում, որի կենցաղավարությունն էապես տարբերվում է մերից: Բացահայտելով այդ աշխարհը՝ հնագիտությունը թույլ է տալիս ավելի բարձր գնահատել նահապետի մեծ հավատքն ու ապշել դրանից: Աստվածաշունչն իր իսկ ներկայացրած անձանց կյանքի մանրամասները չի արծարծում, չի տալիս նկարագրությունն այն պայմանների, որոնցում ապրում էին նրանք, այլ լոկ խոսում է այն մասին, ինչը ծառայում է աստվածային տնօրինության խորհրդին ու սրբազան նպատակին՝ մեր փրկության առնչությամբ: Հնագիտական պրպտումներն էապես լրացնում են այնօրյա աշխարհի պատկերը:

Ընդսմին սուրբգրային հնագիտությունն իր օժանդակությունն է բերում Աստվածաշունչ Մատյանի՝ մեզ համար բազում դժվարըմբռնելի տեղերի թարգմանությանն ու մեկնությանը: Հաճախ եբրայերենին մերձավոր ինչ–որ լեզվի կամ բարբառի մի բառ կամ մի արտահայտություն հասկանալի է դարձնում հինկտակարանյան համանուն բառը:

Բայց գլխավորն այն է, որ սուրբգրային հնագիտությունը հավաստում է աստվածաշնորհ մատենագիրների հաղորդած տեղեկությունների պատմականությունը, ստուգությունն ու ճշմարտացիությունը տարբեր անձանց, ժողովուրդների ու անցքերի վերաբերյալ: Շնորհիվ հնագիտական պեղածոների՝ այսօր Մերձավոր

Արևելքի ժողովուրդների կյանքի հասարակական, կրոնական ու պատմական ոլորտներն անհամեմատ լավ կարող են ընկալվել: Այսպիսով անվիճարկելի փաստարկներ ներկայացնելով՝ հնագիտությունը ջատագովության հզոր զենք է Սուրբ Գրքի արժանահավատության պաշտպանության անդաստանում: Շնորհիվ հնագիտական պեղածոների՝ Սուրբ Գրքի որոշ քննադատներ կա՛մ պապանձվելով պապանձվում են, կա՛մ իրենց եզրակացություններում առավել շրջահայաց դառնում: Սրանց թվում կան նույնիսկ այնպիսիք, ովքեր ոչ միայն փոխել են իրենց տեսակետը, այլև կենսակերպը՝ դառնալով հավատավոր քրիստոնյաներ ու Սուրբ Գրքի արժանահավատության ջերմեռանդ ջատագովներ:

Ասվածի ամենապերճախոս օրինակը անգլիացի Վիլյամ Ռամսեյի[1] ճակատագիրն է, մարդ, ով կատարելապես փոխվեց հնագիտական պրպտումների շնորհիվ: Սըր Վիլյամ Ռամսեյը մեկնում է Փոքր Ասիա՝ ապացուցելու, որ այն ամենը, ինչ հաղորդում է Ղուկաս ավետարանիչն իր Ավետարանում և Գործք առաքելոցում, հավաստի չէ: Սա ազնվականին ներշնչել էին նրա սկեպտիկ ուսուցիչները: Եվ Ռամսեյը մտադրվել էր հնագիտության միջոցով ցույց տալ այդօրինակ տեսությունների ճշմարտացիությունը:

Նա իր պեղումները սկսեց Հունաստանում ու Փոքր Ասիայում և փորձելով ամեն ինչ ստուգել՝ համակողմանիորեն տնտղեց իր գտածոները: Գիտնականը, ի մեծ զարմանս իրեն, բացահայտեց, որ Աստվածաշունչը արժանահավատ է մինչև իսկ իր ամենաանշան մանրամասնություններում: Այս փաստն այնպես ցնցեց Ռամսեյին, որ նա նախանձախնդիր քրիստոնյա դարձավ, իսկ հետագայում՝ մեծ աստվածաշնչագետ գիտնական: Նոր Կտակարանի պատմականությունը վավերացնող նրա աշխատասիրությունները դասական ու եզակի են նկատվում:

Ցավոք, մեր օրերում էլ կան դասախոսներ, ովքեր բիբլիական հնագիտության նորագույն պեղածոներից անտեղյակ՝ տակավին

1 Տես **Cobern C. M.** The New Archaeological Discoveries and Their Bearing upon te N. Testament. N. Y., Funk and Wagnalls, 1929. P. 413, 414. **Jauncey J.** Science Returns to God. Zondervan Publishing House, Grand Rapids, Michigan, 1966. P. 89. **Vos H. F.** An Introduction to Bible Archaeology. Moody Press, Chicago, 1959. P. 10.

կրկնում են այն, ինչ երեսուն տարի առաջ պնդում էր «բացասական քննադատության» դպրոցը: Ջոնս Հոպկինսի համալսարանի (ԱՄՆ, Բալթիմոր) դասախոս, ամենանշանավոր սուրբգրային հնագետներից մեկը՝ դոկտոր Վիլյամ Ֆ. Օլբրայթը, նրանց մասին գրում է հետևյալը. «Չափից դուրս սկեպտիցիզմը, որը Սուրբ Գրքի նկատմամբ ի հայտ բերեցին XVIII և XIX դարերի հեղինակավոր պատմական դպրոցները, սպառում է իրեն: Հայտնագործությունների կանգ չառնող շարանը հաստատեց անթիվ–անհամար մանրամասնությունների արժանահավատությունը, հենց որով էլ ձեռք բերվեց Աստվածաշնչի, իբրև պատմական աղբյուրի, լայն ճանաչումը»[1]: Մի այլ տեղ նա գրում է. «Կասկած չկա, որ հնագիտությունը հավաստել է Հին Կտակարանի ավանդությունների պատմականությունը»[2]:

1984 թ. ապրիլին Երուսաղեմում կայացավ Սուրբգրային հնագիտության առաջին միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին հազար երկու հարյուրից ավելի մարդ, այդ թվում՝ ավելի քան հինգ հարյուր ականավոր ժամանակակից հնագետ ավելի քան վաթսուն երկրից: Սույն վեհաժողովում հնագետ գիտնականները՝ քրիստոնյաները, հրեաները և որևէ դավանանքի չհետևողները, փաստեցին, որ մանրազնին ու բազմաթիվ հետազոտությունների արդյունքում իրենք արել են հետևյալ եզրակացությունները.

1) Սուրբ Գիրքն ու հնագիտությունը համահունչ են միմյանց:

2) Գիտական հնագիտության տվյալները միշտ մոտ են Սուրբ Գրքի տեղեկություններին:

3) Որքան ընդլայնվում է մեր գիտելիքների ծավալը և որքան շատ հնություններ են երևան գալիս, այնքան առավել են ի հայտ գալիս Աստծո խոսքի իսկության հավաստումները:

Հատկանշական է, որ վեհաժողովի մասնակիցները միաձայն, աներկբայորեն և վստահաբար հայտարարեցին, որ վեհաժողովին ներկայացված զեկուցումները «Սուրբ Գրքի պատմական

1 **Albright W. F.** The Archaeology of Palestine and the Bible. N. Y. Revell., 1935. P. 127..

2 **Albright W. F.** The Archaeology and the Religion of Israel. Rev. ed. The Johns Hopkins Press, Baltimore, 1955. P. 176.

արժանահավատության փայլուն ապացույցներ են»[1]: Այսպիսով, հնագիտության փաստերը հերքում են Սուրբ Գրքի քննադատների կարծիքները և հավաստում նրա պատմականությունը, քանզի այն, ինչ դարերի հոլովույթում մոռացության էր մատնված, իսկ ներկայումս կորզվում է երկրի ընդերքից, այնքան զգայացունց է, որ մեր առաջ ասես վերստին հառնում են ազգերը, ժողովուրդները, քաղաքակրթությունները, իսկ աստվածաշունչ խոսքն ավելի հասկանալի է դառնում բարեպաշտ հոգիների համար, ովքեր նրանում Արարիչ Աստծո խրատն ու առաջնորդությունն են փնտրում:

Ն. Վասիլիադիս

1 Տես “Bibelreport” Heft. 4. November, 1984. S. 5. - հանդեսը:

Մաս Ա

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ



ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ կարող է մեզ հաղորդել հնագիտությունը աշխարհի արարման վերաբերյալ: Գոնե աղոտ լուսաբանո՞ւմ է, թե ինչպես են գոյացել աշխարհն ու մարդը: Ժամանակ առ ժամանակ մյուս գիտությունները (աստղագիտություն, տիեզերաբանություն, կենսաբանություն, հնէաբանություն) իրենց սեփական տեսություններն են առաջարկում: Իսկ կարո՞ղ է հնագետը, բահով բավականաչափ փորփրելով, հայտնաբերել մի այնպիսի բան, որն ի զորու լինի մեզ օգնել:

Հին Կտակարանի առաջին գիրքը՝ Ծննդոցն, ընթերցելիս՝ տեսնում ենք, որ աստվածատես Մովսեսն առաջին տաս գլուխներում իր առաջ նպատակ է դրել կարճամփոփ շարադրել աշխարհի և մարդու արարմանը, պատվիրազանցությանը վերաբերող եղելությունները, ինչպես նաև այն, թե ինչպես են ի հայտ գալիս աստվածային արդարությունն ու մարդասիրությունը: Տասնմեկերորդ գլխից սկսյալ՝ Մովսես մարգարեն շարադրում է Աբրահամի և բովանդակ Իսրայելից ժողովրդի պատմությունը: Աշխարհի և մարդու արարչագործության եղելությունները նկարագրելիս՝ նա ձգտում է ցույց տալ այն հիմնական ճշմարտությունը, որ ամեն ինչում՝ և՛ հոգևոր, և՛ նյութական աշխարհում, ինչպես և ամեն մի իրողության մեջ տեսանելի է Արարչի ամենազոր ձեռքը: Նա արարում և կառավարում է աշխարհը, Նա պահպանում է այն, Նա պատժում է և Ինքն էլ փրկում:

Ծննդոց գրքի հեղինակը՝ սուրբ մարգարե Մովսեսը, Ամենասուրբ Հոգով լուսավորված, շարադրում է միայն այն, ինչն աղերս ունի այս մեծ ճշմարտությունների հետ, քանզի Սուրբ Հոգուն հաճո չէր նկարագրել բաներ, որոնք լոկ մեր հետաքրքրասիրությունը կշարժեին:

Այս ամենը նկատի ունենալով՝ առաջին հայացքից կարող է քիչ հավանական թվալ, որ բիբլիական հնագիտությունն ի զորու է փոքրիշատե օգնել Ծննդոց գրքի ժամանակակից հետազոտողին: Այդուհանդերձ, այս գիտությունը օգտակար նյութեր է մեզ տրամադրում:

Սուրբ Գրքի հավաստիությունը ժխտողներն ասում են, որ իբր թե Մովսեսը աշխարհի արարման ուսմունքը բաբելացիներից է փոխառել: Հենց այս հարցում էլ օգնության եկավ հնագիտությունը՝ երևան հանելով յոթ ասուրական սեպագիր սալիկներ, որոնք մեզ տեղեկություններ հաղորդեցին աշխարհի արարման վերաբերյալ բաբելոնյան վիպերգության մասին: Սույն յոթ սալիկները, որոնք ոմանց կողմից համեմատվում են արարչագործության յոթ օրերի հետ, Ք. ա. մոտավորապես 2–րդ հազարամյակի վերջում ստեղծված ավելի հին բաբելոնյան մի բնագրի պատճեններն են: Սրանք պատրաստվել էին Հին Արևելքի ամենանշանավոր գրադարաններից մեկի՝ Աշուրբանիպալ թագավորի (գահակալել է Ք. ա. 668–626 թթ.) արքունի գրադարանի համար: Այս բնագրի որոշ մասերը սկիզբ են առնում առավել վաղեմի շումերական առասպելներից, որոնք Ք. ա. 3–րդ հազարամյակին են վերագրվում:

Ներկայումս Բրիտանական (Լոնդոնի) թանգարանում պահվող այս սալիկները պատմում են չաստվածների՝ դիցերի ծագման մասին նախնական քաոսից, որի մեջ միախառնվելով՝ ի մի ձուլվեցին երկու չաստվածություն՝ Ապսուն ու Թիամաթը [1][1]: Սույն առասպելական չաստվածություններից էլ սերվեցին մյուսները: Վերջիվերջո ավելի երիտասարդ Մարդուկ դիցը հաղթեց Թիամաթին և նրա մարմինը հատելով երկու մասի՝ առաջինից ստեղծեց երկինքը, երկրորդից՝ երկիրը: Այնուհետև առասպելական Մարդուկ դիցն ստեղծեց մարդուն ու տիեզերքը: Մարդուն նա ստեղծեց՝ ապստամբ դիքերից մեկի արյունը խառնելով հողից վերցրած կավի հետ:

Այս ամենը համադրելով աստվածաշնորհ Մովսեսի ձեռամբ գրված Ծննդոցի առաջին երկու գլուխների բովանդակության հետ՝

1 Քառակուսի փակագծերը մատնանշում են խմբագրի ծանոթագրությունների հերթական համարը յուրաքանչյուր գլխի վերջում *(խմբագրի ծնթ.):*

իսկույն կեթ համոզվում ենք, որ բաբելացիների և հին շումերների պատումը ամբողջովին դիցաբանական է: Այս պատումի մեջ քառասից ինչ–որ տարօրինակ էակներ են գոյանում և մարտնչում իրար



Լուսատուների արարումը: Խճանկար Մոնրեալեից, Սիցիլիա:
Ք. հ. XII դար:

դեմ՝ մեկը մյուսին հաղթելու համար: Այստեղ առկա են և՛ էկզոտիկ բազմաստվածություն, և՛ ատելություն, և՛ հրեշներ, և՛ վայրագություն, և՛ հափշտակություններ, և՛ սպանություններ, և՛ թե այլ չարագործություններ, որոնցով, այսպես ասած, «զարդարված» են այս չաստվածությունները: Սրան հակառակ՝ Աստվածաշնչում տեսնում ենք Իմաստուն, Ամենազոր, Մշտնջենական ու Անսահ-

ման Աստծուն, Ում առաջ երկյուղածաբար խոնարհվում են բոլոր արարածները: Չափազանց մեծ պարզություն ու գեղեցկություն ենք տեսնում, բայց միաժամանակ՝ նաև վեհություն: Տեսնում ենք սքանչելի հերթականություն, արարման հաջորդական և հրաշալի գործողություն, որն սկսվում է պարզունակների և ավարտվում առավել կատարյալ արարածների արարմամբ, ինչը, իմիջիայլոց, հաստատվում է նաև արդի կենսաբանության կողմից: Արարման գործողությունը ի կատար է ածվում փառահեղորեն՝ միմիայն ամենակարող Աստծո կամոք[1]:

Ասենք, որ աշխարհի արարչագործության մասին բաբելոնյան պատումի բնագրի միայն մեկ վեցերորդ մասն է նվիրված աշխարհի ստեղծման թեմային, իսկ մնացյալ մեծ մասը հատկացված է այն պատմությանը, թե ինչպես էր Մարդուկը վարվում և իշխում մյուս չաստվածներին. այն եզրափակվում է նրա հիսուն անունները բովանդակող ցանկով: Ակնհայտ է, որ բաբելոնյան առասպելը հետապնդել է հեթանոսական դիցաբանության Մարդուկ անունով չաստվածությանը մեծարելու, ինչպես և այլ դիցապաշտական ցնդաբանության շարադրանքի նպատակ: Վերը հիշված այս ամենը վկայում է միաստվածության, Սուրբ Գրքի պատումների պարզության, վեհասքանչության և բազմաստվածության ու բաբելոնյան առասպելի ճարտարամտության միջև առկա հստակ և ցայտուն հակադրության մասին:

Քրիստոսի Եկեղեցու թշնամիների այն պնդումը, թե աշխարհի և մարդու արարման սուրբգրային պատումը իբր թե բաբելոնյան առասպելի պարզեցված ու հակիրճ վերաշարադրությունն է, բացարձակապես հիմնավորված չէ, քանի որ խոր անցյալում Մերձավոր Արևելքում ընդունված ընդհանուր կանոնի համաձայն՝ բարդ առասպելները ստեղծվում էին պարզ պատումների ավանդությունների հիմամբ՝ եղածների վրա լրացումներ և գունազարդումներ անելով, այլ ոչ թե հակառակը:

Նմանօրինակ զարգացման կարելի է հետևել Սեսոստրիսի մասին հին եգիպտական առասպելում, որն ուշ ավանդությունե-

1 **Thompson J. A.,** The Bible and Archaeology. The Paternoster Press Ltd, 1973. P. 13-14.

րի մեջ հին Եգիպտոսում Հիքսոսների թագավորական հարստության՝ դինաստիայի իշխանությամբ պայմանավորված՝ ավելի ու ավելի էր չափազանցություններով ուռճանում: Նույնը կարելի է տեսնել նաև Միջագետքում՝ Գիլգամեշի՝ Ուրուկ քաղաքի (սեպագիր սալիկները այսպես են ավանդում Ծննդոց գրքի 10. 10–ում հիշատակված Որեք քաղաքի անունը) առասպելական թագավորի մասին միֆերի ու լեգենդների զարգացման մեջ: Այսպիսով, Հին Արևելքի ժողովուրդների կողմից առասպելները ոչ պարզեցվում էին, ոչ էլ կեղծ պատմության տեսք ստանում (չէին պատմականացվում), ինչպես պնդում են Ծննդոց գրքի հակառակորդները[11]: Առհասարակ շումերների, բաբելացիների և ասորեստանցիների՝ աշխարհի արարման վերաբերյալ հին պատումները էապես տարբերվում են աստվածաշնորհ Մովսեսի ձեռամբ շարադրված աշխարհի արարման պատմությունից: Սրանք բոլորն էլ ըստ ամենայնի բազմաստվածային ու դիցաբանական են և որևէ աղերս չունեն աշխարհի վեցօրյա արարման մասին Ծննդոց գրքի պատումների հետ: Այսպիսով, հնագիտական վկայությունների համաձայն՝ սուրբ Մովսեսի պատումը բնավ էլ փոխառված չէ բաբելացիներից, ընդհակառակը, բաբելոնյան առասպելների մեջ բազում դիցաբանական տարրերով զարգացվում և լրացվում է աստվածատես Մովսեսի շարադրած՝ աշխարհի և մարդու արարման մասին արժանահավատ պատմական փաստը: Բաբելացիները, վերցնելով այն, ինչ հընթացս դարերի բերանացի ավանդվում

Դրախտի կենաց ծառը: Խճանկար Հռոմի ս. Կղեմեսի բազիլիկայից:

1 **Kitchen K. A.,** Ancient Orient and Old Testament. The Tyndale Press, L., 1966. P. 89.

Ասորեստանի արքա Աշուրբանիպալը (Ք. ա. 668-628 թթ.):

էր, դիցաբանական տարրերով լրացրին ու գրի առան:

Հարկ է հատուկ ընդգծել, որ այդ սալիկների հայտնաբերումը իսկական սենսացիա առաջացրեց: Հիշեցնենք, որ ընդհանուր առմամբ Աշուրբանիպալ արքայի հռչակավոր գրադարանում շուրջ երեսուն հազար սեպագիր սալիկ էր պահվում: Այս սալիկները պատահական սկզբունքով չէին հավաքված. դրանք պատմում են Միջագետքի պատմության և հոգևոր մշակույթի, ժողովուրդների, թագավորությունների ու նրանց ճակատագրերի, քաղաքակրթությունների ու կրոնների մասին, ինչպես և բովանդակում ջրհեղեղի մասին շումերական ավանդազրույցն ու Գիլգամեշի մասին վիպերգությունը: Եվ ահա շնորհիվ հնագիտության՝ հարյուր տարի առաջ հնադարյա քաղաքակրթության մասին առեղծվածային գիրքը, որը դարեր շարունակ փակ էր, անսպասելիորեն բացվեց, և այժմ յուրաքանչյուր ոք կարող է թերթել նրա էջերը: Մարդկանց միայն Հին Կտակարանից հայտնի իշխանները, քաղաքները, պատերազմներն ու անցքերը հառնեցին որպես պատմական վավերական իրողություններ: Այս վկայությունների մեջ կան նաև Ք. ա. 4–3–րդ հազարամյակներին վերագրվող սալիկներ: Հենց այս նույն սալիկներում հիշատակվում է նաև բիբլիական Որեք քաղաքը, որն ըստ Մովսես մարգարեի՝ մտնում էր Ներրոթի, ով «Քաջ որսորդ էր Աստծո առաջ» (Ծննդ. 10. 9–10), թագավորության կազմի մեջ: Սույն քաղաքը պեղել է գերմանացի հնագետ Հենրիխ Լենզեն[1]:

1 **Keller W.**, Ἡ Βίβλος ὡς ἱστορία λαῶν καὶ πολιτισμῶν. Ἀθῆναι, 1968, Σ. 342.

Նինվեի սալիկների բովանդակությանը հետագայում էլ ենք անդրադառնալու, որպեսզի հաստատենք Հին Կտակարանի տեղեկությունների պատմական հավաստիությունը: Ավարտելով խոսակցությունը հնագիտության՝ աշխարհի արարման սուրբգրային պատումի պաշտպանության անդաստանում ունեցած ավանդի մասին՝ հարկ է պատմել սենսացիա առաջացրած մի գտածոյի մասին: Խոսքը դրոշմված կնիքով մի մատանու մասին է, որը ներկայումս պահվում է Փենսիլվանյան համալսարանի (Ֆիլադելֆիա, ԱՄՆ) թանգարանում և թվագրվում է Ք. ա. մոտ 3500 թվականով: Այս կնիքը հայտնաբերվել է Փենսիլվանիայի համալսարանի աշխատակից Ե. Ա. Սպեյսերի կողմից Նինվեից մի քանի մղոն հյուսիս գտնվող Թեփե–Գավրա բլրի վրա՝ 1930–1932 թթ. պեղումների ընթացքում: Հավանաբար կնիքի վրա վերարտադրված է առաջին մարդկանց՝ Ադամի և Եվայի գայթակղության դրվագը, որոնց կողքին օձ է պատկերված: Բարտոնի կարծիքով այս մատանին, անտարակույս, ապացուցում է, որ «առաջին մարդկանց գայթակղության պատմությունը բավական հին է»[1]: Նինվեում ավելի վաղ անցկացված պեղումների ժամանակ գտնվեց մի ուրիշ կնիք, որն այժմ պահվում է Բրիտանական թանգարանում և որի վրա կենտրոնում ծառ է պատկերված, աջից՝ տղամարդ, ձախից՝ կին, որ պտուղ է մաքրում, իսկ նրանց ետևում՝ ուղղահայաց վիճակում օձակերպ մի էակ[2]: Սույն երկու կնիքներն էլ վկայում են առաջին մարդկանց գայթակղության միևնույն պատմության մասին, որն առկա է Հին Կտակարանում:

Մանոթագրություն

1. «Ապսու» բառը (շումերական «աբզու»-ի սեմական հնչյունափոխված տարբերակը) բառիս իսկական իմաստով նշանակում է համաշխարհային քաղցրահամ օվկիանոս: Ըստ հին Միջագետքի բնակիչների՝ երկիրը հենված կամ «լողում» է այս օվկիանոսի վրա: «Թիամաթ» բառը (ավելի ճիշտ՝ «Թիամթա», տարբերակը՝ «Թամթու») նշանակում

1 **Free J. P.,** Archaeology and Bible History. Wheaton-Illinois, 1954. P. 34
2 Անդ:

է աղի ծով: Առասպելի մեջ սրանք անձնավորված են և չաստվածություններ են: Առասպելի այն տեղում, որը մատնանշել է հեղինակը, ասվում է, որ «Ապսուն» և «Թիամաթը» «միախառնում էին իրենց ջրերը»:

ՀԻՆԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՇԱԲԱԹԸ

Սուրբ Գրքի քննադատները, փորձելով ապացուցել աստվածաշունչ խոսքի անհավաստիությունը, պնդում են, որ նրանում շաբաթ օրվա հանգստյանը վերաբերող բոլոր պատգամները փոխառված են բաբելացիներից:

Բաբելոնյան հուշարձաններում խոսքը որոշակի օրերի մասին է, որոնք պետք է առանձնացնել ամսվա մնացյալ օրերից: Այդպիսի օրերից են ամսվա յոթերորդ, տասնչորսերորդ, քսանմեկերորդ և քսանութերորդ օրերը: Բաբելոնյան օրացույցի մյուս հատուկ օրը յուրաքանչյուր ամսվա քսանհինգն էր: Այն կոչվում էր *shabatum*: Ըստ սրբազան բնագրի քննադատների՝ այս բաբելական բառը ստուգաբանորեն մոտ է եբրայական *shabbat*–ին, և, հետևաբար, եբրայական շաբաթը փոխառության արգասիք է կամ բաբելացիների այդ հատուկ օրերի աստիճանական զարգացում: Այս գաղափարների կողմնակիցները մշակեցին մի տեսություն, որը հայտնի է «պանբաբելոնիզմ» անվամբ:

Հնագիտությունն օգնեց հարթել նաև այս կնճռոտ խնդիրը: Բաբելոնյան սալիկների մանրազնին քննությունը ցույց տվեց, որ աստվածաշունչ խոսքի քննադատները իրավացի չեն, քանի որ բաբելացիների վերոբերյալ հատուկ օրերը մի շարք գծերով զանազանվում էին հինկտակարանյան շաբաթից: Ստորև նշենք դրանցից մի քանիսը.

ա) բացի յոթերորդ, տասնչորսերորդ, քսանմեկերորդ և քսանութերորդ օրերից, բաբելացիների մոտ այդպիսի հատուկ օր էր նկատվում նաև քսանհինգերորդը:

բ) Այդ օրերին վերաբերող հանձնառականներն ու հրաժարականները տարածվում էին միայն բնակչության որոշակի խավերի վրա, զորօրինակ՝ թագավորին արգելվում էր այդպիսի օրը մար-

տակառքով շրջագայել: Այնինչ ըստ Սուրբ Գրքի՝ շաբաթը համընդհանուր օր է:

գ) Բաբելացիների *shabatum*–ը լացի, պահքի և ժուժկալության օր էր, ինչը հետապնդում էր որոշ կուռքերի գութը շարժելու նպատակ: Իսկ եբրայական շաբաթը սուրբ, օրհնյալ և Աստծուն նվիրված օր էր, երբ գոհություն էր մատուցվում այն բանի համար, ինչ արվել էր իսրայելական աստվածընտրյալ ժողովրդի համար Աստծո բարությամբ և ամենազորությամբ:

դ) Մասնագետ լեզվաբանները պնդում են, որ բաբելական *shabatum*–ը և եբրայական *shabbat*–ը ստուգաբանորեն անհամատեղելի են:

ե) Բաբելոնյան սալիկների մանրակրկիտ քննության ու ուսումնասիրության ընթացքում ակնհայտ է դառնում, որ դրանցում խոսքը բնավ էլ աշխատանքային գործունեության դադարեցմանը չի վերաբերում, այսինքն՝ այդ հատուկ օրերին՝ հանգստին, քանզի բաբելացիներն այդ վերոհիշյալ օրերին շարունակում էին առևտրական գործարքներ կնքել: Ուստի Կոնկորդիայի ճեմարանի դասախոս Վալտեր Մայերը չափազանց դիպուկ նկատում է. «Ոչ մի բան չկա (իմա՝ բաբելոնյան սալիկներում), որ որևիցե կերպ, թեկուզ մոտավոր կարելի լիներ բաղդատել եբրայական շաբաթի հետ»[1]:

Արդարև, եթե Սուրբ Գրքի շաբաթի և բաբելոնյան սալիկների մեջ նշված այդ հատուկ օրերի միջև ինչ–որ աղերս էլ կա, ապա դա այն է, որ այդ հատուկ օրերը անուղղակիորեն սկիզբ են առնում արարչագործության սկզբում Սուրբ Երրորդության կողմից հաստատված հավիտենական օրենքից: Երբ արդեն արարված էին այս չքնաղ աշխարհն ու մարդը, իսկ արարչագործությունն ավարտված, «Աստված օրհնեց յոթերորդ օրը և սրբագործեց այն» (Ծնն. 2. 3): Այսինքն՝ Աստված զատեց յոթերորդ օրը և պատվիրեց, որ մարդիկ այդ օրը հանգստանան իրենց գործերից և զբաղվեն միայն նրանով, ինչ սուրբ ու նվիրական է, այսպիսով

1 **Maier W.,** Notes on Genesis. Ըստ **Free J. P.** Archaeology and Bible History. P. 27. մեջբերման:

սրբագործվեն և լցվեն առաքինություններով ու շնորհով: Եվ նույնիսկ դարեր անց Աստծուց հեռացած և կռապաշտության մեջ ընկղմված ժողովուրդները չմոռացան այս օրենքը: Սակայն կռապաշտությամբ պղծված՝ նրանցից յուրաքանչյուրը այս աստվածադիր օրենքը յուրովի էր պահում: Այսպես՝ բաբելացիների մոտ շաբաթը վերաճեց այն հատուկ օրերին, որոնց մասին վերն արդեն խոսել ենք: Ուրեմն բաբելացիների այդ օրերը հիշեցնում են Աստծուց մարդկանց շնորհված այն սկզբնական սուրբ օրենքը: Ըստ այդմ էլ Ուիտոնի (Իլինոյս, ԱՄՆ) պրոֆեսոր Ջոզեֆ Ֆրին՝ աստվածաշնչագիտության և հնագիտության մասնագետը, հետևյալ եզրակացությունն է անում. «Չնայած այս ամենին՝ ճշմարիտ շաբաթի և բաբելոնյան հատուկ օրերի միջև որևիցե պարտադիր կապ գոյություն չունի»[1]:

Այսպես ուրեմն, հնագիտությունն իր պեղածոների միջոցով անառարկելիորեն հաստատում է Սուրբ Գրքի աստվածաշնչականությունն ու արժանահավատությունը:

ՔԱՂԱՔՆԵՐԸ, ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԸ, ՄԵՏԱՂՆԵՐԸ

Ըստ Հին Կտակարանի՝ Կայենն իր եղբոր՝ Աբելի սպանությունից հետո քաղաք կառուցեց և այն կոչեց ի պատիվ իր որդի Ենոքի: Իհարկե, այդ «քաղաքը» չպետք է հասկանալ այնպիսին, ինչպիսին մերօրյա քաղաքն է: Այն ոչ այլ ինչ է, քան Կայենի և իր ընտանիքի մշտական բնակության վայր: Կայենը մեծավ մասամբ բնակվում էր հյուղակներում և տեղից տեղ չէր քոչում:

Եվ իսկապես էլ հնագետները հայտնաբերել են մարդկության պատմության արշալույսին պատկանող մշտական բնակավայրեր՝ գյուղերի կամ քաղաքների տեսքով: Վերջին տարիների պեղումները լույս սփռեցին Միջագետքի տարածքում՝ Արփաչիե կոչվող վայրում (Նինվեից մի քանի մղոն դեպի հյուսիս) գտնվող հնագույն քաղաքներից մեկի կյանքի վրա: Այստեղ գտնվել են

1 **Free J. P.,** Op. cit. P. 28

հնագույն գյուղի գոյության վկայություններ, որը թվագրվում է ոչ ուշ, քան Ք. ա. 4000 թվականով: Հարկ է նշել, որ Ք. ա. 3000 թվից վաղեմի թվագրությունները հարաբերական են: Այս առիթով հնագետ Թ. Ջ. Միկը գրում է. «3000 թվականից վաղեմի թվագրությունները զգալիորեն պայմանական են և որոշվում են շնորհիվ հնագիտական նյութի համադրության՝ (Միջագետքից) դեպի արևմուտք ընկած երկրների, ի մասնավորի Եգիպտոսի, համաժամանակյա մշակույթների ժամանակագրությունների հետ»[1]:

Ք. ա. մոտավորապես 4000 թվականի և ավելի վաղ շրջանի հնագիտական մշակույթները կոչվում են հալաֆյան և նախահալաֆյան՝ Միջագետքից հյուսիս գտնվող այն տեղանքի անվամբ, ուր հայտնաբերվել էր այդպիսի մշակույթներից մեկը: Հալաֆյան ժամանակաշրջանի մարդիկ ապրում էին հյուղերում ու տներում, որոնց հիմքը պատրաստվում էր կավե շաղախվածքից, իսկ հետագայում՝ աղյուսից: Հալաֆյան մշակույթից մի քիչ ավելի հին՝ մի ուրիշ մշակույթ է վերջերս հայտնաբերվել Միջագետքի հյուսիսում՝ Թելլ–Հասունա կոչվող վայրում, և այդ պատճառով էլ կոչվում է հասունյան: Հասունացիները օգտագործում էին կայծքարե գործիքներ, ապրում տներում և տիրապետում խեցե ամանեղենի պատրաստման եղանակին:

Ըստ Հին Կտակարանի աստվածաշունչ բնագրի՝ Կայենի զավակներից մեկը՝ Հոբաղը, առաջինն էր, ով հորինեց «տավիղն ու կիթառը» (ըստ հունական բնագրի) կամ «քնարն ու սրինգը» (ըստ եբրայական բնագրի) (Ծննդ. 4. 21): Իսկ սա նշանակում է, որ մարդիկ վաղնջագույն ժամանակներից են տիրապետել երաժշտական գործիքներին: «Տավիղ և կիթառ» (կամ «քնար և սրինգ») բառերը այստեղ հավաքական իմաստ ունեն և նշանակում են լարային և փողային գործիքներ: Ներկայումս հնագետների ձեռքին բազմաթիվ տվյալներ կան, որոնք վկայում են Սուրբ Գրքում հիշատակված երկրներում գոյություն ունեցած այսպիսի նվագարանների մասին: Երաժշտության պատմությանը նվիրված բազմաթիվ ար-

1 **Meek T. J.,** The Present State of Mesopotamian Studies // Haverford Symposium on Archaeology and the Bible. **N. Haven:** American Schools of Oriental Research, 1938. P. 158.

դի աշխատասիրություններում կարելի է գտնել այսպիսի նվագարանների վկայակոչումներ, օրինակ, որպիսիք գտնվել են Ուրում, կամ որոնց պատկերները հայտնաբերվել են Եգիպտոսում[1]:

Կայենի զավակներից մեկ ուրիշը՝ Թոբելը, «պղնձի և երկաթի հմուտ դարբին էր» (Ծնն. 4. 22), այսինքն՝ առաջինն էր, ով պղնձե և երկաթե սուր գործիքներ էր կռում: Սույն հիշատակությունը մետաղական գործիքների շատ վաղ գործածության վկայությունն է: Երկար ժամանակ ենթադրում էին, որ մետաղի գործածությունը հարկ է ավելի ուշ շրջանի վերագրել: Թեև հնարավոր է, որ խոր անցյալում այն լայն կիրառում չունենար էլ:

Վերջին հնագիտական պեղումները, սակայն, վկայում են մետաղների բավական վաղ գործածության մասին: Սկզբում ենթադրում էին, որ Մերձավոր Արևելքում երկաթե դարը Ք. ա. 1200 թվականից է սկսվում, ընդ որում այս տարեթիվը հարմարության համար էին սահմանել, երբ նկարագրում էին այդ դարաշրջանը: Սակայն ժամանակակից հնագիտությունը Ք. ա. 1400 թվից ավելի վաղ երկաթի մշակության վկայություններ հայտնաբերեց[2]: Բաղդադից հյուսիս գտնվող Թելլ–Ասմար վայրում, որը հնում հայտնի էր Էշնուննա անվամբ, Հենրի Ֆրանկֆորտը Ք. ա. 2700 թվականով թվագրվող երկաթե հատու գործիքի մնացորդներ գտավ: Ուրում նույնպես փոքրիկ պողպատե կացին և այլ երկաթյա իրեր հայտնաբերվեցին: Այն, որ այսպիսի գտածոները հազվագյուտ են, բացատրվում է հետևյալ կերպ. վաղնջական ժամանակներում այս մետաղը լայն կիրառում չուներ, բացի այդ երկաթը պղնձից արագ է օքսիդանում (ժանգոտվում), իսկ օքսիդացումից հետո լիովին քայքայվում է, հետևաբար պեղումներից երկաթե իրեր գտնելը բավականին դժվար է: Պեղումները նույնպես անժխտելիորեն ապացուցեցին, որ պղինձը գործածվել է Ք. ա. արդեն 4000–3000 թթ.[3]:

---

1 **Free J. P.,** Op. cit. P. 38.

2 **Short A. R.**, Archaeology Gives Evidence. IVF, L., 1966. P. 9, 14; **Dye D. L.,** Faith and the Physical World: A Comprehensive View. The Paternoster Press, 1966. P. 113-114.

3 **Free J. P.,** Op. cit. P. 39.

Այսպես ուրեմն, շնորհիվ հնագիտության՝ անհերքելի վկայություններ ունենք հեռավոր դարաշրջանում քաղաքների, լարային ու փողային նվագարանների, ինչպես նաև մետաղների մշակության վերաբերյալ ճիշտ այնպես, ինչպես այդ մասին վկայակոչում է աստվածաշունչ Ծննդոց գրքի չորրորդ գլուխը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՋՐՀԵՂԵՂԸ

Համաշխարհային ջրհեղեղի ու Նոյյան տապանի մասին ավանդություններն անքակտելիորեն միահյուսված են իրար: Այդ մասին են պատմում Հին Կտակարանի Ծննդոց գրքի 6–8 գլուխները: Մեծ աղետի մասին վկայող ավանդազրույցներ ունեն նաև այլ ժողովուրդներ, օրինակ՝ հույների Դևկալիոնյան ջրհեղեղը: Հեքիաթային տարրերով առլեցուն բազմաթիվ այսպիսի պատմությունների ենք հանդիպում նախակոլումբոսյան Ամերիկայի, Ավստրալիայի, Հնդկաստանի, Պոլինեզիայի, Տիբեթի, Քաշմիրի, Լիտվայի և այլ ժողովուրդների մոտ*: Հիմք ընդունելով այս ավանդությունները, որոնք ձևավորվել են հետսուրբգրային ժամանակներում, բայց «շատ հնարավոր է, որ միևնույն համաշխարհային աղետն են նկարագրում», երկրաբանները փորձեցին գտնել դրանց լուծման բանալին: Սակայն նրանց բոլոր ջանքերը միայն տեսությունների ու ենթադրությունների հանգեցրին[1]:

* Մ. Խորենացին, խոսելով ջրհեղեղի և Նոյյան տապանի՝ Հայաստանում հանգրվանելու զանազան ավանդությունների մասին, գրում է. «Բայց ավելի հաճախ Արամյան ազգի ծերունիները փանդիռի նվագակցությամբ ցուցքերի և պարերի երգերում հիշատակում են այս բաները» (Հայոց պատմություն, Եր. 1981 թ., էջ 33): Ջրհեղեղի աքքադական առասպելի և աքքադական Նոյի՝ Ութ-Նապիշտիմի անմահության արժանանալու մասին ուրարտական շրջանից էլ տեղեկություններ կան: Արմավիրի (Արգիշտիխինլի) պեղումներից հայտնաբերվել են էլամերեն սեպագիր արձանագրությամբ երեք կավե սալիկներ, որոնք, ըստ գիտնականների, ոչ այլ ինչ են, քան Գիլգամեշի վիպերգության եզրափակիչ դրվագի թեմայով ներկայացման վկայություն՝ բեմադրված էլամական թատերախմբի կողմից արքունական, հավանաբար, Սարդուրի II-ի թագավորության (և. Ք. 760 թ.) պատվին: (Տես Ա. Մուշեղյան, «Ո՞ր լեռան վրա է իջել Նոյյան տապանը» հոդվածը Աստվածաշնչական Հայաստան գրքում, Եր., 2005 թ.): Աստղանիշով նշված են հայերեն թարգմանության ծանոթագրությունները:

1 **Keller W.,** Ἡ Βίβλος … Σ. 44.

Բայց այն, ինչ ցայսօր ի զորու չէ մեզ տալ երկրաբանությունը, ոչ էլ որևիցե այլ գիտություն, այսինքն՝ համաշխարհային ջրհեղեղի պատմականության անհերքելի փաստացի ապացույցներ, ինչ–որ առումով տվեց հնագիտությունը:

Նախևառաջ հնագիտությունն օգնեց որոշել տապանի չափերը: Աստվածաշնորհի Մովսեսը գրում է, որ տապանի երկարությունը «երեք հարյուր» կանգուն էր, լայնությունը՝ «հիսուն», և բարձրությունը՝ «երեսուն» (Ծննդ. 6. 15): Որոշ հնագիտական գտածոների շնորհիվ այսօր հայտնի է, որ կանգունը Իսրայելի և Հուդայի թագավորությունների ժամանակ մոտավորապես հավասար էր 18 դյույմի, այսինքն՝ 45,72 սմ–ի: XIX դարում հնագետները Երուսաղեմում թունել հայտնաբերեցին, որը կառուցվել էր Եզեկիա թագավորի օրոք (Ք. ա. շուրջ 700 թվին): Թունելի մուտքի մեջ փորագրված վիմագրությունն ասում է, որ նրա երկարությունը 1800 ֆուտ է (548,64 մետր): Ըստ հաշվարկների՝ կանգունը հավասար է 18 դյույմի կամ 45,72 սմ–ի: (Մեկ ուրիշ հաշվարկի համաձայն՝ թունելի երկարությունը 525 մետր է: Այդ դեպքում հին հրեական կանգունը հավասար է 43,75 սմ–ի): Ըստ եգիպտագետ Պետրիի ենթադրության՝ կանգունը հավասար է 22,5 դյույմի կամ 57,15 սմ–ի, այնինչ ոմանք կարծում են, որ գոյություն է ունեցել կանգունի մի քանի չափ, ընդ որում ամենաերկար կանգունը դույզն–ինչ գերազանցում էր 18 դյույմը[1], այսինքն՝ 57,15 սմ–ից պակաս էր:

Եթե հաշվարկների հիմքում ընդունենք կանգունի (45,72 սմ) երկարությունը, կստացվի մի նավ, որն ավելի շուտ իրենից ներկայացնում է չորսանկյուն շինվածք և ունի 1 400 000 խորանարդ ֆուտ (կամ 39 644 մ^3) ծավալ: Տապանի երեք տախտակամածներում բավականին տեղ կար Նոյ նահապետի, նրա ընտանիքի, կենդանիների և կերակրի պաշարների համար[2]:

Տապանի տարողունակության մասին գեթ մոտավոր պատկերացում կազմելու համար ներկայացնենք մասնագետների հաշ-

1 **Free J. P.,** Op. cit. P. 41. Ուրիշ գիտնականների կարծիքով հին եբրայական կանգունը հավասար է 49,5 սմ կամ 55,6 սմ, կամ 52 սմ:

2 **Free J. P.,** Op. cit. P. 41; **Morris H. M.,** The Beginning of the World. Accent Books. Denver-Colo. P. 96



Նոյը աղավնի է արձակում տապանից: XII-XIII դ. սկզբի խճանկարի հատված: Վենետիկ, ս. Մարկոսի Մայր եկեղեցի:

վարկները, ովքեր ասում են հետևյալը. «Մեկ ոչխարը տապան մտած կենդանիների մեծության մեկ միավոր ընդունելով՝ (իհարկե, այնտեղ կային կենդանիներ, որոնք իրենց չափերով անհամեմատ գերազանցում էին ոչխարին, բայց և կային այնպիսիք, որ անհամեմատ փոքր էին նրանից) մենք կստանանք հաստատումն այն բանի, որ տապանը բավականին տարողունակ էր զանազան տեսակների կենդանիներ տեղավորելու համար»: Գիտնականների հաշվարկների համաձայն՝ այսօր աշխարհում գոյություն ունի 18 000–ից ավելի տեսակի կաթնասուններ, թռչուններ, սողուններ և երկկենցաղներ: Եթե հաշվի առնենք, որ սովորական ժամանակակից մեծ բեռնատարի մեջ, որ նախատեսված է երկար բեռնափոխադրման համար և ունի մեկուսախցեր, տեղավորվում է 240 ոչխար, ապա մոտավորապես ոչխարի մեծության 36 000 կենդանի տեղափոխելու համար պետք կլիներ այդպիսի 150 մեքենա: Բայց այդպիսի 150 բեռնատարները կզբաղեցնեին Նոյյան տապանի միայն մեկ երրորդ մասը: Դատարկ կմնար մի հսկա տարածություն. չափազանց շատ տեղ կմնար նաև մոտ 1 միլիոն միջատ-

ների ու կերակրի պաշարների և նաև այլ տեսակի կենդանիների համար, որոնք այսօր արդեն գոյություն չունեն, ինչպես նաև Նոյի և նրա ընտանիքի և դեռ ուրիշ շատ բաների համար[1]:

Այսպիսով, երկարության չափման միավորների իմացությունը, որի համար պարտական ենք հնագիտությանը, օգնեց պարզել, որ Նոյի կառուցածն իր նպատակին լիովին ծառայող նավ էր: Դա ահռելի ու միաժամանակ ամուր նավ էր՝ նման օվկիանոսային նավին, յուրատեսակ եռատախտակամած բեռնանավ, որը կառուցված էր գործի իմացությամբ և այդ ժամանակվա համար հազվագյուտ հմտությամբ: Պետք է, որ Ինքը՝ Տերը, ղեկավարեր Նոյին՝ տապանի կառուցման ընթացքում: Եթե հաշվի առնենք, որ նավը կիսով չափ ընկղմվում էր ջրի մեջ, ապա ջրածավալը պետք է կազմեր մոտ 20.000 տոննա: Իսկ ամենից զարմանալին այն էր, որ տապանը կարող էր լողալ համաշխարհային ջրհեղեղի քաղցրահամ օվկիանոսում: Ճիշտ է, տապանը կոչված չէր բաց ծովում նավարկելու համար, այլ միայն ջրի մակերեսին մնալու ու փրկելու իր մեջ հանգրվանածներին: Ավելին, այն երկար օրեր պետք է իր մեջ տեղավորեր (այն էլ այնպես, որ նրանք չտառապեին նեղվածությունից) և՛ Նոյին ու իր ընտանիքը, և՛ կաթնասունների, թռչունների ու սողունների բոլոր տեսակները՝ նրանց կերակրման համար անհրաժեշտ պաշարներով հանդերձ:

Հնագիտության տրամադրության տակ այլ նյութեր էլ կան, որոնք հաստատում են Հին Կտակարանի՝ համաշխարհային ջրհեղեղի մասին ավանդությունների արժանահավատությունը:

Հնագիտական հայտնագործությունների շնորհիվ հայտնի դարձան աշխարհի արարչագործության և համաշխարհային ջրհեղեղի մասին շումերների, բաբելացիների և ասորեստանցիների ավանդությունները: Սակայն բոլոր այս լեգենդները, եթե համեմատելու լինենք Հին Կտակարանի հետ, շատ հարցերում տարբերվում են վերջինից: Ջրհեղեղին է վերաբերում դրանցից մեկը՝ 1850–1854 թթ. Նինվեի արքունի գրադարանի ավերակներում պեղված տասներկու սալիկներից մեկի վրա սեպագրված Գիլգա-

1 **Morris H. M.,** Op. cit. P. 97.

մեշի մասին վիպերգությունը: Վիպերգությունը արձանագրվել է աքքադերեն լեզվով ասորեստանցի թագավոր Աշուրբանիպալի (Ք. ա. 668–626 կամ 668–633 թթ.) օրոք: Սակայն, ըստ այլ հնագիտական պեղածոների՝ կարելի է եզրակացնել, որ այն ստեղծվել է «հազար տարի ավելի առաջ[1]»: Գիլգամեշի մասին վիպերգության առաջին տարբերակը պատկանում է հին շումերներին: Գիտնականներին հաջողվեց այս բաբելոնյան բնագիրը վերծանել միայն 1900 թվի նախաշեմին [1]:

Գիլգամեշի մասին վիպերգության մեջ ընդգրկված ջրհեղեղի առասպելում, որը սեպագրված է տասնմեկերորդ սալիկի վրա (և վիպերգության տասնմեկերորդ երգն է), հանդիպում ենք հետևյալ տարրերի, որոնք նմանության եզրեր ունեն Սուրբ Գրքում շարադրվածի հետ.

ա) աստվածները իրենցից մեկի՝ Բելի դրդումով մտադրվում են խրատել Եփրատ գետի ափին սփռված Շուրուպպակ քաղաքի բնակիչներին:

բ) Ութ–Նապշտիմ անունով մի մարդ իր հովանավոր աստծո՝ Էայի միջոցով իմանում է չաստվածների մտադրության մասին: Էան պատվիրում է նրան նավ կառուցել:

գ) Այդ մարդն իր ընտանիքի, հարազատների, մի քանի նավաստիների և բոլոր տեսակի կենդանիների հետ նավ է մտնում:

դ) Յոթնօրյա ջրհեղեղը կործանում է մարդկանց և երկիրը տիղմի շերտով ծածկում:

ե) Վերջապես նավը հանգրվանում է Նիծիր լեռան վրա (հավանաբար գտնվում է Նինվեից արևելք):

զ) Ութ–Նապշտիմը նավից աղավնի, ծիծեռնակ և ագռավ բաց թողնելով՝ իմանում է, որ ջրերը նահանջել են:

է) Տապանից դուրս գալով՝ Ութ–Նապշտիմը դիցերին զոհ է մատուցում:

ը) Չաստվածներն ընդունում են զոհը:

թ) Էնլիլ դիցը օրհնում է Ութ–Նապշտիմին և նրա կնոջը:

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 54.

Հինկտակարանյան ավանդությանը նմանվող ջրհեղեղի մասին բաբելոնյան առասպելի ինը տարրերի հետ մեկտեղ կան և զանազանություններ, որոնք ընդգծում են ջրհեղեղի մասին Ծննդոց գրքի պատումների վեհությունն ու արժանահավատությունը:

Ահա դրանցից մի քանիսը.

ա) բաբելոնյան ավանդության համաձայն՝ Ութ–Նապշտիմը բաց է թողնում աղավնի, ծիծեռնակ և ագռավ: Իսկ Նոյը, ըստ Հին Կտակարանի, միայն ագռավ ու աղավնի:

բ) Բաբելոնյան ջրհեղեղը յոթ օր ու գիշեր տևեց, իսկ ըստ Սուրբ Գրքի՝ (ջրհեղեղից մինչև երկրի ցամաքելը) մեկ տարի և տաս օր:

գ) Ութ–Նապշտիմի նավի չափերը անհավանական են, պարզապես հեքիաթային. ընդ որում այն կանոնավոր խորանարդի տեսք ունի (140*x*140*x*140 կանգուն): Այսպիսի նավը նավարկության ընդունակ չէր:

դ) Բաբելոնյան առասպելում միանգամայն ակնհայտ են բազմաստվածական և դիցաբանական չափազանցությունների տարրերը. երկինքը խիտ բնակեցված է լիովին մարդկային դիմագծերով օժտված չաստվածներով, որոնք ծիծաղում, լացում, զվարճանում են մարդկանց դժբախտություններով: Նրանք գժտվում են միմյանց հետ, վախի զգացում ունեն, շների նման նվաստաբար փորսող են տալիս[1]: Ինչ վերաբերում է սուրբգրային ջրհեղեղի ավանդությանը, ապա այն հստակ միաստվածական բնույթ ունի և զուրկ է դիցաբանական որևիցե տարրերից: Նրա պարզության մեջ աստվածային վեհություն է պարփակված:

Անկասկած, թե՛ նմանություններում և թե՛ զանազանություններում ի հայտ է գալիս նրանց ներքին կապը: Դա թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունը. Նոյյան ջրհեղեղի մասին պատումն ու բաբելոնյան հերոս Գիլգամեշի մասին վիպերգության՝ ջրհեղեղին վերաբերող ավանդազրույցը սկիզբ են առնում մի վաղնջագույն ընդհանուր ավանդությունից: Այս ընդհանուր ավանդությունը, որը պատմում է իրական փաստի մասին,

1 **Keller W.**, ‘Η Βίβλος …Σ. 63.

և որը ծագում է Աբրահամի երկրից՝ Քաղդեայից, իր անաղարտ և նախնական տեսքով պահպանվել է Հին Կտակարանում, այնինչ բաբելացիներինը աղավաղվել է բազմաթիվ դիցաբանական տարրերով, որոնց նպատակը զգայացունց տպավորություն թողնելն էր:

Գիտնականները հանգեցին այն եզրակացության, որ Հին Կտակարանը ոչ որևէ բան է փոխառել Գիլգամեշի մասին վիպերգությունից, ոչ էլ նրա պատճենն է, նմանապես, իհարկե, և Գիլգամեշի մասին վիպերգությունը Հին Կտակարանի ընդօրինակությունը չէ[1]:

Արդար Նոյը տապանի հետ: Թեոֆան Հույնի որմնանկարը: Նովգորոդ, Տիրոջ պայծառակերպության եկեղեցին Իլյինայում, 1374 թ.:

Սրան մենք վստահաբար կարող ենք հավելել այն, որ իսրայելացիները համաշխարհային ջրհեղեղի պատմության մասին տեղեկացել են ամենահին մարդկանցից (Աբրահամ նահապետի միջոցով), ովքեր բնակվում էին Բաբելոնի շրջակայքում: Աստվածատես Մովսեսը, Սուրբ Հոգով լուսավորված ու առաջնորդված, գրի առավ այս ավանդությունը Ծննդոց գրքի 6–8 գլուխներում [2]:

Այս վստահության համար մենք դարձյալ պարտական ենք հնագիտությանը, որը մեզ տրամադրեց սալիկներ, որոնք հայտնաբերվեցին Նինվեի պեղումների ընթացքում:

Հնագիտությունը մեզ այլ գտածոներ էլ պարգևեց, որոնք հավաստում են, որ համաշխարհային ջրհեղեղը եղելություն է:

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 90.

1929 թ. մարտին սրը Չարլզ Լեոնարդ Վուլլին հայտարարեց, որ քաղդեական Ուր քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերվել է 8 ֆուտ (240 սմ) հաստությամբ կավե տիղմ: Ակներև էր, որ տիղմի այս հաստ շերտը մի մեծ ջրհեղեղից էր գոյացել: Վուլլին այս շերտի տակ հայտնաբերեց մարդկանց բնակության հետքեր, այդ թվում՝ հավանաբար ձեռքով պատրաստված նախնադարյան աշխատանքի կայծքարե գործիքներ և անոթներ: Այսպիսով՝ բոլոր այս առարկաները պատկանում էին քարե դարին: Վուլլին Միջագետքի իր գտածոյի մասին հեռագրով ի լուր բովանդակ աշխարհի հայտարարեց. «Մենք գտանք համաշխարհային ջրհեղեղի հետքերը»: Այս լուրը իսկույն ևեթ հայտնվեց Ամերիկայում և Անգլիայում հրատարակվող թերթերի առաջին էջերում: Հարկ է նշել, որ Վուլլիի պեղումները բոլորովին այլ նպատակներ էին հետապնդում, և այդ ցնցող բացահայտումը բացարձակ պատահականության արդյունք էր:

Բոլոր կասկածները փարատելու համար Վուլլին նույն տեղանքը կրկին պեղեց՝ այստեղ էլ (նույն խորության վրա) տիղմի նույնպիսի շերտ հայտնաբերելով: Գրեթե միաժամանակ պրոֆեսոր Լանգդոնը հայտարարեց, որ Ուր քաղաքից դեպի հյուսիս՝ ավելի քան հարյուր մղոն հեռավորության վրա գտնվող Քիշ քաղաքում, համանման հայտնագործություն է արվել: Վուլլիի կարծիքով ջրհեղեղը ջրի տակ է առել մի շրջան, որը 630 կմ տարածվում է դեպի մայր ցամաքի խորքը և ունի 160 կմ լայնություն: Այն գտնվում է Պարսկական նեղուցից դեպի հյուսիս–արևմուտք: Քարտեզի վրա մի թռուցիկ հայացք նետելիս՝ պարզ է դառնում, որ այսօր մենք այն կըմբռնենք իբրև «տեղական» նշանակության իրադարձություն, բայց այնժամ գետերի մոտ՝ ցածրավայրերում, բնակություն հաստատածների համար այդ կարող էր թվալ բովանդակ աշխարհի խորտակում[1]:

Հուժկու ջրհեղեղների հետքեր հայտնաբերվել են նաև Միջագետքի այլ շրջաններում, օրինակ՝ Որեքում և Շուրուպպակում. «Այստեղ տիղմի շերտերը տարբերվում են հաստությամբ և գո-

1 **Keller W.,** Ἡ Βίβλος …Σ. 51.

յացման ժամանակով. այս ջրհեղեղներից և ոչ մեկը չի կարելի նույնացնել համաշխարհայինի հետ: Բայց և այնպես գրականության հնագույն հուշարձանները (օրինակ՝ Գիլգամեշի մասին վիպերգությունը), ինչպես նաև տիղմի այս շերտերը, համոզում են, որ այնուամենայնիվ մեծ ջրհեղեղ եղել է, թեև ստույգ ոչինչ հայտնի չէ նրա ծավալների և ժամանակի մասին[1]: Իսկ քանի որ Ուրի, Քիշի, Որեքի, Շուրուպպակի և այլ վայրերի ջրհեղեղների հետքերը իրոք տարբեր ժամանակների են պատկանում, ապա Գիլգամեշի մասին վիպերգության վկայությունը կարող է համաշխարհային ջրհեղեղի եղելության առավել համոզիչ ապացույց լինել, քան Միջագետքի տարածքում եղած մեծ ու փոքր ջրհեղեղներից գոյացած տիղմի շերտերը[2]:

Իհարկե, ո՛չ երկրաբանությունը, ո՛չ էլ այլ գիտություններ դեռ չեն ուսումնասիրել ջրհեղեղի պատմությանը վերաբերող բոլոր հանգամանքները: Օրինակ՝ իրո՞ք ջրհեղեղը համաշխարհային էր (այսինքն՝ ջրի տակ էր առել երկրագնդի բովանդակ մակերեսը), թե՞ տեղային (այսինքն՝ ծածկել էր միայն այն շրջանը, որն այնժամ հայտնի էր մարդկանց՝ Միջագետքն ու մերձակա հողերը), այս հարցը ցայսօր ոչ ոքի չի հաջողվել լուծել[3]: Բավական փաստարկներ կան այս երկու տեսակետներից յուրաքանչյուրի օգտին [3]: Սակայն այս հարցը հնագիտության իրավասությունից դուրս է, ուստի մենք այստեղ այն չենք քննի: Միշտ պետք է հիշել, որ համաշխարհային ջրհեղեղը աստվածային ամենազորության հրաշք էր, հրաշք, որը մարդկանց խրատի և փրկության համար էր: Աստված՝ աշխարհի Արարիչը, կարող է, երբ և ինչպես Իրեն հաճո է, փոխել բնության օրենքները, ապա վերականգնել դրանք իր բովանդակ կուսականության մեջ:

Չնայած բոլոր դժվարություններին, որոնք խոչընդոտում են «համաշխարհային ջրհեղեղ» կոչվող խնդրի լուծմանը, հարկ է նշել, որ Վուլլիի և նրա զինակիցների գործունեությունը հանգեցրեց նույնիսկ գիտնական–փորձագետների համար չափազանց

1 **Thompson J. A.**, Op. cit. P. 15.
2 **Coder S. M.,** Howe G. F. The Bible, Science and Greation. P. 91.
3 **Free J. P.,** Op. cit. P. 42

կարևոր եզրակացության. այնպիսի մեծ ջրհեղեղը, ինչպիսին բիբլիականն է, որը սկեպտիկները մտացածին և հեքիաթ են համարում, ոչ միայն իրականում տեղի է ունեցել, այլև պատմականորեն քննելի դարաշրջանի իրողություն է: Շնորհիվ Վուլլիի պեղումների՝ «Եփրատի ափին՝ Ուրում, հին շումերական աստիճանաձև բուրգի ստորոտից պարանի սանդուղքով կարելի է իջնել նեղ ջրհոր և սեփական աչքերով տեսնել, սեփական ձեռքերով շոշափել սարսափելի ջրհեղեղի հետքերը, այն է՝ երեք մետր հաստությամբ կավի շերտը: Իսկ մշակութային շերտերի տարիքով, որով հաշվարկվում է թվագրումը, ինչպես օրացույցով, կարելի է սահմանել, թե երբ է տեղի ունեցել այդ հզոր ջրհեղեղը: Իսկ դա տեղի է ունեցել մոտավորապես 4 000 թվին»[1] [4]:

Հին Կտակարանում ասվում է. «Յոթներորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա» (Ծննդ. 8. 4): Տարակարծություններ կան այն հարցի շուրջ, թե արդյո՞ք խոսքն այստեղ Ռուսաստանի[2], Իրանի, Թուրքիայի սահմանագլխում, այսինքն՝ արևելյան Թուրքիայում գտնվող Արարատի մասին է: Հին ժամանակներում Արարատ լեռան բոլոր հարակից տարածքները կոչվում էին Ուրարտու (այսինքն՝ Արարատ)[3]: Գիլգամեշի մասին վիպերգության ջրհեղեղի առասպելի մեջ հանդիպող Նիծիր լեռը, որի վրա հանգրվանել էր Ուտնափիշտիմի նավը, հետազոտողների ուշադրությունը չէր գրավում [5]: Գիտնականները Նոյյան տապանը միշտ փնտրել են Արարատ լեռան վրա:

1982 թ. «Պրավոսլավնայա ժիզն»[4] (Ուղղափառ կյանք) հանդեսը իր «Նոյյան տապանի որոնումները» հոդվածի մեջ հանրագումարի բերեց դեռ շատ վաղուց սկսած այս փնտրտուքները: Սույն հոդվածի թարգմանությունն առանց կրճատումների բերում

1 **Keller W.,** Ἡ Βίβλος …Σ. 51

2 Նկատի ունի ԽՍՀՄ-ը, իսկ ներկայումս դա անկախ Հայաստանի տարածքն է - *ռուս. թարգմանության ծնթ.:*

3 **Short A. R.**, Op. cit. P. 21.

4 «Orthodox Life» (հրատարակվում է անգլերեն Ս. Հոբ Պոչաևցու Ուղղափառ Եղբայրության կողմից Սուրբ Երրորդության վանքում, Ջորդանվիլլ, Նյու-Յորք, ԱՄՆ), №1, 1982. էջ 46-48: Հոդվածի խորագիրն է. «The Search for Noah's Ark», հեղինակ՝ ավագ քահանա Ս. Լյաշեվսկի:

ենք այստեղ. «Արարատը կոնաձև լեռ է՝ գոյացած հրաբխային ժայթքման արդյունքում: Ծովի մակերևույթից բարձր է 5700 մ*: 4500 մ նշագծից մինչև բուն գագաթը սառցապատ է: Եթե որևիցե նավ հանգրվաներ սառույցների նշագծից ցածր, ապա կփտեր ու կոչնչանար՝ ոչ մի հետք չթողնելով: Իսկ եթե ջրհեղեղից հետո նավը հայտնվեր լեռան գագաթին, ապա սառցե վիթխարի շերտով կծածկվեր և այսպիսով մարդկանց համար անմատչելի կդառնար: Աստվածային նախախնամության հաճությամբ Նոյյան տապանը կանգ առավ 5.000 մ բարձրության վրա, ուր սառցե շերտերը աստիճանաբար դեպի վար են սահում, այնպես որ սառույցի հաստությունն այս շրջանում այնքան էլ մեծ չէ: Տապանը ցածր ջերմաստիճանի պայմաններում ծածկված է սառույցով ու ձյունով և տեսանելի չէ, իսկ ամռանը՝ բարձր ջերմաստիճանի պայմաններում, տապանի ինչ–որ մասը հալչում է և տեսանելի դառնում, թեև դա հազվադեպ է պատահում:

Նոյյան տապանի որոնումների առաջին հիշատակությունը պատկանում է քաղդեացի հեթանոս քուրմ Բերոսոսին (Berose կամ Berosus) (Ք. ա. IV–III դդ.): Այս քուրմը հաղորդում է, որ իր ժամանակակիցներից ու նախնիներից շատերը Արարատ բարձրանալիս՝ տեսել են Նոյյան տապանը և իրենց հետ տապանից մասունքներ բերել՝ այն սրբություն համարելով: Քրիստոնեության տարածման ժամանակաշրջանից է արդեն Նիկողայոս Դամասկացու մանրակրկիտ վկայություններն այդ մասին: Եբրայեցի պատմիչ Հովսեպոս Փլաբիոսն իր «Հրեական հնախոսությունը» աշխատասիրության մեջ գրում է, որ շատերն էին Արարատից Նոյյան տապանի մասունքներ բերում: Ք. հ. շուրջ 180 թ. նույն բանը վկայում է նաև սուրբ Թեոփիլոս Անտիոքացին:

1800 թ. ամերիկացի Կլավդիոս Ռիչը հրապարակեց ոմն Աղա–Հուսեյնի վկայությունը, որում վերջինս պնդում էր, թե իբր ինքը բարձրացել է Արարատի գագաթ և այնտեղ տեսել տապանի մնացորդները:

* Արարատ լեռան բարձրությունը 5165 մետր է:

Դեպի տապանակիր Արարատ գիտական արշավները սկսվեցին 1829 թվից: Գիտնականներից առաջինը Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտն էր: Առաջին երկու գիտարշավները ձախողվեցին և գագաթին հասնելու միայն երրորդ փորձը հաջողությանբ պսակվեց*: Վերադառնալով՝ նա հավաստիացնում էր, որ տապանի վրա նշան է արել: Այդուհանդերձ նրան չհաջողվեց իր հայտնագործության մասին որևիցե ապացույց ներկայացնել:

1840 թ. Կոնստանդնուպոլսից մի լրագրող հայտարարեց, որ Նոյյան տապանը գտնվել է: Թուրքական գիտական արշավը, որի նպատակը Արարատ լեռան ձյան ծածկույթների հետազոտումն էր, հայտնաբերել էր սառույցի տակից դուրս ելած մի շինվածքի ահռելի փայտե կմախք՝ գրեթե ամբողջությամբ սևացած: Արարատ լեռան մերձակայքի բնակավայրերի բնակիչներն ի պատասխան գիտարշավների մասնակիցների հարցումների՝ ասում էին, որ իրենք միշտ էլ իմացել են այդ փայտյա կմախքի գոյության մասին, բայց չեն համարձակվել մոտենալ, քանզի տապանի վերին մասի դռնախորշում իբր թե չար ոգի են տեսել: Եվ չնայած զգալի դժվարություններին՝ թուրքական գիտարշավախումբը հասավ տապանին և համոզվեց, որ բացառությամբ մի նավակողի, այն լավ է պահպանված:

Արշավախմբից մեկը պատմեց, որ տապանի նավակողերը կառուցված են Սուրբ Գրքում հիշատակված ծառից, որը, ինչքան հայտնի է, աճում է Եփրատ գետի հովտում: Ներս թափանցելով՝ գիտարշավի մասնակիցները համոզվում են, որ այդ նավը նախատեսված է եղել կենդանիների փոխադրման համար, քանզի ներսում այն մեկուսախցերի էր բաժանված՝ 15 ֆուտ (4,5 մ) բարձրությամբ: Թուրքական արշավախմբին հաջողվեց թափանցել այդ զետեղարաններից միայն երեքը, քանզի մնացածները ծածկված

* Ի դեպ Պարրոտին ուղեկցել են երկու հայ գյուղացի, երկու ռուս զինվոր և Էջմիածնի դպիր՝ հետագայում գրող, Խ. Աբովյանը: Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատ» գրքի առաջին մասը կրճատումներով թարգմանվել է հայերեն և հրապարակվել 1950 թ. Աբովյանի լիակատար ժողովածուի VII հատորում: Այս մասին տես նաև՝ **Հակոբյան Պ.,** Խաչատուր Աբովյանի կյանքը, գործը, ժամանակը (1803-1836): Նույնի, Վերելք, Ե. 1982 թ.:

էին սառույցով: Տապանի երկարությունը 300 կյուդե էր (երկարության թուրքական միավոր):

1893 թ. նեստորական եկեղեցու ավագ սարկավագ, դոկտոր Նուրին մի փոքրիկ հոդված հրապարակեց, որում ասվում էր. «Տապանի միայն ցռուկն ու խելն են մատչելի, իսկ կենտրոնական մասը թաղված է սառցի տակ»: Տապանը կառուցված է մուգ կարմրաշագանակագույն երանգի ծանր չորսուներից: Նուրին (այդժամ Երուսաղեմի և Բաբելոնի միաբնակ եկեղեցու ավագ սարկավագ էր) չափելով տապանը՝ գտավ, որ դրանք լիովին համապատասխանում են Սուրբ Գրքում նշված չափերին:

Ավելի ուշ մի ընկերություն հիմնվեց, որը պետք է ֆինանսավորեր դոկտոր Նուրիի երկրորդ գիտարշավը՝ տապանը Չիկագոյում կայանալիք ցուցահանդես բերելու նպատակով: Սակայն այս ծրագրերին բախտ չէր վիճակված իրականանալու, քանզի Թուրքիայի կառավարությունը արգելել էր տապանը երկրից արտահանել:

1916 թ. օգոստոսին ռուս օդաչու (ավիացիայի սպա) Վլադիմիր Ռոսկովիցկին, թուրքական սահմանի երկայնքով հետախուզական թռիչք իրականացնելիս, հայտնվեց Արարատի վրա և ձնե գագաթի արևելյան կողմում սառույցյալ լիճ նկատեց: Լճի եզրամասի մոտ մի մեծ նավի կմախք էր նշմարվում: Թեև նավը մասամբ սառույցի տակ էր, նրա նավակողերը, որոնցից մեկի վրա ծակծկված տեղեր կային, դրսում էին մնացել: Բացի այդ, երևում էր երկփեղկանի դռան մի փեղկի կեսը: Երբ Ռոսկովիցկին հրամանատարությանը զեկուցեց իր հայտնագործության մասին, վերջինս ցանկացավ այդ տեղեկությունների վերաբերյալ ավելի ստույգ ապացույցներ ստանալ: Լեռան վրա բազմաթիվ թռիչքներ կատարելով՝ նրանք համոզվեցին տեղեկության իսկության մեջ և հաղորդեցին այդ մասին Մոսկվա ու Պետրոգրադ: Նիկոլայ II կայսրը հրամայեց արշավախումբ ուղարկել Արարատ: Այս արշավախումբը չափագրեց ու լուսանկարեց տապանը. փայտանյութից նմուշներ վերցվեցին, իսկ հետազոտության արդյունքները Պետրոգրադ առաքվեցին: Ցավոք սրտի, այս արժեքավոր փաս-

տաթղթերի հավաքածուն ոչնչացվեց Ռուսաստանում, հավանաբար բոլշևիկյան հեղափոխության ժամանակ:

Ռոսկովիցկու հետ կապված պատմությունը հայտնի դարձավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Ըստ խորհրդային հատուկ ծառայությունների ղեկավար Յասպեր Մասկալինի՝ նրա ենթականերից մեկը թռիչք կատարեց Արարատի վրայով՝ հետաքրքրասիրությունից դրդված, տեսնելու՝ արդյո՞ք Ռոսկովիցկու պնդումների մեջ ճշմարտության թեկուզ ինչ–որ նշույլ կա: Խորհրդային օդաչուն ևս ուշադրություն դարձրեց մի ինչ–որ շինվածքի վրա, որի մի մասը սառցե լճի մեջ էր մխրճված: Այդուհանդերձ այս փաստերը խորհրդային գիտնականներին չխանգարեցին հայտարարել, որ Նոյյան տապանի պատմությունը գիտության հետ որևէ ընդհանրություն չունեցող առասպել է:

1955 թ. հուլիսի 6–ին լեռնագնաց Ֆերնան Նավարրան իր տասնմեկամյա որդու՝ Ռաֆայելի հետ, ինչ–որ բան հայտնաբերեց, որը, ըստ նրա, Նոյյան տապանն էր: Նա իր գյուտով գրավեց համայն աշխարհի ուշադրությունը: Նավարրայի այս գիտարշավի նախապատրաստությունը տասնյոթ տարի էր տևել: Այն հանգամանքը, որ Արարատ լեռը գտնվում էր երեք երկրների՝ Խորհրդային Միության, Իրանի և Թուրքիայի սահմանագլխում, և որ նրանց միջև լեռ բարձրանալն արգելող պայմանագիր էր ստորագրված, հետազոտողի համար լուրջ խոչընդոտ դարձավ: Նավարրան գաղտնի երեք փորձ իրականացրեց՝ գիշերներով անցնելով վտանգավոր գոտին: Ահա թե ինչպես ընթացավ հաջողությամբ պսակված երրորդ գիտարշավը: Հետևելով իր հայ ընկերոջ ցուցումներին՝ Նավարրան գիշերով հասավ սառցադաշտի եզրին և գիշերելու համար վրան խփեց՝ առավոտյան վերելքը շարունակելու մտադրությամբ. այն պետք է անցներ ամբողջովին սառցակալած անառիկ ժայռերով: Գիշերը սարսափելի բուք ու բորան սկսվեց, որի հետևանքով ամեն ինչ սառցի հոծ կեղևով ծածկվեց: Նավարրան ու Ռաֆայելը քիչ էր մնում ցրտահարվեին, քանզի հայտնվել էին ձյան հաստ շերտի տակ՝ զրոյից 30 աստիճան ցածր ջերմաստիճանի պայմաններում: Առավոտյան, ինչպես պատմում

է Նավարրան, Աստծո օգնությամբ նրանց հաջողվեց ճանապարհ ընկնել դեպի այն տեղը, որը հեռվից էր նկատել դեռ իր առաջին գիտարշավներից մեկի ընթացքում: Թեև ժամանակն անհաջող էր ընտրել, ամեն ինչ ձյան ու սառույցի տակ էր առնված, այնուամենայնիվ նրան հաջողվեց հասնել նպատակին: Մեծագույն դժվարությամբ, վտանգի ենթարկվելով՝ նա սառցի տակ առնված նավակողի չորսուից մի կտոր պոկեց՝ մեկ մետր երկարությամբ և 8 սմ հաստությամբ: Այդ մասում հղկված տախտակներ չկային: Իսկ վերադարձին սահմանապահները գնդակոծեցին և ձերբակալեցին Նավարրային: Վերջ ի վերջո նրան ազատ արձակեցին՝ վերադարձնելով բոլոր լուսանկարչական ժապավեններն ու փայտի նմուշը: Ահա թե ինչպիսի պայմաններում էր անցնում գիտարշավը:

Կահիրեի և Մադրիդի աշխատանոցներում կատարված փայտանյութի ռադիոածխածնային տարրալուծումը ցույց տվեց, որ այն հինգ հազար տարվա է: Ֆրանսերեն[1] լեզվով հրատարակված Նավարրայի գիրքը նկարազարդ է, որի վրա երևում է, թե ինչպես է հեղինակը տապանի նավակողից մի կտոր փայտ պոկում, ինչպես նաև՝ այն տեղը, որտեղ սառցի տակ անթեղված է տապանը. այստեղ ներկայացված են նաև աշխատանոցային տարրալուծումների արդյունքներ, նկարներ, սխեմաներ և այլն»:

Այս ամենը «Պրավոսլավնայա ժիզն» ամսագրում զետեղված հոդվածից էր: Մոտավորապես նույնի մասին է պատմում նաև Վերներ Կելլերը, ով վերոհիշյալից զատ հիշատակում է Նոյյան տապանի որոնման ևս մի քանի փորձ՝ ձեռնարկված 1951 թ. համաշխարհային ջրհեղեղի մասնագետ, պատմաբան–միսիոներ, դոկտոր Ահարոն Սմիթի և ֆրանսիացի հետազոտող Ժան դե Ռիկի կողմից, ով 1952 թ. բարձրացավ հրաբխային գագաթը: Ցավոք սրտի, այս փորձերը արգասաբեր չէին[2]:

Սակայն մարդկությունը չդադարեց Նոյյան տապանը որոնելուց: Այսպես՝ 1982 թ. օգոստոսին հաղորդագրություն հրապա-

1 Կա նաև սույն գրքի անգլերեն հրատարակությունը հետևյալ խորագրով. **Fernand Navarra**. Noah's Ark: I Touched It. Logos International, Plainsfield, N. J., 1974. -137p.
2 **Keller W.,**'Η Βίβλος …Σ. 61-63.

րակվեց այն մասին, որ Թուրքիայի տարածքով անցնելով՝ Նոյյան տապանի որոնումների է ելել ամերիկյան տասնմեկ հոգանոց մի գիտարշավախումբ: Մոտավորապես 60 հազար ամերիկյան դոլլար արժողությամբ այս գիտարշավի մասնակիցներից էր նաև նախկին տիեզերագնաց, ամերիկացի Ջեյմս Էրվինը, ով 1971 թ. «Ապոլլոն–12» տիեզերական գիտարշավի կազմում վայրէջք կատարեց լուսնի վրա: Իր տված հարցազրույցում Էրվինն ասաց, որ նախորդ գիտարշավների դիտարկումները կասկածի տեղիք չեն տալիս, որ տապանակիր լեռան գագաթին իսկապես մի խորհրդավոր նավ կա: Սրան ամերիկացի տիեզերագնացն ավելացրեց, որ հավատում է, որ այդ նավը Նոյյան տապանն է[1]:

Չնայած արդեն ձեռնարկված և ցայսօր էլ ձեռնարկվող փորձերի (1994 թ. ամերիկացիները նորից փորձ արեցին)[2]՝ կան մարդիկ, ովքեր վիճարկում են տապանի գոյության փաստը: Բայց և այնպես, եթե նկատի ունենանք մարդկության հետաքրքրությունը Նոյյան տապանի որոնումների նկատմամբ, հետաքրքրություն, որ Ք. ա. V դարից սկսյալ հանդես են բերել նույնիսկ հեթանոսները, որը ցայսօր էլ չի մարել, ապա չի բացառվում, որ այդուհանդերձ կհաջողվի հայտնաբերել տապանի գտնվելու վայրը*:

Իսկ առայժմ սահմանափակվենք նրանով, ինչ պատմում է աստվածաշունչ բնագիրը, այսինքն՝ Հին Կտակարանի անստգյուտ, ըստ ամենայնի արժանահավատ և փրկարար խոսքը:

Մանոթագրություններ

1. Որեքի արքա Գիլգամեշի մասին ավանդող առանձին առասպելներ ստեղծվել են շումերերեն Ք. ա. 3-րդ հազարամյակում: Աքքադական վիպերգությունն ի հայտ եկավ այս առասպելների՝ շումերերենից թարգմանության և համակարգման արդյունքում: Դրա առաջին հայտնի տարբերակը սկիզբ է առնում Ք. ա. 2-րդ հազարամյակի սկզբում

1 «Ἑστία» թերթ, 7. 08. 1982,

2 «Ἑστία» թերթ, 7. 08. 1982,

* Նշենք նաև, որ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում, ի թիվս այլ սրբությունների, պահվում է նաև մի անփուտ փայտի բեկոր՝ Նոյյան տապանից, որը, ըստ ավանդության, սուրբ Հակոբ Մծբնացին ստացել է հրեշտակից:

(մոտավորապես XX-XVIII դդ.), իսկ մյուս տարբերակի բնագիրը հայտնաբերվել է Փոքր Ասիայում և Պաղեստինում: Սակայն առավել ամբողջական բնագիրը հայտնաբերվել է Նինվեում՝ գրված Ք. ա. 2-րդ հազարամյակի երկրորդ կեսին ապրած Սինլիքեուննինիի ձեռամբ: Դատելով այն փաստից, որ ամենից հաճախ հայտնաբերվում են հենց դրա պատառիկները, ենթադրվում է, որ այն ամենից տարածվածն էր: Գիլգամեշի մասին վիպերգության մեջ ընդգրկված ջրհեղեղի վերաբերյալ առասպելը սկիզբ է առնում շումերական նախատիպում: Այս նույն առասպելը, բայց առավել հանգամանալից ու դույզն-ինչ այլ կերպ, շարադրված է Աթրահատի մասին պոեմում: Այսպիսով, մեզ հայտնի է ջրհեղեղի մասին միջագետքյան երեք տարբերակ. վաղեմագույնը շումերականն է, իսկ երկու ավելի ուշ շրջանի տարբերակները աքքադական են: Սրանք բոլորն էլ բովանդակությամբ շատ մոտ են իրար, ինչքան որ կարելի է դատել մեր ժամանակներին հասած բնագրերից (մի քանիսը, ինչպես օրինակ՝ շումերական տարբերակը, կցկտուր են):

2. Համաշխարհային ջրհեղեղի մասին ցարդ գիտությանը հայտնի բոլոր լեգենդներից ու առասպելներից միջագետքյանն է իր բովանդակությամբ մոտ սուրբգրային պատումին: Ելնելով այն փաստից, որ ըստ Սուրբ Գրքի՝ ջրհեղեղից հետո որոշ ժամանակ անց մարդիկ բնակություն հաստատեցին Բաբելոնում (Ծնն. 11. 1-2), կարող ենք պնդել, որ այս նմանությունը զգալի չափով հաստատում է Աստվածաշունչ Մատյանի պատմականությունը:

Ջրհեղեղի մասին առասպելի շումերական տարբերակը վերագրվում է մոտավորապես Աբրահամ նահապետի ժամանակներին, երբ Սուրբ Գիրքը տակավին չէր գրվել, բայց այս տարբերակն արդեն սուրբգրայինից զգալիորեն տարբերվում էր, այնպես որ խոսք իսկ լինել չի կարող ո՛չ Սուրբ Գրքի՝ միջագետքյան առասպելից, ոչ էլ հակառակը՝ միջագետքյան առասպելի՝ Սուրբ Գրքից փոխառության մասին: Սակայն այս երկու աղբյուրների համեմատական նմանությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առասպելի հեղինակը տեղեկություններ է քաղել ջրհեղեղի ժամանակներից Միջագետքում պահպանված հնագույն մի ավանդությունից:

3. Հեղինակն այստեղ շարադրում է արևմտյան գիտնականների՝ գլխավորապես բողոքականների որդեգրած կարծիքը: Իհարկե, հավատավոր ուղղափառ քրիստոնյայի համար կասկածից վեր է, որ ջրհեղեղը համաշխարհային էր, այսինքն՝ ջուրը ծածկել էր բովանդակ աշխարհը: Այս մասին աներկմտորեն վկայում է թե՛ Սուրբ Գիրքը (Ծնն. 6. 7 7.

4,17-24) և թե՛ մեր Եկեղեցու Սրբազան Ավանդությունը, (տես, օրինակ՝ ս. Հ. Ոսկեբերան, Ծննդոց գրքի մեկնությունը, ճառ 25,6):

4. Ըստ սուրբգրային ժամանակագրության՝ ջրհեղեղը տեղի է ունեցել Ք. ա. 3242 թ.: Այսպիսով ջրհեղեղի գիտական թվագրումը, որի հետքերը հայտնաբերվել են Ուրում, մոտ է համաշխարհային ջրհեղեղի սուրբգրային տարեթվին: Առհասարակ հնագիտական թվագրումներն ըստ մշակութային շերտերի, ինչպես նաև ռադիոածխածնային մեթոդի, չափազանց մոտավոր արդյունքներ են տալիս, ուստի այս թվագրումների նկատմամբ պետք է զգուշավոր վերաբերմունք ունենալ:

5. Ասուրագետները չգիտեն, թե որտեղ է գտնվում վիպերգության մեջ հիշատակված Նիծիր լեռը: Բայց, անշուշտ, այն չէր կարող Միջագետքում գտնվել (ավելի ճիշտ, այժմյան Իրաքում), որն իրենից հարթավայր է ներկայացնում, տափարակ՝ հարավում և բլրավետ՝ հյուսիսում: Բարձրաբերձ լեռներ լանդշաֆտում երևում են միմիայն Միջագետքի (Իրաք) հյուսիսում, հյուսիս-արևելքում և արևելքում:

ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԸ

Սուրբ Գիրքը բովանդակում է նաև բաբելոնյան աշտարակաշինության պատմությունը, որը շարադրված է Ծննդոց գրքի տասնմեկերորդ գլխում: Մովսես մարգարեն պատմում է, որ համաշխարհային ջրհեղեղից հետո մարդիկ, բնակություն հաստատելով Սենաարի լայնարձակ և բերրի հովտում (500 մղոն դեպի հարավ Արարատից, որի վրա հանգրվանեց Նոյյան տապանը), մոռացան Աստծուն[1]: Ինքնահավանությամբ բռնված՝ նրանք մտադրվեցին աղյուսից և կուպրից (քարի ու կավի փոխարեն) կառուցել քաղաք և վիթխարի աշտարակ, «որի գագաթը հասնի մինչև երկինք» (Ծնն. 11. 4): Նրանք ասում էին, որ դա կփառավորեր իրենց, և իրենց անվան համբավը կտարածվեր աշխարհով մեկ: Ինքնասիրահարվածությունից և ինքնավստահությունից հարբած՝ նրանց թվում էր, որ այդժամ արդեն կարող էին այլևս ջրհեղեղից չվախենալ: Նրանք երևակայում էին, որ այսպիսով անկախություն կստանան և կկարողանան ապրել առանց Աստծո: Աշ-

1 **Morris H. M.**, Op. cit. P. 136.

տարակ կառուցելու փորձին, որին մղում էր սատանայական եսասիրությունը, նրանք ձեռնամուխ եղան բոլորը միասին, միահամուռ, քանզի խոսում էին մեկ լեզվով, ուստի և կարող էին առանց դժվարության համագործակցել և փոխհամաձայնել: Սակայն այս դիվային ձեռնարկումը, իբրև մեծ անօրենության արտահայտություն՝ Աստծուց հեռացում, իբրև սեփական անունը փառավորելու և անմահացնելու նպատակով ամբարտավան մարտահրավեր Աստծուն, զայրացրեց ամենազոր Սուրբ Երրորդությանը: Ուստի Նա դիմակայեց նրանց մեղսալից մտադրությանը, ոչնչացրեց նրանց շինությունը, և նախքան դրա ավարտելը խառնեց նրանց լեզուները և նրանց աշխարհի չորս ծագերով մեկ ցրեց [1]:

Անհավատները համառորեն պնդում էին, թե Սուրբ Գրքի այս պատումը առասպել է: Բայց հնագիտությունը նորից հանդես եկավ՝ ի պաշտպանություն սուրբգրային բնագրի իսկության:

Պեղումներից հայտնաբերված գտածոները նախևառաջ հաստատում են, որ այն եղանակները, որոնք, ըստ Սուրբ Գրքի, կիրառում էին աշտարակի կառուցողները, համապատասխանում են իրականությանը: Հետազոտությունները ցույց տվեցին, որ Միջագետքում շինարարները «օգտագործում էին միայն կուպրով շաղախված թրծված աղյուս: Հավանաբար, ըստ շինարարության կանոնների, դա շինության ամրության անհրաժեշտ պայմանն էր»: Քանի որ այս վիթխարի շինությունը (այսինքն՝ բաբելոնյան աշտարակը) «գտնվում էր գետի մոտ (Եփրատի–Ն. Վասիլիադիս), շինարարության ժամանակ պետք էր հաշվի առնել որոշակի ժամանակների համար սովորական ջրի մակարդակն ու մշտական խոնավությունը: «Ասֆալտով», այսինքն՝ ձյութով պատերի հիմքն ու որմածքն այնպես էին մշակում, որ դրանք անջրաթափանց և ամուր դառնային»[1]:

Հնագետները մեզ տեղեկացնում են նաև, որ Միջագետքի բազմաթիվ հին քաղաքներում հայտնաբերվել են բազմահարկ աշտարակ–տաճարների ավերակներ: Բաբելոնյան սեպագիր սալիկներում սույն աշտարակները «զիկկուրատ» են կոչվում:

1 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 410-411.

Ուրի Նաննարի՝ Լուսնի դիցուհու զիկկուրատը, Ք. ա. XXI դ., հարավային Իրաք:

Այսպիսի աշտարակները հեթանոսական տաճարային համալիրների մաս էին կազմում: Զիկկուրատի վերևում սովորաբար բագին՝ զոհասեղան կար: Հետազոտողները ենթադրում են, որ այդ բարձր աշտարակները հենց այն առաջին բաբելոնյան աշտարակի հետագա նմանակումներն ու վերափոխություններն են[1]: Ըստ հնագետների վկայության՝ դրանցից մեկը բաբելոնյան զիկկուրատն էր, որը կառուցվել էր վաղնջական անցյալում և բազմիցս ենթարկվել ավերման ու վերակառուցման: Օրինակ՝ բաբելացի Համմուրաբի արքայի մահից հետո խեթերը փորձեցին հողին հավասարեցնել իրենց իսկ ձեռքով ավերված վիթխարի շինության (Ք. ա. շուրջ 1600 թ.) ավերակները: Հետագայում Նաբուգոդոնոսոր II թագավորը (Ք. ա. VI դ.) վերակառուցեց այն: Մեծ զիկկուրատի ավերակներ կան նաև հին Բաբելոնի ավերակների կողքին: Արաբների կողմից Բիրս Նիմրութ կոչված այս աշտարակի բարձրությունը 700 ֆուտ (210 մ) էր: Հույն պատմիչ Հերոդոտոսը[2] (մոտ 450 թ.) այսպես է այն նկարագրում. «Սրբավայրի մեջտեղում կառուցված է հզոր աշտարակ՝ մեկ ասպարեզ երկարությամբ (184,97 մ. – *խմբ. ծնթ.*) և լայնությամբ. այս աշտարակի վրա բարձրանում է երկրորդը, սրա վրա՝ մեկ ուրիշը, մինչև ութ աշտարակ: Այնտեղ բարձրանալու համար դրսից բոլոր աշտարակների շուրջ աստիճաններ են կառուցված: Աստիճանների

1 **Free J. P.,** Op. cit. P. 46.
2 **Morris H. M.,** Op. cit. P. 140.

միջին մասում նստարաններ կան՝ հավանաբար հանգստանալու համար: Վերջին աշտարակի վրա կա մեծ տաճար, իսկ տաճարում՝ մեծ և լավ հարդարված մահիճ, որի մոտ գտնվում է նաև ոսկե սեղան: Սակայն աստվածության ոչ մի պատկեր չկա, և ոչ մի մարդ այստեղ չի գիշերում, բացի մի կնոջից, որին, ինչպես պատմում են քաղդեացիները՝ այդ աստծո քրմերը, աստված է ընտրում իր համար բոլոր կանանց միջից: Այս նույն քրմերն ասում են, իսկ ես դրան չեմ հավատում, թե աստված ինքը երբեմն հաճախում է տաճար և գիշերում այդ մահճի վրա» (I,181–182) [2]:

Հնագետները համանման աշտարակ պեղել են նաև Ուր քաղաքում: Նրա փլատակներում գտնվել են մի քանի հազար տարի առաջվա՝ ձեռքով պատրաստված աղյուսներ: Դրանց վրա բավական ընթեռնելի արձանագրված են երկու անուն. առաջինը՝ Ուրի երրորդ հարստության թագավոր, աշտարակի առաջին կառուցողներից մեկի՝ Ուր Նամմուի (Ք. ա. XXI դ.) և երկրորդը՝ բաբելոնյան թագավոր Նաբոնիդի (թագավորել է Ք. ա. 556–539 թթ.) անունները: Նաբոնիդը վերստին կառուցել է այս աշտարակը թրծված աղյուսներով՝ օգտագործելով ամրացնող շաղախ[1]:

Ահա բաբելոնյան աշտարակին վերաբերող ևս մեկ հնագիտական գյուտ: Բրիտանական թանգարանի հաստիքային աշխատակից, ջրհեղեղի մասին բաբելոնյան առասպելի թարգմանիչ Ջորջ Սմիթը հրապարակեց մի բնագրի պատառիկ ինչ–որ զիկկուրատի ավերման մասին: Այդ բնագրում ասվում է հետևյալը. «Սույն տաճարի կառուցումը աստվածների զայրույթն առաջացրեց: Մի գիշեր նրանք հողին հավասարեցրին այն, ինչ արդեն կառուցվել էր: Նրանք մարդկանց տարան հեռավոր կողմեր և նրանց լեզուն խառնեցին (դարձրին այն տարօրինակ, օտարոտի – Ն. Վ): Նրանք խափանեցին հետագա շինարարությունը»[2]: Այս հին բնագրի նմանությունը բաբելոնյան աշտարակաշինության մասին սուրբգրային պատմությանն ապշեցուցիչ է:

1 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 32,415.
2 **Smith G.,** Chaldean Account of Genesis. N. Y.; Scribner’s,1876. մեջ. **Free J. P.,** Op. cit. P. 46.



Ուրի Նաննար լուսնի դիցուհու զիկկուրատի վերակազմություն:
Ք. ա. 3-րդ հազարամյակի վերջ:

Բաբելոնյան աշտարակաշինության սուրբգրային պատումը վկայում է նաև, որ հնում բոլոր մարդիկ մի լեզվով էին խոսում: Սակայն Աստված «խառնեց»՝ բաժանեց այդ լեզուն [3]: Լեզվաբանությունը հաստատում է, որ «բոլոր ժողովուրդների համար ընդհանուր բառերի և լեզվի այլ տարրերի գոյությունը փաստ է, որը մատնանշում է այս տարրերի՝ ընդհանուր նախալեզվից ծագումը»[1]:

Լեզվաբանությունը, ինչպես և բանասիրությունը՝ հանձին իր նշանավոր ներկայացուցիչների, օրինակ՝ Ա. Թ. Ռոբերտսոնի, Ալֆրեդ Տրոբետտիի (տե՛ս նրա «Լեզուների ծագման միասնությունը» գիրքը[2]), հռչակավոր կրոնագետ Մաքս Մյուլլերի (տե՛ս նրա «Լեզվի մասին գիտությունը» աշխատասիրությունը[3]), Կոպենհագենի համալսարանից Օտտո Եսպերսենի և Վ. Շմիդտի, վկայում են մարդկային լեզվի միասնության մասին, որը Ինքն Աստված հրաշքով էր մարդկանց շնորհել: Հնագիտության պրոֆեսոր Ջոզեֆ Պ. Ֆրին գրում է. «Ոչ մի հայտնագործություն՝ նոր, թե հին, չի հերքում այս փաստը»[4]:

1 **Jauncey J. N.**, Science Returns to God. Zondervan Publishing House, Grand Rapids, Mich.,1966. P. 77..
2 **Alfredo Trobetti,** L'Unita d'origine del linguauuio, Bologna, 1905.
3 **Max Müller,** Lectures on the Science of Language, (1864), 2 հտ.:
4 **Free J. P.,** Op. cit. P. 46-47:

Մանոթագրություններ

1. Հովսեպոս Փլաբիոսն իր «Հրեական հնախոսությունում» (I, 4), Ս. Եպիփան Կիպրացին (Պանարիոն, գիրք 1, մաս 1, գլուխ 6) և մի քանի այլ մատենագիրներ քաղաքի ու աշտարակաշինության մտադրությունը վերագրում են Քամի թոռ Նեբրոթին, քանզի, ըստ Սուրբ Գրքի, հենց նա էր երկրի առաջին թագավորը, ընդ որում Բաբելոնը նրա թագավորության մեջ էր մտնում (Ծննդ. 10. 8-12): Այսպիսով, հենց քամյան ցեղն էր սույն աստվածամարտ ձեռնարկման նախաձեռնողը: Այս առումով չափազանց ուշագրավ է, որ Մերձավոր Արևելքի ու Արևելյան Միջերկրականի գրեթե բոլոր հնագույն քաղաքակրթությունները՝ միջագետքյանը, հինեգիպտականը, քանանականը (ասորա-պաղեստինյանը) և կրետե-միկենյանը ստեղծված են ձեռամբ այն ժողովուրդների, որոնք ըստ Սուրբ Գրքի, սերում են Քամից (տես՝ Ծննդոցի 10-րդ գլուխը): Սրբազան եկեղեցական ավանդության համաձայն՝ այս ժողովուրդներն են բազմաստվածությունը, կռապաշտությունը և հեթանոսական միստերիաները՝ գաղտնածիսությունը, կյանքի կոչել (տե՛ս ս. Եպիփանի վերոհիշյալ աշխատությունը, գիրք 1, մաս 1, գլուխ 9). իմիջիայլոց, այդպես էր կարծում նաև հույն պատմիչ Հերոդոտոսը (II, 49-58 և այլն): Այս կարծիքը լիովին հաստատվում է հին գրավոր աղբյուրներից քաղված տեղեկություններով և հնագիտական պեղումների արդյունքներով:

2. Հերոդոտոսի տեսած և նկարագրած վիթխարի զիկկուրատը ամենայն հավանականությամբ հենց այն է, որ կառուցել է Նաբուգոդոնոսոր արքան: Փաստորեն այս արքան այն վերստին է կառուցել բովանդակ Բաբելոն քաղաքի վերակառուցման ժամանակ: Իհարկե, պետք չէ կարծել, թե խեթերի ձեռամբ կործանված զիկկուրատը ավերակ էր ընդհուպ մինչև այդ թագավորը. այն շատ չանցած՝ վերականգնվել էր և բազմիցս վերակառուցումների ենթարկվել՝ ընդհուպ մինչև Նաբուգոդոնոսորի գահակալությունը: Իրո՞ք այս զիկկուրատը կանգնեցված էր հենց այն աշտարակի տեղում, որի մասին խոսվում է Սուրբ Գրքում, թե ոչ, մենք, ցավոք սրտի, իմանալ չենք կարող: Բանն այն է, որ Ք. ա. VII-VI դդ. պատկանող Բաբելոնի հնագիտական շերտերը գետնի ջրերի մակարդակից ցածր են գտնվում, ինչն անհնարին է դարձնում պեղումները: Ուստի հնագիտության միջոցով սուրբգրային բաբելոնյան աշտարակի հետքերի որոնումները անհեռանկարային են (եթե, իհարկե, Բաբելոնի շրջանում չփոխվի երկրաբանական վիճակը կամ էլ գետնի ջրերի հեռացման ինչ-որ նոր ջրատեխնիկական եղանակներ չմշակվեն):

Սակայն չի կարելի ուշադրություն չդարձնել այն հանգամանքի վրա, որ բաբելոնյան զիկկուրատի շումերական անվանումը (Միջագետքի բոլոր տաճարային կառույցները նույնիսկ ուշ շրջանում շումերական անուններով էին կնքվում, քանզի այդ լեզուն սրբազան էր համարվում) է-թեմեն-անկի էր, որ թարգմանվում է «երկնքի և երկրի հիմնադրման տուն»: Ինչպես չմտաբերել՝ «աշտարակ, որի գագաթը հասնի մինչև երկինք»: Հետաքրքրական է նաև, որ հին բաբելոնյան բնագրերից մեկում շումերների և բաբելացիների համար սրբազան Նիպպուր քաղաքը (արդի Նիֆֆեր) անվանված է «երկնքի և երկրի կապ»: Այս քաղաքը տեղակայված է եղել Բաբելոնից շուրջ 100կմ հյուսիս-արևելք:

3. Սուրբ Գրքի եբրայական բնագիրը (իսկ նրա հետևողությամբ նաև հունական LXX-ը) նույնիսկ Բաբելոն քաղաքի անունն է առաջացած համարում եբրայական babel, այսինքն՝ «խառնել» բառից, քանի որ, ինչպես ասում է Գիրքը. «Դրա համար այն կոչվեց Խառնակություն (Բաբելոն), որովհետև Տեր Աստված այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները և այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մեկ» (Ծնն. 11. 9): Քաղաքի շումերական անվանումը (KA. DINGIR. RA. KI), ինչպես և նրա բաբելական համարժեքը (Babili) նշանակում է «Աստծո դարպաս (Աստծո դարպասներ)»: Հավանաբար այս անվանումն էլ արձագանքն է սուրբգրային այն իրողության, ըստ որի հենց այստեղից էլ, ինչպես ինչ-որ դարպասներից, Աստված մարդկանց աշխարհով մեկ սփռեց:

4. Համամարդկային նախալեզվի գոյության տեսության մեջ մեծ ներդրում ունեն խորհրդային գիտնականները (օրինակ՝ ասուրագետ Ի. Մ. Դյակոնովը, լեզվաբաններ Վ. Մ. Իլյիչ-Սվիտիչը, Վ. Ն. Տոպորովը և Վ. Վ. Իվանովը): Նրանց հաջողվեց գիտականորեն հիմնավորել հին աշխարհի ահռելի թվով լեզուների ցեղակցական կապերը (այնպիսի լեզվաընտանիքների, ինչպիսիք են հնդեվրոպականը, ալթայականը և ուրիշներ):

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածային Ծննդոց գրքի առաջին տասնմեկ գլուխների ընթերցողները սովորաբար զարմանում ու տարակուսում են առաջին մարդկանց արտասովոր երկարակեցության կապակցությամբ: Ընթերցողին ցնցում ու մեծապես զարմացնում

է հատկապես նախաջրհեղեղյան շրջանի մարդկանց երկարակեցությունը: Այսպես օրինակ՝ Ծննդոց գրքի 5–րդ գլխում կարդում ենք՝ Ադամը ապրեց 930 տարի,Ենոսը՝ 905, Կայնանը՝ 910 և այլն: Բոլորից երկար ապրել է Մաթուսաղան՝ 969 տարի: Հետջրհեղեղյան մարդիկ նույնպես երկարակյաց էին, թեև նրանց ապրած տարիների թիվը նախաջրհեղեղյանից պակաս էր: Այսպես՝ տասնմեկերորդ գլխում կարդում ենք, որ Արփաքսադը ապրեց 535 տարի, Սեմը՝ 600, Եբերը՝ 404 և այլն:

Թերահավատներին այսքան զգալի երկարակեցությունը Սուրբ Գրքի այդ մասը լեգենդ, առասպել հռչակելու առիթ տվեց: Սակայն հետազոտողներն այս առիթով մի քանի սկզբունքային դատողություններ արեցին, այդ թվում նաև հնագիտական տվյալների հիման վրա:

Առաջին՝ 5–րդ և 11–րդ գլուխների թվերը չի կարելի ընկալել կյանքի երկարակեցության արդի տվյալների հիման վրա կամ էլ ելնելով անհիմն մաթեմատիկական հաշվարկներից [1]: Այն ժամանակվա մարդիկ առողջ էին. մարդկության մանկությունը այնպիսի մի ժամանակաշրջան էր, երբ մարդկանց առողջությունը հիվանդություններով քայքայված չէր, ինչպես մեր օրերում: Բացի այդ, նրանց սնունդն ու կյանքի պայմանները մեծապես տարբերվում էին մերից և իհարկե, նպաստում երկարակեցությանը: Զարմանալի կլիներ, եթե այդ ժամանակ մարդիկ երկար չապրեին[1]: Ի շարս այլոց՝ իրերի այսպիսի վիճակը համահունչ էր Աստծո մտադրությանը. մարդկանց առաջին սերունդները պետք է երկար ապրեին, որպեսզի մարդկային ցեղը արագ բազմանար՝ միաժամանակ ասես մի միասնական համայնք ներկայացնելով, և դրանով սրբազան ավանդությունը, որն այդժամ բանավոր էր և ոչ թե գրավոր (քանզի գիրը դեռ չէր ստեղծվել) սերնդեսերունդ առանց աղավաղման փոխանցվեր: Ըստ այդմ էլ տեսնում ենք, որ հինգերերդ գլխում հիշատակված մարդիկ շատ էին ապրում, մինչդեռ տասնմեկերորդ գլխի մարդիկ՝ պակաս, թեպետ նրանք ավելի երկարակյաց են, քան մեր օրերում [2]:

1 **Free J. P.,** Op. cit. P. 39.

Երկրորդ՝ Մերձավոր Արևելքի ավանդություններում նախաջրհեղեղյան մարդկանց տարիքի մասին խոսելիս՝ նշվում է նրանց անհավատալի երկարակեցությունը: Չնայած որ 5–րդ գլխում բերված թվերը ապշեցուցիչ են, հարկ է նկատի ունենալ, որ դրանք թվում են անհամեմատ ավելի «համեստ, խելամիտ, սահմանափակ և ստույգ», քան այդ ավանդություններում ներկայացվող նախաջրհեղեղյան թագավորների «տասնյակ հազար» տարիներով գահակալությունը: Այսպես՝ Էրիդու, Լարակ, Սիպպար, Շուրուպպակ քաղաքների նախաջրհեղեղյան թագավորների, հետևաբար, Ծննդոց գրքի 5–րդ գլխում հիշատակված անձանց ժամանակակիցների մասին, շնորհիվ հնագիտական գտածոների, ի մասնավորի բաբելոնյան սեպագիր սալիկների, իմանում ենք, որ գահակալել են 30 000–ից մինչև 40 000 տարի: Օրինակ՝ Էն–մեն–լու–աննան թագավորել է 43 200 տարի, իսկ Իբարտուտուն՝ 18 600 տարի: Դումուզին գահակալել է 36 000 տարի, իսկ մյուս թագավորները՝ 28 800–ական տարի: Ջրհեղեղից հետո, նախքան, սակայն, բաբելոնյան էպիկական հերոս Գիլգամեշը, ամենից երկար թագավորել է Քիշ քաղաքի թագավոր Էտանան՝ 1500 տարի, իսկ ամենից կարճատև՝ Ուրուկ (Օրեխ, նույն Էրեխն է) քաղաքի արքա Դումուզը՝ 100 տարի[3][1]:

Երրորդ՝ հարկ է նշել, որ ըստ հնագետների, որևիցե անձի կյանքի երկարակեցությունը և կառավարման շրջանի (հատկապես ջրհեղեղից հետո) երկարատևությունը բնավ չի ազդում բնագրի պատմական արժանահավատության կամ բանավոր ավանդության վրա: Այսպես օրինակ՝ մենք կարող ենք իբրև առասպել ժխտել, որ Քիշ քաղաքի թագավոր Էն–մեն– բարագեսին իշխել է 900 տարի, բայց նաև պարզված ու հաստատված և անվիճելի փաստ է, որ այդպիսի արքա իրականում գոյություն է ունեցել, քանզի մեզ հասած առաջին շումերերեն արձանագրությունները նրա անունով են: Այսպես ուրեմն՝այս թագավորը պատմական անձ է, ինչքան էլ վերահաշվենք և մեկնենք շումերական արքաների ցան-

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 40. “One Church”. East Lancing-Mich., USA, May-June, 1968, №. 3. P. 19; **Langdon S.,** Oxford Editions of Cuneiform Texts. Vol. II. Oxford, 1923, № 1.

կի այդ 900 թիվը: Բացի այդ, այսօր արդեն ժամանակակից հետազոտողները սկսել են պատմական անձանց շարքին դասել շատ հին մարդկանց, ովքեր երբեմնի դիցաբանական հերոսներ են համարվել, քանզի նրանց անուններին բազում լեգենդներ են առնչվում: Այսպես՝ այս հետազոտողները պատմական անձանց շարքին դասեցին Դումուզին (ուշ շրջանում աստվածացված՝ Թամմուզ անվամբ) և Գիլգամեշին՝ Ուրուկից[1] [4]:

Գիլգամեշ: Ասուրական բարձրաքանդակ:

Հետևաբար, ով էլ, ինչպես էլ վերաբերվի Ծննդոց գրքի 5–րդ և 11–րդ գլուխներում հիշատակված անձանց երկարակեցության փաստին, չի կարելի այս տեղեկությունները մտացածին համարել, մանավանդ եթե ուշադրություն դարձնենք շումերների, բաբելացիների և ասորեստանցիների ժամանակագրությունների նմանատիպ գծերին, որոնց հիմքում ընկած էր մի հին ավանդություն, որի տեղեկությունները ժամանակի ընթացքում չափազանցվել էին: Անկասկած, Սուրբ Գրքում հիշատակված մարդիկ իրական են, իսկ նկարագրված անցքերը՝ պատմական իրողություն:

Մանոթագրություններ

1. Հեղինակը նկատի ունի հին մարդկանց ապրած մեծաքանակ տարիների բացատրության փորձերը: Այս եղանակով, օրինակ, ապրած տարիների փոխարեն պետք է ամիսներ հասկանալ, այդ դեպքում իբր թե տարիների թիվը ավելի ճշմարտանման կդառնա: Սակայն, անտարակույս, նմանօրինակ բացատրությունը բռնազբոսիկ է. չէ՞ որ հին-

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 40.

կտակարանյան նահապետները չէին կարող 35 ամսական հասակում որդիներ ունենալ(եթե տարին ամիս հաշվվի):

2. Հին մարդկանց երկարակեցության նմանօրինակ բացատրություն տալիս է նաև Ա. Պ. Լոպուխինը («Библейская история Ветхого Завета» Монреаль, 1986 г., с. 19): Հավանաբար, սա վերջին հաշվով սկիզբ է առնում Հովսեպոս Փլաբիոսից («Հրեական հնախոսությունը» I, 3,9):

3. Հին հերոսների և թագավորների կյանքի ու գահակալության առասպելական թվերը բնորոշ են նաև հնդկական դիցաբանությանը: Այսպես՝ «Ռամայանի» հերոս, առասպելական թագավոր Ռաման իբր թե թագավորել է 9000 տարի: Շատ ժողովուրդների մոտ առաջին մարդկանց առողջության և երկարակեցության մասին հիշողությունը պահպանվել է ոսկեդարի մասին ավանդության ձևով (հույների, հռոմեացիների, եգիպտացիների, Մեքսիկայի ացտեկների և այլ ժողովուրդների մոտ):

4. Որոշ մասնագետ-ասուրագետներ նշում են նախաջրհեղեղյան և հետջրհեղեղյան նահապետների անունների նմանությունը Միջագետքի հին քաղաքների անվանումներին: Այսպես՝ Ծննդոց Գրքում (4. 17-18) կարդում ենք, որ Կայենը քաղաք է կառուցում և անվանում այն՝ ի պատիվ իր որդի Ենոքի (եբր. Հանոխ): Այս անունը նման է Ուրուկ քաղաքի անվանը (UNUG. Ki): Ենոքի որդի Իրադի* անունը շատ նման է Էրիդու քաղաքի անվանը, իսկ Լամեքը**՝ Լարաքային: Թոբել-Կայենի անվան բաղադրիչն է Թոբելը, որը, ինչպես կարծում են, ծագում է շումերական tibira բառից և, ինչպես եբրայական «կայենը», նշանակում է«դարբին»: Նախաջրհեղեղյան շումերական քաղաքներից մեկը կոչվում էր Բադ-տիբիրա («դարբնի պատ»):

Ջրհեղեղից հետո ապրած Աբրահամի նախնի նահապետների անունները հաճախակի լիովին համընկնում են Հյուսիսային Միջագետքի քաղաքների անվանումների հետ (տե՛ս «Աբրահամը և Ուր քաղաքը» գլխի ծանոթագրությունները): Այսպիսի համընկնումները, բնականաբար, պատահական չեն: Թե՛ հին և թե՛ նորագույն պատմության մեջ քիչ չեն ի պատիվ նշանավոր անձանց քաղաքներ անվանակոչելու օրինակները:

---

* Հայերեն բնագրում՝ Գայերիդադ:

** Հայերենում՝ Ղամեք. հունարենից թարգմանված հատուկ անունների լ-հնչյունը գրաբարում փոխարինվում էր ղ-ով:

ԱԲՐԱՀԱՄԸ ԵՎ ՈՒՐ ՔԱՂԱՔԸ

Հազարավոր տարիներ է, ինչ Աբրահամի անունը նվիրական է քրիստոնյաների, հրեաների և մահմեդականների համար, քանզի երեք գլխավոր միաստվածական կրոնների ակունքները սերտորեն կապված են Աբրահամ նահապետի անձի հետ: Ուստի և հնագիտության բնագավառում ոչ մի աշխատասիրություն, ոչ մի հետազոտություն չի կարող ամբողջական նկատվել առանց այս նահապետին անդրադառնալու, ում Սուրբ Գիրքը «բազում ազգերի հայր» է անվանում (Հռոմ. 4. 18): Աստվածաշունչ Ծննդոց գիրքը (ըստ Սեպտուագինտայի[1] հունարեն բնագրի) ասում է. «Թարան իր որդի Աբրամին, իր որդի Նաքորին, իր որդի Առանի որդի Ղովտին ու իր հարսին՝ իր որդի Աբրամի կնոջը, Քաղդեացվոց երկրից առավ տարավ Քանանացվոց երկիրը: Նրանք հասան Խառան ու բնակվեցին այնտեղ»: Իսկ ըստ հին եբրայական բնագրի. «Եվ առավ Թարան Աբրամին՝ իր որդուն և Առանի որդի Ղովտին՝ իր որդու որդուն և Սարային՝ իր հարսին՝ Աբրամի կնոջը և նրանց հետ միասին դուրս եկավ Քաղդեացվոց Ուրից, որպեսզի գնան Քանանի երկիր, և հասան Խառան ու բնակվեցին այնտեղ» (Ծնն. 11. 31): Այսպիսով հին եբրայական բնագիրն ասում է, որ Աբրամի հայրն իր ամբողջ ընտանիքով ելավ քաղդեական Ուր քաղաքից:

Նախքան անգլիացի սըր Չարլզ Լեոնարդ Վուլլի կողմից 1922 թ.–ից մինչև 1934 թ. կատարված պեղումները, մենք այս քաղդեական քաղաքի մասին ոչինչ չգիտեինք:

Մի ժամանակ դա կարևոր քաղաք էր, սակայն կամաց–կամաց կորցրեց իր նշանակությունը և ի վերջո Կյուրոս Մեծից

1 Այս անվամբ է կնքված հին Կտակարանի հունարեն կարևորագույն թարգմանությունը, որը Ուղղափառ Եկեղեցու ընկալյալ կանոնական բնագիրն է: Թարգմանվել է եբրայերենից և ինչպես ասում է պրոֆ. Պ. Ի. Բրացիոտիսը. «Հին Կտակարանի մեզ հայտնի հունարեն թարգմանություններից հնագույնն է»: Եվսեբիոսի բնորոշմամբ՝ «Աստծուց կյանքի կոչված» սույն թարգմանությունը, ըստ ավանդության, կատարվել է Ք. ա. 250 թ. Ալեքսանդրիայում՝ ձեռամբ հունախոս 72 հրեաների: Հակիրճության և պարզության համար այն կանվանենք «Յոթանասունի (թարգմանիչների) թարգմանություն» կամ LXX:

(Ք. ա. VIդ.) հետո անհետացավ պատմական թատերաբեմից: Նույնիսկ հայտնի չէր նրա գտնվելու վայրը մինչև 1854 թ., երբ բրիտանացի Ջ. Է. Թեյլորը Թելլ–ալ–Մուկղայրեռում (այսպես էին արաբերեն անվանում այդ վայրը, որ թարգմանաբար նշանակում է «Ձյութե բլուր») ձեռնամուխ եղավ առաջին, բայց մակերեսով և խորությամբ ավելի համեստ պեղումներին: Թեյլորը Բասրայում իր երկրի հյուպատոսն էր, իսկ Թելլ–ալ–Մուկղայրեն (հին Ուրը) գտնվում էր Բասրայից 150 մղոն հյուսիս:

Թեև մեծ խանդավառությամբ էր աշխատում, բայց մեծ հաջողությունների չհասավ: Ընդսմին չկարողացավ ավարտել իր ձեռնարկումը. նրան Անգլիա կանչեցին: 1918 թ. Բրիտանական թանգարանի հովանու ներքո Թեյլորի գործը շարունակեց այդ թանգարանի աշխատակից Ռ. Քեմբել Թոմպսոնը: Սակայն փայլուն հաջողություններով պսակված պեղումները անցկացվեցին ավելի ուշ՝ ամերիկա–բրիտանական գիտարշավի կողմից, որը համատեղ կազմակերպել էին Ֆիլադելֆիայի համալսարանի (ԱՄՆ) և Բրիտանական թանգարանները: Պեղումները ղեկավարում էր Վուլլին, ով այդժամ 43 տարեկան էր, բայց Եգիպտոսում, Նուբիայում, Կարքեմիշում և Վերին Եփրատում շատ հաջող հնագիտական պեղումների մեծ փորձ ուներ: Ուրի պեղումները սկսեցին ու մեծ փութաջանությամբ անցկացրին: Այն տևեց 12 տարի՝ 1922 թ. մինչև 1934 թ.: Այս կարևոր հետազոտությունները լույս սփռեցին քաղդեական հարուստ Ուր քաղաքի ապրելակերպի, սովորույթների ու ավանդույթների վրա. սա այն քաղաքն է, որից հեռացավ Աբրահամը:

Սակայն նախքան անդրադառնալը, թե ինչպիսին էր այս քաղաքը Աբրահամի ժամանակ, հարկ է կանգ առնել ժամանակագրության հարցի վրա:

Աբրահամի դարաշրջանի ստույգ ժամանակագրությունը սահմանելը դյուրին չէ, քանզի մենք չենք կարող լիովին հենվել Հին Արևելքի ժողովուրդների կիրառած թվագրության համակարգերի վրա: Հարմարության համար հիմք են ընդունում 2000–1700 թվերի միջև ընկած ժամանակաշրջանը: Ամենատարբեր տարեթ-

վեր են մատնանշում, բայց Ք. ա. 1700 թվականից ոչ ուշ, առավել հաճախ առաջարկում են Ք. ա. 2000 թվականից վաղ տարեթիվը [1]:

Այսպես ուրեմն, Իսրայելի ժողովրդի արմատներն այնտեղից են, որտեղից սկիզբ է առնում մարդկային մշակույթը, այն է՝ քաղդեական Ուրը: Սա հարավային Միջագետքի հնագույն քաղաքներից մեկն է: Պեղումները ցույց տվին, որ այս քաղաքի հնամենի ծաղկուն մշակույթը ծնունդ է առել պատմության արշալույսին՝ Ք. ա. չորրորդ հազարամյակում: Քաղաքը կառուցվել է Եփրատի ափերին՝ Տիգրիսի և Եփրատի միջև գտնվող շրջանի ամենահարավային մասում: Ներկայումս Եփրատը փոխել է իր հունը. հոսում է այդ տեղից դեպի արևելք՝ երեք մղոն հեռավորության վրա: Իսկ այն ժամանակներում նրա ջրերը հոսում էին Ուրի երկայնքով՝ քաղաքից դեպի արևմուտք:

Հնագույն ժամանակներից ի վեր այս երկրում բնակություն էին հաստատել տարբեր ծագմամբ երկու ժողովուրդ՝ շումերներն ու աքքադացիները, ովքեր խոսում էին տարբեր լեզուներով: Նրանք ապրում էին նույնանուն մի երկրի երկու շրջաններում: Աքքադը գտնվում էր Բաբելոնի հյուսիսային մասում, իսկ Շումերը՝ հարավայինում [2]: Եվ չնայած ռասայական և էթնիկական զանազանություններին՝ այս երկու ժողովուրդներն ընդհանուր մշակույթի, ընդհանուր կրոնի կրողներ էին և միևնույն ապրելակերպն ունեին: Ըստ հնագետների՝ այս մշակույթը ծաղկել էր դեռ պատմական դարաշրջանի արշալույսին: Հնագիտական հետազոտությունները մշտապես և հարաճուն վստահությամբ հավաստում են, որ այս մշակույթը շումերների ձեռամբ էր ստեղծվել, ովքեր պատմության ասպարեզ էին եկել Ք. ա. IV հազարամյակում: Այս ժողովրդի ծագումը ցայսօր անհայտ է[1]:

Խոր անցյալում՝ Ք. ա. մոտ 3–րդ հազարամյակում, աքքադացիները կամ սեմիտները մի քանի ալիքով հյուսիս–արևմուտքից թափանցեցին շումերների բնակեցրած շրջանները և խաղաղ

1 **Free J. P.,** cit. P. 32. Charlier C. The Christian Approach to the Bible. Paulist Press, Deus Books, N. Y.,1967. P72-73.

Բրոնզե գլուխ Նինվեից (ենթադրվում է, որ Աքքադական թագավորության հիմադրի՝ Սարգոն I-ի քանդակն է:) Ք. ա. XXIII դ., Բաղդադ, Իրաքյան թանգարան:

հաստատվեցին նրանց մեջ: Ք. ա. 3–րդ հազարամյակի երկրորդ կեսին սեմիտների արքա Սարգոն I–ը միավորեց այս երկու ժողովուրդներին, և սեմիտական ցեղը լիովին յուրացրեց շումերների մշակույթը:

Հնագիտությունը հաստատված է համարում, որ Ուրը շումերական մշակույթի հնագույն օրրաններից է, թեև վաղնջական ժամանակներից քաղաքում և նրա մերձակայքում ապրել են սեմական ժողովրդի մեծաքանակ ներկայացուցիչներ:

Թեև սպառիչ պատասխան չկա այն հարցին, թե ի սկզբանե որտեղից են սերել սեմական ցեղերը, այնուամենայնիվ կարելի է ասել, որ Թարան՝ Աբրահամի հայրը, Ուրի սահմաններում և նրա մերձակայքում բնակություն հաստատած այդպիսի մի ցեղախմբի առաջնորդն էր[1]: Ուստի, ինչպես գրում է հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնը՝ «ոչ մի անհավանական բան չկա, որ սեմական ցեղերից մեկի ներկայացուցիչը, ինչպիսին Աբրահամն էր, կարող էր ծագումով հարավային Միջագետքից լինել, թեև մենք ի զորու չենք ստույգ որոշել, թե հատկապես ո՛ր սեմական խմբից էր նա սերում»[2]:

Իսկ այժմ եկեք պատկերացնենք, թե ինչպիսին էր այդ ժամանակվա Ուր քաղաքը: Աշխարհի հնագույն քաղաքներից մեկն էր՝ Միջագետքի ստորին ավազանում կառուցված, մեծ ու նշանավոր քաղաք՝ կյանքով առլեցուն, աղմկոտ ու փթթուն: Ուրը հզոր պետության կենտրոնն էր: Սըր Լեոնարդ Վուլլիի պեղումները

1 **Charlier C.,** Op. cit. P. 74.
2 **Thompson J. A.,** Op. cit. P. 16.

վկայում են այս քաղաքի հարստության, զորության և վեհության մասին, իսկ գտածոները՝ լույս սփռում նրա ճարտարապետության և կառուցապատման համակարգի, կրոնի, կրթության և մշակույթի, նրա բնակիչների բարքերի ու սովորությունների վրա: Վուլլիի պեղումների երախայրիքը հռչակավոր տաճարային աշտարակն էր՝ բարձրաբերձ զիկկուրատը, որ կառուցվել էր շումերական թագավոր Ուր Նամմուի կողմից խոր անցյալում: Նրա շուրջը մեհյաններ էին կառուցված, որոնցից ամենամեծի մակերեսը 100x60 մետր էր և նվիրված էր Լուսնի աստվածուհի Նաննարին (նույն ինքը Նաննան կամ Նա–ան–նան): Տաճարների ու զիկկուրատի զբաղեցրած մակերեսը 360x180 մետր էր[1]:

Ք. ա. մոտ 2500 թվականով թվագրվող Ուրի թագավորական դամբարաններում հայտնաբերվել են նվագարաններ, ոսկյա զարդեր, թանկարժեք քարեր, հագուստ, խոհանոցային սպասք, մարտակառքեր, զենք, գրաստի ու ստրուկների աճյուններ: Այս ամենը հանգուցյալի հետ էր թաղված, քանի որ Ուրի բնակիչները հավատում էին հանդերձյալ կյանքին: Վերոհիշյալ իրերն ու ստրուկները թագավորի հետ էին թաղվել, որպեսզի մահից հետո էլ ծառայեին նրան: Այսպես օրինակ՝ Աբարգի թագավորի գերեզմանում գտնվել է վեց տղամարդու և վաթսունութ կնոջ աճյուն, որոնց հանձնել էին հողին նրա հետ միասին. նրանք բոլորն էլ գեղեցիկ և թանկագին հանդերձներով էին զգեստավորված: Շուբադ թագուհու գերեզմանում քսանհինգ մարդու աճյուն է հայտնաբերվել: Նրանք բոլորն էլ ողջ–ողջ էին հողին հանձնվել, այսինքն՝ մահացել էին ոչ մարմնական վնասվածքներից՝ նախապես ափիոն կամ հաշիշ ընդունելով:[2] Թագավորական դամբարաններից մեկում Վուլլին հայտնաբերեց սալիկներ՝ հետևյալ պատկերով՝ թագավորական ընտանիքը սեղանի շուրջ. նրանց սպասավորում են ստրուկները, կողքին՝ ռազմական հանդերձներով ռազմիկներ ու նվագարաններով երաժիշտներ, ովքեր իրենց խաղով զվարճացնում են խնջույքի մասնակիցներին:

1 **Free J. P.,** Op. cit. P. 50-51.
2 **Vos H. F.,** Op. cit. P. 94; Short A. R., Op. cit. P. 12-13.

Աբրահամի հայրենիքը՝ Ուրը, վարչական առումով արտակարգ կազմակերպված քաղաք էր: Ուրը նաև մեծ առևտրական քաղաք էր. այստեղ ընդունված էր փող տալու և վերցնելու համար անդորրագրեր հանձնել, հարկահավաքության համար հարկային ցուցակներ կազմել, գների, պայմանագրերի, պատիժների մասին դատական որոշումների գրառումներ անել: Քաղաքն ուներ իր արհեստանոցներն ու ջուլհականոցները. կառուցապատման հատակագիծը ներառում էր և՛ փողոցներ, և՛ հրապարակներ. այստեղ տներն այնքան հոյաշեն և ընդարձակ էին, որ Բաբելոնում պահպանված տները նրանց կողքին խղճուկ հյուղեր կթվային: Ուրն իր կոյուղին ուներ. այս քաղաքի տները միջինը 12 մ լայնություն և 15,65 մ բարձրություն ունեին՝ 4,5 մ լայնությամբ սալահատակված ներքնաբակերով: Տները երկհարկանի էին, ընդ որում յուրաքանչյուրի մեջ, իր չափերին համապատասխան, տասից մինչև քսան սենյակ կար՝ բակի շուրջը տեղակայված և բաց՝ լույսի ու արևի համար: Առաջին հարկում գտնվում էր հյուրասենյակը, խոհանոցը, ծառաների սենյակը, մառանն ու ընտանեկան զոհասեղանը (ընտանիքի հովանավոր–չաստվածների արձանիկ–կուռքերի մեհյան): Այս արձանիկների՝ թերափների՝ տան կուռքերի մասին հիշատակում է Սուրբ Գիրքը, երբ պատմում է այն մասին, թե ինչպես Ռաքելը՝ Հակոբ նահապետի կինը, վերցնելով փոքրիկ հեթանոսական կուռքերը, տեղավորեց ուղտի թամբի տակ, իսկ ինքը վրան նստեց, որպեսզի թաքցնի իր հայր Լաբանից և այսպիսով Միջագետքից Քանան տեղափոխի (Ծննդ. 31. 30, 32, 34): Սովորաբար երկրորդ հարկում ընտանիքի անդամների ու հյուրերի սենյակներն էին գտնվում, որոնց երկայնքով մեկ փայտից վանդակապատ պատշգամբասրահն էր ձգվում: Այս սենյակների կողքին լվացարաններ ու զուգարաններ կային[1]: Ստորին հարկը աղյուսներից էր կառուցվում, վերինը՝ կավե սալերից. պատերը սվաղված էին ու սպիտակեցված[2]: Տան տակ ընտանիքի մահացած անդամների կամարակապ գերեզմաններն էին գտնվում:

1 **Vos H. F.,** Op. cit. P. 96-97.
2 **Free J. P.,** Op. cit. P. 49; Keller W., Ἡ Βίβλος ... Σ. 40.

Առհասարակ Ուրում գրաճանաչությունն ու կրթությունը ծաղկում էր ապրում: Հայտնաբերված կավե սալիկները վկայում են, որ դպրոցականներին սեպագրություն էին ուսուցանում: Նրանք կարդալ էին սովորում հիմնականում օրիներգերով: Նրանց գումարում, հանում, բազմապատկում և բաժանում էին սովորեցնում, իսկ բարձր դասարաններում՝ քառակուսի և խորանարդ արմատներ հանելու խնդիրների լուծում, ապա անցնում էին երկրաչափության գործնական պարապմունքների[1]:

Ահա թե ինչպիսին էր քաղդեական Ուրը: Երբ Աբրահամը պատանի էր, Ուրն արդեն հնամենի քաղաք էր՝ հարուստ ու բարգավաճ, առևտրի կենտրոն, ուր եռում էր կյանքն ու ամեն տեսակի գործունեություն: Եվ իհարկե, այստեղ փթթում էր հեթանոսությունը: Լուսնի չաստված Նաննարին և «թերափներին»՝ տան կուռքերին երկրպագողների և այս փափկակենցաղության, ճոխության և հարստության մեջ Աբրահամը, ահա, լսեց ճշմարիտ Աստծու ձայնը. «Դո՛ւրս ել քո երկրից և քո տոհմից ու արի՛ այն երկիրը, որ քեզ ցույց կտամ»: Եվ Աբրահամը կատարեց Աստծո պատգամը: «Այն ժամանակ Աբրահամը, ելնելով քաղդեացիների երկրից, բնակվեց Խառանում» (Գործք 7. 3–4): Աստծո պատգամը կատարելիս՝ Աբրահամը ոչ մի րոպե չտարակուսեց: Նրա հավատն առ Աստված անսասան էր, և թեև չգիտեր, թե ի վերջո ուր պիտի գնա, Աբրահամը, այնուամենայնիվ, հեռացավ իր հայրենիքից, որը, ինչպես ցույց տվեց հնագիտությունը, 4 հազար տարի առաջ նշանավոր և հարուստ քաղաք էր, և աստանդական ու քոչվոր դարձավ: Ահա թե ինչպիսին էր նրա հավատն առ Աստծո խոստումը, ահա թե ինչ մեծ էր նրա սերը Աստծո հանդեպ, ահա թե ինչ կատարյալ ու անբասիր էր նրա հնազանդությունը Աստծո պատգամին: Ըստ այդմ էլ Աստված նրան առատա-

Ք. ա. 3-րդ հազարամյակի վերջի և 2-րդ հազարամյակի սկզբի Միջագետքի զորահրամանատարների հանդերձները (ըստ թրծակավե սալիկների պատկերների):

1 **Woolley L. Abraham. P.** 130. Ըստ՝ Vos H. J., Op. cit. P. 96.

ձեռնորեն հատուցեց: Վերը թվարկված հնագիտական գյուտերը ոչ միայն հաստատեցին Սուրբ Գրքի իսկությունը, այլև պատեհություն ընձեռեցին մեզ ավելի խորն ըմբռնելու Աբրահամ նահապետի հոգու մեծությունը և ապշեցուցիչ հավատը [3]:

Խառանը, ուր մեկնեց Աբրահամը, սերտագույն կրոնական աղերսներ ուներ Ուրի հետ, քանզի այստեղ էլ, ինչպես Ուր քաղաքում, պաշտում էին լուսնի աստվածուհի Նաննարին: Այս քաղաքի մասին դեռ համեմատաբար վերջերս ոչինչ հայտնի չէր հին սեպագիր աղբյուրներից: Սակայն այսօր հնագիտության շնորհիվ մենք ինչ–որ բան գիտենք նաև Խառանի մասին:

Ք. ա. 2–րդ հազարամյակի սկզբում Միջագետքը ենթարկվեց ամորհացի սեմական ցեղերի ներխուժմանը. նրանք եկան արևմուտքից՝ ձգտելով բնակություն հաստատել Միջագետքի բերրի շրջաններում: Նրանցից մի քանիսը հասան Ասորիք և Պաղեստին, ուստի հազար տարի անց նրանց կարելի էր տեսնել նաև Քանանում: Այնուամենայնիվ նրանց ճնշող մեծամասնությունը հաստատվեց Եփրատի հովտում: Հետագայում Մարի քաղաքում (Միջին Եփրատում) նրանք հիմնեցին հզոր և ծաղկուն թագավորություն: Սույն քաղաքը հայտնաբերվեց ֆրանսիացի անվանի հնագետ Ա. Պարրոյի գլխավորությամբ անցկացված պեղումների ժամանակ: 1933–1939 թթ., ի շարս այլոց, Պարրոն իր աշխատակիցների հետ Մարիի ապարանքում հայտնաբերեց այդ քաղաքի թագավորի արձանը և ավելի քան 30 հազար սեպագիր բնագրերով սալիկներ: Ք. ա. մոտ 2000 թ. կառուցված Մարի քաղաքի ապարանքը Հին Արևելքի ճարտարապետական գոհարն էր: Ի վերջո Բաբելոնի Համմուրապի թագավորը (Ք. ա. 1728–1686 թթ.) Մարի քաղաքը ենթարկեց իրեն, իսկ մոտ 1700 թ. ավերեց երբեմնի հզոր այդ պետության ոստանը:

Բայց մեզ առաջին հերթին հետաքրքրում են այն հազարավոր սալիկները, որոնք գտնվել են Մարի քաղաքի պալատում: Դրանցում հիշատակված են սուրբգրային քաղաքներ Խառանը (Ծննդ. 11. 31) և Ռեբեկայի հայրենիք Նաքորը (Ծննդ. 24. 10): Հենց այդ նույն սալիկների այն հատվածներում, որտեղ խոսվում է Մարի

քաղաքի մեծ արքայի զորահրամանատարների և գավառապետների մասին, փորագրված են նաև այլ բիբլիական անուններ, զորօրինակ՝ Փաղեկ, Սերուք, Նաքոր, Թարա (Ծննդ. 11. 18, 21, 23, 24):

Ահա թե ինչպես «Մարի քաղաքի արքայական սեպագիր սալիկներն առաջին անգամ մեզ ապշեցուցիչ ապացույցներ ներկայացրին առ այն, որ սուրբգրային նահապետների պատմությունը լոկ բարեպաշտ ավանդություն չէ». դրանք լեգենդներ և առասպելներ չեն, ինչպես պնդում են սկեպտիկները, այլ անցքեր «մի պատմական ժամանակաշրջանի, որի ժամանակագրական սահմանները կարելի է որոշել»[1]:

Մանոթագրություններ

1. Յոթանասնիցի տվյալների համաձայն՝ հարկ է Աբրահամի կյանքի թվականներ համարել 2115-1940 թթ.: Բայց գիտականորեն այս ժամանակաշրջանի անցքերի թվագրումը շատ դժվար է, քանզի մենք գրեթե ոչ մի ժամանակագրական ցուցումներ չունենք: Պատմաբանների մեծամասնությունը կողմնակից է այսպես կոչված «միջին ժամանակագրության», ըստ որի, օրինակ, բաբելոնյան թագավոր Համմուրապին ապրել է XVIII դ. և եղել, բազմաթիվ գիտնականների կարծիքով, Աբրահամի ժամանակակիցը: Սակայն սույն դարաշրջանի այսպիսի թվագրումը հակասում է Սուրբ Գրքին:

2. Բաբելոնը՝ նույն ինքը Սենաարը և Քաղդեան, գտնվում էր ժամանակակից Իրաքի հարավային մասում: Վաղնջական ժամանակներում (Ք. ա. IV-III հազարամյակ) այս շրջանի հյուսիսային մասը, որտեղ հետագայում գտնվում էր Բաբելոն քաղաքը, կոչվում էր Աքքադ (շումերերեն Կի-ուրի): Ներկայումս Բաղդադին կից շրջան է: Պարսկական նեղուցին հարող շրջանը կոչվում էր Շումեր: Այժմ ընդունված է Միջագետք անվանել այն տարածքը, որտեղով հոսում են Տիգրիսն ու Եփրատը: Սակայն հնում (Ք. ա. 2-րդ հազարամյակից ի վեր) այդպես կոչվում էր Բաբելոն քաղաքից հյուսիս ընկած շրջանը, որտեղ այս գետերը բավական հեռանում են իրարից (ներկայումս արաբներն այս շրջանն անվանում են Ջազիրա՝ «կղզի»), այնինչ Բաբելոն քաղաքից հարավ ըն-

1 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 80.

կած շրջանը, որտեղ այս գետերը մոտենում էին իրար ու գրեթե զուգահեռաբար հոսում, կոչվում էր Բաբելոնիա:

3. Կասկածի տեղիք չի տալիս այն փաստը, որ Աբրահամը սերում էր Միջագետքից՝ շումերա-աքքադական մշակույթի օրրանից, որն այդ ժամանակ ծաղկում էր և միջազգային առևտրի կենտրոն էր: Սակայն նրա հայրենիքի նույնացումը Վուլլի կողմից պեղված շումերական Ուր քաղաքի հետ անվիճելի և միակ հնարավոր տարբերակը չէ, թեև այն այսօր համարյա ընդունված կարծիք է: Նախքան Վուլլի պեղումները, ըստ Ծննդոց գրքի մեկնիչների ու հետազոտողների մեծամասնության, այն Էդեսսա (ասորերեն Ուրֆա) քաղաքի մեկ այլ անվանումն էր և ոչ ոք չէր կասկածում, որ այս քաղաքը գտնվում էր Խառանի մոտ (տես, օրինակ, համապատասխան հոդվածը Архим. Никифор «Библейская энциклопедия», 1891 г. с. 718): Սույն կարծիքի օգտին կարելի է բյուրավոր ապացույցներ բերել: Ինչպես արդեն նշել ենք, Հ. Փլաբիոսն իր «Հրեական հնախոսությունում» վկայում է, որ իր օրոք էլ Ուրում ցույց էին տալիս Առանի գերեզմանը: Բայց պեղված նյութերի համաձայն՝ Վուլլի հայտնաբերած Ուրում մարդիկ դադարել են ապրել արդեն Ք. ա. III դարից, իսկ Հովսեպոսն ապրել է Ք. հ. I դ. և հետևաբար, նկատի չուներ սըր Վուլլի կողմից հայտնաբերված Ուր քաղաքը: Արաբները ցայսօր էլ ցույց են տալիս Առանի շիրիմը, բայց ոչ թե Իրաքում, այլ Էդեսսա քաղաքի (ներկայիս Ուրֆա) շրջանում: Նրանք հավաստում են, որ հինավուրց Խառան քաղաքը կոչված է ի պատիվ նույն Առանի, ցույց են տալիս Աբրահամի ջրհորը և այլն: Գիտությամբ հաստատված են Եփրատի վերին հոսանքներում գոյություն ունեցած բազմաթիվ հին քաղաքների անունները, ընդ որում պարզված է, որ դրանցից մի քանիսը նույնական են Աբրահամի մերձավոր նախնիների անուններին (զորօրինակ՝ Սերուք, Նաքոր, Ռագավ, հավանաբար անգամ Թարա (թերևս սա Թերխա քաղաքն է, քանզի եբրայերեն Թարան Թերխա է): Արփաքսադ (եբր. Արփախշադ) անունը հար և նման է ասորեստանյան Արրափխի քաղաքին (գտնվել է Աշշուր քաղաքից արևելք, ներկայիս իրաքյան Կիրկուկ քաղաքը): Շումերական «ուր»-ի համընկնումը եբրայական բառի հետ ոչ միայն չի խոսում հօգուտ նրանց նույնականության, այլև լեզվաբանության տեսակետից դրանք ընդհանրության որևիցե եզր չունեն: Հայտնի է, որ մի լեզվից մյուսն անցնելիս բառերը աղավաղման են ենթարկվում: Օրինակ՝ շումերական Ուրուկ քաղաքը եբրայական բնագրում «Էրեխ» է դարձել, իսկ «իր»՝«քաղաք» բառն ըստ երևույթին աղավաղված շումերական «ուրու»-ն է՝ նույն իմաստով: Վերջապես հարկ է նշել, որ Վուլլիի պեղած շումերական Ուրից կարելի էր Պաղեստինում

հայտնվել անհամեմատ ավելի կարճ ճանապարհով, քան Խառանով, որը գտնվում է նրանից հյուսիս- արևմուտք՝ մի քանի հարյուր կիլոմետր հեռավորության վրա: Խառանը բնավ Ուրից Պաղեստին տանող ճանապարհի վրա չէր գտնվում, մինչդեռ Սուրբ Գիրքը նշում է, որ Աբրահամն այդ քաղաք գնաց հենց Պաղեստին տանող ճանապարհով (Ծնն. 11. 31): Հարավային Միջագետքից այնտեղ տանող քարավանային ուղիներ կային, այնպես որ բնավ կարիք չկար Խառան մտնելու համար այդքան ահռելի պտույտ կատարել: Գիտության մեջ հաստատված է նաև այն փաստը, որ քաղդեացիներն ի հայտ եկան հարավային Միջագետքում և այն իրենց անունով կոչեցին Ք. ա. I հազարամյակի սկզբից ոչ վաղ, իսկ Աբրահամը համարյա հազար տարի ավելի վաղ է ապրել, երբ դեռ Վուլլի կողմից պեղված քաղաքում քաղդեացիների մասին և ոչ մի հիշատակություն չկար: Այս ամենը, ինչպես և մի քանի այլ փաստեր, խոսում են հօգուտ հին մերձավորարևելյան ավանդության, ըստ որի Աբրահամի հայրենիքը հին Էդեսայի տարածքն է: Իմիջիայլոց, ըստ Սուրբ Գրքի վկայության, ինքն Աբրահամը, իր ծառային ուղարկելով Նաքորի քաղաք՝ իր որդու համար հարսնացուի ետևից, Միջագետքյան Ասորիքը (Արամ Նահարայն) անվանում է իր հայրենիքը (տես Ծնն. 24. 4, 10). «կգնաս այն երկիրը, որտեղ ծնվել եմ, իմ տունը»: Այն ժամանակ Միջագետք էր անվանվում Ասորիքի հենց այն մասը, որը ընկած էր Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքներում, իսկ արդի Իրաքի հարավային կողմը կոչվում էր Երկգետ, Բաբելոնիա կամ Քաղդեա:

ԱԲՐԱՀԱՄԻ ՕՐՈՔ ԱՊՐՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Շնորհիվ հնագիտության՝ մեզ համար այլևս առեղծված չէ այն աշխարհը, որում ապրել, պանդխտել և գործել է Աբրահամը: Աբրահամի օրոք աշխարհը խռովահույզ էր, իսկ կյանքը՝ տագնապալից: Ք. ա. 2000 թ. հետո աշխարհը հընթացս դարերի անդադրում փոխվում էր: Արժե ծանոթանալ այդ աշխարհին. այդժամ Հին Կտակարանի պատմական ճշմարտացիությունն ու այդ աշխարհում անվերջ աստանդական կյանք վարած Աբրահամի հավատն էլ ավելի մեծ հիացմունք կառաջացնի:

Մենք արդեն խոսել ենք շումերների և սեմիտ–աքքադացիների մասին: Այժմ անդրադառնանք ամորհացիներին, որոնց հա-

ճախ է հիշատակում Հին Կտակարանը, քանզի Պաղեստինում և գլխավորաբար Հորդանանում բնակություն հաստատած ժողովուրդներից էին: Եգիպտոսում հայտնաբերված Ք. ա. 1925–1873 թթ. թվագրվող հմայախոսական բնագրերի (Execration Texts) անգին ժողովածուն Ք. ա. XIX դ. 2–րդ կեսով թվագրվող մի շարք այլ բնագրերի՝ կավե արձանների մակագրությունների հետ մեկտեղ մեզ առատ նյութեր են ընձեռում դեպի Ասորիքի հարավ և Գալիլիայի հյուսիս–արևելք շարժվող ամորհական ցեղերի քաղաքների ու առաջնորդների անունների վերաբերյալ: Այդտեղից նրանք շարժվեցին Հորդանան և Պաղեստին: Հայտնի է, որ իսրայելացիները Եգիպտոսից ելքի ընթացքում Հորդանանում պարտության մատնեցին ամորհացի Սեհոն և Օգ թագավորներին (Թվոց 21. 21–35), ինչպես և մարտնչեցին ամորհացիների դեմ Պաղեստինում (Հեսու,10–րդ գլուխ): Եգիպտական մի բնագրում պատմվում է ոմն Սինուհեթի՝ եգիպտացի մեծատոհմիկի մասին, ով, փախուստի դիմելով, հաստատվում է ամորհացիների առաջնորդի մոտ, ում ապրելակերպը հիշեցնում է այն, ինչ գիտենք Աբրահամի, Լաբանի և Հակոբի կենցաղավարության մասին[1] [1]:

Աբրահամի դարաշրջանում ապրած, Հին Կտակարանում հիշատակված մյուս ժողովուրդը խուրրիներն են, ում հաճախ նույնացնում են քոռացիներին (Ծնն. 14. 6): Սև ծովի ափերից (Հարավային Կովկաս) սերող այս ժողովուրդը Ք. ա. մոտ 2400–2000 թթ. սկսեց բնակվել Տիգրիս գետի շրջակայքում: Ապա շարժվեց հյուսիսային Միջագետք, որտեղ հիմնեց հզոր թագավորություններ, զորօրինակ՝ Միտաննի թագավորությունը:

Նշանավոր հին խուրրիական Նուզի քաղաքում հողաբլուրների տակ ծածկված բազում արձանագրություններ պեղվեցին: Դրանք մեր առաջ մի աշխարհ բացեցին, որի սովորույթները նման էին Աբրահամի սովորույթներին[2]:

Խեթերը կամ «քեթացիները» Աստվածաշնչում 46 անգամ են հիշատակվում: Այս ժողովուրդն արդեն Աբրահամի օրոք գոյու-

1 **Pritchard J. P.** The Ancient Near East. Vol. I. An Anthology of Texts and Pictures. Princeton University Press,1973. P. 5 ff. **Thompson J. A.** Op. cit. P. 17.

2 **Thompson J. A.** Op. cit. P. 19-20; **Keller W**. ’Η Βίβλος …Σ.. 139,140,195.

Ք. ա. 2-րդ հազարամյակի ասորա-պաղեստինյան հանդերձները (ըստ եգիպտական պատկերների):

թյուն ուներ: Եկել են Եվրոպայից (պատկանում են հնդեվրոպական ցեղերին) և հաստատվել Փոքր Ասիայում՝ Անկարայից շուրջ 100 կմ հեռավորության վրա՝ ժամանակակից Բողազ–Քյոյի մոտ: Այդտեղ նրանք ձուլվեցին ծագումով ոչ հնդեվրոպացի խաթի ցեղի հետ և ժառանգեցին այդ ցեղանունը: Ստույգ տեղեկություններ չկան, թե Հին Կտակարանն ում մասին է խոսում՝ առաջին խաթիների, թե՞ երկրորդ խեթերի մասին: Համենայն դեպս մենք կարդում ենք, որ Աբրահամը Եփրոն Քեթացուց գնեց քարայրն իբրև ընտանեկան շիրմավայր (Ծնն. 23. 8–16): Ըստ հնագետների՝ շատ հավանական է, որ սույն դեպքում խոսքը հին խեթերից մեկի մասին է: Ըստ Փոքր Ասիայում հայտնաբերված կավե սալիկների արձանագրությունների և բնագրերի (սրանք հայտնի են «կապադովկյան վավերագրեր» անվամբ)՝ խեթերը Ք. ա. արդեն 2000–ականներին առևտուր էին անում ասորեստանցիների հետ: Ասուրական արձանագրությունները, ինչպես և Փոքր Ասիայում երևան եկած այլ գրավոր հուշարձաններ մատնանշում են, որ խեթերը մեծ ժողովուրդ էին[1]: Հնագիտության շնորհիվ այսօր մենք շատ բան գիտենք նրանց մշակույթի մասին: Խոշոր ամերիկյան համալսարաններում խեթերենը հատուկ հետազոտությունների առարկա է:

Հինկտակարանյան նահապետների և նրանց ազգականների անունները համադրելի են խեթական գրավոր հուշարձաններում կամ Ք. ա. XX–XVIII դդ. միջագետքյան և եգիպտական, իսկ որոշ դեպքերում էլ ավելի ուշ շրջանի բնագրերում հանդիպող նույն արմատն ունեցող, դրանց հետ նույնական կամ միանման անունների հետ: Այսպես, Աբրամ անունը համադրելի է Աբա(մ)րամ անվանը,

1 **Coder S. M.,** Howp G. F. cit. P. 97-98.

որը հանդիպում է Դիլբաթի կավե սալիկների վրա, Աբրահամ անունը Աբուրհան անվանը, որը հանդիպում է այսպես կոչված «հմայախոսական բնագրերում», Հակոբ անունը՝ Հակուբ–իլ–ին, Զաբուղոնը՝ եգիպտական և հին բաբելական աղբյուրների Զաբիղանին, Ասերը՝ Ասրային, իսկ Մարի քաղաքի բնագրերի (Մարի) Յամինա անունը համապատասխանում է, ինչպես ընդունված է կարծել, սուրբգրային Բենիամինին: Բոլոր այս բիբլիական անուններին նման անունների հանդիպում են Ք. ա. XIX–ից մինչև XVII դդ.[1]:

Խեթական թագավորության Խաթթուսաս մայրաքաղաքի դարպասի վրայի պատկերաքանդակ (այժմյան Բողազ-Քյոյ, Թուրքիա):

Բացի այդ, Մարի քաղաքում բացված 30 հազար սալիկների շնորհիվ մենք շատ բան իմացանք խուրրիների, ամորհացիների և ուրիշ ժողովուրդների մասին. հայտնի դարձան հինկտակարանյան ժամանակների սովորույթները, պատմական անձանց ու քաղաքների անունները: Պարզվում է, որ ամորհացիների միջավայրում հատկապես տարածված էին Հակոբ և Իսահակ անուններին նման անուններ: Նաքոր հատուկ անունը՝ իբրև քաղաքի անվանում, հանդիպում է «կապադովկյան վավերագրերում», Մարիի գրավոր հուշարձաններում և ուշ ասուրական բնագրերում: Նաքոր քաղաքը մտնում էր Խառանի գավառի կազմի մեջ: Բնագրերից մեզ հայտնի են այդ շրջանի բազմաթիվ այլ քաղաքների անվանումներ, իսկ որոշ դեպքերում այդ նույն անունները Սուրբ Գրքում օգտագործվում են իբրև անձնանուններ: Այսպես է, օրի-

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 48-49

նակ, Սերուք և Թարա[1] անունների պարագայում: Այս իսկ պատճառով էլ հնագետ Օլբրայթը Ծննդոցի 15–20 գլուխների մասին ասել է, որ «տվյալ դեպքում պատմական սկեպտիցիզմը միանգամայն անհիմն է», և որ «մեր առաջ ծառացած՝ հինկտակարանյան նահապետների մասին ավանդությունների պատմականության հարցին սպառիչ պատասխան է տրված»[2]:

Մանոթագրություն

1. «Սինուհեթի մասին պատմվածքի» մեջ տեղ գտած ամորհացի առաջնորդի կյանքի նկարագրության նմանությունը նահապետների մասին սուրբգրային պատումներին այնքան մեծ է, որ այն չէին կարող ժխտել նույնիսկ խորհրդային գիտնականները (տե՛ս. «История Древнего Востока» 4. 2, под редакцией Г. М. Бонгард-Левина, М., 1988. с. 224-225): Նկատի առնելով այն հանգամանքը, որ «Սինուհեթի մասին պատմվածքը» թվագրվում է Ք. ա. XX դարով, այսինքն՝ այն ժամանակով, երբ Աբրահամն աստանդական էր Պաղեստինում, այս եգիպտական բնագիրը սուրբգրային պատումի պատմականության ապացույց է: Ընթերցողը կարող է ծանոթանալ ռուսերեն թարգմանված այս բնագրի հետ հետևյալ երկու ժողովածուներից մեկնումեկում. Кацнельсон И. С., Мендельсон Ф. Л. «Сказки и повести древнего Египта»; М.,1956, նույն հեղինակների «Фараон Хуфу и чародеи. Сказки, повести, поучения древнего Египта»; М., 1958:

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 22,23

2 **Albright W. F.,** The Biblical Period from Abraham to Ezra. N. Y. 1963. P. 4-5. Մեջ. ըստ **Coder S. M., Howe G. F.** Op. cit. P. 92.

ՀԻՆԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՕՐԵՆՔՆԵՐԸ, ԲԱՐՔԵՐՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ

Հնագիտության նշանակալից վաստակը Սուրբ Գրքի ըմբռնման անդաստանում այն տեղեկություններն են, որոնք տրամադրում է այս գիտությունը հինկտակարանյան նահապետների օրոք գոյություն ունեցած ժողովուրդների օրենքների, կենցաղի և բարքերի վերաբերյալ: Այս տեղեկությունները քաղվում են օրենքների ժողովածուներից կամ այս ժողովուրդների բարքերի ու սովորույթների մասին պատահական հիշատակություններից, որոնք հանդիպում են նրանց առօրյա կյանքին վերաբերող բնագրերում, զորօրինակ՝ նամակներ, պայմանագրեր, գրավոր թույլտվություններ, ստացականներ և այլն: Այսօրվա դրությամբ բազմաթիվ նմանօրինակ արժեքավոր վկայություններ կան: Առաջին՝ ամորհական օրենքների առնվազն երեք ժողովածու կա, որոնցից մեկը մեզ է հասել ամբողջական: Դա Բաբելոնի ամորհացի թագավոր Համմուրապիի (Ք. ա. 1728–1686 թթ.) օրենքների հռչակավոր ժողովածուն է: 1901 թ. Սուսայում հայտնաբերվեց մի քարե կոթող, որի վրա արձանագրված էր օրենքների այս ժողովածուն: Այն պարունակում է քրեական և քաղաքացիական իրավունքի 247 հոդված, հոդվածներ պետական ծառայողների մասին, առևտրական հարաբերությունները կարգավորող օրենքներ և այլն: Այս ժողովածուն ըստ էության Էշնուննա քաղաքի և Լիպիտ–Իշտարա[1] արքայի օրենքների դրույթների և իրավունքի ժողովածուների ուշ շրջանի հավաքածուն է:

Բացի այդ մեր ձեռքի տակ անթիվ–անհամար բազմապիսի սեպագիր վավերագրեր կան, որոնք մեզ տեղեկություններ են հաղորդում այն ժամանակվա մարդկանց առօրյա կյանքում ընդուն-

1 **Pritchard J. B.,** The Ancient Near East. Vol. I. An Anthology of Texts and Pictures. P. 138-167.

Համմուրապիի օրենքների սև քարեկոթողը Սուսայից, Ք. ա. մոտ 1750 թ.:

Հին բաբելոնյան ժամանակների արքայի արձանի գլուխ, այսպես կոչված «Համմուրապիի գլուխը» Սուսայից:

ված բարքերի և սովորույթների մասին: Այս սալիկներից (կրակով թրծված կավե սալիկներ) առավել արժեքավորները հին խուրրիական Նուզի (կամ Նուզու) քաղաքում՝ Տիգրիս գետից դեպի արևելք (ներկայիս Յորղան–Թեփե մեծ քաղաքը) հայտնաբերվածներն են: 1925 թ. մինչև 1931 թ. պրոֆեսոր Կյերան Արևելյան հետազոտությունների ամերիկյան դպրոցի աշխատակիցների հետ միասին այստեղ գտավ քսան հազար սեպագիր բնագիր: Դրանք թվագրվում են ավելի ուշ ժամանակաշրջանով, քան հինկտակարանյան նահապետների դարաշրջանն էր: Հնագետները վերագրում են դրանք Ք. ա. XV դարին: Բայց, ինչպես նկատում է հնագետ Ջ. Է. Թոմպսոնը, նահապետների դարաշրջանից 400–500 տարվա տարբերությունը վճռորոշ նշանակություն չունի. քանի որ այս նույն «սովորույթները դեռ երկար էին պահպանվում, ուստի և սալիկները մեզ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում

նաև վաղ շրջաններում տվյալ երկրների իրավական և ընկերային դրության մասին»[1]:

Երբ հաջողությամբ վերծանվեցին Նուզիի կավե սալիկների բնագրերը, պարզվեց, որ այս քաղաքի բարքերն ու սովորությունները հար և նման են այն միջավայրի սովորություններին, որից ծագում են նահապետները: Այսպիսով Սուրբ Գրքի ամեն հետազոտող ունի հասարակական կարգի մի նմուշ, որը շատ նման է Աբրահամի, Իսահակի և Հակոբի օրոք եղած կարգերին: Բացի այդ, չափազանց կարևոր է, որ Նուզի քաղաքը գտնվել է Հյուսիսային Միջագետքում, որտեղ երկար ժամանակ ապրել է Աբրահամը: Սուրբ Գիրքը վկայում է, որ Աբրահամի հետնորդները դեռ երկար ժամանակ կապ էին պահում այս շրջանի հետ: Օրինակ՝ Իսահակը այստեղից իրեն կին առավ, իսկ Հակոբը այդտեղ քսան տարի ապրեց: Չի բացառվում, որ Պաղեստինում ապրող նահապետները հյուսիսային Միջագետքի իրենց ազգակիցների հետ ունենային նաև այլ կապեր՝ նման նրանց, որոնց մասին պատմում է Աստվածաշունչը:

Համենայն դեպս, այս հնագիտական հայտնագործությունների կարևոր արդյունքը հետևյալն է. ինչպես գրում է հնագետ, պրոֆեսոր Ջ. Է Թոմպսոնը. «Թեպետ ընդհուպ մինչև XIX դ. վերջը և XX դ. սկիզբը Ծննդոց գրքի պատումները համարվում էին մտացածին ու կեղծ և ենթադրվում էր, որ իբր թե դրանք գրի են առնվել ավելի ուշ՝ Իսրայելի թագավորների ժամանակներում. այժմ պարզ է, որ մենք գործ ունենք Ք. ա. II հազարամյակի առաջին դարերի մարդկային հասարակության անսուտ, իսկական նկարագրության հետ»[2]: Այդպես է արտահայտվում նաև նշանավոր հնագետ Վ. Ն. Օլբրայթը. «Վերջին տարիներին այնքան շատ համոզիչ նյութեր երևան հանվեցին, որ գիտնականներից առավել ողջամիտները հրաժարվեցին նախկին քննադատական տեսությունից, ըստ որի հինկտակարանյան նահապետների մասին ավանդությունները մեծավ մասամբ կազմվել են հրեական

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 26.
2 **Thompson J. A.,** Op. cit. P. 26.

թագավորության պառակտման դարաշրջանում, այսինքն՝ Ք. ա. IX–VIII դդ.»[1]:

Ծննդոց գրքի 23–րդ գլխում պատմվում է Սառայի՝127 տարեկան հասակում մահանալու մասին (դա միակ կինն է, ում տարիքը նշված է Գրքում): Ապա Մովսես մարգարեն պատմում է, թե ինչպես Աբրահամը Քեբրոնից[2] (Երուսաղեմից քսան մղոն դեպի հարավ) ոչ հեռու գտնվող ագարակում քարայր գնեց: Այդ ագարակը պատկանում էր Եփրոն Քետացուն: Ագարակով հանդերձ քարայրի (ուր թաղվեց Սառան, իսկ ավելի ուշ՝ Աբրահամը, Իսահակը, Ռեբեկան, Հակոբն ու Լիան) գնման հանգամանքները մանրամասնորեն շարադրված են Գրքում: Սակայն այն լիովին հասկանալի դարձավ միայն այն ժամանակ, երբ ուսումնասիրվեցին խեթական օրենքների սալիկները[3]: Այս սալիկներից պարզ դարձավ, թե ինչու էր Եփրոնը պնդում, որ Աբրահամը գնի ոչ միայն քարայրը, այլև դրան կից ագարակը: Եթե Աբրահամը գներ միայն քարայրը, ապա այն ժամանակվա օրենքների համաձայն, մշակելու և պահելու ծախսերը և այլն պիտի շարունակեր հոգալ Եփրոնը: Իսկ եթե Աբրահամը ձեռք բերեր նաև հողը, որի վրա գտնվում էր քարայրը, ապա բոլոր ծախսերն անելու պարտավորությունն ընկնում էր գնորդի և նոր տիրոջ վրա[4]:

Ծննդոցում նաև ասվում է, որ Աբրահամը Եփրոնին վճարեց «չորս հարյուր սատեր արծաթ,...վաճառականների մոտ ընդունված գնով» (Ծնն. 23. 16): Սա ցույց է տալիս, որ այդ ժամանակ փողի հաշիվը կշռով էր, այսինքն՝ մետաղադրամ դեռևս չկար: Եվ իսկապես, պեղումները հաստատեցին, որ մետաղադրամը շրջանառության մեջ է դրվել Ք. ա. մոտ 700 թ.: Հավանաբար այն գործածության մեջ մտցնողները Լիդիայի (շրջան Փոքր Ասիայում) բնա-

1 **Albright W. F.,** From the Stone Age to Christianity. The Johns Hopkins Press, Baltimore,1940. P. 183. (կա նաև երկրորդ հրատարակությունը. 1957թ.):

2 Քեբրոնը աշխարհի հնագույն քաղաքներից է: Քեբրոնի մոտ գտնվում էր «զույգ քարայրը», որտեղ թաղվել էին նահապետները (Ծնն. 23)

3 Տես **Մ. Լեմանի** հոդվածը (Lehman M. R.) «Bulletin of the American Schools of Oriental Research» հանդեսում,129 (1953). P. 15-18

4 **Kitchen K. A.** Op. cit. P. 155.

Քեբրոնի արդի տեսքը:

կիչներն էին: Այն եզրակացությունը, որ սատերը* (ըստ LXX–ի՝ դիդրահմա) Աբրահամի ժամանակ ավելի շուտ կշռի չափ էր, քան փող, ևս մեկ վկայությունն է այն բանի, որ ագարակի գնումն Աբրահամի կողմից կատարվել է շատ հին ժամանակներում: Հետազոտությունների արդյունքում նույն եզրակացությանը հանգեցին նաև Հովսեփի[1] ժամանակների վերաբերյալ. սատերը կշռի չափ է, այլ ոչ թե մետաղադրամ:

Ավելի ուշ Աբրահամի քարայրի տեղում կառուցվեց թուրքական մզկիթ, և մուտքը դեպի քարայր արգելվեց, համենայն դեպս, այդպես էր մինչև 1966 թ.: Երբ 1917 թ. գեներալ Ալլենբին գրավեց Երուսաղեմը, գնդապետ Մայներցգագենը, դատարկ մզկիթ մտնելով, իջավ քարայր: Պարզվեց, որ այն քառակուսի է, մոտավորապես 6x6 մ: Վառվող լուցկու լույսի ներքո նա մոտ 1,8 մ երկարությամբ, 0,9 մ լայնությամբ և 0,9 մ բարձրությամբ քարատապան տեսավ: Սպան, չիմանալով, թե ինչ կարևոր տեղում է հայտնվել, հեռացավ՝ հետագա հետազոտություններ չձեռնարկելով: Ավելի ուշ, երբ Քեբրոնում կարգ ու կանոն հաստատվեց, փորձ արվեց

* Սատեր - 1. Կշռի հին չափ, որ տարբեր երկրներում՝ տարբեր էր: 2. Համապատասխանորեն նույն կշիռն ունեցող արծաթադրամ:

1 **Free J. P.,** Op. cit. P. 67.

զննել քարայրը, սակայն մահմեդական պահակները ոչ ոքի ներս չթողեցին[1]:

Քննենք նաև նահապետների ու նրանց ժամանակակից ժողովուրդների ամուսնական ավանդույթները: Ծննդոցում ասվում է, որ երբ Աբրահամը որոշեց ամուսնացնել Իսահակին, իր ծառային ուղարկեց Հյուսիսային Միջագետք՝ իր որդու համար ազգականների միջից հարսնացու գտնելու: Ծառան եկավ Նաքոր քաղաք (24. 10): Մարիում գտնված սեպագիր սալիկներում վկայություններ կան այդ քաղաքի մասին, որը, սակայն, այստեղ հաճախ հիշատակվում է իբրև Նաքուր: Ըստ այդ սալիկների՝ Նաքոր և Խառան քաղաքներն իրենց ծաղկմանը հասան մոտ 2000–1900 թթ., այսինքն՝ նահապետների օրոք: Հին Կտակարանը պատմում է, որ Աբրահամի ծառան քաղաքից դուրս՝ ջրհորի մոտ, հանդիպեց Ռեբեկային, ով նրան տարավ իր հայր Բաթուելի՝ Աբրահամի եղբորորդու տուն (Ծնն. 11. 29; 24. 24): Աբրահամի ծառան Բաթուելի տանը ջերմ և սիրալիր ընդունելության արժանացավ. նրան նույնիսկ ջուր առաջարկեցին՝ ոտքերը լվանալու համար (24. 32): Հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ իրոք Ուր քաղաքի տներում՝ նախասենյակի անկյունում՝ մուտքի դռան մոտ, կային անոթներ ու ջրատար խողովակներ՝ նախատեսված երկար ճանապարհից փոշոտված ոտքերն ու ձեռքերը լվանալու համար[2]:

Նուզիի կավե սալիկներից իմանում ենք նաև, որ ինչ–որ մեկը, մի պատանի որդեգրելով, իր դստերը նրան կնության է տալիս: Սալիկներում բազմաթիվ դեպքեր են նշված, երբ տղամարդը որոշ ժամանակ աշխատել է իր հոգեհոր համար՝ նախքան նրա դստերը կնության առնելը: Դարձյալ ըստ այդ սալիկների՝ հայտնի է, որ հաճախ տղամարդու ամուսնությունն ուրիշ կնոջ հետ արգելվում էր: Իսկ եթե տղամարդն ամուսնանում էր, նրան պատիժ էր հասնում: Պրոֆեսոր Ջ. Բ. Պրիտչադի թարգմանած Հմր 2 սալիկի մեջ պատմվում է մի նմանօրինակ, իր տեսակի մեջ դասական դեպքի մասին: Ոմն Նաշվի որդեգրում է Վուլու անունով մի պա-

1 Տես **Free J. P.,** Op. cit. P. 67. Նաև՝ **Short A. R.**, Op. cit. p. 24.
2 **Keller W.** Ἡ Βίβλος …Σ. 40. Նաև **Free J. P.** Op. cit. P. 68.

տանու և Նուգույա անունով իր դստերը նրան կնության է տալիս: Ակնհայտ է, որ այս ամենը գրեթե նույնությամբ հիշեցնում է Ծննդոց գրքում (29. 16–30) նկարագրված՝ իր հորեղբայր Լաբանի դուստրերի՝ Լիայի և Ռաքելի հետ Հակոբի ամուսնության պատմությունը. աղջիկներից յուրաքանչյուրի համար Հակոբը յոթ տարի աշխատեց՝ հօգուտ Լաբանի: Բացի այդ, ըստ Հին Կտակարանի, Լաբանը Հակոբին արգելեց իր երկու դուստրերից բացի որևէ մեկին կնության առնել (31. 50): Նուզիի սալիկներից տեղեկանում ենք նաև, որ այդ քաղաքում տարածված էր նաև քենիների հետ ամուսնությունը: Սալիկներում վկայակոչվում է մի դեպք. հայրը իր որդու համար հարսնացու խնամախոսելիս՝ վերապահություն է անում, որ եթե իր որդին մահանա, ապա այս աղջիկը իր մյուս որդու կինը դառնա: Այս սովորույթը հայտնի է նաև Սուրբ Գրքից: Այս մասին ավելի ուշ ժամանակներում խոսվում է Բ Օրինաց գրքում (25. 5–10): Սակայն նահապետների ժամանակներին վերաբերող Հուդայի և Թամարի պատմությունը ցույց է տալիս, որ այսպիսի սովորություն գոյություն ուներ դեռ վաղնջական ժամանակներում (Ծնն. 38. 6–26):

Սուրբ Գրքում ժառանգություն ստանալու կարգի հիշատակությունը նույնպես հաստատվում է նահապետների դարաշրջանի այլ գրավոր աղբյուրներով:

Ծննդոց գրքում ասվում է, որ Սառան ամուլ էր և իր աղախին Ագարին իբրև հարճ տվեց Աբրահամին, որպեսզի նրա համար երեխաներ ունենա և այսպիսով անժառանգ չմնա: Բայց Սուրբ Գրքում ոչ մի տեղ չի ասվում, թե Սառան դա Աստծո հրամանով արեց: Սառայի այս արարքը բացառապես իր նախաձեռնությունից էր բխում: Հնագիտությունը լուսաբանեց այն, ինչի վրա հիմնված էր նրա արարքը, և ինչը ստիպեց նրան այդ քայլին դիմելու: Համմուրապիի օրենքների ժողովածուն տեղեկություններ է տալիս այն մասին, որ Բաբելոնիայում կինը կարող էր թույլատրել ամուսնուն երկրորդ կին ունենալ իր աղախիններից՝ որդեծնության համար: Այսպիսով, Աբրահամն ու Սառան վարվեցին իրենց հայրենիքի օրենքների և սովորույթների համաձայն: Սույն հնա-

գիտական վկայությունը հատկապես արժեքավոր է այն առումով, որ հաստատում է՝ Հին Կտակարանը պարտադիր բազմակնություն (այսինքն՝ մի քանի կին մեկ տղամարդու համար) չէր պահանջում: Հին Կտակարանի ժամանակներում հանդիպող բազմակնությունը գոյություն ուներ Աստծո ողորմությամբ և ծառայում էր աստվածային նախախնամության նպատակներին[1]:

Նուզիի կավե սալիկներից տեղեկություն ենք քաղում նաև այն մասին, որ անզավակ մարդը կարող էր ցանկացած տղա որդեգրել՝ ազատներից, ստրուկներից կամ իր ազգականներից: Որդեգրվածը խորթ հոր մահից հետո ժառանգում էր նրա ունեցվածքը: Իսկ եթե հետագայում այդպիսի հայրը իր իսկ որդին էր ունենում, ապա ժառանգը վերջինս էր դառնում: Նրան էին անցնում և տան կուռքերը՝«թերափները», ինչը սեփականության իրավունքի խորհրդանիշ էր ծառայում: Եթե կուռքերը որդեգրվածին էին բաժին հասնում, ապա սեփականության իրավունքը նրան էր անցնում: Անզավակ կինը կարող էր իր ստրկուհիներից մեկին իր ամուսնու երկրորդ կինը դարձնել, որպեսզի նրա համար որդի ծներ: Այսպիսի ամուսնությունից ծնված զավակը ժառանգության իրավունք էր ձեռք բերում, եթե նրա հայրը այլ երեխաներ չունենար: Իսկ եթե, այնուամենայնիվ, դրանից հետո տանուտերը իր օրինական կնոջից զավակ ունենար, ապա ստրկուհու զավակը անդրանիկությունը զիջում էր, և ժառանգ էր ճանաչվում օրինական ամուսնությունից ծնված որդին: Այդուհանդերձ ստրկուհուց ծնված զավակը ամբողջությամբ չէր կորցնում իր իրավունքը. նա ևս պետք է ժառանգության որոշակի բաժին ունենար: Նուզիի[2] սալիկների այս բնագիրը լուսաբանում է Աբրահամի՝ ստրկուհի Մասեկի որդուն՝ իր ընդոծնին՝ Եղիազարին (Ծնն. 15. 2–3) ժառանգությունը կտակելու փորձը և Սառայի արարքը, ով ցանկացավ, որ իր աղախին Ագարն Աբրահամին որդի պարգևի: Ըստ այդմ էլ հասկանալի է դառնում, թե ինչու էր Աբրահամը հակառակվում Սառայի՝ Ագարին և Իսմայելին ժառանգությունից զրկե-

1 **Free J. P.,** Op. cit. P. 59-60. նաև **Cornfeld G., Freedman D. N.** Archaeology of the Bible; Book by Book. Harper and Row Publishers, San Francisco, 1976. P. 23.
2 **Pritchard J. B.,** Op. cit. P. 168-169.

լու ցանկությանը: Ի վերջո Ագարի և Իսմայելի հարցը լուծվեց նրանով, որ Ինքն Աստված Աբրահամին ցույց տվեց, թե ինչպես պետք է վարվել (Ծննդ. 21. 12,13[1]):

Նուզիի վերոհիշյալ սեպագիր բնագրերը բացահայտում են նաև Հակոբի և Լաբանի միջև ունեցվածքի պատճառով ծագած գժտության հանգամանքները. Լաբանը չէր կամենում իր ունեցվածքը Հակոբին տալ: Լաբանի և Հակոբի տարաձայնությունները հատկապես սրվում են այն ժամանակ, երբ Սուրբ Գիրքը հիշատակում է Լաբանի որդիներին (Ծննդ. 31. 30, 32, 34), որոնց մասին վկայություն նախապես հավանաբար չկար: Հետագայում, երբ Ռաքելն ու Լիան համաձայնեցին Հակոբի հետ փախչել, քանի որ նրանց հայրն օտարի պես էր իրենց հետ վարվում (Ծննդ. 31. 14,15), Ռաքելը հոր տանից վերցրեց «թերափները»՝ ընտանեկան կուռքերը (Ծննդ. 31. 30, 32, 34): Ակնհայտ է, ինչպես հաստատում են Նուզիի բնագրերը քննած Սուրբ Գրքի որոշ մեկնիչներ, որ Ռաքելը կարծում էր, թե այս եղանակով իր ամուսնու համար ապահովում է իր հոր ունեցվածքի սեփականության իրավունքը, որը Հակոբը կորցրեց Լաբանի որդիների ծնունդով[2]:

Նուզիի սեպագիր սալիկները լույս սփռեցին նաև անդրանիկության հարցի վրա: Ծննդոց գիրքը պատմում է, որ Եսավը, արհամարհելով իրեն անդրանիկություն շնորհող իրավունքները, այն ոսպապուրի դիմաց իր եղբայր Հակոբին վաճառեց (Ծննդ. 25. 27–34): Նմանօրինակ դեպքերի հանդիպում ենք նաև Նուզիի սալիկներում: Դրանցից մեկում ասվում է, թե ինչպես ոմն Թուփկիտիլլա անտառակի նկատմամբ իր ժառանգական իրավունքները երեք ոչխարի դիմաց հանձնեց իր եղբայր Կուրպազախին[3]: Առևտրական գործարքին մասնակից երկու անձանց միջև կոշիկի կամ էլ որևէ ուրիշ էժան առարկաների փոխանակման հետ է կապված Նուզիի ևս մեկ տարօրինակ սովորություն: Այս խորհրդանշական ավանդույթը համաձայնությունը հաստատող յուրատեսակ վկա-

1 **Kitchen K. A.**, Op. cit. P. 154.
2 **Thompson J. A.**, Op. cit. P. 29-31; **Cornfeld G., Freedman D. N.**, Op. cit. P. 23.
3 **Gordon C.**, Biblical Customs and the Nuzu Tablets// Biblical Archaeologist. Feb.,1940. Vol. III. №1. P. 5; նաև **Free J. P.** Op. cit. P. 68-69.

յություն էր: Այսպիսի դեպքի մասին պատմվում է Սուրբ Գրքում Հռութի և Բոսսի պատմության առնչությամբ: Հռութի մերձավորագույն ազգակիցներից մեկն ասաց Բոոսին. «Դու ստացիր իմ ազգականության իրավունքը: Եվ հանեց իր կոշիկն ու տվեց նրան»: «Առաջ Իսրայելում ետ գնելու և ծախու առնելու գործում ամեն բան հաստատելու համար այս սովորությունը կար» (Հռութ 4. 7, 8):

Այդ սալիկներից իմանում ենք նաև, թե նահապետների դարաշրջանում մարդիկ ինչ առանձնահատուկ կարևորություն էին տալիս մահամերձ հոր վերջին ցանկություններին ու խորհուրդներին: Եթե մահացողն ինչ–ինչ պատգամներ էր տալիս կամ ինչ–որ բան ցանկանում երեխաներին, ապա նրա կամքը նրանց համար օրենք էր: Ըստ Նուզիի բնագրերի՝ երկու եղբայր, գժտված լինելով կրտսերի հետ, նրա դեմ դատական հայց են հարուցում, քանի որ չէին կամենում, որ նա ամուսնանար ինչ–որ աղջկա հետ: Բնագիրը պարունակում է միայն այս հայցի առթիվ դատավճիռը, ըստ որի, երբ գործը հասնում է դատարան, կրտսեր եղբայրը՝ Տարմիյան, իրեն պաշտպանելիս մի այսպիսի փաստարկ է բերում, որ իր հայր Գույյան իր կյանքի վերջին րոպեներին վերցնում է իր ձեռքը, սեղմում, օրհնում նրան և ասում. «Իմ մյուս որդիները քեզանից մեծ են և արդեն ամուսնացած: Իսկ դու դեռ ամուրի ես: Ահա ձեռքի այս սեղմումով ես քեզ կնության եմ տալիս Սուլուլի–Իշտարին»: Տարմիայան դատարան էր բերել վկաների, ովքեր հաստատեցին նրա խոսքերը, և նա շահեց դատական գործը»[1]:

Սույն դեպքը, որը ցույց է տալիս, թե ինչ իրավական ուժով էր օժտված բանավոր օրհնությունը և թե ինչ ծանրակշիռ փաստարկ էր դատարանում, լույս է սփռում այն անցքերի վրա, որոնց մասին պատմում է Գիրքը մահվան մահճում հայտնված նահապետների վերջին բարեմաղթանքների առնչությամբ: Ինչ–որ բան խոստանալով կամ օրհնելով՝ նրանք այլևս դրանից հրաժարվել չէին կարող, ինչպես որ Հակոբին տրված Իսահակ նահապետի օրհնության (Ծնն. 27. 33) և Եգիպտոսում Հակոբ նահապետի՝ իր որդի-

1 **Pritchard J. B.,** Op. cit. P. 169-170.

Իսահակը օրհնում է Հակոբին: Խճանկար: XIII դ. 1-ին կես, Մոնրեալեի եկեղեցի, Սիցիլիա:

ներին տված բարեմաղթանքների և օրհնությունների (Ծնն. 49) պարագայում է: Հնագիտական պեղումները ցույց տվեցին նաև, որ Աբրահամի ժամանակներում թլպատությունը սովորական երևույթ էր: Եգիպտոսում հայտնաբերված հարթաքանդակներում, որոնք թվագրվում են Հին Կտակարանում նկարագրված դարաշրջանով, պատկերված է այս ընթացակարգը: Եգիպտական գերեզմաններում հայտնաբերվել են թլպատված մարդկանց մարմիններ, փաստ, որը ցույց է տալիս, որ այս սովորույթը դարերի խորքն է գնում[1] [1]:

Բացի այդ, Ռաս–Շամրայի (նավահանգիստ Հյուսիսային Սիրիայում՝ Կիպրոսի դիմաց՝ կառուցված փյունիկյան Ուգարիթ քաղաքի ավերակների վրա) բնագրերում, որոնք հայտնաբերվել են 1927–1933 թթ. և վերագրվում են Ք. ա. 1400 թ. հաջորդող ժամանակաշրջանին, խոսվում է Հին Կտակարանում նկարագրված զոհաբերությունների, յոթը՝ իբրև սրբազան թիվ պատվելու, յոթգլխանի «արագաշարժ լևիաթան օձի» մասին: Այս բնագրերի գործածած բառապաշարը նման է Հին Կտակարանում՝ նահապետների մասին պատումներում գործածվածներին: Դրանցում խոսվում են նաև Հին Կտակարանում հիշատակված Բահաղ և Դագոն հեթանոսական կուռքերի մասին: Այստեղից իմանում ենք նաև ուլը մոր կաթում պատրաստելու սովորության մասին, ինչն արգելվում է ըստ Մովսեսի օրենքի (Ելք 23. 19): Չափազանց հինավուրց բաբելոնյան օրենքների մի ժողովածու (թվագրվում է Ք. ա. մոտ 1920 թ.) խոսում է մի մարդու

1 **Free J. P.,** Op. cit. P. 60.

մասին, որին ցուլ էր պոզահարել, ընդ որում բառապաշարը հար և նման է Ելք գրքում գործածվածին (Ելք 21. 28–32): Դրանք բովանդակում են նաև տեղեկություններ սեմական ժողովուրդների մեջ տարածված մի սովորության մասին, այն է՝ սրբազան քարակոթողներ կանգնեցնել «սուրբ» վայրերում, իսկ կողքին՝ զոհասեղան՝ ի հիշատակ ինչ–ինչ իրադարձությունների կամ մարդկանց: Այսպիսի քարակոթողների հայտնագործությունները հաստատեցին անզավակ Աբեսաղոմի՝ ինքն իր համար կոթող կանգնեցնելու (Բ Թագ. 18. 18) կամ էլ Բեթելում Հակոբի կառուցած զոհասեղանի սուրբգրային պատումների իսկությունը: Աստված Իսրայելի որդիներին հրամայեց քանդել այդ կոթողները Եգիպտոսից Քանան հասնելուն պես, որպեսզի չընդօրինակեն քանանացիների դիցապաշտական սովորությունները (Բ Օր. 7. 5)[1]:

Երկրորդ հազարամյակի առաջին դարերի Հյուսիսային Միջագետքի ժողովուրդների և հինկտակարանյան նահապետների բարքերի, սովորույթների և օրենքների մեջ ուրիշ շատ ընդհանրություններ էլ կան[2] [2]: Այսպիսով այսօրվա դրությամբ որևիցե կասկած չկա Հին Կտակարանում՝ նահապետների կյանքը պայմանավորող բարքերի, սովորույթների և օրենքների արտացոլման իսկության մեջ: Նրանց առնչվող հինկտակարանյան ավանդություններն ըստ ամենայնի ճշմարտացի են: Մելբուռնի համալսարանի պրոֆեսոր Ջ. Է. Թոմպսոնը գրում է. «Սուրբգրային նահապետների մասին տեղեկությունները ներդաշնակորեն համահունչ են Ք. ա. 2–րդ հազարամյակի առաջին դարերի միջավայրին: Այս ժողովուրդների կենցաղի և նահապետների ընկերակցության միջև նմանության բազում եզրեր կան: Հատկապես բնորոշ է այն, որ այս սովորույթներից շատերն արդեն անծանոթ էին ավելի ուշ ժամանակներում, օրինակ՝ Ք. ա. X կամ IX դդ.: Ք. ա. 2–րդ հազարամյակի սկզբի աշխարհի և նահապետների աշխարհի միջև առկա այսքան սերտ աղերսների փաստն անբացատրելի կլիներ, եթե նահապետների մասին ավանդություններն ընդամենը ուշ շրջանի մտացածին պատմություններ նկատվեին: Այն ժա-

1 Տես **Short A. R.,** Op. cit. P. 28-30.
2 Տես **Gordon C.**, Op. cit.

մանակ ապրող իսրայելացիները հնարավորություն չունեին այնպիսի տեղեկություններ ստանալ, ինչպիսիք մենք գիտենք հողից հանված հազարավոր սալիկներից: Այն հանգամանքը, որ Սուրբ Գրքում նկարագրված սովորույթները և բարքերն այսքան մոտ են այն ժամանակվա մերձավորարևելյան ժողովուրդների բարքերին և սովորույթներին, ծանրակշիռ փաստարկ է հօգուտ բնագրի վաղեմության՝ անկախ նրանից՝ գոյություն է ունեցել գրավոր, թե բերանացի արժանահավատ ավանդությունների տեսքով:

Մենք հարկադրված ենք հանգելու այն եզրակացության, որ Ծննդոց գրքի 5–20 գլուխների ավանդություններն ամուր պատմական հենք ունեն»[1]: Իսկ ահա թե ինչ է ասում Մանչեստրի համալսարանի պրոֆեսոր Գ. Գ. Ռոուլին. «Համենայն դեպս մենք գործ ունենք Հին Կտակարանում նկարագրված բարքերի ու սովորույթների հետ, որոնք ուշ ժամանակներում չեն կրկնվում, հետևաբար հազիվ թե հավանական լինի, որ նրանք կարող էին արտացոլել այն ժամանակվա հասարակական կարգը, որում գրվել էր Հին Կտակարանը: Հինկտակարանյան նահապետների դարաշրջանում Միջագետքի որոշ շրջաններում (որտեղից սերում են նրանք) գոյություն ունեցած հասարակական կարգերի ճշգրիտ արտացոլումը Սուրբ Գրքում՝ չնայած նրան, որ սուրբգրային բնագրերը կազմվել են շատ դարեր անց, պարզապես ապշեցուցիչ է»[2]:

Բազմաթիվ ծանրակշիռ հնագիտական վկայությունները մի կողմից մեզ հավաստում են Սուրբ Գրքի ճշմարտացիությունը, մյուս կողմից՝ օգնում լավագույնս հասկանալու Աբրահամ նահապետի անձը՝ պանդուխտին ու բազում երկրների քաղաքացուն:

Ծանոթագրություններ

1. Թեոդորետոս Կյուրացին կարծում էր, որ եգիպտացիների և այլ ժողովուրդների մոտ տղաներին թլպատելու սովորությունը սկզբնա-

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 35.
2 **Rowley H. H.**, Recent Discovery and the Patriarchal Age// Bulletin of the John Rylands Library. Sept. 1949. P. 76.

վորվել է Աբրահամի և իսրայելացիների շնորհիվ (Творения, ч. 1. М., 1855, вопросответ 69 на с. 68 и вопросответ 3 на с. 103): Ս. Հ. Ոսկեբերանը խոսելով Աբրահամի՝ Եգիպտոսում ապրելու մասին՝ նշում է, որ նա եգիպտացիների ուսուցիչը դարձավ (Творения, т. 4. СПб., 1898, с. 350; т. 5. СПб.,1899, с. 21-22), ինչը անուղղակի հաստատում է Թեոդորետոսի միտքը: Սուրբ հայրերի կարծիքը մանավանդ համոզիչ է դառնում, եթե ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ Աստված Աբրահամի հետ էր, օգնում էր նրան բոլոր գործերում, ինչում փորձով համոզվեցին փարավոնը եգիպտացիների հետ միասին (Ծնն. 12. 10-20) և Պաղեստինի բնակիչները (Ծնն. 20. 1-18), այնպես որ նրանք անկեղծորեն ասում էին Աբրահամին. «Աստված քեզ հետ է բոլոր այն գործերում, ինչ դու անում ես» (Ծնն. 21. 22), և «Դու մեր մեջ Աստծու նշանակած իշխանն ես*» (23. 6):

2. Այն հանգամանքը, որ հենց Հյուսիսային Միջագետքի ժողովուրդների և մասնավորապես խուրրիների մոտ է վկայված նահապետների սովորություններին նմանվող սովորությունները, մեր կարծիքով լրացուցիչ փաստարկ է՝ հօգուտ նրանց հյուսիսմիջագետքյան ծագման: Բանն այն է, որ, ըստ ասուրագետների, խուրրիների բարքերը խիստ տարբերվում էին Հարավային Միջագետքի սովորույթներից, թեպետև խուրրիներն ապրում էին բաբելոնյան մշակույթի ազդեցության ոլորտում: Հայտնի է, որ ընտանեկան սովորույթները, իբրև օրենք, հատկորոշվում են պահպանողականությամբ, ուստի և հազիվ թե Աբրահամը Խառանում՝ մեզ համար անհայտ ժամանակահատված ապրելով, նրա որդին ու թոռը, որոնց կյանքի մեծ մասը անցավ Խառանում, կհասցնեին շատ բան փոխառել հյուսիսային Միջագետքի ավանդույթներից՝ ընդ որում հրաժարվելով իրենց (ենթադրվող) հարավմիջագետքյան ավանդույթից:

* Հայերեն բնագրում՝ *թագավորը*:

ԱԲՐԱՀԱՄԻ ՊԱՆԴԽՏՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալում Սուրբ Գրքի հավաստիությունը հերքողները պնդում էին, թե Աբրահամը չէր կարող Ուրից Խառան, ապա նաև Պաղեստին և Եգիպտոս ճամփորդել: Նրանց կարծիքով այս ամենը հետագա դարերի հորինվածք է: Հնագիտությունը, բայց և այնպես, վկայում է, որ այն երկրներում, որոնցով անցել է նահապետը, լավ ու բանուկ առևտրական ճանապարհներ կային: Ուրը Խառանի հետ միավորում էին մեծ ճանապարհներ, ինչպես Միջագետքի հյուսիսը՝ Միջերկրական ծովի ափերի ու Պաղեստինի հետ, իսկ ուրիշ ճանապարհներ իրենց հերթին իրար էին կապում Պաղեստինն ու Եգիպտոսը:

Աբրահամը, Քանան հասնելով, առժամանակ բնակվեց Սյուքեմում (Ծնն. 12. 6), որը գտնվում է Երուսաղեմից հյուսիս՝ 45 կմ հեռավորության վրա՝ կենտրոնական Պաղեստինի հովիտներից մեկում: Այնուհետև Աբրահամը մի քանի մղոն դեպի հարավ շարժվեց և իր վրանը խփեց Բեթելի ու Գայի միջև (Ծնն. 12. 6)՝ Երուսաղեմից մոտ 18 կմ դեպի հյուսիս: Այնտեղ նա զոհասեղան կառուցեց ու երկրպագեց Տիրոջը:

Հնագետները պեղեցին ճամփորդությունների ընթացքում Աբրահամին հանդիպող քաղաքները (Սյուքեմ, Բեթել, Գայ) և գտածոների հիման վրա հաստատեցին, որ այդպիսիք գոյություն են ունեցել նահապետի օրոք: Ըստ պրոֆեսոր Ջ. Պ. Ֆրիի՝ դա Աբրահամի մասին ավանդության հավաստիությունը վավերացնող ծանրակշիռ փաստարկ է, քանի որ Սուրբ Գրքի քննադատները պնդում էին, թե այս ավանդազրույցները գրի են առնվել Ք. ա. մոտ 800 թվին: «Այդուհանդերձ,– շարունակում է Ֆրին,– եթե դրանք գրված լինեին այդ ժամանակ, ապա հեղինակը կխոսեր իր ժամանակի կամ մի փոքր ավելի վաղ ժամանակների քաղաքների մասին, որոնք տակավին գոյություն չունեին նահապետների ժամանակներում, այսինքն՝ Ք. ա. 2000–1500 թթ.»: «Այն, ինչ հե-

տևում է հնագիտական հետազոտություններից,– եզրակացնում է Ֆրին,– այսինքն՝ հենց այն, որ Աբրահամի պանդխտությանն առնչվող քաղաքները գոյություն են ունեցել նրա օրոք, մեզ համար սպառիչ ապացույց է ծառայում Աբրահամի մասին Աստվածաշնչի պատումների ստուգության վերաբերյալ: Մանավանդ որ հենց այս՝ Աբրահամ անունը, հայտնաբերվել է պեղված կավե սալիկների վրա»[1]:

Այժմ դառնանք Աբրահամի ճամփորդությանը Եգիպտոս: Սուրբ Գրքում ասվում է, որ Աբրահամը Եգիպտոս գնաց, քանի որ Քանանի բնակիչները սովալլուկ էին: Սակայն անտիկ պատմիչ Դիոդորոսը գրում է, որ Եգիպտոսը օտարերկրացիներին թույլ էր տալիս իր սահմաններն անցնել միայն Ք. ա. 700 թ. սկսյալ: Անհավատները կառչեցին Դիոդորոսի հաղորդած այս տեղեկությանն ու սկսեցին պնդել, որ Գրքի սույն հատվածը հակասում է պատմական ճշմարտությանը: Բայց նրանք բնավ այս առումով համոզիչ ապացույցներ չունեին: Այնինչ հնագետները հակառակն են ապացուցում. նահապետների ժամանակներում Պաղեստինը, Ասորիքը և Եգիպտոսը սերտ կապեր ունեին միմյանց հետ: Ասվածի անհերքելի ապացույց են ծառայում Պաղեստինի գերեզմաններից պեղված Ք. ա. 2000–1800 թթ. թվագրվող գտածոները: Սա եգիպտական 12–րդ մեծ հարստության տիրապետության ժամանակաշրջանն էր, որը, ըստ երևույթին, որոշակի ազդեցություն ուներ Ասորիքի և Պաղեստինի վրա: Բենի Հասանում (Կահիրեից 440 կմ դեպի հարավ) եգիպտական արքայազն Հնեմհոթեպի դամբարանում բացված հույժ արժեքավոր որմնանկարներում կա նաև օտարերկրացիների՝ սեմական ցեղերից մեկի ներկայացուցիչների խմբանկարը, ովքեր Եգիպտոս էին եկել Ք. ա. մոտ 1900 թ.՝ հավանաբար առևտրական գործերով: 37 հոգու է առաջնորդում մի այր, ում անունը, ըստ որմնանկարի, մաքուր սեմական է՝ Աբեսսա: Անհայտ եգիպտացու ձեռամբ գրի առնված մեհենագրերը հաղորդում են, որ նրանք «Ամմուի բնակիչներ» են, այսինքն՝ սեմիտներ: Այս մարդկանց տարազն ու զանազան իրե-

1 **Free J. P.,** Op. cit. P. 53.

Բեթղեհեմ քաղաքի մոտ խփված բեդուինի վրան:

րն օգնում են մեզ պատկերացում կազմելու, թե ինչ տեսք ունեին նահապետի ընտանիքի անդամները, որը մոտավորապես հենց այդ նույն ժամանակ էր այցելել Եգիպտոս, և թե ինչ ունեին իրենց հետ[1]: Այս որմնանկարը ցույց է տալիս, որ օտարերկրացիները (հատկապես ասիական սեմիտները) կարող էին առանց դժվարության հայտնվել Եգիպտոսում: Բացի այդ, ինչպես ցույց կտրվի սույն գրքի հաջորդ գլխում, հիքսոսների Եգիպտոս ներխուժելու (Ք. ա. մոտ 1900 թ.) մասին հնագիտական և պատմական վկայությունները ևս ապացուցում են, որ օտարերկրացիները կարող էին այցելել այս երկիր: Հիքսոս քոչվոր ժողովրդի պատմության ասպարեզ իջնելը, որը, հյուսիսից շարժվելով և կտրել–անցնելով Պաղեստինը, հաստատվեց Եգիպտոսում, տեղի է ունեցել Աբրահամի՝ Եգիպտոս գալու հետ գրեթե միաժամանակ և թվագրվում է Ք. ա. մոտ 1780 թվականով, այսինքն՝ մեծն Համմուրապիի օրով[2]: Ըստ այդմ, Դիոդորոս պատմիչը սխալվում էր: Սուրբ Գիրքն այս դեպքում էլ անըստգյուտ է:

Պեղումները պարզեցին նաև Աբրահամի՝ Եգիպտոս ճամփորդելու և այնտեղ առժամանակ հանգրվանելու հետ կապված ուրիշ բազմաթիվ հանգամանքներ: Աստվածաշնորհ Մովսեսն իր

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 21. Տես նաև՝ **Keller W.**. Ἡ Βίβλος …Σ. 102-103.
2 **Vos H. F.,** An Introduction to Bible Archaeology… P. 93. Տես նաև՝ Charlier C.

Ծննդոց գրքում գրում է, որ Աբրահամը թեպետև գնաց Եգիպտոս, սակայն մտավախություն ուներ, որ եգիպտացիները Սառայի գեղեցկության պատճառով կսպանեն իրեն: Ուստի և պատվիրեց Սառային՝ քանի դեռ այդ երկրում կլինեն, իր քույրը ձևանա, այդ դեպքում կարելի կլիներ չվախենալ, որ եգիպտացիներն իրեն կսպանեն (Ծնն. 12. 11–13): Հնագիտության պրոֆեսոր Ֆրին գրում է, որ ըստ պեղված մի եգիպտական պապիրուսե բնագրի՝ փարավոնը, երբ նրա առաջ մի գեղեցկուհի կին բերեցին, հրամայեց սպանել նրա ամուսնուն: Ինչպես նկատում է Ֆրին, սա ցույց է տալիս, որ Աբրահամի՝ Սառայի պատճառով սպանվելու երկյուղն անհիմն չէր[1]:

Աբրահամը, Սառան և երեք հրեշտակները: Հռոմ, Սանտա-Մարիա Մաջորե եկեղեցի, 432-440 թթ. :

Աբրահամի ճամփորդությունների մասին Աստվածաշնչի պատմական արժանահավատության մի այլ կարևոր վկայությունն են այն հնագիտական պեղածոները, որոնք ցույց են տալիս, թե Աբրահամի և մյուս նահապետների համար ինչ կենդանիներ էին փոխադրամիջոց ծառայում: Սուրբ Գրքում թվարկվում է Աբրահամի ինչքը, որը նա ձեռք էր բերել Եգիպտոսում հանգրվանելու ընթացքում. «Եվ նա ոչխարների, կովերի, էշերի..., ջորիների և ուղտերի տեր դարձավ» (Ծնն. 12, 16): Եգիպտական Դեյր–ալ–Բահրիի Հաթշեփսուտ թագուհու հոյակերտ մեհյանում, ինչպես նաև Մեմփիսի մոտ գտնվող Սակկարա մեռելաքաղաքի՝ նեկրոպոլիսի Թիի դամբարանում բացվել են ոչխարների, գոմեշների և ավանակների պատկերներ: Ոչ կասկածամիտ ընթերցողին չի

1 **Free J. P.,** Op. cit. P. 55.

Հնեմհոթեպ արքայազնի դամբարանի որմնանկարը:

զարմացնի, որ Աբրահամի ունեցվածքի մեջ, այլ հարստություններից զատ, կային նաև ուղտեր: Սակայն սկեպտիկները, հիմնվելով այդ փաստի վրա, այն եզրակացությանն են հանգում, որ իբր Սուրբ Գիրքն անստույգ է, քանզի Աբրահամի օրոք Եգիպտոսում ուղտեր չկային: «Այդ կենդանիները,– ասում էին նրանք,– ի հայտ եկան միայն Աբրահամի դարաշրջանից հետո»:

Արդարև, այդ ժամանակաշրջանում ավելի հաճախ էշ էին պահում, քան ուղտ: Հնարավոր է, որ իսկապես ուղտը հազվադեպ օգտագործվեր, այնուամենայնիվ, հնագետներն իրեղեն ապացույցներ գտան, որոնք հավաստում են, որ ուղտը նախքան Աբրահամն արդեն տարածված էր Եգիպտոսում[1]:

Ըստ Ֆրիի՝ ուղտեր պահելու և օգտագործելու հնագիտական գտածոների մեջ կան այս կենդանիները պատկերող արձանիկներ ու քարաքանդակ ստեղծագործություններ, թիթեղներ, ժայռային բարձրաքանդակներ և որմնանկարներ, ուղտի ոսկորներ ու գանգ, ուղտի բրդից պարան: Թվով շուրջ քսան առարկաները վերագրվում են մի ժամանակի, որը սկիզբ է առնում Ք. ա. մոտ 3000 թվից[2]: Բացի այդ, Օլբրայթը ուղտերի, իբրև ընտանի կենդանու, եզակի դեպքերի օգտագործման իրեղեն ապացույցներ ու-

1 **Free J. P.,** Abraham's Camels// Journal of Near Eastern Studies. University of Chicago. July, 1944. P. 187-193.
2 **Free J. P.,** Archaeology… P. 55-56.

Զոսեր փարավոնի բուրգը Սակկարայում,
բուրգերից հնագույնը, Ք. ա. XXVII դ.:

նի: Դրանք թվագրվում են Ք. ա. 1100 թվականից առաջ[1]: Այնպես որ Աբրահամը լիովին կարող էր Եգիպտոսում ուղտեր ունենալ:

Մեկ այլ հնագիտական հետազոտություն ցույց տվեց, որ Ք. ա. 1300 թվից սկսյալ այս կենդանու տարածումն էլ ավելի է մեծանում: Նախորդ պարբերությունում ներկայացված նմանօրինակ ապացույցներ հայտնաբերվեցին նաև Միջագետքում, որոնք թվագրվում են Ք. ա. 2000 թվականով[2]:

Լիվերպուլի համալսարանի հնագիտության պրոֆեսոր Կ. Ա. Քիթչենը գրում է. «Գրական և հնագիտական վկայություններ կան այն մասին, որ Ք. ա. 2–րդ հազարամյակի սկզբից և նույնիսկ ավելի վաղ ուղտն արդեն տարածված էր և բուծվում էր (...): Հին բաբելոնյան դարաշրջանում Միջագետքում կազմված բառարանագրական գրացուցակները ցույց են տալիս, որ ուղտը Ք. ա. մոտ 2000–1700 թթ. արդեն հայտնի էր իբրև ընտանի կենդանի: Եվս մեկ, նույնքան հնամենի շումերական բնագիր Նիպպուրից հստակորեն վկայում է, որ այն ժամանակ ուղտն արդեն ընտելացված էր, քանզի այդ բնագրում ուղտի կաթի ակնարկ կա: Ուղտի ոսկորներ են հայտնաբերվել նախասարգոնյան ժամանակաշրջանին վերաբերող (Ք. ա. XXV–XXIV դդ.) Մարի քաղաքի տների ավերակներում, ինչպես և Ք. ա. 2000–1200 թթ. թվագրվող որոշ

1 **Free J. P.,** Op. cit. P. 170-171.
2 **Thompson J. A.,** Op. cit. P. 23 and 88.

պաղեստինյան բնակավայրերում: Հինավուրց Բիբլոս քաղաքում գտնվել է ուղտի փորագրովի անավարտ պատկեր, որը վերագրվում է Ք. ա. XIX–XVIII դդ.: Այս և ուրիշ բազմաթիվ նյութեր անհնար է վիճարկել»[1]:

Այսօրինակ վկայությունները կարելի է լրացնել ևս մեկով: Օրոնտես գետի ափին ծվարած Ալալախ քաղաքում հայտնաբերված Ք. ա. XVIII դարով թվագրվող բնագրում ուղտի խոտի մասին հիշատակություն կա: Փյունիկյան Ուգարիթում գտնվել են նահապետների դարաշրջանում այս կենդանիներին զանազան նպատակներով օգտագործելու ապացույցներ[2]:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ

Եգիպտոսից վերադառնալուց հետո Աբրահամը բաժանվեց Ղովտից: Պատճառը երկուսի մեծաքանակ անասուններն էին, ավելի ճիշտ՝ նրանց հովիվների գժտությունները: Աբրահամն իր եղբորորդի Ղովտին առաջարկեց իր հայեցողությամբ ընտրել և բնակվել Քանանի ցանկացած մասում: Ղովտն ընտրեց Հորդանանի ողջ շրջանը, որը «Աստծու դրախտի նման էր՝ Եգիպտացվոց երկրի նման» (Ծնն. 13. 9–11): Այս շրջանը ներառում էր Հորդանանի արգավանդ հովիտն ու Մեռյալ ծովի շուրջ մի տարածք: Այժմ սա Պաղեստինի ամենաշոգ շրջանն է, ուր ջերմաստիճանը հասնում է մինչև 40–50 աստիճանի:

Սուրբ Գրքի արժանահավատության հակառակորդները պաշտպանում են այն տեսակետը, ըստ որի՝ Ղովտը չէր կարող ընտրել մի տարածք, որը, ինչպես նրանք են պնդում, այն ժամանակ անմարդաբնակ էր: Նրանք հարց են տալիս, թե ինչո՞ւ Ղովտը չընտրեց գրավիչ ծովամերձ դաշտավայրը կամ անտառներով ծածկված բլրավետ մյուս շրջանը, կամ էլ Պաղեստինի կենտրոնական լեռնային մասը: «Սուրբ Գիրքը,– ասում են նրանք,– այս դեպքում անստույգ է»:

1 **Kitchen K. A**. Op. cit. P. 79-80.
2 **Short A. Rendle.** Op. cit P. 15.

Սակայն Սուրբ Գրքի քննադատները բոլորովին իրավացի չեն, որովհետև Կիրբեթ Կերաքում, Բեթսանում (հետագայում վերանվանվել է Սկյութոպոլիս), Երիքովում, Թելեյլաթ–ալ–Հասսուլիում, Բաբ–ադ–Դրայում և այլ տեղերում կատարված պեղումներն ապացուցեցին, որ Ք. ա. 3–2–րդ հազարամյակում հորդանանյան հովիտը և Մեռյալ ծովի շրջանը, այսինքն՝ «Հորդանանի բոլոր շրջանները», ինչպես այս տեղանքն անվանում է Աստվածաշունչը, մարդաշատ է եղել:

Բացի այդ, սուրբգրային հարցերով զբաղվող առաջատար գիտնականներից մեկը՝ Նելսոն Գլյուկը,1930–1940 թթ. անցկացրած պեղումների արդյունքում ապացուցեց, որ այս տարածքը խիտ բնակեցված է եղել: Նա անձամբ բացել է 70 հին բնակավայր, որոնցից շատերը հիմնադրվել էին դեռևս հինգ հազար տարի առաջ[1]: Իր իսկ գտածոները նկատի ունենալով՝ նա շատ դիպուկ արտահայտվեց. «Պետք չէ այսուհետ շարունակել «հիմար ճամարտակությունը» Հորդանանի իբր ամայի, անմարդաբնակ դաշտավայրի շուրջ»: «Այսպիսով,– գրում է հնագետ Ֆրին,– հնագիտական պեղումներն ապացուցել են, որ վերոբերյալ փաստերն իմացողներից և ոչ մեկը չի կարող մտացածին համարել այն, ինչ ասում է Սուրբ Գիրքը Հորդանանի շրջանների՝ Ղովտի կողմից ընտրության մասին»[2]:

Այն բանից հետո, երբ Ղովտը բնակություն հաստատեց Հորդանանի հովտում և իր վրանը խփեց Սոդոմում, ըստ Հին Կտակարանի, պատերազմ սկսվեց՝ աստվածատես Մովսեսի նկարագրած առաջին պատերազմը:

Միջագետքի չորս թագավորներ միավորվելով՝ ներխուժեցին Հորդանանի հովիտ և մարտնչեցին Մեռյալ ծովի մոտ ապրող հինգ թագավորների դեմ:

Այս հինգի թվում էին նաև Սոդոմի և Գոմորի թագավորները: Նրանք բոլորն էլ 12 տարի շարունակ հարկատու էին Քոդոդոգոմորին, բայց տասներեքերորդ տարում ապստամբեցին: Քոդոդոգոմորը օգնություն խնդրեց երեք թագավորներից ու եկավ ապս-

1 **Glueck N.** The River Jordan. Philadelphia; Westminster Press, 1946. P. 73. մեջբ. ըստ **Free J. P.** Op. cit. P. 56
2 **Free J. P.** Op. cit. P. 56

Մելքիսեդեկն ընծաներ է տալիս Աբրահամին: Խճանկար, Հռոմ, Սանտա-Մարիա Մաջորե եկեղեցի, 432-440 թթ.:

տամբներին պատժելու: Չորս թագավորները հաղթեցին, կողոպտեցին ու հրո ճարակ դարձրին հակառակորդի քաղաքները:

Իսկ վերադառնալիս հարուստ ավար առան և գերեվարեցին Ղովտին: Սակայն Աբրահամն իր 318 ընդոծիններով, ովքեր ծնվել էին իր տանը, հետապնդեցին չորս թագավորներին և Դան քաղաքի մոտ (Պաղեստինի հյուսիսում, Հորդանանի ակունքներից ոչ հեռու) պարտության մատնեցին նրանց ու ազատեցին Ղովտին: Բոլոր այս դեպքերը նկարագրված են աստվածաշունչ Ծննդոց գրքի 14–րդ գլխում:

Սակայն Հին Կտակարանի սրբազան բնագրի քննադատների կարծիքով այն ամենը, ինչ բովանդակում է սույն գլուխը, հակապատմական է: Նրանք գտնում են, որ 4 զավթիչ արքաների անունները մտացածին են. Աբրահամի ժամանակներում այդպիսի հեռավոր արշավանքները, ինչպիսին ենթադրաբար կատարեցին չորս դաշնակիցներն իրենց ռազմական գործողության ընթացքում, անհնարին էին: Ըստ նրանց՝ դեպի Պաղեստինի արևելք տանող հարմար ճանապարհ գոյություն չուներ էլ, ինչպես այդ մասին հիշատակում է Ծննդոց գիրքը:

Սակայն հնագիտական հետազոտություններն այս հարցում էլ հերքեցին Հին Կտակարանի հավաստիությունը ժխտողներին: Հնագիտությունը, շնորհիվ իր հայտնագործությունների, մեզ է ընձեռնում հինգ ծանրակշիռ և անհերքելի ապացույցներ, որոնք, անտարակույս, վավերացնում են Աստվածաշնչի պատմական ստուգությունն ու իսկությունը նաև տվյալ դեպքի առնչությամբ:

1. Հնագետ Գլյուկը վերոհիշյալ պեղումներից այս տարածքի բնակչության՝ Ք. ա. XIX–XIII դդ. ընկած ժամանակահատվածում զգալի կրճատման վկայություններ գտավ: Ըստ պրոֆեսոր Գլյուկի՝ դա պայմանավորված է 14–րդ գլխում նկարագրված ավերիչ պատերազմով:

2. Ըստ ավելի ուշ հայտնաբերված մակագրությունների՝ Միջագետքի այս չորս արքաների անունները որոշ դեպքերում կարելի է նույնացնել այն մարդկանց անունների հետ, ում մենք արդեն գիտենք պեղումների տվյալների հիմամբ, համենայն դեպս դրանք համապատասխանում են Ք. ա. 2000–1700 թթ. և ավելի ուշ շրջանի բաբելոնյան անուններին: Այսպես՝ Արիոք անունը նման է Արրիգիուք կամ Արրիգուք (տե՛ս Ք. ա. XVIII դ. Մարի քաղաքի արխիվները), կամ Արիուք անվանը (տե՛ս Ք. ա. XV դ. Նուզի քաղաքի արխիվները): «Ազգերի արքա» Թարգաղի անունը նման է Թուդխաղին, սա խեթական անուն է՝ Ք. ա. XVIII դարից և ավելի ուշ շրջանից հայտնի: Այսպիսի անուն ունեին Ք. ա. XVIII–XIII դդ. հինգ կամ չորս խեթական թագավորներ (Ուգարիթ քաղաքում հանդիպում ենք նրա մեկ այլ տարբերակի՝ «Թադգղում»): Էլամի տիրակալ Քոդողագոմորի անունը հին բաբելոնյան (Ք. ա. 2000–1700 թթ.) և ուշ շրջանների տիպիկ էլամական է: Ամարփադի (Սենաարի արքայի) անունը դեռևս անհայտ է, բայց շատերն են նույնացնում Համմուրապիի՝ Բաբելոնի ամորհական թագավորության վեցերորդ տիրակալի (հայտնի իր հռչակավոր օրենքների ժողովածուով) անվան հետ: Թեև դեռևս ի զորու չենք նույնականացնել այս չորս արքաներին, բայց հաստատ հայտնի է, որ նրանց տիրույթները տարածվում էին Ասորիքի, Հյուսիսային Միջագետքի և Էլամի վրա[1] [1]:

3. Հնագիտության պրոֆեսոր Քիթչենը գրում է, որ ռազմական դաշինքները (այս պարագայում չորսը հինգի դեմ) բնորոշ էին Միջագետքի համար Ք. ա. 2000 թ.–ից մինչև 1750 թ.–ն ընկած ժամանակաշրջանին, բայց այդ շրջանից ոչ վաղ, ոչ էլ ուշ,

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 43-44; **Charlier C.,** The Christian Approach to the Bible. P. 76.

երբ գերակշռում էին այլ քաղաքական հարաբերություններ: Այսպես՝ Մարի քաղաքում երևան հանված Ք. ա. XVIII դարի մի կարևոր նամակում խոսվում է տաս, տասնհինգ և քսան արքաներից կազմված դաշինքների մասին: Մեզ հայտնի են առնվազն հինգ այլ միջագետքյան զինակցություններ Ք. ա. XVIII դարում: Մենք կարող ենք նաև նշել Էլամ երկրի դերը Ք. ա. XVIII դարում և ավելի վաղ (Էլամը Ասորիքի Կատնա ներկայացուցիչներ և դեսպաններ էր ուղարկում):

Բացի այդ, Թարգաղը՝«ազգերի արքան», հիշեցնում է Փոքր Ասիայի մեծազոր տիրակալներին (օրինակ՝ Անիտտուին), ովքեր Ք. ա. XIX–XVIII դդ. դաշինքներ էին կապում: Կապադովկիայի առևտրական արխիվում հիշատակվում է շուրջ տասներկու քաղաք, որոնցից յուրաքանչյուրին իշխում էր մի տիրակալ («ռուբաում ռաբիում») կամ «մեծ արքան»: Այսպես՝ Կուսսարայի Անիտտուն՝ իբր առավել մեծազոր տիրակալ, փոխարինեց, ավելի ճիշտ, դուրս քշեց Բուրուշխաթումի արքային: Ամենից հավանական է, որ Թարգաղը կարող էր գահերեց կամ զինված ուժերի սպարապետը լինել, ինչպես նշանավոր Ումմանմանդը, համենայն դեպս Ք. ա. 1700 թ. սկսյալ[1]:

4. Բաբելոն և Մարի քաղաքներում հայտնաբերված կավե սալիկներում Աբրահամի ժամանակներում կատարված ճամփորդության ապացույցներ կան: Բաբելոնյան սալիկը բովանդակում է քառանիվ սայլի վարձակալման պայմանագիր այն պայմանով, որ սայլը Միջերկրական ծովի ափ չտարվի: Այսպիսով Աբրահամի օրոք Միջագետքից Միջերկրական ծով ճամփորդությունն այնքան սովորական էր, որ վարձակալման ընթացքում մի քանի հարյուր մղոն երկարությամբ ճամփորդությունը դեպի Միջերկրական ծովի ափերը, որտեղով անցնում էին Ասորիքի և Պաղեստինի սահմանները, սայլը ջարդելու վտանգ էր պարունակում: Սա ապացույց է այն բանի, որ նման հեռավոր ճամփորդություններն անհավանական չէին Աբրահամի օրոք[2]:

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 45-46
2 **Free J. F.,** Op. cit. P. 57-58.

5. Չորս թագավորների ձեռնարկած ռազմական արշավանքը ռազմավարական նպատակ էր հետապնդում, այն է՝ հսկողության տակ առնել մեծ «արքունի ճանապարհը, որը սկիզբ էր առնում Ասորիքից», կտրում–անցնում Միջագետքը և «վերջանում Պարսկական նեղուցի մոտ»: Ընդ որում «պատժիչ արշավանքների հիշատակը ցայսօր էլ կենդանի է այս շրջանի բնակիչների մեջ (...): Հորդանանի քոչվորները այս ճանապարհը «թագավորի ճանապարհ» են անվանում: Սա Աստվածաշնչում ևս «արքունի ճանապարհ» կամ պարզապես «ճանապարհ» է կոչվում, որով Եդոմի երկրով (Թվոց 20.17,19) դեպի «Ավետյաց երկիր» էին ընթանում իսրայելացիները: Հետագայում հռոմեացիներն էին օգտվում «արքունի ճանապարհից» և վերանորոգում այն»[1]:

Վերջում բերենք ամերիկացի հնագետ Վ. Ն. Օլբրայթի կարծիքը, ով Ծննդոցի 14–րդ գլխի մասին գրում է. «Այսօր մենք չենք կարող 14–րդ գլուխը առասպել և մտցածին պատմություն համարել: Նրանում տեղ գտած անցքերը, անշուշտ, տանում են մեզ Ք. ա. 2100–1500 թթ.: Օրինակ՝ ընդոծին բառը (Ծնն. 14. 14), որը Հին Կտակարանի միայն այդ տեղում է հիշատակվել, այնժամ շատ գործածական էր, ինչը ստույգ հաստատված է հնագիտական գտածոներով: Սույն պատումների մեջ հիշատակված բազմաթիվ քաղաքների վաղեմությունը նույնպես հաստատվում է պեղումներով»[2]:

Մանոթագրություն

1. Որքան էլ տարօրինակ թվա, սակայն նույնիսկ խորհրդային գիտնականները ձեռնամուխ եղան այս չորս զավթիչ թագավորների անունների նույնացման փորձին: Նրանք նույնպես հանձին Սենաարի (Շումերի) արքա Ամարփաղի՝ տեսան բաբելոնյան արքա Համմուրապիին, իսկ հանձին Թերգաղի (եբր.՝ Թիդ'ալի)՝ խեթական թագավոր Թուդխալիային (Թութխալիյասա): Բացի այդ, Սելլասարը նույնացրին Լարսայի հետ («История Древнего Востока:, ч. 2. М., 1988, с. 273):

1 **Charlier C.,** Op. cit. P. 76; Keller W., Ἡ Βίβλος ... Σ. 107-108.
2 **Albright W. F.,** The Archaeology of Palestine. Rev. ed. Harmonsworth; Penguin Books,1960. P. 237.

Պետք է ասել, որ այդ ժամանակ Վերին Միջագետքում թագավորում էր մեկ այլ Համմուրապի, բայց նա ոչ մի կերպ չէր կարող Սենաարի արքա կոչվել: Եթե Ամարփաղի նույնականացումը Համմուրապիի հետ ճշգրիտ է (իսկ մեզ դա շատ հավանական է թվում), ապա Սուրբ Գրքում հիշատակված պատերազմը կարող էր տեղի ունենալ միայն այդ թագավորի գահակալության սկզբում, քանզի իր կառավարման վերջում նա նվաճեց բովանդակ Միջագետքն ու Էլամը: Անշուշտ այս թագավորն սկզբնապես անհամեմատ ավելի թույլ էր իր ավագ ժամանակակցից՝ Լարսայի հզոր տիրակալ Ռիմ-Սինից, ով ըստ երևույթին, Ծննդոց գրքի վկայակոչած նույն ինքը Արիոքն է՝ Սելլասարի արքան (համենայն դեպս, Համմուրապիին ժամանակակից Լարսայի ուրիշ թագավոր պարզապես չի եղել):

Նշանավոր խեթագետ Օ. Հենրին իր «Խեթերը» գրքում (M., 1987) բերում է հին խեթական արքաների մի ցուցակ, հանաձայն որի՝ Թուդխալիա I-ը ապրել է Ք. ա. XVIII դ. 2-րդ կեսում, թեև հեղինակը վստահ չէ, որ նա թագավոր էր (էջ 190-191): Սույն թվագրությունը առբերում է մեզ ընդհուպ Համմուրապիի կյանքի ժամանակները, թեպետև չի համընկնում նրա հետ (ըստ խորհրդային գիտության ժամանակագրության՝ այս արքան մահացել է Ք. ա. մոտ XVIII դ. կեսին): Այսպիսով Աստվածաշնչում հիշատակված թագավորներից երեքը մեծ հավանականությամբ կարող են նույնացվել Ք. ա. XVIII դ. թագավորների հետ: Ավելի խրթին է Էլամի թագավոր Քոդողագոմորի (եբր.՝ Քեդորլաոմերոմ) խնդիրը: Այս թագավորի անունը նման է Համմուրապիի ժամանակակից Քութուչուլուշա I-ի անվանը: Ըստ Ծննդոց գրքի՝ Էլամի թագավորը ողջ դաշինքի գլուխն էր, մինչդեռ միջագետքյան աղբյուրները մեզ ոչինչ չեն հաղորդում այդ շրջանում Էլամի գերիշխանության վերաբերյալ: Քեդորլաոմերի անունը նման է նաև Քուդուրմաբուգայի՝ Լարսայի թագավոր Ռիմ-Սինի հոր անվանը, ով ծագումով էլամացի էր և կարևոր դեր էր խաղում Միջագետքի քաղաքական կյանքում: Սակայն Էլամի վրա նրա իշխանության մասին ոչ մի գրավոր վկայություն չկա: Այդ շրջանի Էլամի մասին պատմական վկայությունների սղությունը, ցավոք սրտի, թույլ չի տալիս վստահաբար պարզել, թե Սուրբ Գիրքը Էլամի որ թագավորին նկատի ունի: Բացի այդ, Միջագետքից Պաղեստին վերոհիշյալ թագավորների կազմակերպած արշավանքի մասին դեռևս ոչ մի գրավոր հիշատակություն գտնված չէ. ասենք, որ մեր տեղեկությունները այդ ժամանակաշրջանի պատմության մասին առհասարակ կցկտուր են և ամբողջովին կախված գրավոր աղբյուրներից, որոնց քանակը երբեմն անբավարար է, իսկ ավելի հաճախ՝ քիչ բովանդակալի:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Հինկտակարանյան ժամանակներում ռազմական դաշինքների գոյության ապացույցներ կան, ինչպես և իրականում գոյություն ունեցած անուններ՝ նման Ծննդոց գրքում հոլովված անուններին, կան նաև նահապետների սովորույթներին ու բարքերին հար և նման ավանդույթներ, որոնց մասին խոսել ենք նախորդ գլուխներում: Սակայն կա ևս մի բան, որը կարելի կլիներ հավելել դրանց:

Մեր նպատակը ոչ միայն պատմական հավաստիության հաստատումն է, այլև անցքերի ժամանակագրության սահմանումը, այսինքն՝ այն բանի ապացուցումը, որ նահապետների դարաշրջանը, ըստ աստվածատես Մովսեսի, տևել է Ք. ա. 2000–1750 թթ.:

1. Գլյուկի հնագիտական պեղումները ցույց տվեցին, որ իրոք Նեգև անապատը (Պաղեստինի հարավ–արևմտյան սահմաններ) ժամանակավորապես յուրացվել է Ք. ա. XXI–XIX դդ.: Ըստ հնագիտական տեղեկությունների՝ այս տարածքը բնակեցված չի եղել այդ ժամանակաշրջանից ոչ հազար տարի առաջ, ոչ էլ ութ հարյուր տարի հետո: Համաձայն Սուրբ Գրքի՝ Աբրահամն ու Իսահակն այդտեղ հովվական կյանք են վարել, (Ծննդ. 20. 1 24. 62), իսկ երբեմն էլ՝ հացահատիկ ցանել (Ծննդ. 26. 12 37. 7): Նրանց տնտեսական գործունեությունը Նեգևի շրջանում լիովին բնորոշ էր այդ ժամանակահատվածին՝ Ք. ա. 2100–1800 թթ.: Նահապետների՝ տվյալ տարածքում մշտապես տեղից տեղ քոչելը վկայում է, որ այդ վայրում բավական ջուր և արոտավայրեր են եղել, այսինքն՝ Նեգևը նրանց ժամանակ ամայի անապատ չէր[1]:

2. Մենք արդեն գրել ենք այդ ժամանակաշրջանում ազատ տեղաշարժերի և հեռավոր ճամփորդությունների մասին: Այժմ կցանկանայինք միայն ընդգծել, որ այդպիսի վկայություններ,

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 49-50.

ինչպես նշում է Ա. Լ. Օպենհեյմը, հատկապես հաճախ հանդիպում են հին բաբելոնյան ժամանակաշրջանում: Մարի քաղաքի արխիվի շնորհիվ մենք գիտենք, որ Մերձավոր Արևելքում՝ պաղեստինյան Խառանից մինչև Էլամի երկիր, որ Իրանի հարավ արևմուտքում է, ամենուր կարելի էր հանդիպել քարավանների և դեսպանագնացների: Ավելին, մենք ունենք նաև ավելի վաղ աղբյուրների վկայություններ անհամար առևտրական քարավանների, ճամփորդությունների հանգամանալից նկարագրությունների և Բաբելոնիայի ու Ասորեստանի միջև ընկած Փոքր Ասիայի ներքին շրջանների տարածքներով ճամփորդողների ձեռնարկների մասին: Ինչպես որ Աբրահամը Պաղեստինից Հյուսիսային Միջագետք՝ Խառան, հատուկ դեսպանություն ուղարկեց ՝ իր Իսահակ որդու համար հարսնացու բերելու նպատակով, այդպես էլ Ասորեստանի թագավոր Շամշի Ադադ I–ը (ըստ հնագիտական տվյալների) նմանօրինակ հանձնարարությամբ իր դեսպաններին ուղարկեց Կատնայի թագավորի մոտ (մերօրյա Սիրիա): Ինչպես ապացուցեցին Կուպերն ու Գ. Պոզները, այդ դարաշրջանում կիսավաչկատուն ցեղերը հեռավոր ճամփորդություններ էին կատարում բավական լայնարձակ տարածությամբ: Այս ցեղերը երբեմն կանգ էին առնում ինչ–որ շրջանում, որպեսզի հացահատիկի բերք հավաքեին կամ նստակյաց կյանքի անցնեին[1]:

3. Հինկտակարանյան նահապետները միաստվածության նախանձախնդիր հետևորդներ էին: Նրանցից և ոչ մեկը չէր հարում բազմաստվածության: Ինչպես երևում է Սուրբ Գրքից, նրանք հաճախ էին խոսում «հայրերի Աստծո» մասին: Սույն արտահայտությունը հանդիպում է նաև Ք. ա. XIX դ. ասուրական սեպագիր սալիկներում: Ուրիշ անունները, որոնցով նահապետները կոչում էին Աստծուն, ինչպես՝«Աբրահամի Աստված», «Իսահակի երկյուղ» (Ծնն. 31,53) և այլն, չէին վերաբերում որևէ այլ չաստծու՝ ցածրագույն լիներ, թե նահապետների Աստծուց տարբեր, ինչպես որ պնդում են ոմանք: Սույն անունները Նույն Ինքը՝ Մի Ճշմարիտ

1 **Kitchen K. A.,** Op. Cit. P. 50.

Աստծո տարբեր ստորոգելիներն են: Հնում այսպիսի անունները գործածական են եղել Մերձավոր Արևելքում:

Ծննդոցում պատմվում է, որ Հովսեփի եղբայրները նրան քսան ոսկի դահեկանով (եբր. բնագրում՝ արծաթե) վաճառեցին իսմայելացիներին՝ մադիանացի վաճառականներին: Այս գումարը Ք. ա. XVIII դ. ստրուկի իրական գինն էր, ինչպես որ հայտնի դարձավ Համմուրապիի և Մարի քաղաքի օրենքներից: Առաջ ստրուկների գինն ավելի ցածր էր և տատանվում էր տասից տասնհինգ ոսկե դահեկանի միջև: «Հետագայում գինը խիստ կայունացավ, – ինչպես գրում է հատուկ այդ խնդրով զբաղվող Ի. Մենդելսոնը, – Ք. ա. XV դ. և ավելի ուշ այն կազմում էր 30–40 ոսկե դահեկան, առաջին հազարամյակում միջին գինը հավասար էր 50–90 ոսկե դահեկանի, իսկ պարսկական տիրապետության օրոք հասավ 120–ի»[1]:

Ազատամիտ ոգով տոգորված միջավայրի ծնունդ ամերիկացի հնագետ Օլբրայթը հնագիտական պեղումների արդյունքում եկավ այն համոզման, որ «նահապետների» կյանքի բոլոր անցքերն ու «հերոսական սխրանքներն ըստ էության պատմականորեն հավաստի են»[2]: Այս եզրակացությանը նա հանգեց հնագիտական հետազոտություններ կատարելիս, որոնց խնդրո առարկան էին՝ Աբրահամի և Ղովտի ժամանակների քաղաքները, Հորդանան գետի հովիտը, չորս արևելյան արքաների արշավանքը, Սոդոմի և Գոմորի ոչնչացումը և այլն: Այսպիսով, այս ապացույցները վերը շարադրվածի հետ միասին համոզելով համոզում են, որ այն ամենը, ինչ նահապետների մասին շարադրված է Ծննդոց գրքում, բացարձակապես պատմական է, ճշմարիտ ու աներկբա: Սուրբ Գիրքը խոսում է այն մասին, ինչ իրականում տեղի է ունեցել՝ չպարունակելով հորինվածքի նվազագույն իսկ խառնուրդ:

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 52-53
2 **Albright W. F.,** Archaeology of Palestine and the Bible. N. Y., Revell,1935. P. 145.

ՍՈԴՈՄԻ ԵՎ ԳՈՄՈՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ս. Մովսես մարգարեն գրում է, որ երբ երեք հրեշտակներից երկուսը, որոնց հյուրասիրությամբ պատվեց Աբրահամը, եկան Սոդոմ, Ղովտը նստած էր քաղաքի դարպասի մոտ, որով բոլորը քաղաք էին մտնում (Ծննդ. 19. 1): Հնագետ Ֆրին գրում է, թե հետազոտությունները ցույց տվեցին, որ իսկապես պաղեստինյան քաղաքների պարիսպներին կցակառուցած քարե աթոռներ կամ նստարաններ կային: Այստեղ նստում էին նրանք, ովքեր սպասում էին մերձավորներին կամ նրանք, ովքեր կամենում էին ինչ–ինչ գործեր քննարկել կամ էլ պայմանագիր կնքել: Միով բանիվ դա հանդիպումների, զանազան հարցերի շուրջ վիճաբանությունների և առևտրական գործարքներ կնքելու վայր էր: Նախկին սուրբգրային սահմանային Միցպա ամրոցի տեղում՝ Թելլ–ան–Նասբիհում, Վ. Ֆ. Բեյդի ղեկավարությամբ անցկացված պեղումների ընթացքում (1926–1935 թթ.) հայտնաբերվեցին դարպասներ, որոնց մոտ «փորված» էին մի շարք քարե նստարաններ: (Միցպայի մասին խոսվում է Ծննդոց գրքի եբրայական բնագրում (31. 49). այն գտնվում էր Երուսաղեմից հյուսիս՝ մոտավորապես 12 կմ հեռավորության վրա): Ժողովուրդը նստում էր այդ նստարաններին և լուծում իր առևտրական ու հասարակական գործերը: Դարպասների մոտ կնքվեց Հռութի և Բոոսի միջև ամուսնական համաձայնությունը (Հռութ 4. 1–2): Դարպասի մոտ էր Դավիթն իր որդի Աբեսաղոմի մասին լուրեր սպասում (Բ Թագ. 18. 24,33): Դարպասի մոտ էին իրենց մարգարեությունները հռչակում Իսրայելի մարգարեները: Այդ իսկ պատճառով Հին Կտակարանում հաճախ են վկայակոչվում քաղաքների դռները կամ դարպասները: «Հնագիտական պրպտումները,– ինչպես գրում է Ֆրին,– մեզ բազմապիսի տեղեկություններ տվեցին հինկտակարանյան ժամանակների քաղաքային դարպասների չափերի և առհասարակ կառուցվածքի վերաբերյալ և լույս սփռեցին այն բանի

վրա, թե ինչ նշանակալից դեր ունեին դրանք Մերձավոր Արևելքի մարդկանց կյանքում»[1]:

Հանդիպելով երկու հրեշտակների՝ Ղովտը նրանց իր տուն հրավիրեց և պատվեց հյուրասիրությամբ: Սակայն Սոդոմի ամբարիշտ բնակիչները հարձակվեցին Ղովտի տան վրա և պահանջեցին իրենց հանձնել նրանց: Իսկ երբ Ղովտը մերժեց, նրանք փորձեցին ջարդուփշուր անել տան դուռը՝ բոլորը միասին ընկնելով դռան վրա, բայց ոչինչ չստացվեց (Ծնն. 19. 9): Պեղումները Պաղեստինում հետաքրքիր տեղեկություններ տվեցին այն մասին, թե ինչպիսին էին Ղովտի օրոք կառուցված դռները, և հաստատեցին այն, ինչ հաղորդում է Սուրբ Գիրքը: Թելլ–Բեյթ–Միրսիմում (1926–1930 թթ.) և հետագայում հին բիբլիական Դաբիր բնակավայրում (Քեբրոնից 20կմ հյուսիս–արևմուտք) Մ. Գ. Կայլի և Վ. Ֆ. Օլբրայթի կողմից անցկացված պեղումների ընթացքում միջին բրոնզե դարին (Ք. ա. 2100–1600 թթ.) պատկանող շերտում հաստ պատերի և մեծ դռների հետքեր հայտնաբերվեցին: Տներից մեկում՝ իր իսկ տեղում, պահպանվել էր մի շատ մեծ նիգ, ըստ որի էլ կարելի էր պատկերացում կազմել, թե Ղովտի օրոք իրենց կառուցվածքով ինչքան ամուր են եղել դռները: Վաղ՝ «երկրորդ» երկաթե դարին (Ք. ա. 900–600 թթ.) պատկանող շերտերում բազմաթիվ տներ ու դռներ են հանդիպում, սակայն դռան նիգը այդ շերտի համար բավական հազվագյուտ գտածո է: Սա խոսում է այն մասին, որ ավելի ուշ ժամանակներում այս վայրերի բնակիչները դռան փոխարեն կամարակապ որմնախոռոչներով էին բավարարվում կամ գործվածքե վարագույրով փակում տան մուտքը: Ք. ա. 900–ից մինչև 600 թվականը ընկած ժամանակահատվածում իշխում էին Իսրայելի և Հուդայի թագավորները, այսինքն՝ դա հզոր կենտրոնաձիգ իշխանության շրջան էր: Իսկ հին ժամանակներում՝ Աբրահամի և Ղովտի օրերում (Ք. ա. 2000 թ.), այդպիսի իշխանություն չկար, ըստ այդմ էլ ամուր դռներ ու հաստ պատեր էին հարկավոր: Այսպիսով Ղովտի տան ծանր դուռն ամ-

1 **Free J. P.,** Op. cit. P. 62.

բողջովին համապատասխանում էր այն ժամանակների կահավորանքին ու սովորույթներին[1]:

Ծննդոց գրքում Ղովտի տանը հյուրընկալած երկու հրեշտակների և Սոդոմի բնակիչների միջադեպին հաջորդում է Սոդոմի և Գոմորի կործանումը: Ասվում է, որ Աստված կործանեց այլասերության մեջ կորած քաղաքներն ու ամբողջ շրջակայքը՝ երկնքից կրակ ու ծծումբ թափելով: Համաձայն Սուրբ Գրքի՝ Սոդոմն ու Գոմորն այդ տարածքի հինգ կարևորագույն քաղաքներից էին (Ծնն. 14. 6): Ըստ պրոֆեսոր Ֆրիի տեսակետի՝ Մեռյալ ծովի հարավային կողմի հինգ գետերի ակունքները մատնացույց են անում այն վայրը, որտեղ երբեմնի գտնվել են այս հինգ քաղաքները: «Ըստ երևույթին,– շարունակում է Ֆրին,– այս գետերից յուրաքանչյուրը քաղաքներից մեկին ջուր էր մատակարարում»: Բացի այդ, Մեռյալ ծովի հարավային ափին՝ ի մասնավորի Բաբ–ադ–Դրա կոչվող հարակից տեղանքում, ուր հավանաբար գտնվում էր Սոդոմի և Գոմորի բնակիչների մեհյանը, երևան հանվեցին նյութեր, որոնք վկայում են այն մասին, որ Ք. ա. շուրջ 2000 թ. մշակութային ավանդույթն այստեղ հանկարծակի ընդհատվել է: Նելսոն Գլյուկի նմանատիպ վերջին հետազոտությունները ցույց տվեցին, որ Հորդանանում ևս Ք. ա. մոտ 2000 թ. մշակութային ավանդույթի հանկարծական ընդհատում է տեղի ունեցել: Գլյուկը այս արտասավոր երևույթը վերագրում է Աբրրահամի դարաշրջանին[2]:

Ինչպես նկատում է պրոֆեսոր Քիթչենը, մենք, այդուհանդերձ, համենայն դեպս տվյալ պահին, ի զորու չենք սահմանել Սոդոմ և Գոմոր հովիտների քաղաքների կործանման ճշգրիտ ժամանակը, որը տեղի է ունեցել հզոր երկրաշարժի կամ սարսափելի հրդեհի հետևանքով, քանի որ դրանց ավերակները, հավանաբար, ծածկված են Մեռյալ ծովի ջրերով, իսկ մոտակա Բաբ–ադ–Դրա բնակավայրը հնարավոր է, որ ավերված լիներ Ք. ա. դեռ XXI դ., այսինքն՝ նախքան Սոդոմի ու Գոմորի ոչնչացումը[3]:

---

1 **Free J. P.,** Op. cit. P. 62-63.
2 **Glueck N.,** The Other Side of Jordan. N. Haven: American Schools of Oriental Research, 1940. p. 114.
3 **Kitchen K. A.,** Op. cit. P. 47.

Մի ժամանակ ծովի ջրերը, որոնք կլանեցին Սոդոմն ու Գոմորը, ծանծաղ էին: Սակայն հընթացս ժամանակի ջրի մակարդակը բարձրացավ, քանզի հյուսիսից Մեռյալ ծով է թափվում Հորդանանը, մինչդեռ հարավից որևիցե արտահոսք չկա: 1892 թ. հնագիտության դոկտոր Կայլը հյուսիսային ափի մոտ մի կղզյակ նկատեց: Հետագայում ջրերը բարձրացան և իրենց տակ առան այն: 1924 թ. Կայլը, ջրի տակ անցած կղզյակի վրայով նավակով անցնելիս, նկատեց, որ նրա վրայի ջրի բարձրությունը հասել է մի քանի մետրի[1]:

Մեռյալ ծովը

Հնագիտության տեսանկյունից այսօրվա դրությամբ Սոդոմի և Գոմորի կործանման մասին վերը նշվածից զատ որևիցե բան ասելը դժվար է: Այնուամենայնիվ մենք ի զորու ենք այլ գիտությունների (երկրաբանություն, բանասիրություն) անդաստանից որոշ տեղեկություններ հաղորդելու, քանզի այս իրողությունը սկեպտիկական և աթեիստական առարկությունների առիթ է տվել: Հարցի առնչությամբ ֆանտաստիկ բնույթի հրապարակումներում կասկածի տակ առնվեց Սուրբ Գրքի պատմական հավաստիությունը: Ռուս խորհրդային մի գիտնական նույնիսկ պնդում էր, որ այս քաղաքները ոչնչացվել են ատոմային էներգիայի միջոցով, քանի որ այդ շրջանում իբր թե վերերկրյա քաղաքակրթությունների ատոմային զենքի պահեստ է տեղակայված եղել[2]:

Հայտնի է, որ հին հույները Մեռյալ ծովը «Ասֆալտե լիճ» են անվանել: «Մեռյալ ծով» անվան առաջին հիշատակությունը պատկանում է Պավսանիասին: Բացի Պավսանիասից, սույն ծո-

1 **Albright W. F.,** Annual of the American Schools of Oriental Research VI. P. 54-55. Սոդոմի և Գոմորի մասին ևս երկու հետաքրքիր հոդված կա՝ Հ Փենրոուզի (Harland J. Penrose) հեղինակությամբ. սրանք լույս են տեսել «Biblical Archaeologist» հանդեսում 1942թ. մայիսին և 1943թ. սեպտեմբերին: (Տես **Free J. P.,** Op. cit. P. 63)

2 **Dye D. L.,** Faith and the Physical World…P. 117.

վի մասին տեղեկությունների հանդիպում ենք Ստրաբոնի, Դիոդորոս Սիկիլացու և հրեա պատմիչ Հովսեպոս Փլաբիոսի մոտ, որը հաճախ է խոսում «Կուպրե ծովի» մասին: Ներկայումս արաբները այն Բահր Լուտ՝ Ղովտի ծով են անվանում: Բացի այդ, «հույները համառորեն խոսում են թունավոր գոլորշիացումների մասին, որոնք պատում են այդ ծովի ողջ շրջակայքը: Իսկ արաբները պատմում են, որ արդեն երկար ժամանակ է, ինչ ոչ մի թռչուն չի կարող մի ափից մյուսը հասնել: Լճի վրայով թռչելիս՝ որոշ ժամանակ անց թռչունները հանկարծակի սատկած վայր էին ընկնում»[1]:

Հայտնի է, որ Հորդանանի՝ Մեռյալ ծով թափվելու վայրը ծովի մակերևույթից 388–400 մ ցածր է: Եթե հաշվի առնենք, որ Մեռյալ ծովի խորությունը 400 մ է, ապա նրա հատակը Միջերկրական ծովի մակարդակի համեմատ կգտնվի 800 մ խորության վրա: Եթե սովորական ծովաջուրը պարունակում է 3,3–4% աղ, Մեռյալ ծովը՝ 30% կարծր խառնուրդներ, որոնցից 25% քլորական նատրիում է, այսինքն ՝ կերակրի աղ: Մեռյալ ծովի ափերը զուրկ են բուսականությունից, ծովի երկայնքով մեկ ձգվում են «բյուրեղացված աղի տարածքներ», և ի լրումն անտանելի տապի՝ «օդը հագեցած է ծծումբի սուր, կսկծոտ հոտով»: Փյունիկացի քուրմ Սանքինիաթոնն իր «Հին պատմություն»–ում գրում է. «Սինտիմուս (Սիդդիմ – Ն. Վ.) հովիտը խորացավ և լիճ դարձավ, և մշտապես մխում է ու բոլորովին կենսազուրկ է՝ իրենից ներկայացնելով մեղավորներին պատուհասող պատժի ու մահվան պատկեր»[2]:

Այս տեղանքի երկրաբանական կառուցվածքը մի առանձնահատկություն ունի. Մեռյալ ծովի ափերի երկայնքով շուրջանակի ձգվում են հանքային աղի շերտեր: Այդ շերտերից մեկի հաստությունը 45 մ է, իսկ երկարությունը՝ 6 մղոն: Նրա վրա նստած է ծծմբի շերտ, որը կարող է բռնկվել նույնիսկ մեկ հատիկ լուցկուց: Այս շրջանում նկատելի են նավթի և բիտումի (ասֆալտի) այրման հետքեր. երևում է նաև, որ այստեղ խոր անցյալում տեղի է ունեցել երկրաբանական շերտերի բեկում: Մեռյալ ծովի ողջ հովիտը սեյսմիկ առումով անկայուն է և ենթակա երկրաշարժերի: Մի

1 **Keller. W.,** Ἡ Βίβλος …Σ. 110.
2 **Keller. W**., Ἡ Βίβλος …Σ. 12 և 118.

ժամանակ Սոդոմի տակ նավթի հանքատեղ կար՝ բնական գազի անսպառ պաշարով: Ըստ երևույթին երկրաշարժի հետևանքով գազն ու նավթը դուրս են ժայթքել և բռնկվել, հրեշավոր պայթուն է տեղի ունեցել՝ վերևից Սիդդիմ հովտի քաղաքների վրա այրվող ծծմբի ու ձյութի տարափ թափելով: Այս ամենը, Մեռյալ ծովի նստվածքաշերտային աղի հետ խառնված, բարձրունքից անձրևի նման ամբողջ հովտի վրա է թափվել[1]: Տեղի է ունեցել այն, ինչ ասվում է Ծննդոց գրքում. «Տերը երկնքից ծծումբ ու կրակ թափեց Սոդոմի և Գոմորի վրա, կործանեց այդ քաղաքներն ու դրանց ամբողջ շրջակայքը, ոչնչացրեց քաղաքների բոլոր բնակիչներին ու երկրի ամբողջ բուսականությունը» (Ծնն. 19. 24–25): Այս իրողությունը պետք է որ տեղի ունեցած լիներ Ք. ա. 2000 և 1900 թթ. միջև, այն է՝ Աբրահամի և Ղովտի օրոք[1][2]: Այսպես թե այնպես, Սուրբ Գիրքն ընդգծում է, որ մեղքերի մեջ ընկղմված այս երկու քաղաքների կործանումը պատիժ էր Աստծուց և հրաշք, այսինքն ամենակարող Աստծո ձեռամբ կատարված գերբնական երևույթ Իրեն հարմար մի պահի: Չէ՞ որ Աստված, իբրև աշխարհի Արարիչ, կարող էր գործադրել Իր իսկ կողմից կարգված արարչագործության օրենքները, կարող էր նաև ինչ–որ ակնթարթ խափանել դրանք՝ մարդու փրկության աստվածային խորհուրդն ի կատար ածելու համար:

ԱԲՐԱՀԱՄԸ ԵՎ ՓՂՇՏԱՑԻՆԵՐԸ

Հին Կտակարանում Աբրահամի կյանքից մի դրվագ կա՝ Գերարայում փղշտացիների հետ կապված, որտեղ ասվում է, թե նա «փղշտացվոց երկրում պանդուխտ մնաց երկար ժամանակ» (Ծնն. 21. 32–34): Հնագիտական տվյալների համաձայն՝ փղշատացիները Պաղեստինում հաստատվել են Ք. ա. 1200–ականներին՝ եգիպտական ափ իջնելու անհաջող նախնական փորձից հետո: Ռամզես III փարավոնի (Ք. ա. 1198–1167 թթ.)

1 **Coder S. M.,** Howe G. F., Op. cit. P. 100.
2 **Keller. W.,** ‘Η Βίβλος …Σ. 116.

գահակալության շրջանի հին եգիպտական հուշարձանները վկայում են կատաղի ծովամարտերի մասին, հընթացս որոնց եգիպտացիք կասեցրին Էգեյան ծովի կղզիներից նավերով Եգիպտոսի ափերին հասած փղշտացիների ներխուժումը:

Սուրբ Գրքի վկայությունների արժանահավատությունը ժխտողները պնդում են, որ Ք. ա. 2000–ականներին Աբրահամի և փղշտացիների միջև հարաբերությունների մասին տեղեկությունները ժամանակավրեպ են կամ առասպելական, որովհետև փղշտացիները միայն Ք. ա. մոտ 1200 թ. են Պաղեստինում հայտնվել: Այս պնդումը պայմանավորված է հնագիտական տվյալների ու պատմական վկայությունների սղությամբ:

Ճիշտ է, առ այսօր Ք. ա. 2000 թ. փղշտացիների՝ Պաղեստին գալու վերաբերյալ լիարժեք և հստակ հնագիտական վկայություններ չկան, բայց, ըստ պրոֆեսոր Ջ. Ֆրիի՝ «շատ հավանական է, որ փղշտացիներն այդ վաղնջական ժամանակաշրջանում արդեն հաստատված լինեին Պաղեստինում, և որ նրանց թիվն աճեր Էգեյան ծովի կղզիներից Ք. ա. 1200–ականներին այլ փղշտացիների գալու շնորհիվ»: Փղշտացիների՝ Պաղեստին հասնելու վերջին ալիքը հաստատվում է հնագիտական պեղումների տվյալներով: Միանգամայն հավանական է, որ մոտ ապագայում Պաղեստինում՝ փղշտացիների ավելի վաղ շրջանում հայտնվելու աներկբա հնագիտական ապացույցներ գտնվեն: «Համենայն դեպս,– եզրակացնում է Ֆրին,– Սուրբ Գրքի՝ նախկինում անհավաստի համարվող տեղերի ճշմարտապատումության բազմաթիվ ապացույցները ցույց են տալիս, որ պետք չէ շտապել եզրակացություններ ու քննադատական դիտողություններ անել միայն այն պատճառով, որ դեռևս բավարար քանակությանբ տվյալներ չունենք և ստիպված հարցը լռությամբ ենք շրջանցում: Այս նկատի առնելով՝ մենք մինչև իսկ տվյալ դեպքի համար պնդում ենք, որ փղշտացիների ներկայությունը Պաղեստինում Աբրահամի օրոք անհնարին բան չէր»[1]:

1 **Free J. P.**, Op. cit. P. 65,66.

Ֆրիի պնդումներին համարժեք կարծիք է հայտնել մեկ ուրիշ հեղինակ՝ հնագիտության պրոֆեսոր Կ. Ա. Քիթչենը: Նա գրում է, որ հետևությունը, ըստ որի իբր թե Աբրահամի օրոք փղշտացիներ չեն եղել, քանի որ այդ մասին վկայություններ չկան, պայմանավորված է նյութի սղությամբ, հետևաբար, այդ միանշանակ պնդել չի կարելի: «Պահպանված արձանագրություններից,– շարունակում է նա,– ի տարբերություն Ք. ա. 2–րդ հազարամյակում Մերձավոր Արևելքում բնակություն հաստատած մյուս ժողովուրդների՝ մեզ շատ քիչ բան է հայտնի Էգեյան կղզիների ժողովուրդների մասին: Ուստի վաղաժամ է Ք. ա. մինչև 1200 թ. Էգեյան կղզիների տարածքում փղշտացիների ենթադրյալ ներկայությունը կտրուկ ժխտելը: Բացի այդ,– ավելացնում է Քիթչենը,– Ծննդոց գրքի 26–րդ գլխում փղշտացիները նկարագրված են իբրև բավական խաղաղասեր և սեմիտների հզոր ազդեցությանը ենթակա, ու իրենց բնավորությամբ խիստ տարբերվում են Ք. ա. XII դարի Էգեյան կղզիներից եկած օտարերկրացի և թշնամաբար տրամադրված զավթիչներից: Եվ մենք իրավունք ունենք հարցնելու, թե 26–րդ գլխում հանդիպող «փղշտացի» հասկացությունը որքանով է իրականում համապատասխանում Ք. ա. XIII–XII դդ. եզրին՝ գործածված անհայտ վերաբնակիչների նկատմամբ, ովքեր ավելի վաղ էին Պաղեստին եկել Էգեյան ծովի կողմերից, ովքեր, ինչպես և ավելի ուշ շրջանի փղշտացիները (Ամոս 9. 7, Երեմ. 29. 4), (Ամոս մարգարեի գրքի «այլազգիներ Գամրից»), եբրայական բնագրում «փղշտացիներ» են անվանված, եկել են Գամրի կղզուց (այսինքն՝ Կրետե կղզուց և Էգեյան ծովի կղզիներից): Շատ հավանական է, որ այս «կապադովկիացիները» կամ եբրայական բնագրի Բ Օրինացում (2. 23) հիշատակված «կաֆտորիմները», այսինքն՝ «գամիրցիները» Էգեյան կղզիներից ելած նույն փղշտացիներն են, ովքեր անմիջական առնչություն ունեն մեր խնդրո առարկայի հետ: «Եթե ընդունենք սույն կարծիքը,– գրում է Քիթչենը,– ապա թվացյալ պատմական ժամանակավրիպությունն ի դերև կելնի: Կաֆտոր՝ Գամրիք կղզին Ք. ա. XVIII դարով, այսինքն՝ նահապետների ժամանակաշրջանով թվագրվող Մարիում երևան հանված սեպագիր

սալիկներում հիշատակվող Կապտարան է: Սալիկներից մեկում ասվում է, որ պաղեստինյան Ասոր քաղաքի արքան ընծաներ է ուղարկում Կապտարա կղզի: Բավական հստակ վկայություններ կան նաև հենց այդ շրջանում հակառակ ուղղությամբ մարդկանց տեղաշարժերի վերաբերյալ, քանզի Ասոր, Ուգարիթ (Փյունիկիա) քաղաքներում և Վերին Եգիպտոսում գտնվել են միջին մինոսյան դարաշրջանի խեցեղեն հնություններ: Եթե սուրբգրային նահապետների ժամանակներում փղշտացիների հետ նման որևիցե բան տեղի ունեցած չլիներ, ապա փղշտացիների հիշատակումը Հին Կտակարանում նահապետների առնչությամբ առեղծված կմնար»[1]:

Անգլիացի հնագետ Ֆլայնդրես Փեթրին համարում է, որ Աբրահամի օրոք Քանանում փղշտացիների ներկայությունը անհավանական չէ, քանզի Կրետե լեռնային կղզում բնակիչները ցորենի կարիք ունեին, որը պետք է այդ եղանակով ներմուծեին[2]: Բացի այդ, հնում փղշտացիների բնակության վայրերում Պետրիի հայտնաբերած ոչ մեծ մանգաղները վկայում են, որ փղշտացիները զբաղվում էին հացահատիկային բույսերի մշակությամբ:

Սակայն սպասենք նոր մեծ հայտնագործությունների, որոնք ապագայում մեզ կտրամադրի հնագիտությունը այս խնդրի լուծման համար, ինչպես որ դա արեց Սուրբ Գրքի մյուս կարծեցյալ «պատմական անճշտությունները» պարզաբանելիս:

ՀՈՎՍԵՓՆ ՈՒ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Բոլորին հայտնի է Հովսեփի պատմությունը, երբ վերջինիս եղբայրները նախանձից դրդված վաճառեցին նրան իսմայելացի և մադիանացի վաճառականներին: Սրանք Հովսեփին տարան Եգիպտոս և վաճառեցին փարավոնի թիկնազորի պետին*՝ Պենտափրեսին: Ապա Ծննդոցում պատմվում է, որ Հով-

1 **Kitchen K. A.**, Op. cit. P. 80-81.
2 **Petrie F.**, Palestine and Israel. London: SPCK, 1934. P. 62.
* Հայերեն բնագրում՝ փարավոնի դահճապետ՝ ներքինի:

սեփը շնորհ գտավ փարավոնի առաջ ու մեծ պաշտոն ստացավ, իսկ երբ սով եղավ հայրենիքում, հորն ընտանյոք հանդերձ տեղափոխեց Նեղոսի երկիր: Հնագիտական գտածոները այս անցքն էլ լուսաբանեցին:

Այսօր մեզ շատ բան է մանրամասնորեն հայտնի հին եգիպտացիների պատմության և մշակույթի, կրթության մակարդակի և Եգիպտոսի տիրակալների ժառանգական իրավունքների մասին: Ամենայն մանրամասնությամբ հայտնի է նաև հին եգիպտական պատմության անցքերի ժամանակագրությունը, որոշ թագավորներից մեզ են հասել պատմական տեղեկություններ, մյուսներից միայն անուններ կամ մումիաներ, որոնք պահվում են Կահիրեի կամ աշխարհի ուրիշ թանգարաններում: Փարավոնների անխաթար պահպանված դամբարաններից մեկը Թութանհամոնինն է, ով ապրել է Մովսեսի ժամանակներից ոչ շուտ և գահակալել է երեք տարի: Այս դամբարանը հայտնաբերվեց Հովարդ Քարթերի կողմից:

Մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ նա, ում առաջ Հովսեփը շնորհ էր գտել, սերում էր հիքսոսների հարստությունից: Ըստ պատմաբանների՝ Ք. ա. 3000 թ.՝ ընդհուպ մինչև Հռոմեական կայսրության հիմնադրումը, Եգիպտոսում փարավոնների շուրջ երեսուն և ավելի հարստություններ են հաշվվում: Շատ հավանական է, որ նահապետների օրոք Եգիպտոսում իշխում էր 12–րդ հարստությունը, որի տիրապետությունն ավարտվեց Ք. ա. 1786 թ.: Սրան հաջորդեցին 13–րդ և 14–րդ հարստությունները, որոնք Թեբեն (Ստորին Եգիպտոս) իրենց գահանիստը հռչակեցին: 13–րդ դինաստիայի իշխանության ավարտին մոտ Հյուսիսային Եգիպտոս խուժեց մի ժողովուրդ, ում ուշ շրջանում պատմաբանները հիքսոս անվանեցին: Հիքսոսները Նեղոսի երկրում իշխեցին շուրջ 150 տարի (Ք. ա. 1720–1580 /70 թթ. կամ 1750–1600/1550 թթ.) և Եգիպտոսում հիմնադրեցին 15–րդ և 16–րդ հարստությունները: Բնիկ եգիպտացի տիրակալները շարունակում էին մնալ Թեբեում, սակայն ենթարկվում էին հիքսոսների իշխանությանը: Հիքսոսների մայրաքաղաքը Ավարիսն էր (ուշ շրջանում Պեր–Ռամզես վերանվանված), որը գտնվում էր Նե-

ղոսի դելտայում: Ի վերջո եգիպտացի տիրակալներն ընդվզեցին հիքսոսների տիրապետության դեմ և նորից իրենց երկրի տերերը դարձան: Չնայած որ Հին Եգիպտոսի պատմությունը ամենայն մանրամասնությանբ է հայտնի, այդուհանդերձ մեզ հասած եգիպտական վավերագրերը ոչինչ չեն հայտնում Հովսեփի կյանքի և Եգիպտոսում նրա անցկացրած տարիների մասին: Եգիպտագետները դեռևս ո՛չ հնագիտական հուշարձան են հայտնաբերել, ո՛չ էլ այդ դարաշրջանի գրավոր աղբյուր: Նեղոսի երկրի պատմությունը Ք. ա. 1750 թ. մինչև 1550 թ. ծածկված է անհայտության խավարով: Ինչո՞ւ:

Բազմաթիվ հնագիտական տվյալներ հաստատում են, որ Ք. ա. շուրջ 1700 թ. (կամ մի քիչ ավելի վաղ) Հին Եգիպտոսը ողողված էր ներխուժումների ալիքներով: Ցեղերի մի մասը խաղաղ ճանապարհով էր երկիր թափանցում, մինչդեռ մյուս մասը, ընդհակառակը, մարտակառքերով:

Եվ դա տեղի էր ունենում տկար13–րդ հարստության իշխանության օրոք: Եկվոր–վերաբնակիչները Պաղեստինից էին. Եգիպտոսը նրանց ձեռամբ ողողվեց արյան ծովով և աննախադեպ հիմնահատակ ավերների ենթարկվեց: Սկզբում նրանք Նեղոսի դելտայի շրջանը գրավեցին, ապա իրենց իշխանությունը տարածեցին բովանդակ երկրով մեկ: Մինչ այդ Նեղոսի անհնազանդ հսկան նրանց ստրուկը դարձավ: Այս զավթիչների ծագումն անհայտ է, բայց մենք գիտենք, որ նրանք մեծավ մասամբ Քանանում ու Ասորիքում բնակություն հաստատած սեմիտներից էին: Հիքսոսների տիրապետության ժամանակաշրջանից մեզ հասած սրբազան կոյաբզեզների տեսքով հմայիլների վրա փորագրված անունները մեծավ մասամբ սեմական են[1]:

Հիքսոսների իշխանության ժամանակաշրջանն այսքան մանրամասնորեն քննության առարկա դարձրինք այն պատճառով, որ Ծննդոցի եզրափակիչ գլուխներում պատմվում է, թե միմիայն փարավոնի բարեհաճությամբ էր պայմանավորված Հակոբ նահապետի՝ ընտանիքով Եգիպտոսում հաստատվելը: Եվ միայն հետագայում, երբ Եգիպտոսում թագավորում էր մի ուրիշ փարավոն,

1 **Thompson J. A,** Op. cit. P. 39.

ով չգիտեր Հովսեփի երախտիքները (Ելք 1. 8), սկսվեցին իսրայելացիների տառապանքները: Եգիպտագետներն այն եզրակացության հանգեցին, որ իրենից հետո Հովսեփին երկրում երկրորդ մարդ հռչակած փարավոնը խնդրո առարկա ժամանակաշրջանի հիքսոսների հարստությունից էր: Ծննդոց գրքում ասվում է, որ եգիպտացիները խորշում էին ոչխարների հովիվներից (այսինքն՝ արհամարհելի և զզվելի էին) (Ծննդ. 43. 32; 46. 34), մինչդեռ Հովսեփը, նրա հայրն ու եղբայրները հովիվներ էին, ովքեր բարեհաճ ընդունելության արժանացան փարավոնի կողմից: Եգիպտագետների կարծիքով այս հանգամանքը հաստատում է, որ Հակոբի՝ Եգիպտոսում բնակվելը համընկնում է սեմական ծագում ունեցող հիքսոսների տիրապետության ժամանակաշրջանի հետ: Ընդ որում նրանց անվանումը թարգմանաբար «հովիվ–արքաներ» է նշանակում, քանզի Հովսեպոս Փլաբիոսը հաղորդում է, որ «հիք» նշանակում է թագավոր, իսկ «սոս»՝ հովիվ[1]: Բարձր պաշտոնների նշանակելիս, ինչպես գտնում են եգիպտագետները, սեմիտ–հիքսոսների համար բնական էր նախապատվությունը ցեղակիցներին տալը[2]:

Հովսեփի մասին հավաստի վկայությունների բացակայության պայմաններում հարց է ծագում՝ ինչպե՞ս կարող են հնագիտական տվյալները համաձայնեցվել Ծննդոց գրքի գրավոր վկայությունների հետ:

Հիքսոսների, ինչպես իրենք՝ եգիպտացիք էին նրանց անվանում՝ «օտարերկրյա արքաների» կառավարման ժամանակաշրջանը երկար մնաց Եգիպտոսի ժողովրդի հիշողության մեջ: Եվ դրա պատճառը միայն հուրն ու սուրը չէր, որով անցան ողջ երկրով մեկ, այլև այն, որ հիքսոսները բարձր պաշտոնների նշանակում էին օտարերկրացիներին (իրենց ցեղակիցներին) և կեղեքում բնիկ բնակչությանը: Նեղոսի երկրի նյութական և մշակութային աղետի ու նրա բնիկ բնակչության հարստահարության հիշողությունը երկար պահպանվեց եգիպտացիների գիտակցու-

1 **Βέλλας Β. Μ.** Ἑβραϊκὴ Ἀρχαιολογία. Αθῆναι (**Վելլաս Վ. Մ.,** Հրեական հնագիտություն, Աթենք), 1980, էջ 66. Նաև՝ **Հովսեպոս Փլաբիոս**, Ընդդեմ Ապպիոնի 1, 82:

2 **Charlier C.**, Op. cit. P. 78.

թյան մեջ: Այդ անցքերը վառ կերպով նկարագրել է եգիպտացի պատմիչ Մանեթոնը[1]: Քանի որ երկրի պատմության այդ շրջանը բավական դժնդակ է, եգիպտացիները հիքսոսների տիրապետությունից ազատվելուն պես սկսեցին կանոնավոր կերպով իրենց երկրում «օտարերկրյա թագավորների» հետքերը ոչնչացնել: Հետքեր ոչնչացնելու գործում՝ լիներ դա գրավոր աղբյուր, շինություն, թե մշակույթի այլ հուշարձան, առանձնակի մեծ ջանքեր գործադրեցին 18–րդ հարստության փարավոնները: Եգիպտագետների կարծիքով հենց սրանով է պայմանավորված Հովսեփի և իսրայելացիների՝ Եգիպտոսում հաստատվելու փաստի ուղղակի վկայությունների բացակայությունը[2]:

Եվ չնայած հիքսոսներն անողոք էին եգիպտացիների նկատմամբ, այդուհանդերձ, նրանք իրենց հետ մի քանի օգտակար նորամուծություններ բերեցին: Իբրև աշխարհակալ տերություններից մեկի տիրակալներ, որի սահմանները հյուսիսային Ասորիքից տարածվում էր մինչև Ստորին Եգիպտոս, հիքսոսները Մերձավոր Արևելքի բոլոր երկրների հետ առևտրական հարաբերություններ էին հաստատում: Այսօր արդեն բոլորի կողմից էլ ընդունված է, որ հիքսոսների շնորհիվ Եգիպոսում երևան եկան ձիեր, մարտակառքեր, թրերի և սրերի նոր տեսակներ, ասիական հզոր աղեղներ. նրանք եգիպտացիներին ծանոթացրին ամրոցային կառույցների նոր տեսակների հետ. հատկապես տպավորիչ էին ամրություններրը, որոնց ետևում թաքնվում էին մարտակառքերը:

Ինչպես արդեն նշել ենք, Հովսեփի և նրա ընտանիքի՝ Եգիպտոս գալու և այնտեղ հաստատվելու մասին ուղղակի վկայություններ չկան: Սակայն բազմաթիվ անուղղակի ապացույցներ ու ծանրակշիռ փաստարկներ կան, որոնք, այդուհանդերձ, հաստատում են այն դեպքերի պատմական արժանահավատությունը, որոնք շարադրված են Ծննդոցի 40–50 գլուխներում, ինչպես և այն փաստը, որ Հովսեփն իրոք Ք. ա. 1700 թ. մեծ հարգանք է վայելել Եգիպտոսում:

1 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 125-126.
2 **Thompson J. A.**, Op. cit. P. 40; **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 126; **Charlier C.**, Op. cit. P. 78.

1. Մենք արդեն նշել ենք, որ հիքսոսները սեմիտներ էին: Սակայն սեմիտներ էին նաև Հակոբի որդիները, որի պատճառով էլ արժանացան հիքսոսների բարեհաճ վերաբերմունքին: Կասկածի տեղիք չի տալիս նաև այն հանգամանքը, որ Հակոբի փոքրաթիվ ցեղը ժամանակի ընթացքում աճեց և հիքսոսների տիրապետության օրոք դարձավ Իսրայելի ժողովուրդ: Նույն եզրահանգման կարելի է գալ նաև Ծննդոցի պատումների հիման վրա: Հին Կտակարանում ասվում է, որ իսրայելացիները Եգիպտոսում 400 տարի մնացին: Եթե ընդունենք, որ իսրայելացիների ելքը Եգիպտոսից տեղի է ունեցել Ք. ա. 1300 թվականից փոքր–ինչ ավելի ուշ (սույն հարցն առավել հանգամանալից կքննարկենք ստորև) և այդ թվականին գումարենք 400 տարի, կստանանք Ք. ա. 1700 թվականը, այսինքն՝ Եգիպտոսում հիքսոսների տիրապետության ժամանակաշրջանը: Այսպիսով, Հովսեփի, ինչպես և Հակոբի ու իր ընտանիքի հայտնվելը Եգիպտոսում համընկնում է Եգիպտոսում հիքսոս–սեմիտների տիրապետության ժամանակաշրջանի հետ:

2. Հովսեփը Ք. ա. շուրջ 1700 թ. Եգիպտոս ստրկության վաճառված ամենևին միակ ասիացի սեմիտը չէ (Ծնն. 37. 36 39. 1): Բրուկլինյան թանգարանում պահվող հնագույն պապիրուսներից մեկը պարունակում է մի եգիպտացի ազդեցիկ ազնվատոհմիկի 79 ստրուկների ցուցակ, որոնցից 40–ը ծագումով Ասիայից են և ունեն սեմական անուններ[1]: Հին եգիպտական վավերագրերից հայտնի է, որ եգիպտացիներն Ասորիքից բարձր գներով էին ստրուկներ ձեռք բերում: Քանամու կամ քանանացի բառը հին եգիպտական վավերագրերում ստրուկի հոմանիշն էր[2]:

3. Ծննդոց գրքում հիշատակվում են Հին Եգիպտոսում մեծապես տարածված զանազան պաշտոններ ու տիտղոսներ: Օրինակ՝ գլխավոր տակառապետի և գլխավոր մատակարարի պաշտոնները, ըստ հնագիտական տվյալների, իրոք հանդիպում են եգիպտական պալատական պաշտոնների մեջ: Պաշտոնը, որը Պետափրեսը Հովսեփին տվեց. «Դրա համար էլ նա նրան իր տան վերակացու կարգեց և իր ողջ ունեցվածքը վստահեց Հովսեփին»

1 **Thompson J. A.**, Op. cit. P. 44-45.
2 **Free J. P.,** Op. cit. P. 74.

(39. 4), իսկապես գոյություն է ունեցել Հովսեփի օրոք՝ եգիպտացի ազնվատոհմիկերի տներում[1]:

4. Որոշ հետազոտողներ արժանահավատ չեն համարում այն փաստը, ըստ որի Պետափրեսի կինը հնարավորություն ուներ հաճախակի հաղորդակցվելու Հովսեփի հետ և ամեն օր նրան մերձենալու առաջարկություն անելու (39. 10), քանի որ Հովսեփի՝ իբրև գլխավոր վերակացուի զբաղեցրած սենյակները իբր թե գտնվում էին Պետափրեսի և նրա կնոջ ննջարանից բավականին հեռու: Սակայն Թելլ–ալ–Ամառնայի (Կենտրոնական Եգիպտոս) պեղումները լույս աշխարհ հանեցին բնակելի տների ավերակներ, որոնց հատակագիծը ցույց տվեց, որ տնտեսական սենյակները գտնվում էին տան ետնամասում, ուստի նախքան այնտեղ մտնելը պետք էր անցնել տան գլխավոր մասով: Այդպիսին էր նաև Պետափրեսի տունը: Այսպիսով, Հովսեփը, իբրև տան կառավարիչ և վերակացու, ամեն օր անցնում էր ամբողջ տնով՝ իր տիրոջ տնտեսական սենյակները մտնելու համար[2]: Ուստի միանգամայն բնական է, որ նա կարող էր ամեն օր զրուցել Պետափրեսի կնոջ հետ՝ լուռ տանելով նրա համառ նկրտումները:

5. Հայտնի պատմությունից հետո, երբ Պետափրեսի կինը զրպարտում է Հովսեփին, նրան բանտ են գցում, ինչպես այդ մասին պատմում է Ծննդոց գիրքը (39. 17): Բազմաթիվ հնագիտական հետազոտություններ խոսում են Հովսեփի՝ Եգիպտոսում ապրելու ժամանակներում արդեն գոյություն ունեցած մեծ բանտերի մասին: Զնդաններից ո՞ր մեկում էր Հովսեփը: Գերմանացի եգիպտագետ Էբերսը Հովսեփի ազատազրկման վայրը նույնացնում է Մեմփիս քաղաքի բերդի հետ, որի անունը «Սպիտակ պատ» էր: Աստվածաշնչի եբրայական բնագրում Հովսեփի բանտը sohar բառով է արտահայտված, որը բառացի թարգմանվում է«կլոր տուն»: Հավանաբար խոսքն այստեղ կլոր աշտարակի մասին է, որն օգտագործվում էր իբրև պետական բանտ: Թեբեի (Ստորին Եգիպտոս) բանտախցերը, որտեղ եգիպտացի փարավոն Թութմոս III–ի (Ք. ա. 1501–1447 թթ. կամ 1482–1428 թթ.) հրամանով

1 **Free J. P.,** Op. cit. Thompson J. A. Op. sit.
2 **Free J. P.,** Op. cit. P. 74-75.

կալանքի տակ էին առնվել ասորի գերիները, կոչվում էին suhan: Նայտը գտնում է, որ սեմական sohar–ը համապատասխանում է եգիպտական suhan բառին: Ա. Յահուդան մատնանշում է այս բառը, որը նման է sohar–ին և հաճախ է հանդիպում արձանագրություններում: Այս բառով էր արտահայտվում ամրոց–բանտը, որը գտնվում էր Պաղեստինի սահմանից ոչ հեռու: Այստեղ պահվում էին կարևոր հանցագործներ, ինչպես և բարձրաստիճան անձինք՝ զանազան չարաշահումների, կաշառակերության և այլնի համար: Յահուդան ենթադրում է, որ Հովսեփն ամենայն հավանականությամբ հենց այս ամրոցում էր բանտարկված[1]:

6. Կասկածի տեղիք չի տալիս նաև գլխավոր տակառապետի և գլխավոր մատակարարի պաշտոնների գոյության փաստը, որոնց մասին Սուրբ Գիրքն ասում է, որ նրանք Հովսեփի մոտ նետվեցին (Ծնն. 40. 1–3): Հին եգիպտական վավերագրերը հարուստ փաստացի նյութեր են մեզ ընձեռում, որոնք վկայում են Եգիպտոսի հասարակա–տնտեսական կյանքում տնտեսվարների պաշտոնների (տան տնտեսության վերակացուի), վերահսկիչների, հացթուխների առկայության մասին: Հացի պատրաստման բոլոր փուլերը՝ խմորի հունցումից սկսյալ և այլն, արտացոլված են եգիպտական դամբարանների որմնանկարների սյուժեում: Այս որմնանկարների մեջ պատկերված են վերակացուներ և ուրիշ ծառաներ, ովքեր գլխի վրա տանում են հացով և այլ խմորեղենով լի զամբյուղներ:

Սա հացը տանելու հենց այն եղանակն է, որը նկարագրեց Հովսեփին գլխավոր մատակարարը (Ծնն. 40. 16–17):

7. Որոշ հետազոտողներ կասկածի տակ են առնում փարավոնի հրամանով Հովսեփին այսքան բարձր պաշտոնի նշանակելու սուրբգրային փաստը: Սակայն այս հարցն էլ է հնագիտությամբ լուսաբանված:

Նախևառաջ անհրաժեշտ է նշել, որ ըստ Սուրբ Գրքի՝ Հովսեփին շնորհված բարձր տիտղոսները բացառապես եգիպտական էին: Ուշագրավ է հատկապես փարավոնի հետևյալ արտա-

1 **Yahuda A. S.**, The Language of the Pentateuch in Its Relation to Egyptian. Մեջբերումս ըստ **Free J. P.,** Op. cit. P. 75.

հայտությունը. «Դու՛ եղիր իմ տան վերակացուն, և քո հրամանին թող ենթարկվի՛ իմ ամբողջ ժողովուրդը» (Ծննդ. 45. 8): Հովսեփը դարձավ «փարավոնի գործերի վերակացուն, նրա ողջ տան տերը և համայն եգիպտացիների երկրի իշխանը» (Ծննդ. 45. 8): Հովսեփը զբաղեցնում էր Հին Եգիպտոսի վարչապետին հավասար մի պաշտոն, թեև իրականում նրա պաշտոնը ավելի բարձր էր՝ նա պետական ստորակարգության մեջ փարավոնից հետո երկրորդն էր[1]: Իմիջիայլոց, Լիվերպուլի համալսարանի եգիպտագիտության պրոֆեսոր Տ. Էրիկ Փիտը և Գ. Ա. Բարթոնը հաստատում են այդ-ժամ Եգիպտոսում տարածված այնպիսի անունների պատմական հավաստիությունը, ինչպիսիք են, օրինակ՝ Ասանեթը՝ Հովսեփի կնոջ անունը և Պետափրեսը՝ նրա կնոջ հոր անունը (41. 45)[2]:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե քանանացի ստրուկը, ինչպիսին Հովսեփն էր, ինչպե՞ս կարող էր այդքան բարձր պաշտոնի արժանանալ: Անկասկած, Աստված հովանավորում էր Հովսեփին. հնագիտությունն իր հերթին դա անհնարին չի համարում: Ըստ Եգիպտոսում պեղված նյութերի՝ օտարերկրացիները, այդ թվում նաև քանանացիները, Հին Եգիպտոսի բովանդակ պատմության ընթացքում բարձր պաշտոններ են ստանձնել: Ա. Էրմանի կարծիքով. «Պալատական պաշտոններում հաճախ էին օտարերկրացիներ պատահում, ովքեր հնարավոր է, որ ստրուկներ լինեին»: Այդպիսի քանանացիներից մեկը «Նորին մեծության գլխավոր մունետիկն» էր, ով արքունիքում կնքված էր «Ռե տաճարի Ռամզես» անվամբ[3]: Այս վկայությունը համահունչ է Ծննդոց գրքում պատմվածին. այն է՝ փարավոնը Հովսեփին եգիպտական Փսոմփթոմբանե անունը տվեց (41. 45), ինչը նշանակում է «ժողովրդին կերակրող», «ժողովրդի փրկիչ» կամ «կյանքի հիմնադիր» կամ «գաղտնագիտություն ունեցող և գաղտնիք բացահայտող»: Դուդու անունով մեկ ուրիշ քանանացի փարավոնի արքունիքում բարձր դիրքի հասավ, ինչի մասին վկայում է մեզ հասած մի ուղերձ, որը նրան էր հղել ոմն ամորհացի: Իսկ ազգությամբ քանանացի Մերի–Ռան փարավոնի համհարզը դարձավ: Քանա-

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 45.
2 **Free J. P.,** Op. cit. P. 79.
3 **Erman A.,** Life in Ancient Egyrt. Տես **Free J. P.,** Op. cit. P. 76.

նացի Յանգիամին հաջողվեց Հովսեփի պես բարձր պաշտոնի հասնել: Նա փարավոնի լիազորն էր Հին Եգիպտոսի շտեմարանը հանդիսացող եգիպտական գավառներից մեկում: Բացի այդ, հնագետ Օլբրայթը վկայություններ է գտել այն մասին, որ Հովսեփը



Եգիպտական փուռ
(ըստ հին որմնանկարի):

փարավոնի կողմից վարչապետ նշանակված միակ սեմիտը չէր. ոմն սեմիտ՝ շատ հին եբրայական Խուր անունով, Ք. ա. XVII դ. զբաղեցնում էր Հովսեփի պաշտոնը: Այսպիսով հնագիտությունը մեզ մի շարք ապացույցներ է ընձեռում, որոնք հաստատում են, որ Հովսեփի՝ այդքան բարձր և պատասխանատու պաշտոն ստանձնելը միանգամայն հնարավոր բան էր:

8. Սուրբ Գրքի պատմական հավաստիության օգտին խոսող մեկ այլ փաստարկ կա՝ Հովսեփին փարավոնից հետո երկրորդ այր կարգելու հադիսավոր արարողակարգի մանրամասն նկարագրությունը: Ահա թե ինչ է այդ մասին գրում Մովսես մարգարեն. «Եվ փարավոնը մատից հանելով իր մատանին, դրեց Հովսեփի մատին, նրան հագցրեց բեհեզյա պատմուճան, ոսկե մանյակ անցկացրեց նրա պարանոցին, նրան նստեցրեց իր երկրորդ կառքը: Մունետիկը Հովսեփի առաջից գնալով՝ այդ մասին ազդարարեց, և նա վերակացու կարգվեց եգիպտացիների երկրի վրա» (Ծնն. 41. 42–43): Սույն արարողակարգը արտացոլված է Հին Եգիպտոսի մանրանկարչության մեջ ու բարձրաքանդակներում: Մեզ հասած մի հրաշակերտ սալիկի վրա պատկերված է, թե ինչպես է փարավոնը այդ նույն եղանակով հարգանքի տուրք մատուցում ոմն այրի. այն թվագրվում է Սեթի I փարավոնի (Ք. ա. 1308–1209 թթ.) գահակալման շրջանով: Ավելին, Հովսեփի երկրորդ կառքի ընդունումը, որը ցույց է տալիս, որ նա իշխանական աստիճանակարգում զբաղեցրել է փարավոնից հետո առավել պատվավոր երկրորդ տեղը, հանգամանք է, որը, ըստ հնագետ-

ների, մատնանշում է, թե դա տեղի է ունեցել հիքսոսների իշխանության օրոք: Չէ՞ որ հիքսոսներով էր պայմանավորված Եգիպտոսում արագընթաց մարտակառքերի երևան գալը, այնպես որ նախքան հիքսոսների արշավանքը նման սովորություն պալատական արարողակարգում գոյություն չուներ[1]:

9. Հին Կտակարանում ասվում է, որ Հովսեփին նախքան փարավոնի առաջ կանգնեցնելը սափրեցին (41. 14): Այս մանրուքը եգիպտական աղբյուրներին համահունչ պատմական վկայություն է, որը հատուկ ուշադրության է արժանի, քանզի հին հրեաները մորուք էին պահում, իսկ եգիպտացիք, ընդհակառակը, սափրվում:

10. Հին Եգիպտոսում սովի տարիների մասին բազում գրավոր վկայություններ են պահպանվել: Հատկապես ուշագրավ է Ասուանի մոտ գտնվող Էլեփանտին կղզու արձանագրությունը, որտեղ նշվում է յոթնամյա երաշտի մասին, քանզի Նեղոսն այդ ընթացքում ոչ մի անգամ չէր վարարել: Դա տեղի է ունեցել Ք. ա. մոտ 2700 թ.՝ նշանավոր Ջոսեր փարավոնի օրոք: Ջոսերը Նեղոսյան շեմեր կոչվող շրջանի կառավարչի հետ մի ուղերձ է հղում Էլեփանտին, որտեղ ասվում է. «Ես շատ անհանգիստ եմ արքունիքում մնացածների համար: Սիրտս վշտից ճմլվում է, քանզի ահա յոթ տարի է, ինչ Նեղոսը ափերից չի ելնում: Մրգեղենը շատ քիչ է, բանջարեղեն չկա, ամեն տեսակի սննդամթերքի կարիք կա: Հարևանը գողանում է հարևանից, երեխաները լացում են, պատանիները անգործության են մատնված, ծերերի սրտերը տրտմած են, իսկ մարմինները՝ թուլացած, նրանք նստած են հողի վրա: Պալատականները շփոթված են: Ամբարները բացված են, սակայն այն, ինչ մնացել է, քիչ է»[2]: Եգիպտոսում պեղումներից բացվեցին շտեմարանների մնացորդներ՝ նման վերը նշվածներին: Այսպիսով հացահատիկ ամբարելու հրամանների մասին Աստվածաշնչի վկայությունները (Ծննդ. 41. 33–36 և 47–49) լիովին համահունչ են նմանօրինակ իրավիճակներում Եգիպտոսում ձեռնարկված միջոցառումներին:

---

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 45. **Keller W.**, ‘Η Βίβλος …Σ. 128-129.
2 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 130.

Նույնպիսի վկայություններ է բովանդակում Ք. ա. մոտ 2400 թ. թվագրվող հարթաքանդակը, որի վրա պատկերված է սովից նվաղած բեդուին՝ դուրս ցցված կողերով: Հովսեփից դույզն–ինչ ուշ ապրած Բեբի բարձրաստիճան պաշտոնյայի թողած մեկ այլ բնորոշ արձանագրությունում ասվում է. «Սովի երկարատև շրջանում ես ամեն տարի իմ քաղաքին ցորեն էի մատակարարում»: Հովսեփի աստիճանավորները, անկասկած, նույն բանն էին անում՝ Եգիպտոսի բոլոր քաղաքների բնակչությանը կերակրելու համար[1]:

Հիքսոսների մարտակառք:

11. Եգիպտոսում Հովսեփի և Հակոբի հաստատվելու առնչությամբ Սուրբ Գրքի ստույգ և պատմական հավաստիության մեկ այլ ապացույց է ծառայում այն փաստը, որ Եգիպտոսի սահմաններից դուրս ապրող մարդիկ սովի տարիներին գալիս էին Նեղոսի բերրի երկիրը՝ ցորեն ձեռք բերելու նպատակով: Ջորօրինակ՝ հնագիտական պեղումներից հայտնաբերված մի պապիրուս բովանդակում է Սեթի II (Ք. ա. մոտ 1210) փարավոնի գահակալության օրոք սահմանային ուղեկալի մի սպայի զեկուցագիր Բեդի անունով ոմն եդոմացու, այսինքն՝ Եդոմ երկրի բնակչի մասին, ում սովի ժամանակ սահմանն անցնելու թույլտվություն էր տրվել: Զեկույցում ասվում է. «Մենք թույլատրեցինք քոչվոր եդոմացիներին Մենեփթայի (...) ուղեկալ–պահակակետով անցնել Փեկա՝ մինչև Պիփոմ՝ Մենեփթայի ճահիճները..., որպեսզի նրանք և իրենց հոտերը գտնվեն փարավոնի տիրույթներում...»[2]: Եգիպտագետների կարծիքով նման պատահարներ առաջ էլ էին պատահում, հետևաբար, այն, ինչ ասվում է Ծննդոցի 42–44 գլուխներում Հակոբի և Հովսեփի առնչությամբ, դարերի հոլովույթում բավական սովորական երևույթ էր[3]:

1 **Short A. R.,** Op. cit. P. 26-27.
2 «Papyrus Anastasi VI». Մեջբերված է **J. B. Pritchard**., Ancient Near Eastern Texts. գրքից, 1955, Princeton Univ. Press, **Princeton,** P. 259.
3 **Thompson J. A.**, Op. cit. P. 46-47.

12. Սուրբ Գրքում հաճախ է հիշատակվում եգիպտացի մոգերի(կախարդների) և նրանց կախարդությունների (Ծննդ. 41. 8, Ելք 8. 7,9,11 և այլն) մասին: Եվ իսկապես էլ հնագիտական գտածոները հաստատեցին, որ Հին Եգիպտոսում մոգությունը լայնորեն տարածված էր:

13. Եվս մեկ փաստ՝ մահացած ազնվատոհմիկների դիերի զմռսման հին եգիպտական պրակտիկան: Ծննդոցում պատմվում է սպասավորների ձեռամբ Հակոբի, ապա և Հովսեփի զմռսման մասին (50. 2–3, 26): Հիմնվելով Եգիպտոս այցելած հին հունական պատմիչ Հերոդոտոսի վկայության վրա՝ կարող ենք հաստատել, որ Ծննդոցում նկարագրված զմռսման սովորույթը զուտ եգիպտական է: Քանանում, Միջագետքում և Հակոբի ազգակիցների միջավայրում այս սովորույթը բացարձակապես անհայտ էր:

14. Այլ փաստարկ՝ պետության կողմից ստրկական ուժի օգտագործումը ծանր հարկադիր աշխատանքներում, զորօրինակ՝ աղյուսաշինության մեջ, ինչպես և ամենօրյա նեղությունները, որոնց մասին խոսվում է Ելք գրքում (1. 14): Այս ամենը Եգիպտոսի առօրյա կյանքի իրական հատկանիշներն են: Բացի այդ, հռչակավոր տաս պատիժները օժտված են եգիպտական ուրույն գծերով[1] (այս մասին առավել հանգամանալից տե՛ս ստորև):

15. Այն հանգամանքը, որ Հովսեփին գնած իսմայելացի վաճառականները Եգիպտոս վաճառելու էին տանում խունկ, ռետին և խեժ (Ծննդ. 37. 25), Սուրբ Գրքի պատմական հավաստիության մեկ այլ կարևոր վկայությունն է, քանզի Հին Եգիպտոսում նման ապրանքների պահանջարկը մեծ էր: Դրանք գործածվում էին դիցապաշտական արարողություններում, «երբ անուշահոտ խոտերը որպես խունկ ծխեցնում էին մեհյաններում», կիրառվում էին նաև հիվանդներին կազդուրելու և մեռյալների զմռսման համար[2]:

16. Մեկ այլ վկայություն է փարավոնի ծննդյան օրվա տոնակատարությունը (Ծննդ. 40. 20) և այդ հանդիսությանը բազմաթիվ տակառապետերի և մատակարարների ներկայությունը, որոնցից նշանակվում էր գլխավոր տակառապետ և գլխավոր մատակարար (40. 1,2):

1 **Short A. R.**, Op. cit. P. 27.
2 **Keller W.**, Ἡ Βίβλος …Σ. 127-128.

17. Վերջապես նշենք այն հանգամանքը, որ Սուրբ Գրքի տվյալ գլուխներում հիշատակվող և այլ գրքերում բացակայող բառերն ու անունները, ինչպիսիք են՝ Պետափրես և Ասանեթ, վկայում են, որ այդ անուններն ու պատմական անցքերը գրի առնողն ապրել է Եգիպտոսում և քաջատեղյակ եղել դրանց: Եզրասի ժամանակներում Բաբելոնում կամ Հուդայում ապրող ոչ մի դպիր ի զորու չէր լինի այդքան ճշգրիտ և հանգամանալից նկարագրել այս ամենը: Այսպիսի սովորույթներ և պատմական փաստեր բնորոշ են միայն Եգիպտոսին, այն էլ այն ժամանակ, երբ այդտեղ իսրայելացիներ էին ապրում: Իսկ այս պատմական անցքերը Ծննդոց և Ելք գրքերում մատենագրեց աստվածատես Մովսեսը:

Հովսեփի և իսրայելացիների՝ Եգիպտոսում բնակվելու մասին հինկտակարանյան վկայությունների պատմական հավաստիությունը հաստատող այս փաստարկներն ամփոփելով՝ մեջբերենք հնագետ Վիլյամ Օլբրայթի խոսքը. «Եգիպտոսում Իսրայելի բնակվելու փաստը կենսականորեն կարևոր նշանակություն ունի Իսրայելի հին պատմական ավանդության համար և չի կարող հերքվել, քանի որ դրանով այն անբացատրելի բացեր կունենա: Ընդհակառակը, Մովսեսի և Ահարոնի ժառանգների եգիպտական անուններից դատելով՝ տեսնում ենք, որ իսրայելական ժողովրդի մի մասը բավական երկար է ապրել Եգիպտոսում: Բացի այդ, հնագիտությամբ ու աշխարհագրությամբ հաստատված բազմաթիվ մանրամասներ կան, որոնք չէին բացատրվի, եթե Աստվածաշնչի այդ տեղերը ավելի ուշ շրջանում գրված լինեին: Հատկապես տպավորիչ է Եգիպտոսում Հովսեփի, ապա և Իսրայելի հաստատվելու ակնհայտ կապը հիքսոսների ներխուժման հետ: Ամենայն հավանականությամբ «Մի ուրիշ թագավոր, որը Հովսեփին չէր ճանաչում» (Ելք 1. 8) և նեղում էր իսրայելացիներին, ատելի ասիացիներին (այսինքն՝ հիքսոսներին) Եգիպտոսից վռնդելուց հետո իշխանության եկած Նոր թագավորության դարաշրջանի փարավոններից մեկն էր»[1]:

1 **Albright W. F.,** From the Stone Age to Christianity. Baltimore, 1946. P. 184.

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՆԵՐԸ ԳԵՍԵՄ ԵՐԿՐՈՒՄ

Ծննդոց գրքում ասվում է, որ Հովսեփի հայրն ու եղբայրները (ընդամենը 75 հոգի) Եգիպտոս ժամանելով՝ բնակություն հաստատեցին Գեսեմում: Գեսեմ անունը, որ Սուրբ Գրքից զատ որևիցե այլ տեղում չի հանդիպում, ունի նաև մեկ այլ տարբերակ՝ Գոսոմ՝ իբրև քաղաքի կամ երկրի անվանում (Հեսու 15. 51; 10. 41) [1]: Ենթադրվում է, որ հնդիրանցիների մոտ այս բառը «արոտավայրեր» է նշանակել (նման բառեր հանդիպում են ժամանակակից Հնդկաստանի լեզուներում), իսկ հիքսոսները, նրանցից փոխառելով, ներմուծեցին այս բառը Եգիպտոսը գրավելուց հետո: Համենայն դեպս ակնհայտ է, որ սուրբգրային Գեսեմ երկիրն իր արգավանդ արոտավայրերով գտնվելիս է եղել արդի Վադի–Թումիլաթի շրջանում՝ Նեղոսի դելտայի արևելյան մասում: Այս տեղանքը 30–40 մղոն երկայնքով նեղ հովիտ է՝ ընկած Նեղոսի գետահունի և Թիմսահ լճի («Կոկորդիլոսների լճի») միջև: Սա այդ տարածքի ամենաարգավանդ շրջաններից մեկն է, որը Սուրբ Գրքում հիրավի բարեբեր է կոչված (Ծնն. 47. 1, 6, 11)[1]:

Հաջորդ տարիներին սեմիտները եգիպտացիների կողմից նվաստացման և ճնշման ենթարկվեցին, քանի որ ակամայից հրեաները նրանց մոտ նույնպես սեմական ցեղին պատկանող հիքսոսներից երբեմնի կրած նեղությունների դառը հուշեր էին առաջացնում: Բայց հատկապես հարկ է մատնանշել, որ եգիպտացիները «զզվում էին» հովիվներից (Ծնն. 43. 32; 46. 34), այսինքն՝ այդ մարդիկ ատելի և խորշելի էին, քանի որ, ըստ երևույթին, Եգիպտոսում ոչխարների հոտերը միշտ հովվում էին հասարակության ամենացածր խավի մարդիկ, թերևս օտարերկրացիները (ոչ եգիպտացիները): Ինչպես արդեն նշել ենք, հիքսոսների տիրապետության օրոք Եգիպտոս հորդեցին մեծ թվով սեմիտներ (նախևառաջ պաղեստինյան քանանացիներ և ամորհացիներ), ովքեր խոսում էին նույն լեզվով, ինչ Հովսեփն ու իր ընտանիքի

1 **Cornfeld G.,** Freedman D. N. Op. cit. P. 34-35

անդամները: Այսպես օրինակ՝ դատելով եգիպտական սրբազան կոյաբզեզների պատկերների մակագրություններից՝ հիքսոսյան արքայազուններից մեկի անունը Հակոբ–խուր էր, վարչապետի անունը՝ Խուր: Ըստ Մ. Բարրոուզի՝ «բոլոր մերօրյա պատմաբանները համակարծիք են, որ հիքսոսների տիրապետության օրոք հանգամանքները բարենպաստ էին Հովսեփին բարձր պաշտոնի նշանակելու, ինչպես և Հակոբի՝ Եգիպտոսում բնակվելու համար»[1]:

Երբ եգիպտացիները վռնդեցին հիքսոս–տիրակալներին և իրենց ձեռքն առան երկրի կառավարումը, սեմիտները երկու պատճառով խիստ հսկողության տակ առնվեցին. ա) սեմիտ–հիքսոսները ատելի բռնակալներ էին իրենց երկրում, բ) մտավախությունից, որ սեմիտները կրկին կարող են զորանալ և իշխանությանը տիրանալ: Այն, ինչ պատահեց բոլոր սեմիտների հետ, պատահեց նաև Հակոբի սերունդների հետ: Այդ պատճառով Ելք գրքի առաջին գլխում կարդում ենք այն մասին, թե ինչպես եգիպտացիները սկսեցին չարչարել իսրայելացիներին:

Անհնար է ճշգրտությամբ որոշել Ելքի առաջին գլխում շարադրված անցքերը բովանդակող պատմական ժամանակաշրջանի տևողությունը: Ամենայն հավանականությամբ այս ժամանակահատվածը շուրջ 400 տարի էր, սակայն Սուրբ Գիրքը այդ մասին ոչինչ չի հայտնում: Այս ժամանակահատվածում երկրի բնակչության քաղաքական և էթնիկական կառուցվածքը զգալի փոփոխությունների ենթարկվեց: Հովսեփի՝ Եգիպտոսում բարձր պաշտոնի նշանակվելու պատմությունն ընկնում է Ք. ա. մոտ 1700 թ.: Այն ժամանակ Հին Եգիպտոսի արքունի գահանիստը տեղակայված էր Գեսեմից ոչ հեռու, ինչը մեզ հուշում են Ծննդոցի 46 և 47 գլուխները, որոնց համաձայն փարավոնի պալատից մինչև Գեսեմ տանող ճանապարհը անցնում էին աննշան ժամանակում: Նախորդ գլխում արդեն խոսվել է այն մասին, որ հիքսոսների ոստանը Նեղոսի դելտայում տեղակայված Ավարիսն էր, այնինչ

1 **Burrows M**., What Mean These Stones? N. Haven: American Schools of Oriental Research,1941. P. 71.

հիքսոսների տիրապետությունից առաջ և հետո Հին Եգիպտոսի մայրաքաղաքը երկրի հարավում գտնվող Թեբե քաղաքն էր:

Սակայն նախքան այս գլուխը եզրափակելը, նշենք երկու հանգամանք, որոնք կարող են բացատրել վկայությունների պակասը իսրայելացիների՝ Եգիպտոսում հաստատվելու առնչությամբ. ա) եգիպտացիք ատում էին իսրայելացիներին և հիքսոսներին վտարելուց հետո ոչնչացրին այն ամենը, ինչ առնչվում էր նրանց հետ, բ) իսրայելացիներն ապրում էին հեռավոր Գեսեմում՝ երբեք, սակայն, չկորցնելով իրենց ինքնությունը և անաղարտ պահելով իրենց կրոնն ու հավատն իրենց հայրերի Աստծո նկատմամբ:

ՓԻԴՈՆ ԵՎ ՌԱՄԵՍԵ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Ելք գրքի առաջին գլխում ամփոփ կերպով շարադրվում է իսրայելացիների՝ Եգիպտոս տեղափոխվելու մասին և նշվում, որ որոշ ժամանակ անց այդ երկրում նրանք խիստ բազմացան (Ելք 1. 1–7): Ըստ 8–րդ համարի՝ «Գահ բարձրացավ մի նոր թագավոր, որը Հովսեփին չէր ճանաչում», և որը Իսրայելից ժողովրդի աճը կանգնեցնելու նպատակով հրամայեց մահվան մատնել նորածին արուներին (Ելք 1. 15–16):

Սուրբ Գիրքը չի տալիս այդ փարավոնի անունը, սակայն այդ պատմական շրջանը հնագիտության տեսակետից բավական մանրամասնորեն լուսաբանված է:

Պատմական և հնագիտական վկայություններից հայտնի է, որ Ք. ա. 1580–ականներին բնիկ բնակչությունը գրեթե 150–ամյա (1730/1720–ից մինչև 1580/1570 թթ.) անողոք հարստահարությունից հետո դուրս վռնդեց հիքսոսներին[1]: Հանրահայտ է նաև այն, որ Ելք գրքում հիշատակված փարավոնը, ով Հովսեփի մասին ոչինչ չգիտեր, տեղաբնիկ էր և հիքսոս տիրակալներին փոխարի-

1 Հիքսոսների ներխուժումը Եգիպտոս սկսվեց Ք. ա. 1900 թվից, իսկ 1730 թ. նրանք արդեն այդ երկրի լիիրավ տերերն էին, ինչպես իր հոդվածում գրում է Ռ. Էնգբերգը (տես **Engberg R. M.,** The Hyksos Reconcidered//Studies in Ancient Oriental Civilization. Chicago:The University of Chicago Press,1939. P. 25-34).

նած 18–րդ հարստության առաջին փարավոնն էր: Ըստ Ֆրիի՝ այդ փարավոնն Ամհոսիս I–ն[1] (կամ Ամոսիս, կամ էլ Ամասիս) էր, ով գահակալել է Ք. ա. 1580–ից մինչև 1557 թ.[2]: Վ Կելլերը գտնում է, որ «նոր թագավորը, ով Հովսեփի մասին ոչինչ չգիտեր, հավանաբար, Ռամզես II–ն (Ք. ա. 1290–1224 թթ. կամ 1324–1258 թթ.) էր, կամ ծայրահեղ դեպքում նրա նախորդներից մեկը»[3]: Ավելին, Վ. Կելլերն ասում է, որ փարավոնի «անտեղյակությունը» Հովսեփից «լիովին բացատրելի է, քանզի Հովսեփը ապրել է նրանից մի քանի դար առաջ՝ հիքսոսների դարաշրջանում, իսկ եգիպտացիները բնավ չէին կամենում հիշել ատելի տիրակալների և մանավանդ մեծատոհմիկների ու իշխանների անունները: Ուստի, ով էլ որ լիներ նոր հարստության փարավոնը՝ Ռամզես II–ը (ում հույները Սեզոստրիս էին անվանում) [1], կամ նրա նախորդներից մեկ ուրիշը, միևնույն է, չէր ճանաչում Հովսեփին, ինչպես և «ամեն մի բարեխիղճ եգիպտացի»[4]:

Եգիպտացի փարավոնը, ում մասին պատմվում է Ելք գրքում, Ամասիս I–ը լիներ, թե Ռամզես II–ը, ամեն դեպքում սերում էր այն հարստությունից, որի օրոք իսրայելացիները չարչարվում էին հարկադիր աշխատանքներում և նախևառաջ «Փիդոն, Ռամեսե և Ովն» բերդաքաղաքների կառուցման ժամանակ (Ելք 1. 11, 14 ըստ հունական թարգմանության): 1883 թ. շվեյցարացի հնագետ Նավիլլը Նեղոսի դելտայում գտնվող Թելլ–ալ–Մասկութում կատարած պեղումների ժամանակ «Փիտում» (կամ Փիր–Ատում) բառը հայտնաբերեց, որը թարգմանաբար նշանակում է «Թումա չաստծու տուն»: Նավիլլն այն եզրակացության եկավ, որ Թելլ–ալ–Մասկութը իսրայելացիների ձեռամբ կառուցված հնամենի Փիդոն քաղաքն է: Հետազոտողներից ոմանք կասկածի տակ առան Նավիլլի եզրակացությունը, սակայն ամերիկացի հնագետ Վ. Օլբրայթը պաշտպանեց իր գործընկերոջ կարծիքը՝ նշելով, որ

1 **Free J. P.** Op. cit. P. 84.
2 Ժամանակագրությունն ըստ **Breasted J. H.** A History of Egypt. N. Y.: Scribner's -ի, 1912. P. 599.
3 **Keller W**. 'Η Βίβλος …Σ. 149-150.
4 **Keller W.** 'Η Βίβλος …Σ.

Ռամզես II փարավոնը Քադեշ քաղաքի մոտ խեթերի դեմ ճակատամարտում (Ք. ա. 2-րդ հազարամյակի հին եգիպտական բարձրաքանդակի մի հատված):

մյուսներն էլ են նրա հետ համաձայն[1]: Հետագայում նա Փիդոնը նույնացրեց Վադի–Թումիլաթում գտնվող Թելլ–ալ–Ռետաբայի հետ (Թելլ–ալ–Մասկութից 8,5 մղոն դեպի արևմուտք): Օլբրայթն իր հերթին Թելլ–ալ–Մասկութը նույնացրեց հին Սոկքոթի (ներկայիս Թելլ–Ակսաս) հետ, որը նույնպես կապված էր Իսրայելի՝ Եգիպտոսում բնակվելու հետ (Ելք 12. 37; 13. 20): Քանի որ այս քաղաքները շատ մոտ են իրար, իսկ Ելքում ասվում է, որ այս երկու քաղաքներն էլ առնչվում են Իսրայելի՝ Եգիպտոսում հաստատվելու հետ, ապա Թելլ–ալ–Մասկութում բացված աղյուսաբանների մնացորդները կարող են հարաբերակցվել Ելք գրքի Ա գլխի վկայություններին:

Մյուս քաղաքը՝ Ռամեսեն, սովորաբար նույնացվում է հիքսոսների մայրաքաղաք Ավարիսի հետ, որը հետագայում Թանիս վերանվանվեց: 1919–1930 թթ. Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսոր Պիեռ Մոնթենը պեղեց Թանիս քաղաքի տեղավայրը: Մոնթեն վստահ էր, որ Ռամեսեն (կամ Փի–Ռամսին, այսինքն՝ Ռամսիի Տունը), որը երկու հարյուր տարի (Ք. ա. մոտ 1300 թվից մինչև 1100 թ.) այդ նույն անունն էր կրում, գտնվում էր Թանիսի տեղում: Թանիսը Թելլ–ալ–Մասկութից և Թելլ–ալ–Ռետաբայից մի քիչ հյուսիս էր գտնվում[2]: Չափազանց հատկանշական է, որ

1 **Albright W. F.** Recent Discoveries in Bible Lands// Young's Analytical Concordance to the Bible. N. Y.:Funk and Wagnalls Co., 20th ed., 1963. P. 6.

2 **Thompson J. A.** Op. cit. P. 57-58; FreeJ. P. Op. cit. P. 85-86.

հնագետները այս երկու քաղաքները՝ Փիդոնն ու Ռամեսեն պեղելիս ամբարների ու պահեստների մնացորդներ հայտնաբերեցին, ինչը մատնացույց է անում Ռամզես II–ի գահակալության շրջանը, ինչպես և Ռամզես II–ի դարաշրջանով թվագրվող մի արձանագրություն, որում ասվում է «P. r.»–ների մասին, ովքեր քարեր էին կրում բերդաքաղաք Փի–Ռամսի–Մերի–Ամոնի (այսինքն՝ Ռամեսեյի) համար: «P. r.» գաղափարագիրը հին եգիպտական մակագրություններում սեմիտներ է նշանակել, բայց չէ՞ որ իսրայելացիները սեմիտներ էին[1]: Գեսեմ երկիրն իր բարեբեր արոտավայրերով սկիզբ էր առնում Ռամեսեյի հարավային մասից մեկ կիլոմետրից էլ պակաս հեռավորությունից և հասնում մինչև Փիդոն: Այսպիսով եգիպտացիների համար առանձնակի դժվար չէր իսրայելացիներին ստիպել՝ թողնելու իրենց հոտերը և հարկադրաբար ներգրավելու նրանց նոր փարավոնի՝ հսկայածավալ շինարարության մտադրության իրականացման մեջ:

Մանոթագրություններ

1. Սեզոստրիսը եգիպտական Սենուսերթ անվան ձևափոխությունն է. այս անունը կրել են 12-րդ հարստության մի քանի փարավոններ (Ք. ա. XX-XVIII դդ.): Լեգենդար Սեզոստրիսի իրական նախատիպը Եթովպիան նվաճող Սենուսերթ փարավոնն է, թեև եգիպտագետների կարծիքով նրան են վերագրել նաև Նոր թագավորության փարավոնների, այդ թվում՝ Ռամզես Բ-ի հատկանիշները:

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 150

«ՄՈՎՍԵՍ» ԱՆՈՒՆԸ: ԱՂՅՈՒՍԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ: ԵԼՔ ԳՐՔԻ ՓԱՐԱՎՈՆԸ

Մովսեսը Աստծո ժողովրդի առաջնորդն էր Եգիպտոսից ելնելու և անապատում դեգերելու ողջ ընթացքում: Իր անվան համար նա պարտական է փարավոնի դստերը, ով գետից հանեց նրան (Ելք 2. 5–10): Հետազոտողներից ոմանք Մովսեսի անունը ստուգաբանում են հին եգիպտական mes բայով, որը «հանել» իմաստն ունի, մյուսները՝mes բառով, որ հանդիպում է եգիպտական փարավոնների անուններում (Thot–mes, Ah–mes, Ra–mes կամ Rameses կամ Ռամզես և այլն) [1]: Այս բառի կապակցությամբ առաջարկված բազմաթիվ մեկնություններից բոլորի կողմից ընդունվեց հնագետ Օլբրայթի բացատրությունը, այն է՝ Մովսես անունը զուտ եգիպտական է և ծագում է հին եգիպտական Mase–ից[1]:

Իսրայելացիների կողմից հարդի օգտագործումը աղյուսաշինության մեջ Եգիպտոսում իսրայելացիների կրած նեղություններին վերաբերող փաստերից է, որը, սակայն, որոշ հետազոտողներ հակված են կասկածի տակ առնելու: Աստվածաշնչում ասվում է, որ փարավոնը իսրայելացիներին չարչարելու նպատակով հրամայեց դադարեցնել նրանց հարդ մատակարարելը, ինչպես որ առաջ էր, այլ պատվիրեց, որ հենց իրենք էլ զբաղվեն հարդի հայթայթումով: Այսպիսով իսրայելացիները ստիպված էին շրջել դաշտերով խոզան (որը մնում է հունձքից հետո) հավաքելու համար, որը նրանք օգտագործում էին աղյուսաշինության մեջ, ընդ որում արտադրության քանակը մնում էր նույնը (Ելք 5. 7–13): Ոմանք հակված են կասկածելու այս վկայության արժանահավատությանը՝ ենթադրելով, որ այդ դարաշրջանում հարդը խիստ հազվագյուտ էր օգտագործվում աղյուսաշինության մեջ, և որ

1 **Albright W. F.** From the Stone Age to Christianity. Baltimore: The Johns Hopkins Press,1940. P. 193.

Մովսեսն այրվող մորենու առաջ:
Սինա լեռան ս. Կատարինե վանքի խճանկար:

նեղոսյան տիղմը օժտված է բավական կպչունությամբ, ուստի և լրացուցիչ նյութեր օգտագործելու կարիքը չկար:

Հնագիտական գտածոները այս կնճռոտ հարցն էլ հարթեցին. հին եգիպտական մի բնագիր՝ Անաստասի պապիրուսը, բովանդակում է մի պաշտոնյայի բողոք, ում հանձնարարել էին Եգիպտոսի սահմանագլխում (երևի ժամանակակից Սուեզի ջրանցքի գոտում) մի շինություն կառուցել: Եգիպտացին գանգատվում է, որ չի կարող ձեռնամուխ լինել աշխատանքին, ինչպես ինքն է արտահայտվում. «Անհրաժեշտ նյութերի բացակայության պատճառով. չկան մարդիկ աղյուս պատրաստելու համար և ոչ էլ հարդ՝ այդ գավառում»[1]: Հին պապիրուսը ակներևորեն ապացուցում է,

1 **Erman A.** Life in Ancient Egypt. P. 204. Մեջբ. ըստ. **Free J. P.** cit. P. 91-92. Տես նաև **Kitchen K. A.** Op. cit. P. 156.

Անկեզ մորենու թուփը, որից, ըստ ավանդության, Աստված խոսեց Մովսեսի հետ: Ս. Կատարինե վանքը Սինա լեռան վրա:

որ շինարարության ղեկավարն ի վիճակի չէր իրականացնել աշխատանքները աղյուսի պատրաստման համար անհրաժեշտ նյութերի բացակայության պատճառով:

Հնագետ Ջ. Պ. Ֆրին պնդում է, որ հին եգիպտական մեհյանների աղյուսե որմածքի մեջ հարդի առկայությունը ապացուցված է: Նույնը փաստում է նաև Չիկագոյի համալսարանի եգիպտագետ Ջոն Ուիլսոնը: Բացի այդ, ամերիկացի քիմիկոս Էդվարդ Գ. Աչեսոնը փորձերի և դիտարկումների հիման վրա հանգեց այն եզրակացությանը, որ տիղմը ավելի լավ է մշակվում, եթե նրա մեջ որոշակի քանակությամբ օրգանական նյութեր ավելացվեն[1]: Ուստի Եգիպտոսում հայտնաբերված հարդ չպարունակող մի քանի աղյուսի նշանակությունը անհիմն կերպով չափազանցված է այն գիտնականների կողմից, ովքեր վիճարկում են Հին Կտակարանի պատմական հավաստիությունը: Ֆրիի կարծիքով դա խոսում է միայն այն մասին, թե օգտագործվել է այնքան աննշան քանակությամբ հարդ, որ անհնար է այն բացահայտել, կամ,– շարունակում է նա,– աղյուսները պատրաստելիս օգտագործում էին մի քանի ժամ հարդով թրմված ջուր կամ էլ իսկապես հարդ չի օգտագործվել, ինչը, սակայն, այդ աղյուսների արտադրողներից ժամանակի և չարչարանքի էլ ավելի մեծ վատնում է պահանջել: Այսպես թե այնպես Սուրբ Գիրքն այս դեպքում էլ է անընտգյուտ:

Փարավոններից ո՞վ էր հարստահարում իսրայելացիներին և ու՞մ օրոք Իսրայելը ելավ Եգիպտոսից: Հին Կտակարանում չեն հիշատակվում նրանց անունները: Այս, ինչպես և ելքի ժամանակի շուրջ բազմակարծություն կա: Եթե ընդունենք Երիքովի կործանման տարեթիվը, որ է Ք. ա. մոտ 1400 թ., այդ ժամանակ եգիպ-

1 **Free J. P.** Op. cit. P. 92. **Kitchen K. A.** Op. cit. P. 156.

տացի բռնակալ փարավոն պետք է համարել Թութմոս III–ին, ով 54 տարի իշխել է Հին Եգիպտոսում (Ք. ա. 1501–1447 թթ. կամ 1482–1428 թթ.) և ով Հին Եգիպտոսի պատմության մեծազոր տիրակալներից (հավանաբար նաև ամենազորեղ) մեկն էր՝ հետագայում կոչվելով «Հին Եգիպտոսի Նապոլեոն»: Եթե նույնիսկ իբրև փարավոն–կեղեքիչ ընդունենք Թութմոս III–ին, ապա ելքի ժամանակների փարավոն պիտի ճանաչենք Ամենհոտեպ II–ին (Ք. ա. 1447–1420 թթ. կամ 1428–1401 թթ.): Մյուս տեսակետի կողմնակիցները կարծում են, որ կեղեքիչ փարավոնը Ռամզես II–ն էր (Ք. ա. 1292–1225 թթ.), իսկ ելքի փարավոնը նրա գահաժառանգ Մերնեբթան (Մերնեպտան կամ Միրնբատիհը Ք. ա. 1225 –1234 –1225 թթ.[1]):

Ցավոք սրտի, անկախ հնագիտության բոլոր նվաճումներից, մեր գիտելիքներն այս հարցի շուրջ դեռևս անբավարար են: Ուստի մենք տակավին մոտավոր կերպով կարող ենք սահմանել ելքի ժամանակը, ինչպես և, ասենք, փարավոնների անունները, որոնցից մեկը կեղեքում էր իսրայելացիներին, իսկ մյուսը ելքի ժամանակ իշխում երկրում [2]:



Ռամզես II-ի տաճարի ճակատը Աբուսիմբլեյում (Ք. ա. մոտ 1250 թ.): 1964-66 թթ. Ասուանի ամբարտակը կառուցելիս այս տաճարը 1036 մեծ կտորների սղոցվեց և 68 մ վեր տեղափոխվեց:

1 **Free J. P.** Op. cit. P. 90.

1995 թ. վերջերին հաղորդագրություն հրապարակվեց այն մասին, որ Լուկսորից ոչ հեռու հայտնաբերվել են Ռամզես II–ի ընտանիքի անդամների մի քանի գերեզմաններ: Այս հայտնագործությունը, որը, ըստ հնագետների, XX դ. ամենից նշանակալի գյուտերից մեկն է, նորովի է լուսաբանում 92 տարեկան հասակում մահացած Ռամզես II մեծ փարավոնի 67–ամյա գահակալությունը (Ք. ա. 1279–1213/1212 թթ.): Այս դամբարանը բաղկացած է 67 սրահներից, որոնցում թաղված են Ռամզես II–ի 52 զավակներից 50–ը, և Եգիպտոսում հայտնաբերված դամբարաններից ամենամեծն է: Այս հնագիտական հուշարձանը եզակի է իր մեծությամբ և արժեքով: Թեպետև արքայական գերեզմանատուն չէ, սրահներից յուրաքանչյուրը զբաղեցնում է 80 քառակուսի մետր մակերես: Մինչ այդ բացված դամբարաններից միայն Ռամզես II–ի հոր՝ Սեթի I–ի սրահն էր նման չափերի: Հնագետները հույսեր են փայփայում, որ մեռելաքաղաքի գտածոների հնագիտական քննությունը կօգնի պատասխանելու այն հարցին, թե ով էր ելքի ժամանակների փարավոնը: Պիեռ Կորտեժյանին՝ Կահիրեում Ֆրանսիական ինստիտուտի արևելյան հնագիտության աշխատակիցը, մեծ զսպվածություն է հանդես բերում Ռամզես II–ի որդիների դամբարանի գաղտնիքների նկատմամբ: Նա հայտարարեց. «Մովսեսի մասին վկայություններ գտնելու հավանականություն գոյություն ունի, քանզի մինչև վերջ դեռևս ոչ մեկին չի հաջողվել բացահայտել այն ամենը, ինչ անթեղված է եգիպտական անապատում»: Ուրեմն, հարկ է դեռ սպասել[1]:

Մանոթագրություններ

1. Իրոք, ժամանակակից գիտության մեջ կարծիք կա, որ Մովսես անունը ածանցված է «որդի» իմաստ պարունակող եգիպտական արմատից, որը հանդիպում է (Թութմոս, Յահմոս և այլն) փարավոնների անուններում, բայց պետք չէ մոռանալ, որ այս անունը հստակ ստուգաբանություն ունի Աստվածաշնչում, այն է՝ «հանել» (Ելք 2. 10):

1 Տես. **Lemonick M. D.** Secrets of the Lost Tomb// Time. May 25,1995. P. 38-44. Տես նաև «Ὁ τάφος μὲ τοὺς 50 πρίγκιπες» հոդվածը. («Η ΚΑΘΗΜΕΡΙΝΗ» թերթը 4. 6. 1995 Σ. 33) և «Οἱ τάφοι τῶν υἱῶν Ραμσῆ Β΄· 67 δωμάτια!» հոդվածը («ΕΣΤΙΑ» թերթ, 24. 5. 1995).

2. Ինչ վերաբերում է փարավոնի անվանը, ում օրոք տեղի է ունեցել ելքը, ապա հին մատենագիրները տարբեր անուններ են նշել: Օրինակ, ըստ Տատիանոսի դա Ամազիսն (Յահմոսն) էր (տե՛ս նրա «*Ընդդէմ հելլենացւոց*» գլ. 38), ս. Թեոփիլոս Անտիոքացին գտնում էր, որ դա Թեթմոզիսն էր(«*Առ Աւտոլիկոս*» գիրք III, գլուխ 20): Երկուսն էլ վկայակոչում են եգիպտացի քուրմ-պատմիչների. Տիտիանոսը՝ Պտղոմեոսին, ս. Թեոփիլոսը՝ Մանեթոնին: Մանեթոնը ելքն առնչում էր հիքսոսների վտարման հետ: Պտղոմեոսը, ըստ Տատիանոսի վկայության, թեև այդ բանը չէր անում, սակայն անուղղակիորեն համաձայնվում էր Մանեթոնի հետ: Բանն այն է, որ հենց Յահմոսն է հիքսոսներին Եգիպտոսից քշել: Թեթմոզիսը, այսինքն՝ Թութմոս I-ը՝ այդ նույն 18-րդ հարստության երրորդ փարավոնը, նվաճեց Պաղեստինը: Եթե իսկապես ելքի փարավոնը հիքսոսներին վռնդած փարավոնն է, ապա դա այնուամենայնիվ Յահմոսն (Ամազիսն) է: Սույն կարծիքի օգտին է խոսում նաև նրա գահակալության ժամանակի համընկնումը Ելքի ավանդական տարեթվի հետ (Ք. ա. XVIդ. սկիզբ) և այն հանգամանքը, որ նրա մումիան գտնված չէ և գոյություն չի ունեցել նրա հոգեհանգստյան ծեսն ու դամբարանը (եգիպտացիներն ի պատիվ մահացած փարավոնների, ինչպես ի պատիվ չաստվածների, մեհյաններ էին կառուցում): Այս վերջին՝ եգիպտագետների համար զարմանալի փաստը դյուրին կբացատրվի, եթե նկատի ունենանք հին ավանդությունը, ըստ որի փարավոնն իր ռազմիկներով խեղդվեց ծովում (տե՛ս ս. Թեոփիլոսի «*Առ Աւտոլիկոս*» գիրքը, պրակ. III, գլուխ 21):

ՏԱՍԸ ՊԱՏԻԺՆԵՐԸ

Հին Կտակարանը նախքան Եգիպտոսից իսրայելացիների ելքը նկարագրում է երկու անցք. ա) փարավոնը հրաժարվում է իսրայելացիներին՝ ճշմարիտ Աստծուն պաշտամունք մատուցելու համար անապատ արձակել, բ) տաս պատիժները, որոնցով Աստված պատուհասում է եգիպտացիներին: Այժմ հնագիտական բացահայտումների լույսի ներքո դիտարկենք այս անցքերը:

1. Մովսեսն ու Ահարոնը փարավոնին խնդրեցին իրենց ժողովրդին անապատ արձակել, որ Աստծուն պաշտամունք մատուցվի: Բայց փարավոնը մերժեց այն պատճառաբանությամբ, որ չի ճանաչում իսրայելացիների Աստծուն, և որ նրանց խնդրանքն

ընդամենը աշխատանքից խուսափելու պատրվակ է (Ելք 5. 1–9): Այսօր հնագիտությունը բազում վկայություններ ունի այն մասին, որ Եգիպտոսում բոլոր աշխատողներին հանգստյան օրեր էին հասնում (և ոչ միայն կրոնական շարժառիթով): Թեբեի (Վերին Եգիպտոս) Արքաների հովտում և Դեյր–ալ–Մեդինա շրջանում գտնված խեցեղենի վրա մանրամասն թվարկված են հանգստյան օրերը: Դրանցից մեկի վրա (Ռամզես II–ի իշխանության 40–րդ տարում) արձանագրված է աշխատանքային օրերի լիակատար ցանկը և նշված հիսուն մարդու բացակայությունը: Մեկ ուրիշի վրա (Սեթի II–ի 6–րդ տարում) հիշատակվում են 8–ից 15 օր անգործության մատնված մի խումբ աշխատողներ: Այլ բնագրերում նշված են անձինք, ովքեր գնացել են «իրենց աստծուն զոհ մատուցելու», իսկ այլ աղբյուրներ հիշատակում են ինչ–որ տեղական տոնակատարության առիթով արքայական մեռելաքաղաքի աշխատողներին տրամադրված չորս տոնական օրերի մասին[1]:

2. Ըստ էության տաս եգիպտական պատիժները (Ելք 7–12 գլուխները) բարոյական նպատակ էին հետապնդում: Սրանց օգնությամբ Աստված կամենում էր ցույց տալ եգիպտական չաստվածությունների կատարյալ սնանկությունը, հարկադրել փարավոնին ճանաչել և ընդունել միակ և ճշմարիտ Աստծուն, Իսրայելը դարձնել նախօրինակը Քրիստոս Փրկչի, Ով կհայտնվի իբրև աշխարհի Ազատարար: Տաս պատիժները և հատկապես վերջինը (անդրանիկների մահը) հրաշք էր՝ աստվածային ամենազորության դրսևորում, և հենց այդպես էլ դրանք ներկայացված են Սուրբ Գրքում:

Սակայն հնագիտությունը բերում է մեզ այն համոզման, որ դրանք պարզապես Ելք գրքի հեղինակի կողմից հորինված երևակայություն և առասպելներ չեն: Այս անցքերում արտասովոր և անհնարին բան չկար: Այսինքն՝ Աստված, իբրև բնության Հաստիչ և Պահապան, Իր տնօրինության համար օգտագործեց միանգամայն բնական երևույթներ, ընդ որում՝ բնորոշ Եգիպտոսին: Գերմանացի գիտնական տիկ. Գրետա Խորտը իր հրաշալի հետա-

1 **Kitchen K. A.** Op. cit. P. 156-157.

զոտության[1] մեջ վճռականորեն պնդում է, որ տաս պատիժները Նեղոսի տպավորիչ վարարումով սկիզբ առած բնության հազվագյուտ և զգալի երևույթների հետևանքներն են: Սակայն մենք էլ ենք այդ բանի վրա առանձնակի ուշադրություն դարձնում. եթե նույնիսկ ինը պատիժները Աստծո կողմից օգտագործած բնական երևույթների հետևանքները հանդիսանային, պետք է նկատի ունենանք հետևյալը. ա) Մովսեսը՝ այս ամենը շարադրողը, անցքերի ականատեսն է, բ) յուրաքանչյուր պատիժ սկսվում էր, երբ Մովսեսը կամենար և դադարում նույնպես նրա ցանկությամբ, ով անշուշտ գործում էր Աստծո կամոք:

Խորտի կարծիքով տաս պատիժների մասին պատմողը դրանց ականատեսն ու վկան է, հետևաբար, տալիս է կատարվածի իրական պատկերը: Այսպիսով, Խորտը միտված է այն տեսակետին, ըստ որի տաս պատիժները Աստծո ամենազորության հրաշքներն էին, Ով Եգիպտոսի բնական երևույթներով էր սպառազինվել: Նեղոսի սաստիկ վարարումն ամենայն հավանականությամբ իր հետ Flaggellates անվամբ հայտնի ինչ–ինչ միկրոօրգանիզմներ բերեց, որոնք Նեղոսի ջրերը «արյան» վերածեցին, որն էլ ձկների սատկելու պատճառը դարձավ (Ելք 7. 21): Ջուրը նեխող ձկներին ափ հանեց, ինչը ստիպեց Bacillus anthracis միկրոօրգանիզմներից փախչող գորտերին ցամաք ելնել: Երրորդ պատիժն ամենայն հավանականությամբ մժեղն էր, իսկ չորրորդը՝ շնաճանճերը՝ Stromoxys calcitrans (Ելք 8. 16,21): Նրանք հեշտ և արագ բազմանում էին այն պայմաններում, որոնք առաջացան հեղեղի հետևանքով: Միայն կենդանիներին կոտորող հինգերորդ պատիժը կարող էր պայմանավորված լինել «սիբիրախտով», որի առաջացման պատճառը սատկած գորտերը դարձան: Stromoxys շնաճանճերը (չորրորդ պատիժ) մարդկանց և կենդանիների վրա խոցեր և ուռուցքներ առաջացրին (վեցերորդ պատիժ): Փետրվարյան կարկուտն ու կայծակը, հնարավոր է, լիովին կարկտահարեցին կտավատի և գարու ցանքերը, բայց ոչ մի վնաս չպատճառեցին

1 **Hort G.** Zeitschrift für die alttestamentliche Wissenschaft, 69,1957. S. 84-103; Նաև 70,1958. S. 48-59.

ցորենին ու հաճարին. «ցորենն ու հաճարը կարկտահար չեղան» (Ելք 9. 31–32), որովհետև դեռ հասունացած չէին, ինչպես ասվում է Սուրբ Գրքում: Այս ցորենն ու հաճարը իրենց հերթին մորեխի պարսերի զոհ դարձան (ութերորդ պատիժ), որոնց ներխուժմանը նպաստեցին աբիսսինյան հորդառատ անձրևները, որոնք էլ հենց առաջացրին Նեղոսի արտասովոր վարարումը: Թանձրամած խավարը (Ելք 10. 21) (իններորդ պատիժ), թերևս, չորացած ցեխից գոյացած մանր փոշու զանգվածով էր պայմանավորված: Այս փոշին օդ հանեց խամսինը՝ եգիպտական մարտյան քամին՝ անապատի փոշով հանդերձ[1] [1]:

Պատիժների այս հաջորդականությունը համահունչ է այսօր էլ Եգիպտոսում նկատվող տարերային աղետների հերթագայությանը: Դոկտոր Ջեյմս Ջոնսին, մեկնաբանելով տաս պատիժները, գրում է, որ իրեն անձամբ վիճակվել է տարերային աղետի ականատես լինել՝ ի մասնավորի մորեխի ներխուժման, որն այնքան մեծաքանակ էր, որ երեք հարյուր հիսուն հազարանոց բնակչությամբ մի ամբողջ քաղաք[2] կաթվածահար եղան: Բացի այդ, Հին Կտակարանի միայն ու միայն տվյալ տեղում (6–12 գլուխներ) հանդիպող եգիպտական բառերն ու անունները հաստատում են այն փաստը, որ այս պատմական պատումները գրված են տվյալ երկրում, տվյալ երկրին քաջատեղյակ մի մարդու ձեռամբ[3]: Այդ մարդը, անկասկած, Մովսեսն էր:

Վ. Կելլերը վկայում է, որ փարավոնին պատուհասած պատիժների մեջ «ոչ մի անհնար և արտասովոր բան չկա: Դրանք խիստ բնորոշ են Եգիպտոսի բնական պայմաններին, (...) թեպետ կարկուտ Նեղոսի վրա հազվադեպ է տեղում, բայց և այնպես նման դեպքեր հայտնի են: Աստվածաշնչում նկարագրված անցքերը տեղի են ունեցել հունվարին կամ փետրվարին: Մորեխի ներխուժումը այս տեղերում սովորական աղետ է: Հանկարծակի վրա հասած խավարը նույնպես նորություն չէ: Խամսինը օդ է բարձրացնում ավազի հսկայական զանգվածներ (...), որոնք

1 **Kitchen K. A.** Op. cit. P. 157-158.
2 **Jauncey J.** Science Returns to God…P. 78.
3 **Short A. R.** Op. cit. P. 27.

ծածկում են արևը (...) և լուսավոր օրը խավարի վերածում: Միայն անդրանիկների մահվան պատիժն է մնում անբացատրելի[1]»: Մելբուռնյան համալսարանի հնագետ Ջ. Թոմպսոնը նույնպես նկատում է. «Այսօր մեր ձեռքի տակ բավական նյութեր կան, որոնք տեղեկություններ են տալիս փարավոնին պատուհասած պատիժների մասին»[2]:

Մանոթագրություն

1. Տիկին Հորտի, ինչպես և առհասարակ բողոքականների սուրբգրային հրաշքների բոլոր մեկնությունները հիմնված են բողոքական ռացիոնալիստական մտքի՝ հրաշքի երևույթն ընկալելու անկարողության վրա: Հրաշքը հրաշք չէր լինի, եթե այն բնության օրենքներով պարզորեն բացատրելի լիներ: Դա հենց իրերի բնականոն ընթացքի խախտումն է, ընդ որում այնպիսի խախտում, որն անհնար է բացատրել երևույթների բնական ընթացքից ելնելով: Սրանում զգալի և վառ կերպով ի հայտ է գալիս ոչ միայն Աստծո ամենակարողությունը, այլև այն հանգամանքը, որ Նա, իբրև աշխարհի Արարիչ, նրա լիիրավ Տերն է՝ Իր հայեցողությամբ տնօրինելով ամեն բան. «Աստված, ուր էլ որ կամենա, բնության կարգը կընկրկի, քանզի Նա անում է այն, ինչ կամենում է» (ս. Անդրեաս Կրետացու Ապաշխարության մեծ կանոնի 4-րդ շարականի ս. Աստվածածնին ձոնված գովաբանական կրկներգից): Եթե Ելք գրքում նկարագրված բոլոր կամ նույնիսկ պատիժների մեծ մասը պարզաբար բացատրելի լիներ եգիպտական բնության առանձնահատկություններով, ապա եգիպտացիք պատշաճ ուշադրություն չէին դարձնի դրանց վրա և Մովսեսին բնավ չէին հավատա: Օրինակ՝ Եգիպտոսում խամսին կոչվող տոթակեզ քամին տարվա որոշակի ժամանակ 50 օր կանոնավոր փչում է անապատից (ըստ այդմ էլ արաբերեն կոչվում է խամսին, այսինքն՝ հիսուն օր), և եթե Աստվածաշնչում նկարագրված խավարը հենց դրանով պայմանավորված լիներ, ապա հրաշք չէր լինի: Նմանապես անհիմն է նաև տիկին Խորտի այն կարծիքը, ըստ որի առաջին ութ պատիժները Նեղոսի արտասովոր վարարման հետևանք են: Սուրբ Գիրքը պատիժների առնչությամբ ոչինչ չի հայտնում այդ վարարման մասին, իսկ եթե պատահած լիներ, ապա անպայման սրբազան բնագրում կարտացոլվեր: Նրա այն պնդումը, թե մորեխի ներխուժումը

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 157-158.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 64.

Եթովպիայում տեղած հորդ անձրևներով է պայմանավորված, խոսում է հեղինակի՝ կենսաբանության ոլորտից անտեղյակ լինելու մասին: Անձրևները և մանավանդ հորդառատ անձրևները խիստ անբարենպաստ են մորեխի բազմացման և զարգացման համար, ընդհակառակը, սաստիկ երաշտն ու շոգն են բարենպաստ. հենց այդ ժամանակ էլ տեղի է ունենում մորեխի ներխուժումը, ընդ որում դա սովորաբար լինում է ամռանը և ոչ թե ձմռանը: Ուստի դրա երևան գալը տարվա այն եղանակին, երբ կատարվում էր ելքը, անսովոր երևույթ էր: Կարկուտն ու հատկապես Սուրբ Գրքում նրա հետ հիշատակված անձրևը (9. 33-34) հազվագյուտ երևույթներ են Եգիպտոսի համար: Անձրևները Եգիպտոսում որոշակի չափաքանակ չունեն և այնքան անսովոր են եգիպտացիների համար, որ մի հին եգիպտական բնագրում Ասորիքը և Պաղեստինը անձրևներով ոռոգելու փաստը բացատրելու համար ասվում է, որ այնտեղ «Նեղոսը թափվում է երկնքից»: Մենք ի զորու ենք բավական օրինակներով ցույց տալ, որ տաս պատուհասները տարվա տվյալ եղանակի և տվյալ տարածաշրջանի (այսինքն՝ Եգիպտոսի) համար արտասովոր երևույթներ էին: Սակայն հարկ է ընդգծել, որ որոշ պատիժներ (ոչ միայն անդրանիկների մահը, այլև ջրի՝ արյան վերածվելը, որը վայրկենապես կատարվեց ու ըստ այդմ և ոչ մի մանրէի բազմացմամբ էլ պայմանավորված չէր, այդպես է նաև «թանձրամած խավար»-ի պարագայում) ոչ միայն անսովոր են, այլև առհասարակ բնության օրենքներով անբացատրելի: Այս հանգամանքն է, որ մինչև իսկ եգիպտացի մոգերին դրդեց այդ պատուհասները Աստծո միջամտությանը (Ելք 18. 19) վերագրել:

ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴԵՊԻ ՍԻՆԱ

Երբ հրեաները պատրաստվում էին հեռանալ Եգիպտոսից, Աստված պատվիրեց ամեն իսրայելացու ըստ իր ընտանիքի գառ մորթել և նրա արյունը իրենց տան դռան սեմին և շրջանակին քսել (Ելք 12. 3–7):

Ռացիոնալիստներն ու Սուրբ Գրքի վկայությունների պատմականությունը ժխտողները պնդում էին, որ ամենայն հավանականությամբ այս ամենը փոխառություն է ինչ–որ հեթանոսական՝ քանանական հողագործական տոնից: Բայց հնագիտական տվյալները վկայում են, որ քանանացիների հեթանոսական տո-

նակատարությունների և իսրայելացիների տոների միջև ահռելի անդունդ է ընկած: Քանանի և Ասորիքի հեթանոսական կրոնական սովորույթները լուսաբանող սենսացիոն հայտնագործություն դարձան Ռաս–Շամրայի (հնում՝ Ուգարիթ) արձանագիր սալիկները: 1929 թ. մի գյուղացի այս միջերկրական նավահանգստում (փյունիկյան ափում, հյուսիսային Սիրիա) պատահաբար հայտնաբերեց ստորգետնյա անցում՝ մեջը կավե սալիկներ: Այս սալիկների շնորհիվ հայտնի դարձավ բազմակին Էլ չաստծու բղջախոհ, միանգամայն մարմնական հեթանոսական պաշտամունքը[1]: Խնդրո առարկայի վերաբերյալ Ուգարիթի սալիկների բովանդակած տեղեկությունների մեծ նշանակությունն ընդգծելով՝ Օլբրայթը գրում է հետևյալը. «Քանանացիների առասպելական բնագրերի ամեն մի նոր հրապարակում էլ ավելի է մեծացնում և էլ ավելի ակնհայտ դարձնում իսրայելացիների և քանանացիների կրոնների միջև ընկած վիհը»[2]:

Եգիպտոսից ելնելիս՝ իսրայելացիները չգնացին «փղշտացիների երկրով» (Ելք 13. 17), այսինքն՝ Ասիա տանող, Եգիպտոսը Պաղեստինին կապող այնժամ հանրահայտ և հարթված ճանապարհով: Այս ճանապարհը վտանգավոր էր նրանց համար, ինչպես որ Աստված նրանց ասաց: Եվ Ռամեսեից (Թանիսից), որ գտնվում էր դելտայի արևելյան մասում, նրանք շարժվեցին հարավ՝ դեպի Սոկքոթ քաղաք, իսկ ապա՝ Ութոմ և հասան Կարմիր ծովի ափին գտնվող Բեէղսեպփոն (Ելք 12. 37, 13. 20, 14. 2): Ռացիոնալիստներն ու քննադատները կասկածի տակ են առնում այս երթուղին: Սակայն այս դեպքում էլ հնագիտությունն օգնում է հաստատելու Սուրբ Գրքի վավերականությունը:

Հնագիտությունն ապացուցել է, որ այս ճանապարհի առնչությամբ Սուրբ Գրքում հիշատակված քաղաքները գտնվում էին Կարմիր ծովի ափի հյուսիսային մասում: Այսօր այդ տեղում

1 **Free J. P.** Commentaries from the Clay Tablets-The Ras Shamra Tablets// Sunday School Times. Philadelphia Pa., April 14, 1945; **Barton G. A.** Archaeology and the Bible. Philadelphia:American Sunday-School Union, 7th ed.,1937. P. 355, tabl. 48-51.

2 **Albright W. F.** Recent Progress in North- Canaanite Research// Bulletin of the American Schools of Oriental Rescarch, 70, April, 1938. P. 24.

գտնվում են Թելլ–ալ–Մասկութան (նույնացված Սոկքոթի հետ), Վադի–Թումիլաթը (նույնացված հին եգիպտական hetem բառի հետ, որը նշանակում է «ամրոց, աշտարակ»), Ջեբել Աբու Հասան բլուրը (Սուեզից 25 կմ հյուսիս)՝ նույնացված Մագդող քաղաքի հետ (Ելք 14. 2)[1]: Շնորհիվ նորագույն հնագիտական տվյալների՝ եգիպտագետ Ալան Գարդիները, ով նախկինում ժխտում էր ելքի երթուղու պատմական հավաստիությունը՝ հիմնվելով տեղագրական դիտարկումների վրա, 1933 թ. հրաժարվեց իր առարկություններից[2]: Գարդիների տեսակետի փոփոխման կապակցությամբ Օլբրայթը գրում է. «Այն, ինչ այսօր հայտնի է դելտայի արևելյան մասի տեղագրության մասին, թույլ է տալիս իսրայելացիների ճանապարհի մեկնակետի մասին պատումը, ինչպես ներկայացված է Հին Կտակարանում (Ելք 12. 37 և 13. 20), տեղագրության առումով համարել միանգամայն տրամաբանական ու համոզիչ ... Այժմ դյուրությամբ և ավելցուկով կարելի է վկայություններ բերել ելքի մասին պատումների և Սինայով, Մադիամով ու Կադեսով դեգերումների իրական պատմականության վերաբերյալ, որովհետև պատմական տեղագրության և հնագիտության անդաստանի մեր գիտելիքները վերջին ժամանակներս բավական շատացել են: Մեզ մնում է միայն գոհունակությամբ փաստել, որ այլևս առիթ չկա Իսրայելի պատմական ավանդությունների դեմ ընդվզած լուրջ գիտական քննադատության համար»[3]:

Ավելին, հնագետ Կայլը խնդրո առարկայի կապակցությամբ նշում է, որ Կարմիր ծովի ափի երկայնքով ընթացող ճանապարհորդները, փորձելով կրկնել ելքի ուղին, Սուրբ Գրքից զատ որևիցե այլ ուղեցույցի կարիք չունեին: Այս տեղանքի ողջ տեղագրությունը լիովին համապատասխանում է սուրբգրային պատումներում շարադրված փաստերին[4]:

Կարմիր ծովի ջրերով հրաշքով անցումը (Ելք 14. 21–22) սերնդե–սերունդ հափշտակում է մարդկության ուշքն ու միտքը:

---

1 **Thompson J. A.** Op. cit. P. 66.
2 **Free J. P.** Archaeology…P. 100.
3 **Albright W. F.** From the Stone Age…P. 194.
4 **Hamilton F. E.** The Basis of Christian Faith. N. Y.,Harper,1933. P. 172.

Վ. Կելլերն այս կապակցությամբ գրում է. «Այն, ինչի վրա ցարդ գիտությունն ու գիտական հետազոտություններն ի զորու չեն լույս սփռել, բնավ էլ խուսանավում չէ: Իրականում բազմաթիվ ապացույցներ կան: Վիճելի է մնում միայն տվյալ պատմական անցքի վայրը, որը դժվար է ճշտությամբ տեղորոշել»[1]:

Մասնագետները գտնում են, որ Կարմիր ծովի ջրերի ետ մղվելը՝ աջ ու ձախ կողմ պարիսպ կազմելով, ու ծովի հատակի բացվելը՝ Իսրայելի ժողովրդի անցումը դյուրացնելու համար, եզակի չէ. համանման երևույթներ առաջ էլ են տեղի ունեցել: Այսպես օրինակ՝ գեներալ Թուլլոհը հայտնում է, որ քամու ներգործությամբ Մենզալե լճի ջրերը յոթ մղոն ետ մղվեցին: Հնագետ Մ. Գ. Կայլի խոսքերով՝ նմանօրինակ բաժանում– ետ մղումը, բարձրանալ–պարիսպ դառնալը, որ առաջանում էր հուժկու քամու ներգործությամբ, տեղ է գտել նաև ուրիշ դեպքերում: Կայլը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ ջրի բարձրությունը երբեմն հասնում է 2,1–2,4 մ: Բայց հատկապես ուշագրավ է այն, որ սուրբգրային պատումներում նշված են այս երևույթի ժամանակն ու տևողությունը: Սուրբ Գրքի տվյալ տեղում ասվում է, որ Աստված գիշերը սրընթաց հարավային հողմ ուղարկեց. «Եվ ծովը ետ մղվեց, բացվեց ծովի հատակը, ջուրը երկուսի բաժանվեց» (Ելք 14. 21): Ակնհայտ է, որ այս դեպքում գործ ունենք Իր իսկ կողմից կարգված բնության օրենքների մեջ ամենազոր Արարիչ Աստծո անսպասելի միջամտության հետ: Այնպես որ խոսքը ոչ թե բնության սովորական երևույթի, այլ հրաշագործության մասին է: Հրաշք, որը կատարվեց այնժամ, երբ Տերը կամեցավ. մասնավորապես երբ Մովսեսը, բարձրացնելով իր գավազանը, Կարմիր ծովը երկուսի բաժանեց: Հրաշք, որը տևեց ուղիղ այնքան, որքան անհրաժեշտ էր աստվածընտրյալ ժողովրդին՝ ծովն անցնելու համար, որի թիվը շուրջ երկու միլիոն էր, քանի որ ծովի ջրերը կրկին վերադարձան իրենց տեղը, հենց որ եգիպտացիները մտան նրա մեջ:

Բազմիցս են փորձել ճշտել այն երթուղին, որով անցան իսրայելացիները Սինայական թերակղզում, և որը տևեց 40 տարի: Հին

1 **Keller W.** Ἡ Βίβλος …Σ. 164.

Կտակարանում նկարագրված կայքերի որոնման բոլոր փորձերը արդյունք չտվեցին, թեպետ և հնուց ի վեր այն հայտնի ճանապարհ էր, որը Նեղոսի դելտան կապում էր Սինային, և որով ընթացավ աստվածընտրյալ ժողովուրդը և որը, անկասկած, ձգվում էր Սինայական թերակղզու արևմտյան ափի երկայնքով: Իսրայելի երթուղու մասին պատկերացում կազմելու ամենից հաջողված փորձերից մեկը պատկանում է «Վեստմինստերյան պատմական ատլաս»–ին: Ֆրիի կարծիքով՝ Մեռան (Ելք 15. 23) իր դառը ջրերով նույնացվում է ժամանակակից բնակավայր Այն Հավարային: Այս տեղանքում մի լճակ կա՝ 1,5 կմ տրամագծով՝ աղի–ծծմբական ջրով: Եղիմ տեղանքը, որտեղ 12 աղբյուր և յոթանասուն արմավենի կար (Ելք 15. 27), որոշ գիտնականների կողմից նույնացվում է Վադի Գարադելի հետ (7,5 կմ Հավարայից հեռու):

Սինա կամ Քորեբ լեռը առանց որևիցե լուրջ առարկությունների նույնացվում է Ջաբալ Մուսա լեռանը (նշանակում է «Մովսեսի լեռ»): Նրա ստորոտում 1,5 կմ^2 մակերեսով հարթավայր է փռված, ուր, հավանաբար, իսրայելացիները խփեցին իրենց վրանները[1]: Բացի այդ անգլիացի հնագետ սըր Ուիլյամ Ֆլինդերս Պետրին սուրբգրային Դոփան կամ Ռափան (Թվեր 33. 12) նույնացնում է ժամանակակից Սերաբիտ–ալ–Խադեմի հետ, ուր գտնվում էին «հին եգիպտական պղնձե և փիրուզե հանքերը»: Ռափիդիմը (Ելք 17. 1,8) նույնացվում է ժամանակակից Ֆեյրանին կամ Ֆարրանին, որին արաբները «Սինայի մարգարիտ» են անվանում: «Լերկ և բազմագույն ժայռերով շուրջանակի պաշտպանված այս փոքրիկ դրախտը բազմադարյա պատմության ծիրում ժամանակի մեջ քարացած է երևում: Փյունիկյան արմավենու փոքրիկ անտառակում կարելի է կիզիչ արևից պատսպարվել: Քոչվորներն այսօր էլ, ինչպես հեռավոր նախնիների դարաշրջանում, այստեղ են քշում իրենց հոտերը՝ ջրտուքի և դալար խոտի գորգի վրա հանգիստ տալու»: Նրա կարծիքով՝ այս վայրում իսրայելացիների վրա հարձակում գործած ամաղեկացիները (Ելք 17. 8) «ձգտում էին

1 **Free J. P.** Op. Cit. P. 100-104.

պաշտպանել Վադի–Ֆեյրանն օտարերկրացիների ներխուժումից»[1]:

Սբ. Կատարինեի վանքը Սինա լեռան վրա

Վաղ քրիստոնեական շրջանում այն վայրում, որտեղ Իսրայելը հաղթեց ամաղեկացիներին, բազմաթիվ վանականներ ու անապատականներ բնակվեցին: Հետագայում նրանք Ֆեյրանում եկեղեցի կառուցեցին, իսկ օազիսից 40 կմ դեպի հարավ՝ Ջեբել Մուսայի ստորոտում՝ փոքրիկ մատուռ: Հուստինիանոսի տիրապետության օրոք՝ 530 թ., այս մատուռը վերակառուցվեց և շուրջանակի պարիսպներով օղակվեց՝ վանականների անվտանգությունն ապահովելու համար, և այսպես այն վերաճեց սուրբ Եկատերինայի հռչակավոր մենաստանի, որը ցայսօր էլ Սինա լեռան ստորոտում է:

Սինա լեռան գագաթին Աստված Մովսեսին հանձնեց 10 պատվիրանների քարե տախտակները: Այսպես աստվածային հայտնության շնորհիվ Եգիպտոսում ծնված և մեծացած Մովսեսը, որտող պաշտում էին արեգակի չաստված Ամոնին և այլ բազմաթիվ հեթանոսական կուռքերի, հռչակում է Մի, Միակ, Ճշմարիտ Աստծու հանդեպ հավատ: Հնագիտությունը, ինչպես տեսնում ենք, բազմաթիվ տեղեկություններ է ընձեռում այն միջավայրի մասին, ուր ծնվել, առնականացել և մեծագործությունների շավիղ է ելել Մեծն Մովսեսը. այսպես այս գիտությունը շատ հարստացրեց մեր գիտելիքները:

1 Տես. **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 174–179.

ՍԱԼԻԿՆԵՐ՝ ՀԻՆԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

Շնորհիվ հնագիտության՝ այսօր բազմաթիվ նյութեր են կուտակվել, որոնք թույլ են տալիս Հին Կտակարանի դարաշրջանի իսրայելական ժողովրդի կենցաղի ու բարքերի մասին առավել ամբողջական պատկերացում կազմել: Գունեղ ատլասների և շքեղ հրատարակված ալբոմների շնորհիվ մեր առաջ է հառնում հեռավոր անցյալի ժողովուրդների կյանքը:

Հին Եգիպտոսի և հատկապես Ասորեստանի բազմաթիվ հուշարձաններում հայտնաբերվեցին անխաթար պահպանված (երբեմն նույնիսկ վառ գույներով նկարված) պատմական անցուդարձերի, կրոնական արարողությունների և առտնին կյանքի տեսարանների պատկերներ՝ գեղանկարչական կամ քանդակագործական վարպետ կատարմամբ:

Այսպես՝ հին եգիպտական դամբարանների կամ մեհյանների պատկերներում վերարտադրված են սպիտակ հանդերձներով և ածիլված երեսներով մարդկանց կերպարանքներ: Այս պատկերները Ծննդոց գրքում ասվածի ապացույց են. փարավոնը հրամայեց կանչել Հովսեփին, ում կալանքից ազատ արձակեցին, ածիլեցին, փոխեցին հանդերձները, և այդ տեսքով (ածիլված ու վերազգեստավորված) Հովսեփը կանգնեց փարավոնի առաջ: Փարավոնը Հովսեփին թանկարժեք բեհեզյա պատմուճան հագցրեց (հին եգիպտական ձյունաճերմակ, նուրբ ու փափուկ վուշե կտոր) և «ոսկե մանյակ անցկացրեց նրա պարանոցին» (տե՛ս Ծնն. 41. 14, 42): Սա միմիայն Հին Եգիպտոսում կարող էր պատահել, այնինչ սեմիտները և արևմտյան Ասիայի մյուս ժողովուրդները սովորություն ունեին երկար, խնամված մորուքներ պահել, իսկ հաճախ էլ խայտաբղետ զգեստներ կրել:

Այս կարգի տեսարաններով պատկերներ հանդիպում են հին եգիպտական և ասորեստանյան մշակույթի հուշարձաններում:

Հենց այս տեսարաններն էլ լուսաբանում և պարզաբանում են այն, ինչ հիշատակում է Սուրբ Գիրքը: Մորուքի մասին, օրինակ, սաղմոսներում ասվում է. «Որքա՜ն բարի, որքա՜ն վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին, ինչպես ազնիվ յուղ, որ իջնում է Ահարոնի գլխին ու մորուքին, և մորուքից սահում դեպի նրա զգեստի քղանցքները» (Սաղմ. 132. 1–2): Հին Կտակարանի մեկ այլ գրքում կարդում ենք, որ Անոնը բռնեց Դավթի ծառաներին և որպեսզի նվաստացնի նրանց, ածիլեց նրանց մորուքները: Դավիթը հրամայեց նրանց մնալ Երիքովում մինչ նրանց մորուքների աճելը, որպեսզի նրանք իրենց անարգված չզգային (Բ Թագ. 10. 4,5): Դատավորաց գրքում կարդում ենք, որ Սիսարայի մորը մխիթարելու համար կանայք ասացին նրան, որ եթե ընդառաջ ելնի իր որդուն, ապա կտեսնի, որ նա գույնզգույն և նկարազարդ հյուսվածքների ավար է բաժանում (Դատ. 5. 29–30):

Բենի Հասանում (Կահիրեից 440 կմ հարավ) հայտնաբերված արքայազն Հնեմհոթեպի (Ք. ա. 1920–1900 թթ.) դամբարանի պատերից մեկի վրա պահպանվել է քոչվոր սեմիտների խմբապատկեր, որոնք Եգիպտոս էին եկել Ք. ա. 1900 թ.[1]: Բոլորը միասին 37 հոգի են, իսկ նրանց առաջնորդը զուտ սեմական Աբեսսա անունով է կոչված: Այս անունը՝ Աբեսան, հանդիպում է սրբազան բնագրում. հենց այս անունն ուներ Շարուհու որդին և Հովաբ զորահրամանատարի եղբայրը (Ա Թագ. 26. 6): Բացի այդ, այս մարդկանց խայտաբղետ հագուստն ու զենքերը վառ կերպով վկայում են, թե այն ժամանակ ինչպես էին հագնվում, ինչ իրեր էին օգտագործում սեմիտները: Տղամարդիկ երկար՝ մինչև ծնկները հասնող պատմուճան էին հագնում, իսկ կանայք՝ ավելի երկար, մինչև կոճերը հասնող քղանցքներով էին: Այս հագուստները վառ ծաղկազարդ գործվածքի ծալքեր ունեին և օգտագործվում էին իբրև թիկնոց, ընդ որում ձախ ուսը բաց էր մնում: Այս հագուստի պատկերը հիշեցնում է նշանավոր ծաղկազարդ պատմուճանը, որը Հակոբը նվիրեց իր սիրեցյալ որդի Հովսեփին (Ծնն. 37. 3): Այդ նույն որմնանկարում տղամարդիկ պատկերված են սրա-

1 Տես Վեստմինստերյան պատմական ատլասում» զետեղված լուսանկարը (Westminster Historical Atlas. L.,1953. P. 23):

ծայր մորուքներով, իսկ կանայք՝ երկար ու սև մազերով՝ կրծքներին և ուսերին իջած: Տղամարդկանց ոտքերին սանդալներ կան, իսկ կանանց ոտքերին՝ մուգ դարչնագույն ճտքավոր կոշիկներ: Ջուրը տանում են գեղեցկազարդ տիկերով: Նրանց զենքերն են՝ աղեղը, նետը, լախտն ու տեգը: Ավանակների վրա երեխաներ կան և բեռնված ապրանք, օրինակ՝ ածուխ կամ ծարիր՝ սև ներկ հոնքերի և թարթիչների համար[1]:

Հնագետ Օլբրայթը նշում է, որ ընդհանուր առմամբ այս խմբապատկերն օգնում է պարզաբանել Ղամեքի հնամենի ընտանիքի պատմությունը: Այս ընտանիքի անդամները, ինչպես ասված է Աստվածաշնչում, փորձառու և հմուտ մարդիկ էին անասնապահության, երաժշտության, դարբնության և մետաղների մշակման ոլորտում: Բենի Հասանի որմնանկարում պատկերված մարդիկ ընտանի կենդանիներին որպես գրաստ են օգտագործում՝ մետաղահալ հնոցը տեղափոխելու համար այնպես, ինչպես ուշ շրջանում՝ պղնձագործ վարպետները: Տղամարդկանցից մեկը ութլարյա քնարի վրա է նվագում: Սեմիտների առաջնորդ Աբեսսան եգիպտական տիրակալին ընծայում է այծ, որի եղջյուրների միջև հովվական ցուպ կա: Իսկ քանի որ, ինչպես նկատում է Օլբրայթը, որմնանկարի վրա պատկերված հագուստը հազիվ թե հետագա երկու դարերում էական փոփոխության ենթարկված լինի, ապա սխալ չի լինի ենթադրել, որ Հակոբի ժամանակներում էլ ամեն ինչ նույնն էր:

Այսպես ուրեմն, այս և նման ուրիշ նյութեր հավաստում են նահապետների, դատավորների, ինչպես և Դավթի ժամանակներին վերաբերող սուրբգրային տեղեկությունների պատմական արժանահավատությունը:

1 **Thompson J. A.** Op. cit. P. 21,29,38. **Free J. P.** Op. cit. P. 54,151. **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 103-104. **Breadsted J. H.** A History of Egypt. N. Y: Scribner’s, 1912. P. 187.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՕՐԵՆՔԸ

Իսրայելացիների Քանան գնալու ճանապարհին Աստված Սինա լեռան վրա հայտնվեց Մովսեսին և օրենքներ պարունակող քարե տախտակներ շնորհեց նրան: Սակայն Սուրբ Գրքի վկայությունների պատմական հավաստիության հակառակորդներն ու ռացիոնալիստները պնդում էին հետևյալը. «Ելք, Ղևտական, Թվեր և Երկրորդ Օրենք գրքերից հայտնի օրենքը ուշ շրջանի հորինվածք է: Այն չի հրապարակվել Ք. ա. մոտ 1500–1400 թթ.: Նրա հիմնական դրույթները գրի են առնվել և օրինակարգավորվել միայն Ք. ա. շուրջ 500–450 թթ.: Նրանց գլխավոր փաստարկն այն է, որ օրենքների ժողովածուն այն տեսքով, ինչպիսին որ ներկայացված է վերոհիշյալ չորս գրքերում, դժվարամատչելի կլիներ այնդ ժամանակ հետամնաց իսրայեացիների ընկալմանն ու հասկացողությանը և, հետևաբար, հիմքեր չկան ենթադրելու, որ իբր թե նրանք այսքան խոր մշակված օրենքների ժողովածու են ստացել»:

Սակայն հինգ կարևոր հնագիտական գտածոների շնորհիվ ընդդիմախոսների այս փաստարկն էլ հերքվեց. 1) Էշնուննա պետության օրենքների ժողովածու, 2) Լիպիտ–Իշտրայի օրենքների ժողովածու, 3) Բիլալամայի օրենքների ժողովածու, 4) Համմուրապիի օրենքների ժողովածու, 5) Ռաս–Շամրայի սեպագիր սալիկներ:

Նախևառաջ քննենք հնագիտական վկայությունները, ապա դրանց հիման վրա անհրաժեշտ եզրակացություններ անենք:

1. Էշնուննա (արդի Թել–Ասմարը, որը գտնվում է Բաղդադից 90 կմ դեպի հյուսիս–արևելք) քաղաք – պետության օրենքների ժողովածուն համեմատաբար վերջերս է գտնվել: Այն ավելի հին է, քան Համմուրապիի օրենքների ժողովածուն, սակայն օժտված է դրանց հար և նման մի շարք բնորոշ գծերով:

2. Լիպիտ – Իշտրա արքայի օրենքների ժողովածուն երկու հարյուրամյակով ավելի հին է Համմուրապիի օրենքների ժո-

Մովսեսը Սինա լեռան վրա Ուխտի քարե տախտակներով: Հունական ձեռագրի մանրանկար: Կոստանդնուպոլիս, Թոփկափ Սառայի գրադարան:

ղովածուից և բովանդակում է Համմուրապիի ժողովածուին համանման օրենքների հոդվածներ[1]:

3. Բաղդադի շրջակայքում գտնվող Թել–Հերմելեյում 1945թ. և հաջորդ տարիներին անցկացված պեղումների ընթացքում հայտնաբերվեցին մի քանի կավե սալիկներ: Սրանք պարունակում են Բիլալամայի ժամանակների (Ք. ա. 1900 թ.) օրենքներ: Այդ օրենքներից մեկը հիշեցնում է Մովսեսի օրենքի այն դրույթը, ըստ որի, եթե մեկի եզը հարվածի և սատկացնի հարևանի եզին, ապա թող կենդանի մնացած եզին վաճառեն և դրա արժեքը հավասար կիսեն. սպանված եզան միսն էլ հարկ է նրանց միջև բաժանել (Ելք 21. 35)[2]: Բիլալամայի օրենքների ժողովածուն, որ բաղկացած է ներածությունից և 59 հոդվածներից, կարգավորում է գների, վարձերի սակացույցները, սահմանում տնտեսական կամ այլ կարգի պարտավորությունների չկատարման համար պատժաչափեր: Հոդվածների մյուս մասը վերաբերում է քրեական և ամուսնական իրավունքին, ավանդներին ու վաճառքին, ինչպես և մարդկանց, կենդանիների կամ առարկաների կողմից հասցված վնասին[3]:

4. Բաբելոնի հռչակավոր ամորհացի արքա Համմուրապիի (Ք. ա. 1728 –1686 թթ.)[4] օրենքների ժողովածուն հավերժացած

1 **Steele F.,** The Lipit-Ishtar Law Code//American Journal of Archaeology, April-June, 1947, Vol. LI. № 2. P. 158-164.

2 **Albbright W. F.,** A Decade of Middle Eastern Archaeology, 1939-1948// Palestine Affairs, Vol. IV, № 2 Feb., 1949. P. 24.

3 **Free J. P.,** Op. cit. P. 59, ծնթ. 24.

4 Հնագետները 60 տարի առաջ կարծում էին, որ Համմուրապիի կյանքի ժամանակը մոտ է Ք. ա. 2250-ականներին: Այժմ, սակայն, Մերձավոր Արևելքի ժամանակագրու-

է սև բազալտե սյան վրա, որը 1931 թ. հայտնաբերվեց Սուզում: Այս ժողովածուն քրեական և քաղաքացիական, ինչպես և վարչական իրավունքի ու առևտրական հարաբերությունները կանոնակարգող օրենքների 247 հոդված է բովանդակում: Այն ընդգրկել է Էշնուննա քաղաքի և Լիպիտ–Իշտրա թագավորի օրենքներին նախորդող հոդվածների հիմնական դրույթները: Մովսեսից (Ք. ա. 1500–1400 թթ.) մի քանի դար առաջ ապրած Համմուրապիի հռչակավոր ժողովածուն նույնպես բովանդակում է օրենքների մի քանի հոդվածներ, որոնք նման են Մովսեսի օրենքների ժողովածուի մեջ ընդգրկվածներին:

5. Ռաս–Շամրայի կավե սալիկները պեղվել են ֆրանսիացի հնագետների կողմից, ովքեր (1929 թ. և հաջորդ տարիներին) աշխատում էին «Քոլեջ դե Ֆրանսի» հնագիտության պրոֆեսոր Կլոդ Ֆ. Ա. Շեֆֆերի ղեկավարության ներքո: Ժամանակակից Ռաս–Շամրա նավահանգստի տեղում (հյուսիսային Սիրիա, Կիպրոս կղզու դիմաց) ինչ–որ ժամանակ գտնվել է Ուգարիթ քաղաք –պետությունը: Սա փյունիկյան ծովեզրի նշանավոր Սպիտակ նավահանգիստն էր, որտեղ ծաղկում էր քանանական քաղաքակրթությունը: Շեֆֆերը, բացի Բահաղին ու Դագոնին նվիրված երկու մեհյանների մնացորդներից, բացեց նաև մեծահարուստ վաճառականների ու Ուգարիթի գերագույն քրմի տների փլատակները: Վերջինս հարուստ գրադարան ուներ, ինչի մասին վկայում է բազմաթիվ և անխաթար պահպանված կավե սալիկների հավաքածուն: Սրանցից մեկը, ի դեպ, գրված է եզակի այբբենական սեպագիր գրով (Ք. ա. մոտ 1300 –1200 թթ.):

Ք. ա. շուրջ 1200 թ. լիովին ավերված Ուգարիթի այս սալիկները, որոնք թվագրվում են Ք. ա. մոտ 1400 թ., իսկական գանձ ու հազվագյուտ գտածո էին: Սույն հայտնագործությունները լույս սփռեցին ցայսօր անհայտ պատմական դարաշրջանի վրա և ըստ

թյան գրեթե բոլոր հետազոտողները նրա կյանքի ժամանակը թվագրում են Ք. ա. մոտ 2000 և 1700 թթ. միջև, ընդ որում ավելի հակված են այս ժամանակահատվածի վերջին: Մենք հետևում ենք հեղինակների մեծամասնության, այդ թվում նաև Օլբրայթի կողմից ընդունված նոր ժամանակագրությանը: Առավել հանգամանալից տես **Free J. P.,** Op. cit. P. 33, 81.

ամենայնի նպաստեցին քանանացիների և փյունիկեցիների հեթանոսական սովորույթների և բազմաստվածական կրոնի մասին մեր գիտելիքների հարստացմանը: Ռաս–Շամրայի պեղումների շնորհիվ հայտնի դարձան քանանացիների չաստվածներն ու չաստվածուհիները (Բահաղ, Էլ, Դագոն, Ասերա), մեհյանները և հեթանոսական ծեսերը, կրոնական օրհներգերը, աղոթքներն ու առասպելները: Դատելով նկարագրություններից՝ որոշ արարողություններ հիշեցնում են իսրայելացիների կրոնական արարողություններն ու Հին Կտակարանի օրենքների հոդվածները[1]:

Դույզն–ինչ հանգամանալից կանգ առնենք այս հինգ հնագիտական գտածոների վրա, քանզի հետագայում էլ կրկին ու կրկին անդրադառնալու ենք դրանց: Սրանք Սուրբ Գրքի հավաստիության հակառակորդների տեսակետի հերքման հիմնական կռվանը դարձան, ի մասնավորի այն պնդման, ըստ որի Մովսեսի օրենքն իբր ի հայտ է եկել միայն Ք. ա. 500–400 թթ.:

1. Օրենքների հինգ ժողովածուները (Էշնուննայի, Լիպիտ–Իշտրայի, Բիլալամայի, Համմուրապիի և Ռաս–Շամրայի), որոնք բովանդակում են օրենքներ և կրոնական օրենսդրություններ, զգալիորեն ավելի հին են, քան Մովսեսի օրենքը: Ըստ այդմ, եթե Միջագետքի ժողովուրդներն ու քանանացիներն այնքան քաղաքակիրթ էին, որ օգտագործում էին այսքան խոր մշակված օրենքներ (բնականաբար հեթանոսական), որոնք բովանդակում են Մովսեսի օրենքի որոշ հոդվածներին նման բազմաթիվ մանրամասն հոդվածներ, ապա հարց է ծագում՝ ինչո՞ւ իսրայելացիները սեփական օրենքներ ունենալ չէին կարող: Իսրայելացիները այնքան վայրենի և հետամնաց ժողովուրդ չեն եղել, ինչպես նրանց համարում են Սուրբ Գրքի բոլոր ժխտողները: Մշակույթի զարգացման մակարդակով նրանք և ոչ մի բանում չէին զիջում Միջագետքի և Ուգարիթի ժողովուրդներին: Նրանք ապրում էին Քանանի հետ սերտ կապեր ունեցող Եգիպտոսի ամենաբերրի շրջաններից մեկում՝ Գեսեմում: Բացի այդ շատ բնական է թվում

1 **Kitchen K. A.,** Op. cit. P. 160 ff. **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 369 έξ. The Israelites. Time-Life (International) Books,1980. P. 70,83. **Albright W. F.,** The Archaeology of Palestine. P. 187,230 ff.

այն հանգամանքը, որ ժողովրդին, ում վիճակված էր մոտ ապագայում հիմնավորվել «Ավետյաց երկրում», ագրարային հասարակության կյանքին համահունչ օրենքներ շնորհվեցին: Մովսեսի օրենքն էլ իսկ և իսկ համապատասխանում էր այն ամենին, ինչը պետք էր իսրայելացիներին:

Բավական հատկորոշ է ռացիոնալիստներից մեկի՝ Յեյլի համալսարանի պրոֆեսոր Միլլար Բարրոուզի կարծիքը. «Որոշ գիտնականներ գտնում են, որ Մովսեսի օրենքում արտացոլված բարոյականության և հասարակության զարգացման մակարդակը շատ բարձր են այդ վաղնջական դարաշրջանի համար: Սակայն բաբելացիների, ասորեստանցիների և խեթերի օրենքների հնամենի ժողովածուների բովանդակած տեղեկությունները, ինչպես և հին եգիպտական «Մեռյալների գրքում» ու եգիպտացիների հին գրավոր իմաստության մեջ արտացոլված վեհ տեսլականը վերջնականապես հերքում են այդ կարծիքը»[1]: Այդ նույն հեղինակը նշում է, որ «որոշ եզրեր, որոնցով Հին Կտակարանում արտահայտված են զոհաբերության որոշ տեսակներ, կարելի է կարդալ Ռաս–Շամրայի սալիկների վրա, օրինակ՝ արյունալից զոհաբերություն, ողջակեզ, մեղքի զոհ, խաղաղության զոհ»[2]:

2. Մովսեսի պատվիրանների բովանդակության նմանությունը ասորեստանցիների, բաբելացիների և քանանացիների օրենքների ժողովածուներին որոշ ընդդիմախոսների առիթ է տալիս պնդելու, որ Մովսեսն իր օրենքները փոխառել է Համմուրապիի ժողովածուից: Բայց վերջերս Համմուրապիի ժողովածուի մանրազնին ու հանգամանալից ուսումնասիրությունը ցույց տվեց, որ իրականում ոչ մի փոխառություն և առհասարակ որևէ աղերս չկա Մովսեսի և Համմուրապիի օրենքների միջև: Այս կարծիքն ընդունում է նաև Փենսիլվանյան համալսարանի պրոֆեսոր, ռացիոնալիստ Ջորջ Ա. Բարտոնը. «Ընդհանուր առմամբ Համմուրապիի ժողովածուի համադրությունը Հնգամատյանի օրենքների հետ իրենց բովանդակ թվացյալ նմանությամբ հանդերձ հետազոտո-

1 **Burrows M.** What Mean These Stones? P. 56.
2 **Burrows M.** Op. cit. P. 234.

ղին համոզում է այն բանում, որ Հին Կտակարանի օրենքներն ըստ էության բաբելոնյան օրենքների փոխառությունը չեն»[1]: Ավելին, Համմուրապիի օրենքների ժողովածուն յուրօրինակ հոդվածներ է պարունակում, որոնք, օրինակ, վերաբերում են զինվորներին, մաքսավորներին, գինեվաճառներին...

3. Բայց ինչպե՞ս այդ դեպքում բացատրել Մովսեսի օրենքների բովանդակության որոշ նմանությունն ասորեստանցիների, բաբելացիների և խեթերի օրենսդրության հետ, և հատկապես Ռաս–Շամրայի սեպագիր սալիկների նմանությունը Ղևտացոց գրքում շարադրված օրենքների հետ: Այս հարցին հնագիտության պրոֆեսոր Ջ. Պ. Ֆրին երկակի պատասխան է տալիս: Նա գրում է. «Նախ՝ հնարավոր է, որ Իսրայելի օրենսդրությունը Քանանում տարածված լիներ իսրայելական ժողովրդի շնորհիվ, երբ պատվիրանները շնորհվեցին Մովսեսին (Ք. ա. մոտ 1450 թ.) և քանանացիների ու Ասորիքում ապրող ժողովուրդների կողմից օգտագործվելիս լինեին մինչ դրանց արձանագրվելը Ռաս–Շամրայի կավե սալիկների վրա (Ք. ա. 1400 –1350 թթ.), երկրորդ՝ հնարավոր է, որ վաղնջական ժամանակներում Աստծո շնորհած օրենքները (հետագայում օրինակարգավորված ձևով Մովսեսին հանձնված) նախատեսված են եղել տարբեր ժողովուրդների համար: Սակայն ժամանակի հոլովույթում օրենքների մեջ փոփոխություններ, տարաբնույթ շտկումներ և աղավաղումներ են կատարվել հեթանոսների կողմից: «Ձեռքից ձեռք» և «ժողովրդից ժողովուրդ» ավանդվելու արդյունքում այս օրենքները գրավոր ձևով հայտնվեցին Ռաս–Շամրայի կավե սալիկների վրա»[2]:

Պրոֆեսոր Ֆրիի այն կարծիքը, թե օրենքն Իսրայելին հնագույն շրջանում (նախքան Մովսեսը) է շնորհվել, ապա մյուս ժողովուրդներին հանձնվել, և մի շարք փոփոխություններից հետո մարմնավորվել այն տեսքով, ինչը հայտնի է մեզ Ռաս–Շամրայի կավե սալիկներից, կարող է խարսխված լինել Սուրբ Գրքի տվյալների վրա: Աստված Մովսեսից անհամեմատ շուտ ապ-

1 **Barton G. A.** Op. cit. P. 406.
2 **Free J. P.** Op. cit. P. 112; Նույնի Commentaries from the Clay Tablets…

ռած Իսահակին խոստացավ. «Ես բազմացնելու եմ քո սերունդները երկնքի աստղերի չափ, քո զավակներին եմ տալու այս ամբողջ երկիրը, և քո սերունդների միջոցով օրհնելու եմ երկրի բոլոր ազգերը ի հատուցումն այն բանի, որ քո հայր Աբրահամը լսեց Իմ խոսքը, պահեց Իմ հրամանները, Իմ պատվիրանները, Իմ կանոններն ու օրենքները» (Ծնն. 26. 4–5): Հրամանները, կանոններն ու օրենքները հոմանիշներ են և նշանակում են աստվածային պատվիրան կամ պատվիրաններ, որոնք Աստված հայտնեց Աբրահամին (նահապետների դարաշրջանը մոտավորապես թվագրվում է Ք. ա. 2000 թ. մինչև 1800 թ. ընկած ժամանակահատվածով): «Այսպիսով,– ինչպես նշում է հնագիտության պրոֆեսոր Ջ. Ա. Թոմպսոնը,– չարժե առանձնապես զարմանալ Համմուրապիի ժողովածուի հետ Մովսեսի օրենսդրության բովանդակության նմանությունից»: Չէ՞ որ «նահապետի ընտանիքը Միջագետքից էր սերում և շատ բնական է, որ նա իր հետ բերած լիներ նաև այն հասարակության որոշ օրենքներից, որին նախքան Միջագետքից հեռանալը պատկանում էր: Յուրաքանչյուր հասարակական կարգ այդպիսի օրենքներ ունենալու կենսական անհրաժեշտություն է զգում, և կարելի է ենթադրել, որ դրանք աստվածադիր են»[1]:

Փարավոն Ամենհոտեպ (Էխնաթոն) IV-ի արձանը Կարնակից (Ք. ա. XIV դ.):

Բացի այդ իր արտահայտությունների մեջ պահպանողականությամբ աչքի չընկնող սըր Քենյոնը նշում է. «Ռաս–Շամրայի սեպագիր բնագրերը, որոնք նվիրված են տարատեսակ կրոնական ծեսերի նկարագրությանը, բերում են այն մտքին, որ Հնգամատյանի այն մասերի հիմքում, որոնք բանասիրական քննադա-

1 **Thompson J. A**. Op. cit. P. 72

տության լույսի ներքո վերջերս կազմվածի տեսք ունեն, կարող է ընկած լինել էլ ավելի հին գրավոր աղբյուր»[1]: Քանի որ Ռաս–Շամրայի բնագրերի լեզուն ազգակից է հին եբրայերենին, ապա բնական է, որ նրանցում հանդիպող զոհաբերության եզրերը, ծեսերի տեսակները և այլն հաճախ նման են Հին Կտակարանի բնագրի համանման արտահայտություններին[2]:

4. Այս ամենը թույլ է տալիս եզրակացնելու, որ աստվածային Սինա լեռան վրա տեղի ունեցածը եզակի երևույթ էր իր՝ համաշխարհային պատմական մասշտաբի հետևանքներով: Հրեաների մեջ ծնված, բայց հեթանոսների մեջ դաստիարակված ու հազվագյուտ կրթություն ստացած (քանի որ մեծանում էր փարավոնի արքունիքում) Մովսեսը դարձավ միաստվածության մունետիկ: Հենց նա էլ Սինայից հռչակեց մեկ Աստծո հավատը: Աստվածային հայտնություն ստանալով՝ նա նորոգեց Աստծո՝ դեռևս Աբրահամ, Իսահակ և Հակոբ նահապետների հետ կնքած ուխտը և յուրաքանչյուր իսրայելացու տաս պատվիրան պարգևեց, այսինքն՝ աստվածային օրենք, որ իր հիմնական կետերում աննախադեպ է և իրենից ողջ աշխարհի համար եզակի մի երևույթ է ներկայացնում[3]:

Մինչ այդ պահը մարդկությունը միաստվածությանը դառնալուն ուղղված որոշ ջանքեր էր գործադրել: Այդ փորձերից մեկը ձեռնարկեց եգիպտացի փարավոն Ամենոփիս IV–ը (Ամենհոտեպ կամ Էխնաթոն)՝ 18–րդ հարստության (Ք. ա. 1703–1462 թթ.) շրջանում: Հետևելով հոր (Ամենոփիս III–ի) նկրտումներին՝ նա փորձեց Ամոնի պաշտամունքի փոխարեն՝ հանձին արեգակի ստեղծու, միաստվածություն հաստատել: Մեկ ուրիշ փորձ ձեռնարկվեց Միջագետքում, որտեղ որոշեցին բոլոր հեթանոսական կուռքերին միավորել հանձին մեկի՝ ռազմի աստված Նինուրտուայի: Սակայն այս միանգամայն մարդկային և ամբողջովին հեթանոսական նկրտումները՝ մարդու հոգու զորեղ փափագը՝ իր անձը աղերսակցելու մի, ճշմարիտ Աստծո սիրո հետ, Ումից հեռացել էր,

1 **Kenyon F.,** The Bible and Archaeology. N. Y.: Harper, 1940. P. 162.
2 **Short A. R.,** Op. cit. P. 28-29.
3 The Israelites. Time-Life (International). P. 68.

ոչնչի չհանգեցրեց: Մինչդեռ հավատն առ ճշմարիտ Աստված, Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված, հավատն առ Ամենակալ Տեր Աստված, առ աշխարհի մշտնջենական Աստված և անառարկելի վեհությամբ տաս պատվիրաններում շարադրված Իր սրբազան, կատարյալ և հավիտենական օրենքը, նվաճեց աշխարհը: Այդ ժամանակներից ի վեր Աստծո ժողովուրդը (Հին Կտակարանում՝ Իսրայելի ժողովուրդը, Նոր Կտակարանում՝ շնորհի նոր Իսրայելը, այսինքն՝ Քրիստոսի Եկեղեցին, որը պահում է Հին Կտակարանի օրենքը՝ Մեսիա¬Քրիստոսի քարոզությամբ իր լրումին և ավարտին հասած) ճանապարհ ընկավ աշխարհի անապատով և ընթանում է դեպի «Ավետյաց երկիր»՝ Վերին Երուսաղեմ: Եվ իր պարտքն է համարում խուսափել մեղքից և ապրել Ամենակալ Աստծո սրբազնագույն կամքի համաձայն, Ով հայտնվեց Աբրահամին, Իսահակին և Հակոբին, ապա և Սինա լեռան վրա՝ Մովսեսին, մարգարեներին և վերջապես Հուդայի թագավոր Հերովդեսի և հռոմեացի կայսր Օգոստոսի օրոք Իրեն, իբրև Աստվածամարդ Տեր, հայտնեց բովանդակ աշխարհին: Եվ Նույն Ինքը՝ Տեր Աստված՝ Մարդու Որդին, կգա նաև երկրորդ անգամ՝ սուրբ, մարդասեր և փրկարար օրենքով դատելու աշխարհը, այսինքն՝ հենց այն նույն օրենքով, որն Աստված շնորհեց Մովսեսին, և որը հետագայում կատարելապես իր լրումին հասավ Աստվածամարդ Տեր Հիսուսով:

ՔԱՆԱՆԸ՝ ԵՐԿԱԹԻ ԵՎ ՊՂՆՁԻ ԵՐԿԻՐ

Երբ Մովսեսը, Աստծո պատգամին անսալով, հորդորում էր ժողովրդին նվաճել Քանանը, իմիջիայլոց ասաց. «Դա մի երկիր է, որտեղ քարերը երկաթ են, իսկ նրա լեռներից կարող ես պղինձ ստանալ» (Բ Օր. 8. 9), այսինքն՝ երկիր, որի քարերը երկաթի նման են (կամ ընդերքում երկաթաքարի հանքեր կան), իսկ լեռները հարուստ՝ պղնձի հանքաշերտերով:

Ընդսմին Սուրբ Գրքում ասվում է, որ երբ Մովսեսը փարավոնի արքունիքից փախավ, իր համար ապաստան ընտրեց մա-

դիանացիներով բնակեցված մի լեռնային տեղանք: Մադիանացիները ապրում էին Կարմիր ծովի Աքաբայան նեղուցի արևելյան ափին: Մովսեսը գնաց նրանց մոտ, քանզի այդ ցեղի հետ հեռավոր ազգակցական կապ ուներ: Մադիանացիները սերում էին Մադիանից՝ որդուց Աբրահամի և Քեթթուրայի, ում Աբրահամը Սառայի մահից հետո կնության առավ (Ծննդ. 25. 1–2): Այս ցեղից էր Հոթորը (կամ Հռագուելը)՝ Մովսեսի աները, հետևաբար նաև Հոթորի դուստրը և Մովսեսի կին Սեփորան (Ելք 2. 17–21; 18. 2, Թվեր 10. 29): Սույն ցեղի որոշ ներկայացուցիչներ Հին Կտակարանում կինեցիներ են կոչված՝ ի մասնավորի Հոբաբը՝ Մովսեսի կնոջ եղբայրը, իսրայելացիներին միացած կինեցի (կինետցի) էր: Սակայն «կինեցի» կամ «կինետցի» բառը նշանակում է դարբին, քանի որ արաբերեն «կայնը» և արամերեն «կաինայա» բառերը դարբնի իմաստ ունեն: Այդ բառի նույն արմատն ու նշանակությունը պահպանվել է նաև հին եբրայերենում[1]:

Սուրբ Գրքի պատմական վկայությունների արժանահավատության քննադատները երկար տարիներ պնդում էին՝ Քանանում հանքերի գոյությունն ընդամենը «բարեպաշտ փափագ» էր: Սակայն հնագիտությունը ապացուցեց Սուրբ Գրքի վկայությունների իսկությունը և հաստատեց, որ մադիանացիների՝ իբրև դարբինների բնորոշումը ճիշտ է, իսկ երբեմնի նրանց պատկանած շրջանը՝ հարուստ երկաթի և մանավանդ պղնձի հանքավայրերով: Մասնավորապես ամերիկացի հնագետ Նելսոն Գլյուկի ղեկավարությամբ կատարված պեղումները հաստատեցին, որ այդ տարածաշրջանում՝ Մեռյալ ծովից հարավ, հնագույն ժամանակներում պղինձ էր արդյունահանվում: Իր պրպտումների ընթացքում Գլյուկը Պաղեստինի հարավում՝ Կիրբեթ–ան–Նահասում՝ Մեռյալ ծովից 37 կմ դեպի հարավ, մեծ թվով հանքեր հայտնաբերեց: «Շրջակայքի բլուրները պատված են կիսավեր հնոցներով, իսկ տարածքի մակերեսը բացարձակապես սևացած է պղնձի արդյունահանության թափոններից: Հողի մակերեսին դեռ նշմարվող պղինձ պարունակող հանքերակները թույլ էին

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 70. **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 157.

տալիս բաց եղանակով հանքն արդյունահանել: 5,5 կմ շառավղի վրա Գլյուկը ևս 3 հանքավայր և պղնձի ձուլման տեղեր հայտնաբերեց, որոնց մասին դեռ ոչ մի հաղորդագրություն և հրապարակում չէր եղել»[1]: Հնագետ Ջ. Ա. Թոմպսոնը նշում է, որ Սողոմոն թագավորի՝ հանքաքարի վերամշակման հրաշալի դոմնյան վառարանները հենց այս տեղանքում են գտնվել[2], այսինքն՝ ինչպես որ նշեցինք գլխի սկզբում (Բ Օր. 8. 9), Աստծո՝ Մովսեսի շուրթերով ժողովրդին հայտնած խոսքերից շուրջ 400 տարի անց: Հատուկ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Մովսեսը հենց այս վայրում պղնձե օձ պատրաստեց և ի տես բոլորի՝ այն ագուցեց ձողի վրա (Թվեր 21. 8): Այն իսրայելացիները, ովքեր ապաշխարությամբ և հավատով էին նայում այդ պղնձե օձին՝ թողություն խնդրելով և Աստծո ամենազորությունը խոստովանելով, փրկվում էին (հմմտ. նաև Իմաստ. 16. 5–7)՝ Աստծո պատիժն իրականացնող՝ մարդկանց վրա հարձակված օձերի մահացու խայթոցներից ապաքինվելով (Թվեր 21. 9): Բացի այդ Եդոմ տանող ճանապարհին հանդիպած քաղաքներից մեկը Փենովն էր (Թվեր 33. 42): Փենովը արդի Ֆեյնանն է, որը գտնվում է պղնձով հարուստ այն տեղանքում, որտեղ հեռավոր անցյալի զանազան ժամանակներում պղինձ էր ձուլվում[3]: Պղնձի և երկաթի հանքավայրերի մասին տեղեկություն հրապարակելով՝ հնագետ Գլյուկը շատ դիպուկ նկատում է. «Արդարև, որքան հավաստի են Սուրբ Գրքի վկայություններն այն երկրի մասին, որի քարերը երկաթ են, իսկ լեռներից կարող ես պղինձ ստանալ» (Բ Օր. 8. 9)[4]:

1 **Free J. P.,** Archaeology…P. 122; Glueck N. Explorations in Eastern Palestine and Negeb// Bulletin of the American Schools of Oriental Research. Sept.,1934, №. 55. P. 3-21. Տես նույն հեղինակի The Other Side of Jordan. N. Heaven: American Schools of Oriental Research, 1940. P. 59.

2 **Thompson J. A.,** Op. cit. P. 70.

3 **Thompson J. A.,** Op. cit. P. 70.

4 **Glueck N.,** The River Jordan. Philadelphia: The Westminster Press,1946. P. 146.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ «ՄՈՒԹ» ՏԵՂԵՐԻ ԼՈՒՅՍԸ

Հնագիտությունը լույս սփռեց նաև այն երեք մանրամասնությունների վրա, որոնք Հին Կտակարանի աստվածաշունչ բնագրի որոշ տեղերը՝ «մութ» կամ իմաստազուրկ համարելու տեղիք էին տալիս: Ահա դրանք.

1) Հին Կտակարանում ասվում է, որ իսրայելացիներն սպանում և ոչնչացնում էին իրենց թշնամիներին սրերով (Ելք 17. 13, Բ Օր. 13. 15; 20. 13, Թվեր 21. 24): Հին եբրայական բնագրի նույն տեղում ասվում է, որ նրանք թշնամիներին սպանում և կլանում էին «սրի բերանով»: Ինչպես ապացուցեցին հնագիտական գտածոները, այս բառերը ճշտությամբ հաղորդում են, թե ինչպես էին իսրայելացիներն իրենց թշնամիներին կոտորում. պեղումները երևան հանեցին սրեր, մեծ չափերի դանակներ, ռազմական տապարներ և այլ զենքեր, որոնք օգտագործվում էին մարտի ժամանակ և որոնց դաստակները մեծավ մասամբ պատրաստված էին կատաղած գազանների լայնաբաց երախների տեսքով, այնպես որ թվում էր, թե իբր մահաբեր սայրը վայրի գազանի երախից է ելնում: Այնպես որ «սպանել նրանց կամ կլանել սրի երախով» արտահայտությունը չափազանց դիպուկ է[1]:

2) Մովսեսը պատվիրեց իսրայելացիներին՝ Քանանում բնակություն հաստատելուց հետո տեղի ժողովուրդների հետ դաշինք չկնքել, խնամիություն չանել ու ազգակցական կապեր չհաստատել. նմանապես շեշտեց չխնայել այդ ժողովուրդներին, այլ անողոք բնաջնջել իրենց կուռքերով ու մեհյաններով հանդերձ: Այլ կերպ ասած՝ հարկ էր ոչնչացնել թե՛ հեթանոսներին և թե՛ հեթանոսությունը: Մովսեսը բացատրեց նրանց, որ այդ բանը պետք է անել իսրայելացիների աստվածընտրյալ և սուրբ ժողովուրդ լինելու պատճառով. «Դու ես քո Տեր Աստծո սուրբ ժողովուրդը, և քո Տեր Աստվածը քե՛զ է ընտրել, որ դու լինես Նրա սեփական ժողովուրդը» (Բ Օր. 7. 1–6), որը իրեն նվիրել է Աստծուն: Ուստի պետք

1 **Thompson J. A.** Op. cit. P. 70.

չէ վիրավորել իր Բարերարին, այլ անարատ մնալ, քանզի քեզնից՝ այս ժողովրդից է ելնելու Մեսիան՝ Քրիստոսը՝ մարդկային ցեղի Փրկիչը: Կասկած չկա, որ այս պահանջները աստվածընտրյալ ժողովրդին բավական խիստ թվացին: Շատ հնարավոր է, որ հենց այս պատճառով նրանք մինչև վերջ չկատարեցին այս պատվիրանը և արդյունքում պատժվեցին Աստծուց:

Հնագիտությունը օգնում է այս հարցից էլ գլուխ հանել՝ իր հայտնագործությունների արգասիքներով վավերացնելով, որ հիրավի քանանացիները աստվածընտրյալ ժողովրդի համար մահացու վտանգ էին ներկայացնում: Հնագիտական պեղածոները անհերքելիորեն ապացուցեցին, որ քանանացիներն այդ ժամանակներում մարդկանց զոհաբերություններ էին կատարում (մորթում և զոհում էին մանուկներին), նրանց մեհյանները հասարակաց տներ էին, ուր իշխում էր գարշելի անառակությունը, իսկ բարքերը աչքի էին ընկնում աներևակայելի ցածր մակարդակով, և ըստ այդմ էլ աստվածընտրյալ ժողովուրդը լուրջ հոգևոր վտանգի առաջ էր կանգնած[1]: Ուստիև դրանից փրկվելու համար անհրաժեշտ էր ոչնչացնել քանանացիներին:

Քանանացիների ու փղշտացիների պտղաբերության և ռազմի դիցուհիները՝ Աստարտն ու Անաթը, անագորույն ու վայրենաբարո էին: Պեղումներից հայտնաբերված Բահաղ չաստծուն նվիրված ուգարիթյան մի վիպերգության մեջ, ի շարս այլոց, հիշատակվում է նաև այն մասին, որ դիցուհի Անաթը. «մինչև ծնկները, մինչև պարանոցը արյան մեջ էր ընկղմված: Նրա ոտքերի առաջ մարդկանց գլուխներ էին թափթփված, իսկ շուրջը, ինչպես մորեխի տարմ, մարդկային դողդոջուն, կարկառուն ձեռքեր: Իր զոհերի հատած գլուխները, իբրև պչրանք, կախում էր մեջքից, իսկ ձեռքերը՝ գոտկատեղից: Իսկ արածից բավարարվելիս՝ մարդկային արյան հեղեղում լվանում էր ձեռքերը, որպեսզի վերստին դառնա իր անավարտ մնացած գործերին»: Դիցուհի Անաթը հողմի և անձրևի չաստված Բահաղի քույրն ու կինն էր[2]:

1 **Free J. P.** Archaeology…P. 123.
2 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 370-372.

Միտանիական կնիքի դրոշմվածք մարդկային զոհաբերության տեսարանով:
Ք. Ա. 2-րդ հազարամյակ:

Մի ուրիշ պատճառով էլ էին քանանացիները վտանգավոր աստվածընտրյալ ժողովրդի համար: Մատնանշելով այդ՝ պրոֆեսոր Թոմպսոնը նկատում է. «Քանանացիների՝ արհեստների, ճարտարապետության, առևտրի և կենսագործունեության այլ ոլորտներում ակներև առավելությունը, անտարակույս, իսրայելացիների վրա մեծ տպավորություն էր թողնում: Ուստի հարկ չկա զարմանալու, որ աստվածընտրյալ ժողովրդից որևէ մեկը երևակայեր, թե իբր քանանացիների գերազանցությունը իրենց իսկ կրոնի առավելությամբ է պայմանավորված»[1]:

Սակայն բոլոր այս տվյալները՝ քանանացիների հեդոնիստական՝ վայելքապաշտական կրոնական պաշտամունքն ու արհեստների և առևտրի ոլորտում գերազանցությունը, անհայտ էին մնում մինչ հնագիտական հայտնագործությունների միջոցով քանանացիների և Ռաս–Շամրայի փյունիկյան մշակույթին ծանոթանալը: «Միայն այն բանից հետո, երբ հրապարակվեցին քանանական չաստվածների դիցարանին ու կրոնին նվիրված գիտական հետազոտությունների արդյունքները, հնարավոր դարձավ լրջորեն գնահատել այն բարոյական պայքարը, որը վիճակված էր մղելու իսրայելացիներին: Արդարև, որքան մեծ էր գայթակղությունը հասարակ հովվական ժողովրդի համար և որքա՛ն վտանգավոր էր նրանց նետված մարտահրավերը: Բազմիցս է Բահաղ չաստծո պաշտամունքն իր ազդեցությունը տարածել՝ թափանցելով ճշմա-

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 85-86.

րիտ Աստծո սրբավայր ու հասնելով մինչև իսկ սրբությունների սրբություն»[1]:

Նյութերի հնագիտական քննության արդյունքում այլևս որևէ կասկած չկա, թե ինչու Աստված Մովսեսին պատվիրեց ոչ միայն արգելել քանանացիների հետ խնամիությունը, այլև հրամայեց բնաջնջել նրանց:

Բահաղը: Բարձրաքանդակ Ուգարիթից (Ռաս-Շամրա:) Ք. ա. 2-րդ հազարամյակ:

3) Աստվածընտրյալ ժողովրդին շնորհված ժխտական օրենքների մեջ կա մեկը, որը Հնգամատյանում երեք անգամ է հիշատակվում: Այս պատվիրանն ասում է. «Ուլն իր մոր կաթի մեջ չեփես» (Ելք 23. 19; 34. 26, Բ Օր. 14. 21), այսինքն՝ ուլն իր մոր կաթի մեջ չպիտի եփես կա՛մ քանի դեռ ուլն իր մոր կաթն է ուտում, չպիտի նրան զոհաբերե՛ս և ուտես, կա՛մ չի կարելի մորից կտրելով՝ եփել ուլին, քանզի այսու կսկիծ կպատճառես նրա մորը:

Սույն պատվիրանը Սուրբ Գրքի մեկնիչների և քննադատների մեծամասնության համար հասկանալի չէր. այն անիմաստ էր թվում: Սակայն դարձյալ Ռաս–Շամրայի կավե սալիկների գյուտի շնորհիվ բոլոր կասկածներն ի դերև ելան: 1928 թ. մի գյուղացի ծովափին իր հողակտորը հերկելիս՝ դեպի դամբարան տանող ստորգետնյա անցում հայտնաբերեց: Դա միկենեյան տիպի գմբեթավոր դամբարան էր: Կլոդ Շեֆֆերը Ռաս–Շամրայում գործի լծվեց, որի մասին մենք արդեն խոսել ենք, և որը թույլ տվեց հայտնագործել բազում կավե սալիկներ՝ Ք. ա. մոտ 12–րդ դարի երկրորդ կեսի Միջերկրայքի հնագույն քաղաքակրթության մասին շատ արժեքավոր տեղեկություններով հանդերձ:

Այսպես՝ դրանցից մի քանիսի մեջ, ի շարս այլոց, խոսվում է նաև հեթանոսական զոհաբերությունների մասին: Բնագրում ուղղակի ասված է. «Մոր կաթի մեջ մորթել գառը (կամ ուլը)» և

1 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 372-373.

չաստվածությանը զոհ մատուցել: Վերոբերյալից պարզ է դառնում, որ Մովսեսն իր խոսքով այս դաժան հեթանոսական սովորույթը նկատի ունի: Միակ տարբերությունն այն է, որ սրբազան բնագրում գործածված են «պատրաստել» կամ «եփել» բայերը, իսկ հեթանոսականում՝ «մորթել»[1]: Անշուշտ, այս աննշան տարբերությունը չի փոխում ընդհանուր իմաստը: Այսպես ուրեմն, պարզ է դառնում, թե ինչու Աստված այսպիսի արգելք դրեց Իր ժողովրդի համար. այս եղանակով Տերը իսրայելացիներին հորդորում էր չհետևել հեթանոս–քանանացիներին և չընդօրինակել նրանց հեթանոսական ծիսակատարությունները:

Վերոնշյալը հանգեցնում է հետևյալ եզրակացության. առանց Մովսեսին շնորհված Աստծո օրենքի, ինչպես և ժողովրդի՝ այդ օրենքի հանդեպ նախանձախնդրության, Իսրայելը չէր կարող դիմակայել այդ հեթանոսական կուռքերի վտանգավոր գայթակղություններին:

ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՆԸ

Ելք գրքի վերջին տասնվեց գլուխներն առավելապես նվիրված են վկայության խորանի պատրաստությանը: Նրա խորհուրդը բացահայտվում է Մովսեսին ուղղված Աստծո խոսքերում. «Ինձ համար սրբարան կկառուցես և Ես կերևամ ձեզ» (Ելք 25. 8):

Սուրբ Գրքի հավաստիության հակառակորդները վիճարկում են խորանի գոյության փաստը: Բայց նրանք իրավացի չեն: Ինչպես նշում է հնագետ Ջ. Ա. Թոմպսոնը. «Շարժական սրբազան Ուխտի տապանակի գաղափարը անսովոր և միայն Իսրայելին չէր հատուկ: Հնագիտական գտածոների մեջ կան բագինների (խորան–սրբարանների) պատկերներ, որոնք թվագրվում են Ք. ա. 3–րդ դարով, իսկ հին հունական պատմիչ Դիոդորոս Սիկիլացին հաղորդում է, որ Ք. ա. 7–րդ դարում փյունիկեցիներն իրենց

1 **Free J. P.,** Op. cit. P. 123.

հետ տանում և պատերազմի ժամանակ բագին–խորաններ էին օգտագործում: Իհարկե, սրանք ուշ շրջանի են պատկանում, բայց դրանց գոյությունը ցույց է տալիս, որ դրանք հին աշխարհում հայտնի էին»: Թոմպսոնը ավելացնում է. «Վկայության խորանի կառուցվածքն ու պատրաստությունը սովորական և ծանոթ էին Իսրայելին ժամանակակից ժողովուրդներին և հատկապես քանանացիներին»: Ուխտի տապանակ պատրաստելու համար օգտագործված նյութերը դյուրությամբ կարելի էր գտնել իսրայելական ժողովրդի դեգերման վայրերում: Ընդհանուր առմամբ վերջին տարիներին վկայության խորանի շուրջ բանավեճերը գիտնականներին բերեցին այն համոզմանը, որ անապատում վկայության խորանի մասին Սուրբ Գրքի վկայություններին այսօր պետք է վերաբերվել առավել մեծ ակնածանքով, քան (գիտնականներն ու քննադատները – Ն. Վ.) անցյալում»[1]:

Վկայության խորանի պատրաստության ժամանակ օգտագործված նյութերի շուրջ ծավալված վեճերի առնչությամբ կանգ առնենք հնագետների բերած երկու փաստարկների քննության վրա: Ըստ հին եբրայական բնագրի՝ փոկի կաշվից պատրաստված չորրորդ ծածկոցի մասին հնագետ Ջ. Ֆրին նկատում է. «tahash հին եբրայական բառը ոմանք թարգմանում են «փոկ», մյուսները՝ «դելֆին», իսկ ոմանք էլ՝ «ծովային կետ»: Պետք է ասել, որ ծովային այս կենդանիների երեք տարատեսակներն էլ ապրում են Սինայական թերակղզուց ոչ հեռու, այնպես որ tahash բառի թարգմանության բոլոր երեք տարբերակներն էլ հնարավոր են»[2]:

Ներկայության խորանի սրբազան իրերի պատրաստման հիմնական նյութը պղինձն էր (Ելք 25. 3 35. 5,24): Ելք գրքում ասվում է, որ պղնձե ավազանն ու պղնձե պատվանդանը պատրաստելիս օգտագործվեցին վկայության խորանի դռան մոտ հավաքված ուխտավոր կանանց հայելիները (Ելք 38. 26, ըստ հունական բնագրի): Ընդդիմախոսները պնդում են, որ Մովսեսի դարաշրջանում պղնձե հայելիներ չեն եղել, հետևաբար, Ելք գրքի այս հատվածն ավելի ուշ շրջանի է պատկանում: Սակայն հնագիտությու-

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 72.
2 **Free J. P.,** Op. cit. P. 107.

նը այսօր մի քանի գտածոների հիման վրա հաստատում է, որ հին Եգիպտոսում Ք. ա. 1500 թ.–ից մինչև 200 թ. ընկած ժամանակահատվածում պղնձե կամ բրոնզե հայելիներ են օգտագործել: Հին Եգիպտոսի պատմության այդ շրջանը ժամանակագրորեն հարաբերակցվում է Մովսեսի և Եգիպտոսից Իսրայելի ելքի դարաշրջանին: Եգիպտոսում պեղումների ընթացքում բազմաթիվ այդպիսի հայելիներ գտնվեցին: Սա փաստում է, որ հայելիների այս տարատեսակը գործածության մեջ է եղել խոր անցյալում, և որ դրանք, անկասկած, իսրայելական կանանց կենցաղի մասն էին կազմում: Հնարավոր է նույնիսկ, ինչպես ենթադրում է հնագետ Ջ. Ֆրին, որ իսրայելացիները հարկ եղածից ավելի շատ հայելիներ ունենային՝ պայմանավորված ելքի նախօրեին եգիպտացիների՝ իսրայելացիներին շռայլորեն նվերներ տալու հանգամանքի հետ (Ելք 11. 1–2, 12. 35,36), քանի որ մեծ աղետներից խուսափելու համար ձգտում էին արագ ազատվել նրանցից: Համենայն դեպս յուրաքանչյուր մարդ կարող է իր աչքերով տեսնել այդ հին եգիպտական հայելիները ԱՄՆ–ի խոշոր հնագիտական թանգարաններում, օրինակ՝ Չիկագոյի բնական պատմության և Չիկագոյի համալսարանի արևելագիտության ինստիտուտի թանգարաններում:

ՅՈԹԹԵՎԱՆԻ ԱՇՏԱՆԱԿԸ: ԿՈՒՌՔԵՐ ՊԱՇՏԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԸ

Հին Կտակարանի հավաստիությունը ժխտողները վիճարկում են ոչ միայն վկայության խորանի գոյությունը, այլև նրա հետ առնչվող առարկաներն ու իրերը: Զորօրինակ՝ նրանք կարծում են, որ Մովսեսի օրոք յոթթևանի աշտանակի գոյությունն անհնար է ընդունել և ենթադրում են, որ այն ստեղծվել է Ք. ա. 600–500 թթ. կամ 500–300 թթ.: Այս փաստարկների անհիմն լինելը պարզվեց Թելլ–Բեյթ–Միրսիմում, այսինքն՝ հին Դաբիրում (Քեբրոնից 20 կմ դեպի հարավ–արևմուտք) կատարված

պեղումներից: Այդ տեղանքի պեղումների ընթացքում, որոնք անցկացվեցին ամերիկացիներ Օլբրայթի և Կայլի ղեկավարությամբ 1926–1928 և հաջորդ տարիներին, հայտնաբերվեցին Ք. ա. 1200–900 թթ. թվագրվող (բայց ոչ Ք. ա. 900 թ. ուշ) իրեր: Գտածոների մեջ կային պատրույգների համար նախատեսված յոթ ծորականի կավե աշտանակներ. այս ծորակները ճյուղավորվում էին բաժանարարից՝ կենտրոնական ճյուղի և մյուս յոթ ճյուղերի միավորման տեղից:

Յոթթևանի աշտանակի՝ ուշ շրջանում ստեղծվելու մասին քննադատների պնդումների վերաբերյալ Օլբրայթը նկատում է. «Ի հեճուկս վերոհիշյալ կարծիքի կողմնակիցների՝... նմանօրինակ կանթեղներ հայտնաբերվեցին Թելլ–Բեյթ–Միրսիմում, ինչպես և Պաղեստինի այլ շրջանների նույն ժամանակի հնագիտական շերտերում» (սրանք թվագրվում են Ք. ա. մոտ 1200 թ.): Օլբրայթը հավելում է. «Ես ամբողջ հոգով դեմ եմ վկայության խորանի իրերի ավելի ուշ շրջանով թվագրելու փորձերին»[1]:

Օլբրայթի այս եզրակացությունների կապակցությամբ Ֆրին գրում է. «Բնավ ոչ մեկին էլ պետք չէ վկայության խորանը իր կահավորանքով հանդերձ լույս աշխարհ հանել միայն մի նպատակով, այն է՝ ապացուցել, որ սկեպտիկների՝ իբր ավելի ուշ շրջանում վկայության խորանի ստեղծման մասին կարծիքը ճիշտ չէ: Ընդդիմախոսների սույն փաստարկը միանգամայն սուբյեկտիվ է: Այն պահից ի վեր, ինչ մենք յոթթևանի աշտանակ հայտնաբերեցինք, որը պատկանում է հնագույն դարաշրջանին, մեր ձեռքին իրեղեն ապացույց կա այն բանի, որ սկեպտիկների կարծիքը բավական անհիմն է»[2]:

Մովսեսի տասնաբանյայի երկրորդ պատվիրանը Աստծո ժողովրդին արգելում էր մարդկանց կամ կենդանիների և անշունչ առարկաների նմանությամբ կուռքեր կերտել (Ելք 20. 4): Այն շնորհվել էր միմիայն մի նպատակով, այն է՝ ետ պահել ժողովրդին Պաղեստինի քանանացիներին բնորոշ կռապաշտությունից: Այսօրվա դրությամբ հնագիտության տրամադրության տակ չաստ-

1 **Albright W. F.,** Archaeology of Palestine and the Bible. N. Y.:Revell,1935. P. 159.
2 **Free J. P.,** Op. cit. P. 110.

վածների պատկերներով հսկայական քանակությամբ հուշարձաններ, քարե կոթողներ, ինչպես նաև կուռքերի և չաստվածների փոքրիկ պղնձե արձանիկներ կան: Սրանց թվին կարելի է դասել նաև ոչ մեծ կավե արձանիկները, որոնք, ըստ երևույթին, տնային օջախի չաստվածներից են, ինչպես թերափները, որոնց մասին հիշատակվում է Հին Կտակարանի բնագրում[1]:

Սուրբ Գրքի հավաստիության հակառակորդները պնդում են, որ Աստված իսրայելացիների կռապաշտության պատճառով նրանց երկրորդ պատվիրանը շնորհեց: Այս պատվիրանով Աստված արգելում էր նրանց կուռքեր պաշտել: Սակայն ամերիկացի հնագետ պրոֆեսոր Էռնստ Ռայթը նշում է, որ պեղումների արդյունքում երբեք չի գտնվել հրեաների Աստծո (Եահվեյի) կուռքը: Այսպես օրինակ՝ Չիկագոյի համալսարանի հնագիտական արշավախմբի անդամները Մակեդոնիում բազմաթիվ կուռքեր են պեղել, բայց «ոչ մի անգամ մեր ձեռքը չընկավ Եհովայի թեկուզ մեկ կուռք[2]»: Այսպիսով հնագիտությունը պարզորոշ վկայում է, որ ուղղադավան իսրայելացիները կուռքեր չեն պաշտել: Այս պատվիրանն այնքան խոր արմատներ էր արձակել իսրայելացիների հոգիներում, որ նույնիսկ զանցառուները երբեք Աստծո կուռքեր չէին կերտում, այլ բավարարվում էին Բահաղի և պտղաբերության ու առատության մյուս չաստվածների պատկերներով:

Ի սկզբանե Աստծո ժողովուրդը միաստվածական էր: Նրա կրոնը երբեք չի անցել անիմիզմից՝ ոգեպաշտությունից բազմաստվածության, ապա և միաստվածության զարգացման ճանապարհով, ինչպես ասում են Սուրբ Գրքի քննադատները: Իր պատմության առաջին իսկ էջից այս ժողովուրդը պաշտել է Մի, Ճշմարիտ, Կենդանի Աստծուն, Ով հայտնեց Իրեն Աբրահամին, և շարունակել է մնալ այդպիսին՝ պահելով այն պատվիրանը, որն Աստված շնորհեց նրան Սինա լեռան վրա: Հայտնի է, որ այս պատվիրանի յուրաքանչյուր զանցառում շատ ծանր հետևանքներ ունեցավ Աստծո ժողովրդի համար:

1 **Burrows M.,** Op. cit. P. 189, 218-220.
2 **Wright G. E.,** The Terminology of Old Testament Relegion and Its Significance// Journal of Near Eastern Studies. Vol. I. № 4, October,1942. P. 413.

ՄՈՎՍԵՍԻ ՀԵՏԱԽՈՒՅԶՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իսրայելացիները շուրջ մեկ տարի աստվածային Սինա լեռան մոտ հանգրվանեցին: Պաղեստինի հարավային մասում դեգերելուց հետո հասան Կադես (Թվեր 33. 36) և սկսեցին նախապատրաստվել Քանանի տարածք ներխուժելուն: Սակայն մինչ այդ Մովսեսը 12 հետախույզ ուղարկեց՝ տեղանքին ծանոթանալու և հարձակման համար անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու նպատակով: Թվեր գրքի 13–րդ գլուխը նվիրված է նրանց տրված հրահանգներին և հավաքած տեղեկություններին: Հետախույզների տեղեկություններից հատկապես ուշագրավ են երեքը, քանզի հաստատվել են գիտական հետազոտությամբ: Հետախույզները հաղորդեցին, որ տեսել են՝ ա) խոշոր, պաշտպանված և պարիսպներով ամրացված քաղաքներ, բ) բազմացեղ բնակչություն, գ) հարուստ ու արգավանդ հողեր: Հենց այս երեք կետերի տվյալներն էլ հաստատվեցին հնագիտական գտածոներով:

Իրոք, ըստ հնագետ Թոմպսոնի, այդ ժամանակաշրջանում Պաղեստինում բազմաթիվ պարսպապատ ամրոցներ կային: Պաղեստինում ավատական կառավարման համակարգը պաշտպանված կենտրոններ էր պահանջում: Տեղական արքաները կամ կառավարիչները, թեպետ և պարտավոր էին փարավոնին հարկեր վճարել և ընդունել նրա գերիշխանությունը, այդուհանդերձ բավական ինքնիշխան էին: Այդ պատճառով էլ քանանական արքաների միջև հաճախ պատերազմներ էին ծագում: Եգիպտոսի իշխանության թուլացման պարագայում նրանք իսկույն ելնում էին նաև փարավոնի դեմ: Այդ ընդվզումներից մեկը տեղի ունեցավ Էխնաթոն (Ք. ա. շուրջ 1370–1353 թթ. կամ քիչ ավելի ուշ) փարավոնի գահակալության օրոք: Փարավոնին հավատարիմ արքաներն օգնության խնդրանքով ուղերձ հղեցին Էխնաթոնին, ով պետության մայրաքաղաքը տեղափոխել էր Նեղոսի հունից ոչ հեռու գտնվող Ամառնա:

XIX դ. վերջում (1887 թ.) Թելլ–ալ–Ամառնա գյուղից մի գեղջկուհի պատահաբար ավերակներում մի քանի կավե սալիկներ գտավ, որոնք այդ նամակագրության մի մասն էին: Այսպես պեղվեց 337 սալիկ, որոնք այժմ հայտնի են Թելլ–ալ–Ամառնայի սալիկներ անվամբ: Այստեղ կան նաև պաղեստինյան արքաների և Ամենհոտեպ III–ի և նրա որդու՝ Ամենհոտեպ IV–ի կամ Էխնաթոնի միջև նամակագրության նմուշներ, որոնք հարուստ տեղեկություններ են տալիս Քանանն իսրայելացիների կողմից գրավելուց 100 տարի առաջ Պաղեստինի քաղաքական դրության մասին[1]: Մասնավորապես սալիկներում խոսվում է պարիսպներով ամրացված տարբեր քաղաքների մասին[1]: Լավ պաշտպանված բազմաթիվ քաղաքները բնականաբար պետք է ուժեղ տպավորություն թողնեին Մովսեսի հետախույզների վրա, քանի որ Գեսեմում, որտեղ մինչ այդ բնակվում էին իսրայելացիք, միակ ամրացված քաղաքը Ռամեսեն էր:

Հնագիտությունը հաստատեց նաև հետախույզների՝ Քանանի բնակչության բազմազգ լինելու վերաբերյալ երկրորդ տեղեկությունը, այն է՝ քեթացիներ, ամաղեկացիներ, խևացիներ, հեբուսացիներ, ամորհացիներ և քանանացիներ (Ելք 13. 19–30): Թելլ– ալ–Ամառնայի նամակագրության մեջ պահպանվել են բազմաթիվ անուններ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել իսրայելացիներին անծանոթ, այնժամ Պաղեստինի տարածքում տարաբնակ օտար ցեղերի մասին[2]:

Մովսեսի հետախույզների հավաստի տեղեկություններն այն մասին, որ այդ անծանոթ երկիրն այնքան բերրի է, որ այնտեղ «կաթ ու մեղր է հոսում» (Թվեր 13. 28), նույնպես հաստատվեց: Ավելի վաղ շրջանի հին եգիպտական բնագրերը Պաղեստինը բնորոշել են իբրև բերրի և հարուստ երկիր: Շնորհիվ հնագետների ջանքերի՝ գիտնականների ձեռքն ընկավ հույժ արժեքավոր գրավոր մի աղբյուր՝ եգիպտացի կառավարիչ Սինուհեթի («Սինուհեթի մասին պատմվածքը») տեղեկությունը, ով Պաղեստին էր ժա-

1 **Pritchard J. B.,** The Ancient Near East, Vol. I. Princeton Univ. Press,1973. P. 262-277. **Thompson J. A.** Op. cit. P. 68.
2 **Pritchard J. B.,** Op. cit. Thompson J. A. Op. cit. P. 68-69.

մանել իսրայելացիներից 650 տարի առաջ (Ք. ա. 1971–1928 թթ.) և ապրել ամորհական ցեղերի առաջնորդների (ինչպիսիք Աբրահամը, Լաբանն ու Հակոբն էին) օրոք: Սինուհեթը հիանում է Պաղեստինով և այն հարուստ երկիր անվանում, ինչպես այդ մասին վկայեցին Մովսեսի 12 հետախույզները[1]: Բացի այդ, հնագետների և հետազոտողների ձեռքին տեղեկություն կա եգիպտական փարավոն Փիփի I–ի (Ք. ա. մոտ 2350 թ.) ռազմական արշավանքների մասին: Այստեղ նույնպես վառ գույներով է տրված հարուստ ու արգավանդ Ավետյաց երկրի նկարագրությունը[2]:

ՔԱՆԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Ինչ վերաբերում է Քանանի նվաճմանն ու Իսրայելի՝ Ավետյաց երկրում հաստատմանը, ապա Հեսու Նավեի գրքում շարադրված է ռազմական գործողությունների երկու փուլ: Առաջին անգամ դրանք սկսվեցին երկրի հարավում, իսկ երկրորդ անգամ՝ հյուսիսում: Հարավում իսրայելացիները գրավեցին և ավերեցին Երիքովը, Գային, Լաքիսը, Դաբիրը, Անոբը և Լեբնան: Գրեթե բոլոր այս քաղաքներն էլ պեղվել են հնագետների կողմից, և երբ հնարավոր դարձավ անցյալի հավաստի պատկերը կազմել, գիտնականները հանգեցին այն եզրակացության, որ այդ քաղաքներն ավերվել են Ք. ա. մոտ 1250 թ.: Այլ կերպ ասած՝ այս քաղաքների ավերման տարեթիվը համընկնում է եբրայեցիների ելքի և Քանանը գրավելու նպատակով Հեսու Նավեի առաջնորդությամբ Հորդանանն անցնելու ժամանակին: Անկասկած, մի շարք հարցեր տակավին իրենց վերջնական լուծումը չեն գտել, զորօրինակ՝ անհայտ է, թե որտեղ է գտնվել Գայի քաղաքը, որը Հեսու Նավեն գրավեց Երիքովին տիրանալուց հետո (հմմտ. Հեսու 7. 8): Սակայն այդ հարցերի պատասխաններն անպայման կգտնվեն, ինչպես պնդում են մինչև իսկ այնպիսի ազատամիտ

1 **Pritchard J. B.,**. Op. cit. P. 5-11
2 **Pritchard J. B.,** Ancient Near Eastern Texts. Princeton: Princeton Univercity Press,1955. P. 18-22, 227. Thompson J. A. Op. cit. P. 69.

Երիքովի գրավումը: Խճանկար, Հռոմ, Սանտա-Մարիա Մաջորե եկեղեցի, 432-440 թթ.:

հնագետներ, որպիսին Օլբրայթն է. «Երևան հանված պեղածոներն ու արձանագրությունները թույլ տվեցին հիմնավորելու Հին Կտակարանի բազմաթիվ վկայությունների ու տեղեկությունների արժանահավատությունը, ընդ որում քանակի առումով այսպիսիք անհամեմատ ավելի շատ են, քան նրանք, որոնց կապակցությամբ մենք միայն ենթադրություններով ենք բավարարվում»[1]:

Երիքովի գրավման առնչությամբ Հին Կտակարանում ասվում է, որ Հեսու Նավեի՝ քաղաք ուղարկած հետախույզներն ապաստան գտան պոռնիկ Ռահաբի տանը. նա էլ օգնեց նրանց փախչելու իր տան պատուհանից, որը քաղաքի պարսպի մեջ էր (հմմտ. Հեսու 2. 1–15): Գարսթանգի ղեկավարությամբ Երիքովում (1930–1936 թթ.) իրականացված պեղումների արդյունքում պարզվեց, որ այդ ժամանակներում Երիքովի պարիսպներում իրապես բնակելի կացարաններ են եղել: Գարսթանգը բացահայտեց, որ Երիքովի պարիսպները կրկնակի էին. արտաքինը 1,82 մ հաստությամբ, իսկ ներքինը՝ 3,65 մ: Պարիսպների հեռավորությունն իրարից 4,57 մ էր: Հաճախ կրկնակի պարիսպների արանքում պահանգներ էին դրվում, որոնք օգտագործվում էին իբրև կամրջակներ, ծառայում նաև որպես քաղաքային պարիսպներում կառուցված տների հենարաններ, քանզի բնակչության խտությունն զգալի էր: Այդ պահանգների բեկորները նշմարվում են հնագետների պեղած պարիսպների փլատակներում: Քաղաքի հյուսիսային մասի տների հիմքերն ավելի ամուր էին. այստեղ պահանգների փոխարեն լայնությամբ աղյուսից շարված նեղ պատեր էին կառուցված,

1 **Albright W. F.,** Archaeology Confronts Biblical Criticism // American Scholar. Spring, 1938, t. 7,№ 2. P. 181.

որոնք լցնում էին ներքին և արտաքին պարիսպների միջև առկա տարածությունը[1]:

Հարավային ուղղությամբ իսրայելացիների ներխուժման վերաբերյալ մեր պատկերացումները հստակ են: Ինչ վերաբերում է Քանան ներխուժելու հյուսիսային ուղղությանը, ապա այս առումով չափազանց ուշագրավ է Գեննեսարեթ լճից 14 կմ հյուսիս ընկած Ասոր քաղաքը, որն իսրայելացիները հրի մատնեցին (Հեսու11. 13): Գարսթանգի գլխավորած հնագիտական արշավախումբը հայտնաբերեց այդ քաղաքը, իսկ պեղումներից պարզ դարձավ, որ այն ամբողջովին հրո ճարակ էր դարձել Ք. ա. մոտ 1400 թ.[2]: Հնագետ Յիգայել Յադինի՝ համակարգված կերպով կատարվող պեղումներից բացվեց ածխացած ավերակների հնագիտական շերտ, որը վկայում է Ասորը կատարյալ ոչնչացման հասցրած մի սարսափազդու հրդեհի մասին[3]: Ըստ Հին Կտակարանի՝ Քանանի ամենապաշտպանված ամրոցներից մեկի՝ Ասորի տակ պարտություն կրեց քանանական թագավորների մի ամբողջ զինակցություն: Ասոր քաղաքի պեղումները ցույց տվեցին, որ այն ընդհուպ մինչև Ք. ա. XIII դարը գտնվելիս է եղել քանանացիների ձեռքում[4]:

Քանանի կենտրոնական մասի նվաճման մասին ձեռքի տակ որևէ տեղեկություն չունենք: Հնարավոր է, որ տեղաբնակները լուրջ դիմադրություն ցույց չեն տվել իսրայելացիներին, ինչպես Գաբավոնի պարագայում էր*: Պեղումներն ի հայտ բերեցին ոչ

1 **Garstang J. Joshua-Judges. L.,** Constable,1931. P. 132.
2 **Free J. P.,** Archaeology…P. 135-136.
3 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 220.
4 **Thompson J. A.,** Op. cit. P. 75.

* Ա. Գուկը՝ մեծ գիտնականը և հնագետը, իր «Սուրբգրային հրաշքների հավաստիությունը» գրքում Հեսու Նավեի աղոթքով ցերեկը մոտ 24 ժամով երկարացնելու մասին ուշագրավ պատմական տեղեկություններ է բերում: «Երեք հին ժողովուրդներ»՝ հույները, եգիպտացիները և չինացիները, այդ մասին պատմական տեղեկություններ ունեն: Բոլոր երեքի մոտ էլ խոսվում է մի արտասովոր երկար օրվա մասին: «Պատմության հայր» հորջորջվող հույն Հերոդոտոսը Քրիստոսի ծննդից 480 տարի առաջ պատմում է, որ եգիպտացի քրմերն իրեն 24 ժամից ավելի տևած մի ցերեկվա մասին գրառում են ցույց տվել: Հնամենի չինական գրառումներում պարզ ի պարզո ասվում է, որ դա տեղի է ունեցել Իո կայսեր գահակալության օրոք, ընդ որում չինական տոհմաբանական ցուցակներում նշվում է, որ այդ կայսրը թագավորել է Չինաստանում Հեսու Նավեի ժամանակներում:

Լորդ Քինգսբորոուն, հետազոտելով ամերիկյան նախնադարյան հնդիկներին,

պակաս ուշագրավ փաստ, այն է՝ նվաճումից հետո էլ Քանանի տարածքում տակավին դիմադրության առանձին օջախներ կային: Հին Կտակարանում ասվում է. «Շատ երկրներ են մնացել ժառանգելու» (Հեսու 13. 1): Իսրայելացիներին չհնազանդված տարածքների չափերի մասին խոսվում է Դատավորաց գրքի I գլխում: Այդ ցանկում հիշատակված որոշ քաղաքներ պեղվեցին: Ի մասնավորի երկու քաղաքների՝ Մակեդդովի ու Բեթսանի մասին հայտնի է, որ դրանք ընդհուպ մինչև Ք. ա. 1200 թ. եգիպտացիների ու քանանացիների հսկողության տակ էին գտնվում: Միայն զգալի ժամանակ անց նրանց զբաղեցրած տարածքներում երևան եկան իսրայելական մշակույթին հատուկ նշաններ, ինչի մասին կարելի է դատել այնտեղ գտնված կավե անոթներից: Այնպես որ, եզրակացնում է հնագետ Թոմպսոնը, Աստվածաշնչի հայտնած տեղեկություններն այն մասին, որ Հեսուի օրոք Քանանը վերջնականապես նվաճված չէր, շատ ստույգ է[1]:

ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳԻՐՔԸ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր հնագետները համակարծիք են, որ Ք. ա. 1200 թ. –ից մինչև 1000 թիվն ընկած ժամանակահատվածը Պաղեստինի պատմության ամենախռովահույզ շրջաններից է: Պեղումների աներկբա փաստերը ցույց տվեցին, որ հենց այս շրջանում են հրո ճարակ դարձել և ավերվել բազում քաղաքներ: Դրանից մի քանիսը երկու, երեք անգամ են ավերվել ու վերակառուցվել: Օրինակ՝ Բենիամինի ցեղի տարածքում գտնվող Բեթելը հընթացս

հայտնաբերել է, որ իրենց զարգացման մեջ բարձր քաղաքակրթության հասած մեքսիկացիներն ավանդազրույց ունեն մի ամբողջ օր «արեգակի անշարժ մնալու» մասին, որը և տեղի է ունեցել այն տարում, որը կոչվում է «յոթ ճագարների» տարի: Այս «յոթ ճագարների» տարին համընկնում է այն ժամանակահատվածին, երբ Հեսու Նավեն գրավում էր Պաղեստինը: «Այսպիսով,- եզրակացնում է հեղինակը,- սուրբգրային պատումի ճշմարտացիության մասին իրարից անկախ և ամենայն կասկածից գերիվեր ապացույցներ ունենք հույներից, եգիպտացիներից, չինացիներից և մեքսիկացիներից: Այսպիսի վկաների խմբի վկայությունները չի կարելի չընդունել իբրև բացարձակ ճշմարտացի խոսք»: (Закон Божий, Протоіерей Серафим Слободской, Свято-Троицкая Сергиева Лавра, 1993, стр. 203):

1 **Thompson J. A.,** Op. cit. P. 75.

երկու դարի բազմիցս ենթարկվել է զգալի ավերումների: Հնագետ Օլբրայթը պեղեց շերտեր, որոնք ապացուցեցին, որ Բեթելը Ք. ա. 1200 թ.–ից մինչև 1000 թ. չորս անգամ է ավերվել[1]: Այս ավերումների չընդհատվող շարանը, ըստ հնագետների, մատնանշում է, որ այդ շրջանում Պաղեստինում քաղաքական վիճակն անկայուն էր էր տիրում: Դատավորաց գիրքը ներկայացնում է Իսրայելի զանազան ցեղերի միջև բախումների, ինչպես և Իսրայելի՝ իրեն թշնամի հեթանոս ժողովուրդների դեմ պայքարի բազմաթիվ վկայություններ:

Դատավորաց գրքում, ինչպես հայտնի է, հաճախ է խոսվում Աստծուց հեռանալու պատճառով Իսրայելին պատուհասած աղետների մասին: Իսրայելի բարոյական և հոգևոր անկումը հանգեցրեց նրան, որ նա դադարեց Քանանից հեթանոսներին վռնդել, որ ինքը՝ ժողովուրդը, կռապաշտության մեջ ընկավ և վերջապես նրան, որ իսրայելացիների և հեթանոսների միջև խնամիություն տարածվեց: Արդյունքում Իսրայելը ճաշակեց Աստծուց հեռանալու և աստվածադիր օրենքին չհնազանդելու դառը պտուղները:

Իսրայելացիների՝ Երուսաղեմից կռապաշտներին դուրս քշելու անփութության մասին Դատավորաց գրքում ասվում է. «Բենիամինի որդիները Երուսաղեմում բնակվող հեբուսացիներին չնվաճեցին, և հեբուսացիները բնակվում են այնտեղ Բենիամինի որդիների հետ մինչև այսօր» (Դատ. 1. 21): Սույն փաստը հաստատվում է նաև Թելլ–ալ–Ամառնայի սալիկների վկայություններով: Դրանք մեզ տեղեկացնում են, որ Երուսաղեմի թագավորը շարունակում էր Եգիպտոսի փարավոնին հավատարիմ մնալ[2]:

Շնորհիվ հնագիտության՝ հաջողվեց պարզել նաև, որ Ք. ա. 1200 թ. –ից մինչև 1000 թ. Քանանի լեռնային մասում բազում նոր բնակավայրեր են հիմնադրվել: Առաջին անգամ Պաղեստինի լեռներում քաղաքներ խոյացան, հանգամանք, որը պերճախոս կերպով մատնացույց է անում երկրի բնակչության աճը[3]: Այս քաղաքների զգալի մասը պեղվեց, և դրանց մնացորդները վկայեցին այն

1 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 225.
2 **Free J. P.,** Archaeology…P. 141.
3 **Wright G. E.,** Filson F. V. The Westminster Historical Atlas. L.,1953. P. 45.

մասին, որ դրանք իրոք կառուցվել են իսրայելացիների ձեռամբ, քանզի իսրայելացիների մշակույթն արմատապես տարբերվում էր քանանական քաղաքների մշակույթից: Իսրայելական քաղաքների բնակելի շենքերն ի տարբերություն քանանացիների տների՝ ավելի աղքատիկ տեսք ունեին: Ինչպես նշում է Օլբրայթը. «Կավե անոթները բավական կոպիտ են, քաղաքները հուսալի չեն ամրացված և ի տարբերություն քանանական քաղաքների՝ հարուստ չեն»[1]:

Հաջողությամբ պսակված հնագիտական պեղումները վավերացրին նաև Գաբաա քաղաքի հրկիզման փաստը (հմմտ. Դատ. գլ. 19–20): Բենիամինյան Գաբաայի անառակ բնակիչները լլկում են մի ղևտացու կնոջ. այդ կինը մահանում է, իսկ ղևտացին այդ մասին տեղեկացնում է Իսրայելի ցեղային միությանը: Իսրայելական բանակը հարձակվում է Գաբաայի վրա, գրավում և հրկիզում քաղաքը (Դատ. 20. 3,40): Հնագիտական պեղումների արդյունքները լիակատար ապացուցեցին այս դիպվածի պատմական հավաստիությունը: Այդ ժամանակաշրջանին պատկանող հնագիտական շերտում հայտնաբերվեցին քաղաքի մնացորդներ՝ հրդեհի հետքերով, ինչպես և այդ մասին ավանդում է Դատավորաց գիրքը (20. 40)[2]:

ԻՍՐԱՅԵԼԸ ԵՎ ՓՂՇՏԱՑԻՔ

Ժամանակակից հնագիտությունը թույլ է տալիս դատավորների շրջանի Իսրայելի դրացի թշնամական ժողովուրդների մասին ամբողջական պատկերացում կազմելու: Պաղեստինում հաստատվելով՝ Իսրայելը բոլոր կողմերից հայտնվեց թշնամական շրջափակման մեջ: Հյուսիս–արևելքում ապրում էին արամեացիները, հյուսիս–արևմուտքում՝ քանանացիները՝ հետագայում հայտնի փյունիկեցիներ անվամբ: Պաղեստինի հարավ–արևմտյան մասի ծովեզրը բնակեցված էր փղշտացիներով,

1 Տես՝ **Thompson J. A.,** Op. cit. P. 89.
2 **Albright W. F.,** The Archaeology of Palestine and the Bible…P. 47.

իսկ հարավ–արևելյանը՝ մովաբացիներով, եդոմացիներով և քոչվոր ցեղերով: Զարմանալի է, թե ինչպես Իսրայելին հաջողվեց գոյատևել թշնամական այսպիսի շրջապատման մեջ: Մեկ անգամ չէ, որ այս ժողովրդին բառացիորեն ծնկի բերեցին: Սակայն, չնայած այդ ամենին, նրան վերջ ի վերջո հաջողվեց ոտքի կանգնել, տիրել Պաղեստինին և միասնական ժողովուրդ դառնալ, քանզի այդպես էր կամենում Աստված:

Պաղեստինի հարավ–արևմուտքում հաստատված փղշտացիները մեծ ազդեցություն ունեին Իսրայելի կյանքի բոլոր բնագավառների վրա: Այս ռազմատենչ ժողովուրդը, որ տիրապետում էր իր ժամանակի ամենակատարյալ սպառազինությանը և ռազմա–քաղաքական առումով հոյակապ կազմակերպված էր, Ք. ա. մոտ 1175 թ. մտավ Պաղեստինի հարավ–արևմտյան ծովեզր նույն նպատակով, ինչ իսրայելացիները, այն է՝ բնակվել Քանանի տարածքում:

Փղշտացիների բնակության վայրերում կատարված պեղումների ընթացքում հաջողվեց հայտնաբերել այս ժողովրդին պատկանող և նրա մշակույթին բնորոշ անոթներ, ի մասնավորի բազմաթիվ սկահակներ և այլ կավե գավաթներ՝ գինու և գարեջրի համար նախատեսված, չէ՞ որ, ըստ Սուրբ Գրքի վկայության, փղշտացիները գինեմոլներ էին (Դատ. 14. 10,17,23,25): Այլ վայրերում[1] հազվադեպ հանդիպող փղշտական գարեջրի գավաթները քամիչներ ունեին, ինչպես այդ մասին վկայում է Հին Կտակարանը: Այս քամիչը «նախատեսված էր գարու մնացորդները քամելու համար, որոնք լողում էին պատրաստված գարեջրի մեջ և խմելիս կոկորդում տհաճ զգացողություն առաջացնում: Այսպիսին էին փղշտացիների՝ գարեջուր խմելու տիպիկ գավաթները»[2]:

Հնագիտական գտածոները հաստատեցին նաև փղշտացիների երկաթ մշակելու մասին հինկտակարանյան վկայությունները: Այս ժողովուրդը մեծ հաջողությունների էր հասել այդ մետաղի մշակության ոլորտում, որն այն ժամանակ հազվագյուտ, ուստի և բավական թանկ էր: Մեծավ մասամբ փղշտացիներով բնակեց-

1 **Albright W. F.,** Archaeology of Palestine…P. 114-116.
2 **Keller W.,** ‘Η Βίβλος …Σ. 239.

ված վայրերում մետաղաձուլական արհեստանոցներ բացվեցին: Դրանք հայտնաբերվեցին Գազայի շրջակայքում գտնվող Գերարա քաղաքում: Վերջերս մետաղաձուլական արհեստանոցներ հայտնաբերվեցին նաև արդի Թել–Ավիվից ոչ հեռու գտնվող Թելլ–Կազիլում: Նշված վայրերում պղնձի, ինչպես նաև երկաթի հանքաքարեր էին վերամշակում: Հայտնի դարձավ, որ փղշտացիները լեռնային շրջաններում բնակություն հաստատած իսրայելացիներից ավելի վաղ են սկսել գյուղատնտեսական մետաղյա գործիքներ և երկաթե արտադրանքներ (մեխ, զենք և այլն) գործածել[1]: Աստվածաշունչը ճշմարտացիորեն վկայում է՝ երբ փղշտացիները Քանանի լեռնային շրջաններ թափանցեցին, արգելեցին իսրայելացիներին երկաթյա իրեր արտադրել: Այլ կերպ ասած՝ նրանք իրենց վերապահեցին երկաթե իրերի մշակության և վաճառքի բացառիկ ու մենաշնորհային իրավունքը, որպեսզի արգելեն իսրայելացիներին զենք արտադրել: Սրբազան բնագրում կարդում ենք. «Ամբողջ Իսրայելի երկրում մի դարբին չգտնվեց, քանզի այլազգիներն ասել էին. «Այնպես անենք, որ եբրայեցիները սուր կամ գեղարդ չշինեն»: Բոլոր իսրայելացիներն իրենց գերանդին, գործիքները, կացինը և մանգաղը նորոգելու համար գնում էին այլազգիների երկիրը» (Ա Թագ. 13. 19–20):

Հնագիտական հնությունները լուսաբանեցին նաև Սամփսոնի մահվան որոշ մանրամասներ: Ըստ Դատավորաց գրքի՝ Սամփսոնը Դագոնի վիթխարի մեհյանի երկու կենտրոնական սյուները տեղից շարժելով՝ փլուզեց շինությունը՝ իր հետ միասին մահվան մատնելով ներսում գտնվող հազարավոր այլազգիների (Դատ. 16. 23–30): Պեղումները վերջնականապես փարատելով բոլոր կասկածները՝ ապացուցեցին, որ փղշտական մեծ կառույցները ներքին կենտրոնական սրահ ունեին, որը մյուսներից բաժանվում էր վերին հարկը տանիքով հանդերձ պահող մի շարք սյուներով[2]:

Չբավարարվելով Քանանի հարավ–արևմտյան ծովեզրի բնակեցմամբ՝ փղշտացիները նույնիսկ մտադրվել էին թափանցել նաև երկրի խորքը: Այդ պատճառով էլ Ք. ա. 1200–1000 թթ. մի շարք

1 Տես American Journal of Archaeology. T. XLIII,№ 3, p. 458 ff.
2 Տես Biblical Archaeologist. May, 1951. P. 44.

ներխուժումներ ձեռնարկեցին՝ անընդհատ ասպատակելով Պաղեստինի կենտրոնական շրջանները: Ի վերջո նրանց հաջողվեց տիրանալ ողջ երկրին: Ասպատակություններից մեկի ժամանակ, ինչպես այդ մասին վկայում է Սուրբ Գիրքը, նրանք գերեվարեցին Ուխտի տապանակը և իսրայելացիների ուխտավայր Սիլով քաղաքից տարան (Հեսու18. 1, Դատ. 21. 19, Ա Թագ 3. 21): Խ. Կյաերսի գլխավորած դանիական հնագիտական արշավախումբը պարզեց, որ փղշտացիները չսահմանափակվեցին Ուխտի տապանակի դուրս բերմամբ, այլ միաժամանակ Սիլովը հրի մատնելով՝հսպառ այրեցին: Գտածոները հաստատեցին, որ Ք. ա. 1050 թվի աղետը՝ Սիլովի հրկիզումը, պատմական փաստ է, որը նշանավորում է փղշտացիների հաղթանակը և սուրբ քաղաքի հիմնավեր կործանումը: Իսկ քաղաքը կրկին վերակառուցվեց իսրայելական թագավորների օրոք, ապա՝ ավելի ուշ, նորից ավերվեց: Երեմիա մարգարեի օրոք դեռ կարելի էր տեսնել նրա ավերակները: Այս մարգարեն Սիլովի ավերակներն օգտագործում էր իբրև ցայտուն օրինակ այն հրեաների համար, ովքեր իրենց փրկության հույսը կապում էին Երուսաղեմի Աստծո Տաճարի հետ: Մարգարեն կոչ էր անում. «Գնացեք Սելով՝ Իմ այն տեղը, ուր առաջ հաստատել էի Իմ անունը, տեսեք, թե ինչպես վարվեցի նրա հետ Իսրայելի՝ Իմ ժողովրդի չարությունների պատճառով» (Երեմ. 7. 12):

Դարձյալ հնագիտությանն է պատկանում փղշտացիների կողմից ծովային առևտրի բուռն զարգացման փաստի հաստատման երախտիքը: Մեզ է հասել մի հրաշալի պատմություն՝ գրի առնված պապիրուսի վրա Ք. ա. XI դ., որը («Ունու–Ամոնի ճամփորդությունը Բիբլոս») ներկայումս պահվում է Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանում: Բնագիրը պատմում է եգիպտացի քուրմ Ունու–Ամոնի մասին: Այս քուրմը փարավոնի կողմից ուղարկվում է Բիբլոս, որպեսզի փյունիկյան այդ քաղաքից մայրի մատակարարի եգիպտական Թեբե՝ Ամոն չաստծուն նվիրված սրբազան մակույկ կառուցելու համար[1]: Այսօրինակ վկայությունները դատավորների ժամանակներում ծովային առևտրի զարգացման և փղշտացիներով բնակեցված ծո-

1 **Pritchard J. B.,** The Ancient Near east. Vol. I Princeton, 1973. P. 16-24.

վեզրի հետ կապերի սերտացման պերճախոս վկայություններ են: Համանման առևտրական հարաբերություններ հաստատեցին նաև քանանացիք: Այս ամենը հաստատում է Սուրբ Գրքի հիշատակությունն այն մասին, որ իսրայելացիք անմասն չէին նմանօրինակ առևտրական գործերից: Բայց և ակնհայտ է, որ Իսրայելը հարաբերություններ էր պահպանում ոչ թե փղշտացիների հետ, այլ ավելի ճիշտ քանանացիների հետ: Դատավորաց գրքում ասվում է. «Գադը Հորդանան գետի այն կողմում էր բնակվում, Դա՛ն, ինչո՞ւ ես պանդուխտ մնացել նավերի մեջ: Ասերը ծովի եզերքին է բնակվում և ծովախորշերում է ապրում» (Դատ. 5. 17):

Վերջին ժամանակներում դատավորների դարաշրջանի փղշտացիների ուրվանկարն ավելի պարզորոշ է դառնում: Փղշտացիների հին քաղաքների տեղանքում և հատկապես Ազոտում իսրայելացի հնագետների պեղումները այդ ժողովրդի մասին արժեքավոր և կարևոր տեղեկություններով արգասավորվեցին: Այսպես փղշտացիների մասին ընդհանուր պատկերացումն առավել ընդգրկուն է դառնում, իսկ այդ գիտելիքները լուսաբանում են դատավորների օրոք Իսրայելի կյանքը, նրա անողոք պայքարն այլազգի փղշտացիների դեմ: Այս հնագիտական վկայությունները համընկնում են հինկտակարանյան նկարագրություններին: Այնպես որ կասկածի նշույլ իսկ չի մնում այն հարցի շուրջ, թե ինչպես հնարամիտ, առևտրական, քաղաքականապես միաբան և զինագործության մեջ քաջահմուտ փղշտացի ժողովուրդն իրեն հնազանդեցրեց գրեթե ողջ Իսրայելը: Միայն Աստծո օգնությամբ, Մեծն Դավիթ թագավորի առաջնորդությամբ, անդադրում, դաժան, հերոսական մարտերի գնով հաջողվեց սանձել ու հպատակեցնել այդ վտանգավոր ախոյանին:

Սույն գլուխն ավարտի հասցնելուց առաջ հարկ է նշել հետևյալը. հին հունական «Պաղեստին» անվանումը, որն ավելի ուշ շրջանում «Քանանի երկիր» անվան տեղը բռնեց, սերում է հին եբրայական «պելիշտիմ» բառից, որով Հին Կտակարանում կոչվել են փղշտացիք: Այսպիսով, այն հողը, որը հետագայում դառնալու էր Իսրայելի ժողովրդի հայրենիքը, կոչվեց նրա ամենառխերիմ թշնամու անունով:

ԻՍՐԱՅԵԼԸ ԵՎ ՔԱՆԱՆԱՑԻՆԵՐԸ

Բազմաթիվ հետազոտողների կարծիքով դատավորների օրոք Քանանի բնակչության հիմնական մասը քանանացիներն են եղել: Սակայն իրականում քանանացիները բնակչության հիմնական, բայց ոչ գլխավոր մասն են կազմել: Զորօրինակ՝ Աստվածաշնչում հիշատակվում են նաև այլ ժողովուրդներ՝ ամորհացիք, հեբուսացիք, խևացիք (Դատ. 3. 5): Քանանացիները զարգացած քաղաքակրթություն ունեին, որը ռազմաքաղաքական և մշակութային առումով անհամեմատ գերազանցում էր Իսրայելի ցեղային միությանը: Դա երևում է պեղածո նյութերից:

Քանան մտնելիս՝ իսրայելացիները հիմնահատակ ավերեցին քանանացիների քաղաքները և նրանց տեղում իրենցը կառուցեցին, բայց վերջիններս ըստ ամենայնի զիջում էին քանանականներին: Այս են վկայում քանանական Բեթել քաղաքի մնացորդները և նույն վայրում իսրայելացիների ձեռամբ կառուցված քաղաքի փլատակները: Հնագետ Օլբրայթը նշում է, որ այս մնացորդներից էլ պարզորոշ երևում է, թե նոր կառույցները ճարտարապետական և այլ առումներով որքան շատ են զիջում հներին[1]:

Մենք արդեն խոսել ենք արհեստների, ճարտարապետության, առևտրի և այլ ոլորտներում իսրայելացիների նկատմամբ քանանացիների բացահայտ գերազանցության մասին, նույնպես և քանանացիների հեթանոսական պաշտամունքի, ծիսական զոհաբերությունների և նրանց օրենքների մասին, որոնք հայտնի դարձան Ռաս–Շամրայի սալիկներից, ինչպես նաև այն մասին, որ քանանացիները մահացու վտանգ էին ներկայացնում իսրայելացիների համար և որ այդ պատճառով էլ անհրաժեշտ էր նրանց լիովին բնաջնջել[2]: Ռաս–Շամրայի սալիկների բնագրերը նույնպես հաստատում են, որ Դատավորաց գիրքն իրոք խոսում է իրական անձանց և պատմական եղելությունների մասին: Հավանաբար

1 Bulletin of the American Schools of Oriental Research. № 56. P. 11-12.
2 Այս մասին տես «Հին Կտակարանի «մութ» տեղերի լույսը» գլուխը:

Դատավորաց գրքի առաջին գլխում հիշատակվում են Քեբրոն քաղաքի երկու քանանացի տիրակալներ՝ Աքիմանն ու Թալմին (Դատ. 1. 10): Այս նույն անուններին հանդիպում ենք Ռաս–Շամրայի սալիկներում[1]: Օլբրայթի կարծիքով՝ սա մեկ անգամ ևս ապացուցում է, որ այստեղ վկայակոչված անունները կապված են դատավորաց շրջանի պատմական եղելությունների հետ:

Ըստ Դատավորաց գրքի՝ իսրայելացիներին կեղեքող քանանացիների արքան Յաբինն էր, ում մայրաքաղաքն Ասորն էր (Դատ. 4. 2): Պեղածո նյութերը վկայեցին, որ Ասորն իսկապես գոյություն է ունեցել դատավորների ժամանակաշրջանում, իսկ անհամեմատ ավելի վաղ՝ Ք. ա. մոտ 1800 թ., հասել է իր հզորության գագաթնակետին[2]:

Հինկտակարանյան վկայություններից դատելով՝ Իսրայելը այդպես էլ չկարողացավ տիրել քանանացիների բոլոր քաղաքներին: Այդուհանդերձ իսրայելական ցեղերը, մարգարեուհի Դեբորան քաջալերանքով, Մակեդդովի ջրերի մոտ նրանց ջախջախիչ պարտության մատնեցին: Ըստ Հին Կտակարանի՝ այդ ճակատամարտը տեղի ունեցավ Թանաքում՝ Մակեդդովի ջրերի մոտ (Դատ. 5. 19): Ըստ հնագիտական հետազոտության տվյալների՝ Սուրբ Գրքում նկարագրված այս անցքը թվագրվում է 1125 թվականով[3]:

Պեղածոներով հաստատված դատավորաց շրջանի ևս մեկ պատմական անցք կա, որն առնչվում է Բերիթ չաստծո մեհյանին: Դատավորացում ասվում է, որ Գեդեոնի իշխանատենչ և փառասեր որդին՝ Աբիմելեքը, փորձեց Իսրայելի թագավորական իշխանությունը զավթել, սակայն նրան այդ բանում Սիկիմի բնակիչները խանգարեցին: Հնամյա Սիկիմ քաղաքը կառուցվել է Ք. ա. շուրջ 2000 թ., որի մասին հիշատակություններ կան հին եգիպտական բնագրերում: Այս քաղաքի մնացորդները հայտնաբերել են Գարիզիմ լեռան ստորոտի մոտ, որի գագաթը, ինչպես և Գեբաղ լեռան գագաթը, վեր է խոյանում Սամարիայի հենց սրտում

1 **Albright W. F.** The Old Testament and Archaeology// Old Testament Commentary/ Alleman H. C., Flack E. E. Philadelphia: Muhlenberg Press, 1948. P. 145.
2 **Garstang J.** Op. cit. P. 184.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 86. **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 227.

Քանանական թագավորի հաղթահանդեսը (փորագրություն փղոսկրե սալիկի վրա), Մակեդդով, Ք. ա. 2-րդ հազարամյակ:

փռված տափարակ հովտի վրա:

Աբիմելեքն իր բանակով հարձակվեց Սիկիմի վրա, կոտորեց նրա բնակիչներին, իսկ քաղաքը հողին հավասարեցնելով՝ այնտեղ աղ ցանեց: Գույժը հասավ Սիկիմի աշտարակի մարդկանց, ովքեր հավաքվեցին Բեթել Բերիթ չաստծո մեհյանում: Բայց քինախնդիր Աբիմելեքն այս ամրոցը գրավելու համար հրամայեց փայտ լցնել պատերի տակ և հրկիզել. տաճարն այրվեց, իսկ մարդիկ մեռան (Դատ. 9. 45–49): Սույն անցքի պատմականության ապացույցը երևան եկավ 1926 թ. գերմանացի պրոֆեսոր Ջելլինի և 1959 թ. վերջինիս փոխարինած նրա ամերիկացի գործընկեր Գ. Էռնստ Ռայտի պեղումների արդյունքում: Հնագետները վերը նշված տեղերում հայտնաբերեցին մի հնամենի շինության մնացորդներ, որը թվագրվում է դատավորների շրջանով և նույնացվում Բեթել Բերիթի աշտարակի հետ: Մի շարք պեղածո խեցիներ հավաստում են, որ աշտարակը կառուցվել է Ք. ա. 1300–ականներին, իսկ մեհյանի պահպանված մասը թույլ տվեց համարել, որ այն ավերվել է հրդեհից՝ Ք. ա. մոտ 1150 թ.՝ դաժանաբարո Աբիմելեքի օրոք[1]: Պեղումնավայրում հայտնաբերված հնագիտական նյութերը վկայում են, որ մեհյանը վեր էր խոյանում քաղաքի պարսպի վրա, որը կառուցված էր ավելի վաղ շրջանով՝ հիքսոսների տիրապետության ժամանակով թվագրվող մեհյանի ավերակների վրա[2]: Բեթել Բերիթ մեհյանի պահպանված մնացուկները ցույց են տալիս նաև, որ այն զանգվածեղ կառույց էր՝ 25x21մ մակերեսով, 5 մ հաստությամբ պարսպով օղակված: Մեհյանի չափերը թույլ են տալիս մոտավոր կերպով պատկերացում կազմել նրա կամարների ներքո կատարվող պաշտամունքային արարողու-

1 **Barton G. A.** Op. cit. P. 113-114.
2 **Keller W.**, ‘Η Βίβλος …Σ. 225-226. **Free J. P.** Op. cit. P. 143.

թյունների մասին, մանավանդ եթե մտաբերենք Ռաս–Շամրայի կավե սալիկների՝ դրանց վերաբերող վկայությունները[1]: Կարելի է ասել, որ այս մանրամասների հաղորդման մեջ էլ Հին Կտակարանը զարմանալիորեն ստույգ է:

ԻՍՐԱՅԵԼԸ, ԱՐԱՄԵԱՑԻՆԵՐԸ ԵՎ ՄԱԴԻԱՄԱՑԻՆԵՐԸ

Փղշտացիներից, քանանացիներից և արամեացիներից զատ դատավորների շրջանում Իսրայելի դրացիներն էին նաև ամաղեկացիները, մադիամացիներն ու Արևելքի բնակիչները (հմմտ. Դատ. 6. 3):

Արամեացիները Դատավորաց գրքում հազվադեպ են հիշատակվում: Բայց նրանք կարևոր դեր էին խաղում Իսրայելի պատմության հաջորդ տարիներին, քանզի Դավթի գահակալությունից ի վեր մշտապես սպառնում էին Իսրայելին: Վերջերս հայտնաբերված բազմաթիվ տվյալներ լույս սփռեցին արամեացիների ծագման, անցած ուղու վրա, որի ելակետը ստորին Միջագետքն էր, իսկ վերջնակետը՝ այժմյան Սիրիայի* տարածքը: Այդ իսկ պատճառով Սուրբ Գրքի բոլոր թարգմանություններում արամեացիներն ասորիներ են կոչվում: Ք. ա. արդեն 1300 թ. նրանք խոր արմատներ էին արձակել Քանանի հյուսիս–արևելքում: Ըստ Դատավորաց գրքի՝ նրանց տիրակալներից մեկը՝ Քուսարսաթեմը, Պաղեստին խուժեց (Դատ. 3. 8,10)[3]:

Մադիամացիները մեզ հայտնի են Գեդեոնի պատմությունից: Յոթ տարի անընդմեջ նրանք ուղտերի վրա ասպատակում էին Քանանը, կողոպտում, իրենց ճանապարհին ամեն ինչ հրի մատնում և սպանում բնակիչներին: Դատավորաց գրքում ասվում է. «Տերը նրանց յոթը տարի մադիամացիների ձեռքը մատնեց... նրանք

1 **Thompson J. A.** Op. cit. P. 86-87.

* Սիրիան ըստ Աստվածաշնչի և հին հայկական բնագրերի՝ Ասորիքն է:

3 **Malamat A.** Chusan Rishathaim and the Decline of the Near East around 1200B. C. // Journal of Near Eastern Studies. Oct.,1954. նաև **Thompson J. A.** Op. cit. P. 87-88.

իրենց ոչխարներով վեր էին կենում, բերում էին իրենց վրանները և մորեխի պես բազմությամբ վրա էին հասնում: Նրանց ու նրանց ուղտերին հաշիվ չկար» (Դատ. 6. 1,5): Այդժամ Աստված կանչեց Գեդեոնին, որպեսզի հարձակվի մադիամացիների վրա: Գեդեոնը երեք հարյուր ընտիր այրերի միջոցով խորամանկությամբ հաղթեց նրանց (Դատ. 7. 7,8):

Հնագիտությունը հաստատեց Գեդեոնի իշխանությանն առնչվող երեք մանրամասներ. 1) վարժեցված ուղտերի լայն օգտագործում, 2) զարգացած գրի առկայություն, 3) կավե սափորների մեջ դրված կանթեղների գործածություն:

1) Վերջին ժամանակներս բազմաթիվ և հարաճուն վկայություններ հայթաթեցինք Արևելքում Ք. ա. 1200 թ. սկսյալ վարժեցված ուղտերի օգտագործման մասին: Հնագետ Թոմպսոնը գրում է. «Անապատով քոչող մադիամացիների, ամաղեկացիների և Արևելքի բնակիչների, ըստ Սուրբ Գրքի, անհամար, մորեխի պես բազմությամբ (Դատ. 6. 3–6) Քանանը ասպատակողների և կողոպտիչների նկարագրությունները լիարժեք կերպով համապատասխանում են հնագիտության վրձնով մեր առաջ պատկերված նկարին»[1]:

2) Մադիամացիներին պարտության մատնելուց հետո Գեդեոնը կամեցավ իմանալ Սոքքոթի իշխանների անունները[2]: Ուստի Սոքքոթի բնակիչներից մի պատանյակ բռնեց և պահանջեց, որ գրի իրենց առաջնորդների անունները: Սա ենթարկվեց և Գեդեոնին հանձնեց իշխանների և ծերերի անունների ցուցակը (Դատ. 8. 14): Այս տողի հավաստիությունը կասկածի տակ էր առնվում, քանզի տարածված կարծիքի համաձայն՝ գիրը միայն Ք. ա. 800–ականներից է երևան եկել և հետևաբար պատանին ի զորու չէր Գեդեոնի պահանջը կատարել: Բայց ըստ բազում հնագիտական պեղածոների՝ Գեդեոնի օրոք արդեն գոյություն է ունեցել բավական զարգացած գիր, ընդ որում ոչ միայն Հին Կտակարանում հի-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 88.

2 Սոքքոթը (որ թարգմանաբար նշանակում է «վրաններ») (Ծննդ. 33,17) գտնվում էր Գադ ցեղի բնակության սահմաններում(Հեսու 13. 27): Ներկայումս այս վայրը կոչվում է Թելլ-Ակսաս և գտնվում է Նար-ազ-Զերկայից 2 կմ հյուսիս:

շատակված շրջաններում, այլև բուն Պաղեստինում: Օլբրայթը նշում է, որ Լաքիսի, Թեթսամյուսի և Մակեդդովի (սրանք բոլորն էլ պաղեստինյան քաղաքներ են) հնագիտական գտածոներն ի հայտ բերեցին այբուբենի գործածություն՝ Ք. ա. արդեն XIV–XIII դդ.՝ թանաքով գրված բնագրերում[1]: Հնագետ Բարրոուզը գրում է. «Այն փաստը, որ Գեդեոնը կարողացավ գրաճանաչ պատանի գտնել, վաղ երկաթե դարում Հորդանանի այն կողմում ապրող բնակչության կրթության բարձր մակարդակի ապացույց է»[2]:

3) Լրիվ պատահաբար գիտնականները պատկերացում կազմեցին այն մասին, թե ինչ տեսք ուներ կանթեղով սափորը, որը մադիամացիների դեմ մարտնչելիս հնարամտորեն կիրառեց Գեդեոնը (Դատ. 7. 16): Հորդանանի Ամման քաղաքի մոտ գտնվող գերեզմանում հայտնաբերվեց մի տարօրինակ կանթավոր անոթ, որի բարձրությունը գրեթե 25 սմ էր: Անոթի պատի մեջ մոտ 10x13 սմ անցք կար, իսկ հատակին ոչ մեծ հիմք, որի վրա ագուցվում էր մոմը[3]:

ՏԱՊԱՆԱԿԸ ԴԱԳՈՆԻ ՄԵՀՅԱՆՈՒՄ: ՍԵԼՈՎԻ ԱՎԵՐՈՒՄԸ

Ա Թագավորաց գրքում ասվում է, որ փղշտացիք գրավելով Ուխտի տապանակը՝ տարան Ազոտոս քաղաք և զետեղեցին Դագոնի մեհյանում՝ այդ կուռքի կողքին (Դագոնը նրանց գերագույն աստվածն էր, որի իրանի վերին մասը մարդակերպ էր, իսկ ստորինը՝ ձկնակերպ): Հաջորդ առավոտյան այն Ուխտի տապանակի առաջ երեսնիվայր ընկած գտան: Փղշտացիք արձանն իր տեղում կանգնեցրին, բայց առավոտյան կրկին գտան նույն տեղում՝ գլխատված, այլանդակված վիճակում գետնին ցրիվ եկած: Ավելին՝ Ազոտոսի բնակիչները պատուհասվեցին անտանելի ախտով. նրանց մարմինները պալարներով ծածկվեցին:

1 **Albright W. F.** From the Stone Age to Christianity…P. 193.
2 **Burrows M.** Op. cit. P. 183.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 88.

Սարսափահար փղշտացիներն ի վերջո տապանակը վերադարձրին իսրայեացիներին (հմմտ. Ա Թագ. 5. 1–4 6. 7):

Հնագիտությունը լուսաբանեց այս դիպվածը. Ուգարիթ քաղաքում (որը հետագայում Ռաս–Շամրա անվանվեց) բացվեց Դագոնի մեհյանը: Ըստ արձանագրությունների՝ այս շինությունը նվիրված էր փղշտացիների գերագույն աստծուն: Բացի այդ, այդ նույն աստծուն նվիրված երկու սյուն էլ բացվեց: Ռաս–Շամրայի սալիկներում ևս Դագոնը հիշատակվում է իբրև Բահաղի հայր[1]:

Հնագետ Օլբրայթի համաձայն իրականում Դագանը (այս բառից դյուրությամբ կարող էր ածանցվել Դագոն անունը) աքքադացիների հնագույն կուռքերից է, որին Ք. ա. 2500 թվից պաշտում էին Եփրատ գետի ավազանում բնակվող ցեղերը: Դագոնը համարվում էր բուսական աշխարհի և պտղաբերության աստվածը, թեև նրա անվան սկզբնական նշանակությունը դեռևս անհայտ է[2]:

Իսրայելացիները տապանակը, փղշտացիների ձեռքից ազատելուց հետո, տարան Կարիաթարիմ (Երուսաղեմից 14 կմ հյուսիս–արևմուտք, հմմտ. Ա Թագ. 7. 1): Սակայն Սուրբ Գիրքը չի բացատրում, թե ինչու տապանակը Սելով չվերադարձվեց: Եվ իսկապես էլ, ինչո՞ւ իսրայելացիները այն չվերադարձրին իր համար նախատեսված սրբազան վայր: Բանն այն է, որ Սելովն ավերված էր: Հնարավոր է, որ քաղաքն ավերված լիներ Աբենեզրի մոտ ճակատամարտից հետո (Ա Թագ. 7. 11–12) կամ դույզն–ինչ ավելի ուշ: Համենայն դեպս Երեմիա մարգարեն հստակ վկայում է, որ իր ժամանակ, այսինքն՝ Ք. ա. մոտ 600 թ. Սելովն ավերակների կույտ էր (հմմտ. Երեմ. 7. 12, 14 26. 6,9): Ամենայն հավանականությամբ փղշտացիներն այն ավերել էին Ք. ա. 1050 թ.[3]:

Այս անգամ էլ հնագիտությունը մեզ տեղեկություններ ընձեռեց, որոնք հաստատեցին Սուրբ Գրքում նկարագրված եղելությունները: 1923–31 թթ.[4] Ագեր Շմիդտի գլխավորած արշա-

1 **Albright W. F.** Archaeology and the Religion of Israel. Baltimore: Johns Hopkins Press, 1942. P. 42,106,74.
2 **Albright W. F.** Archaeology…P. 74.
3 **Pheiffer R. H.** Introduction to the Old Testament. N. Y.: Harper,1941. P. 343. Տես նաև **Albright W. F.** Op. cit. P. 104.
4 **Barton G. A.** Op. cit. P. 127,128.

Սամուել մարգարեի դամբարանը Ռամայում:

վախմբի պեղումները ցույց տվեցին, որ Սելովը բնակեցված է եղել Ք. ա. XIII դարից մինչև XI դ.: Դանիացի հնագետների սույն եզրակացությունը ներդաշնակ է Հին Կտակարանի հետ, քանզի իսրայելացիները Ք. ա. XIV կամ XIII դդ. տապանակը պահում էին Սելովում (Հեսու 18. 1), որն ուշ շրջանում ավերվեց և ավերակ վիճակում էր ընդհուպ մինչև Երեմիայի ժամանակները: Գ. Լ. Ռոբինսոնը նկատում է. «Արդարև, Սելովում դանիական արշավախմբի պեղած բոլոր նյութերը ստուգապես համահունչ են այն բանին, ինչը նկատի ունի Հին Կտակարանը»[1]: Սա ստիպված ընդունում է նույնիսկ սկեպտիկորեն տրամադրված Ֆայֆերը[2]:

Սելովի հնագիտական պեղածոների նշանակությունը մեծ է, քանի որ Հին Կտակարանի պատմական իսկությունը ժխտողները պնդում էին, որ այն ամենը, ինչ գրված է Աստվածաշնչում Սելովի զոհասեղանի մասին, ուշ շրջանի հորինվածք է: Բայց դանիացի հնագետներն ապացուցեցին, որ Սելովն իր փառքի գագաթնակետին էր հասել դատավորների շրջանում (այս մասին է վկայում

1 **Robinson G. L.** The Bearing of Archaeology on the Old Testament. N. Y.,1941. P. 172.

2 Տես **Pheiffer R. H.** Op. cit. P. 343.

նաև Հին Կտակարանը), և որ այս սրբավայրը հրո ճարակ դարձավ Հեղի քահանայապետի և դատավոր ու մարգարե Սամուելի օրոք, այն է՝ Ք. ա. մոտ 1050 թ.: Այսպիսով պարզ դարձավ, որ սկեպտիկների և ռացիոնալիստների կարծիքը կատարյալ հիմարություն է[1]:

ՍԱՎՈՒՂ ԱՐՔԱՆ ԵՎ ԴԱՎԻԹ ԵՐԱԺԻՇՏԸ

Երբ փղշտացիների ասպատակություններից իսրայելացիների վիճակը օրհասական էր դառնում և արդեն ծերացած Սամուելից հանապազ խնդրում էին մյուս ժողովուրդների օրինակով, իրենց վրա, թագավոր կարգել, մարգարեն չէր կամենում կատարել նրանց պահանջը: Միաժամանակ նա Իսրայելի ժողովրդին զգուշացնում էր թագավորական իշխանության այնպիսի գործողությունների մասին, ինչպիսիք են պարտադիր զինծառայությունը, հպատակների ունեցվածքի բռնագրավումը և այլն (հմմտ. Ա Թագ. 8): Հին Կտակարանի պատմականությունը կասկածի տակ առնողները պնդում են, որ Սուրբ Գրքի սույն խոսքերը ոչ այլ ինչ են, քան թագավորական իշխանության ինստիտուտի «դատապարտում և ժխտում»: Համաձայն նրանց՝ այս խոսքերում արտացոլված է թագավորական կառավարման ողբերգական հետևանքների դառը փորձը, հետևաբար այդ հատվածը Սամուելի ապրած դարաշրջանից անհամեմատ ավելի ուշ շրջանի է պատկանում:

Հնագիտությունը, սակայն, հերքում է այդ ներհակ կարծիքը: Վերոհիշյալ հինկտակարանյան բնագրի համեմատությունը Ուգարիթի և Ալալախի պեղածո բնագրերի բովանդակության հետ ցույց է տալիս, որ Սամուելը հայտնել է Աստծո կամքը և միաժամանակ իրազեկ դարձրել նրանց երկրային թագավորի, իբրև կառավարչի, սովորական քաղաքական իրավունքների (և ոչ թե չարաշահումների) մասին: Նա պարզապես իր խոսքերով համերկրացիներին բացատրում էր միապետության թանկ «գինը»,

1 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 93.

Պեդրո Բերրուգետե, Դավիթ թագավորը, XV դ.:

այն է՝ ժողովուրդն ինքն իրեն դատապարտում է պարտադիր զինվորական ծառայության, հարկադիր աշխատանքների և այլ պարտականությունների կատարման, իր ունեցվածքի բռնագրավման ենթարկվելուն և հարկերի վճարման: Այս ամենը հաստատվում է Սամուելից շատ վաղ շրջանում արդի Սիրիայի տարածքում ապրած ուգարիթյան և ալալախյան տիրակալների կյանքի փաստերով: Այսպես ուրեմն, հընթացս երկար ու ձիգ ժամանակի՝ այս երևույթները սովորական են եղել այդ տարածաշրջանի համար: Ընդսմին Ուգարիթի և Ալալախի սալիկներում մատնանշվում են թագավորական իշխանությանն առնչվող մի քանի օրենքներ (առավելապես տասանորդ, աշխատապարտույթ և այլն), որոնք իսկ և իսկ համապատասխանում են իսրայելացիների՝ իրենց թագավորի հանդեպ ստանձնած պարտականություններին[1]:

Սուրբ Գրքի պատմականության կասկածողները վիճարկում էին նաև Հին Կտակարանի այն տեղին, որտեղ Դավիթը որպես երաժիշտ (Ա Թագ. 16. 17–33) և արքունիքի ու Տաճարի երաժշտական խմբերի կազմակերպիչ է ներկայացված (Ա Մնաց. 23. 5, 6): Նրանք գտնում են, որ դա անհնար էր այդքան վաղ շրջանի համար, որովհետև այդօրինակ երաժշտական խմբեր միայն Ք. ա. 538 թ. հետո են ի հայտ եկել: Այդուհանդերձ, դեռ 1942 թ. հնագետ Օլբրայթը նկատել է. «Մեկ–երկու տարի առաջ արտաքին վկայությունների իսպառ բացակայության պայմաններում դժվար էր

1 Տես **Kitchen K. A.** Op. cit. P. 158-159.

այդ կարծիքը հերքել»[1]: Բայց 1942 թվից հնագիտության շնորհիվ վիճակը փոխվեց:

Պեղումներն առարկայորեն ցույց տվեցին, թե ինչպես էր տեղի ունենում երաժշտության և երաժշտական գործիքների զարգացումը Դավթի օրոք (Ք. ա. մոտ 1000 թ.) և դեռ նրանից էլ շատ առաջ: Մեր կողմից այս թեման արծարծվել է «Քաղաքները, նվագարանները, մետաղները» գլխում: Ք. ա. մոտ 1900 թ.–ով թվագրվող Բենի–Հասանի (Եգիպտոս) շիրիմներում տեսնում ենք Եգիպտոս այցելած և իրենց հետ նվագարաններ բերած ասիական սեմիտների: Դավթից տակավին հազար տարի առաջ նրանցից մեկն իր հետ տավիղ էր բերել: Ք. ա. մոտ 1420 թ. պատկանող Թեբեի (Վերին Եգիպտոս) թիվ 38 դամբարանում բացվեցին աղջիկների պատկերներ, որոնցից մեկը քնարով է, իսկ մյուսը՝ զույգ հոբոյով (փայտե փողավոր նվագարան՝ նման կլարնետի): Մակեդոնվյան մի անոթի (Ք. ա. շուրջ 1025 թ.) վրա պատկերված է քնար, որը, ամենայն հավանականությամբ, Դավթի դարաշրջանից է: Ընդհանուր առմամբ Եգիպտոսի, Միջագետքի և Պաղեստինի պեղածոները նվագարանների զարգացման բարձր մակարդակի մասին են վկայում, որի սկիզբը վերագրում են Ք. ա. 2000 թվին և որը շարունակաբար կատարելագործվել է Դավթի և ավելի ուշ ժամանակներում[2]:

Ի շարս այլոց՝ Ռաս–Շամրայի բնագրերը մեզ բազում կրոնական պոեմներ ընձեռեցին: Բնագրերում հաճախ են հիշատակվում սարիմները (sarim)՝ տաճարական սպասավորները, որոնք գրեթե նույնանում են Դավթի դարաշրջանի և հաջորդ դարերի աէդներին (երգիչներին)[3]:

Ըստ Օլբրայթի՝ երգեցիկ խմբերի հնության մասին են վկայում նաև այդ սրբազան երգչախմբերի երաժիշտների քանանական անունները: Հին Կտակարանում հիշատակված Քալքոլ երաժշտի անունը հանդիպում է նաև Մակեդոնվի արձանագրություններում, որոնք թվագրվում են Ք. ա. XIII դ.: Երկու այլ երաժիշտների

1 **Albright W. F.** Archaeology…P. 125.
2 **Free J. P.** Op. cit. P. 151. **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 248.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 98. (Աէդ - Երգիչ հին Հունաստանում, ով նվագարանով ինքն իրեն նվագակցում էր: - *Խմբագրի ծանոթագրություն*):

անունները՝ Ամանն ու Եթանը, հար և նման են Ռաս–Շամրայի և Ք. ա. մոտ 2000 թ. վերագրվող այլ հնավայրերից երևան հանված երաժիշտների անուններին: Օլբրայթը համարում է, որ սույն անունները լիովին հաստատում են երաժշտական համույթների մասին Սուրբ Գրքի տեղեկությունների ճշտությունը[1]: Հնագետ Թոմպսոնի կարծիքով. «Քանանական անուններից առնվազն մի քանիսը (որոնց մասին խոսում է Օլբրայթը)[2] ամենայն հավանականությամբ տեղաբնիկների անուններ են: Ըստ այդմ էլ մենք կարող ենք ենթադրել, որ Դավիթը մի քանի տեղացի բնակիչների ստիպել է իբրև երաժիշտ ծառայել իրեն, ինչպես որ իրեն հպատակ ժողովուրդների այլ ներկայացուցիչների ստիպում էր այլ ոլորտներում ծառայել»[3]:

Այսպես ուրեմն, նվագարանները և երաժշտական խմբերը (երգչախումբ, երգեցիկ խումբ, համույթ) գոյություն են ունեցել դեռ Դավթից էլ շատ առաջ:

ՍԱՎՈՒՂԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՄԱՀԸ

Առաջին իսրայելական թագավորի՝ Սավուղի կյանքը լի էր Աստծո ժողովրդի հարևանությամբ ապրող թշնամիների դեմ շարունակական պայքարով: Հին Կտակարանում ասվում է, որ փղշտացիների դեմ ռազմական գործողությունների ողջ ընթացքում Սավուղի մայրաքաղաքն ու ռազմակայանը իր իսկ հայրենի Գաբաա քաղաքն էր (հմմտ. Ա Թագ. 10. 26; 11. 4,13 և այլն):

Սավուղի գահակալության սկիզբը շատ խոստումնալից էր, բայց ողբերգական վախճան ունեցավ: Դա պատահեց Սավուղի՝ Աստծո հանդեպ բազմիցս անհնազանդ և անհարգալից վերաբերմունքի պատճառով: Բացի այդ, նրա գործողությունները հաճախ էին հանգեցնում Իսրայելի ամենաազդեցիկ այրերի զորեղ դիմակայությանը: Ի վերջո Գեղբուա լեռան (հյուսիսային

1 Տես **Free J. P.** Op. cit. P. 151,152.
2 **Albright W. F.** Archaeology…P. 127.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 98.

Պաղեստին) տակ տեղի ունեցած կատաղի մարտում փղշտացիները ջախջախեցին Սավուղի բանակը, փախուստի մատնեցին և ոչնչացրին: Ինքը՝ Սավուղը, իր երեք որդիների սպանվելուց հետո գերեվարությունից խուսափելու համար ինքնասպանություն գործեց՝ իրեն նետելով իր իսկ սրի վրա: Գտնելով Սավուղի դին՝ փղշտացիները վերցրին զենքն ու զրահը, գլխատեցին և մարմինը կախեցին Բեթսանի պարսպից: Սավուղի գլուխը զետեղեցին Դագոնի, իսկ զենքերը՝ Աստարտի մեհյաններում (Ա Թագ. 31. 1–10, Ա Մնաց. 10. 10):

Պեղածո նյութերը հաստատում են այս պատումները.

1) ըստ պատմական աղբյուրների ու պեղումների՝ Աստարտը պտղաբերության ամենից հռչակավոր հեթանոսական դիցուհիներից էր: Մերձավոր Արևելքի որոշ շրջաններում նրան Աստարտ կամ Աստարտա, իսկ բաբելացիները Իշտար էին անվանում: Հնագետները Բեթելում նրա կերպարանքով դրոշմված մի կնիք գտան[1]:

2) Բեթսանի պարսպի պեղումները (այն նույն պարսպի, որից կախեցին Սավուղի գլխատված դին) ցույց տվեցին, որ Բեթսանը (Գաբաայից 70 կմ դեպի հյուսիս) ավերվել էր Ք. ա. 1050 թ. մինչև 1000 թ. ընկած ժամանակահատվածում: Այս տարեթվերը համընկնում են Սավուղի և Դավթի կյանքի ու գործունեության ժամանակներին[2]:

3) Գաբաայի պեղումները (ներկայիս Թելլ–ալ–Ֆուլ տեղանքը, որ թարգմանվում է «լոբու բլուր», Երուսաղեմից 5 կմ դեպի հյուսիս) հետաքրքիր տեղեկություններով արգասավորվեցին: Պեղումները անցկացվեցին ամերիկացի հնագետ պրոֆեսոր Վ. Ֆ. Օլբրայթի ղեկավարությամբ և շարունակվեցին տասնմեկ տարի (1922–1933 թթ.): Պեղումներից պարզվեց, որ Գաբաա փոքրիկ քաղաքը դատավորների շրջանում նախապես ավերվել էր հրդեհից (տե՛ս Դատ. գրքի 19, 20 գլուխները): Մեկ դար ամայի մնալուց հետո այդ վայրում ոչ մեծ ամրոց կառուցվեց, որտեղ

1 **Burrows M.** Op. cit. P. 230.
2 **Albright W. F.** The Archaeology of Palestine and the Bible…P. 40. Նաև Burrows M. Op. cit. P. 251.

հաստատվել էր Սավուղի բանակի հրամանատարությունը: Սավուղի ռազմակայանը կահավորանքի շքեղությամբ աչքի չէր ընկնում, թեև որոշակի «գյուղական հարմարավետությունից» անմասն չէր: Ամրոցը երկհարկանի շինություն էր: Սենյակների ներսում հայտնաբերվեցին կավե անոթներ, ի թիվս որոնց՝ նաև զգալի չափերի խոհանոցային ամանեղեն և մեկ երկաթե գութան, որը ամրոցի շրջակայքի հողի մշակման մասին է վկայում: Օլբրայթը պնդում է, որ այդ տեղում շատ հարմար չորսանկյուն մի ամրություն է կառուցված եղել, յուրաքաչյուր անկյունում՝ մեկ աշտարակ, որ Սավուղին որպես ամրոց է ծառայել: Հղկված քարից կառուցված այս ամրոցը գոյություն է ունեցել (համենայն դեպս Օլբրայթի կարծիքով) Ք. ա. 1025 թ.–ից մինչև 950 թ. և Սավուղի համար իբրև դաշտային պաշտպանական շինություն ծառայել, որտեղ ծրագրվում էին փղշտացիների դեմ ռազմական գործողությունները: Գաբաայի հետագա պեղումների ժամանակ ամրոցի հարավ–արևմտյան անկյունում մի աշտարակ հայտնաբերվեց: Սակայն հարկ է նկատի ունենալ, որ պեղումները չէին ընդգրկել բովանդակ շրջանը[1]:

4) 12 տարի շարունակ (1921–1933 թթ.) Կլարենս Ս. Ֆիշերի, Ալան Ռոուի և Գ. Մ. Ֆիցջերալդի գլխավորած Փենսիլվանիայի համալսարանի հնագիտական արշավախումբը Բեթսանում երկու տաճարի ավերակներ բացեց: Հին Բեթսանը գտնվում էր Թելլ–ալ–Հուսն մեծ բլրի ստորոտում՝ Հեզրայել հովտի եզրին:

Այս երկու տաճարների ավերակներում «հայտնաբերվեցին առավելապես պաշտամունքի մետաղական առարկաներ և օձի պատկերներով փոքրիկ արկղիկներ», որոնք պարզիպարզո մատնանշում են, որ «տաճարները նվիրված են պտղաբերության դիցուհի Աստարտին և փղշտացիների գերագույն աստված Դագոնին»[2]:

Մեկնաբանելով Բեթսանի այս պեղածները՝ հնագետ Թոմպսոնը նկատում է. « Մենք կարող էինք համոզված լինել, որ վերոհիշյալ արշավախմբի կողմից հայտնաբերված տաճարներից

1 **Thompson J. A.** Op. cit. P. 95-96. **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 245.
2 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 246.

մեկը Աստարտինն է: Բեթսանում կային այդ ժամանակներին հատուկ մեհյաններ, որտեղ պաշտվում էին Քանանի կուռքերը: Դրանցում պաշտամունքային զանազան իրեր հայտնաբերվեցին: Այնուամենայնիվ անհնար է ասել, թե այս երկու տաճարից որն էր Աստարտինը, որի սրբարանի մասին խոսվում է Հին Կտակարանի Ա Թագավորաց գրքում: Այսուհանդերձ այսօր բավական ակնհայտ է, որ այդ ժամանակ Բեթսանում հեթանոսական տաճար կար»[1]:

Վերոհիշյալ պեղածոների առնչությամբ հնագետ Ֆրիի հայտնած կարծիքը Թոմպսոնի կարծիքից ավելի կտրուկ է: Երկու մեհյանների չափերն ու դիրքը նկարագրելով՝ նա հավելում է. «Բեթսանում պեղումներ կատարած հնագետները այս տաճարը նույնացրին Աստարտի տաճարի հետ, որտեղ (փղշտացիները) զետեղեցին Սավուղի զենքն ու զրահը (Ա Թագ. 31. 10): Տաճարը հայտնաբերվեց բարձր բլրի հարավային լանջին, որը, ինչպես ցույց տվեցին պեղումները, կառուցվել էր նախքան Սավուղի շրջանը: Երկարությունը մոտ 24 մ է, իսկ լայնությունը՝ 19 մ: Տաճարը կառուցված է արևմուտքից դեպի արևելք ընկած ուղղությամբ և ունի մեծ կենտրոնական սրահ՝ կողքերին երեք կլոր քարե հենարաններով: Միջին սյան հիմքի տակ հայտնաբերվեց պահոց՝ մեջը ոսկյա ու արծաթյա մատանիներով, ականջօղերով, մետաղական թիթեղներով լի անոթ: Տաճարի ներսում դիցուհի Աստարտի պատկերով բազալտե կոթող գտնվեց (...): Հնագետ Ռոուն (պեղումների երեք ղեկավարներից մեկը) համարում է, որ մեր ձեռքի տակ եղած բոլոր տվյալները խոսում են այն մասին, որ կռատունը կառուցվել է Բեթսանի բնակիչների՝ եգիպտացիների կողմից՝ ի պատիվ դիցուհի Աստարտի[2]»:

Ինչ վերաբերում է Դագոնի տաճարին, որտեղ, ըստ Հին Կտակարանի (Ա Մնաց. 10. 10), փղշտացիները զետեղեցին Սավուղի գլուխը, պրոֆեսոր Ֆրին գրում է. «Աստարտ դիցուհու մեհյանից հարավ ընկած վայրում պեղված տաճարը Ռոուն նույնացնում է Սուրբ Գրքում հիշատակված Դագոնի տաճարի հետ: Ռոուն եզ-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 94-95.
2 **Free J. P.** Archaeology…P. 152-153.

ռակացնում է, որ Ա Մնացորդաց գրքում խոսքը Բեթսանի երկու տաճարների մասին է, որոնք պատկանում են փղշտացիների ժամանակաշրջանին, ընդ որում պեղումները հաստատեցին այդ»[1]:

Հետևաբար, հնամենի Բեթսանի քաղաքային պարիսպներն ու հեթանոսական տաճարների պատերը, իրոք, Սավուղ թագավորի մարմնի անարգման ականատեսներ են. այս մասին պատմում են Հին Կտակարանի երկու գրքերը՝ Ա Թագավորացը (31. 1–10) և Ա Մնացորդացը (10. 10):

ՍՈՂՈՄՈՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՅՈՒՆԻԿԵՅԻՆԵՐԻ ՀԵՏ

Հնագիտական պեղումները քայլ առ քայլ վավերացնում են Մեծն Սողոմոն թագավորի մասին աստվածաշնչյան պատումների հավաստիությունը: Գիտությունն իր տրամադրության տակ ունի Սողոմոնի կյանքին ու գործունեությանն առնչվող դարակազմիկ պեղածոներ: Հնագիտության պրոֆեսոր Օլբրայթն իր «Պաղեստինի հնագիտությունը» երկասիրության մեջ նշում է. «Սողոմոնի դարաշրջանը Պաղեստինի ծաղկման բարձրակետն է: Երկար լռելուց հետո վերջապես հնագիտությունը համոզիչ կերպով հաստատեց Սուրբ Գրքում ամփոփված տեղեկությունները»[2]: Սողոմոնին առնչվող հարուստ հնագիտական նյութերից կշոշափենք միայն նրա կյանքի և գործունեության կարևորագույն փուլերին վերաբերող սահմանափակ թվով տվյալներ:

Արդարև, Դավիթն իր որդուն աշխարհակալ տերություն ավանդեց: Աստվածաշնչում ասվում է, որ Սողոմոնը գլուխը, թագավորը և տերն ու տիրականն էր բոլոր այն թագավորությունների (կամ պետությունների), որոնց սահմանը արևելքում ընդարձակվում էր մինչև Եփրատ գետը, արևմուտքում՝ փղշտացիների

1 **Rowe A.** The Temples of Dagon and Ashtoreth at Bethsham// Museum Journal. Vol. XVII, № 3, Sept.,1926. P. 298. Մեջբերումս ըստ **Free J. P.** Archaeology…P. 153.
2 **Albright W. F.** The Archaeology of Palestine…P. 123.

հողերը, իսկ հարավ–արևմուտքում՝ մինչև Եգիպտոս (Բ Մնաց. 9. 26): Այս պետությունների արքաներն ու կառավարիչները Սողոմոնին ընծաներ էին նվիրաբերում, նրա հպատակներն էին ու ցմահ ենթարկվում էին նրան (Գ Թագ. 5. 1, Բ Մնաց. 9. 26):

Սուրբ Գրքի պատմական ստուգությունը ժխտողները տարակուսում են, որ Ք. ա. 950 թ. Սողոմոնն ի զորու էր իշխել այդքան լանածավալ տարածքով մի տերության:

Այդուհանդերձ այս փաստը հաստատվում է ինչպես հնագիտությամբ, այնպես էլ հին պատմությամբ: Պեղածոները վկայում են այդ շրջանում (Ք. ա. 1150 թ.) Եգիպտոսի անկման մասին: Ք. ա. 1100–900 թթ. Իսրայելի թագավորության կայացման շրջանում Եգիպտոսում իշխում էր «թույլ և անփառունակ 21–րդ հարստությունը»: Ջուգընթացաբար Ասորեստանը ևս թևակոխել էր ռազմական և ընդհանուր անկման փուլ[1]: Այսպիսով իսրայելացի երկու թագավորներին՝ Դավթին և Սողոմոնին, իրենց պետությունն ընդարձակելու և հզորացնելու հազվադեպ պատեհություն էր ընձեռնվել[2]:

Սուրբ Գրքում խոսվում է փյունիկեցիների՝ Սողոմոնի գործունեության մեջ անմասն չլինելու մասին: Բայց 20–րդ դարագլխում այս վկայությունն անհավաստի էր նկատվում: Սրբազան բնագիրը հայտնում է մեզ, որ Սողոմոնը Երուսաղեմի իր վեհաշքանչ Տաճարը կառուցելիս օգնության խնդրանքով դիմեց Քիրամին՝ փյունիկյան Տյուրոսի արքային: Քիրամ անունը հիշատակվում է սիրիական Ջուբեյլում Ռամզես II–ի ժամանակների քարադագաղում հայտնաբերված մակագրությունում, սակայն «Աքամ» ձևով: Ջուբեյլը հինկտակարանյան ժամանակներում եբրայերեն Գեբաղ էր կոչվում: Դա հին հույների Բիբլոսն էր[3]: Սուրբ Գրքում փյունիկյան արքա Քիրամի և նրա հպատակների՝ արհեստավորների և նավաստիների հիշատակումը, որոնց ծառայություններից օգտվում էր Սողոմոնը (Գ Թագ. 5. 15, 22, 23 9. 11, 27), ցույց է տա-

1 **Breadsted J. H.** A History of Egypt. N. Y.: Scribner's, 1912. P. 525. **Olmstead A. T.** History of Assyria. N. Y.: Scribner's, 1923. Ch. VII: «Dark Centuries»:.

2 **Free J. P.** Archaeology and the Age of Solomon: The Greatness of Solomon's Empire//Sunday School Times. Philadelphia, Pa.,Jan. 15,1944;Vos H. F. Op. cit. P. 72.

3 **Barton G. A.** Op. cit. P. 128.

լիս, որ փյունիկեցիներն ուշադրության արժանի ժողովուրդ էին: Նրանց մեջ քաջահմուտ արհեստավորներ ու առևտրականներ կային: Ք. ա. IX դ. Կիպրոսում և Սարդինիայում պեղված վավերագրերը մատնանշում են Սուրբ Գրքում էլ վկայված այս ժողովրդի զգալի ակտիվությունը Միջերկրականում: Պրոֆեսոր Օլբրայթն այս մակագրությունների կարևորության առնչությամբ գրում է. «Հերթական անգամ համոզվում ենք, որ պետք է ամբողջովին վերանայել անցյալ դարին հատուկ սկեպտիկ վերաբերմունքը Հին Կտակարանի պատմական ստուգության հանդեպ (...): Անսպասելիորեն Սողոմոնի մասին պատումները կրկին պատմականորեն հավաստի և տրամաբանական դարձան»[1]:

Հարկ է նաև նշել, որ Սողոմոնի՝ Իսրայելում իշխելու օրոք Փյունիկիան Արևելքի մեծագույն տերություններից էր: Նրա ժողովուրդը, որ քանանական ցեղախմբի հյուսիսային ճյուղն էր կազմում, հրաժարվեց ռազմական փառքի նկրտումներից և զբաղվեց առևտրով: Փյունիկիայի հրաշալի վարպետները ցանկալի հյուրեր էին ողջ Արևելքում: Այս հանգամանքով է բացատրվում Փյունիկիայի հարևան երկրներում հանդիպող փյունիկյան արվեստի և ճարտարապետության մեծաքանակ հուշարձանների գոյությունը: Ահա թե ինչու էր Սողոմոնը շինանարության, մետաղների մշակման, նավաշինության և նավավարության աշխատանքներում օգտվում այդ տաղանդավոր և ճարտար փյունիկեցիների ծառայություններից:

ՍՈՂՈՄՈՆԻ ԲԵՐԴԱՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱՆԵՐԸ

Ըստ Հին Կտակարանի՝ Սողոմոնը կառուցեց բերդաքաղաքներ և Ասուրի, Մակեդոնվի, Գազերի ու Երուսաղեմի

1 **Albright W. F.** New Light on the Early History of Phoenician Colonization// Bulletin of the American Schools of Oriental Research, №83. Oct.,1941. P. 22; **Free J. P.** Archaeology and the Age of Solomon: Solomon's Phoenician Friends// Sunday School Times. Philadelphia, Pa. January 22,1944.

Մակեդդովի քաղաքային դարպասները: Ք. ա. X դար:

քաղաքային պարիսպները (Գ Թագ. 9. 15,19 (ըստ եբր. բնագրի 10. 26): Իրոք որ պեղումներին հաջորդած հետազոտությունները ցույց տվեցին, որ Ասուր, Մակեդդով և Գազեր բերդաքաղաքների քաղաքային դարպասները, որոնք աչքի են ընկնում հատուկ կառուցվածքով և հրաշալի կատարմամբ, Սողոմոնի իշխանության շրջանին են պատկանում: Բացի այդ, Մակեդդովի (արդի Թելլ–ալ–Մութեզելլիմը) պեղումները Սողոմոնի ռազմական բազաներից մի հետաքրքիր նմուշ ի հայտ բերեցին: Սրանք ռազմավարական առումով կարևոր կետերում տեղակայված «մարտակառքային քաղաքներ» էին, այսինքն՝ այս վայրերում մարտական կառքեր էին տեղակայվում: Հենց այստեղ էլ վարժեցնում էին հեծյալներին (Գ Թագ. 4. 26 (ըստ եբր. բնագրի) 10. 26–29 և այլն): Պեղումներին ձեռնամուխ եղավ Արևելքի գերմանական ընկերությունը, որին հետագայում փոխարինեց Չիկագոյի համալսարանի Արևելագիտության ինստիտուտը: Պեղվելիք շրջանն ընդարձակ էր, ուստի և պեղումները 20 տարուց ավելի տևեցին: Հաջորդաբար աշխատանքները գլխավորեցին Կլարենս Ֆիշերը, Պ. Լ. Օ. Գայը և Գորդոն Լաունդը:

1928 թ. Գայը չափազանց կարևոր ավերակներ բացեց: Չորրորդ շերտի այդ գյուտը Սողոմոնի դարաշրջանին էր պատկա-

Ք. ա. X-IX դդ. Մակեդոնվի շինությունների պեղումների տեղամաս:

նում: Շերտի վերին մակարդակը ամբողջությամբ բաղկացած էր հասարակական շինություններից, որոնց մեկ հինգերորդ մասում 450 ձիերի համար երկու խումբ ախոռներ և 150 սայլերի համար ծածկեր կային[1]: Պեղածոները ցույց տվեցին, որ բնակելի մասը պարսպից դուրս էր գտնվում, իսկ ներսում միայն ամրոցն էր: Նման «ախոռների» խմբեր հայտնաբերվեցին նաև Փաանախում, Ասուրում, Թելլ–ալ–Էզում (Աիալոնում) և Գազերում: Սակայն ըստ Երուսաղեմի համալսարանի պրոֆեսոր Յիգայել Յադինի վերջերս կատարած հետազոտությունների՝ Գայի ձեռամբ ամենավերին շերտում հայտնաբերված ավերակները Սողոմոնից ավելի ուշ դարաշրջանով են թվագրվում: Ամենայն հավանականությամբ դրանք պատկանում են Ամրիի և Աքաաբի ժամանակներին: Այնուամենայնիվ, ըստ պրոֆեսոր Թոմպսոնի, Սողոմոնի դարաշրջանի «ախոռները» արտաքնապես նման էին այդ շինություններին և, թերևս, դեռ կհայտնաբերվեն նույն տեղում[2]:

Ասուրում, Թելլ–Շեվում, Բեթսամյուսում, Թելլ–Բեյթ–Միրսիմում և այլ պեղումնավայրերում կատարված նորագույն հետա-

1 **Unger M. F.** Archaeology and the Old Testament. Grand Rapids: Zondervan Publishing House, 1954. P. 224.

2 **Thompson J. A**. Op. cit. P. 103.

զոտությունների և հնագիտական պեղածոների արդյունքում հնագետներն այն եզրակացության եկան, որ այդ շինությունները թագավորական պահեստներ են: Հայտնաբերվել են գուռեր և սյունահիմքեր, որոնցից կապում էին կենդանիներին՝ բեռնելուց և բեռնաթափելուց առաջ: Իհարկե, չի բացառվում, որ պահեստներ ունեցող քաղաքները «մարտակառքային քաղաքներ» լինեին: Ուստի, Թոմպսոնի կարծիքով, այս հարցն առկախ կմնա մինչև ուրիշ հնագիտական կամ բանասիրական նյութեր հայթայթելը, որը կօգնի մեզ պարզելու, թե Սուրբ Գրքում հիշատակված քաղաքներից որոնք էին պահեստներ, որոնք՝ «մարտակառքային քաղաքներ»: Բանն այն է, որ Գ Թագավորաց գրքում (9. 15 ըստ եբր. բնագրի) Մակեդդովը, Ասուրը, Գազերը պարզապես հիշատակվում են իբրև Սողոմոնի կողմից կառուցված քաղաքներ, սակայն նույն գրքի 4. 26 (ըստ եբր. բնագրի) և 10. 26–29 համարներում խոսքը «մարտակառքային քաղաքների», մարտական կառքերի, հեծյալների և երիվարների մասին է, իսկ նույն գրքի 9. 15,17–19 (ըստ եբր. բնագրի) համարներում որոշակիորեն չի խոսվում Սողոմոնի «պահեստների քաղաքների», «մարտակառքերի քաղաքների» և «հեծյալների քաղաքների» մասին: Ընդ որում չեն հիշատակվում նրա կողմից կառուցված և ամրացված այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Երուսաղեմը, Ասուրը, Մակեդդովը, Գազերը, Բեթորոնը, Բաալաթը և Թամարը[1]:

Այսպես թե այնպես հնագիտությունը հաստատում է հինկտակարանյան վկայությունները. 1) Սողոմոնը փյունիկեցիների օգնությամբ Պաղեստինի ռազմավարական առումով կարևոր կետերում կառուցեց և ամրացրեց մարտակառքերի համար նախատեսված ինքնատիպ ճարտարապետությամբ քաղաքներ, 2) նա քաղաքներն օգտագործեց գերազանցապես իբրև մթերային պահեստներ և մարտակառքերի, հեծյալների և երիվարների կայաններ:

Վստահաբար նորագույն պեղածոներն էլ ավելի կլուսաբանեն այս խնդիրը:

1 **Thompson J. A.** Op. cit. P. 103-104; Kitchen K. A. Op. cit. P. 85-86.

ՍՈՂՈՄՈՆԻ ՏԱՃԱՐԸ

Հին Կտակարանում նշվում է, որ Սողոմոնը, ում վիճակված էր կառուցել Աստծո Տաճարը, մեծահարուստ էր: Նրա անհաշիվ գանձերի հիմնական աղբյուրը վիթխարի հարկերն էին: Այսպես, նրա գանձարան մտնող միայն ոսկին 666 տաղանդ էր կազմում (20000–30000 կգ, ինչը մոտավորապես հավասար էր 87 812 000 ֆրանսիական ֆրանկի կամ 20 միլիոն ամերիկյան դոլլարի): Եվ սա դեռ չհաշված իր հպատակ վաճառականներից ստացված հասույթը, իրեն հարկատու թագավորներից (իր պետության սահմաններից դուրս) և զանազան ծայրագավառների կառավարիչներից ստացված հարկերը (Գ Թագ. 10. 14–15): Ըստ Ֆայֆերի հաշվարկների՝ Սողոմոնի ստացած միայն ոսկին գերազանցում էր 25 միլիոն դոլլարի սահմանագիծը[1]: Ոսկու այսքան մեծ քանակը բնավ զարմանալի չէ: Այն ժամանակներում այն գտնելը ավելի դյուրին էր, քան մեր օրերում: Բաբելոնյան թագավորն Ամենհոտեպ III–ին (Ք. ա. մոտ 1375 թ.) գրում էր. «Եղբայր, քո երկրում ոսկին ասես փոշի լինի»: Թութանհամոնի դագաղը ամբողջությամբ ոսկուց էր: Բացի այդ ասորեստանյան թագավորներն ասում են, որ իրենք մեհյանների պատերը ամբողջովին ոսկով են պատում[2]:

Սողոմոնը Մորիա լեռան վրա ծվարած Երուսաղեմ քաղաքում վեհասքանչ Տաճար և իր համար արքունիք կառուցեց: Տաճարի կառուցումը (27,4x9,1x13,72 մ) յոթ տարի տևեց, այնինչ իր արքունիքինը (45,72 x 22,86 x13,72)՝ 13 տարի: Սիոն լեռան վրա Սողոմոնի Տաճարի հետքերը չհայտնաբերվեցին:

Այնպես պատահեց, որ կողք կողքի կառուցված Տաճարի և պալատի ավերակները, ըստ երևույթին, մնացին և անթեղվեցին Ք. հ. 691 թ. կառուցված Հարամ–աշ–Շերիֆ (Օմարի) մզկիթի տակ: Այն մահմեդական սրբավայր է, ուստիև անմատչելի հնագետ – գիտնականների համար: Այդ իսկ պատճառով որևէ հնա-

1 **Pheiffer R. H.** Op. cit. P. 384.
2 **Short A. R.** Op. cit. P. 35.

Երուսաղեմի Սողոմոնի Տաճարի վերակազմությունը՝ առաջարկված Սթիվենսոնի կողմից՝ Օլբրայթի և Ռայթի հիմնավորումների հիման վրա:

գիտական տվյալ չունենք: Միակ բանը, որ մնացել է Տաճարից, սրբազան քարն է՝ ողջակեզների զոհասեղանի հիմքը, իսկ որոշ գիտնականների կարծիքով՝ ինքը՝ սրբությունների սրբությունը[1]: Այսօր սրբազան քարը ինչ–որ առումով մահմեդական տաճարի սիրտն է, որ ծածկված է այսպես կոչված Ժայռի Գմբեթով (Կղուբաթ–աս–Սախրա):

Այս վեհաշուք Տաճարի մասին տեղեկությունների միակ աղբյուրը Հին Կտակարանն է: Այսպես՝ Թագավորությունների Գ (գլուխ 6) և Բ Մնացորդաց (գլուխ 2) (Գ Թագ. գրքի 6–րդ գլխի հեղինակի հաղորդած տեղեկությունները ճշմարտապատում են, քանզի ապրել է խնդրո առարկա անցքերին մոտ ժամանակներում) գրքերի բովանդակությունը և Սողոմոնի Տաճարին ժամանակակից արևելյան հեթանոսական մեհյանների հետազոտությունները (զորօրինակ՝ սիրիական ծովեզրի Թելլ–Թայնաթի, Սիրիայի հյուսիս–արևմուտքում գտնվող Սամալայի և կենտրոնական Սիրիայի Խամաֆի (Խամաթ)) մեզ Սողոմոնի Տաճարի մասին բավական ընդգրկուն պատկերացում են տալիս: Հատկապես Թայնաթի մեհյանը հար և նման է իրենից չափերով անհամեմատ մեծ Երուսաղեմի Տաճարին[2]:

1 **Βέλλας Β. Μ.** Ἑβραϊκὴ Ἀρχαιολογία…Σ. 130.
2 Տես **Cornfeld G.,** Freedman D. N. Op. cit. P. 104

Լիբանանի մայրիները:

Մեր նպատակը չէ Տաճարի մանրակրկիտ նկարագրությունը, ասենք դա անհնար էլ է, քանզի հնագիտական տվյալների բացակայության պայմաններում բավարարվում ենք լոկ Հին Կտակարանի հաղորդած տվյալներով: Մենք միայն հաշվի ենք առնում մի քանի հատկորոշ հնագիտական գտածոներ, որոնք հավաստում են աստվածաշունչ բնագրում ամփոփվածի իսկությունը: Կարևորն այն է, որ գտածոները հաստատում են Սողոմոնի կողմից փյունիկեցի վարպետների և Տյուրոսի ու Բիբլոսի նախագծողների՝աշխատանքներում ընդգրկման փաստը, որի մասին վկայում է նաև Հին Կտակարանը: Տաճարը կառուցելիս՝ Սողոմոնն օգտվում էր Քիրամ (Տյուրոսի Քիրամ արքայի անվանակիցը) ճարտարապետի ծառայություններից: Նրա հայրը Տյուրոսի փյունիկեցիներից էր, իսկ մայրը՝ Դանի ցեղի հրեուհիներից (Բ Մնաց. 2. 13–14): Սողոմոնի Տաճարի բազմաթիվ ճարտարապետական և գեղազարդային տարրեր համապատասխանում են Ասորիքի և Փյունիկիայի համապատասխան կառույցների դետալներին: Ի մասնավորի Թայնաթի (Ք. ա. IX դ.) և Ասուրի (պղնձե դարի վերջ) մեհյանների հատակագծերը համընկնում են Սողոմոնի Տաճարի հատակագծին: Փյունիկեցի վարպետների ձեռամբ փղոսկրի վրա փորագրված քերովբեներ և արմավենու պատկերներով բարձրաքանդակներ հանդիպում են բովանդակ Մերձավոր Արևելքում:

Բացի այդ, Գ Թագավորաց գրքի 6–րդ գլխում առանձնահատուկ կերպով խոսվում է շինարարության ժամանակ օգտագործված փայտանյութի մասին: Դա առավելապես մայրու փայտն էր, որը Սողոմոնին մատակարարում էր Քիրամ արքան (Գ Թագ. 5. 10): Այս փայտանյութը նախևառաջ Աստծո Տաճարի շինարարության ժամանակ էր օգտագործվում (Գ Թագ. 6. 9–10): Նրա պատերը երեսպատվեցին մայրու տախտակներով, իսկ հատակը՝ եղևնափայտով: Պատերի և այլնի զարդապատկերները ոսկյա

գեղազարդային բարձրաքանդակների տեսքով էին կատարվում: Այդ նույն փյունիկյան ազդեցությամբ էր պատրաստվել պղնձե կահավորանքը, այնպես որ և՛ ատաղձագործական աշխատանքները, և՛ մետաղների մշակությունը Տաճարում փյունիկյան արվեստի նմուշների ազդեցությամբ էին կատարվում: Այսպիսով հաստատվում է Հին Կտակարանի վկայությունը, թե Սողոմոնն իրապես օգտվում էր փյունիկեցիների ծառայություններից[1]:

Մայրու անտառակ Լիբանանի սարերում:

Ինչ վերաբերում է Տաճարի ճարտարապետությանը, ապա հնագիտությունը բավական հանգամանալից է լուսաբանում այս հարցը: Տաճարի երկու մասերը՝ իսրայելացիներին անապատում ուղեկցող վկայության խորանի օրինակով կառուցված սրբությունը և սրբությունների սրբությունը, ինչ–որ առումով կարելի է համադրել Մերձավոր Արևելքի այլ սրբազան կառույցների հետ[2]: Տաճարի կենտրոնն ու սիրտը՝ դաբիրը, սրբավայրն էր կազմում: Այն միշտ մթամած էր և հասարակ մահկանացուների համար՝ անմատչելի: Հեթանոսական մեհյանների դաբիրում կուռքի պատկերն էր զետեղված, իսկ Սողոմոնի Տաճարի դաբիրում կամ սրբությունների սրբությունում՝ Ուխտի տապանակը:

Բացի այդ, Յաքում և Վոոզ անվանված երկու կրող սյուները՝ ձուլագործական արվեստի այս կոթողները, որոնց խոյակների վրա շուշանաձև զարդեր քանդակվեցին (խորհրդանշական նշանակություն ունեցող զարդ), և որոնք գտնվում էին Տաճարի նախադռան մուտքի աջ և ձախ մասերում, Հերոդոտոսի կողմից հիշատակված արևելյան մեհյաններում իրենց նմանակներն ունեն (Հերոդոտոս II, 44): Այսպիսով Սողոմոնը խստագույնս հետևելով վկայության խորանի օրինակին՝ որոշ դետալներում, որոնք Տա-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 101.
2 Տես **Wright G. E.**,Filson F. V. Op. cit. P. 48.

ճարին մեծապես կատարելություն էին հաղորդում, բավականին ազատ հետևում էր իրեն ժամանակակից արևելյան տաճարների օրինակներին:

ՍՈՂՈՄՈՆԻ ՆԱՎԱՏՈՐՄԸ

Ըստ Հին Կտակարանի՝ Տյուրոսի Քիրամ արքան Սողոմոնին նավատորմ նվիրեց, որի համար վերջինս Կարմիր ծովի ափին՝ ժամանակակից Ելաթի մոտ (Աքաբա ծոցում), Եդոմացիների երկրի հարավում գտնվող Գասիոնգաբերում նավահանգիստ կառուցեց: Քիրամը իր սեփական նավատորմի անձնակազմից նաև հմուտ նավաստիներ ուղարկեց: Քիրամի փյունիկեցի նավորդներից և Սողոմոնի հպատակներից համատեղ անձնակազմ ստեղծվեց (Գ Թագ. 9. 26–27): Սողոմոնի օրոք Քերմելի և Գազայի միջև առևտրա–փոխադրական նավերի համար պիտանի նավահանգիստ չկար, ուստի իսրայելական թագավորը Գասիոնգաբերը նավահանգիստ դարձրեց, քանզի այս տեղը լիովին համապատասխանում էր նավերի հանգրվաններին ներկայացվող բոլոր պահանջներին: Այսպիսով այստեղ Սողոմոնի նավերը երկարատև նավագնացությունների էին նախապատրաստվում:

Մենք քիչ բան գիտենք Սողոմոնի նավատորմի մասին: Սակայն հայտնի է, որ նրա նավերը փյունիկյան օրինակով էին կառուցված: Հավանաբար փյունիկեցիները Սողոմոնի առևտրական նավատորմի դեմ առարկություններ չունեին, քանզի վերջինիս առևտրական ողջ գործունեությունը ծավալվում էր Կարմիր ծովի շրջանում և Արևելքում: Այն ժամանակ դեռևս Սուեզի ջրանցքը գոյություն չուներ, և Սողոմոնին դժվար էր մրցակցել փյունիկեցիների հետ, ովքեր գերիշխում էին Միջերկրական ծովում: Եբրայեցիներին ծովագնացության հմտություններ սովորեցնելով՝ Տյուրոս քաղա-



Փյունիկեցիներն անտառափայտ են տեղափոխում: Հին ասորեստանյան պատկեր:

քի բնակիչները դրա դիմաց հազվագյուտ արևելյան ապրանքներ էին ստանում, որոնցով առևտուր էին անում Միջերկրականում[1]:

Պեղումները հաստատեցին Գասիոնգաբերում նավահանգստի գոյության փաստը (Աքաբայի ծոցի խորքում, որտեղ գտնվում է ժամանակակից Ելաթը, այսինքն՝ հին Ելոթը): Այնտեղ բազմաթիվ առարկաներ գտնվեցին, որոնք վկայում են աշխույժ նավագնացության մասին՝ պղնձե և երկաթե գամեր, տարբեր տեսակի պարանների ծվեններ, կապարե (ձյութե) կնձիկներ, ինչպես և այլ երկրներից բերված իրեր: Դրանցից մի քանիսը եգիպտական են, մյուսները ներմուծված են Հարավային Արաբիայից: Այս ամենը վկայում է, որ Գասիոնգաբերը առևտրական կենտրոն էր, որն առավելապես գոյատևում էր ծովի հաշվին: Իսրայելացիները նավորդներ չէին: Նրանք երբեք չէին ճամփորդել ծովով և ծովագնացության ու նավաշինության արվեստին չէին տիրապետում: Ուստի Սողոմոնը օգնության խնդրանքով դիմեց քաջահմուտ փյունիկեցիներին (Գ Թագ. 9. 26–27):

Սակայն միայն Սուրբ Գրքից չէ, որ տեղեկություններ ենք քաղում Գասիոնգաբերում նավահանգստի կառուցման մասին. փյունիկյան աղբյուրներում հիշատակվում են նավատորմի փյունիկյան նավապետների՝ փորձառու Կեդարի, Յամինի և Քոթիլի անունները[2]:

Այս հոյակապ սարքավորված և ամրացված նավահանգստից Սողոմոնի նավերը հեռավոր նավարկություններ էին կատարում՝ հասնելով Թարսիս և Օփեր կամ ըստ հունական բնագրի՝ Սոփեր (Գ Թագ. 9. 28): Դեռևս անհայտ է Սոփերի գտնվելու վայրը: Ոմանց կարծիքով դա Հարավային Արաբիան է (Եմենը), ըստ մյուսների՝ արևելյան Աֆրիկան, իսկ ոմանք էլ Հնդկաստանն են մատնացույց անում: Բայց մեծամասնությունը հակված է Եմենի տարբերակին: Եվ թեև այս հարցը ցայսօր իր վերջնական լուծումը չի գտել, սակայն հայտնի է, որ Սոփերը ոսկով հարուստ շրջան էր: Սա հաստատվում է Թելլ–Կազիլեհում հայտնաբերված մի

1 Տեմ **Vos H. F.** Op. cit. P. 82.
2 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 270,271.

խեցեբեկորով, որի վրա գրված է. «Սոփերից ոսկի Բեթորոն, 30 սիկղ»:

Աստվածաշնչում գրված է, որ Սողոմոնի նավերը Թարսիս էին հասնում (Գ Թագ. 10. 22): Հնարավոր է, որ Թարսիսն Իսպանիան է: Այդտեղից թանկարժեք մետաղներ, փղոսկր և այլ էկզոտիկ ապրանքներ էին բերում: Փյունիկերեն «Թարշիշ» բառը նշանակում է «մետաղներ զտելու արհեստանոց»: Այսպես էին կոչում այն տեղերը, որտեղ փյունիկեցիները արհեստանոցներ էին կառուցում, ինչպես, օրինակ՝ Սարդինիայում ու Իսպանիայում[1]:

ՍԱԲԱՅԻ ԴՇԽՈՆ

Սողոմոն թագավորը, Եթովպական ձեռագիր:

Սողոմոնի առևտրական գործունեությամբ է պայմանավորված նաև Սաբայի թագուհու այցելությունը նրան: Հնագետ Ն. Գլյուկի կարծիքով Սողոմոնն այնքան լայն առևտրական գործունեություն էր ծավալել, որ այն ազդում էր նաև Սաբայի թագուհու պետության տնտեսության վրա: Առավելապես տնտեսական խնդիրներ լուծելու պատճառով էլ նա այցելեց Սողոմոնին: Գլյուկը գրում է. «Նկատի ունենալով այն հանգամանքը, թե հարուստ Հարավային Արաբիայի գեղուհի տիրուհին Սողոմոնին տեսնելու համար ինչպիսի դժվար ճամփորդություն է կատարել դեպի Երուսաղեմ՝ ուղտերի[2] վրա կտրել–անցնելով 1200 մղոն (2224 կմ), ապա անհնար է հավատալ, որ նա այդ հեռավոր ու դժնի ճամփորդությունը ձեռնարկել է միայն այն բանի համար, որ հիանա ու զարմանա երուսաղեմյան արքայի վեհությամբ»[3]:

1 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 110-111. **Tompson J. A.** Op. cit. P. 106.
2 Մենք արդեն հանգամանալից շոշափել ենք Ք. ա. 3000 թ. ի վեր վարժեցրած ուղտերի օգտագործման թեման: Տես «Աբրահամի պանդխտությունը» գլուխը:
3 **Glueck N.** The Other Side of Jordan… P. 85. մեջ. ըստ **Vos H. F.** Op. cit. P. 82.

Արաբիայում ուղտեր վարժեցրել են տակավին Ք. ա. IX դարից առաջ: Ուստի անհեթեթ է ժխտել այն փաստը, որ հաջող կերպով «անապատի նավեր» հորջորջված այս գրաստը վաճառականների կողմից օգտագործվել է դեռևս Ք. ա. X դարի կեսից էլ շուտ հյուսիսային և հարավային Ասորիքի տարածքների միջև՝ ներառյալ Քանանն ու Հարավային Եմենը: Ըստ Գաալյահ Կորնֆելդի և Դավիթ Ն. Ֆրիդմանի՝ «Սաբայի թագուհու՝ Սողոմոն արքային այցելելու նպատակը, ամենայն հավանականությամբ, առևտրական պայմանագրի կնքումն էր, որն առնչվում էր Հարավային Եմենի էկզոտիկ համեմունքների, Իսրայելի գյուղատնտեսության արգասիքների, ինչպես և «երրորդ երկրների, օրինակ՝ Փյունիկիայի արտադրած ապրանքների փոխանակության հետ»[1]: Իհարկե, Սուրբ Գրքում հիշատակված չեն առևտրական գործարքները, որոնց մասին խոսում է Գլյուկը և գրում են Կորնֆելդն ու Ֆրիդմանը: Բայց չի բացառվում, որ Սողոմոնի և Սաբայի դշխոյի հանդիպման ընթացքում արծարծված լինեն նաև այդպիսի խնդիրներ:

Համենայն դեպս նշանակալից է հետևյալը. ոմանք միտված են վիճարկելու Սաբայի թագուհու մասին Սուրբ Գրքի պատումների իսկությունը և այն ռոմանտիկ առասպել են համարում: Նրանք պնդում են, որ այդ դարաշրջանում Սաբայում դեռևս մշակութային բարձր մակարդակ ունեցող ժողովուրդ չկար, քանզի այդ շրջանում ձևավորված մշակույթը ավելի շուտ մինեական էր (արաբական մեկ այլ ժողովուրդ): Սակայն (և սա մեզ համար առանձնահատուկ նշանակություն ունի) հնագիտական պեղումները հերքեցին այդ կարծիքը: Հնագիտությունը վկայում է, որ Սողոմոնի օրոք Հարավային Արաբիայում (Եմեն) արդեն գոյություն ուներ Սաբայի թագավորությունը: Ք. ա. X դ. թվագրվող պեղածոներն ապացուցում են ձևավորված մշակույթի և գործածվող այբուբենի (հին քանանական այբուբենից սերած) գոյությունը: Բացի այդ ասորեստանյան թագավորների (Թիգլաթ–պալասար IV, Սինաքերիբ և այլք) պեղածո պատմական տարեգրքերում

1 **Cornfeld G., Freedman D. N**. Op. sit. P. 112.

հաղորդվում է, թե Սաբայի ժողովուրդը, որը չնայած բնակվում էր հյուսիս–արևմտյան Արաբիայում, առևտրական հարաբերություններ է ունեցել Հարավային Արաբիայի հետ: Փենսիլվանյան համալսարանի պրոֆեսոր, եբրայագետ և արամեագետ Յ. Մոնտգոմերին նշում է, որ վավերագրերի բովանդակությունը կարելի է հարաբերակցել Սաբայի թագուհու գործունեության հետ, ով հարավից Սողոմոնին թանկարժեք ընծաներ բերեց, այնպես որ այս առումով Սուրբ Գրքի պատումները «բացարձակապես ստույգ» են[1]:

Հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնը ավելի խստորոշ է արտահայտվում: Նա գրում է. «Այն ժամանակներում Պաղեստինի և Հարավային Արաբիայի միջև առևտրական կապերի գոյությունը փաստող հստակ և ստույգ վկայություններ կան: Հին Սաբայի թագավորությունը գտնվում էր Արաբիայի հարավ–արևմտյան վերջամասում: Վերջերս այս շրջան այցելելով՝ հնագետներին հաջողվեց խիստ համոզիչ նյութեր հայթաթել: Սակայն, ցավոք, այդ շրջանում բնակվող արաբները կասեցրին հետագա աշխատանքները»[2]:

Պրոֆեսոր Օլբրայթը, ի մի բերելով չորս ոչ երկարատև և դրամատիկ արշավախմբերի (XVIII դ., XIX դ., 1928 թ. և հատկապես 1951 թ.) ձեռք բերած նյութերը, գրում է, որ դրանք «կարող են տակնուվրա անել Հարավային Արաբիայի ժամանակագրության և հոգևոր պատմության վերաբերյալ մեր պատկերացումները: Ցայսօր հայթայթված նյութերի արդյունքները վկայում են Ք. ա. առաջին հազարամյակի առաջին դարերում Սաբայի մշակութային և քաղաքական գերակայության մասին»[3]:

Այսպես ուրեմն, Սողոմոնի օրոք Սաբայի ժողովուրդը կար և հիշատակության արժանի մշակույթ ու Քանանի հետ առևտրական կապեր ուներ:

---

1 **Montgomery J. A.** Arabia and the Bible. Philadelphia: University of Pensylvania Press,1934. P. 180.

2 **Phillips W.** Qataban and Sheba. London,1955. Մեջբերումս ըստ **Thompson J. A.** Op. cit. P. 107. Keller W. ‘Η Βίβλος…Σ. 284-290

3 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 290.

ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐԸ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Սողոմոնի մահից հետո նրա թագավորությունը բաժանվեց երկու մասի՝ հյուսիսայինը՝ Սամարիա մայրաքաղաքով, կոչվեց Իսրայելական թագավորություն, հարավայինը՝ Երուսաղեմ մայրաքաղաքով՝ Հուդայի թագավորություն: Ուրացող և կռապաշտ Հերոբովամ I–ի հիմնած հյուսիսային թագավորությունն իր խռովահույզ իրադարձություններով լի պատմության սկիզբը դրեց, որպեսզի անկախություն ձեռք բերելուց արդեն երկու հարյուր տարի անց իր ողբերգական վախճանին հասնի: Այդ ժամանակահատվածում ինը տարբեր ցեղերի պատկանող 19 թագավորներ հաջորդաբար նստեցին գահին: Իր գոյության բովանդակ ընթացքում այս պետությունն իշխանական խոր ճգնաժամ ապրեց: Եթե գահակալած ամեն ցեղ «հարստություն» անվանենք, ապա միայն 4–րդ և 5–րդ հարստություններին հաջողվեց որոշակի կայունության հասնել:

Այս ժամանակաշրջանը մի կարևոր առանձնահատկություն էլ ունի, այն է՝ այնպիսի հզոր ժողովուրդ, ինչպիսին ասորեստանցիներն են, վիշապի նման իր զոհին դարանակալած, պատեհ ժամանակի էր սպասում Իսրայելին և Հուդային մեծ դժբախտություններ պատճառելու համար: Ուստի փորձենք կարճամփոփ նկարագրել ասորեստանցիների պատմությունը՝ նրանց առնչվող անցքերն ընմբռնելու համար:



Ասսուրական թագավորական դրոշակ:

Այն ժամանակ, երբ իսրայելացիները Եգիպտոսից ելնելով հասան Քանան և դատավորների կառավարման ողջ ընթացքում փորձում էին հիմնավորվել Ավետյաց երկրում, ասորեստանցիները ներսից հզորացնում էին իրենց երկիրը: Նրանք նախ զբաղեցրին Տիգրիսի վերին հոսանքների բերրի հողերը (ներկայիս Մոսուլի շրջանը): Ք. ա. մոտ

1320 թ. նրանք շարժվեցին արևմուտք և զբաղեցրին Տիգրիսի և Եփրատի միջև ընկած տարածությունը, իսկ Ք. ա. մոտ 1078 թ. հասան արամեացիներով (ասորիներ) բնակեցված շրջաններին: Այդ ժամանակից ի վեր սկսեցին ասպատակել դեպի արևմուտք ընկած հողերը, կողոպտել և դրանց հաշվին հարստանալ: Ասորեստանի թագավոր Աշուրնասիրպալ թագավորը (Ք. ա. 883–859 թթ.) պետության մայրաքաղաքն Աշշուրից տեղափոխեց Քալաք (Նեբրովթ), որը Սուրբ Գրքում Քաղան է կոչված (Ծնն. 10. 11): Այս մեծազոր թագավորը Քաղանում մեծ բանակ ստեղծեց՝ հեծելազորով և մարտակառքերով համալրված: Նավում մարգարեն շատ գունեղ է նկարագրում ասորեստանյան կարգապահ բանակի տարածած ահ ու սարսափը (հմմտ. Նավում 2. 3–4 3. 2–3): Աշուրնասիրպալին հաջողվեց հարձակողական բանակ, պաշարողական գումարտակներ, հատուկ նշանակության ստորաբաժանումներ, գետանցներ կառուցող ինժեներական զորամասեր կազմակերպել և պաշարողական սարքեր ներդնել: Բացի այդ, նա հարձակողական ու պաշտպանական զենքեր ստեղծեց: Նրա ժամանակների ասուրական բնագրերը պատմում են Տյուրոսի և Սիդոնի վրա հարձակվելու մասին և իսրայելացիներին հիշատակում «Բիթ–Ումրիա», այսինքն՝ «Ամրիի տուն» անվամբ (Ամրին հյուսիսային թագավորության արքաներից էր և Աքաաբի հայրը) (Գ Թագ. 16. 23–28):

Աշուրնասիրպալին հաջորդեց Սալմանասար III–ը (Ք. ա. 859–824 թթ.): Հին Կտակարանում այս թագավորը հիշատակված չէ, բայց ասուրական բնագրերը պատմում են ռազմական գործողություններում նրա՝ Իսրայելի արքա Աքաաբի հետ կնքած դաշինքի մասին: Սալմանասարը մեզ է թողել մի մեծ սև կոթող՝ վրան իսրայելացի արքա Հեուի պատկերը, որը ներկայումս պահվում է Բրիտանական թանգարանում: Դա Հին Կտակարանում հիշատակված միակ մեզ հասած իսրայելացի թագավորի պատկերն է[1]: Նրա օրով Իսրայելում քարոզել է Եղիա մարգարեն:

1 **Pritchard J. B.** The Ancient Near East. Vol. I. P. 189-190.

Ք. ա. 823 թ. մինչև 745 թ. ասուրները մեծ վտանգ չէին ներկայացնում արևմտյան Ասիայի համար: Սակայն ասորեստանցի Թիգլաթ–պալասար III–ին կամ Փուային (Ք. ա. 745–727 թթ.), ինչպես նրան Սուրբ Գիրքն է անվանում, հաջողվեց գահընկեց անել արամեացի թագավորին և ներխուժել Իսրայելական թագավորություն, որտեղ շատերին գերեվարեց: Միաժամանակ և Հուդայի թագավորությունը կորցրեց իր անկախությունը: Այս ամենի մասին հանգամանալից պատմվում է Սուրբ Գրքում (Դ Թագ. 15. 19, 29, 30 16. 7,10): Այն օրերին Իսրայելի թագավորը Փակէէն էր: Սաղմանասար V–ը (Ք. ա. 727–722 թթ.) գերեց Փակէէի հաջորդին: Ք. ա. 722 թ. Իսրայելական թագավորությունը (հյուսիսային թագավորությունը) կործանվեց: Նրա մայրաքաղաք Սամարիան գրավվեց Սարգոն արքայի (յոթանասուն թարգմանիչները նրան Առան են անվանում (Եսայի 20. 1) կողմից (տե՛ս Դ Թագ. 17):

Աշուր քաղաքի Իշտար տաճարի ասսուրական բագին Թուկուլտի-Նինուրտա I-ի ժամանակներից (Ք. ա. 1243-1207 թթ.): Ներկայումս պահվում է Բեռլինի Առաջավորասիական թանգարանում:

Վերջիվերջո Ք. ա. 612–609 թթ. մարերի և քաղդեացիների սրընթաց հարձակմամբ Ասորեստանն էլ կործանվեց*: Սակայն հարավային թագավորությունը՝ Հուդան, դեռ քսան տարի գոյատևեց:

Արվեստները քաջալերվում էին Ասորեստանում: Սրա շնորհիվ էլ մեզ են հասել փղոսկրից, մետաղներից, քարերից և այլ նյութերից բարձրաքանդակներ, որոնց վրա պատկերված են ռազմի, որսորդության և կենցաղի տեսարաններ: Որոշ կիրթ ասուրական արքաներ հոգ էին տանում պատմական արձանագրությունների պատճենահանման և արքայական գրադարաններում դրանց պահպանման մասին: Այս եղանակով մեզ ավանդվեցին աշխար-

* Ըստ պատմահայր Մ. Խորենացու՝ Նինվեի գրավմանը մասնակցել են նաև հայոց զորքերը՝ Պարույր Սկայորդու գլխավորությամբ, և հենց այս հաղթանակի համար էլ վերջինս հայոց թագավոր ճանաչվեց:

հի արարման, հին ջրհեղեղի և այլնի մասին պատմությունները: Ասորեստանցիներից մեզ հասած միայն այս բարձրաքանդակների միջոցով «դյուրությամբ կարելի է Սուրբ Գիրքը լրացնել մատչելի պատկերազարդ բազմաէջ մեկնություններով»[1]:

Ասորեստանցիները մեզ նաև հրաշագեղ ճարտարապետություն են ավանդել՝ պալատներ, քաղաքային պարիսպներ, ամրաշինական կառույցներ: Նրանց կրոնը բազմաստվածական էր: Որևիցե քաղաք գրավելով՝ նրանք կրոնական խորհրդանշաններով զարդարված բագին էին կառուցում: Հուդայի արքա Աքազը, Դամասկոսում այդպիսի զոհասեղան տեսնելով, պատճենեց այն՝ նույնությամբ Հուդայում կառուցելու համար (Դ Թագ. 16. 10 –11):

Այնուամենայնիվ ասորեստանցիները հայտնի էին իրենց դաժանությամբ, անմարդկայնությամբ, վայրագությամբ և գազանությամբ: Ճակատամարտից հետո նվաճված քաղաքի բնակչության մեծ մասին գերության էին տանում, իսկ մնացածներին՝ սարսափելի կտտանքների ենթարկում: Հնագետ Թոմպսոնը գրում է. «Փաստորեն մարդկությանը հայտնի բարբարոսությունների և գազանությունների մեջ չկա մի դեպք, որտեղ ասորեստանցիների մատը խառնված չլինի»[2]:

Ընդհանուր առմամբ այսպիսին էին ասորեստանցիները. մշակույթի և արվեստի բարձր մակարդակ ունեցող մի ժողովուրդ, որն ինչ–որ առումով ազնվացված կռապաշտություն էր դավանում, բայց Աստծուց չէր երկյուղում, չգիտեր մերձավորի հանդեպ սիրո և արդարության զգացումը, մի անագորույն, բարբարոս, անմարդկային ժողովուրդ...

Հետագայում մենք կանդրադառնանք այն հնագիտական պեղածոներին, որոնք լույս են սփռում այս ժողովրդի՝ Իսրայելի հետ բախման հանգամանքների վրա:

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 343.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 117.

ՀԵՐՈԲՈՎԱՄ, ՌՈԲՈՎԱՄ, ԲԱԱՍ, ԱՍԱ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ

Հերոբովամն Իսրայելական պետության, այսինքն՝ Սողոմոնի որդի Ռոբովամից հեռացած 10 հյուսիսային ցեղերի առաջին թագավորն էր (Գ Թագ. 12. 20): Մակեդոնիում Գոտլիբ Շումախերի գլխավորած գերմանական արշավախմբի (1903–1905 թթ.) պեղումների արդյունքում Հերոբովամի անունը հնագիտորեն վավերացվեց: Իսրայելական թագավորության դարաշրջանին պատկանող մի պալատի հինգերորդ շերտում մի կնիք հայտնաբերվեց՝ հետևյալ մակագրությամբ. «Պատկանում է Հերոբովամի ծառա Շեմային»: Հայտնի չէ, թե այս Շեման Հերոբովամ I–ի (Ք. ա. 931–910 կամ 922–901 թթ.), թե Հերոբովամ II–ի (Ք. ա. 782–753 թթ.) ծառան էր: Այսպես թե այնպես սույն կնիքը ի հայտ է բերում այդ անձնանվան գոյության փաստը իսրայելական թագավորության շրջանում[1]:

Գահակալելուց անմիջապես հետո Հերոբովամ I–ը ոսկե հորթի պաշտամունք կարգեց՝ դրա պատկերները* Բեթելում (իր պետության հարավային ծայրամասում) և Դանում (հյուսիսային ծայրամասում) զետեղելով: Սուրբ Գիրքն ասում է, որ այս կերպ նա կամենում էր իր հպատակներին խանգարել իր պետության սահմանները լքելու և հարավային թագավորության մայրաքաղաք՝ Երուսաղեմ այցելելու, քանզի նա կարծում էր, որ այդօրինակ այցելությունները կներգործեին ժողովրդի վրա և կրկին կհարկադրեին վերադառնալու Ռոբովամի՝ հարավային թագավորության արքայի մոտ, ումից արդեն հեռացել էին (հմմտ. Գ Թագ. 12. 26–29): Նրա վրա մեծ ազդեցություն էր գործել

Հերոբովամ արքայի պաշտոնյայի կնիքի ծեփապատճեն:

1 **Free J. P.** Archaeology…P. 180.

* Կուռքի քանդակ՝ նկար, արձան:

հորթի պաշտամունքը, որը տեսել էր Եգիպտոս փախչելու ժամանակ: Սույն փաստը վավերացնում են գերմանացի եգիպտագետ Շտեյնդորֆը, Հին Կտակարանի հետազոտող ամերիկացի Գ. Լ. Ռոբինսոնը և հնագիտության պրոֆեսոր, ամերիկացի Ջոզեֆ Պ. Ֆրին: Այսու Հերոբովամ Ի–ը խախտեց 10 պատվիրաններից երկրորդը և հեռացրեց ժողովրդին միակ Ճշմարիտ Աստծուց[1]:

Հնագիտությամբ հաստատված՝ Ռոբովամի օրոք տեղ գտած իրողություններից էր Եգիպտոսի Սուսակիմ (Շեշենոկ Ի՝ Եգիպտոսի 22–րդ լիբիական հարստության հիմնադիր – *խմբ. ծնթ.*) փարավոնի հարձակումը Երուսաղեմի վրա Սողոմոնի մահից հինգ տարի անց: Ըստ Հին Կտակարանի՝ այդ հարձակման արդյունքում Երուսաղեմի Տաճարը կողոպտվեց (Գ Թագ. 14. 25–28, Բ Մնաց. 12. 1–12): Գ Թագավորաց գրքում Երուսաղեմի վրա հարձակումն է միայն հիշատակվում, միչդեռ Բ Մնացորդացն առավել հանգամանալից է ներկայացնում Սուսակիմի ներխուժումը: Այստեղ խոսվում է նաև Հուդայի ամրակուռ քաղաքների մասին (12. 4): Համենայն դեպս այս հարձակումը հրեաներին մեծ վնաս հասցրեց[2]: Եգիպտոսում հայտնաբերված Սուսակիմի բնագրերից հայտնի է, որ եգիպտացիների ասպատակությունն իրապես սարսափելի վնաս է պատճառել Իսրայելին: Եգիպտական Կառնակի (ժամանակակից Լուքսորի կողքին) կիսավեր մեծ մեհյանում մի վեհասքանչ բարձրաքանդակ կա, որի վրա հավերժացած է Սուսակիմի ավազակային ասպատակությունը, ինչի մասին վկայում է Սուրբ Գիրքը: Ամոն չաստվածը 165 սարսափահար և պարաններով կապկպված հրեաների տանում է Սուսակիմի մոտ, ով նրանց մազերից բռնելով՝ մահակով սպանում է: Գերիների մարմինների վրա գրված են եգիպտացիների կողմից հարձակման ենթարկված պաղեստինյան քաղաքների անունները: Ցուցակում նշված են բազում իսրայելական քաղաքներ, ինչպես օրինակ՝ Թանաք, Ելոն, Գաբավոն, Բեթսան և այլն[3]:

1 Տես **Free J. P.** Op. cit. P. 180-181. Thompson J. A. Op. cit. P. 118-119.
2 Տես **Mazar B.** The Campaign of Pharaoh Shishak to Palestine// Vetus Testamentum, Supp. Vol. IV,1957. P. 57-66.
3 **Barton G. A.** Op. cit. P. 456.

Այսպիսով հնագիտական նյութն ավելի լավ է լուսաբանում սուրբգրային պատումները և ցույց տալիս, որ Սուսակիմը հարձակվել էր ոչ միայն Երուսաղեմի, այլև ուրիշ քաղաքների վրա[1]:

Վերջերս Մակեդոնիում պեղվեց ջարդված մի քարակոթող, որի վրա փորագրված էր Սուսակիմի անունը: Այս գտածոն ցույց է տալիս, որ փարավոնը, ամենայն հավանականությամբ, ի նշանավորումն հաղթանակի՝ այստեղ հուշակոթող է կանգնեցրել՝ համապատասխան արձանագրությամբ հանդերձ[2]:

Հնագիտությունը լուսաբանում է ևս երկու անցք, որոնք վերաբերում են հյուսիսային թագավորության թագավոր Բաասի պատերազմին՝ ընդդեմ հարավային թագավորության թագավոր Ասայի: Այս մասին պատմվում է Գ Թագավորության գրքում (15. 16–22): Ասան տեսնելով, որ Բաասը իր պետության սահմանագլխում ամրոց է կառուցում, օգնություն է խնդրում Դամասկոսի թագավորից: Ազայելի որդի Աբենրայիմի (Գ Թագ. 15. 18) անունը այսօր մեզ հայտնի է նաև հյուսիսային Սիրիայում հայտնաբերված մի արձանագրությունից: Արձանագրությունն արամերեն բնագիր է, որը բովանդակում է «Արամի արքա Ազայելի որդի Աբենրայիմի երդումը»[3]: Երկրորդ անցքն առնչվում է Ասայի կողմից կառուցված երկու ամրոցներից մեկին՝ Գիբային (այս անունը հիշատակվում է եբրայական բնագրում) (15. 22): Հնագիտությունը ցույց է տալիս, որ իրապես Գիբա ամրոցը երրորդ անգամ Ասայի օրոք է վերակառուցվել[4]:

ԱՄՐԻ ԹԱԳԱՎՈՐԸ

Այս թագավորին Հին Կտակարանը ընդամենը վեց համար է նվիրել (Գ Թագ. 16. 23–28): Այս վեց համարներում հիշատակվում են նրա գահակալությանն առնչվող երկու փաստ.

1 **Free J. P.** Op. cit. P. 181.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 118.
3 Տես **Albritght W. F.** A Votive Stela Erected by Ben Hadd I of Damascus//Bulletin of the American Schools of Oriental Research. Oct.,1942. P. 23ff.
4 Տես **Thompson J. A.** Op. cit. P. 120.

1) Ամրին ոմն Սամերից հող գնեց, ուր կառուցեց Իսրայելի մայրաքաղաքը, որը Սամերի անունով Սամարիա կոչեց (16. 24):

2) Ամրին նախևառաջ հայտնի էր իբրև ամբարիշտ՝ իրենից առաջ բոլոր եղածներից առավել: Աստվածաշունչ բնագրի համաձայն. «Ամրին Տիրոջ առջև չարիք գործեց» (16. 25): Նա նույնիսկ կռապաշտության հասավ՝ դառնալով ավելի ամբարիշտ, քան իրենից առաջ եղած բոլոր թագավորները (16. 25):

Սամարիայի պեղումները[1], հիրավի, ապացուցեցին, որ այս քաղաքն Ամրիի ձեռամբ է կառուցված: Ռայսների գլխավորած Հարվարդի համալսարանի արշավախումբը պեղեց սամարական լեռը (1908–1910 թթ.)[2]: Պարզվեց, որ Սուրբ Գրքի՝ Ամրիի կողմից Սամարայի կառուցման և այդտեղ Իսրայելի պետության մայրաքաղաքի տեղափոխման մասին հաղորդած տեղեկությունները չափազանց ստույգ են: Հնագետ Բարրոուզը գրում է. «Սամարիան կառուցվել է այն ժամանակ, երբ, ըստ Սուրբ Գրքի վկայության, Ամրին այն հյուսիսային թագավորության մայրաքաղաք հռչակեց: Մեր ձեռքի տակ այս փաստը հաստատող անհամար վկայություններ կան»[3]: Ավելորդ է ասել, որ քաղաք կառուցելու համար այս տեղանքի ընտրությունը Ամրիին բնութագրում է իբրև արտասովոր ռազմական հոտառության և քաղաքական ինտուիցիայի տեր մարդու: Չէ՞ որ ասորեստանցիները, ովքեր Իսրայելի համար մահացու վտանգ էին ներկայացնում, արդեն մոտենում էին հյուսիսից: Իսկ Սամարիան գտնվում էր ի բնե ամրակուռ վայրում՝ միաժամանակ իշխելով ողջ տարածքի վրա: Քաղաքը կառուցված էր «100 մ բարձրություն ունեցող մենավոր լեռան վրա՝ հարավային և հարավ–արևմտյան մասում զառիթափ լանջերով, և իշխում էր բարձր լեռներով կիսաբոլոր եզերված արգավանդ հովտի վրա»[4]:

Ամրիի ամբարշտության և հյուսիսային թագավորությունում կռապաշտության ծավալման մասին բազմաթիվ հնագիտական

1 **Barton G. A.** Op. cit. P. 120.
2 Տես Սամարիայի պատմության համառոտ ակնարկը՝ **Parrot A.** Samaria. L., 1958.
3 **Burrows M.** Op. cit. P. 281.
4 **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 311.

ապացույցներ ունենք: Ինչպես տեսանք նախորդ գլխում, կռապաշտության հիմքը Հերոբովամ I–ը դրեց՝ ոսկե հորթի պաշտամունք կարգելով: Հետագայում Ամրիի, Աքաաբի և Հեզաբելի օրոք կռապաշտությունն ապշեցուցիչ արագությամբ էր տարածվում: Հեուի և Հերոբովամ II–ի օրոք այն որոշ անկում ապրեց՝ արքունիքում մի շարք սպանությունների հանգեցնելով[1]: Իր արարքներով Ամրին համբավ ձեռք բերեց ինչպես ասորեստանցիների, այնպես էլ մովաբացիների մեջ: Նրա անունը նրանց տարեգրությունների մեջ մտավ: Իր մահկանացուն կնքելուց հետո Ամրին լեգենդար կերպար դարձավ. Իսրայելը ասուրական բնագրերում «Բիթ–Ումրիա», այն է՝ «Ամրիի տուն» կոչվեց:

Ամրիի մասին տեղեկությունների հանդիպում ենք նաև քարի վրա փորագրված մեկ այլ բնագրում: Սույն վավերագիրը, բազմաթիվ փորձությունների միջով անցնելով, այժմ հանգրվանում է Փարիզում: Խոսքը Սուրբ Գրքում հիշատակված Մովաբի արքա Մոսայի քարակոթողի մասին է (Դ Թագ. 3. 4): Այս բազալտե քարակոթողը հայտնաբերվեց 1868 թ. Դոբանում (սուրբգրային Դեբոնում, Հորդանան) էլզասցի միսիոներ Ֆ. Ա. Քլեյնի կողմից: Հուշարձանը թվագրվում է Ք. ա. 850–840 թթ.: Դրա վրա մովաբերեն արձանագրված բնագիրը պատմում է Հին Կտակարանում հիշատակված Հուդայի և Իսրայելի՝ Մովաբի վրա հարձակման մասին (Դ Թագ. 3): Ցավոք սրտի, այս տարածքով քոչող արաբական ցեղերը փշրեցին այս քարակոթողը ու իրար մեջ բաժանելով՝ քարակոթողը մաս առ մաս վաճառեցին՝ ավելի մեծ շահույթ ստանալու ակնկալիքով: Սակայն տեղանքի ճշգրիտ հատակագիծը, որտեղ Քլեյնը հայտնաբերել էր հուշարձանը, ինչպես և հետազոտող Կլերմոն Գանոյի ձեռամբ քարակոթողից հանված ծեփապատճենը թույլ տվեցին այդժամ արդեն հայտնաբերված և գնված բեկորները մաս առ մաս վերականգնել: Ի վերջո այս հո-

1 Առավել հանգամանալից տես **Blaikie W. G.** A Manual of Bible History/ Rev. by Matthews C. D. L.: Nelson,1940; Վերահրտ. N. Y.: Ronald Press Co., 1942. P. 207, 211, 227, 229.

յակապ քարակոթողը իր վերջին ապաստանը գտավ Լուվրի թանգարանում[1]:

Քարակոթողի գրությունը Մովաբի թագավոր Մոսայի հաղթանակի մասին է, որը շատ արժեքավոր հնագիտական նյութ է, քանզի կատարելապես լուսաբանելով Թագավորությունների 4–րդ գրքի 3–րդ գլխում տեղ գտած անցքերը՝ պատմում է մեզ այն մասին, որ Ամրին գրավել և տարիներ շարունակ կեղեքում էր Մովաբը: Մոսայի հաղթական ընդվզումը տեղի ունեցավ Ամրիի որդի Աքաաբի տիրապետության շրջանում: Սուրբ Գիրքը շատ հակիրճ է ներկայացնում Իսրայելի համար մովաբացիների դեմ ճակատամարտի անբարենպաստ ելքի մասին, այնինչ Մոսան մանրամասնորեն և խանդավառ կերպով է նկարագրում այդ ճակատամարտի ընթացքը: Բացի այդ Մոսայի քարակոթողի արձանագրության մեջ հիշատակվում են սուրբգրային բազմաթիվ անուններ, իսկ իսրայելացիների Աստվածը Յահվե է անվանվում[2]:

Այսպես ուրեմն, հնագիտությունը ոչ միայն հաստատում, այլև պայծառ լույս է սփռում Հին Կտակարանի աստվածային բնագրում տեղ գտած կարևոր պատմական անցքերի վրա:

ԱՔԱԱԲՆ ՈՒ ՀԵԶԱԲԵԼԸ

Ամրիի որդի և թագաժառանգ Աքաաբն Իսրայելի թագավորության յոթերորդ տիրակալն էր (Ք. ա. 874–853 թթ.): Նա կնության վերցրեց սիդոնացի թագավոր Հոբաղի դուստր Հեզաբելին (Գ Թագ. 16. 31): Այս կինն իր հայրենիքից Իսրայել բերեց Բահաղի պաշտամունքը, իսկ քանի որ այս դիցապաշտական պաշտամունքը մահացու վտանգ էր ներկայացնում իսրայելացիների համար, Աստված Իր ժողովրդին հավատի մեջ հաստատելու նպատակով նախ Եղիա մարգարեին, ապա՝ նրանից անմիջապես հետո Եղիսեին ուղարկեց: Այն հարցին, թե ինչու Եղիան ու Եղի-

1 **Keller W.** Ἡ Βίβλος …Σ. 318-320.
2 Տես սույն բնագիրը՝ **Thompson J. A.** Op. cit. P. 122-123.

սեն Հերոբովամ I–ի ձեռամբ կարգված ոսկե հորթի պաշտամունքի սուտը երևան չէին հանում, հնագետ Օլբրայթը պատասխանում է. «Բահաղի պաշտամունքն անհամեմատ վատթար երևույթ էր, ուստի երկու մարգարեներն իրենց ջանքերը գործադրում էին Իսրայելի համար սարսափելի և օրհասական ժամին այդ լրջագույն վտանգը հաղթահարելու»[1]:

Սուրբ Գրքում Աքաաբի հայր Ամրիին հատկացված է ընդամենը 6 համար (Գ Թագ. 16. 23–28), այնինչ Աքաաբին՝ վեց գլուխ: Ամբարիշտ Աքաաբի և նրա անօրեն կին Հեզաբելի մասին պատումներն այնքան ցնցող տպավորություն են գործում, որ ոմանց լեգենդ և վիպերգություն է թվում: Սակայն հյուսիսային թագավորության մայրաքաղաքում և Աքաաբի գահանիստ Սամարիայում երկու անգամ անցկացված պեղումները ցույց տվեցին, որ Հին Կտակարանում տեղ գտած Աքաաբին առնչվող անցքերը պատմական են: Առաջին հնագիտական արշավախումբը կազմակերպվեց 1908–1910 թթ. Հարվարդի համալսարանի աշխատակիցներ Ջորջ Ռայների, Կլարենս Ֆիշերի և Դ. Գ. Լայնի, իսկ երկրորդը (1931–1935 թթ.)՝ անգլիացի հնագետ Ջ. Բ. Կրոուգորի գլխավորած ամերիկա–բրիտանական արշավախմբի կողմից:

Շնորհիվ այս պեղումների՝ մենք բազմաթիվ ապացույցներ ունենք, որ Բահաղի պաշտամունքն իրապես մեծ ազդեցություն է ունեցել Իսրայելի բովանդակ կյանքի վրա: Պեղածո նյութերը (կնիքներ, մակագրություններ) ցույց են տալիս, որ Բահաղ անունը բավական հաճախ հանդիպում է՝ իբրև Իսրայելի բնակիչների անձնանունների բաղադրիչ: Ինչպես օրինակ, Եղիբահաղ, Աբիբահաղ, Ցերիբահաղ: Ինքնին հասկանալի է, որ տարածված էին նաև «Յահվեից» (Աստծո անունն ըստ իսրայելացիների) ածանցված «Յահ» առաջին բաղադրիչով անունները: Ըստ հնագետ Թոմպսոնի՝ «Յահ» բաղադրիչով յուրաքանչյուր տասնմեկ անվանը «Բահաղ» բաղադրիչով յոթ անուն է ընկնում, այսինքն՝ կռապաշտները հյուսիսային թագավորությունում բնակչության բավական ստվար մասն էին կազմում: Թոմպսոնի կարծիքով դա

1 **Albright W. F.** Archaeology…P. 156.

նշանակում է, որ ժողովուրդն այնքան ուժեղ էր տարված Բահաղի պաշտամունքով, որ առանց տատանվելու սկսեց հեթանոսական անուններ գործածել: Այս պատկերը լիովին համահունչ է Հին Կտակարանում նկարագրված ժողովրդի մեծ հավատուրացության մասին մարգարեների խոսքերին[1]: Հավելումն սրա՝ Բահաղի պաշտամունքի ծավալումը Աքաաբի և Հեզաբելի օրոք հաստատվում է այն փաստով, որ Ք. ա. VIII–VI դդ. Հուդայում՝ հարավային թագավորությունում, կնիքների վրա և արձանագրություններում հայտնաբերված անուններում չի հանդիպում «Բահաղ» բաղադրիչը, մինչդեռ Իսրայելում խնդրո առարկա դարաշրջանում այսպիսի անունները չափազանց շատ են հանդիպում[2]:

Պրոֆեսոր Թոմպսոնը նշում է, որ հնագիտական հետազոտությունները պարզաբանեցին Նաբոթի խաղողի այգուն տիրանալու նենգաբարո Հեզաբելի շարժառիթները, որի պատմությունը տեղ է գտել Գ Թագ. 3–րդ գլխում: Հայտնի է, որ Հեզաբելը ծագումով քանանուհի էր: Թոմպսոնը գրում է, որ քանանական առասպելներից մեկում պատմվում է մի դիցուհու մասին, որը մի օր հանդիպում է մի պատանի որսորդի՝ կուռքերից մեկից նվեր ստացած մի սքանչելի աղեղով: Դիցուհին փորձում է որսորդին համոզել իրեն տալ այդ աղեղը, սակայն վերջինս անդրդվելի է մնում: Այդժամ դիցուհին գերագույն աստված Էլին խնդրում և ամեն գնով աղեղը ձեռք բերելու թույլտվություն է ստանում: Նա ընտրում է մի չարաբարո մարդու և նրան արծիվ դարձնելով՝ հրամայում է բարձունքից նետվել և սպանել պատանուն: Այս կերպ հաջողվում է անպատիժ տիրանալ սքանչելի աղեղին: Քանանական դիցաբանության մեջ իրավունքը միշտ ուժեղինն է: Իսկ եթե դիցուհիներն ու չաստվածները գործում էին այդքան կամայականորեն ու եսասիրաբար, բռնությունից չխորշելով, ապա բնական է, որ նրանց պաշտողներն էլ այդպես պիտի վարվեին: Ուստի ծագումով քանանուհին ու դիցապաշտուհին կարծում էր, որ իր ամուսինն իր հպատակի խաղողի այգին խլելու իրավունք ունի, եթե նույնիսկ

1 **Thompson J. A.** Op. cit. P. 132; **Free J. P.** Op. cit. P. 182-183.
2 **Albright W. F.** Op. cit. P. 160.

վերջինս հոժար չէ և պնդում է, որ այն իր հորից է ժառանգել: Նա Աքաաբին ասաց. «Դու այդպե՞ս ես թագավորություն անում Իսրայելի վրա...ես քեզ կհանձնեմ հեզրայելացի Նաբոթի այգին» (Գ Թագ. 21. 7): Այսպիսով Հեզաբելի ավազակային և հափշտակողական արարքն իր արմատներով հասնում է դիցաբանական ավանդույթի:

Ամբարիշտ Աքաաբի կյանքը ներկայացնելիս՝ Հին Կտակարանը հիշատակում է նաև «նրա կառուցած փղոսկրյա տունը» (Գ Թագ. 22. 39), այսինքն՝ փղոսկրով հարդարված պալատը:

Մեր տրամադրության տակ բազմաթիվ հնագիտական տվյալներ կան Սամարիայում Աքաաբի կողմից կառուցված ապարանքների և այլ շինությունների վերաբերյալ: Աքաաբի օրոք կառուցված առաջին պալատներն աչքի էին ընկնում զարմանահրաշ գեղեցկությամբ՝ իրենց վրա կրելով վառ արտահայտված փյունիկյան ազդեցություն: Պատերը ներսից զարդարված էին այդ դարաշրջանի սովորույթներին համահունչ՝ փղոսկրով: Այսօրինակ պալատներ երևան են հանվել Ասորեստանում և Փյունիկիայում: Ասորեստանի հնամենի մայրաքաղաք Նեբրոթում (Քաղան) բացված փղոսկրից կերտված արվեստի գլուխգործոցներում կային Աքաաբի (Ք. ա. IX դ.) ժամանակներին պատկանող բազմաթիվ իրեր: Նեբրոթյան ապարանքներից մեկի մի դահլիճի շնորհիվ մենք Հին Կտակարանում Աքաաբի պալատի մասին ամփոփված տեղեկության հրաշալի պատկերավոր ապացույց ունենք (Գ Թագ. 22. 39): Թրծված աղյուսից կառուցված այդ դահլիճի պատերը փղոսկրյա սալիկներով էին պատված[1]:

Սամարիայի պեղումները արգասավորվեցին մեծ վարպետությամբ կառուցված ճարտարապետական շինությունների հայտնաբերմամբ: Հնագետները փլատակների մեջ բազմաթիվ փղոսկրյա սալիկներ գտան, որոնք մի ժամանակ զարդարում էին Աքաաբի պալատի պատերը[2]: Բացի այդ գիտնականները պարզեցին, որ պալատի բազմաթիվ պատեր սպիտակ մարմարով էին

1 Տես **Mallowan M. E. L.** Iraq. T. 13, p. 1-20; T. 14, p. 8; T. 15 ff.; T. 20, p. 104 ff.
2 **Finegan J.** Light from the Ancient Past. Princeton. Princeton University Press,1946. P. 157.

երեսպատված: Այս գտածոները 1908–1910 թթ. պեղումներին մասնակցած Կլարենս Ֆիշերին թույլ տվեցին հնագետ Ֆրիին ասել, որ «Աքաաբի պալատը «փղոսկրյա պալատ» է կոչվում՝ առաջին՝ շողշողացող սպիտակ պատերի, երկրորդ՝ փղոսկրով՝ պատերի երեսպատման պատճառով»[1]:

Հնագիտական պեղածոները լուսաբանում են նաև Աքաաբի՝ Եղիա մարգարեի հետ բախման հինկտակարանյան պատումը: Այդ օրերին երկրում մեծ երաշտ էր: Այս փաստը հաստատվում է նաև Հովսեպոս Փլաբիոսի կողմից, ով այս մասին իր հերթին գիտեր փյունիկյան աղբյուրներից տեղեկություններ քաղած հույն Մեանդրոսից[2]: Ըստ կռապաշտների՝ Բահաղը՝ պտղաբերության չաստվածը, կարող էր անձրև պարգևել և այսու դադարեցնել երաշտը: Բայց Եղիա մարգարեն, մարտահրավեր նետելով Աքաաբին և նրա քուրմերին, ծաղրեց նրանց հավատը (Գ Թագ. 18): Նա նրանց ասաց, որ այն, ինչ ի զորու չէ անելու Բահաղը, կարող է անել միակ Ճշմարիտ Աստվածը՝ Իսրայելի Աստվածը: Ի վերջո Եղիայի աղոթքով Աստված իրապես անձրև պարգևեց: Թոմպսոնը նշում է, որ ըստ հնագիտական տվյալների՝ 450 մարգարեները Բահաղի մարգարեներն էին, իսկ մեհյանների 400 կռապաշտ մարգարեները՝ Աստարտի մարգարեները[3]:

Եկեք քննենք ևս մեկ հինկտակարանյան դիպված, որը վերաբերում է Աքաաբի ոխերիմ թշնամի Ասորի արքա Բենադադին: Սուրբ Գրքում ասվում է, որ վերջինս սպանվում է ոմն Ազայելի ձեռամբ: Սույն փաստը հնագիտական ապացույց ունի: Աքաաբի ժամանակակից Ասորեստանի արքա Սաղմանասար III–ի արձանագրություններում խոսվում է ազնվական ծագում չունեցող Ազայելի մասին, որը բռնատիրում է Դամասկոսի գահին[4]: Այս մարդու մասին տեղեկությունների հանդիպում ենք նաև Հադաթուում՝ Միջագետքի հյուսիս–արևմուտքում հայտնաբերված

1 **Free J. P.** Op. cit. P. 183
2 **Հովսեպոս Փլաբիոս,** Հրեական հնախոսությունը, գիրք 8, XIII, 2 (324):
3 **Thompson J. A.** Op. cit. P. 124-125.
4 **Thompson J. A.** Op. cit. P. 127. **Keller W.** Ἡ Βίβλος …Σ. 326.

փղոսկրյա զարդերի մակագրություններում: Դրանից մեկի վրա փորագրված է Դամասկոսի թագավոր Ազայելի անունը[1]:

Հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնի կարծիքով Սուրբ Գրքում նկարագրված դեպքերի տարբերակիչ առանձնահատկությունը բնագրերի հեղինակների՝ հին աշխարհագրությանը քաջատեղյակությունն է: Միայն այսօր ենք սկսում գիտակցել Սուրբ Գրքի արժեքը՝ իբրև հին աշխարհագրության[2] մասին տեղեկությունների, ինչպես և, մեր կողմից ավելացնենք, պատմական աղբյուրի: Ժամանակակից հնագիտության գտածոները հարստացրին մեր գիտելիքները, լույս սփռեցին Հին Կտակարանի աստվածաշնորհ մատենագիրների ավանդած պատմական եղելությունների վրա:

ՀԵՈՒԻ ԵՎ ՀՈՎԱՍԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ

Հյուսիսային թագավորության բնակչության մեջ տարածված Բահաղ չաստծո հեթանոսական պաշտամունքը բառացիորեն մոլեգնում էր: Աստված որոշեց ժողովրդի այս այլասերմանը վերջ դնել: Աստծո կամոք Եղիսե մարգարեն զորահրամանատար Հեուին Իսրայելի վրա թագավոր օծեց, որպեսզի բնաջնջի հավատուրաց Աքաաբի տունը: Այն բանից հետո, երբ զորքը Հեուին ընդունեց և թագավոր (Ք. ա. 842–841 թթ.) հռչակեց (Դ Թագ. 9. 1–13), Հեուն Հեզրայել գնաց, որտեղ այդժամ գտնվում էին ասորիների դեմ կռվելիս վիրավորված Իսրայելի թագավոր Հորամը և Հուդայի թագավոր Օքոզիան: Հեուն սպանեց Հորամին և Օքոզիային, ապա հրամայեց Հեզաբելին պատուհանից ճանապարհի վրա նետել և մարմինը շների հոշոտմանը թողնել: Բացի այդ, նա սրի քաշեց Բահաղի մարգարեներին և փշրեց այդ դիքի արձանը: Այսպիսով, ըստ Սուրբ Գրքի՝ «Հեուն Բահաղ աստծուն վերացրեց Իսրայելից» (Դ Թագ. 9–10; 10. 28):

1 **Free J. P.** Op. cit. P. 188.
2 **Thompson J. A.** Op. cit.

Ասորեստանցի Սալմանասար III-ի «սև օբելիսկը» Նեբրոթից:

Հնագիտությունը Հեուին վերաբերող չափազանց կարևոր մի վկայություն մեզ ընձեռեց: 1840 թ. անգլիացի սըր Հենրի Լեյարդը Տիգրիսի ափին սփռված Նեբրոթում՝ Ասորեստանի հին մայրաքաղաք Քալաքի տեղում (Սուրբ Գիրքը այն Քաղան է անվանում, տե՛ս Ծննդ. 10. 9–11), սև բազալտե մի օբելիսկ* պեղեց: Ներկայումս այս հուշարձանը Բրիտանական թանգարանի սեփականությունն է: Քարակոթողը պարուրված է հինգ շարք բարձրաքանդակներով, որոնց վրա «չափազանց ցայտուն պատկերված են վեհասքանչ հանդերձներով զգեստավորված թագավորական անձինք: Նրանցից ոմանք երեսնիվայր ընկած են: Ծառաների շարանը գանձեր է մատուցում՝ փղոսկր, ծոպերիզավոր գործվածք, տարբեր բարիքներով լեցուն սափորներ և զամբյուղներ: Քարակոթողի վրա կերտված կենդանիներից հատկապես ուշագրավ է զարմանալիորեն փոքր ականջներով փիղը: Հանդիպում են նաև ուղտերի, կապիկների, այծքաղների, վայրի ցուլի և առեղծվածային միեղջերուի պատկերներ»[1]:

Այս սև օբելիսկը կանգնեցվել էր ի հիշատակ Իսրայելի Աքաաբ թագավորի ժամանակակից և ախոյան, ասորեստանցի արքա Սաղմանասար III–ի հաղթանակների: Շնորհիվ այս հուշարձանի՝ մենք կարևոր տեղեկություններ ստացանք իսրայելացի Հեու արքայի մասին, ով մի ժամանակ Դամասկոսի Ազայել արքայի դաշնակիցն էր: Վերևից երկրորդ շարքում տեսնում ենք Հեուի կամ նրա պատվիրակի հստակ պատկերը, ով ծնրադրած երկրպագում է Սաղմանասարի առաջ՝ ի նշան հնազանդության և խոնարհության: Այդ նույն շարքում պատկերված է պատվիրակների

* Օբելիսկ - Հետզհետե նեղացող քարե սյունանման կոթող:

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 324,325.

շարանը՝ ծանր բեռներով և ճոխ զարդարված պատմուճաններով ու երկարավուն գլխարկներով: Բարձրաքանդակներն ուղեկցվում են հետևյալ բովանդակության մակագրություններով՝ «Բիթ–Ումրիի Հեուի տուրքը. նրանից ստացա արծաթ, ոսկի, մեծ ոսկե թաս, ոսկե պնակներ, ոսկե սկահակներ, ոսկե կաթսաներ, արճիճ, արքայական գայիսոն, անուշահոտ ծառ»[1]: «Հեուն Բիթ – Ումրիից» իսրայելացի արքա Հեուն է[2]: Ինչպես արդեն նշել ենք նախորդ գլուխներում, ասորեստանցիները Իսրայելը «Բիթ–Ումրի» էին անվանում, ինչը թարգմանաբար նշանակում է «Ամրիի տուն»:

Իսրայելի թագավոր Հեուն (845-818 թթ. Ք. ա.) Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ին ընծաներ է մատուցում (պատկեր Սալմանասար III-ի «սև օբելիսկից», IX դ. Ք. ա.):

Բնագրում հիշատակված անցքը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ Սաղմանասար III–ը որոշեց «այցելել» իր պետությունից արևմուտք ընկած հողերը: Դամասկոսի Ազայել արքան ուրիշ տիրակալների նման արդեն պարտված և հնազանդեցված էր: Իսկ Տյուրոսի, Սիդոնի և Իսրայելի արքաները խոհեմաբար գերադասեցին ասորեստանցի ինքնակալին տուրք վճարել: Հեուի դիրքը Սաղմանասարի առաջ պարզ վկայում է այն մասին, որ Հեուն լքել է իր ընկեր և դաշնակից Ազայելին և կամովին ենթարկվել Ասորեստանի միապետին:

Այնուամենայնիվ Հեուի ու նրա որդի Հովաքազի և ողջ Իսրայելի այս արարքն անպատիժ չմնաց: Սաղմանասարի՝ իր հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո Ազայելը, ում հանդեպ ուխտադրժորեն էր վարվել Հեուն, հարձակվեց Իսրայելի վրա: Սրա հետևանքների մասին Սուրբ Գրքում ասվում է. «Այդ օրերին Տերն սկսեց կոտորակել Իսրայելի բոլոր սահմանները, իսկ Ազայելը նրանց կոտորեց Իսրայելի բոլոր սահմաններում» (Դ Թագ. 10.

1 **Pritchard J. B.** The Ancient Near East. Vol.. I. P. 191,192.
2 **Caiger S. L.** Bible and Spade. L.,Oxford Univ. Press,1936. P. 141.

32): Հին Կտակարանից հայտնի է, որ Աստված պատժեց Հովաքազին (Հեուի որդուն), և վերջինս զորք չուներ. «Հովաքազի մոտ մնացել էին միայն հիսուն հեծյալ, տասը մարտակառք ու տաս հազար հետևակ. մնացածներին ասորիների արքան բնաջնջել էր և կոխոտված հող էր դարձրել» (Դ Թագ. 13. 7): Բայց չէ՞ որ Իսրայելն Աքաաբի օրոք երկու հազար մարտակառք ուներ, Դավթի օրոք՝ 800,000 զինվոր, իսկ Հուդայի ցեղը՝ 500,000 (Բ Թագ. 24. 9): Այժմ՝ Հովաքազի օրոք, տասը ցեղերը ռազմական ծառայությանը պիտանի ընդամենը 10 000 տղամարդ ունեին: Ահա թե ուր է մարդկանց հասցնում մեղքն ու Աստծուց հեռանալը:

Մյուս կարևոր հնագիտական գտածոն 1967 թ. Թելլ–ար–Ռիմախում (հյուսիսային Իրաք) հայտնաբերված Ադադ–Նիրարիի (Ք. ա. 811–783 թթ.) քարակոթողն է: Այս քարակոթողի գրության մեջ հիշատակվում է Հովաքազի որդի Հովասի անունը: Արձանագրությունը կատարվել է ասորեստանցի միապետի հրամանով, որտեղ ասվում է, որ իր գահակալության առաջին տարում նա «Յասու (այսինքն՝ Հովաս) սամարացուց, Տյուրոսի արքայից և Սիդոնի արքայից տուրք ստացավ»[1]: Այսպիսով հնագիտության կողմից հաստատվեց ևս մեկ իսրայելացի թագավորի պատմականությունը:

ԽՆՋՈՒՅՔՆԵՐԸ, ՓՂՈՍԿՐՈՎ ՀԱՐԴԱՐՎԱԾ ԳԱՀԱՎՈՐԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՆԿԱՐԺԵՔ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՆՅՈՒԹԵՐԸ

Իսրայելի արքա Հերոբովամ II–ի և Հուդայի արքա Օզիայի տիրապետության ժամանակներում ասպարեզ իջան երկու մեծ մարգարեներ՝ Ամոսը և Օսեեն, ովքեր իրենց քարոզներում հանդիմանում էին ժողովրդին հավատուրացության, ձաղկում իշխաններին ու ժողովրդին մեղսագործության, Աստծուն մոռանալու և կուռքեր պաշտելու համար: Ամոս մարգարեն կշտամբում էր

1 **Thompson J. A.** Op. cit. P. 128-129.

նաև Սամարիային՝ անիմաստ ճոխության ու մեծահարստության համար: Թեպետև նա ապրել է Հուդայի թագավորությունում՝ Երուսաղեմից 19 կմ հյուսիս ընկած Թեկուայում, և հենց այդտեղ էլ ապաշխարություն քարոզել (Ամոս 2,4,5 գլուխները), այդուհանդերձ, հանդիմանում էր նաև Հյուսիսային թագավորությանը և առանձնահատուկ կերպով՝ նրա ոստան Սամարիային (Ամոս 4. 1), ինչպես նաև Բեթելին՝ կռապաշտության համար, որտեղ ոսկե հորթ էին պաշտում: Իսկ սամարացիների մասին ասում էր. «Վա՛յ նրանց, ովքեր արհամարհում են Սիոնը, և հույս են դրել Սամարիայի լեռան վրա: Հավաքեցի ազգերի իշխաններին, և Իսրայելի տունը մտավ նրանց մեջ: Բոլորդ անցե՛ք Քաղանից և տեսե՛ք, այնտեղից անցե՛ք մեծ Եմաթ Ռաբա և իջե՛ք օտարազգիների Գեթ քաղաքը, որն ավելի զորավոր է, քան այդ բոլոր քաղաքները. մի՞թե նրանց սահմաններն ավելի մե՞ծ կլինեն, քան ձեր սահմանները: Դուք, որ գալիս եք դեպի չարիքների օրը, մոտենում եք հասնելու ստությունների շաբաթին, դուք, որ ննջում եք փղոսկրյա գահավորակներում, մեղկանում ձեր անկողիններում, հոտերից ուլեր եք ուտում և նախիրներից՝ պարարտ հորթեր, դուք, որ պարում եք սրինգների նվագի տակ և դրանք մնայուն բան համարեցիք և ոչ անցավոր, դուք, որ խմում եք անխառն գինի և օծվում անուշ յուղերով և ցավ չէիք զգում Հովսեփի տան կործանման համար...» (Ամոս 6. 1–6):

Հնագիտությունը պարզաբանեց Ամոսի այս խոսքերը, որոնցով նա խիստ հանդիմանում էր մեղկությունը, անսանձ ցոփությունն ու սամարացիներին հատկորոշ նյութական բարեկեցությունը: 1931 թ. անգլիացի Ջ. Կրոուֆտի գլխավորած հնագետների խմբի ջանքերով Սամարիայի ամրոցի և միջնաբերդի տարածքում փղոսկրյա գեղազարդային հարդարման բազմաթիվ բեկորներ հայտնաբերվեցին, որոնք հավաստում են մարգարեի՝ փղոսկրե գահավորակների մասին խոսքերը: Բեկորների մեծամասնությունը բաղկացած է սալիկներից կամ բարձրաքանդակային շրջանակներից: Հավանաբար դրանք գահավորակների և այլ կահույքի զարդարման համար էին նախատեսված: Բարձրա-

քանդակների վրա հանդիպում են լոտոսի, շուշանի, պապիրուսների, առյուծների, ցուլերի, եղնիկների, մարդու դեմքով թևավոր առասպելական էակների, սֆինքսների և եգիպտական կուռքերի (օրինակ՝ Գոռի և Իզիդայի) պատկերներ: Որոշ պատկերներ ընդելուզված են ոսկով, կիսաթանկարժեք քարերով և գունավոր ապակու փոշով[1]:

Բացի այդ արդեն հիշատակված բազմաթիվ սամարական խեցեբեկորների վրա մակագրություններ կան Սամարիայի թագավորական գանձարանին հարկեր վճարելու կամ էլ ոչ թե փողով, այլ գինով ու յուղով կատարվող վճարումների մասին՝ ցուցակներով հանդերձ: Գրությունները բազմաթիվ անվանումներ են պարունակում, որոնց շնորհիվ այդ դարաշրջանի մասին լայնածավալ աշխարհագրական տվյալներ ենք ձեռք բերում: Հնագետ Ֆրիի խոսքերով՝ Սամարիայում հայտնաբերված խեցեբեկորները ցույց են տալիս, որ գինու և յուղի տեսքով հարկերը կրքերով բռնված և խնջույքամոլ սամարացիների համար մթերքի մատակարարման առատ աղբյուր էին: Անուշ յուղերը, որոնցով սամարացիները օծում էին իրենց մարմինները (Ամոս 6. 6), նույնպես այս աղբյուրից էին բխում:

Ամոսի՝ Աստծո անունից սամարացիներին հղած ուղերձում ասվում է. «Ես պիտի խորտակեմ ձմեռային ապարանքները ամառայինի հետ, պիտի անհետանան փղոսկրյա ապարանքները, և շատ ուրիշ ապարանքներ պիտի ընկնեն» (Ամոս 3. 15, ըստ եբր. բնագրի): Հնագիտական գտածոները ցույց են տալիս, որ ձմեռային և ամառային ապարանքների գոյությունը այդ դարաշրջանի տարբերակիչ առանձնահատկություններից էր: Ասորի արքաները նույնպես այդպիսի ապարանքներ ունեին: Սամալում (Սիրիա) հայտնաբերված Ք. ա. մոտ 740 թ. թվագրվող մի արձանագրությունում Բիր–Ռակեբ թագավորն ասում է, որ իր նախորդները երեք պալատ ունեին, որոնց մեջ կային ամառային և ձմեռային նստավայրեր[2]:

---

1 **Barton G. A.** Op. cit. P. 121. **Crowfoot J. W., Crowfoot G. M.** Early Ivories from Samaria. 1938. Մեջբերումս ըստ **Free J. P.** Archaeology…P. 193-194.

2 Տես **Albright W. F.** The Old Testament and Archaeology //**Alleman H. C., Flack**

Հնագիտության տրամադրության տակ բազմաթիվ տվյալներ կան, որոնք վկայում են Հերոբովամ II–ի և Ազարիայի[1] գահակալության օրոք նյութական բարիքների լիության մասին: Մեզ են հասել նաև այդ դարաշրջանին պատկանող՝ Աստարտի շատ խորհրդանիշներ, որոնք ապացուցում են Ազարիայի (Օզիա) արքունիքում (Դ Թագ. 15. 4) և Պաղեստինի ողջ տարածքում հեթանոսական պաշտամունքների գոյության փաստը:

Այս փաստերն ապացուցում են Աստծո մարգարեների դժգոհությունների, խիստ հանդիմանությունների և սպառնալիքների արդարացիությունը, ովքեր իսրայելացիներին ապաշխարության կոչ էին անում, ինչը և կազմում է Հին Կտակարանի սրբազան բովանդակության զգալի մասը:

ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ք. ա. 750 թվականից հետո ասուրական արքաները սլացան դեպի Ասորիք և Քանան: Առաջին այդպիսի ասուրական արքաներից մեկը՝ «մինչ այդ Հին Արևելքում գոյություն ունեցած հրով և սրով նվաճված ամենամեծ պետության դաժանաբարո բռնակալներից առաջինը», Թագղաթփաղասար (Թգլատպալասար) III–ն էր, ում հաջողվեց տիրանալ գահին, երբ տակավին զբաղեցնում էր գերագույն զորահրամանատարի պաշտոնը: Նա վերակառուցեց բանակը և, կամենալով իր սեփական կայսրությունն ստեղծել, սկսեց հարևան տարածքները նվաճել: Նախևառաջ իրեն միացրեց իր երկրի հարավում գտնվող պետությունը՝ Բաբելոնիան, ապա շարժվեց դեպի արևմուտք՝ Ասորիք և Պաղեստին:

Հին Կտակարանի համաձայն՝ Մանայեմը (եբր. Մենահիմ)՝ Իսրայելի տասնվեցամյա արքան, Թագղաթփաղասարի (Փուաի) հարկատուն դարձավ. «Ասորեստանի արքա Փուան եկավ հար-

E. E. Old Testament Commentary. Philadelphia: Muhlenberg Press,1948. P. 167.

1 **Thompson J. A.** Op. cit. P. 131.

ձակվեց Իսրայելի վրա: Մանայեմը Փուային հազար տաղանդ (34 000 կգ) արծաթ տվեց, որպեսզի նա իրեն օգնական լինի, և Մանայեմն իր թագավորությունն իր ձեռքում պահի» (Դ Թագ. 15. 19): Փուան առաջին ասուրական միապետն էր, ում անունը հիշատակվում է Սուրբ Գրքում: Սակայն Աստվածաշունչ Մատյանի մեկ այլ գրքում Փուան կամ Փանոքը և Թագղաթփաղասարը ասես տարբեր անձինք են. «Եվ Աստված Իսրայելի դեմ գրգռեց Ասորեստանի արքա Փանոքի հոգին և Ասորեստանի արքա Թագղաթփաղասարի հոգին, որը գերեց Ռուբենի ցեղին, Գադի ցեղին և Մանասեի կես ցեղին...» (Ա Մնաց. 5. 26): Հետազոտողներից ոմանց տեսակետի համաձայն՝ Փանոքը (Փուան) և Թագղաթփաղասարը տարբեր անձինք են: Սակայն աստվածաշունչ բնագրի ավելի մանրազնին ուսումնասիրությունն ու նորագույն հնագիտական պեղածոները ցույց են տալիս, որ այս երկու անունները միևնույն անձին են պատկանում:

Ջոզեֆ Հորները նշում է, որ ինչպես եբրայական բնագրում, այնպես էլ Յոթանասնիցում «գերեց»* բայը եզակի թվով է: Եթե խոսքը երկու անձանց մասին լիներ, ապա սրբազան բնագրում «գերեց»–ի փոխարեն «գերեցին» գրված կլիներ: Հորների կարծիքով «և» շաղկապը, որ դրված է արտահայտության մեջտեղում, հարկ է մեկնել իբրև « հայտնի նաև մեկ այլ անունով»: Այսպիսով, ողջ համարը պետք է հասկանալ հետևյալ կերպ. «Իսրայելի Աստված գրգռեց Ասորեստանի թագավոր Փանոքի (կամ Փուայի–Ն. Վ.) հոգին, հայտնի նաև Ասորեստանի արքա Թագղաթփաղասար անունով, որը գերեց...»[1]:

Այսպիսի մեկնության հավաստիությունը հաստատվում է նաև հնագիտական պեղածներով: Երկու կավե սալիկներ հայտնաբերվեցին, որոնց բովանդակությունն Ասորեստանի պատմության խնդրո առարկա ժամանակաշրջանին էր վերաբերում: Դրանցից մեկի վրա գրված է Թագղաթփաղասար անունը, մյու-

* Արդի արևելահայերեն բնագրում հոգնակի թվով է, թեև գրաբարում եբրայական և հունական բնագրերի հետևողությանբ նույնպես եզակի է:

1 Տես **Horner J.** Biblical Chronology// Proceedings of the Society of Biblical archaeology, 1898. P. 237. Մեջբերումս ըստ **Free J. P.** Op. cit. P. 196

սի՝ Փուա՝ պարզ մատնանշումով, որ խոսքը միևնույն անձի մասին է[1]:

Շնորհիվ հնագիտության՝ մենք մեկ ուրիշ տեքստաբանական նյութ ձեռք բերեցինք: Բաբելոնիան միավորելով և Ասորեստանի մեծ կայսրության անքակտելի մասը դարձնելով՝ Թագղաթփաղասարը ճշտությամբ պահպանեց բաբելոնյան գահին նստելու ողջ արարողակարգը: Բաբելոնացիների առաջ սեր և շնորհ գտնելու համար նա արտոնեց նրանց, ի շարս այլոց, իրեն Փուա (կամ Փանոք) անվանել, որպեսզի բաբելացիները նրան ասես իրենց սեփական թագավորը համարեին: Ֆրիի կարծիքով հենց սա է, որ բացատրում է[2], թե ինչու Թագավորությունների 4–րդ գրքում (Դ Թագ. 15. 19) Թագղաթփաղասարը Փուա[3] է կոչվում, իսկ զանազան սեպագիր արձանագրություններում՝ Փանոք (Pulu)[4]:

«Հետևաբար,– եզրակացնում է Ֆրին,– հնագիտական պեղածները հաստատում են իսրայելական թագավոր Մանայեմին ժամանակակից ասուրական արքա Փուայի անվան բացարձակ ճշտությունը: Այդ նույն պեղածները պարզաբանում են ասուրական միապետի երկու անունների գոյության փաստը»: Այսպիսով, Սուրբ Գիրքն այս դեպքում էլ է անընտգյուտ:

Պարզվում է, որ չափազանց ստույգ է նաև Փուային հարկ վճարելու համար պետության ունևոր քաղաքացիներից Մանայեմի՝ դրամ գանձելու մասին սրբազան բնագրի պատումը: «Յուրաքանչյուր հարուստ մարդ 50 սիկղ վճարեց» (Դ Թագ. 15. 20): Ներկայումս հայտնի է, որ այդ գումարը այն օրերին ստրուկի միջին գինն էր կազմում: Այսպիսով Մանայեմն իր հարուստ քաղաքացիներին (որոնց թիվը պետք է, որ մոտ 60 000 կազմեր), որպես ստրուկ գնահատեց, քանզի նժարի վրա նրանց ազատության գրավականն էր դրված: Այս իրադարձությունը տեղի ունեցավ Ք. ա. 743 թ.[5]: Թագղաթփաղասարը իր «Անալների»՝ «Տարեգրու-

1 Սալիկների մակագրությունների թարգմանությունը տես **Thiele E. R.** The Chronology of the Kings of Judah and Israel հոդվածում // Journal of Near Eastern Studies T. II, № 3. July, 1944. P. 155-156.
2 **Free J. P.** Op. cit. P. 197.
3 **Olmstead A. T.** Op. cit. P. 181.
4 **Burrows M.** Op. cit. P. 102.
5 Տես **Thompson J. A.** Op. cit. P. 133. **Thiele E. R.** Op. cit P. 156-163

թյան» մեջ գրում է. «Ինչ վերաբերում է Մանայեմին, ապա ես նրան ձյունամրրիկի պես զգետնեցի. նա ձեռքիցս դուրս պրծավ միայնակ, ինչպես թռչունը, և ոտքերիս առաջ երեսնիվայր ընկավ: Ես նրան կրկին գահին նստեցրի և իմ հարկատուն դարձրի»[1]: Հավանաբար Մանայեմը գերի էր ընկել, ապա նորից գահակալել՝ ասորեստանցիների հարկատուն դառնալով:

Մանայեմին փոխարինեց նրա որդի Փակեհան, ով երկու տարի իշխելուց հետո իր իսկ բարձրաստիճան պաշտոնյայի (վարչապետի)՝ Փակեեի ձեռամբ սպանվեց: Վերջինս Իսրայելի 18–րդ թագավոր հռչակվեց: Սուրբ Գրքում ասվում է, որ Փակեեի թագավորության ժամանակ ասորեստանցի արքա Թագղաթփաղասար III –ը հյուսիսից Գալիլիա և Նեփթաղիմի երկիր մտավ և վերաբնակեցրեց այդ շրջանների բնակիչներին, այսինքն՝ գրավեց այդ տարածքները (Դ Թագ. 15. 22–29): Փակեեն Իսրայելի պատմության մեջ հայտնի անձ է: Նա դաշինք կնքեց ասորի թագավոր Ռասոնի՝ Ք. ա. 743 թվից ասորեստանցի միապետի հարկատուի հետ և փորձեց Հուդա ներխուժել:

Ռասոնի և Փակեեի անունները, ինչպես նաև Գալիլիայի գրավումն ու նրա բնակիչների գերեվարումը հաստատվում են հնագիտական պեղածոներով: Կավե սալիկների և Թագղաթփաղասարի «Աննալներում» հաղորդվում է. «Ես Ռեզոն (այսինքն՝ Ռասոն) Դամասկոսացուն, Մանայեմ Սամարացուն, Քիրամ Տյուրոսացուն իմ հարկատուները դարձրի... Ինձ ենթարկեցի Gal'za–ն (Գաղաադը), Իսրայելի («Ամրիի տուն») սահմանագլխում գտնվող Աբիլաքքը, (...) և Նեփթաղիմի մեծ երկիրն իր ողջ երկայնքով...»[2]:

Ռասոնն ու Փակեեն դաշնակիցներ էին և փորձեցին բռնի կերպով իրենց դաշինքի մեջ ներգրավել Հուդայի թագավորությունը: Նրանք փորձեցին գահընկեց անել Աքազին և թագավոր կարգել ոմն Տաբելի որդուն (Եսայի 7. 6): Այս անունը նույնպես հնագիտությամբ հաստատվել է[3]:

---

1 **Pritchard J. B.** The Ancient Near East. Vol. I. P. 194.
2 **Pritchard J. B.** The Ancient Near East. Vol. I. P. 193-194.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 134.

Իսկ երբ Փակեեն և Ռասոնը ելան պատերազմի Երուսաղեմի վրա (Դ Թագ. 16. 5, Բ Մնաց. 28. 5–8), Հուդայի Աքազ արքան վախից օգնության կանչեց Թագղաթփաղասար III–ին: Արևմուտք շարժվելով՝ ասորեստանցիները հարկեր դրեցին Հուդայի, Ամմոնի, Եդոմի և Մովաբի վրա՝ միաժամանակ գերեվարելով Գալիլիայի և Գաղաադի բնակիչներին (Դ Թագ. 15. 29): Այդ օրերին ընկավ Սողոմոնի օրոք կառուցված և հետագայում Աքաաբի կողմից վերակառուցված հռչակավոր Ասոր ամրոցը: Այս ասպատակությունից հետո Իսրայելի հպարտ տերությունը փոքրիկ կախյալ պետություն դարձավ:

Այս փաստերը հաստատվում են հնագիտության օգնությամբ: Իսրայելացի հնագետ Յիգայել Յադինի համաձայն՝ որ Ասորի միջնաբերդի պարիսպների ավերակները ծածկած մեկ մետրանոց մոխրի շերտը, բերդի պարիսպների ցիր ու ցան եղած, սևացած քարերի բեկորները, ածխացած հեծանները և ջարդուփշուր եղած տանիքի կտորները վկայում են Փակեեի օրոք ասորեստանցիների ձեռնարկած ասպատակության դեմ կատաղի դիմակայության մասին[1]: Ամենանշանակալից պեղածոներից մեկն այն է, որ «ջրի սափորների և ջարդված իրերի վրա հին սեմական գրով գրված էր Փակեեի անունը: Այսպիսով, առաջին անգամ Իսրայելի թագավորներից մեկի անունը գրավոր տեսքով ի հայտ եկավ Գալիլիայում»[2]: Ք. ա. 732 թ. Թագղաթփաղասարը շարժվեց Դամասկոսի վրա: Սուրբ Գրքում ասվում է. «Ասորեստանի արքան... ելավ Դամասկոսի դեմ և գրավեց այն, բնակիչներին գերեվարեց Կյուրեն (քաղաք Մարաստանում), իսկ Ռասոնին սպանեց» (Դ Թագ. 16. 9): Ասորեստանյան սեպագիր հուշարձանները հաստատում են այս փաստը: Թագղաթփաղասարը գրում է. «Ես բռնեցի (Ռասոնի) զինվորներին, ջարդեցի նրանց զենքը, տիրացա նրանց նժույգներին, աղեղնավորներին և բոլոր զրահ ու տեգ կրողներին: Իր կյանքը փրկելու համար Ռասոնն իր քաղաքի (Դամասկոս) պարիսպների ետևում թաքնվեց: Նրա զորահրամանատարները

1 Տես **Յ. Յադինի** հոդվածը «Biblical Archaeology» հանդեսում № 20 (1957), էջ 34-37, 39-40.

2 **Keller W.** Ἡ Βίβλος …Σ. 336.

գերի ընկան և կախաղան հանվեցին, իսկ երկիրը նվաճվեց: Ես պաշարեցի Դամասկոսը և փակեցի նրան, ինչպես թռչունին վանդակում»[1]:

Միաժամանակ (Ք. ա. 732 թ.) Սամարիայում ասորեստանամետ հեղաշրջում տեղի ունեցավ, որի արդյունքում Փակեեն սպանվեց, իսկ սամարական գահին նստեց Եղայի որդի Օսեեն (Դ Թագ. 15. 30): Օսեեի անունը ևս հիշատակվում է այժմ գիտնականների տրամադրության տակ գտնվող Թագղաթփաղասար III–ի բնագրերում: Ասորեստանցի տիրակալը գրում է. «Նրանք (իսրայելացիները) տապալեցին իրենց թագավոր Փակեեին, և ես Օսեեին թագավոր կարգեցի»[2]:

Այսպես ուրեմն՝ հնագիտության ընձեռած քարե և կավե սալիկների արձանագրությունների շնորհիվ Սուրբ Գրքի պատմական արժանահավատության ապշեցուցիչ ապացույցներ ունենք: Երբեմնի հզոր իսրայելական պետությունը՝ Սամարիա մայրաքաղաքով հանդերձ, ասորեստանյան ասպատակությունների արդյունքում սեղմվեց մինչև Եփրեմի լեռների սահմանները: Այնտեղ իշխում էր Օսեեն, սակայն շատ կարճ ժամանակ: Շատ իսրայելացիներ սպանվեցին, իսկ մյուսներն Ասորեստան քշվեցին: Հարավային պետությունը՝ Հուդան, դեռևս ամբողջական էր, սակայն փաստացի կորցրել էր անկախությունն ու դարձել Թագղաթփաղասարի հարկատուն: Շուտով նա նույնպես անկում էր ապրելու:

ՍԱՄԱՐԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Օսեեի՝ Ասորեստանցի թագավորին վճարվող տարեկան տուրքը կազմում էր մոտ 300 000 ամերիկյան դոլլարի արժողությամբ ոսկի և մոտ երկու միլիոն ամերիկյան դոլլարի արժողությամբ արծաթ: Այս տուրքը ծանր բեռ էր իսրայելացիների

1 **Γιαννακόπουλος Ἰωηλ**. Ἡ Παλαιὰ Διαθήκη κατὰ τοὺς Ο΄. Τόμ. ΙΔ΄, Δ΄ Βασιλειῶν. Ἀθῆναι, 1958. Σ. 112. Ἡ Παλαιὰ Διαθήκη μετὰ συντόμου ἑρμηνείας, Τόμ. ΣΤ΄, Βασιλειῶυ Γ΄-Δ΄. ὑπὸ Ν. Π. Βασιλειαδη, ἐκδ. « Ὁ Σωτήρ», Ἀθῆναι.

2 **Pritchard J. B.** The Ancient Near East. Vol. I. P. 194.

ուսերին: Ուստի, Օսեեն Ասորեստանի արքայի մահից հետո իսկույն ևեթ սկսեց գաղտնի բանակցություններ վարել Եգիպտոսի հետ՝ օգնություն հայցելով ասորեստանցիներից ազատվելու համար: Ասորեստանի հակազդեցությունը կայծակնային էր: Ասորեստանի նոր միապետը՝ Սաղմանասար V–ը (Ք. ա. 726 (կամ 728)–722 թթ.) ելավ Քանանի դեմ, գրավեց Սյուքեմը և պաշարեց Սամարիան: Օսեեն քաղաքից դուրս բռնվեց և գերեվարվեց նախքան Սամարիայի գրավումը: Երեք տարի տևած պաշարումից հետո քաղաքն ընկավ (Ք. ա. 722 թ.), և իսրայելացիների զգալի մասը գերի քշվեց Ասորեստան: Հին Կտակարանն այսպես է պատմում այդ անցքերի մասին. «Ասորեստանի արքան, սակայն, տեսավ, որ Օսեեի մեջ նենգություն կա, որովհետև սա պատգամավորներ էր ուղարկել Եգիպտոսի թագավոր Սովային և այդ տարի հարկ չէր վճարել Ասորեստանի արքային: Ասորեստանի արքան կալանավորեց նրան և բանտարկեց: Ասորեստանի արքան հարձակվեց ամբողջ երկրի վրա, ելավ նաև Սամարիայի դեմ և այն պաշարեց երեք տարի:

Օսեեի թագավորության իններորդ տարում Ասորեստանի արքան գրավեց Սամարիան և իսրայելացիներին քշեց Ասորեստան...» (Դ Թագ. 17. 4–6):

Սուրբ Գիրքը լռություն է պահպանում Սամարիան գրավող թագավորի անվան վերաբերյալ և ոչինչ չի ասում Սամարիայի պաշարման ընթացքում ասուրական տիրակալների փոփոխման մասին: Այս խնդրով զբաղվող հետազոտողները հակված են կարծելու (թեև այս հարցում դեռևս համակարծություն չկա), որ պաշարումը սկսվել է Սաղմանասար V–ի և վերջացել նրա ժառանգորդ Սարգոն II–ի օրոք: Կարծես թե բանակն ու Սամարիայի բնակչությունը իրազեկված չեն եղել թշնամու ճամբարում կատարված փոփոխության մասին[1]:

Անկախ Սամարիան գրավող թագավորի անվան շուրջ տարակարծություններից՝ (ոմանք խոսում են Սաղմանասարի հաջորդ

1 Առավել հանգամանալից տես **Free J. P.** Archaeology…P. 199-200. **Thompson J. A.** Op. cit. P. 134,135. **Vos H. F.** Op. cit. P. 85.

Սարգոնի կողմից բնագրերի կեղծման մասին)՝ հնագիտությունը մեզ երկու կարևոր բնագիր է ընձեռում, որոնք վավերացնում են Սամարիայի անկման մասին Սուրբ Գրքում ամփոփված տեղեկությունների պատմական հավաստիությունը:

1. «Բաբելոնյան ժամանակագրությունը» հիշատակում է Սամարիայի ավերումը՝ իբրև մի նշանակալից իրադարձություն, որը տեղի է ունեցել Սաղմանասար V–ի տիրակալության օրոք: Հատկորոշ է, որ եբրայական բնագրում Սամարիան սովորաբար Շոմրոն (Յոթանասնիցը՝ Սոմորոն) անվամբ է կնքվում, իսկ Եզրասի (եբր. բնագիր) 4–րդ գլխի 10–րդ համարում (համապատասխանում է Յոթանասնիցի Բ Եզրասին, իսկ սլավոնականում՝ Ա Եզրասին*)՝ «Շամրային»: Հենց այսպիսի անվանման հանդիպում ենք նաև «Բաբելոնյան ժամանակագրությունում»: Գերյալ իսրայելացիները տարվել էին Ասորեստանի մի քանի շրջաններ՝ Քաղա, Քաբոր, Գոզան (հմմտ. Դ Թագ. 17. 6, Ա Մնաց. 5. 26): Հետագայում մի պատեհ ժամանակ գերիներին Նեբրոթ (այսինքն՝ Քաղան) և Նինվե քշեցին: Շնորհիվ հնագիտության՝ մեր ձեռքում երկու քաղաքներում հայտնաբերված խեցեբեկորներ կան՝ վրան գրված քսան իսրայելական անուններ, զորօրինակ՝ Մանայեմ, Օսեե և այլն[2]:

2. Սարգոն II–ն իր «Անալների»՝ «Տարեգրության» մեջ, որտեղ խոսվում է Սամարիայի անկման մասին, պնդում է, որ դա իր ձեռքի գործն է: «Իմ տիրակալության սկզբում (առաջին տարում) ես (...) պաշարելով Սամարիան՝ գրավեցի այն (...) և բնակիչներից 27 290 գերի քշեցի (...): Ես վերակառուցեցի քաղաքը, այն էլ նախկինից փառահեղ և այն իմ գրաված տարածքներից տեղահանված ժողովրդով բնակեցրի: Քաղաքի կառավարիչ նշանակեցի իմ զորահրամանատարին, իսկ բնակիչների վրա ասորեստանցի հպատակների համար սովորական հարկ դրեցի»[3]:

---

* Հայերեն Աստվածաշնչում՝ Բ Եզրաս:

2 **Segal J. B.** An Aramaic Ostracon from Nimrud// Iraq,19,1957. P. 139-145. Տես նաև Վ. Օլբրայթի հոդվածը «Bulletin of the American Schools of Oriental Research» հանդեսում, № 149, 1958. P. 33-36.

3 **Pritchard J. B.** Op. cit. Vol. I. P. 195.

Սուրբ Գրքում և այս բնագրերում նկարագրված անցքերի նմանությունն ակնհայտ է: Աստվածաշունչը չափազանց ստույգ է նկարագրում առաջին անգամ հենց ասորեստանցիների կողմից ժողովրդի բնաջնջմանն ուղղված մարտավարության կիրառումը, որին դարերի հոլովույթում պարբերաբար դիմելու էին բռնակալներն ու ազգայնամոլները: Ասորեստանցիները հետապնդում էին յուրաքանչյուր դիմադրություն ընկճելու և Իսրայելի վերածնունդը խոչընդոտելու նպատակ: Սա բարբարոսական տեղահանության և եղեռնի մարտավարություն էր:

Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը:

Սուրբ Գրքի որոշ համարներ «Ասորեստանի թագավորի» (հնարավոր է՝ Սարգոն թագավորի) մասին խոսելիս՝ Սարգոն անունն ընդամենը մեկ անգամ են տալիս (Եսայի 20. 1): Եբրայական բնագիրը նրան Սարգոն անվամբ է կնքում, իսկ Յոթանասնիցը՝ Արնա (Յոթանասնիցում կորսված է այդ անվան առաջին տառը[1]):

Ընդհուպ մինչև 1843 թիվը մեր ձեռքի տակ այս թագավորի գոյությունը փաստող որևէ այլ պատմական աղբյուր չկար: Ըստ ամերիկացի բանասեր Ջեկ Ֆինեգանի՝ «հընթացս երկար ժամանակի»՝ Եսայի մարգարեի գրքում վկայակոչված Սարգոն անունը «միակն էր բոլոր գրավոր աղբյուրներում ու գրականության մեջ»[2]: Ասուրագետները Սարգոնին նույնացնում էին Սաղմանա-

1 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμυημα εἰς τόν προφήτην Ἡσαίαυ. Ἀθήυαι. Σ. 235.
2 **Finegan J.** Op. cit. P. 174.

սարի կամ Սենեքերիմի (Սինաքերիբի) հետ: Պատմական բնագրերում Սարգոնի անվան հիշատակության բացակայությունը ոմանց դրդում էր կասկածի տակ առնելու այդ թագավորի գոյության փաստը[1]:

Այնուամենայնիվ 1843 թ. հետո ասորեստանյան թագավոր Սարգոնի՝ իրական պատմական անձ լինելու շուրջ կասկածները փարատվեցին: Մոսուլում և Խորասաբադում (հին Նինվեից 22 կմ հյուսիս) ֆրանսիացի Պոլ Էմիլ Բոտտայի պեղումները արգասավորվեցին Սարգոնի մեծ ամրակուռ դղյակի հայտնաբերմամբ: Դրանից առաջ պեղվել էր Սարգոնի վիթխարի ամրոցը[2]:

Ֆրանսիացի, ապա և անգլիացի հնագետները Սարգոնի դղյակի և ամրոցի պեղումնավայրերում հողից լույս աշխարհ հանեցին վիթխարի արձաններ, այուների բեկորներ և բազմաթիվ բարձրաքանդակներով սալիկներ ու «Տարեգրությունների» բնագրեր: Սրանք շատ արժեքավոր նյութեր էին, որոնք լրացվեցին Նինվեում հայտնաբերված Աշշուրբանիպալի հարուստ գրադարանի շնորհիվ:

Տասնյակ տարիներ անց հաջողվեց վերծանել հուշարձանների վրա պահպանված բնագրերը, և ասուրագիտությունը, որ մինչ այդ սաղմնային վիճակում էր, սկսեց բուռն զարգանալ: Դրան զուգահեռ ասորեստանյան հուշարձանների վկայությունները մեկը մյուսի հետևից հաստատում էին Սուրբ Գրքի պատմական արժանահավատությունը: «Մինչ այդ միայն Հին Կտակարանից հայտնի տիրակալները, քաղաքները, պատերազմներն ու պատմությունները իրականություն էին դառնում[3]: Ի շարս այլոց՝ հայտնագործվեցին նաև Թագղաթփաղասար III–ի (Փուայի) և Սարգոն II–ի բնագրերը, որոնք պատմում էին Սամարիան գրավելու նպատակով Ասորիք և Պաղեստին արշավելու մասին: Այս պեղածոները, որոնք ոչ միայն հնագիտության, այլև համալսարանների, ինստիտուտների, պետական և աստվածաբանական դպրոցների ու

1 **Olmstead A. T.** History of Assyria. P. 282.
2 **Finegan J.** Op. cit. P. 174. Hilprecht H. V. Explorations in Bible Lands During the 19th Century. Philadelphia: Holman,1903. P. 86.
3 **Keller W.** Ἡ Βίβλος …Σ. 342.

հոգևոր ճեմարանների սեփականությունը դարձան, արժեքավոր են նաև այն պատճառով, որ դրանց օգնությամբ «Սուրբ Գիրքը դյուրությամբ կարելի է լրացնել մատչելի բազմաէջ նկարազարդ մեկնաբանություններով»[1]: Այս ամենի՝ հնագիտական հետազոտությունների, թանգարանները հարստացրած արժեքավոր ճանաչողական նյութերի և գանձերի համար[2] մենք պարտական ենք Սուրբ Գրքին: Հենց նա է, որ գիտնականներին նմանօրինակ հետազոտությունների մղեց:

Սույն բնագրերում հատկապես տպավորություն է թողնում այն, թե ինչպես է պատմվում Սամարիայի գրավումը: Կայգերը գրում է. «Ասորեստանցի մատենագիրը պատմության ամենանշանակալից քաղաքներից մեկի գրավումը կարճ ու կտրուկ և անտարբեր է նկարագրում: Նրա համար Իսրայելի թագավորությունը ծայրագավառային (կենտրոնից հեռու ընկած) հարյուրավոր չնչին պետություններից մեկն էր, իսկ այդ թագավորության մայրաքաղաքը (Սամարիան)՝ որևէ կարևորություն չներկայացնող հազարավոր քաղաքներից մեկը, որոնց հարկ էր ճնշել, կողոպտել, ապա և ոտքի կոխան դարձնել ու բնաջնջել... Ինչ վերաբերում է իսրայելացիներին, ապա նրանք Սամարիայի անկումը Սարգոնին չվերագրեցին, ում անունն անգամ հիշատակելու արժանի չհամարեցին, այլ ընդունում էին, որ Սամարիան կործանվեց հավատուրացության և չարագործությունների պատճառով Տիրոջ նախախնամության կողմից՝ գալիք սերունդներին ի խրատ»[3]:

Վերոբերյալին կարելի է հավելել հետևյալը. հրաշալի ամրացված Սամարիա քաղաքը պիղծ էր հրեաների* համար, իսկ «սամարացի» բառը հայհոյանք դարձավ: Հրեաներն արգահատանքով էին արտահայտվում սամարացիների մասին և չէին կամենում որևիցե կերպ շփվել նրանց հետ (Հովհ. 4. 9): Այդուհանդերձ Տերը սամարացի բառին վերադարձրեց իր նախնական իմաստը: Այս

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 343

2 Տես **Breadsted J. N.** The Oriental Institute. Chicago: University of Chicago Press,1933. P. 368.

3 **Caiger S. L.** Bible and Spade. P. 148-149. Մջբ. ըստ **Vos H. S.** Op. cit. P. 86

* Հուդայի երկրի բնակիչ, այստեղից էլ նաև հայկական բնագրերում երկրի Հրեաստան անվանումը:

քաղաքի բնակչի հրաշալի արարքի մասին է Նոր Կտակարանի՝ մերձավորի նկատմամբ սիրո մասին (Ղուկ. 10. 30–37) ամենախորիմաստ առակներից մեկը:

Այսպիսով Հյուսիսային թագավորությունն ընկավ: Նրա բնակչությունը կազմող տաս ցեղերը կա՛մ բնաջնջվեցին ասորեստանցիների դեմ պայքարելիս, կա՛մ ձուլվեցին եկվոր ժողովուրդների կողմից...Սամարիայի բնակիչների խայտաբղետ ամբոխը դադարեց Աստծո ընտրյալ ժողովուրդ անվանվելուց: Այդ մարդիկ պարզապես «սամարացիներ» կոչվեցին:

ՀՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Եթե Ք. ա. 722 թ. Իսրայելի թագավորությունը կորցրեց իր անկախությունը, ապա Հուդայի թագավորությունը պահպանեց այն մինչև Ք. ա. 586 թ.: Ժամանակակից հնագիտությունն ի զորու է մեզ բավականին համոզիչ նյութեր ընձեռելու նաև Հուդայի թագավորության վերաբերյալ:

Ըստ Հին Կտակարանի՝ Ռոբովամի գահակալության հինգերորդ տարում Եգիպտոսի Սուսակիմ (Շեշենոկ) III փարավոնը ներխուժեց Պաղեստին: Սուսակիմ III–ը Կառնակի տաճարի Հաղթանակի հարթաքանդակի վրա իսկապես բազմաթիվ հուդայական քաղաքներ է հիշատակում, քանզի այդ արշավանքն ավելի լայնածավալ էր, քան այդ մասին խոսվում է Հին Կտակարանում (Դ Թագ. 14. 25, Բ Մնաց. 12. 3): Բ Մնացորդաց գրքում հաղորդվում է, որ Սուսակիմի զորքում լիբիացիներ, տրոգլոդացիներ և եթովպացիներ կային (12. 3): Մինչ XX դարի սկիզբը տրոգլոդացիները հանելուկ էին մնում, սակայն 1904 թ. գերմանացի Շպիգելբերգը պարզեց այդ ժողովրդի ինքնությունը: Ըստ նրա՝ սրանք Ք. ա. XIII դ. եգիպտական բնագրերից հայտնի են «ջուկտա» կամ «ջուկտեն» անվամբ: Նրանք հավանաբար լիբիական ծագում ունեին և օժանդակ ռազմական ուժ էին, այսինքն՝ թեթև զինված հետախույզներ: Այս հայտնագործությունը մոռացության էր մատնված

ընդհուպ մինչև վերջին ժամանակներս, երբ հնագետներ Գարդիները և Օլբրայթը հաստատեցին Շպիգելբերգի կարծիքը[1]:

Հնագետների ձեռքի տակ նաև մեկ այլ համոզիչ նյութ կա, որը լույս է սփռում Գաբաայի բերդի կառուցման վրա: Շնորհիվ Ռաս–Շամրայի սալիկների՝ մենք կարող ենք խորությամբ ըմբռնելու Ասայի (Հուդայի թագավորի) կյանքի կոչած բարեփոխությունների իմաստը, որոնց մասին Հին Կտակարանում ասվում է. «Երկրից վերացրեց սոդոմական մեղքը, ջնջեց ամեն տեսակ մոլորությունները, որ գործել էին իր նախորդները: Նա իր մայր Մաաքային զրկեց «Մեծ տիկին» կոչումից, քանզի նա իր մեհյանում ծես էր կատարել» (Գ Թագ. 15. 12–13): Ըստ Ռաս–Շամրայի բնագրերի՝ կռապաշտների ծեսերն ու տոնակատարությունները ոչ թե պարզապես դիցապաշտական էին, այլ առավելապես օրգիական, և հավելումն սրա՝ եբրայական բնագիրը պատմում է *հերոդուլախների* (տաճարային պոռնիկների) և սոդոմիտների մասին: Իսկ Աստարտան քանանացիների պաշտելի դիցուհին էր:

Ամրիին (հյուսիսային թագավորության արքա) ժամանակակից Հոսափատի տիրակալության օրոք հնագիտությամբ հաստատված առավել հետաքրքրական իրադարձությունը մեծ նավահանգստային քաղաք Գասիոն–Գաբերի վերակառուցումն էր, որը հրո ճարակ էր դարձել Ռոբովամի գահակալության ժամանակներում: Ըստ Հին Կտակարանի՝ Հոսափատը Թարսիսում բազմաթիվ նավեր կառուցեց, որ գնան Օփիր (հուն. բնագրում Սոփիր), բայց այս նավատորմը փոթորիկի պատճառով Գասիոնգաբերի մոտ նավաբեկության ենթարկվեց (Գ Թագ. 22. 49): Նելսոն Գլյուկի պեղումները ապացուցեցին, որ երկրորդ Գասիոնգաբերը Հոսափատի գահակալության ժամանակով է թվագրվում[2]:

Որ Հոսափատը Հուդայի ամենագործունյա արքաներից էր, երևում է ոչ միայն Գասիոնգաբերի վերակառուցումից, այլև նրանից, որ հենց նրա օրոք Նեգև շրջանի Բերսաբե քաղաքը ծաղկում ապրեց: Բացի այդ հնագետներն այլ բնակավայրեր էլ պեղեցին,

1 **Kitchen K. A.** Op. cit. P. 159.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 138-139.

որոնք կառուցվել էին այդ ժամանակ Նեգևի հյուսիսում և Հուդայի հյուսիսի անապատում, ինչպես որ այդ մասին նշվում է Հին Կտակարանում. «Նա Հրեաստանում շինեց տներ ու ամրացված քաղաքներ» (Բ Մնաց. 17. 12): Այս բանն ապացուցեցին «Աղե քաղաքի» պեղումները, որտեղ մի քանի դար անց պետք է բնակություն հաստատեր եսսենացիների համայնքը[1]:

Օքոզիայի մայր Գոթողիայի վեցամյա տիրակալության ընթացքում վերականգնվեցին քանանական պիղծ հեթանոսական պաշտամունքները: Առանձնապես պաշտվում էր Բահաղը, որի գերագույն քուրմը Մաթթանն էր: Այս անունը քանանական է՝ «ան» բնորոշ վերջածանցով: Սա հաստատվում է վերջին տարիներին հնագետների հայտնաբերած բազմաթիվ թրծակավե սալիկներով[2]:

Ակներև է, որ Մաթթանը քանանացի էր, որին հրավիրել էր Գոթողիա թագուհին՝ քանանացիների տոփական պաշտամունքն արմատավորելու համար, ինչի մասին վկայում է Ռաս–Շամրայի (Ուգարիթի) զարմանահրաշ արխիվը[3]:

Հուդայի հարավային թագավորության գահին Օզիայի նստելը նշանավորվում է երկրի՝ ծաղկման շրջան թևակոխելով (Ք. ա. VIII դ.): Դ Թագավորությունների գրքում (15. 1–7) Օզիայի կամ Ազարիայի մասին տեղեկությունները շատ սեղմ են. անհամեմատ հանգամանալից է նրա մասին Բ Մնացորդացում պատմվածը (26. 1–23): Վերջերս Հուդայի հարավային մասում՝ Նեգև անապատում անցկացված պեղումները վավերացրին Բ Մնացորդաց գրքի հաղորդած տեղեկությունների իսկությունը: Հնագետները արձանագրեցին այդ շրջանում Հուդայի բնակչության կողմից տարածքի բնակեցման ընդլայնման, քաղաքների, բերդերի և բնակավայրերի կառուցման փաստը, հայտնաբերեցին զորքի վերատեղաբաշխումը փաստող պեղածոներ: Ըստ հնագետ Գլյուկի հետազոտությունների՝ այդ օրերին Նեգև շրջանը փթթում էր: Դա ծովեզրի և Արաբիայի ստորին մասի միջև տարանցիկ առևտ-

1 Տես **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 126.
2 **Albright W. F.** Archaeology…P. 127.
3 Տես **Thompson J. A.** Op. cit. P. 139.

րի աշխույժ վայր էր: Այդ ժամանակ Օզիան արաբների հետ լավ հարաբերություններ էր հաստատել[1]: Արդեն թվով երրորդ անգամն էր, ինչ նա վերակառուցում էր Գասիոնգաբերը: Եվ պատմության մեջ առաջին անգամ Գասիոնգաբերը իսկական քաղաքի տեսք ստացավ, այն է՝ դադարեց պարզապես ամրացված շտեմարան լինել: Այդ տեղում երևան հանված կավե պնակի միջոցով որոշեցին, որ երրորդ Գասիոնգաբերը թվագրվում է Օզիայի գահակալության ժամանակաշրջանով:

Հնագետները ենթադրում են, որ իրենց իսկ հայտնաբերած արամերեն տապանագրով շիրիմում հանգչում է Օզիա արքայի աճյունը: Այս շիրիմը գտնվում է ոչ թե արքայական գերեզմանատանը, այլ Ձիթենյաց լեռան ստորոտում: Նա այդպիսի տարօրինակ վայրում էր թաղվել, քանզի, ինչպես ավանդում է Հին Կտակարանը, Աստծուց՝ իրեն քահանայական իրավունքներ վերապահելու հանդգնության պատճառով բորոտությամբ էր պատուհասվել: Իբրև բորոտ՝ զրկվել էր թագավորական իշխանությունից և ըստ հուդայական օրենքի՝ հեռացել հատուկ կացարան, որտեղ և մնացյալ աշխարհից բացարձակապես մեկուսի, անց էր կացրել իր կյանքի օրերը (հմմտ. Բ Մնաց. 26. 16–23)[2]:

Աքազի թագավորության օրով Հուդան վտանգավոր կապեր էր պահպանում Ասորեստանի հետ: Իսրայելական արքա Փակեեին և Ասորիքի արքա Ռասոնին հակահարված տալու նպատակով Աքազը օգնություն խնդրեց ասորեստանցիներից, թեպետ Եսայի մարգարեն նրան ուրիշ խորհուրդ էր տվել (Եսայի 7. 1–9): Ասուրական միապետի առաջ խոնարհվելու և նրա վասալը դառնալու նպատակով Աքազի մեկնումը Դամասկոս հանգեցրեց նրան, որ, նա, ենթարկվելով ասուրական պաշտամունքի ազդեցությանը, Երուսաղեմում կառուցեց Դամասկոսում տեսած ասորեստանցիների զոհասեղանի ճիշտ կրկնօրինակը (Դ Թագ. 16. 7–11): Թագղաթփաղասարի «Տարեգրության» մեջ, որտեղ արձանագրված են նրա հաղթանակներն ու նրա հարկատուները դար-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 139.
2 Տես **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 127.

«Եղջերավոր» զոհասեղան իսրայելական Մակեդոնիից՝ նման ասսուրական բագինի:

ձած ժողովուրդների ցանկը, Աքազ անունը հիշատակված է Իոաքազ (այլ տառադարձությամբ). «... Ես հարկեր առա նաև Յուդայի (այսինքն՝ Հուդայի) Յաուքազից (այսինքն՝ Իոաքազից)»,– գրում է ասորեստանցի տիրակալը: Այդ նույն ցանկում թվարկվում են Եդոմի, Մովաբի, Գազայի, Ասկաղոնի և Ամմոնի արքաների անունները: Սրանք բոլորն էլ Հուդային դրացի երկրներ էին, ինչն ասորեստանցիների գրավյալ լայնածավալ տարածքների պերճախոս վկայությունն է[1]:

Աստվածաշունչը հանդիմանում է Աքազին արևելյան պաշտամունքներին հարելու առնչությամբ: Սուրբ Գրքում ամփոփված տեղեկությունն այն մասին, որ Աքազը «Իր որդուն կրակի միջով անցկացրեց»՝ ըստ այլ ազգերի պիղծ սովորության (Դ Թագ. 16. 3) (ոմանց կարծիքով՝ նրան կուռքերի առաջ ողջակիզեց), վավերացվեց հնագետների պեղածոներով, համաձայն որոնց Մողոք դիքը (Մուղյուք կամ Մաղիք) մեծապես պաշտվում էր Պաղեստինի արևելյան կողմերում[2]: Ադրամելեք դիցուհու պաշտամունքը, որի մասին խոսվում է Հին Կտակարանում (Դ Թագ. 17. 31), ներկայումս նույնպես հաստատվել է հնագետների կողմից: Ըստ գիտնականների՝ Ադրամելեք դիցուհին՝ Ադաղ–Միլքի անվամբ, Ասորիքում պաշտվում էր այն ժողովուրդների կողմից, ովքեր բնակվում էին Պաղեստինի արևելյան կողմերում, որոնց ասորեստանցիները իսրայելացիներին տեղահանելուց հետո բնակեցրին Սամարիայում: Բացի այդ, Միջագետքի հյուսիսում

1 Տես **Thompson J. A.** Op. cit. P. 141-142.
2 Տես **Albright W. F.** Archaeology…P. 163.

երևան հանված գտածոների համաձայն՝ Ադադ դիքին մարդկային զոհեր են մատուցել: Այս տվյալները վերագրվում են Ք. ա. X–VII դդ.: Ուսումնասիրելով այս փաստերը՝ հնագետ Թոմպսոնը գրում է. «Եթե մենք առավել ստույգ ենք կամենում ըմբռնել Աքազի կրոնական արարողությունները, ապա պետք է ուշադրություն դարձնենք հնագետների սույն հայտնագործությունների վրա»[1]:

ԵԶԵԿԻԱ ԱՐՔԱՆ

Աեծն Եսայի մարգարեն հայտնում է, որ իր օրով Հրեաստանի վրա թագավորում էին Օզիան* (կամ Ազարիան), Հովաթամը, Աքազը և Եզեկիան (Եսայի 1. 1): Սա ավելի քան 40 տարի ընդգրկող մեծ ժամանակահատված է: Աքազի վախճանվելուց հետո, երբ թագավոր հռչակվեց նրա որդի Եզեկիան, Եսայուն արքունիքում ազդեցություն ունենալու հնարավորություն ընձեռվեց: Ներկայումս Եզեկիայի տիրապետության շրջանի վերաբերյալ հարուստ հնագիտական նյութեր կան: Եսայի մարգարեն ձաղկում էր ժողովրդին կեղեքող մեծահարուստների ագահությունն ու ամբարտավանությունը (Եսայի 3. 14–15), հանդիմանում Երուսաղեմի կանանց սնափառությունն ու սանձարձակությունը, սիգապանծ քայլվածքն ու սեթևեթանքը, ոսկե գլխազարդերը, անուշահոտ նյութերով լի սրվակներն ու իրենց երեսի համար շատ հոգ տանելը (Եսայի 3. 16–24), որը արտահայտվում էր շուրթերն ու հոնքերը շպարելով: Նկարագրելով 1926–1933 թթ. Կարիաթ–Ջեֆերում կատարված պեղումները՝ ամերիկացի հնագետ Մ. Ջ. Կայլը նկատում է. «Թեպետ Եսայու ժամանակների կանայք իրենց կոսմետիկան (քսուքներ երեսի համար, անուշահոտ յուղեր և այլն) այլ կերպ էին անվանում, քան մերօրյա կանայք, այնուամենայնիվ, նրանց մոդան ու հագուստների և դիմահարդարման նկատմամբ հայացքները հար և նման են ժամանակակից

1 **Thompson J. A.** Op. cit. P. 142.

* Աստվածաշնչի հայերեն բնագրում հանդիպում է նաև Օզիաս:

Երուսաղեմ: 7մ հաստություն ունեցող պարիսպ: Ենթադրվում է, որ կառուցել է Եզեկիան Ք. ա. նախքան 701թ. :

կանանց՝ հագուստի և դիմահարդարման նկատմամբ ունեցած ծայրահեղ դիրքորոշումներին: Հազվադեպ էին պատահում օրեր, որ, Հուդայի թագավորության վերջին տարիների Երուսաղեմը պեղելիս, հնագետներն այդ պճնամոլ կանանց զարդերից և հատկապես դիմահարդարման միջոցներից որևիցե բան չգտնեին»[1]:

Մեծ հաջողություն էր նաև 1948 թ. հնագետների կողմից հայտնաբերված Եսայի մարգարեի գրքի հնամենի ձեռագիրը: Ամերիկացի ականավոր գիտնական Օլբրայթի կարծիքով այն ընդօրինակվել է Ք. ա. 100 թ.: Սույն ձեռագրի վաղեմությունը հաստատում են նաև Ելյան համալսարանից Միլլար Բարրոուզը, Երուսաղեմի Հրեական համալսարանից Սուկենիկը և Ջոն Թրավերը: Եսայի մարգարեի գրքի այսքան հին ձեռագիրը հատկապես կարևոր է այն պատճառով, որ մեր տրամադրության տակ եղած սույն գրքի ամենավաղ ձեռագիրը պատկանում է Ք. հ. մոտ 900 թ.: Մանավանդ նշանակալից է սույն ձեռագրի խիստ նմանությունը ավելի ուշ շրջանի ձեռագրից ընդօրինակված ավանդական հրեական բնագրին: Պրոֆեսոր Միլլար Բարրոուզը նշում է, որ սույն ձեռագիրը չի պարունակում մի այնպիսի բան, որը կարելի կլիներ բնութագրել իբրև «մեծ ընդմիջարկումներ կամ բացթողումներ», և որ «բնագրում բացակայում է որևիցե խառնաշփոթություն կամ հերթականության էական խախտում»[2]: Այս կապակցությամբ հնագետ Ջոզեֆ Ֆրին ասում է. «Այս հնամենի ձեռագրերի և հազար տարով ավելի ուշ թվագրվողների միջև առկա մեծ հարազատությունը Աստվածաշնչի բնագրերի ընդօրինակման

1 **Kyle M. G.** Excavating Kirjath-Sepher's Ten Cities. Grand Rapids: Eerdmans,1934. P. 199-200.

2 Տես «The Contents and Significance of Manuscripts» հոդվածը // The Biblical Archaeologist. Sept.,1948. P. 60,61.

մանրակրկիտության վկայությունն է, ինչն էլ ավելի է խորացնում մեր համոզմունքն ուշ ձեռագրերի առանձնահատուկ ճշգրտության նկատմամբ, որոնց վրայից կատարվել են մեր անգլիական թարգմանությունները»[1]: Եսայի մարգարեի գրքի 20–րդ գլխում (ըստ եբր. բնագրի) ասվում է, որ Ք. ա. մոտ 711 թ. ասորեստանցի Սարգոն II արքան պատերազմի ելավ խռովահույզ Ազոտոս (կամ Աշդոդ) փղշտական քաղաքի դեմ:

Եսայի մարգարեն: Հռոմի ս. Կղեմես բազիլիկայի խճանկար:

Հին Կտակարանի այս տեղեկությունը հատկապես ուշագրավ է այն հանգամանքով, որ երկար ժամանակ այն միակ աղբյուրն էր, որտեղ հոլովվում էր Սարգոնի անունը: Հին մատենագիրներից և ոչ մեկը չի հիշատակում նրան: Սակայն վերջերս հին Ասորեստանի տարածքում իրականացրած պեղումներն ի հայտ բերեցին Սարգոնի անունը՝ արձանագրված աղյուսների, քարակոթողների և այլնի վրա. երևան հանվեց նաև այս հռչակավոր արքայի կիսանդրին: Բացի այդ նույն տեղում նույն ժամանակներին պատկանող արձանագրություններում հայտնաբերվեց նաև Սարգոն II–ի արքունի տարեգրի կազմած բնագիրը, որտեղ նկարագրվում է Սարգոնի՝ Ազոտոսի վրա կատարած արշավանքը, ինչպես այդ մասին պատմում է մեզ Հին Կտակարանը: Սարգոնի արքունիքի պատերի վրա փորագրված այդ արձանագրությունում, ի շարս այլոց, ասվում է. «Աշդոդի (Ազոտոսի) արքա Ազուրին այլևս չէր կամենում հարկեր վճարել, [ուստի] և հարևան

1 **Free J. P..** Op. cit. P. 207.

արքաների մոտ սուրհանդակներ ուղարկեց՝ Ասորեստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու համար (...): Ես արագ մոտեցա (...) Աշդոդին՝ նրա մայրաքաղաքին, պաշարեցի և գրավեցի Աշդոդ, Գեփ և Աշդուդիմմու քաղաքները...»[1]: Բացի այդ, հին Ներրոթ քաղաքից մի հետաքրքիր նամակ կա, որտեղ խոսքը Եգիպտոսի, Գազայի, Հուդայի, Մովաբի, Եդոմի և Եկրոնի (Ակկարոն) հարկատուների մասին է, այն կարող է թվագրվել Սարգոնի այդ արշավանքի ժամանակով[2]:

Ըստ Հին Կտակարանի՝ երբ Եզեկիա արքան հիվանդացել և մահամերձ էր, Եսային նրան հետևյալ խորհուրդը տվեց. «Չոր թզեր բերեք: Բերեցին, վերքի վրա դրեցին, և նա առողջացավ» (Դ Թագ. 20. 1,7): Բուժման այս եղանակն Արևելքում հայտնի է վաղնջական ժամանակներից ցայսօր: «Տվյալ դեպքում, սակայն,– ինչպես ճիշտ նկատում են Սուրբ Գրքի մեկնիչները,– դա ոչ այնքան բուժման եղանակ էր, որքան բուժման խորհրդանիշ, այնպիսին, ինչպիսին Եղիայի և Եղիսեեի հրաշագործություններն էին, որովհետև Եզեկիայի հիվանդությունը «մահացու էր, իսկ կազդուրումը կատարվեց իսկույն ևեթ»[3]:

Իմիջիայլոց, 1939 թ. հինավուրց Ուգարիթում (Ռաս–Շամրա) հայտնաբերված մի բնագրում խոսվում է չորացած թզերի միջոցով բուժման մասին: Այնտեղ նկարագրվում է հիվանդ նժույգի համար վիրակապի պատրաստումը[4]: Այս դեղատոմսը մի հին անասնաբուժական գրքի պատառիկ է՝ գրված Ք. ա. 1500 թ. Ուգարիթի արքայի ձիերի պահազորի պետի ձեռամբ: Մանրած թզերով դեղերի պատրաստման եղանակը կոչվում էր «դեբելախ»: Վերքը բուժելու հենց այս եղանակն էլ Եզեկիային առաջարկեց Եսայի մարգարեն: Վ. Կելլերը գրում է. «Բիբլիական ժամանակների բժշկական պրակտիկայից, երբ մեծավ մասամբ բնական բուժական միջոցներ էին օգտագործվում, շատ բան ժամանակի հոլո-

1 **Pritchard J. B.** Op. cit. Vol. I. P. 197
2 **Thompson J. A.** Op. cit. P. 143.
3 **Γιαννακόπουλος Ἰωηλ**. Ἡ Παλαιὰ Διαθήκη κατὰ τοὺς Ο΄.Τ. ΙΑ', Δ' Βασιλειῶν. Ἀθῆναι, 1958. Σ. 145-146.
4 **Kornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 156.

վույթում կորսվել կամ մոռացության է մատնվել: Սակայն ոչ սակավաթիվ դեղատոմսեր պահպանվեցին, որոնք սերնդից սերունդ էին ավանդվում: Թզերի դեղատոմսը դրանցից մեկն էր: Շվեյցարացի բժիշկները այսօր էլ թարախուտի որոշ տեսակներ բուժելու համար թրջած չոր թուզ են առաջարկում»[1]:

Վեցանիստ հատվածակողմը, որի վրա սեպագրերով թվարկված են Սենեքերիմ արքայի ռազմական արշավանքները՝ Ք. ա. 701 թ. Եզեկիայի դեմ պատերազմը ներառյալ: Հատվածակողմի բարձրությունը 38 սմ է:

Ք. ա. 701 թ. ասորեստանցի Սենեքերիմ արքան Պաղեստին խուժեց և ճնշեց ապստամբությունը: Հարավ–արևմուտքում իր թշնամիներին հնազանդեցնելով՝ Սենեքերիմը գրավեց Լաքիս ամրակուռ քաղաքը, որը իշխում էր Եգիպտոսից Հուդա տանող ճանապարհի վրա: Այսօր մենք Հին Կտակարանում (Դ Թագ. 18. 14) պատմվող Լաքիս քաղաքի վրա այդ զարհուրելի հարձակման ու գրավման ցնցող ապացույցներ ունենք: Դրանք ի ցույց են դրված Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Այդ հնությունները բացվեցին սըր Հենրի Լեյարդի կողմից հնամենի Նինվեն իր մեջ ամփոփած մի բլրի մեջ: Խոսքը վիթխարի և չափազանց ցայտուն մի բարձրաքանդակի մասին է, որը շուրջ երեք հազար տարի առաջ Սենեքերիմի հրամանով իր իսկ արքունիքում կերտվել էր այդ անցքերի ականատեսների

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 349.

ձեռամբ[1]: Բարձրաքանդակի վրա պատկերված է պաշարվածների կատաղի ու համառ դիմադրությունը, ովքեր հարձակվողների վրա նետեր են արձակում, քարեր ու այրվող գերաններ (այնօրյա «հրձիգ ռումբերը») նետում: Դրսից մինչև ատամները զինված ասորեստանցիները գրոհում են բաբանների միջոցով, ջրով հանգցնում գերանների բոցերը, ականներ փորում և այլն: Երևում են քաղաքից գերի տարվողները, մինչդեռ պարսպի մոտ «բարձր սյուներից դիակներ են կախված... մարդկանց ցից են հանել»: Բացի այդ անգլիացի հնագետ Ջեյմս Լ. Ստարկեյը՝ Լաքիս ամրոցի պարիսպների պեղողը, բերդապարիսպներում հստակ «անցքեր ու ճեղքեր» էր տեսել, «որ առաջացրել էին ասուրական պարսպակործան զենքերը»[2]:

Լաքիսը գրավելուց հետո Սենեքերիմը պատերազմի ելավ նաև Հուդայի ամրակուռ քաղաքների դեմ (ասուրական բնագրերի համաձայն՝ դրանք թվով 46–ն էին): Ըստ Աստվածաշնչի՝ Եզեկիան, այդ վերահաս վտանգից խույս տալու նպատակով, խնդրում է Սենեքերիմին ետ դառնալ՝ խոստանալով հետևյալը. «ինչ տուգանք, որ ինձ վրա դնես, կհատուցեմ»: Սենեքերիմը Եզեկիայի վրա հույժ ծանր տուգանք դրեց՝ «երեք հարյուր տաղանդ արծաթ և երեսուն տաղանդ ոսկի» (Դ Թագ. 18. 14):

Հնագետները Նինվեի ավազաբլուրում Ք. ա. 686 թվակիր արձանագրությամբ մի վեցանիստ կավե հատվածակողմ (պրիզմա) գտան, որի վրա մանրամասնորեն նկարագրված են հինկտակարանյան պատումներին համահունչ անցքեր: Այդտեղ, ի շարս այլոց, ասվում է. «Ինչ վերաբերում է Եզեկիային՝ հրեային, ով չխոնարհվեց իմ լծի առաջ, ապա ես 46 մեծ քաղաքներ, ամրոցներ և դրանց հարակից անհամար փոքր բնակավայրեր պաշարեցի ու գրավեցի դրանք՝ մշտական պաշարումների և խոյերի միջոցով, որոնք մոտեցրի պարիսպներին (...): Այսպես ես փոքրացրի նրա երկիրը ու էլ ավելի մեծացրի հարկը (...) ինձ վճարվող տարեկան հարկից զատ (...): Ապա Եզեկիան ինձ համար Նինվե ուղարկեց

1 **Kornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 128. 174.
2 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 355,356.

(...) երեսուն տաղանդ ոսկի, ութ հարյուր տաղանդ արծաթ, ակնեղեն» և այլն[1]:

Հին Կտակարանի (Դ Թագ. 18. 13–16) և ասուրական բնագրերի համադրությունը ապշեցուցիչ նմանություն է ի հայտ բերում: Այսպես օրինակ՝ երկու բնագրերում էլ հիշատակվում է Եզեկիայի անունը, ամրակուռ քաղաքների վրա հարձակումը, Եզեկիայի վրա դրված ծանր հարկն ու մինչև իսկ՝ «երեսուն տաղանդ ոսկին»: Տարբերությունը արծաթի տաղանդի մեջ է, որը կամ Սենեքերիմի՝ այս գումարի մեջ այլ տեսակի հարկերի ներառմամբ կամ բնագրի աննշան աղավաղմամբ, կամ էլ բաբելոնյան և պաղեստինյան տաղանդի արժեքի զանազանությամբ է պայմանավորված[2]:

Ըստ Հին Կտակարանի՝ երբ Սենեքերիմի զորքը մոտեցավ Երուսաղեմին, Աստված Եսայի մարգարեի միջոցով Եզեկիային խոստացավ պաշտպանել քաղաքը: Իրոք, Աստծո հրեշտակը հարվածեց ասուրական բանակին, և հարյուր ութսունհինգ հազար մարդ սպանվեց: Այս ջախջախիչ պարտության պատճառով Սենեքերիմը հարկադրված Նինվե վերադարձավ՝ այդպես էլ չգրավելով Երուսաղեմը (Դ Թագ. 19. 20–36, Եսայի 37. 35–38):

Ռացիոնալիստներին այս դեպքն անհավանական է թվում: Սակայն հնագիտությունը, շնորհիվ կավե վեցանիստ հատվածակողմի (տե՛ս վերը), որը հին Նինվեի տեղում հայտնաբերել է Բասրայում Անգլիայի հյուպատոս Թեյլորը, մեզ համոզիչ ապացույցներ է ընձեռում: Սույն հատվածակողմը, որը «Թեյլորի գլան» անունն է ստացել, թվագրվում է Ք. ա. 686 թ. և բովանդակում է Սենեքերիմի տարեգիրների պատումները՝ 46 պաղեստինյան քաղաքների նվաճման մասին: Սակայն Երուսաղեմի վրա Սենեքերիմի արշավանքի թեման արծարծելիս՝ խուսափում են Երուսաղեմի գրավումն ու Եզեկիայի գերեվարումը հիշատակել: Թեպետև սույն բնագիրը լի է պարծենկոտությամբ և Սենեքերիմի ինքնամեծարմամբ, սակայն Երուսաղեմի և Եզեկիայի մասին խոսելիս՝ պատումի այս ամբարտավանությունը դառնում է անսովոր խոնարհ ու հակիրճ:

1 **Pritchard J. B.** Op. cit. Vol. I. P. 200.
2 **Free J. P**. Op. cit. P. 208.

Ահա թե ինչ է այնտեղ գրված. «Ինչ վերաբերում է Եզեկիային, ապա ես նրան փակեցի Երուսաղեմում՝ իր իսկ ոստանում, ինչպես թռչունին՝ վանդակում: Շուրջանակի ամրություններ կառուցեցի և շրջապատեցի նրան, որպեսզի սպանվեն քաղաքի դարպասից դուրս եկողները»[1]: Քանի որ Սենեքերիմին չհաջողվեց գրավել Երուսաղեմը (ինչպես և հաղորդում է Հին Կտակարանը), նա լուռ շրջանցում է իր անսպասելի և ջախջախիչ պարտության փաստը: Աշխարհակալ և միահեծան միապետները, որոնց շարքին է դասվում նաև Սենեքերիմը, անարդար նվաճողական պատերազմների ելնելիս, սեփական կորուստների մասին ձգտում էին լռություն պահպանել: Ուստի և Սենեքերիմը պարզապես ասում է, որ Եզեկիային փակեց, «ինչպես թռչունին վանդակում»: Իրականում Եզեկիան լիովին ապահով էր իր «վանդակում»: Բացի այդ ասորեստանցի տարեգիրները ոչինչ չեն հայտնում, թե ինչու Սենեքերիմը Ասորեստան վերադարձավ[2], բայց Հին Կտակարանը հասկացնել է տալիս, թե ինչու: Սենեքերիմը ետ դարձավ, որովհետև Երուսաղեմի պարիսպների տակ 185 հազար զինվոր կորցրեց:

Հին Կտակարանը խոսում է նաև Սենեքերիմի մահվան մասին: Երբ Ճշմարիտ Աստծուն հայհոյող այս ասորեստանցի ամբարտավան միապետը երկրպագում էր Նեսրաք դիքի կռատանը, նրա երկու որդիները՝ Ադրամելեքն ու Սարասարը «նրան սրով հարվածեցին և Արարատի երկիրը փախան»*: Սենեքերիմին փոխարինեց իր որդի Ասարհադոնը (Դ Թագ. 19. 37, Եսայի 37. 38): Նույնն են վկայում նաև ասուրական տարեգրությունները: Ասարհադոնը (Ասսորհադդոնը) այդ խռովահույզ օրերի մասին գրում է. «Նիսան ամսվա բարենպաստ օրը ես հանդիսավոր արքունիք մտա՝ սարսափով լեցուն մի տեղ, ուր կայանում է թագավորների ճակատագիրը: Եղբայրներիս առաջնորդում էր անհողդողդ որոշումը: Նրանք ուրացան աստվածներին և անագորույն գործերի ձեռնամուխ եղան՝ դավեր նյութելով (...): Արքայական իշխանու-

1 **Prithard J. B.** Op. cit. Vol. I. P. 200.

2 **Price I. M.** Op. cit. P. 324.

* Ըստ պատմահայր Մ. Խորենացու՝ այս եղբայրներից են սերվում հայոց Արծրունիներն ու Գնունիները: Ուշագրավ է նաև, որ «Սասնա ծռերի» շատ տարբերակներում Սանասարն ու Ադրամելեքը հիշատակվում են իբրև Սասնա ծռերի նախնիներ:

թյունը զավթելու համար սպանեցին Սենեքերիմին՝ իրենց հորը (...): Գահի բռնատիրողները անհայտ երկիր փախան (...): Ես ուրախությամբ իմ հոր գահին բազմեցի (...): Ես Ասսորհադդոնն (Ասարհադոն) եմ՝ աշխարհակալ թագավորը՝ Ասորեստանի թագավորը (...)՝ Սենեքերիմի (Սինաքերիբի) որդին»[1]: Սենեքերիմի սպանության մասին խոսվում է նաև Սենեքերիմի թոռան մեկ ուրիշ բնագրում[2]:

Բացի այդ, Բաբելոնիայի հնագիտական պեղածոները լույս են սփռում Եզեկիայի օրոք ապրած ևս մեկ նշանավոր անձնավորության վրա: Ըստ Հին Կտակարանի՝ Բաղդանի որդի Մարոդաք Բաղդանը՝ Բաբելոնիայի արքան, նամակ և ընծաներ է ուղարկում Եզեկիային, որովհետև լսել էր, թե Եզեկիան հիվանդացել է: Եզեկիան մեծ ուրախությամբ է ընդունում դեսպաններին և նրանց ցույց է տալիս իր արքունիքը (Դ Թագ. 20. 12–13):

Շնորհիվ հնագիտական գտածոների՝ մենք գիտենք, որ բաբելական թագավորը ժամանակին մեծ հռչակ էր վայելում: Այսօր մինչև իսկ նրա անձնական սովորություններին վերաբերող տեղեկություններ կան: Այս մարդը Նինվեի ոխերիմ թշնամին էր: Ուստի օգտվելով Սենեքերիմի սպանության պատեհ առիթից՝ նա Եզեկիայի մոտ դեսպաններ ուղարկեց, ովքեր պետք է սադրեին Եզեկիային՝ Ասորեստանի դեմ ընդվզելու: Նա առաջ էլ ուրիշներին ևս մղում էր այդ բանին, ինչը հայտնի դարձավ հնագետների հայտնաբերած Սենեքերիմի երկու բնագրերից: Դրանցից մեկում նկարագրված է Քիշ քաղաքի մոտ գտնվող դաշտավայրում Մարոդաք Բաղդանի և Ելամի զորքերի հանդեպ հաղթանակը: Մյուսում հաղորդվում է, թե ինչպես Մարոդաք Բաղդանին հաջողվեց այս ասորեստանցի արքայի դեմ դավեր նյութել այն բանից հետո, երբ նա կանխապես Էլամի թագավոր Շուտրուկ–Նախունտից իրեն օգնելու համաձայնություն ստացավ[3]:

1 **Free J. P.** Op. cit. P. 210. **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 362
2 **Bright John.** History of Israel. L.,1960. P. 288 ff.
3 **Luckenbill D. D.** Ancient Records of Assyria and Babylonia. Chicago: Univercity of Chicago Press, 1926. II,P. 116. §234; P. 128,129, §257.

Որ Եզեկիայի մոտ ուղարկած դեսպանների առաքելությունը դիվանագիտական էր և Ասորեստանի դեմ դաշինք ստեղծելու նպատակ ուներ[1], երևում է այն բանից, որ Եզեկիան բաբելացի դեսպաններին իր գանձարանն ու զինանոցը ցույց տվեց (հմմտ. Դ Թագ. 20. 13, Եսայի 39. 2): Այսպես՝ հնագիտությունը վավերացրեց Մարոդաք Բաղդանի պատմական անձ լինելու փաստը և լուսաբանեց նրա գործունեությունը, այն է՝ հաստատեց, պարզաբանեց սրբազան բնագրի այն տեղերը, որոնք հընթացս բազում դարերի՝ գիտնականների և հետազոտողների համար հանելուկ էին:

Հին Կտակարանը հաղորդում է նաև Եզեկիայի կողմից կատարված մեծագույն տեխնիկական մի շինարարության մասին: Քաղաքի ծերերի և այլ երևելի այրերի հետ խորհրդակցելուց հետո ռազմական խորհրդի ժամանակ արքան որոշում կայացրեց փակել Գեհոնի աղբյուրների ջրերը, որոնք հոսում էին Երուսաղեմից դուրս և գնում դեպի Ենոմի ձորը, և դրանց ընթացքը ստորգետնյա ջրմուղի միջոցով ուղղել դեպի քաղաքի արևմտյան մասը: Նա իսկապես էլ փակեց Գեհոնի աղբյուրի ընթացքը, որպեսզի թշնամիներին զրկի ջրից, որը գետնի տակով ուղղեց Սիոնից հարավ–արևմուտք՝ պարիսպներից ներս, դեպի Կեդրոնի հովտից փոքր–ինչ բարձր գտնվող ջրամբարը: Այսպես նա առատ ջրեր բերեց պաշարված Երուսաղեմի մի շրջան, որն ապահով էր Սենեքերիմի զորքերից (Դ Թագ. 20. 20, Բ Մնաց. 32. 3–4, 30):

Ապացուցված է, որ այս ամենը բացարձակապես ստույգ է: Գեհոն աղբյուրն այսօր էլ բխում է Երուսաղեմում և կոչվում է «Կույսի աղբյուր»: Իսկ ավազան–ջրամբարը Սիլոամի ավազանն է, ուր Տերն ուղարկեց ի ծնե կույրին լվացվելու այն բանից հետո, երբ «կավ ծեփեց կույրի աչքերին» (Հովհ. 9. 6–7):

Հայտնաբերվեց նաև Եզեկիայի կառուցած թունելը, որով Գեհոնի ջրերը հոսում են դեպի Սիլոամի ավազան: Երկարությունը 525 մ է, բարձրությունը 1,8 մ: 1880 թ. ջրանցքի հարավային

1 **Barton G. A.** Archaeology and the Bible. P. 475. Նաև **Caiger S. L.** Bible and Spade. P. 153.

ծայրում, որին հարում է Սիլովամի ավազանը, շատ անսպասելի կերպով արձանագրություն հայտնաբերվեց: Մի արաբ տղա, պատահաբար ավազանն ընկնելով և ցեխի մեջ թպրտալով, հասավ մյուս կողմը, ուր 60 սմ լայնությամբ մի թունել տեսավ: Թունելի հետազոտման ժամանակ հնագետները կարդացին պատի վրա փորագրված գրությունը, որը Սիլովամի ավազանի մուտքից ընդամենը մի քանի քայլի վրա էր գտնվում: Հավանաբար այս արձանագրությունը շինարարներից մեկն էր փորագրել: Վեց տողից բաղկացած բնագրում ասվում է, թե ինչպես բանվորները, որոնք թունելի հակառակ կողմերից էին սկսել փորելու աշխատանքները, այնքան էին մոտեցել իրար, որ լսում էին մեկմեկու և ի վերջո մեջտեղում հանդիպեցին իրար[1]: Այնտեղ նաև ասվում է, որ թունելի երկարությունը 1200 կանգուն է: Քանի որ հայտնի է թունելի երկարությունը (525 մ), ապա շնորհիվ այս գրության կարելի եղավ ստույգ պարզել հրեական կանգունի երկարությունը, (43,75 սմ): (Ոմանց կարծիքով կանգունը 45,72 սմ է: Հավանաբար նրա երկարությունը ժամանակի հոլովույթում տարբեր է եղել): Թունելին առնչվող ևս մեկ ուշագրավ փաստ. այսօր էլ տեսանելի է, որ հանդիպման վայրում բանվորների երկու խմբերի արած փորվածքները տարբեր են թե՛ բարձրությամբ, թե՛ փորելիս քլունգների թողած հետքերի բնույթով[2]:

Իր գահին բազմած Սենեքերիմ արքան: Լաքիսի պաշարումը պատկերող բարձրաքանդակից:

Ներկայումս Եզեկիայի թունել կոչվող այս հիանալի ջրատարի արձանագրությունը Կոստանդնուպոլսի թանգարանում է: Բլիսսի ղեկա-

1 **Tompson J. P.** Op. cit. P. 146.
2 **Burrows M.** Op. cit. P. 262.

վարած պեղումները ցույց տվեցին, որ «Միլովամի ավազանը» հինկտակարանյան ժամանակներում բավականին մեծ էր՝ 21,3 մ x 22,5 մ՝ արևմտյան կողմից հիանալի սանդուղքով և կողքի կամարակապ երկու սրահներով հանդերձ (հավանաբար մեկը տղամարդկանց, մյուսը կանանց համար)[1]:

Եզեկիայի հաջորդը՝ Մանասեն, Հուդայի թագավորների մեջ ամենից երկարն է գահակալել (Ք. ա. 687 թվից կամ 696–ից մինչև 642 թ.): Հնագետներն արդեն որոշակի տեղեկություններ ունեն նաև այս թագավորի մասին: Ասորեստանցի արքա Ասարհադոնի (այսինքն՝ Ասսորհադդոնի, Ք. ա. 681–668 թթ.) «Տարեգրության» մեջ հիշատակվում է Մանասեի անունը արքայական պալատ կառուցելու համար Ասորեստանին հարկեր վճարող արքաների թվում[2]:

Բացի այդ, Մանասեի հեթանոսական կրոնական սովորույթները կարող են էլ ավելի լավ հասկացվել հնագիտության շնորհիվ ձեռք բերված արևելյան կրոնների մասին տեղեկությունների հիման վրա: Հայտնի է, որ Մանասեն իր հոր հակոտնյան էր. նա վերականգնեց բարձունքների մեհյանները, որոնք քանդել էր Եզեկիան, կառուցեց Բահաղի զոհասեղանը (Դ Թագ. 21. 3): Հատկանշական է Եսայի մարգարեի դառը ողբը. «Ինչպե՞ս պոռնիկ դարձավ հավատարիմ քաղաք Սիոնը, որը լի էր հավատով, ուր արդարությունն էր բնակվում, իսկ այժմ՝ մարդասպանները» (Եսայի 1. 21): Ռաս–Շամրայի (հին Ուգարիթ) հրաշալի գտածոները փարատում են Եսայի մարգարեի՝ դառնությամբ և հանդիմանությամբ առլեցուն ողբի հանդեպ մեր տարակուսանքը: Ռաս–Շամրայի գտածոները օգնում են տեսնելու Բահաղի պիղծ պաշտամունքի իրական պատկերը: Օսեե մարգարեի հանդիմանության հիմնական թիրախը նույնպես այս պաշտամունքն էր: Ի դեպ Մանասեի օրոք Ենոմի ձորում Մեղքոմ հեթանոսական աստծուն զոհաբերած մանուկների մասին վկայությունը (Դ Թագ. 23. 10) հաստատվեց հնագիտական պեղածներով[3]:

1 **Short A. R.** Op. cit. P. 40.
2 **Pritchard J. A.** Op. sit. Vol. I. P. 201.
3 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 147,169-170.

Անշուշտ, հնագիտական այլ ապացույցներ էլ կան, որոնք լիարժեքորեն հաստատում են Եզեկիա և Մանասե արքաների մասին հինկտակարանյան փաստերը. մենք թվարկեցինք դրանցից միայն ամենակարևորները:

ՀՈՍԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԸ

Հոսիան ութ տարեկան հասակում թագավոր դարձավ և Հուդայում թագավորեց 31 տարի: Նա բարեպաշտ տիրակալ էր. «Նա հավատարիմ գտնվեց Տիրոջ առջև»: Ղեկավարում էր Տաճարի վերակառուցումը, որի ընթացքում Քեղքիա քահանայապետը գտավ օրենքի գիրքը: Սափան դպիրն այն ընթերցեց արքայի առջև (Դ Թագ. 22. 1–10): Ապա Հոսիան հրամայեց ընթերցել այն ողջ ժողովրդի առջև և ողջ ժողովրդով Աստծո առաջ ուխտ արեց, որ կկատարի Աստծո պատվիրանները: Արդյունքում թագավորը կռապաշտությունն արմատախիլ անելու և ժողովրդի ուղիղ հավատը զորացնելու ուղղակի և արդյունավետ միջոցներ ձեռք առավ (Դ Թագ. 23. 1–20):

Հնագետների ջանքերի շնորհիվ այս անցքերը լիովին հաստատվեցին: Ըստ ոմանց՝ Տաճարի վերակառուցման և վերականգնման ընթացքում գտնված օրենքի գիրքը Մովսեսի Հնգամատյանի բնօրինակն էր (հմմտ. Բ Մնաց. 34. 14), ոմանք էլ կարծում են, թե Հնգամատյանի գրքերից մեկն էր՝ Բ Օրինացը, որը զետեղված էր տապանակի մեջ: Սակայն մերօրյա ռացիոնալիստներն ասում են, որ դա օրենքի գիրքը չէր, քանզի այն իբր թե ավելի ուշ շրջանի արգասիք է...

Հին Կտակարանը, սակայն, հավաստում է, որ Բ Օրինացը բովանդակում է այն, ինչ Աստված ասել է Մովսեսին, և այն, ինչ Մովսեսն ասել է ժողովրդին և օրինականացրել (տես Բ Օր. 1. 1; 5. 1; 27. 1; 29. 1; 31. 1): Այսպես ուրեմն՝ Բ Օրինացն ամենևին էլ ուշ շրջանի գիրք չէ: Բացի սրանից, այն փաստը, որ ինչպես Հոսիան, այնպես էլ ժողովուրդը զարմանում և ապշում էին հայտնաբերված գրքի համար, ապացուցում է, որ այդ գիրքը նրանց անծանոթ

չէր: Եթե նրա մասին ոչինչ չիմանային, ապա մինչև Ք. ա. 621 թ. անհայտ նոր օրենք չէին ընդունի: Ավելին, այն որ Երեմիան, ով միշտ հերքում էր սուտը, լռություն է պահպանում և չի դատապարտում դա, ասել է թե որ դա ճշմարտություն է սկզբից մինչև վերջ:

Հնագետները նպաստեցին նաև ռացիոնալիստների այդ սուտ պնդումների հերքմանը: Հնագիտությունը վկայում է, որ ոչ մի անհավանական բան չկա այն բանում, որ գտնված գիրքը Բ Օրինացի բնօրինակը լիներ և որ այն դրված լիներ Տաճարի հիմքում մի քանի հարյուրամյակ առաջ՝ Սողոմոնի օրոք, երբ վերջինիս հրամանով (Ք. ա. մոտ 967 թ.) սկսվեց Տաճարի կառուցումը: Այս եզրակացությանը կարելի է հանգել պեղածոների շնորհիվ. այն ժամանակ ընդունված էր հին շինությունների հիմքում կարևոր փաստաթղթեր և բնագրեր դնել, ինչպես որ մեր օրերում է ընդունված շենքերի հիմքում հուշագիր և այլ իրեր զետեղել: Մենք տվյալներ ունենք, որ Բաբելոնի արքա Նաբոնիդը (Ք. ա. 555–538 թթ.)՝ մոլեռանդ կռապաշտը, նաև հնագետ էր: Նա պեղում էր արդեն իսկ նրա օրոք հնամենի զոհասեղանների և տաճարների ավերակները և վերծանում ու թարգմանում հայտնաբերած հին վիմագրերը: Նաբոնիդը պատմում է Բաբելոնիայի Սիպպար քաղաքի Շամաշի տաճարում անցկացրած իր աշխատանքների մասին[1]: Տաճարը վերակառուցվեց Նաբուգոդոնոսորի կողմից, որը, սակայն, Նաբոնիդի ժամանակներում խարխլվել էր: Նաբոնիդն իր գործունեությունը բնութագրում է այսպես. «Երբ ես Շամաշին դուրս հանեցի տաճարից և նրան այլ կացարան տվեցի, ապա քանդեցի տաճարը և նրա հնամյա հիմքում սկսեցի վիմագրեր փնտրել: 18 կանգուն խորության վրա հասա հիմքին, որի մեջ Նարամ–Սինի՝ Սարգոն (I) թագավորի որդու գրությունը կար: Ինձնից առաջ և ոչ մի տիրակալի 3200 տարիների ընթացքում չէր հաջողվել գտնել այդ (ժամանակահատվածը, անշուշտ, չափազանցված է, եթե հավատանք Նարամ–Սինի կյանքի ժամանակակից թվագրություններին. փաստաթուղթը ընդամենը 1700 տարվա վաղեմություն

1 Տես. **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 159.

ունի – *թարգմ. ծանոթ.*), Շամաշը ինձ, այո՛, հենց ինձ արտոնեց գտնել այդ»[1]:

Այսպիսով, եթե օրենքի պատճենը զետեղվել էր Սողոմոնի (Ք. ա. X դ.) Տաճարի հիմքում, ինչը չի բացառվում, ինչպես որ թագավոր–հնագետ Նաբոնիդի վերոհիշյալ պարագայում է, ապա օրենքի այս ձեռագիրը պետք է վերագրել մի ժամանակի, որը 300 տարով նախորդում է Ք. ա. 621 թվին: Այս կերպ գիտությունը չի ընդունում ռացիոնալիստների պնդումները:

Սրանից զատ, հնագիտությունը վավերացնում է նաև բարեպաշտ թագավոր Հոսիայի ձեռամբ Մեղքոմի պաշտամունքի ոչնչացման իրողությունը (Դ Թագ. 23. 10)[2]:

Հնագիտությունը լույս սփռեց ևս մեկ անցքի վրա, որին Հին Կտակարանը շատ համառոտ է անդրադարձել և որը տարակուսանքի տեղիք է տվել: Ըստ Հին Կտակարանի՝ «Այդ օրերին Եգիպտոսի արքա Նեքավով փարավոնը Եփրատ գետի մոտ հարձակվեց Ասորեստանի արքայի վրա: Հոսիա արքան նրան ընդառաջ գնաց, և երբ Նեքավովը տեսավ նրան, սպանեց Մակեդդովում» (Դ Թագ. 23. 29): Տարիներ շարունակ հարցականի տակ էր, թե ինչու Հոսիան պատերազմի ելավ փարավոնի դեմ, եթե վերջինս «հարձակվեց» հրեաների դարավոր թշնամի Ասորեստանի վրա: Սակայն Բրիտանական հնագիտական թանգարանի ասուրագետ Ս. Ի. Գեդդի հայտնաբերած կավե սալիկը լույս սփռեց այս հարցի վրա ևս: Սալիկում հաղորդվում է, որ Նինվեն այդժամ ընկել էր և Նեքավովը ոչ թե Ասորեստանի դեմ ելավ, այլ օգնության հասավ Միջագետքում ապաստան որոնող ասորեստանյան բանակի մնացորդին: Այնպես որ Նեքավովը ոչ թե դեմ, այլ Ասորեստանի կողմն էր: Իսկ Հոսիան չէր կամենում, որ իր թշնամիներին՝ ասորեստանցիներին, որևիցե օգնություն ցույց տրվեր: Ուստի գնաց Մակեդդով, որպեսզի խանգարի Նեքավովին: Ճակատամարտի ժամանակ էլ Հոսիան վիրավորվեց և սպանվեց: Այսպես սալիկը, որը վերծանեց Գեդդը, բացատրում է, որ եբրայերենում «դեմ» բառը մեկ այլ իմաստ էլ ունի՝

1 Տես սույն բնագրի թարգմանությունը. **Price I. M.** The Dramatic Story of Old Testament History N. Y. գրքում: Revell, 2nd ed.,1935. P. 364.
2 Ավելի հանգամանալից տես **Free J. P.** Op. cit. P. 216-217.

նշանակում է «անունից» կամ «կողմում»[1]: Այսպես հետազոտողների հարցի պատասխանը գտնվեց: Սուրբ Գիրքը բացարձակապես ստույգ է այս անցքերի իր շարադրանքում: Պարզապես Յոթանասնից թարգմանության մեջ եբրայական այս բառը թարգմանվել էր «դեմ»:

ՀԵՔՈՆԻԱ ԱՐՔԱՆ ԱՔՍՈՐՈՒՄ

Ըստ աստվածաշունչ Հին Կտակարանի՝ Նեքավով փարավոնը գահընկեց արեց Հովաքազին՝ Հոսիա արքայի որդուն, և գահին նստեցրեց Հոսիայի մյուս որդուն՝ Եղիակիմին, և նրա անունը փոխելով՝ Հովաքիմ դրեց: Ակներև է, որ Հովակիմը Եգիպտոսի դաշնակիցն էր (Դ Թագ. 23. 34–35): Բայց Ք. ա. 605 թ. եգիպտական զորքը Եփրատ գետի մոտ՝ Կարքեմիշում, պարտություն կրեց բաբելացիներից, ովքեր դրանից հետո Պաղեստինի վրա պատերազմի ելան: Հովակիմը գահակալեց Ք. ա. մինչ 598/597 թ.՝ դառնալով Բաբելոնի արքա Նաբուգոդոնոսորի հարկատուն: Նրանից հետո գահին նստեց նրա որդի Հովաքիմը (Հեքոնիան), սակայն այս տասնութամյա արքան երեք ամիս անց ենթարկվեց Նաբուգոդոնոսորի հարձակմանը: Բաբելացիները գրավեցին Երուսաղեմը, գերեցին Հեքոնիային (նույն ինքը Հոսքինը, Հովաքիմը) և ընտանիքով հանդերձ աքսորեցին: Այդ ժամանակ խորամանկորեն գերի քշվեցին նաև Երուսաղեմի բոլոր ազդեցիկ այրերը, առաջնորդներն ու արհեստավորները: Այսպես Երուսաղեմում միայն Բաբելոնի համար նվազ վտանգավոր մարդիկ ու աղքատները մնացին: Բաբելացիների արքան թագավորեցրեց 21–ամյա Մեթթանիային և անունը փոխելով՝ Սեդեկիա դրեց (Դ Թագ. 24. 12–18): Հուդայի արքա Հեքոնիան՝ իբրև քաղաքական բանտարկյալ, Բաբելոնում մնաց 37 տարի: Ըստ Սուրբ Գրքի՝ այս ժամանակահատվածի վերջում Բաբելոնի Եվիլմարոդաք արքան «նրան հանեց բանտից ... նրա աթոռը Բաբելոնում իր մոտ գտնվող այլ թագավորների աթոռից բարձր դրեց: Նրա

1 **Free J. P.** Op. cit. P. 218-219.

բանտային հագուստները փոխեց, և Հովաքիմը միշտ նրա հետ էր հաց ուտում: Հովաքիմի ապրուստի միջոցները՝ որպես հանապազօրյա ապրուստի միջոցներ, նրան տրվում էին արքայական տնից ամեն օր՝ մինչև նրա կյանքի վերջը» (Դ Թագ. 25. 27–30): Հնագիտությունը լիարժեքորեն տալիս է այս անցքերի բացատրությունը:

1. Թելլ–Բեյթ–Միրսիմում (անցյալում՝ Դաբիր)՝ Քեբրոնից 13 կմ հարավ–արևմուտք ընկած այն վայրում, որտեղ, ինչպես կարծում էին, գտնվում էր սուրբգրային Կարիաթ–Սեֆերը («Դպիրների քաղաքը»*. սա Դաբիրի հին անվանումն է, հմմտ. Հեսու 15. 15, Դատ. 1. 11,12),արձանագրությունների մեջ հանդիպեց Հովաքիմ անունը: Պեղումները ղեկավարում էին հնագետներ Օլբրայթն ու Կայլը: Ք. ա. 600 թ. դույզն–ինչ ուշ թվագրվող վերին շերտից հայտնաբերվեցին սափորի կանթեր՝ վրան կնիքի դրոշմվածք՝ հետևյալ մակագրությամբ. «Պատկանում է Եղիակիմին՝ Իհոքիմի կառավարչին»: Այս անունը՝ Իհոքիմը, սուրբգրային Հովաքիմ անվան տարբերակն է: Հետևաբար կնիքի դրոշմվածքում իրականում գրված է. «Պատկանում է Եղիակիմին՝ Հովաքիմի կառավարչին»: Հավանաբար Եղիակիմի ուսերին էր դրված Հովաքիմի ունեցվածքի պահպանման պատասխանատվությունը, քանի դեռ վերջինս գտնվում էր բաբելոնյան աքսորում[1]:

2. Գերմանացի հնագետ պրոֆեսոր Ռոբերտ Կոլդվեյը Բաբելոնում իր զարմանահրաշ պեղումների արդյունքում (1899–1917 թթ.) բացեց «կախովի այգիները» («յոթ հրաշալիքներից մեկը») և այլ արժեքավոր պեղածո նյութեր, որոնց մեջ բազում արձանագրություններ կային: Նաբուգոդոնոսորի պալատում հայտնաբերված 300 կավե սալիկները տարիներ շարունակ իրենց վերծանմանն էին սպասում: Միայն 1933 թ. հետո դա հաջողվեց ասուրագետ Ե. Ֆ. Վայդներին: Նա ապացուցեց, որ այդ սալիկները պարունակում են ձեթ ստանալու վերաբերյալ հարյուրավոր ստացականներ, որոնք տրվում էին Բաբելոն աքսորվածներին և գերիներին: Սալիկներում հաղորդվում է գերու անունը, մաս-

* Հայերեն սրբազան բնագրերում՝ «Նամակաց քաղաքը»:

1 **Albright W. F.** The Archaeology of Palestine and the Bible…P. 125.

նագիտությունը և ազգությունը: Հուդայի թագավոր Հովաքիմի անունը հանդիպում է երեք սալիկներում: Դրանցից մեկում նշված են նաև նրա հինգ որդիների անունները: Այդ սալիկներում գրված է. «Հաուքին (այսինքն՝ Հովաքիմ – Ն. Վ.) թագավորին...–10 չափ (“սիլա“) ձեթ, Հաքինու (այսինքն՝ Հովակիմ –Ն. Վ.) Հե... թագավորին – 2½ ձեթի չափ, Հուդայի թագավոր Յահուդուի (այսինքն՝ Հովաքիմի – Ն. Վ.) որդիներին...1½ չափ (ձեթ – Ն. Վ.), Արվադից երեք հյուսներից յուրաքանչյուրին կես չափ ձեթ, Բիբլոսից ութ հյուսներին 11½ չափ՝ յուրաքանչյուրին մեկ չափ..., 3½ չափ յոթ հույն հյուսներին՝ յուրաքանչյուրին ½ չափ, կես չափ Նաբուետր հյուսնին, 10 (չափ –Ն. Վ.) Հակկուուքինին (այսինքն՝ Հովաքիմին – Ն. Վ.)՝ Յակուդի (այսինքն՝ Հուդայի) արքայի որդուն, 2½ չափ Յակուդա (Հուդա – Ն. Վ.) արքայի որդիներին՝ ձեռամբ իր (գործավար – Ն. Վ.) Կանաայի»[1]: Շատ հուզիչ է ձեռքում պահել Հուդայի գահընկեց արքայի օրաբաժնի մասին վկայությունները, որոնք ավելի քան 2500 տարի առաջ են գրվել: Այս ստացականները, որոնք թվագրվում են Ք. ա. մոտ 592 թվականով, խոսում են Հովաքիմի և իր ընտանիքի՝ Բաբելոնում՝ իրենց գերեվարությունից մի քանի տարի անց գտնվելու մասին[2]:

3. 1955 թ. «Քաղդեական արքաների ժամանակագրության» թարգմանիչ Դ. Ջ. Վայզմանը կարդաց հետևյալը. «Յոթերորդ տարվա քաղսև (համապատասխանում է մեր դեկտեմբերին) ամսում Աքքադի (այսինքն՝ Բաբելոնի) արքան հավաքեց իր զորքը, Խաթթի երկրի դեմ ելավ (այսինքն՝ Ասորիքի), ճամբար խփեց հրեաների քաղաքի դիմաց և ադար ամսվա երկրորդ օրը (Ք. ա. 597 թ. մարտին) գրավեց քաղաքը և գերեվարեց արքային (Հովաքիմին): Նրա փոխարեն իր հայեցողությամբ ուրիշին (Սեդեկիային) թագավորեցրեց, շատ ծանր հարկեր սահմանեց և Բաբելոն քշեց նրանց (Հովաքիմին և նրա ընտանիքը)»[3]:

1 **Pritchard J. P.** Op. cit. Vol. I. P. 205.
2 **Albright W. F.** The Biblical Period. Blackwell, Oxford. 1950. P. 47.
3 **Wiseman D. J.** Chronicles of Chaldean Kings. L.,1956. P. 73.

Բաբելոնի արքունի գրագրի այս գրառումն առաջին ոչ սուրբգրային տեղեկությունն է Երուսաղեմի վրա Նաբուգոդոնոսորի առաջին հարձակման (Ք. ա. 597 թ.) մասին:

Այսպիսով Հին Կտակարանի սրբազան բնագրում արծածված երեք կարևորագույն փաստերը հաստատված են հնագիտությամբ՝ նույնիսկ ամենաանշան մանրամասնություններով հանդերձ: Դրանք են՝ ա) Եղիակիմի և Հովաքիմի անունները, բ) Բաբելոնի արքայի՝ աքսորյալ Հովաքիմի համար սահմանած հանապազօրյա ապրուստի միջոցները, գ) Նաբուգոդոնոսորի՝ Երուսաղեմի վրա հարձակվելն ու գրավելը և Հեքոնիայի փոխարինումը Սեդեկիայով:

ՍԵԴԵԿԻԱՆ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՆԿՈՒՄԸ

Հուդայի արքա Սեդեկիային գահին նստեցրին բաբելացիները, և նա հավատարիմ մնաց իր տերերին: Սակայն քանի որ երկիրն զգալիորեն փոքրացել էր (Երեմ. 13. 19), Բաբելոնի դեմ դժգոհության ալիք էր բարձրանում և Սեդեկիային հարկադրում էին բաբելացիների դեմ դաշինք կնքել և ելնել՝ կորսված հողերը ետ բերելու նպատակով (Երեմ. 28. 1–4): Բաբելացիների հակառակորդների գործողություններն այնքան հաջող էին, որ իրենց կողմը գրավեցին ժողովրդին և ազդեցին Սեդեկիայի վրա, ով, այնուամենայնիվ, տատանվում և անվճռականություն էր դրսևորում: Ի վերջո նա տեղի տվեց և սկսեց ընդդեմ Բաբելոնի գաղտնի խորհրդակցություններ հրավիրել: Իսկ երբ Եգիպտոսի գահին նստեց Ապրիես փարավոնը (Ք. ա. 588–568 թթ.), ապստամբության որոշումը վերջնականապես կայացվեց, և Սեդեկիան ընդվզեց Բաբելոնի դեմ (Դ Թագ. 24. 20): Իսկ թե դրան ինչ հաջորդեց, այն է՝ Նաբուգոդոնոսորի կայծակնային հարձակումը, քաղաքի և տաճարի սարսափելի ավերումը, գերեվարությունը և այլ չարիքներ, այս ամենի մասին մեզ պատմում է Հին Կտակարանի աստվածաշունչ բնագիրը (Դ Թագ. 25 և Երեմ. 39. 1–10):

Հնագիտական վկայություններով հաստատված այս ահ ու սարսափ ներշնչող անցքերը տպավորիչ և բազմաթիվ են: Փորձենք դրանք հնարավորին չափ հակիրճ շարադրել:

1. Սեդեկիայի օրոք, երբ Երուսաղեմի անկումն օրհասական էր դառնում, Մեծն Երեմիա մարգարեն բոցավառ հավատով Աստծուց շնորհված մարգարեությունն էր հռչակում: Նա ասում էր. «Իսկ քաղդեացիները կրկին պիտի վերադառնան այստեղ. պիտի պատերազմեն այս քաղաքի դեմ, պիտի գրավեն և հրով պիտի այրեն այն»: Այսպես է ասում Տերը. «Դուք ձեզ մի՛ խաբեք այն բանով, թե «Քաղդեացիները ելան հեռացան մեզնից»: Նրանք ձեզնից ձեռք չեն քաշելու: Անգամ եթե ձեզ հետ կռվող քաղդեացիների ամբողջ զորքը կոտորեք, այն վիրավորները, որոնք մնալու են նրանցից, ամեն կողմից պիտի բորբոքվեն ու հրով այրեն այս քաղաքը» (Երեմ. 37. 8–10): Մեծ մարգարեի կանխասացության իմաստը պարզից էլ պարզ էր. Երուսաղեմի անկումն ու կործանումը կանխորոշված էր Աստծուց: Ամեն դիմադրություն ձախողման էր դատապարտված, ուստի պետք չէր անիմաստ արյուն հեղել:

Որոշ զորահրամանատարներ Սեդեկիային իրազեկեցին Երեմիայի այս մարգարեության մասին, որը, սակայն, ճշմարիտ մարգարեություն էր, քանզի Աստծուց էր: Այս այրերը ամբաստանեցին Երեմիային ազգային շահերին դավաճանելու մեջ՝ Երեմիային հորջորջելով մարդ, ով իր մարգարեությամբ «թուլացնում է կռվող մարդկանց բազուկները» (Երեմ. 38. 4), այսինքն՝ կապում է ռազմիկների ձեռքերը և այդպիսով թույլ չի տալիս նրանց մինչև վերջ ոգևորությամբ կռվել:

1935 թ. հին Լաքիսի հետ նույնացվող Թելլ–ադ–Դուվեյրեում անցկացված պեղումների ընթացքում Ջեյմս Լեսլի Սթարկեյը տարբեր ռազմական զեկուցագրեր բովանդակող 18 կավե սալիկներ գտավ: Դրանք գրված էին ինչ–որ սպայի կողմից Լաքիսում գտնվող մի ավագ սպայի համար: Հնագետ Օլբրայթը նկատում է, որ դրանցից մեկում (համար 6) սպան գանգատվում է, որ արքունի բարձրաստիճան հրամանատարների հրամանները ժողովրդի «բազուկները թուլացնում են», (այսինքն՝ կապում են ձեռքերը):

«Լաքիսի նամակը» գրող զինվորականը գործածում է «թուլացնում են բազուկները» արտահայտությունը, որպեսզի բնութագրի արքունի բարձրաստիճան հրամանատարների գործողությունները, այնինչ Երեմիայի գրքում հիշատակված զորահրամանատարները (38. 4) նույն արտահայտությամբ բնութագրում էին Երուսաղեմի գալիք կործանման վերաբերյալ Երեմիայի մարգարեությունը: Պարզվում է, որ արքայական սպաներն էին մեղավոր հենց այն բանում, ինչում փորձում էին մեղադրել աստվածաշնորհ մարգարեին[1]:

2. «Լաքիսի խեցեբեկորներում» (այդպես էին անվանվել Սթարկեյի գտածոները), որոնք թվագրվում են Երեմիայի ժամանակներով և կազմվել են անցքերի ականատեսների կողմից, հիշատակվում են նաև Սուրբ Գրքում հանդիպող բազմաթիվ անուններ: Թեև անհնար է պարզել, թե այդ անունները Հին Կտակարանում հիշատակված անձանց են պատկանում, թե ոչ, բայց հատկանշական է, որ վերոհիշյալ խեցեբեկորներում հիշատակված երեք անունները միայն Երեմիայի գրքի սրբազան բնագրում են հանդիպում: Այդ անուններն են՝ Գամարիա (Երեմ. 36. 10; 29. 3), Հեքոնիա (35. 3) և Ներիա (36. 4): Հանդիպում են նաև Մաթթանիա և Երեմիա անունները, որոնք, սակայն, պատկանում են մեկ այլ, բայց ոչ Երեմիա մարգարեի դարաշրջանին: Խեցեբեկորներում հոլովված Երեմիա անունը անպայման չէ, որ մարգարեինը լինի: «Ինչևէ, փաստը մնում է փաստ, – եզրակացնում է հնագետ Ֆրին, – որ հնագետների ձեռքում Հուդայում ապրող Երեմիայի ժամանակներում գրված և ուղարկված ռազմական զեկուցագրեր կան: Այս ուղերձները բովանդակում են անուններ, որոնք հիշատակվում են մարգարեի կողմից»[2]: Բացի այդ, Հաուպերտը նկատում է, թե պետք չէ զարմանալ այն բանի համար, որ մենք մինչև վերջին ժամանակներս չունեինք այնպիսի հնագիտական գտածոներ, ինչպիսիք «Լաքիսի խեցեբեկորներն» են, որտեղ ուղղակիորեն հիշատակված կլինեին Աստվածաշնչում տեղ գտած անցքե-

1 **Prithard J. B.** Op. cit. Vol. I. P. 214.
2 **Free J.** B. Op. cit, P. 223.

ը: Այդ բնագրերը Հին Կտակարանի «Երեմիա մարգարեի գրքի էական լրացումներն» են[1]:

3. Ըստ Հին Կտակարանի՝ Երեմիայի օրոք, երբ բաբելացիները հարձակվել և մեկը մյուսի հետևից գրավում էին Հուդայի քաղաքները (Ք. ա. մոտ 583–586 թթ.), Լաքիսն ու Ազեկան շարունակում էին դիմադրել (հմմտ. Երեմ. 34. 7): Նրանց ամրոցները տակավին անառիկ էին: Դարձյալ այս նույն «Լաքիսի խեցեբեկորները» այս փաստի վերաբերյալ ապշեցուցիչ ապացույցներ են տալիս մեզ: Իր հրամանատարին՝ Լաքիսի ամրոցի պարետին՝ Յաոշին, հղված առաջավոր դիրքերից մեկի սպայի կողմից գրված նամակում (կամ համար 4 խեցեբեկորում) ասվում է. «Թող Յահվեն իմ տիրոջը բարի լուրեր լսելու արժանացնի (...): Մեր ուշադրությունը կենտրոնացած է Լաքիս քաղաքի դիտակետերի ազդանշանորդների վրա՝ համաձայն այն տարբերիչ նշանների, որը մեզ է տվել իմ տերը, քանզի մենք չենք կարող տեսնել Ազեկայի ազդանշանները»[2]:

Այս նամակից պարզ են դառնում երեք փաստ. ա) Նաբուգոդոնոսորի զորքերի կողմից Հուդայի շրջափակման օղակը ավելի ու ավելի էր սեղմվում, բ) Լաքիսն ու Ազեկան սերտ կապեր էին պահպանում իրար հետ (այս երկու փաստերը լիարժեք կերպով համահունչ են Հին Կտակարանում ասվածին), գ) Ազեկան ընկնում է:

4. Ազեկայի անկումից հետո Նաբուգոդոնոսորը շարժվեց դեպի Լաքիս: Երկու բուռն գրոհ ձեռնարկվեց Լաքիսի վրա, ընդ որում վերջինն առանձնահատուկ կատաղի էր: Բաբելացիները գրոհում էին գերազանց կազմակերպված զորքով և հատուկ հրձիգ սարքերով: Այսպես՝ ահռելի հրե օղակ էր օրեցօր սեղմվում Լաքիսի պարիսպների շուրջը, մինչև որ մի հսկայական բոց կլանեց քաղաքը, քարերը ճայթեցին և պարիսպները փուլ եկան: Լաքիսի հրդեհատեղում և ավերակներում էլ հենց հայտնաբերվեցին այսպես կոչված «Լաքիսի խեցեբեկորները»: Այս բնագրերը, որոնք գրվել են բաբելացիների բուռն գրոհի ժամանակ, վկայում

1 **Haupert R. S.** Lachish-Frontier Fortress of Judah// Biblical Archaeologist. Vol. I. № 4. Dec.,1938. P. 31,32.
2 **Pritchard J. B.** Op. cit. P. 213.

են պաշարվածների սարսափելի լարվածության մասին: Բացի այդ, «խեցեբեկորները» վկայում են այն մասին, որ շտապ զեկույցներն ու հրամանները տրվում և փոխանցվում էին լուսային ազդանշանների միջոցով: Դրանք հաստատում են նաև Եգիպտոս ռազմական միսիա ուղարկելու փաստը[1], ինչպես հաղորդում է Հին Կտակարանը (Երեմ. 26. 20–23), վկայում են նաև պահակակետերի տեսչության և ռազմական գործունեության ընդհանուր աշխուժացման մասին: Այս ամենը խոսում է նյարդային լարվածության, խռովահույզ վիճակի և ահ ու սարսափի մասին, ինչով այդ օրերին՝ մինչ Երուսաղեմի գրավումն ու անկումը, համակված էին մարդկանց սրտերը:

Երուսաղեմի պաշարումը տևեց 18 ամիս: Պաշարվածներն այդքան երկար տոկացին, որովհետև Եգիպտոսից օգնություն էին սպասում: Վերջիվերջո փարավոնի զորքը եկավ, բայց ուրիշ կողմ շարժվեց: Բանակը գնաց Փյունիկիա՝ փյունիկյան նավահանգիստները գրավելու համար: Երեմիա մարգարեն կանխասել էր այս (Երեմ. 37. 5,7), բայց հակաբաբելոնյան կուսակցությունը նրան ամբաստանեց, ինչպես արդեն գրել ենք այդ մասին, ազգային շահերին դավաճանելու մեջ: Այս դաժան ճնշման տակ էլ Երուսաղեմի վերջը եկավ: Քաղաքն ընկավ, Սեդեկիան բռնվեց, նրա որդիներին նրա աչքի առաջ սպանեցին, իսկ նրան կուրացրին: Երուսաղեմը կողոպուտի, ապա կրակի մատնվեց, իսկ բնակչության մի մասը գերի քշվեց (Դ Թագ. 25. 4):

Մինչև վերջին ժամանակներս մենք նվազագույն հնագիտական տվյալներ ունեինք այդ դեպքերի վերաբերյալ: Բայց հնագետ, դոկտոր Տիկ. Քեթլին Քենյոնի ձեռնարկած պեղումներն արգասավորվեցին կարևոր տեղեկություններով: Պաշարողական մեքենաներն ու խոյերն իրենց գործն արեցին, ինչպես որ նկարագրում է Հին Կտակարանը: Այսպիսին է Քենյոնի պեղումների հանրագումարը[2]:

Հուդայի թագավորությունն ընկավ: Քանանը նվաճվեց բաբելացիների կողմից: Հրեաների մեծ մասը գերի տարվեց, իսկ ոչ

1 Սույն բնագիրը № 3 «խեցեբեկորի» վրա է: Տես **Pritchard J. B.** Op. cit. P. 213.
2 **Kenyon K.** Jerusalem, Excavating 3. 000 Years of History. L. 1967. P. 78-104.

մեծ խմբեր, փրկվեցին Եգիպտոս փախչելով: Նրանց մեջ էր նաև Երեմիա մարգարեն (Դ Թագ. 25. 26 և Երեմ. 43):

Այսպես լիովին ի կատար ածվեց աստվածաշնորհ Երեմիայի մարգարեությունը. «Ահավասիկ Ես հրաման եմ տալու,– ասում է Տերը, – և նրանց նորից արձակելու եմ այդ քաղաքի վրա. նրանք պիտի պատերազմեն դրա դեմ, գրավեն և հրով այրեն այն: Հուդայի երկրի քաղաքներն իրենց բնակիչներից թափուր եմ դարձնելու» (Երեմ. 34. 22): Իրականում բաբելացիները Երուսաղեմը շարունակաբար էին ավերում ու ամայացնում: Ամերիկացի նշանավոր հնագետ Օլբրայթի շուրթերով հնագիտությունը հավաստում է, որ պեղումների արդյունքները բավականին համոզիչ են և ապացուցում են, որ շատ քաղաքներ կործանվել են Ք. ա. VI դարի սկզբում և այլևս չեն բնակեցվել. մյուսներն ավերվել են նույն ժամանակ, բայց հետագայում կրկին մասամբ վերակառուցվել են, իսկ մնացյալն ավերվել է երկար ժամանակ թափուր մնալուց հետո: Մի դեպք չկա, որ որևիցե հրեական քաղաք շարունակաբար բնակեցված լիներ գերեվարության ողջ ընթացքում»[1]:

Շուրջ 1500 տարի էր անցել այն օրից, երբ Աբրահամը կամոքն Աստծո լքեց իր հայրենիքը՝ Քաղդեական Ուրը, և բնակություն հաստատեց Քանանում: Այժմ՝ 1500 տարի անց, Աբրահամի ժառանգներն Ուր էին վերադառնում, բայց ոչ ազատ, այլ քաղդեացիների գերիների կարգավիճակով:

Պատմության վարագույրն իջավ հիմնավեր դարձած Քանանի վրա: Աստծո ընտրյալ ժողովուրդը կոչված էր բաբելոնյան գերության «մեծ դպրոցն» անցնելու: Այստեղ նա բազմաթիվ հոգեշահ դասեր պիտի ստանար:

ՆԻՆՎԵՆ՝ ՄԵԾ ՔԱՂԱՔԸ

Ք. ա. 612 թ. երեք դաշնակիցների՝ մարերի, բաբելացիների և սկյութների միավորյալ ուժերը գրավեցին Նինվեն: Այսպես Աստծո ժողովրդի ևս մեկ թշնամի պատժվեց: Մի քանի

1 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 400.

տարի անց Նինվեն անհետացավ պատմության թատերաբեմից: Ընդհուպ մինչև 1847 թ. հնարավոր չէր ճիշտ տեղորոշել այն: Այդ տարի, սակայն, Ա. Լեյարդի պեղումներն արգասավոր էին: Լեյարդի արշավախմբին հաջորդեցին Բրիտանական և Ֆրանսիական թանգարանների արշավախմբերը՝ Լ. Քինգի, Ռ. Թոմպսոնի, Մ. Ե. Լ. Մալլոուանի և այլոց գլխավորությամբ:

Նինվեն հիշատակվում է երեք հինկտակարանյան՝ Հովնանի, Նավումի և Եսայու գրքերում: Ըստ հնագետների եզրակացությունների՝ Նինվեն գտնվել է Տիգրիսի արևելյան ափին, Տիգրիսի ու նրա վտակի միջև փռված հարթավայրի հյուսիս–արևմտյան մասում՝ 46 x 28 կմ մակերեսով: Քաղաքը կառուցվել էր Աբրահամից առաջ, սակայն ասորեստանյան կայսրության ոստանը դարձավ Սենեքերիմի (Ք. ա. 705–681 թթ.) օրոք: Նա էր կառուցել Նինվեի վիթխարի պարիսպը, որի պարագիծը մոտ 15 կմ էր կազմում, իսկ բարձրությունը 12–13,5 մ, և մոտ 56 կմ երկարություն ունեցող մեծ քաղաքային ջրմուղը:

Այն, որ Նինվեի պարիսպների պարագիծը մոտ 15 կմ է կազմել, ստիպում է ռացիոնալիստներին վիճարկել Հովնանի գրքի արժանահավատությունը, ուր ասվում է, որ Նինվեն այնքան մեծ քաղաք էր, որ եթե մեկը կամենար մի ծայրից մյուսը գնալ, երեք օր կանցներ (Հովնան 3. 3): Սակայն, ինչպես գրում է պրոֆեսոր Հորվարդ Ֆ. Վոսը, հարցն ինքնըստինքյան է լուծվում, եթե հաշվի առնենք հետևյալ հանգամանքը. քաղաքի ավերակները սփռված են բուն Նինվեից 22 կմ դեպի հյուսիս գտնվող ժամանակակից Խորասաբադից մինչև Նինվեից 28 կմ դեպի հարավ–արևելք գտնվող Նեբրոթ (Հին Կտակարանում՝ Քաղան): Այս ամբողջ հարակից տարածքը պետք է դիտարկել իբրև բուն Նինվեի բաղկացուցիչ մաս: Ուրեմն, ըստ Վոսի, եթե մենք ծայրից ծայր չափենք այս տարածքը, կստանանք մոտավորապես 56 կմ: Ասել է թե, եթե որևէ մեկը այս տարածքի շուրջը պտույտ կատարի, ավելի քան 111 կմ ճամփորդություն պետք է կատարի կամ երեքօրյա ճանապարհ անցնի, եթե ընդունելու լինենք, որ օրական 37 կմ է կտրել–անցնելու: Ավելին, ըստ այդ նույն պրոֆեսորի պնդման, Նինվեն

միանգամայն կարող էր 600 հազար բնակչություն ունենալ, ինչը նշանակում է, որ այսքան մարդու կացարաններով ապահովելու համար էլ ավելի մեծ տարածքի կարիք կզգացվեր, քան այն, որ պարիսպները ներառում[1]:

Այս կապակցությամբ նշենք, որ ըստ հույն պատմիչ Դիոդորոս Սիկիլացու (Պատմական գրադարան II, 3)՝ քաղաքի շրջագիծը 480 ասպարեզ է կազմել, այսինքն՝ մոտ 100 կմ[2]:

Ներկայումս Նինվեն բաղկացած է երկու բլուրներից՝ Քույունջիք և Նեբի Յունուս (այսինքն՝ «Հովնան մարգարե»), իսկ տարածքն այնքան ընդարձակ է, որ ամենայն հավանականությամբ այն ամբողջովին պեղելն անհնար է: Ամենանշանակալի պեղումները Քույունջիք բլրի վրա անցկացրեց Լեյարդը և հայտնաբերեց Սենեքերիմի արքունիքը: Այս վիթխարի կառույցը բաղկացած է 71 սրահներից (դահլիճներ, սենյակներ, միջանցքներ), որոնց մեծ մասը պատված է բարձրաքանդակներով ու արձանագրություններով: Մոտավոր հաշվարկներով պալատի մակերեսը կազմել է մոտավորապես 3706 մ^2:

Հայտնի է, որ Սենեքերիմը Եզեկիա արքայի օրոք ներխուժեց Հուդա, գրավեց բազում քաղաքներ, երկիրն ամայացրեց և անասելի սարսափ տարածեց, մինչև մահվան հրեշտակը հարվածեց նրա զորքին, երբ սա մտադրվել էր գրավել Երուսաղեմը (այս մասին խոսել ենք նախորդ գլխում): Այս արշավանքի անցքերը նկարագրված են Սենեքերիմի վիթխարի պալատի բարձրաքանդակների արձանագրություններում: Բացառիկ կարևորություն են ներկայացնում պալատի ավերակներից երևան հանված մեծաքանակ կավե սալիկները:

Թերևս անհավանական թվա, բայց ճիշտ է, որ հնագիտությունը պարզեց Սենեքերիմի արտաքին տեսքը: Պալատի բարձրաքանդակների համաձայն՝ Սենեքերիմը երկար մորուքով, խնամքով հարդարված մազերով, մեծ քթով ամրակազմ այր էր: Հյու-

1 **Vos H. F.** Op. cit. P. 101.
2 **Lloyd S.** Foundations in the Dust. P 135. Մեջբերում ըստ **Vos H. F.** Op. cit. P. 102.

սիսային Իրաքի բնակիչները այսօր էլ մոտավորապես այդպիսի տեսք ունեն[1]:

Եսայի մարգարեի գրքում պատմվում է Սենեքերիմի գահակալության վախճանի մասին: Երբ Աստծո հրեշտակը Երուսաղեմի պարիսպների առաջ 185 հազար ասորեստանցու մահվան մատնեց, Սենեքերիմը դադարեցրեց այդ քաղաքի պաշարումը և Նինվե վերադարձավ ու այնտեղ մնաց: Իր հորական տան հովանավորի՝ Նասրաք (Նասրոք) աստծո մեհյանում աղոթելիս սպանվեց իր իսկ որդիների՝ Ադրամելեքի և Սանասարի (Շարեցերի) ձեռամբ, ովքեր թաքնվեցին Հայաստանում: Գահը ժառանգեց նրա երրորդ որդի Ասարհադոնը (Եսայի 37. 38): Սուրբ Գիրքն այս մասին հայտնում է կարճամփոփ, անաչառ և անկողմնակալ կերպով: Սեպագիր սալիկները նույնպես այս մասին ընդհանուր գծերով են պատմում: Քեմբել Թոմպսոնը Քույունջիք բլրի վրա հայտնաբերեց Ասարհադոնի հատվածակողմը, որի վրա հետևյալ բովանդակությամբ արձանագրություն կա. «Երբ իմ եղբայրները կորցրին իրենց խելքը և արեցին այն, ինչը մեղք էր աստվածների և մարդկանց առաջ» և այլն... Դեպքի մասին տեղեկությունը շատ սեղմ է տրվում[2]: Բացի այդ, Ասարհադոնը (Ասսորհադդոնը) Նինվեում այդ խռովահույզ օրերի մասին գրում է. «Չարանենգ միտք էր առաջնորդում իմ եղբայրներին (...): Նրանք ընդվզեցին: Արքայական իշխանությանը տիրանալու համար սպանեցին Սենեքերիմին (Սեննաքիրիմին): Հոգիս առյուծի նման ցասումով լցվեց (...): Բայց գահին բռնատիրողները (...) անհայտ երկիր փախան»: Իսկ ես ելա և «բարեհաջող Նինվե հասա: Ես ուրախությամբ իմ հոր գահին բազմեցի (...): Ես՝ Ասսորհադդոնն (Ասարհադոնն) եմ՝ աշխարհակալ թագավորը, Ասորեստանի թագավորը... Սենեքերիմի որդին»[3]:

Նինվեի ավերակները լիովին հաստատում են քաղաքը սրընթաց գրոհից հետո հրո ճարակ դառնալու փաստը: Այս մասին է Նավում մարգարեի խոսքը. «Ո՞ւր են առյուծների որջերն ու նրանց կորյունների որսերը, ո՞ւր գնաց մտավ առյուծը. չկար մե-

1 Տես **Short A. R.** Op. cit. P. 38.
2 **Short A. R.** Op. cit. P. 39.
3 **Keller W.** ‘Η Βίβλος …Σ. 362.

կը, որ վախեցներ առյուծի կորյուններին: Առյուծը բավական որս արեց իր կորյունների համար, որս խեղդեց իր կորյունների համար, իր բույնը լցրեց որսով և իր որջը՝ հափշտակված բաներով» (Նավում 2. 11–12): Հիրավի Նինվեում հեքիաթային հարստություններ էին ամբարվել: Ավերակներից երևան հանված արձանագրությունների գլխավոր թեման նվաճված քաղաքներից Նինվե բերված ոսկու, արծաթի և պղնձի քանակն է: «Ահա Ես քո դեմ եմ,– ասում է Ամենակալ Տերը,– ծխով կայրեմ քո զորքերը, սուրը կուտի քո առյուծներին, երկրից կվերացնեմ քո որսը, և այլևս չեն լսվի քո գործերը» (Նավում 2. 13): Արդարև, Նինվեի՝ մեծ քաղաքի կործանողը Ամենակալ Տերն էր...Նրա ռազմական տեխնիկան այրվեց՝ ծխի և մոխրի վերածվելով: Եվ այն ամենը, ինչ կապված էր այս աղմկաշատ քաղաքի հետ, քար լռությամբ պատվեց:

Նույն Նավում մարգարեն կանխասել էր Նինվեի վախճանը՝ դարավոր արյունարբու բռնակալության ավարտը. «Ո՛վ արյան քաղաք, բոլորովին սուտ, անիրավությամբ լի, այնտեղ որսը պակաս չէ: Հարվածների ձայն, անիվի շարժման ձայն, կառքերի շաչյուն, հեծյալների դոփյուն, զենքի փայլ, սուսերի շող, վիրավորների թավալգլոր անկում, հաշիվ չկար նրանց ժողովուրդներին: Նրանք պիտի տկարանան իրենց մարմնով բազում պոռնկության պատճառով» (Նավում 3. 1–3): Հենց դա էլ կատարվեց: Ք. ա. 612 թ. կատաղի մարտից հետո երեք դաշնակիցները՝ մարերը, բաբելացիները և սկյութները, առան Նինվեն: Սոփոնիա մարգարեն այսպես էր մարգարեացել. «Իմ ձեռքը կերկարեմ հյուսիսի վրա (Ասորեստանը Իսրայելից հյուսիս էր գտնվում) և կբնաջնջեմ ասորեստանցուն, Նինվեն ապականության կենթարկեմ, անապատի պես անջրդի կդարձնեմ» և այլն (Սոփ. 2. 13 և շար.): Դարեր շարունակ հին աշխարհն արյան և արցունքի մեջ ընկղմող Նինվեից այժմ միայն մոխրի կույտ է մնացել: Սեպագիր «Բաբելոնյան ժամանակագրություն»–ում, որը հրապարակեց ասուրագետ Ս. Ի. Գեդդը, հաղորդվում է Նաբոպալասարի՝ նորբաբելոնյան թագավորության հիմնադրի հաղթանակների մասին և ասվում, որ Նինվեի գրավման ընթացքում վճռորոշ դերը դաշնակից մարերը խաղացին, ովքեր «անխնա կոտորեցին իշխաններին... Քա-

ղաքից ու տաճարից մեծաքանակ բարիք կողոպտեցին՝ քաղաքը վերածելով հողաբլրի ու ավերակների...»[1]:

Մյուս նշանակալից և զգայացունց հայտնագործությունը, որը արվեց Քույունջիք բլրի (հին Նինվեում) պեղումներից, Աշուրբանիպալի (իշխել է Ք. ա. 668–626 թթ.) արքունիքն ու նրա հարուստ արքունի գրադարանն էր, որը ավելի քան 22 հազար սեպագիր կավե սալիկ ուներ: Սույն գրավոր հուշարձանները ներկայումս Բրիտանական թանգարանում են[2]: Աշուրբանիպալի անունը, որին հին հույները Սարդանապալ էին անվանում[3], Սուրբ Գրքում հիշատակված չէ: Շատերն են նրան նույնացնում մեծ և փառապանծ Ասենափարի հետ, ում մասին խոսում է Եզրասը (Բ Եզր. 4. 10)[4], մյուսները՝ Սենեքերիմի որդի Ասարհադոնի (Ասսարհադոնի) հետ[5]: Թեև Աշուրբանիպալի անունը հիշատակված չէ Սուրբ Գրքում, այդուհանդերձ անուղղակի առնչվում է Աստվածաշնչին, քանզի արյունռուշտ բռնակալների երկար շարքում միակ ասորեստանցին է, որ աշխարհին մեծ ծառայություն է մատուցել: Նրա հրամանով ընդօրինակվել են աքքադական գրականության գլուխգործոցները, ի թիվս որոց նաև աշխարհի արարման մասին բաբելական վիպերգությունը. նրա կարգադրությամբ կազմվել են իր հսկայածավալ կայսրության մեջ մտնող զանազան լեզուների բառարաններ ու քերականություններ: Նինվեում նրա հիմնած գրադարանը, անկասկած, Հին Արևելքի ամենամեծն ու ամենանշանակալիցն էր: Առանց նրա հավաքած այս արժեքավոր ժողովածուի մարդկությունը անմասն կմնար հնադարի «Բերրի մահիկի»[6] երկրների իմաստության և պոեզիայի մասին գիտելիքներից: Շնորհիվ Աշուրբանիպալի գրադարանի՝ մենք ծանոթացանք ոչ

1 Տես **Cornfeld G., Freedman D. N.** Op. sit. P. 186.
2 Տես «Սամարիայի անկումը» գլուխը:
3 Տես **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 604. Նշ. 88
4 Տես **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 376. Նաև Vos H. F. Op. cit. P. 102.
5 **Jamieson R. Fausset A. R. Brown D.** Commentaty Practical and Explanatory on the Whole Bible. Zondervan Publishing House, Grand Rapids, Mich., 1962. P. 340.
6 **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 376. Ըստ Կելլերի՝ «Բերրի մահիկ» է կոչվում Արաբական անապատի շուրջը կիսալուսնի ձև ունեցող ցամաքի մի տարածքի հատված, որը սկիզբ է առնում Աքաբ քաղաքի մոտակա ծոցից և ընդգրկելով ողջ Պաղեստինը, Սիրիան ու Փոքր Ասիայի մի մասը, հասնում է հնամենի Խառանին և վերջանում Պարսից ծոցի ափին, ուր գտնվում է հինավուրց Ուր քաղաքը:

միայն Գիլգամեշի դյուցազներգությանը[1]: Աշուրբանիպալի գրքերը, այսինքն՝ նրա հավաքածուի կավե սալիկները, բացահայտեցին մարդկության պատմության մատյանի խորընկա գաղտնիքները: Իսկ մենք կարող ենք թերթել այդ «գիրքը» և քննել էջ առ էջ: Այսպես «պարզվեց, որ տիրակալները, քաղաքները, պատերազմներն ու անցքերը, որոնց մասին նախկինում մարդիկ գիտեին լոկ Հին Կտակարանից, արդարև պատմական եղելություններ են»[2]:

Բոլոր այս կարևոր հայտնագործությունները մեզ տեղեկություններ են հաղորդում Հին Կտակարանի սրբազան բնագրում հիշատակված Միջագետքի երկրների, քաղաքների ու ժողովուրդների մասին: Եթե Սուրբ Գրքի այս տեղեկությունները չլինեին, ոչ ոք այդ տարածքում պեղումներ չէր անցկացնի: Թերևս պեղումներ էլ չլինեին: Ուստի, ինչպես վերը նշել ենք, Աշուրբանիպալի անունը առնչվում է սրբազան բնագրին, թեկուզ և չի հիշատակվում նրանում:

Նինվեի մյուս՝ Ների Յունուս (այսպես է կոչվել բլուրը, քանզի ավանդության համաձայն՝ այդտեղ է գտնվում մարգարեի գերեզմանը) բլրի վրա հայտնաբերվեց Ասարհադոնի պալատը (կամ Ասսորհադդոնի, իշխել է Ք. ա. 681–668 թթ.): Սակայն այս բլրի վրա կառուցված ժամանակակից քաղաքը խոչընդոտում է լայնածավալ պեղումներ անցկացնելուն: Դրա հետ մեկտեղ պետք է, որ պեղումներն ընդգրկեն հնամենի Նինվեի ավերակների ողջ տարածքը, որպեսզի բացահայտվեն այդտեղ երբեմնի տեղի ունեցած դրամատիկ դեպքերի մանրամասները: Համենայն դեպս, այն ամենը, ինչը որ ցայսօր լույս աշխարհ է բերվել, փարատում է Հին Կտակարանի վավերականության և պատմականության վերաբերյալ ամեն մի կասկած:

1 Տես «Աշխարհի և մարդու արարչագործությունը», «Համաշխարհային ջրհեղեղը», «Առաջին մարդկանց երկարակեցությունը» գլուխները:

2 **Keller W.** Ἡ Βίβλος …Σ. 342.

ՀՐԵԱՆԵՐԸ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նաբուգոդոնոսորի օրոք Երուսաղեմում ժողովրդի գերեվարությամբ բոլորվում է Իսրայելի պատմության մի մեծ ժամանակահատված: Մինչ այդ 12 ցեղերը, որոնք Հեսու Նավեի գլխավորությամբ Ավետյաց երկիր մտան, Ք. ա. 1050 թ. արդեն միավորվել էին Սավուղ արքայի գայիսոնի ներքո: Սողոմոնի մահից և երկրի՝ երկու թագավորությունների պառակտվելուց հետո յուրաքանչյուրն իր ճանապարհով ընթացավ, մինչև որ ի վերջո Իսրայելը Ք. ա. 722 թ. Ասորեստանի, իսկ Հուդան Ք. ա. 586 թ. Նաբուգոդոնոսորի և բաբելացիների (քաղդեացիների) իշխանության տակ ընկան:

Սույն թագավորությունների անկումից հետո բնակչությունը գերի քշվեց դեպի Պաղեստինից հեռու գտնվող երկրներ: Ցավոք, Իսրայելից գերի տարվածների մասին շատ քիչ գիտենք, բայց քաջատեղյակ ենք Հուդայից քշված գերիների ճակատագրից:

Սուրբ Գրքում նշվում է, որ Հուդայի ժողովուրդը բազմիցս է ենթարկվել Նաբուգոդոնոսորի զորքերի հարձակումներին, որոնք ամեն անգամ ավարտվում էին հրեաների գերեվարությամբ: Ք. ա. 597 թ. Հովաքիմ արքան ու անվանի այրերից շատերը, այդ թվում նաև Եզեկիել մարգարեն (Եզեկ. 1. 2), Բաբելոն տարվեցին: Ք. ա. 586 թ. Երուսաղեմի՝ Նաբուգոդոնոսորի կողմից գրավումից հետո ևս մի մեծ խումբ հրեաներ գերի ընկան և միացան 11 տարի նրանցից առաջ Բաբելոն քշվածներին: Երուսաղեմից Երեմիա մարգարեն աքսորյալներին՝ հատկապես ծերերին, քահանաներին ու մարգարեներին գրում էր. «Տնե՛ր շինեցեք և բնակվեցե՛ք, այգինե՛ր տնկեցեք և կերե՛ք դրանց պտուղները, կի՛ն առեք, և թող ծնվեն տղաներ ու աղջիկներ, ձեր տղաների համար կի՛ն առեք, իսկ ձեր աղջիկներին մարդ՛ու տվեք, և թող ծնվեն տղաներ ու աղջիկներ, բազմացե՛ք այդտեղ և մի՛ նվազեք: Խաղաղությա՛մբ ապրեցեք այդ երկրում, ուր գերեվարել տվեցի ձեզ, այդ երկրի համար աղո՛թք արեք Տիրոջը, որովհետև նրա խաղաղությամբ

ձեզ համար ևս խաղաղություն կլինի» (Երեմ. 29. 5–7): Իր այս ուղերձով Երեմիան քաջալերում էր աքսորյալներին և հասկացնել տալիս, որ նրանք Բաբելոնում երկար են մնալու: Այս նամակից պարզ է դառնում, որ գերի հրեաներն զգալի ազատություններ էին վայելում: Բաբելոնյան գերությունը չի կարելի համադրել Եգիպտոսում՝ Աստծո ընտրյալ ժողովրդի վերապրած ծանր կյանքի հետ: Որոշ բացառություններով (տե՛ս Եսայի 47. 6) հանդերձ՝ Բաբելոնում տաժանակիր հարկադիր աշխատանքներ չկային, ինչպիսին Նեղոսի երկրի Փիդոն և Ռամեսե քաղաքներում աղյուս պատրաստելու պարագայում էր, թեև Բաբելոնը «երբեք այդքան աղյուսի արտադրանք չէր էլ տեսել, ինչպես այդ օրերին, քանզի երբևէ շինարարությունն այդքան լայն թափ չէր ստացել, ինչպես Նաբուգոդոնոսորի օրոք»[1]:

Առաջին գերյալները Քոբար գետի մոտ բնակվեցին: Շնորհիվ հնագիտության՝ այսօր ստույգ կարելի է տեղորոշել գերեվարված հրեաների բնակության սահմանները: Ամենից շատ տեղեկություններ է տրամադրում հարավային Միջագետքի հին Նիպպուրի շրջանը: Այս քաղաքում զգալի պեղումներ են անցկացվել, որոնք շարունակվում են ցայսօր: Նիպպուրի ավերակներից երևան հանված բազմաթիվ սեպագիր սալիկներում կան երկուսը, որոնք թվագրվում են՝ մեկը Ք. ա. 443 թվականով, մյուսը՝ 424 թվականով: Դրանցում խոսվում է մի ջրանցքի մասին, որը կոչվում էր «նարու Քաբարի» կամ «նեհար Քեբար», ինչը թարգմանաբար նշանակում է «Քոբար գետ»: Այդտեղ գալիս էր նաև, ինչպես ինքն է պատմում, Եզեկիել մարգարեն (Եզեկ. 3. 15): Իրականում այդ գետը մեծ Եփրատից գցված ջրանցք էր: Նիպպուրը Բաբելոնից շուրջ 110 կմ դեպի հարավ–արևելք էր գտնվում, և այս ջրանցքն անցնում էր նրա միջով[2]:

Եզեկիելի եբրայական բնագրում «Քոբար գետից» զատ մեկ այլ անվանում էլ կա՝ «Թել–Ավիվ» (Եզեկ. 3. 15), ինչը «հասկերի բլուր» է նշանակում՝ հավանաբար այդ տեղանքի բերրիության պատճառով[3]: Ըստ պրոֆեսոր Թոմպսոնի՝ Նիպպուրի մոտ բազ-

1 **Keller W.** Ἡ Βίβλος…Σ. 402
2 **Thompson J. A.** Op. cit. P. 156.
3 **Γιαννακόπουλος Ἰωηλ**. Ἡ Παλαιὰ Διαθήκη κατὰ τοὺς Ο΄, Τ. 20. Ὁ προφήτης Ἰεζεκιήλ. Ἀθῆναι,1962. Σ. 36.

մաթիվ բլուրներ կան և հստակ ապացույցներ, որ Ք. ա. 500 և 400 թվականների միջև այս շրջանում հրեաներ են ապրել: Նրանք Ք. ա. 600 թ. հետո այդտեղ եկած առաջին գերյալ հրեաների սերունդներն էին[1]:

Վերն ասվածը ի մի բերելով՝ կարելի է կրկնել, որ որոշ բացառությամբ հանդերձ՝ հրեաները համեմատաբար վատ չէին ապրում կռապաշտ բաբելացիների միջավայրում: Մարգարեները, օրինակ՝ Եզեկիելը, կարող էին այցելել նրանց և քարոզել, բացի այդ, նրանք յուրատեսակ «ժողովրդի ծերերից» բաղկացած տեղական ինքնակառավարման մարմին ունեին:

ԳԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃԱԾ ԱՐՏԱՔՍՈՒՄՆԵՐԸ

Սուրբ Գրքի բովանդակությունը հետազոտող պատմաբանները պնդում են, որ Նաբուգոդոնոսորը Պաղեստինից հրեա ժողովրդին երեք անգամ է տեղահանել Բաբելոն՝ առաջինը՝ Ք. ա. 606–605 թթ., երկրորդը՝ Ք. ա. 597 թ. և երրորդը՝ Ք. ա. 586 թ.: Այդուհանդերձ որոշ ռացիոնալիստներ վիճարկում են առաջին տեղահանության փաստը: Սակայն այս աքսորը հավաստող արժանահավատ տվյալներ կան, քանզի Դանիել մարգարեի գրքում խոսվում է Նաբուգոդոնոսորի կողմից Երուսաղեմի գրավման, հրեաների աքսորի ու տեղահանության մասին, որոնց մեջ էին նաև Դանիել մարգարեն և Հուդայի թագավորական տոհմի մի քանի ժառանգներ (Դան. 1. 1–3): Բացի այդ հրեական պատմության միայն ժամանակագրության հարցերով զբաղվող Թիլը նկատում է, որ հրեա պատմիչ Հովսեպոսը պահպանել է Բերոսոս (բաբելացի քուրմ, ապրել է Ք. ա. մոտ 300–250 թթ.) պատմիչի՝ այս արշավանքի մասին կարևոր տեղեկությունները: Ըստ Բերոսոսի՝ երբ բաբելոնյան արքա Նաբոպալասարին իրազեկում են, որ իր տերության արևմտյան մասը (Ասորիք և այլն) ապստամբել է, նա իր որդի Նաբուգոդոնոսորին ուղարկում է հրեաների և այլ

1 **Thompson J. A.** Op. cit. P. 157.

ժողովուրդների ընդվզումը ճնշելու: Սակայն Նաբոպալասարը մահանում է, և Նաբուգոդոնոսորը հապճեպ վերադառնում է Բաբելոն՝ հոր գահին նստելու համար:

Թիլն ասում է՝ եթե ուշադրություն դարձնելու լինենք մեր ձեռքի տակ եղած պեղածո նյութերին, ապա կտեսնենք, որ վերջին երկու կավե սալիկները, որոնք պատրաստվել են Նաբոպալասարի օրոք, համապատասխանում են Ք. ա. 605 թ. մայիս և օգոստոս ամիսներին, իսկ Նաբուգոդոնոսորի գահակալության ժամանակին պատկանող առաջին երկու սալիկները՝ Ք. ա. 605 թվի օգոստոս և սեպտեմբեր ամիսներին[1]: Այս ամենը համընկնում է Երուսաղեմի առաջին գրավման և Ք. ա. 605 թ. հրեաների առաջին արտաքսման վերաբերյալ Սուրբ Գրքի տեղեկություններին: Ինչպես այնուհետև նկատում է Թիլը, ավելի հավանական է, որ Նաբուգոդոնոսորի այդ արշավանքը հենց Ք. ա. 605 թ. գարնանն ու ամռանն է տեղի ունեցել[2]: Այսպիսով, հրեաների առաջին վերաբնակեցումը թվագրվում է Ք. ա. 605 թ.–ով, ընդ որում տեղահանվածների մեջ էր նաև Դանիել մարգարեն՝ ըստ սրբազան բնագրի (Դան. 1. 1–3, 6): Երկրորդը տեղի ունեցավ Ք. ա. 597 թ., գերիների մեջ էր Եզեկիել մարգարեն, իսկ երրորդը՝ Ք. ա. 587/586 թ., երբ Նաբուգոդոնոսորը նվաճեց Երուսաղեմը և հրկիզեց քաղաքն ու Տաճարը (Դ Թագ. 25. 9–10):

597 թ. բացի Եզեկիելից գերյալների մեջ էր նաև Հուդայի արքա Հովաքիմը: Նրանք երկուսն էլ հաստատվեցին Քոբար գետի մոտ (Եզեկ. 1. 1,3): Ինչպես արդեն նշել ենք, Քոբարը Բաբելոնի և Նիպպուրի միջև հոսող նավարկելի ջրանցքներից մեկն էր:

Այսպես ուրեմն՝ Քոբար գետի մոտ հրեաները 70 տարի ապրեցին: Եվ չնայած, որ Եզեկիել մարգարեն Աստծուց գիտեր հրեաների խստասրտության մասին, որ նրանք Աստծո խոսքի համաձայն՝ «դառնացուցիչ Իսրայելի տունն» են (Եզեկ. 2. 3,5,6), այնուամենայնիվ, Աստծո հրամանով նա պետք է քաջալերեր, ոգևորեր նրանց և կանխասեր, որ նրանք վերստին իրենց երկիրն են դառնալու և վերածնվելու են (Եզեկ. 11. 1 և մյուս համարները):

1 **Thiele E. R.** Op. cit. P. 181,182.
2 **Thiele E. R.** Op. cit. P. 181. Մեջբերումն ըստ **Free J. P.** Op. cit. P. 224.

ԵԶԵԿԻԵԼ ՄԱՐԳԱՐԵՆ

Եզեկիել մարգարեն գերյալներին անհողդողդ կերպով բացատրում էր, որ նրանց տառապանքներն իրենց մեղքերի համար են: Բաբելոնիայում նրա քարոզչության շրջանն ընկնում է Ք. ա. 597 և 593 թվերի միջև: Սակայն ռացիոնալիստներից ոմանք համարում են, որ նա ապրել է Պաղեստինում, համենայնդեպս կյանքի մի որոշ շրջան, երբ քարոզում էր, իսկ մյուսները փորձում են ապացուցել, որ Եզեկիելը մարգարեացել է գերությունից հետո: Սակայն հնագիտական գտածոները հաստատում են ավանդական տեսակետի ճշմարտացիությունը, այն է՝ մարգարեն քարոզել է Բաբելոնում Ք. ա. մոտ 597–593 թվերի միջև: Բերենք մի քանի օրինակ:

Եզեկիելի գրքում ասվում է, որ մարգարեն Աստծո հրամանով մի աղյուս վերցրեց և նրա վրա քաղաքի հատակագիծը գծագրեց (Եզեկ. 4. 1): Եզեկիելն այս խորհրդանշական քարտեզով գերյալներին կանխանշեց Երուսաղեմի կործանումը: Այստեղ գործածված եբրայերեն leben բառը նշանակում է «սաման»՝ արևի տակ չորացրած հում աղյուս: Իսկ քանի որ կավե փափուկ աղյուսների (որոնք այնուհետև արևի տակ չորացվում էին) վրա այդպիսի պատկերները սովորական էին Բաբելոնում, ինչը և հաստատեցին հնագիտական պեղածները[1], ապա այդ խորհրդանշական քարտեզը չէր կարող Հուդայում գծագրվել[2]:

Մեկ ուրիշ անգամ Աստված Եզեկիելին պատվիրեց ևս մեկ գործողություն կատարել, ինչը Երուսաղեմի պարիսպների ճեղքվածքները պիտի խորհրդանշեր. Բաբելոնում գերյալների ներկայությամբ պետք էր տան պատի մեջ անցք բացեր և նրա միջով անցներ (Եզեկ. 12. 5,7): Պեղումները ցույց տվեցին, որ տուն կառուցելիս քաղդեացիները սովորաբար կավ կամ արեգակի տակ թրծված աղյուսներ էին օգտագործում, իսկ Պաղեստինում՝ առա-

1 **Cornfeld G. Freedman D. N.** Op. cit. P. 181.
2 **Chiera E.** They Wrote on Clay. Chicago,1938. P. 160,164. Մեջբերումս ըստ **Thompson J. A.** The Bible and Archaeology. P. 163.

վելապես քար, հետևապես այդպիսի տան պատի մեջ ծակ բացելը և մանավանդ փլելը բավական դժվարին գործ կլիներ: Նույնպես ապացուցված է, որ Ք. ա. VI դ. Պաղեստինում կավից պատեր չէին կառուցում, մինչդեռ Միջագետքում պատերը միմիայն դրանցից էին կառուցվում[1]: Եզեկիելի այլ մարգարեություններում էլ է հիշատակվում հենց այս տեսակ պատը: Այսպես՝ 13–րդ գլխում (10–15) խոսվում է տան պատի մասին, որից տեղատարափ անձրևը ողողելու է ծեփը: Թրծված աղյուսներով կառուցված պատերի նույն նկարագրությանն ենք հանդիպում նաև 22–րդ գլխում (28 համար)*:

Եզեկիելի՝ հենց բաբելոնյան գերության ժամանակ մարգարեական առաքելության համոզիչ ապացույց է նրա իսկ կողմից վեհաշուք, փառահեղ Տաճարի արևելյան դարպասներին տրված նկարագիրը (Եզեկ 40. 5–16): Այս նկարագրությունն այնքան հանգամանալից է, որ կարելի է դրանով վերակազմել ուղիղ դեպի Տաճարի մուտք տանող արևելյան (գլխավոր) դարպասը: Ըստ հնագետների՝ այս նկարագրությունն ի հայտ է բերում այս տեսակ դարպասի խոր հնությունը: Այն Սողոմոնի ժամանակների համար սովորական բան էր, ինչի մասին վկայում են Մակեդոնվի, Գասիոնգաբերի և Ասորի, այսինքն՝ Սողոմոնի օրոք գոյություն ունեցած քաղաքների պեղումները: Նշանակալից է այն, որ այս տեսակ դարպասները Ք. ա. IX դ. անհետացան հին Մերձավոր Արևելքից և փոխարինվեցին նոր տեսակով: Անշուշտ, այս դարպասներից մի քանիսը երկար տարիներ պահպանեցին իրենց գոյությունը, սակայն հետզհետե անհետացան, այնպես որ Եզեկիելի ժամանակներում դրանց նման մի բան տեսնելը գրեթե անհնար էր: Այդ դեպքում Եզեկիելը ինչպե՞ս կարող էր նկարագրել դարպասները, որոնք միայն Սողոմոնի օրոք գոյություն ունեին: Պատասխանն այսպիսին է՝ նա կարող էր Սողոմոնի Տաճարի դարպասները տեսնել նախքան Նաբուգոդոնոսորի կողմից Ք. ա. 597 թ. Երուսաղեմի ու Տաճարի ավերումը: Ոմանց կարծիքով

1 Տես **Howie C. C.** The Date and Composition of Ezekiel. 1950. P. 18 Մեջբերումն ըստ **Thompson J. A.** Op. cit. Տես նաև **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 182.

* Ըստ գրաբարյան բնագրի՝ «որ ծեփէին զնոսա»:

Եզեկիելի նկարագրած դարպասների չափերը չափազանց մեծ են Սողոմոնի Տաճարի համեմատ, բայց հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնը համոզված է, որ «Եզեկիելի գրքի 40–րդ գլխում տեղ գտած դարպասների չափերը էական դեր չեն խաղում, քանզի մարգարեն այդ դարպասները տեսել է աստվածային հափշտակության մեջ («տեսիլքով»), իսկ այն, ինչը մեզ հետաքրքրում է, նախօրինակ (բնօրինակ) է: «Համենայն դեպս տրամաբանորեն բացատրվում է, թե ինչու Եզեկիելը կարող էր («տեսիլքով») տեսնել այս տեսակի դարպասը, և հետևաբար, կարող ենք այն եզրակացությանը հանգել, որ «այս մարգարեն ապրել է բաբելոնյան գերության ժամանակ»[1]:

Հնագիտության պրոֆեսոր Ֆրին պաշտպանում է Եզեկիելի գրքի արժանահավատությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ մարգարեն անցքերի իր ժամանակագրության հիմքում դնում է Հովաքիմ կամ Հեքոնիա արքայի գերեվարության փաստը (տե՛ս Եզեկ. 1. 1–8. 1): Իհարկե, այն ժամանակ Հեքոնիան գերի էր տարվել Բաբելոն (ինչպես և Եզեկիելը), սակայն հրեաները շարունակում էին նրան իրենց թագավորը համարել: Այդպես էր նաև բաբելացիների պարագայում, ինչը երևում է հնագիտական պեղածոներից, որոնցում բաբելացիները նրան «Հրեաստանի թագավոր» էին անվանում: Այս ամենը, ինչպես նկատում է Ֆրին՝ մեծ հնագետ Օլբրայթին երկրորդելով, «հույժ տպավորիչ կերպով հաստատում է Եզեկիելի գրքի հավաստիությունը»[2]:

ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԵՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Երեմիայի գրքում մի մարգարեություն կա, որով աստվածաշնորհ այրը հրեաների մնացորդին (մահից ու գերեվարությունից փրկվածներին) հորդորում է Բաբելոնի արքայի ահից Եգիպտոս

1 **Thompson J. A.** Op. cit. P. 164.

2 **Albright W. F.** The Old Testament and Archaeology... P. 165. Մեջբերումն ըստ **Free J. P.** Op. cit. P. 226,227.

չգաղթել, քանի որ այդ անելու դեպքում Նաբուգոդոնոսորն անպայման կհետապնդի նրանց: Բայց հրեաները չանսացին Երեմիային: Նրանք գաղթեցին Եգիպտոս՝ Տափնաս քաղաք՝ իրենց հետ իր կամքին հակառակ տանելով Երեմիա մարգարեին: Տափնասում (գտնվում էր Նեղոսի դելտայի հյուսիս–արևելքում՝ Միջերկրական ծովի մոտ՝ Եգիպտոսի և Պաղեստինի սահմանագլխում) Երեմիան Աստծո հայտնությամբ կանխասաց, որ բաբելացիները Եգիպտոս կխուժեն: Մարգարեությունն ուղեկցվում էր հետևյալ խորհրդանշանական գործողությամբ. Երեմիան (Աստծո կամոք) մեծ քարեր էր վերցնում և թաղում դրանք փարավոնի պալատի մուտքի դարպասների մոտ (խոսքը Պսամետիկոս I–ի (իշխել է Ք. ա. 664–610 թթ.) կառուցած արքունիքի մասին է): Այս պալատը գտնվում է Տափնասում: Քարերի թաղումը կատարվում էր ի տես հրեաների, որոնց մարգարեն ասաց. «Այսպես է ասում Զորությունների Տերը՝ Իսրայելի Աստվածը, ահավասիկ Ես կուղարկեմ ու կբերեմ բաբելացիների Նաբուգոդոնոսոր արքային՝ Իմ ծառային, որն իր գահը պիտի կանգնեցնի այդ քարերի վրա, որոնք դու թաքցրիր: Դրանց վրա կանգնած՝ նա պիտի կապի իր զենքերը, պիտի գա ու հարված հասցնի Եգիպտացիների երկրին... Նրանց աստվածների տան մեջ կրակ պիտի գցի... Պիտի խորտակի Եգիպտացիների երկրում գտնվող Արեգ քաղաքի սյուները և նրանց աստվածների մեհյաններն այրի հրով» (Երեմ. 43. 9–13): Այս մարգարեությունը կկատարվի Ք. ա. 568/567 թ., երբ Նաբուգոդոնոսորը Եգիպտոս կներխուժի (Ամասիս II– ի կամ Ամոսիսի, կամ Ահմոսիսի օրոք):

Տափնաս քաղաքի տեղն այսօր Թելլ–Դեֆենահ է կոչվում: Այս վայրը 1883–1886 թթ. պեղել է անգլիացի հնագետ սըր Ֆլինդերս Պետրին, ով 1886 թ. Սուեզի ջրանցքից արևմուտք՝ 18 կմ հեռավորության վրա գտավ փարավոնի ապարանքի մուտքի սալիկաշեն հատակը: Պրոֆեսոր Ա. Ռենդլ Շորտը գրում է. «Հյուսիս–արևմտյան կողմում մեծ բացօթյա բակ կար՝ աղյուսով պատված... դռան մոտի տարածքը պատված էր ամուր շաղախով, որի վրա փռված էր աղյուսների շարքը... Այս գավիթը, անկասկած, հենց այն նա-

խաղուռն է, որը, ինչպես ասում է Երեմիան, փարավոնի ապարանքի մուտքի մոտ էր՝ դրսից, որտեղ էլ Նաբուգոդոնոսորն իր բարձրադիր աթոռը (գահը) կանգնեցրեց: Դա զարմանալի է»: Հավաստի է նաև հետևյալը. «Տափնաս քաղաքում Նաբուգոդոնոսորի իրական ներկայության ապացույց են ծառայում երեք թրծակավե գլաններ, որոնք Կահիրեի թանգարանը մի քանի տարի առաջ ձեռք էր բերել մի տեղաբնիկից (ով հավանաբար այս վայրերում էլ գտել էր դրանք): Դրանք Բաբելոնում Նաբուգոդոնոսորի կողմից կառուցած շինությունների մասին վավերագրեր են: Հնարավոր է, որ այդ գլանները գտնվելիս են եղել ներկայումս ավերված գավթի տակ՝ իբրև մեծ թագավոր Նաբուգոդոնոսորի այցելության հուշ[1]:

Երեմիա մարգարեն: Հռոմի ս. Կղեմես բազիլիկայի խճանկարը:

XIX դ. վերջում և XX դ. սկզբում Նեղոսի առաջին շեմի մոտ՝ Կահիրեից մոտ 1080 կմ դեպի հարավ ընկած Էլեփանտին կղզում, շատ կարևոր հայտնագործություն կատարվեց: 1895 թ. տեղացիներն այդ կղզում հինավուրց պապիրուսներ գտան, իսկ 1904 թ. Եգիպտոսի հնագիտական ծառայությունը պեղեց վայրը և բազմաթիվ այդպիսի պապիրուսներ հայտնաբերեց: Սրանց

1 **Short A. R.** Op. cit. P. 42-43. Barton G. A. Op. cit. P. 28.

մեջ կային հրեա բնակչության կողմից արամերեն լեզվով գրված վավերագրեր, որոնք թվագրվում են Ք. ա. 500–400 թվականներով[1]: Դրանցից մեկը Ք. ա. 407/408 թթ. գրված նամակ էր՝ հասցեագրված Երուսաղեմի պարսիկ կառավարչին: Այն Էլեփանտին կղզում տաճար կառուցելու խնդրանք էր բովանդակում: Մենք վստահ չենք, թե այս եբրայեցիները Հովնանեի և Երեմիայի հետ Եգիպտոս գաղթած հրեաների սերունդներն են, բայց կարող են նաև լինել: Համենայն դեպս հնագետ Օլբրայթը հավատում է, որ Էլեփանտինի բնագրերը պատկանում են հրեաներին, ովքեր, շատ հնարավոր է, որ Երեմիայի գրքում (41–44 գլուխներ) նկարագրված եգիպտական գաղթի հետ աղերսներ ունենան*:

ՆԱԲՈՒՔՈԴՈՆՈՍՈՐՆ ՈՒ ՆՐԱ ԳԱՀԱԺԱՌԱՆԳՆԵՐԸ

Ըստ Աստվածաշունչ Մատյանի Դանիել մարգարեի սրբազան գրքի՝ երբ Նաբուգոդոնոսորը հպարտացավ և իրեն աստված համարեց, Աստծո թույլտվությամբ պատուհասվեց սարսափելի հոգեկան հիվանդությամբ. «Նա հալածվեց ու վտարվեց մարդկանց միջից, ինչպես արջառ, նա խոտ էր ուտում և նրա մարմինը թրջվեց երկնքի ցողից, մինչև որ նրա մազերը երկարեցին առյուծի մազերի չափ, և նրա եղունգները՝ թռչունների մագիլների պես» (Դան. 4. 30): Նաբուգոդոնոսորի այս պատուհասի* մասին

1 Տես **Price I. M.** The Monuments and the Old Testament…P. 388,389.

2 Երեմիա մարգարեն նույնպես կանխասում է Բաբելոնի կործանումը. «Դրոշ բարձրացրեք երկրի վրա, փոշի հնչեցրեք բոլոր ազգերի մեջ, զորագնդեր կանչեցեք նրա դեմ: Իմ կողմից հրաման տվեք Այրարատյան թագավորություններին և ասքանազյան գնդին» (51.27):

Մարերի, սկյութների ու հայերի մասնակցության իրողությունը փաստված է հայ մեծանուն պատմիչների՝ Փ. Բյուզանդի, Սեբեոսի և Մ. Խորենացու կողմից:

* Լիկանտրոպիա կոչվող այս տարօրինակ հոգեկան հիվանդությունը, որի ընթացքում մարդ ոչ միայն կորցնում է բանականությունը, այլև կենդանակերպ է դառնում, հայտնի է հին ժամանակներից (Հերոդոտոս և այլք): Այսպես էր նաև Տրդատ թագավորի պարագայում, ինչպես հայտնում է Ագաթանգեղոսը. «Անմիջապես սկսեց մոլեգնել ու ինքն իրեն ուտել և բաբելացիների Նաբուգոդոնոսոր արքայի նման մարդկային բնույթից դուրս գալով՝ վայրենի խոզերի կերպարանքով, իբրև նրանցից մեկը, գնաց նրանց մեջ բնակվելու: Այնուհետև մտնելով եղեգնուտը՝ խոտաճարակ դարձավ…» (Պատմություն հայոց, Երևան 1977, էջ 211):

ոչ սուրբգրային աղբյուրները լռություն են պահպանում: Սակայն ուշագրավ է հետևյալ հանգամանքը: Նրա գահակալության վերջին շրջանը հնագիտությանը[1] ցայսօր հայտնի որևիցե բնագրում չի հիշատակվում: Արդյոք սա չի՞ նշանակում, որ բաբելացի տիրակալները լռություն էին պահպանում և ջանում այս հարցի շուրջ չծավալվել: Բացի այդ, ապաքինվելուց հետո Նաբուգոդոնոսորը կրկին կարողացավ կառավարել պետությունը, և ինչպես ինքն է ասում. «իմ մեծությունն ավելացավ առավել ևս» (Դան. 4. 33): Հետևաբար, եթե այդ մասին ինչ–որ բան էլ գրված լիներ, ապա թագավորն ու նրա գահաժառանգները կձգտեին ոչնչացնել:

Նաբուգոդոնոսորը կնքեց իր մահկանացուն Ք. ա. 562 թ.–ին՝ մոտ ութսուն տարեկան հասակում՝ 45–46 (ոմանք նշում են 42, մյուսները՝ 40) տարի գահակալելուց հետո: Գահին նստեց նրա որդի Եվիլմարոդաքը: Ըստ Սուրբ Գրքի՝ Բաբելոնի այս նոր արքան բանտից հանեց Հովաքիմին (Հեքոնիային), պատիվների արժանացրեց և արքայական սեղանից հանապազօրյա ապրուստի միջոցներ սահմանեց նրա համար (Դ Թագ. 25. 27–30): Նախորդ գլխում բաբելացիներից գերված Հեքոնիայի կյանքի մասին խոսելիս՝ հիշատակեցինք, որ հնագետները Բաբելոնում կավե սալիկներ են հայտնաբերել՝ վրան բանվորներին ու գերիներին հացի, ձեթի, գարու և այլ սննդամթերքի ամենօրյա տվչության մասին գրություններով: Սնունդ ստացողների անունների մեջ Հուդայի արքա Հովաքիմի անունն էլ է հոլովվում[2]:

Հնագիտությունը տեղեկություններ է տալիս նաև Նաբուգոդոնոսորի որդի և գահաժառանգ Եվիլմարոդաքի (բաբելերեն հնչում է Ամիլ–Մարդուք) մասին: Սուզում (Պարսկաստան) ֆրանսիական հնագիտական արշավախմբի[3] կողմից հայտնաբերված մի անոթի վրա այսպիսի մակագրություն կա. «Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի որդի, Բաբելոնի թագավոր Ամիլ–Մարդուքի ապարանք»: Հնագետ Բարտոնի կարծիքով, հավանաբար,

1 **Short A. R.** Op. cit. P. 43.
2 Տես «Հեքոնիա արքան աքսորում» գլուխը:
3 **Morgan,** de. Délégation en Perse. Vol. XIV. P. 60. Տես **Barton G. A.** Archaeology and the Bible. P. 479.

պարսիկներն այս անոթը Բաբելոնից են բերել Միջագետքի վրա կատարած իրենց ասպատակություններից մեկի ժամանակ[1]:

Եվիլմարոդաքը երկու (կամ երեք) տարի (Ք. ա. 562–560 թթ.) թագավորելուց հետո սպանվում է իր աներորդու կողմից: Նրանից հետո ևս երկու հոգի գահակալում են, ապա գահին Նաբոնիդն (Ք. ա. 556–539 թթ.) է նստում: Նրան հաջողվեց զորացնել բաբելոնյան կայսրությունը և վերաշինել ամրաշինական կառույցները Եփրատի վրա: Այս արքան առանձնակի խանդավառությամբ էր վերականգնում ավերված մեհյանները:

Ոչ սուրբգրային աղբյուրների համաձայն՝ նորբաբելոնյան թագավորության վերջին թագավորը Նաբոնիդն է եղել, այնինչ Դանիել մարգարեի համաձայն՝ վերջին արքան Բաղդասարն էր (Դան. 5): Այս հակասությունը սկեպտիկներին Սուրբ Գրքի պատմական ստուգությունը կասկածի տակ առնելու պատեհություն էր ընձեռում: Բայց հնագիտությունն այս անգամ էլ վերջին տարիների պեղածոների շնորհիվ հարթեց այս կնճռոտ հարցն ու տվեց այս անհամաձայնության բացատրությունը:

ԴԱՆԻԵԼ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸ

Դանիել մարգարեի գիրքը երկար ժամանակ սուր քննադատության էր ենթարկվում: Գրքի պատմական արժանահավատությունը հերքելու համար ռացիոնալիստները ծավալուն հատորներ էին հորինում: Ներկայումս, սակայն, հնագիտական պեղումների շնորհիվ ոչ ոք չի ժխտում այս բնագրի պատմականությունը: Հնագետների իրեղեն ապացույցները, արդարև, ցնցող են:

1899 թ.–ից մինչև 1917 թ. հին Բաբելոնում անցկացված պեղումների շնորհիվ հնագիտության պրոֆեսոր գերմանացի Ռոբերտ Կոլդվեյի ղեկավարած գերմանական հնագիտական արշավախումբը բազում կասկածներ փարատեց և վավերացրեց սրբազան բնագրի տեղեկություն:

1 **Barton G. A.** Op. cit. Մեջբերումն ըստ **Free J. P.** Op. cit. P. 232.

Դանիել մարգարեն առյուծների գբում: Սուրբ Ղուկաս Էլլադացու վանքի խճանկար: Հունաստան XI դ.:

1) Դանիել մարգարեն այն հրեաների մեջ էր, որոնց Նաբուգոդոնոսորը, Ք. ա. 605 թ. Պաղեստին ներխուժելով, գերեվարեց Բաբելոն: Նրա գրքում վառ նկարագրվում է Նաբուգոդոնոսորի լայնածավալ շինարարական գործունեությունը: Գրքում պատմվում է, թե ինչպես մի անգամ արքունիքում ճեմելիս՝ Նաբուգոդոնոսորը պարծենկոտաբար ասում է. «Սա այն Բաբելոնը չէ՞, որ ես կառուցեցի՝ որպես թագավորություն, իմ կամքով ու զորությամբ՝ ի պատիվ իմ փառքի» (Դան. 4. 26–27)

Այսօր հնագիտությունն ապացուցում է այս խոսքերի ճշմարտացիությունը: Գերմանացի հետազոտողներն ամրաշինական կառույցների, բնակելի շենքերի, ջրանցքների, պալատների ու մեհյանների մի վիթխարի համալիր բացեցին[1]: Այսօր արդեն կարող ենք տեսնել քաղաքի զարմանահրաշ ավերակակույտը, այդ

1 Մանրամասները տես **Koldwey R.,** The Excavations at Babyon, աշխատությունում, 1914:

թվում՝ նաև արքունիքը: Երբեմնի շքեղությամբ, վեհությամբ ու փառքով առլեցուն այս քաղաք են տանում Իշտար դիցուհու մեծ կրկնակի դարպասները: Այս դարպասները, որ պաշտպանական կառույցների մաս էին կազմում, զարմացնում են իրենց մեծությամբ ու գեղեցկությամբ՝ ծաղիկների, նախշերի ու բնական մեծությամբ զանազան կենդանիների (ցուլեր, առյուծներ և վիշապներ) պատկերներ ունեցող գույնզգույն պսպղուն հախճասալերով զարդարված: Սալահատակված ճանապարհը՝ հանդիսավոր երթերի փողոցը, այցելուին ուղիղ քաղաքի գլխավոր մաս էր տանում: Աջից նա նույնպիսի հախճասալերով զարդարված պալատների շրջանն էր տեսնում: Ոսկով ու երկնակապույտ սալիկներով պատված հոյակապ սրահը գահադահլիճն էր:

Կողքին մի շատ հետաքրքրական կառույց կա. ոմանց կարծիքով, Բաբելոնի հռչակավոր «կախովի այգիների»՝ յոթ հրաշալիքներից մեկի մնացորդներն են: Այնուհետև փողոցի աջ կողմում հեթանոսական տաճարների ու քրմերի կացարանների, ինչպես նաև Մարդուկ աստծո մեհյանի (450x550) շրջանն է: Այստեղ մի վիթխարի զիկկուրատ (189 մ բարձրությամբ)՝ տաճար–աշտարակ կա, որի նկարագրությունն իր «Պատմության» մեջ տվել է Հերոդոտոսը: Քաղաքը շուրջանակի բարձր պարիսպների մեջ էր առնված, որոնք Բաբելոնը դարձնում էին անառիկ: Հիրավի, այն փառահեղ քաղաք էր, այնպես որ Նաբուգոդոնոսորն իրավացիորեն կարող էր հիանալ իր գործերով:

Այս մասին վկայում են նաև քարերի, աղյուսների և սալիկների վրայի հարյուրավոր մեծ արձանագրություններն ու պատկերները: Դրանցից շատերի բովանդակությունը հաստատում է այն, ինչով պարծենում և հպարտանում էր Նաբուգոդոնոսորը[1]:

Բաբելոնն ավելի մեծ էր, քան եգիպտական Թեբեն ու Մեմփիսը, միջագետքյան Ուրը և մինչև իսկ՝ Նինվեն: Այն, ինչ Բաբելոնում արեց անխոնջ շինարար Նաբուգոդոնոսորը, դեռ ոչ ոք մինչ այդ չէր արել: Ահռելի շքեղ շենքեր վեր խոյացնելու համար Նաբուգոդոնոսորը նվաճված երկրներից քշված վիթխարի թվով

1 **Lane W. H.** Babylonian Problems. L.,1923. P. 178,179,181,187. Մեջբերումս ըստ **Thompson J. A.** The Bible and Archaeology. P. 160-161.

ստրուկներ էր օգտագործում: Այդ եղելությունների արձագանքն Ամբակում մարգարեի հանդիմանությունների մեջ է լսվում. «Վա՛յ նրան, ով իր տան համար ագահություն կանի, իր բույնը բարձր տեղ կդնի չար ձեռքերից ազատվելու համար: Քո տան ամոթը հաստատեցիր, ոչնչացրիր բազում ազգերի և դու հանցանք գործեցիր. քանի որ քարը հիմքից կաղաղակի, և որդը փայտի միջից այդ մասին ձայն կտա: Վա՛յ նրան, ով քաղաքը արյան վրա է կառուցում և քաղաք է հաստատում անիրավությամբ: Այդ բոլորը Ամենակալ Տիրոջ կողմից չի՞ լինում. շատ ժողովուրդներ պակասեցին կրակի պատճառով, և շատ ազգեր նվազեցին» (Ամբակ. 2. 9–13):

Ի հակադրություն Նաբուգոդոնոսորի ճոռոմաբան արձանագրությունների՝ Բաբելոնի առաջ հիացմունքով ու սարսափով լի Եսայի մարգարեի ձայնն է հնչում. «Եվ Բաբելոնը, որ քաղդեացի թագավորից փառապանծ է կոչվում, պիտի դառնա այնպես, ինչպես Սոդոմն ու Գոմորը, որոնց Աստված կործանեց: Այնտեղ հավիտյանս հավիտենից բնակվող չպիտի լինի, բազմաթիվ ցեղեր այլևս այնտեղ մուտք չպիտի գործեն, արաբացիներն այլևս այնտեղով չպիտի անցնեն, հովիվներն այնտեղ այլևս հանգիստ չպիտի առնեն: Այնտեղ կայան են գտնելու վայրի գազանները, նրանց տները լցվելու են աղաղակով, այնտեղ բուն են դնելու համբարուները, դևերն են կաքավելու այնտեղ, հուշկապարիկներն են բնակվելու նրա մեջ, ոգնիներն են ձագ հանելու նրա ապարանքներում» (Եսայի 13. 19–22): Բաբելոնի կործանումը Սոդոմի և Գոմորի պես հանկարծական և անսպասելի չէր, այլ հետզհետե ու քայլ առ քայլ: Համենայն դեպս հռոմեացի կայսր Ադրիանոսի (Ք. հ. 76–138 թթ.) օրոք մեծաշուք Բաբելոնից միայն պարիսպներն էին մնացել: Պավսանիաս (Ք. հ. II դար) ճանապարհորդը գրում է, որ իր ժամանակ այդտեղ պարիսպներից զատ ոչինչ չկար: Բենիամին բար Իոնան իր «Ուղեցույցում» գրում է. «Բաբելոնը, որը նախկինում 30 մղոն լայնություն ուներ, այժմ դատարկ է: Սակայն հիմա էլ են աչքի զարնում Նաբուգոդոնոսորի պալատի ավերակները,

սակայն մարդկանց որդիները չեն համարձակվում քաղաք մտնել, քանզի վախենում են այնտեղ վխտող օձերից ու կարիճներից»[1]:

Այնպես որ Նաբուգոդոնոսորի ձեռամբ կառուցված պսպղուն, վեհաշուք, հարուստ և բազմաբնակ այս քաղաքը՝ ողջ Արևելքի զարմանքի առարկան, իր մեծ կուռքերի 53 մեհյաններով, Մարդուկի 55 աղոթատեղիներով, այլ աստվածների 900 աղոթատեղիներով ու 372 բագիններով տակավ առ տակավ վերածվեց լքված ընդարձակ գերեզմանոցի: «Եվ նույնիսկ ինքը Եփրատը, որի ջրերում ինչ–որ ժամանակ արտացոլվում էին նրա փառահեղ պարիսպները, իր համար նոր հուն գտավ: Այժմ փյունիկյան արմավենիների շարքը հեռվից նրա հոսքի նոր ուղղությունն է մատնանշում»[2]:

Այսպես հնագիտությունը հաստատեց Բաբելոնի մեծավայելչության վերաբերյալ Դանիելի գրքի իսկությունը:

2) Գերմանացի հնագետ Ռ. Կոլդվեյը հին Բաբելոնում իր նշանավոր պեղումներից Նաբուգոդոնոսորի պալատի ավերակներում մեծ հոյակերտ խնջույքասրահ (16,8x51,9 մ) հայտնաբերեց՝ ոսկեգույն ու երկնագույն սալիկներով զարդարված, գլխավոր մուտքից արքայական գահ տանող որմնախորշով: Կողերի և Հաուի կարծիքով սա, անկասկած, այն տեղն է, ուր Բաղդասար թագավորի հենց այն խնջույքն է եղել, որի մասին հայտնում է Դանիել մարգարեն (գլուխ 5)[3]:

3) Դանիելը, երեք պատանիների մասին խոսելիս, որոնց Նաբուգոդոնոսորը հրամայեց հնոցը նետել, Նաբուգոդոնոսորի նվագախմբի որոշ հունական նվագարանների անուններ է տալիս (փող, սրինգ, քնար, Դան. 3. 5.): Այս կապակցությամբ ռացիոնալիստները պնդում են, որ Դանիելի գիրքը գրվել է Ք. ա. 332 թվից հետո և ոչ թե Ք. ա. 600 և 535 թվերի միջև, ինչպես ավանդաբար ընդունվում է: Սակայն նրանք իրավացի չեն, քանի որ Ալեքսանդր Մակեդոնացու դարաշրջանից էլ շատ առաջ Արևելքի ժողովուրդների և հույն–իոնացիների միջև առևտրական և մշակութային կա-

1 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὸν προφήτην Ἡσαΐαν. Σ. 180.
2 **Keller W.** Ἡ Βίβλος…Σ. 408.
3 **Coder S. M., Howe G. F.** The Bible, Sciene and Greation. P. 98. Նաև **Thompson J. A.** Op. cit. P. 159.

պեր են գոյություն ունեցել: «Հույն բանաստեղծ Ալկայոսն (Ք. ա. VII դ. վերջ) ասում է, որ իր եղբայրը Նաբուգոդոնոսորի նշանավոր բանակի զինվոր է եղել»[1]: Ավելին, «այն փաստը, որ (Դանիել մարգարեն) միայն երեք հունական բառ է գործածել, լավագույն ապացույցն է այն բանի, որ սույն գիրքն Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից առաջ է գրվել»[2]:

4) Ռացիոնալիստները երկար տարիներ շարունակ մեծ աղմուկ են բարձրացնում՝ փորձելով ապացուցել, որ Դանիել մարգարեի աստվածաշունչ գիրքը երկու բաբելացի արքաների՝ Նաբոնիդի և Բաղդասարի առնչությամբ պատմական առումով հավաստի չէ: Ըստ մարգարեի՝ Բաղդասար թագավորն սպանվում է ամբարիշտ խնջույքի ժամանակ, որը նա կազմակերպել էր Կյուրոսի զորքերի կողմից Բաբելոնը գրավելուց մեկ օր առաջ (5. 30): Մինչ 1880 թ. այդ շրջանի մասին ինչ–ինչ տեղեկություններ հաղորդող միակ ոչ սուրբգրային սկզբնաղբյուրները Քսենոփոնն ու Հերոդոտոսն էին, սակայն նրանց գրվածքներում չի հիշատակվում Բաղդասարի անունը: Այս ոչ սուրբգրային աղբյուրները, ինչպես և հին պատմիչները՝ Բերոսոսն (Ք. ա. մոտ 250 թ.) ու Ալեքսանդր Պոլիգոստորոսը (մահացել է Ք. ա. 75 թ.), Նաբոնիդին են համարում Բաբելոնի վերջին թագավոր: Նրանք հավելում են, որ նա Բաբելոնում է եղել Կյուրոսի գրավման ժամանակ, բայց չի սպանվել, այլ գերի է տարվել ու արքային վայել վերաբերմունքի արժանացել: «Այսպիսով,– ասում են ռացիոնալիստները,– տվյալ դեպքում Հին Կտակարանի պատմական անհավաստիությունն ակնհայտ է, Դանիելի պատումն առասպել է»:

Սակայն նրանց կարծիքները հերքվելով հերքվեցին, երբ Նինվեն հետազոտող ամենաշնորհալի ասուրագետներից մեկը՝ Հենրի Կրեսուիկ Ռոուլինսոնը, Եփրատի դաշտավայրում արձանագրություն պարունակող գլան գտավ: Այս գտածոն լիովին լուծեց խնդիրը: Ըստ այս արձանագրության՝ Դանիելի ժամանակներում Բաբելոնում երկու թագավոր է եղել՝ հայր և որդի: Քա-

1 **Γιαννακόπουλος Ἰωηλ**. Ἡ Παλαιὰ Διαθήκη κατὰ τοὺς Ο΄, Τ. 21. Ὁ Προφήτης Δανιήλ. Ἀθῆναι ,1962. Σ51.
2 **Dye D. L.** Faith and the Physical World: A Comprehensive View. The Paternoster Press,1966. P. 114,116.



Բաբելոնը Ք. ա. 600թ. :
Առջևի պլանում՝ Իշտարի դարպասներն
ու հանդիսավոր երթի փողոցը:



Առյուծ: Բաբելոնի Իշտարի
դարպասի հատված: Բեռլին,
Պերգամոն-թանգարան:

Վիշապ: Բաբելոնի Իշտարի
դարպասի հատված:

Ցուլ: Բաբելոնի Իշտարի
դարպասի հատված:

ղաքից դուրս գտնվելով՝ Նաբոնիդը իր ավագ որդուն՝ Բաղդասարին, թագավորակից է հռչակում և արտոնում նրան արքայական տիտղոսից օգտվել: Բաբելոնում հենց Բաղդասարն է սպանվում, իսկ Նաբոնիդը փրկվում է. նրան կյանք են պարգևում: Այսպես պարզաբանվում է նաև Դանիելի խոսքն այն մասին, որ ինքը հռչակվեց լինելու «թագավորության երրորդ մարդը» (Դան. 5. 7, 29)[1]:

Հնագիտության պրոֆեսորներ Ջոզեֆ Ֆրիի և Թոմպսոնի համաձայն՝ Նաբուգոդոնոսորի մահից հետո երեք թույլ տիրակալներ գահակալեցին՝ նրա որդի Ամիլ–Մարդուկը (Ք. ա. 562–560 թթ.), ում Երեմիան Ուլմարոդաք է անվանում, իսկ Դ Թագավորությունների գիրքը՝ Եվիլմարոդաք (Երեմ. 52. 31, Դ Թագ. 25. 27 ըստ հուն. բնագրի, իսկ ըստ եբրայական բնագրի՝ Եվիլմերոդաք), ապա Ներգեղ Սարասարը* (Երեմ. 39. 3 Ներգալ–Շարեցեր՝ ըստ եբր. բնա-

1 **Coder S. M., Howe G. F.** Op. cit. P. 99.

* Աստվածաշնչի արևելահայերեն բնագրում վրիպակ կա. Ներգեղ Սարասարը, ի տար-

գրի), այնուհետև Լաբասի – Մարդուկը: Ինն ամիս թագավորելուց հետո նա մի խումբ քրմերի ձեռամբ, ովքեր Նաբոնիդին թագավոր կարգեցին, գահընկեց արվեց: Հենց նա էլ Բաբելոնի վերջին թագավորն էր (Ք. ա. 556/555 – 539/538 թթ.): Եվիլմարոդաքի, Ներգեղ Սարասարի և Լաբասի – Մարդուկի անունները ներկայումս հայտնի են հնագիտական պեղածոներից և սալիկների մակագրություններից[1]: Հուդայի արքա Հովաքիմին ազատություն շնորհած Եվիլմարոդաքի մասին նախորդ գլխում արդեն խոսել ենք[2]:

Մեր ուշադրությունը սևեռենք Նաբոնիդի՝ Բաբելոնի վերջին արքայի վրա: Ամենից շատ հենց նա է մեզ հետաքրքրում, քանզի ռացիոնալիստները նրա անձի շուրջ եղած կասկածների հիման վրա են ժխտում Դանիելի գրքի պատմականությունը:

Բաբելոնի վերջին տիրակալ Նաբոնիդը (հավանաբար Հերոդոտոսի Լաբյունետոս II–ը) ուսյալ այր էր և «աշխարհի առաջին հնագետը: Նա հրամայում է պեղել բագինների և մեհյանների ավերակները, վերծանել և թագմանել հին արձանագրությունները: Նա վերականգնեց Ուրի աստիճանաձև աշտարակը, ինչպես այդ մասին հաղորդում են Թելլ–ալ–Մուկղայրիեի պեղածոները»[3]: Հավանաբար նա ասորական ծագում ուներ և այդ պատճառով ժողովրդի առաջ շնորհ գտնելը նրա համար դյուրին չէր: Ուստի և ջանում էր իր մասին բարի հիշատակ թողնել և հպատակների համակրանքը շահել: Կոստանդնուպոլսի թանգարանում պահվող բազալտե կոթողի վրա այսպիսի արձանագրություն կա. «(Ես՝ Նաբոնիդս) իմ նախորդների՝ Նաբուգոդոնոսորի և Ներգեղ Սարասարի կամքի իրական կատարողն եմ: Ջորքը բացարձակ վստահություն է տածում իմ նկատմամբ, և ես չեմ կարող անխոհեմաբար վերաբերվել նրանց պատգամներին (...): Լաբասի–Մարդուկը դեռահաս (պատանի) է. դեռ կառավարել չսովորած, հակառակ աստվածների կամքի՝ գահին նստեց»[4]: Այնուհետև բնագրում հաջորդում է մի պատմություն, թե ինչպես մի անգամ

բերություն գրաբարյան բնագրի, ներկայացված է իբրև երկու առանձին անուն:

1 **Thompson J. A.** Op. cit. P. 166.

2 Տես «Հեքոնիա արքան աքսորում» գլուխը:

3 **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 417.

4 Տես **Pritchard J. B.** Ancient Near Eastern Texts. Prnceton, 1955. Vol. II. P. 309.

Մարդուկ աստծո հրամանով Նաբոնիդին երազում հայտնվում է Նաբուգոդոնոսորը և տարօրինակ երկնային նշաններ մեկնում, որոնք Նաբոնիդի գահակալությանն արևշատություն էին գուշակում, ինչպես նաև՝ այլ աստվածների կողմից իրեն ուղարկված բարենպաստ և բարի նախանշաններ: Սրանից հետևում է, որ գահին արյունահեղությամբ տիրացած արքան ցանկանում էր ժողովրդին ցույց տալ, որ դրա թույլտվությունը նա ստացել է ինչպես իրենից՝ Մարդուկ աստծուց, այնպես էլ անձամբ Նաբուգոդոնոսորից[1]: 1956 թ. Խառանում բացվեցին երեք քարակոթողներ (յուրաքանչյուրը 3 մ բարձրությամբ և 2 մ լայնությամբ), որոնք հանգամանալից տեղեկություններ էին բովանդակում Նաբոնիդի մոր (նա Լուսնի դիցուհու մեհյանի քրմուհին էր) գործունեության մասին[2]:

Քրմերի բարեհաճությունը շահելու նպատակով նա ձեռնամուխ եղավ իր թագավորության մեհյանների վերակառուցմանը: Սակայն շուտով նա նրանց դժգոհությունն առաջացրեց, ինչը և իր անկման պատճառը հանդիսացավ: Արդեն մեկ տարի գահակալելուց հետո հարկադրված էր ճնշել թագավորության արևմուտքում ծագած ապստամբությունը: Նա մոտեցավ Համատին, շարժվեց Եդոմից հարավ, հասնելով Թեյմա օազիսին՝ կանգ առավ: Սակայն դա ճակատագրական սխալ էր, քանզի թագավորը Նոր տարվա նախօրեին, երբ հատուկ կրոնական երթեր էին կազմակերպվում, պետք է Բաբելոնում գտնվեր: Նրա բացակայությունը քրմերի մեծամասնության վրդովմունքն առաջացրեց: Միևնույն ժամանակ ինքը՝ Նաբոնիդը, իրական իշխանությունը Բաբելոնում հանձնել էր իր որդի Բաղդասարին: Մեպագիր սալիկներից մեկում հաստատվում է այս փաստը[3]: «Նաբոնիդի ժամանակագրությունը», ինչպես ենթադրում են, Կյուրոսի նախաձեռնությամբ ուշ շրջանում գրված կարևոր վավերագիր է, որը հավաստում է, որ իր գահակալության 7–րդ, 9–րդ, 10–րդ և 11–րդ տարիներին «թագավո-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 167.

2 Տես **Pritchard J. B.** The Ancient Near East. Vol. II An Anthology of Texts and Pictures. Princeton Univ. Press,1975. P. 104-112.

3 Տես **Finegan J.** Op. cit. P. 189ff. Մեջբերումս ըստ Thompson J. A. Op. cit. P. 168.

որը գտնվել է Թեյմա քաղաքում: Արքայի որդին, իշխանները և զորքը Աքքադում էին...»[1]: Այդ նույն բնագրում հաստատակամորեն և բազմիցս նշվում է, որ «արքան Բաբելոն չեկավ նիսան ամսվա (այսինքն՝ Ամանորի) տոնակատարությանը մասնակցելու»:

Այսպես, քանի որ Բաբելոնում հենց Բաղդասարն էր ռեգենտը (հնարավոր է, որ դա շարունակվել է մինչև Բաբելոնի անկումը), ուրեմն Դանիելը միանգամայն իրավացի է, երբ Բաղդասարին ներկայացնում է իբրև Բաբելոնի վերջին արքա (Դան. 5. 30): Հետևաբար, Դանիելը, ում շատ հարգում ու գնահատում էին, «թագավորության երրորդ մարդը» պետք է լիներ (Դան. 5. 29), իսկ քանի որ Բաղդասարը ժառանգորդն էր, հետևաբար և երկրորդ մարդը Բաբելոնում, ապա միայն երրորդ տեղը կարող ենք Դանիելին տալ: Սուրբ Գրքի տեղեկություններն այս դեպքում էլ ստույգ են: Հարկ է նշել, որ արամերեն «երրորդ» բառն ի սկզբանե տառացի նշանակություն է ունեցել, ապա ընդհանուր իմաստ ձեռք բերելով՝ սկսել է նշանակել պետության ականավոր բարձրաստիճան այր: Այն, որ Դանիելի գրքի հինգերորդ գլխի 18–րդ համարում Նաբուգոդոնոսորը Բաղդասարի «հայր» է կոչվում, նշանակում է, որ «հայր» բառը ընտանեկան հարազատությունից ավելի լայն իմաստ ունի: Ինչպես արդեն վերը նշել ենք, դա կարող է նշանակել, որ Նաբոնիդն (Բաղդասարի հայրը) իրեն Նաբուգոդոնոսորի օրինավոր ժառանգն ու հաջորդն էր համարում[2]:

Այս փաստերից զատ, որոնք վավերացնում են, որ Բաղդասարը Բաբելոնի վերջին տիրակալն է եղել և սպանվել, երբ քաղաքն ընկել է մարերի ու պարսիկների ձեռքը, ինչպես պատմում է Դանիել մարգարեն (5. 30), այլ ապացույցներ էլ գոյություն ունեն:

XIX դ. կեսերին հին Բաբելոնի շրջանում վիթխարի քանակությամբ կավե սալիկներ երևան հանվեցին: Այժմ դրանք Բրիտանական թանգարանի սեփականությունն են: XIX դ. վերջում նշանավոր լոնդոնաբնակ ասուրագետ դոկտոր Թեոֆիլ Գ. Ֆինչեսը վերծանեց դրանք: Այդ սալիկներից մեկում հիշատակվում

1 **Pritchard J. B.** Ancient Near Eastern Texts…1955. P. 305.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 168.

է Բաղդասարի անունը, ինչն ապացուցում է, որ այդպիսի մարդ իրականում գոյություն է ունեցել և հերքում այդ անձի առասպելականությունը հաստատող ռացիոնալիստների կարծիքները: Մեկ այլ սալիկում Բաղդասարի և Նաբոնիդի անունները կան, ինչը, հետևաբար, նշանակում է, որ նրանց միջև աղերսներ գոյություն ունեն, իսկ երրորդը հաղորդում է, որ Բաղդասարն արքայազն էր: Մեկ այլ սալիկի վրա Նաբոնիդի և Բաղդասարի անվամբ երդման բնագիր կա. հին Բաբելոնում սովորաբար թագավորի անվամբ էին երդվում: Այսպիսով այս սալիկը ցույց տվեց, որ իրականում Բաղդասարը իր հոր՝ Նաբոնիդի իշխանակիցն է եղել[1]:

Բացի այդ, խնդրո առարկայի վրա լույս է սփռում Ելյան համալսարանի ասուրագիտության պրոֆեսոր Ռայմոնդ Պ. Դուգերտիի ներկայումս աշխատասիրվող գիրքը: Հեղինակն ապացուցում է, որ իր գահակալության վերջում Նաբոնիդը տևական ժամանակ Արաբիայում է գտնվել: Արաբիայում մնալու ինչ դրդապատճառներով էլ առաջնորդվեր տիրակալը, կավե սալիկները հայտնում են, որ իբրև միապետ՝ Բաբելոնը կառավարել է հենց Բաղդասարը. և դրա պատճառը նրա հոր՝ իր իսկ պետության մայրաքաղաքից բացակայությամբ էր պայմանավորված: Անգլիացի գիտնական Սիդնեյ Սմիթը մի արձանագրություն հրապարակեց, որը, հավանաբար, Նաբոնիդին է վերաբերում: Դրանում ասվում է. «Նա, ում վստահված է թագավորությունը», այսինքն՝ նա (այն է՝ Բաղդասարը), ով թագավորական իշխանություն է ստացել»[2]:

Այս ջախջախիչ ապացույցներից հետո ռացիոնալիստներից ոմանք, օրինակ՝ Միլլար Բարրոուզը, հարկադրված ընդունեցին, որ «այս ակնհայտ անհամաձայնության լուծումը (Բաղդասարի գոյության վերաբերյալ Սուրբ Գրքի և ոչ սուրբգրային պատմական տվյալների միջև – հեղինակի ծնթ.) հնարավոր դարձավ, երբ ապացույցներ գտնվեցին, որ Նաբոնիդն իր կյանքի վերջին տա-

1 Տես **Free J. P.** Op. cit. P. 234

2 **Dougherty R. P.** Nabonidus and Belshazzar. N. Haven: Yale University Press,1929. P. 108. Մեջբերումն ըստ Free J. P. Op. cit. P. 234.

րիներն անց է կացրել Արաբիայում և երկրի կառավարումն իր որդի Բաղդասարին է հանձնել»[1]:

5) Հույն պատմիչների համաձայն՝ այն պահին, երբ պարսիկները հարձակվեցին Բաբելոնի վրա, բնակիչները խրախճանքի մեջ էին: Այս փաստը հաստատվում է նաև Դանիելի գրքի հինգերորդ գլխում: Բացի այդ, ըստ «Բաբելոնյան տարեգրությունների»՝ քաղաքը գրավելուց մի քանի օր առաջ Բաբելոնի շրջակայքում մարտեր էին գնում, իսկ Նաբոնիդը փախուստի է դիմում, երբ Կյուրոսի զորքն առանց մարտերի քաղաք է մտնում, սակայն բռնվում է քաղաք վերադառնալիս[2]: Իսկ Բաղդասարը, ըստ Սուրբ Գրքի, սպանվում է (Դան. 5. 30): Այսպիսով հնագիտության շնորհիվ ապացուցվեց, որ այն, ինչ ասվում է Սուրբ Գրքում Բաղդասարի մասին, միանգամայն հավաստի է[3]:

6) Մենք չենք հերքի Դանիելի գրքի աստվածաշունչ բնագրի ժամանակագրությանը վերաբերող ռացիոնալիստների բոլոր առարկությունները: Այստեղ միայն կշոշափենք հնագետների ընձեռած ապացույցներն այն մասին, որ սույն գիրքը գրվել է Ք. ա. 600 թ.–ից մինչև 535 թիվն ընկած ժամանակահատվածում: Բուն գրքում բազում տեղեր կան, որոնք ժամանակակից հնագիտության լույսի ներքո հավաստում են հեղինակի քաջատեղյակությունը: Հատկապես համոզիչ է հինգերորդ գլուխը, որը ցույց է տալիս հեղինակի քաջածանոթությունն ու այն, որ նա այդ անցքերի ականատեսն է: Բացի այդ, գիտունների, մոգերի և աստղագետների (Դան. 1. 20 2. 10 4. 6 5. 11 և այլն) հիշատակությունը արտացոլում է այն ժամանակվա իրականությունը: Պեղումները բազում նյութեր են ընձեռում, որոնք բնութագրում են բաբելացիների կրոնն ու հաստատում այն մեծ նշանակությունը, որ մարդկանց կյանքում ունեցել են մոգությունն ու բախտագուշակությունը:

1 **Burrows M.** Op. cit. P. 176,277.

2 Տես **Pritchard J. B.** Ancient Near Eastern Texts…1955. P. 306.

3 Նաբոնիդ - Բաղդասարի և Սուրբ Գրքի կատարյալ արժանահավատության խնդրին վերաբերող հանգամանալից վերլուծության և անցքերի ու տվյալների շարադրանքի մասին տես նաև **Short A. R.** Modern Discovery and the Bible. Chicago: Inter-Varsity Press,1955. P. 159-178.

7) Դանիելի գրքի մյուս տարբերակիչ առանձնահատկությունը, որը բնագրի վաղեմության և Ք. ա. 600–535 թթ. արանքում գրված լինելու մասին է վկայում, երազներին տրվող նշանակությունն է: Մենք արդեն խոսել ենք Նաբոնիդի՝ երազում Նաբուգոդոնոսորին տեսնելու հավաստման մասին: Հնուց ի վեր երազները հիշատակվում են Միջագետքի հարազատ գրավոր աղբյուրներում և թագավորների կյանքի ու կարևոր պետական գործերի լուծման անքակտելի մասը կազմում:[1] Բոլոր երազներն իբրև երկնքի ձայն նկատելը, իհարկե, սխալ է: Բայց եթե նույնիսկ որոշ «կանխագուշակ» երազներ այն ժամանակվա տիրակալների կողմից հորինված էլ լինեին, միևնույն է, ժողովուրդը հավատում էր, որ հենց երազների միջոցով են աստվածները հաղորդակցվում մարդկանց հետ: Այս հանգամանքով է բացատրվում, թե ինչու են բաբելոնյան բնագրերում այդքան հաճախ արծարծվում երազները: Սա ևս Դանիելի գրքի հավաստիության ապացույց է[2]:

8) Հնագետ Թոմպսոնը գրում է, որ Դարեհ Մարի անձը, ում մասին խոսվում է Դանիելի գրքում (5. 31 6. 1 28 9. 1), ցայսօր բացարձակապես անհայտ է հնագետներին: Այս Դարեհի մասին Օլբրայտը գրում է. «Դարեհ Մարի հետ կապված թվացյալ խնդիրը, ինչպես միշտ, չափազանց խճճված է, և, իհարկե, չի կարող լուծվել ուղղակի գերքննադատության եղանակով»: «Հավանաբար,– ավելացնում է Թոմպսոնը,– այստեղ մենք տիտղոսի հետ գործ ունենք,[3] այլ ոչ թե կոնկրետ անձի»: Այնուամենայնիվ, Խառանում հայտնաբերված և Ք. ա. 546–ով թվագրվող բնագրերից մեկը վերաբերում է «մարերի թագավորին»:[4] Այս վկայակոչումը խնդիրը տեղափոխում է մեկ այլ հարթություն: Բրիտանական թանգարանի սալիկների գիտական հետազոտությամբ զբաղվող Դ. Վայզմանը ենթադրում է, որ Դարեհ Մար արտահայտությու-

1 Տես նաև **Gordon C.** Introduction to Old Testament Times. Ventor,1953. P. 66ff.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 170.
3 **Tompson J. A.** Op. cit.
4 Այս բնագրերը հրատարակված են Գեդդի (C. J. Gadd) «Anatolian Studies» (VIII) և Պրիթչարդի կողմից (Pritchard J. B.) Ancient Near East Texts. Supplementary Texts. Princeton,1969. P. 560-563.

նը կարող է Կյուրոսի երկրորդ անունը լինել[1]: Իսկ Ա. Ռ. Շորտը գրում է. «Ինչ վերաբերում է Դարեհ Մարին, ապա հնարավոր է, որ դա տիտղոս է, որը Մարաստանի գրավումից հետո (Ք. ա. 550 թ.) ինքն իրեն շնորհել էր Կյուրոսը[2]:

9) Երեք պատանիների մասին պատմությանը, որոնց Նաբուգոդոնոսորը «ոսկյա արձանը» չերկրպագելու պատճառով կրակե հնոցը նետեց, Բաբելոնի արվարձաններում գոյություն ունեցող մեծ հնոցների մասին է վկայում, որոնց մեջ բանվորները թագավորի հոյակերտ շինությունների համար աղյուս էին թրծում: Հնագետները պեղեցին այդ հնոցներից մի քանիսը: Նմանօրինակ մի դեպք էլ հայտնի է այս երկրի ավելի վաղ շրջանի մի թագավորի՝ Ռիմ–Սինի ժամանակներից (Ք. ա. 1750 թ.): Մի անգամ այս թագավորը չորս մարդու կողմից ինչ–որ մեկին կրակը նետելու առիթով հրամայում է. «Քանի որ (նրանք) մի երիտասարդ ստրուկ են հնոցը նետել, այդտեղ գցեք (նրանց) ստրուկներից մեկին»: Եվ չնայած որ այդ հրամանի մասին այլևս ոչինչ չգիտենք, Ե. Գ. Կրաելինգը երեք պատանիների դիպվածի վերաբերյալ հետևյալ դատողությունն է անում. «Հավանաբար նմանօրինակ պրակտիկան նորություն չէր Բաբելոնում»[3]:

Նախքան Դանիելի աստվածաշունչ գրքի պատմական հավաստիության, ըստ մեզ, կարևոր ապացույցների թվարկումն ավարտելը, երկու կարծիք վկայակոչենք՝ մեկն ասուրագետի, մյուսը՝ բնագրագետի: Ասուրագետ դոկտոր Ռ. Պ. Դուգերտին Դանիելի գրքի հինգերորդ գլխի հետ աղերսներ ունեցող բոլոր պատմական բնագրերը (սալիկները) հետազոտելուց և իրար հետ բաղդատելուց հետո եզրակացրեց. «Դանիելի գրքի հինգերորդ գլուխը ստուգության առումով լիովին համադրելի է սեպագիր բնագրերի հետ... Այն կարող է շատ հեշտությամբ մեկնվել»[4]:

---

1 Տես Դ. Վայզմանի հոդվածը (Wiseman D. J.) «Documents from Old Testament Times». L., 1958/Ed. D. Winton Thomas. P. 83; Նաև **Wiseman D. J.,** others. Notes on some Problems in the Book of Daniel. L., 1965. P. 9-18.

2 **Short A. R.** Op. cit. P. 44.

3 **Kraeling E. G.** Bible Atlas. Chicago, 1956. P. 323.

4 **Short A. R.** Ibid.

Բացի այդ դոկտոր Մոնթգոմերին, այն բանից հետո, երբ Դանիելի գրքի մասին «Միջազգային քննական մեկնություններում» բազմաբնույթ հոդվածներ էր հրապարակել, նոր տվյալների լույսի ներքո հարկադրված խոստովանեց. «Հնագիտությունը խթանեց Դանիելի գրքի արժանահավատության պաշտպանության գործընթացը, և (...) նրա տվյալները վկայում են հօգուտ գրքի պատմական ավանդությունների մեծ մասի հավաստիության ընդունման, այլ ոչ թե նրա, ինչն առաջ հնարավոր էր համարում քննադատությունը»: Ավելին, դոկտոր Մոնթգոմերին խոսում է «ականավոր ժամանակակից գիտնականների մասին, ովքեր ավանդական դիրքորոշում ունեն» Դանիելի գրքի աստվածաշունչ բնագրի հանդեպ[1]:

Դանիելի գրքում տեղ գտած անցքերից և հատկապես Նաբոնիդի և Բաղդասարի մահից հետո Արևելքի ժողովուրդների և մասնավորապես Բաբելոնի գերյալ հրեաների համար նոր դարաշրջան բացվեց: Դա հրեաների՝ Պաղեստին վերադառնալու և այնտեղ վերաբնակվելու ժամանակաշրջանն էր:

ԿՅՈՒՐՈՍԻ՝ ՀՐԵԱՆԵՐԻՆ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ

Իսրայելը հավատարիմ չէր Տիրոջը, բայց Աստված երբեք չէր լքում Իր Ժողովրդին: Նա միշտ հիշում էր Իսրայելին, և Նրա բարի նախախնամությունը նախապատրաստում էր Իսրայելի ազատագրումը գերությունից: Եզեկիել մարգարեն խոսում էր վերածննդի մասին և ժողովրդին հայտնում այն տեսիլքները, որոնք նա տեսել էր մարդկանց ոսկորներով լի դաշտում (Եզեկ. 37): Մինչ այդ Երեմիան խոսում էր յոթանասնամյա բաբելական գերությունից հրեության ազատագրման մասին (25. 12):

Նաբուգոդոնոսորի մահը Իսրայելի որդիների համար ճանապարհ բացեց և հնարավորություն ընձեռեց Պաղեստին դառնա-

1 **Short A. R.** Op. cit. P. 44.

լու, քանզի Նաբուգոդոնոսորից հետո գահին տիրացան ապաշնորհ տիրակալներ, հանգամանք, որը և պայմանավորեց երկրի աստիճանական անկումը: Միաժամանակ արևելքում պատմության թատերաբեմ մտավ նոր Մարա–պարսկական կայսրությունը: Այս կայսրության մեջ Կյուրոսն ընդվզեց իր տերերի՝ մարերի դեմ, հաղթեց նրանց և դարձավ բովանդակ Մարաստանի և Պարսկաստանի տիրակալը, իսկ Ք. ա. 539 թ. նա արդեն իբրև Մարա–պարսկական թագավորության գահակալ՝ նվաճեց Բաբելոնը: Այժմ արդեն նրան վիճակված էր գործել իբրև «Տիրոջ հովիվ» և «Տիրոջ օծյալ» (Ես. 44. 28; 45. 1 ըստ եբր. բնագրի): Ամեն ինչ խոսում էր այն մասին, որ Տերը նախապատրաստել է Սիոնի վերադարձը գերությունից (տե՛ս Սաղմ. 125. 1), և որ գերյալներն այլևս չպետք է ապրեին Բաբելոնի գետերի մոտ ու արտասվեին Սիոնը հիշելիս (Սաղմ. 136. 1):

Իհարկե, Կյուրոսը չէր հավատում հրեաների ճշմարիտ Աստծուն: Սակայն ամենազոր Աստված Իր կամքը մեղավոր մարդկանց միջոցով էլ է կատարում: Որ Կյուրոսը մոլեռանդ հեթանոս էր, հաստատվում է նրա կառուցած մեհյաններով, ինչպես որ դա բացահայտվեց Ե. Հենրիխի, Հ. Լենտցենի և այլոց՝ քաղդեական Ուր քաղաքում կատարած պեղումների ժամանակ, որտեղ Կյուրոսը, օրինակ, կառուցել էր Իշտարի մեհյանը[1]: Բացի այդ, հաղթականորեն Բաբելոն մտնելուն պես՝ նա Սինու աստծո համար բագին կառուցեց: Ասենք, որ Կյուրոսն իր կյանքում կանգնեցրած հուշարձաններում իր բոլոր հաջողությունների համար պարտական է Մարդուկ աստծուն[2]: Այնուամենայնիվ, հնագետ Օլբրայթը, մեկնաբանելով Կյուրոսի հրովարտակը, որի մասին խոսվում է Սուրբ Գրքում (Բ Եզր. 1. 1), նկատում է. «Ք. ա. 538 թ. Կյուրոսի հրապարակած հրովարտակի փաստացի պատմականությունը հաստատվեց վերջին հնագիտական հետազոտություններով»[3]:

1 **Vaux, de R. P. R.** Les Decrets de Cyrus et de Darius sur la reconstruction de Temple//Revue Biblique. Jan.,1937. P. 33.
2 **Olmstead A. T.** History of Palestine and Syria. P. 553,555.
3 **Albright W. F.** The Biblical Period. Oxford,1950. P. 49.

Այսպես, հրեաների հանդեպ նրա բարեհաճ վերաբերմունքը նրա ուղիղ կրոնական համոզմունքների ցուցիչը չէ: Պարզապես Կյուրոսն իր գահակալության սկզբում իմաստուն քաղաքականություն էր վարում, որը բոլոր «գերյալ աստվածներին» իրենց տաճարները[1] և բոլոր գերյալ մարդկանց իրենց երկրները վերադարձնելու նպատակ էր հետապնդում: Իր արձանագրություններում նա հայտնում է զանազան ժողովուրդների աստվածներին իրենց տաճարներն ու զոհասեղանները վերադարձնելու մասին: Հնագետների տրամադրության տակ է գտնվում հռչակավոր թրծակավե «Կյուրոսի գլանը», որի վրա ի մասնավորի գրված է. «Ես ժողովեցի բոլոր ժողովուրդներին և բնակեցրի իրենց տներում»[2]: Կյուրոսի գործելակերպը տրամագծորեն հակառակ էր ասորեստանցիների ու բաբելացիների մարտավարությանը. նրանք նվաճված ժողովուրդներին հաստատակամորեն քշում էին իրենց երկրներից և գրավյալ տարածքները վերաբնակեցնում այլ ժողովուրդներով: Իսկ այս գործելակերպով Կյուրոսը շահում էր իր հպատակների սերն ու համակրանքը: Պարսից արքան հպատակ ժողովուրդներից յուրաքանչյուրի համար հրովարտակ էր արձակում, որով արտոնում էր անարգել հայրենիք վերադառնալ: Հրեաներին վերաբերող այսպիսի մի դեկրետի հատված կա Հին Կտակարանում. «Այսպես է ասում Պարսկաստանի Կյուրոս թագավորը. երկնքի Տեր Աստվածը ինձ տվեց երկրի վրա բոլոր թագավորությունները և հրամայեց ինձ, որ ես նրա համար տաճար կառուցեմ Հրեաստանի Երուսաղեմ քաղաքում: Տիրոջ ամբողջ ժողովրդից ով էլ որ կա ձեր մեջ, և ում հետ որ է նրա Աստվածը, թող ելնի ու գնա Հրեաստան՝ Երուսաղեմ, և կառուցի Իսրայելի Տեր Աստծու տունը. թող Աստված ինքը, որ բնակվում է Երուսաղեմում, լինի նրա հետ: Ամեն մարդ իր ունեցվածքը թող վերցնի իր հետ, տանի այն տեղը, ուր պիտի բնակվի ինքը: Ամեն մարդ կարող է վերցնել իր ամբողջ ունեցվածքը՝ լինի արծաթ, թե ոսկի, կայք թե անասուն: Թող իրենց ընկերների հետ նրանք վերցնեն ամեն

1 **Pritchard J. B.** Ancient Near Eastern Texts…P. 316.
2 **Olmstead A. T.** Նաև P. 555. **Pritchard J. B.** Ibid. **Price I. M.** The Monuments and the Old Testament…P. 314.

ինչ՝ Տեր Աստծու տաճարը Երուսաղեմում կառուցելու համար» (Բ Եզր. 1. 2–4): Բացի այդ, հրեաների՝ Պաղեստին վերադառնալու ու Տաճար կառուցելու՝ (հրեաներն արձաններ և կուռքեր չունեին, որը կարելի լիներ ետ տալ) Կյուրոսի հրովարտակների մասին Հին Կտակարանում այլ հատվածներ էլ կան, օրինակ՝ Բ Եզրաս 3. 2–7, 5. 13–16 և 7. 1–5: Թոմպսոնի կարծիքով այս հատվածները հրեաների վերաբերյալ Կյուրոսի՝ բավական ընդարձակ դեկրետից են[1]:

Նախկինում պատմաբաներից ոմանք վիճարկում էին Եզրասի գրքի սույն տեղիները, քանզի Կյուրոսը կռապաշտ էր, և դժվար է պատկերացնել, որ նա կարող էր այսպիսի հրամանագրեր հրապարակած լինել: Սակայն «Նաբոնիդի ժամանակագրության», հռչակավոր «Կյուրոսի գլանի» և Նաբոնիդի այլ բնագրերի հայտնաբերմամբ հարցն իր վերջնական լուծումը գտավ: Այս բնագրերը ցույց տվեցին, որ Կյուրոսը չափազանց խոհեմ թագավոր էր և քարոզչության մեծ վարպետ: Մենք արդեն շոշափել ենք նրա՝ «Նաբոնիդի ժամանակագրությունում» Նաբոնիդի մասին մեջբերումը: Այդ նույն բնագրում հաղորդվում է, որ Կյուրոսը Բաբելոնում ցնծությամբ է ընդունվել ժողովրդի կողմից[2]:

Հարկ է նշել, որ գերյալ ժողովուրդների հանդեպ կարեկցական վերաբերմունքից զատ հրեաներին հայրենիք վերադարձնելու Կյուրոսի վճռի վրա ներգործել են հետևյալ հանգամանքները. 1) հրեա պատմիչ Հովսեպոսը պնդում է, որ ինչ–որ մեկը Կյուրոսին ցույց է տվել Եսայի մարգարեի մարգարեությունը (44 և 45 գլուխների բովանդակությունը)[3], 2) Պաղեստինը հրաշալի առաջավոր ամրակետ էր հարավ–արևմտյան Ասիայի և Եգիպտոսի միջև. այս եղանակով Կյուրոսն այդ շրջանում դաշնակից էր ձեռք բերում, 3) ստրկացած ժողովուրդներին ազատագրելու Կյուրոսի վճիռը վնասազերծում էր իր կայսրության հպատակների մեջ եղած պայթյունավտանգ տարրը: Բացի այդ, քանի որ բոլոր հրեաներին էր առաջարկվում հայրենիք վերադառնալ, Կյուրոսն այսու ցույց էր

1 **Thompson J. A.** Op. cit. P. 177.
2 **Pritchard J. B.** Op. cit. P. 305-306.
3 **Հովսեպոս Փլաբիոս,** Հրեական հնախոսությունը, XI, 1. 1-2.

տալիս, որ ինքը շահագրգռված է հրեա ժողովրդով և հոգ է տանում նրա ազատագրման[1] մասին:

Հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնն այն եզրակացությանն է հանգում, թե վերը նշվածի հիման վրա կարելի է հետևություն անել, որ հնագիտական տվյալները լուսաբանում են Սուրբ Գրքում հիշատակված Կյուրոսի հրովարտակների բնօրինակները, պարզաբանում դրանց բովանդակությունն ու էությունը[2]:

ՎԵՐԱԴԱՐՁ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Կյուրոս թագավորի շնորհիվ է, որ հրեաները Ք. ա. արդեն 538/ 537 թթ. իրենց հայրերի երկիրը դարձան: Թվով շուրջ 50 000 հրեա, որոնցից 42 360–ը՝ ազատ, 7337–ը՝ ծառա և աղախին, 200 սաղմոսերգու կին և տղամարդ: Ընդամենը 49 897 մարդ (Բ Եզր. 2. 64) վերադարձավ՝ Տաճարի ամբողջ կայքով ու սպասքով, որոնց քաղդեացիներն իբրև ավար վերցրել էին Երուսաղեմից, և պարսիկներից ստացած բազում ընծաներով (Բ Եզր. 1. 6–11): Հրեաներին Պաղեստին առաջնորդող իշխանների մեջ երևելի էին Սամանասարն (եբր.՝ Շեշբացար) ու Զորոբաբելը (Բ Եզր. 1. 8, 11; 2. 2): Այս երկու անունների ստուգաբանության երախտիքը նույնպես հնագիտությանն է պատկանում: Հին Բաբելոնի շրջանում պեղված նյութերից պարզվեց, որ այս երկու անուններն էլ բաբելական են[3]:

Սակայն գերության մեջ գտնվող բոլոր հրեաները չէ, որ հայրենիք վերադարձան: Հնամենի Նիպպուրի պեղումներից երևան հանված արձանագրությունները տեղեկացնում են, որ շատ հրեաներ չվերադարձան, համենայն դեպս վերը հիշատակված 50 000–ի հետ[4]:

1 **Vos H. F**. An Introduction to Bible Archaeology. P. 69.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 180.
3 **Albright W. F.** Recent Discoveries in Bible Lands// Young's Analytical Concordance to the Bible. N. Y..: Funk and Wagnalls Co., 20th ed.,1936. P. 36; **Thompson J. A.** Op. cit. P. 186.
4 **Wright G. E.** Biblical Archaeology. L.,1957. P. 205ff.

Վերադարձածներն իրենց հայրենիքը գտան ավերակների մեջ: 1926 թ. Հուդայի քաղաքների ու ամրոցների պեղումները Ք. ա. 587–586 թթ. Նաբուգոդոնոսորի կողմից երկիրը սարսափելի ավերման ենթարկելու ապացույցներ ի հայտ բերեցին: Հնագետ Օլբրայթը նկատում է. «Այժմ ամբողջովին կամ մասնակիորեն պեղված են Հրեաստանի քաղաքների և ամրոցների զգալի մասը: Բազմաթիվ այլ շրջաններ մանրազնին հետազոտվեցին՝ հրեաների վերջին աղետի տարեթիվը ստույգ որոշելու համար: Արդյունքը միշտ անփոփոխ էր, ուստի և արժանահավատ. շատ քաղաքներ կործանվել են Ք. ա. VI դ. սկզբում, այլևս երբեք չեն բնակեցվել, մյուսները ավերվել են այդ նույն ժամանակ, սակայն տարիներ անց վերստին վերաբնակեցվել են, իսկ այլ ավերված քաղաքներ ավելի ուշ շրջանում են վերածնվել՝ ամայացման երկար շրջան ապրելով (...): Չկա մի դեպք, որ որևիցե հրեական քաղաք գերության ողջ ընթացքում բնակեցված լիներ»[1]:

Թեպետ Իսրայելն այդ աստիճան ավերված չէր, այնուամենայնիվ, աքսորյալները վերադառնում էին ամայի ու լքված երկիր, որտեղ իրենց չէին սպասում ո՛չ քաղաքները, ո՛չ տները, ո՛չ էլ վարելահողերը: Իսկ այն, ինչ այս երկիրը, ըստ հնագիտական վկայությունների, կարող էր ներկայացնել, լիովին համընկնում էր Աբրահամի ժամանակների պատկերին:

Փաստացի տարածքները, որոնց վրա ապրում էին հրեաները գերությունից հետո, այնքան էլ մեծ չէին: Դրանց սահմանները կարելի է տեղորոշել Հին Կտակարանի երկու գրքերի՝ Բ Եզրասի (գլուխ 2) և Նեեմիի (գլուխ 7) բովանդակած տեղեկությունների հիման վրա: Այդ շրջանը տարածվում էր Բեթսուրից (Քեբրոնից հյուսիս) մինչև Երուսաղեմի հյուսիսային սահմանները՝ հյուսիսից հարավ 46 կմ ընդհանուր երկայնքով: Հենց այդ տարածքներում էլ 50 000 հրեա բնակվեց[2]: Հենց այսպիսի փոքրիկ, աղքատ ու ամայի շրջան վերադարձան գերությունից ազատված հրեաները, որպեսզի գոյատևեն, աճեն, ընդ որում՝ թշնամաբար տրամադրված հարևաններով շրջապատված: Իսկ եթե վերջիվերջո

1 **Albright W. F.** The Archaeology of Palestine. L.,1956. P. 141ff.
2 Տես **Thompson J. A.** Op. cit. P. 182-183.

գոյատևեցին էլ, ապա շնորհիվ աշխատասիրության և այն զգալի օգնության, որը ցուցաբերում էին նրանց Կյուրոսն ու նրա հաջորդները: Բայց ինչպես ինքը Կյուրոսը, այնպես էլ նրա որդին ու գահաժառանգը՝ Կամբյուսեսը, իսկ վերջինից հետո նաև Դարեհը (նա, ում հույները Ք. ա. 490 թ. Մարաթոնի ճակատամարտում պարտության մատնեցին) ժողովրդի վրա ծանր հարկեր դրեցին, քանի որ իրենց աշխարհակալ կայսրության, ռազմական կարիքների ու իրենց պետությունում շինարարական աշխատանքների հսկայածավալ ծախսերը պետք է ծածկվեին: Այս մասին պատմվում է Նեեմիի գրքում (5. 1–4), ինչը նույնպես հաստատվեց հնագիտական պեղածոներով[1]:

Մի հատկանշական մանրամասնություն. չնայած հայրենիք վերադարձած հրեաների առաջ ծառացած դժվարություններին, չնայած աղքատությանն ու ծանր հարկերին, նրանց ձեռնարկած առաջին քայլը Սողոմոնի ավերված Տաճարի վերականգնումը եղավ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ըստ Եզրասի աստվածաշունչ գրքի պատումների՝ բաբելոնյան գերությունից վերադարձած հրեաները Տաճարը կառուցելու նպատակով մտադրվեցին Լիբանանի լեռներից մայրու շինափայտ գնել, որը փյունիկեցիները պետք է Միջերկրական ծովով Հոպպե քաղաքի (Յաֆֆա) նավահանգիստ տեղափոխեին (Եզր. 3. 7): Հնագիտական պեղումները հաստատեցին սրբազան բնագրի հավաստիությունը հետևյալ պեղածոների միջոցով:

Պեղումները ցույց տվեցին, որ վեհաշուք շինություններ կառուցելիս իսկապես մայրու շինափայտ էր օգտագործվում: Երուսաղեմի Տաճարի կառուցումից շատ առաջ Գուդեյա տիրակալը (Ք. ա. մոտ 2100 թ.) շումերական Լագաշ քաղաքում մեհյան կառուցելիս՝ օգտագործել է Լիբանանի լեռնազանգվածից բերված մայրու շինափայտ: Մենք արդեն խոսել ենք Ք. ա. մոտ 1100 թ.

1 **Olmstead A. T.** History of the Persian Empire. Chicago, 1948. P. 193 ff.

Բեն–Ամոնի (կամ Ուն–Ամունի – հեղ. ծնթ.) առաքելության մասին: Այս այրը Եգիպտոսից Լիբանան էր գործուղվել, որպեսզի Թեբե ներկրի մայրու շինափայտ՝ Ամոն աստծուն նվիրված սրբազան մակույկ կառուցելու համար: Բացի այդ, հնագիտական պեղումների համաձայն՝ Նաբուգոդոնոսորը ևս Լիբանան էր այցելել. ահա թե ինչպես է նա իր տպավորությունները նկարագրում. «Այնտեղ վեհասքանչ մայրիներ կային՝ բարձրաբերձ ու վիթխարի, զարմանալիորեն գեղեցիկ, մուգ իրենց արտաքինով. այսպիսին էին լիբանանյան լեռան վիթխարի, զմայլելի պտուղները»[1]:

Այսօր հնագիտության շնորհիվ հայտնի է, ինչն ըստ հնագետ Թոմպսոնի՝ հատկապես ուշագրավ է, որ այն ժամանակ փոքրիկ Յարկոնի գետաբերանում քաղաք է գոյություն ունեցել՝ հիմնված Ք. ա. մոտ 1200 թ., որը, սակայն, իր ծաղկման գագաթնակետին էր հասել պարսից տիրապետության օրոք: Մեր օրերում այդ քաղաքը Թելլ–Կազիլե (Թել–Ավիվից ոչ հեռու) է կոչվում: Քաղաքը մասամբ պեղվել է 1948–1950 թթ.[2]:

Տաճարի շինարարության նախապատրաստությունը սկսելուն պես բնակչության մեծամասնությունը կազմող սամարացիները վճռականորեն խոչընդոտներ հարուցեցին հրեաների առաջ: Սրանք մի ժողովուրդ էին, ինչպես ասվում է Սուրբ Գրքում, որոնց նախնիներին Ասարհադոնն ու Ասենափարը այլ երկրներից էին վերաբնակեցրել այդտեղ (Բ Եզր. 4. 2,10): Սամարացիները նամակ գրեցին պարսից արքային, որում զգուշացնում էին, որ երբ հրեաները Երուսաղեմը կառուցեն, ապա հարկ չեն տա և թագավորությունում այլևս խաղաղություն չի լինի (Բ Եզր. 4. 11–16): Բ Եզրաս գրքի այս բնագիրը գրվել է արամերեն, ինչը ռացիոնալիստներին գրքի իսկությունը ժխտելու տեղիք տվեց:

Հնագիտությունը կրկին օգնության հասավ՝ պատասխանը գտնելու նպատակով: Բոլոր կնճիռները հարթեցին «Էլեփանտինյան պապիրուսների» գտածոները. սրանք Ք. ա. 500–400 թթ. Եգիպտոսի Էլեփանտին կղզում ապրած հրեաների՝ արամերեն գրված նամակներն են: Այս պապիրուսների և Եզրասի գրքի արա-

1 **Free J. P.** Op. cit. P. 238-239.
2 **Maisler B.** The Excavation of Tell Qasile// Biblical Archaeologist. May,1951. P. 43ff.

մերեն լեզվի նմանությունը ցույց է տալիս, որ Հին Կտակարանի բնագրի այս հատվածը անբռնազբոս կերպով կարելի է Ք. ա. եթե ոչ IV դարով, ապա V դարի վերջով թվագրել[1]:

Հնագետ Օլբրայթն ընդգծում է, որ Բ Եզրաս գրքի հրամաններն ու նամակները (4. 7 և շար.) գրեթե անվիճելիորեն բնօրինակ են, ինչպես վկայում են նմանօրինակ բնագրերի՝ 1930 թ. Էդվարդ Մեյերի և Հ. Հ. Շեդերի կողմից անցկացրած հետազոտությունները[2]:

Դրանից հետո այլևս ոչ–ոք չէր պնդում, որ Եզրասի, Նեեմիի և Մնացորդաց գրքերը թվագրվում են Ք. ա. 250 թ.–ով, քանի որ «Էլեփանտինյան պապիրուսները» ցույց տվեցին, որ Եզրասի գրքում առկա արամերեն հատվածները հիմք չեն տալիս պնդելու, որ դրանք ուշ շրջանի ընդմիջարկություններ են:

Դառնանք ընդհատված պատումին: Բայց և այնպես սամարացիների զրպարտագրերը հասան իրենց նպատակին. պարսից արքան (հավանաբար Կյուրոսի որդի Կամբյուսեսը) արգելեց հրեաների՝ բոլոր տեսակի շինարարական աշխատանքները (Բ Եզր. 4. 21): Սակայն Կամբյուսեսի հաջորդի՝ Դարեհի (Ք. ա 520 թ.) գահակալության երկրորդ տարում Անգե և Զաքարիա մարգարեները կոչ արեցին ժողովրդին վերսկսելու տասնվեց տարի առաջ ձեռնարկած Տաճարի վերակառուցումը (Ք. ա. մոտ 536 թ.): Այսպես՝ հանդիմանելով ժողովրդին այն բանի համար, որ միայն հոգում են «գմբեթավոր տներում ապրելու» մասին, Անգեն ավետեց, որ արդեն եկել է անտառածածկ լեռը բարձրանալու, պիտանի ծառեր կտրելու և Տիրոջ համար Տաճար կառուցելու ժամանակը (1. 4, 8):

Ըստ Հին Կտակարանի՝ իսրայելացիները Տաճարի կառուցմանը ձեռնամուխ եղան Զորոբաբելի և Հեսու քահայանապետի գլխավորությամբ, ինչին, սակայն, իսկույն ևեթ ընդդիմացավ «Եփրատ գետի մյուս կողմից» եկած Թանթանա իշխանը (Բ Եզր. 5. 2, 3): Նա եկել էր Տաճարի շինավայր՝ սեփական աչքերով տեսնելու, թե ինչ է այդտեղ կատարվում: Այդ շրջանի կառավարիչը հայտնի

1 **Albright W. F.** The Archaeology of Palestine and the Bible. N. Y.:Revell,1935,p. 170.
2 **Albright W. F.** Recent Discoveries in Bible Lands// Young's Analytical Concordance to the Bible. N. Y.: Funk andWagnalls Co., 20th ed.,1936. P. 36.

է Բաբելոնում հայտնաբերված Ք. ա. մոտ 502 թ.–ով թվագրվող բնագրից: Ավելին, այդ նույն անունը հիշատակվում է մի այլ բնագրում, որտեղ խոսվում է «Սուզա քաղաքի նահանգապետ Թանթանայի» մասին: Այս Թանթանան չի նույնացվում Հին Կտակարանի վերոհիշյալ անձի հետ, սակայն կարելի է եզրակացնել, որ այս անունն այդ ժամանակներում տարածված էր[1]:



Պարսիկ զինվոր: Պատկեր Սուսայում Դարեհ Ի-ի պալատից: Փարիզ, Լուվր:

Թանթանան հրեաների բացատրությունները լսելուց հետո Դարեհ Ի–ին նամակ է գրում և զեկուցում, որ հրեաներն իրականում Կյուրոսի հրամանով են «Աստծո տուն» կառուցում: Դարեհը հրամայում է արքունի արխիվներում որոնել Կյուրոսի հրովարտակը: Եվ իրոք, այն գտնվում է Ահմեթա քաղաքի արխիվներում. այս քաղաքը ոչ այլ ինչ էր, քան հին հույների Եկբատանը (ներկայիս իրանական Համադանը– *ծնթ. թրգմ.*) (Բ. Եզր. 5. 7, 13, 6. 1–3 և հաջորդ համարները): Պարսից արքունիքի հետ այս նամակագրությունն ընդգրկված է Բ Եզրաս գրքի մեջ (5. 6, 6. 12):

Այնուհետև Դարեհ Ի–ը հրամայում է հրեաներին շարունակել Տաճարի շինարարական աշխատանքները, միաժամանակ օգնել նրանց՝ արքունի գանձարանից միջոցներ հատկացնելով (Բ Եզր. 6. 7, 8): Դարեհի թագավորության վեցերորդ տարում (Ք. ա. 516/515 թթ.) Տաճարի կառուցումն ավարտվեց, այսինքն՝ սկսելուց (Ք. ա. 536 թ.) քսան տարի անց: «Տեղեկությունների պատմականությունը (Հին Կտակարանի) որևիցե կասկածի տեղիք չի տալիս: Ըստ այդ ժամանակների բազմաթիվ ու բազմաբնույթ

1 **Kraeling E. G.** Bible Atlas. Chicago,1956. P. 329.

Դարեհ I -ը գահի վրա (Պերսեպոլիսի պալատի բարձրաքանդակ, Ք. ա. V դ.): Չիկագոյի արևելյան ինստիտուտ:

բնագրերի՝ Դարեհ I–ը, ինչպես և նրա նախորդները, սատարում էր զանազան դավանանքներին, այն էլ ոչ միայն Պաղեստինում, այլև Փոքր Ասիայում և Եգիպտոսում»[1]:

Ինքը՝ Դարեհը՝ մեծանուն պարսից արքան, պարսից թագավորության թշնամիների հանդեպ տարած հաղթանակները հավերժացրեց հռչակավոր Բիհիսթունյան ժայռի (արևմտյան Պարսկաստան) վիմափոր ընդարձակ արձանագրության մեջ:

Այս վիմագրությունը մեծ դժվարությամբ և կյանքը վտանգի ենթարկելով (այն բավական մեծ բարձրության վրա է գտնվում)՝ պատճենեցին անգլիացի սըր Հենրի Ռոուիլսոնը (1835–1845 թթ.)՝ «ասուրագիտության հայրը» և նշանավոր ասուրագետ Ջորջ Քամերոնը[2]: Հենց այս արքան է առաջինը կառուցել Միջերկրական ծովը Կարմիր ծովին միացնող ջրանցքը[3]: Սա այն Դարեհն է, ով արշավեց Հունաստանի վրա, սակայն Ք. ա. 490 թ. Մարաթոնի հռչակավոր ճակատամարտում պարտվեց: Հնագետները բացեցին նրա հրամանով Բաբելոնում, Սուսայում և Պերսեպոլիսում կառուցած շինությունները: Պեղումներից երևան հանված զանազան վավերագրերը հաստատեցին, որ Դարեհը ժողովրդին անխնա հարստահարող վաշխառուների ապօրինի վիթխարի շահույթ-

1 **Keller W.** ‘ Η Βίβλος…Σ. 430.
2 Տես **Free J. P.** Op. cit. P. 242-243.
3 **Olmstead A. T.** History of the Persian Empire. P. 145.

ներից բաժին ուներ: Այս մասին Նեեմիի գրքում (5. 1–4) ևս ակնարկություն կա:

Պարսից արքա Դարեհ I -ի կնիքը (դրոշմվածք):

Սույն գլուխն ավարտելուց առաջ հարկ է արձանագրել, որ Տաճարի կառուցումից հետո հրեաների պատմությունը թևակոխում է մեզ համար մութ ու անորոշ մի շրջան: Զգացնել է տալիս Երուսաղեմի պարիսպների կառույցը ղեկավարած Նեեմիի ժամանակներին վերաբերող գիտելիքների սղությունը: Այդուհանդերձ, այս դարաշրջանի վերաբերյալ առձեռն որոշակի հնագիտական նյութեր կան, որոնք շատ բան են բացատրում, թեպետ տակավին հստակ պատկերացում չկա, թե ինչպես էին պարսիկները կառավարում Պաղեստինը: Եվ քանի որ հետագայում բազմիցս ենք անդրադառնալու պարսից թագավորներին, թվարկենք Ք. ա. 500 թվից մինչև 330 թ. գահակալածներին, որպեսզի բնագրերում նրանց անունների հիշատակությանը հանդիպելիս իմանանք, թե խոսքն ում մասին է: Արդեն խոսել ենք մինչև Ք. ա. 486 թ. թագավորած Դարեհի մասին: Նրա ժառանգ Քսերքսես I–ը (486–465 թթ.) շարունակեց իր նախորդի աշխարհաշեն գործունեությունը: Հին Կտակարանում նա հիշատակված է Արտաշես* (եբր. Ախաշվերոշ) անվամբ (Բ Եզր. 4. 6): Քսերքսեսն իր թագավորության սահմաններում բազում հաջող ռազմական գործողություններ իրականացրեց, սակայն Ք. ա. 480 թ. նախ Սալամինի ծովամարտում, ապա հաջորդ տարում Պլատեա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հույներից պարտություն կրեց: Քսերքսեսի մասին խոսվում է նաև Եզրասի աստվածաշունչ գրքում, ինչպես կտեսնենք գրքի հաջորդ գլխում: Քսերքսեսին հաջորդեց Արտաքսերքս** I–ը (465–424 թթ.), ում թագավորության ժամանակաշրջանում էլ ապարեզ իջան Եզրասն ու Նեեմին: Արտաքսերքսի գահաժառանգը Դարեհ II–ն էր (423–404 թթ.): Եգիպտոսում

* Հայերեն սրբազան բնագրերում հանդիպում է այս անվան գրության զանազան ձևեր՝ Ասարսոյեր, Արսասես, Արսաաս, Արտաքսերքս:

** կամ Արտաշեսը:

և Միջագետքում անցկացված մանրազնին պեղումները բացեցին այս երկու արքաների ժամանակներով թվագրվող շերտեր՝ մեր տրամադրության տակ դնելով այդ շրջանի հրեաների պատմությանը վերաբերող բավական նյութեր: Նրանց հաջորդեցին Արտաքսերքս II–ը (404–358 թթ.), Արտաքսերքս III–ը (358–338 թթ.), Արսիսը կամ Նարսիսը (338–336 թթ.) և Դարեհ III–ը (336–331 թթ.), ում պարտության մատնեց Ալեքսանդր Մեծը, որով էլ Ք. ա. 331 թ. վերացավ պարսից տերությունը:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՐՍՊԱՊԱՏՈՒՄԸ

Եզրասն իր գրքի ութերորդ գլուխը բացում է Ք. ա. 458 թվականով թվագրվող անցքերի նկարագրությամբ: Ըստ նրա՝ Արտաքսերքսեսի գահակալության յոթերորդ տարում (այսինքն՝ Ք. ա. 458 թ.) ինքը Բաբելոնից մեծ թվով հրեաների հետ մեկնեց Երուսաղեմ (Բ Եզր. 7. 6–8 8. 1–20): Հին Կտակարանում չի մատնանշվում 458 թվականը, պարզապես հաղորդվում է, որ դա Արթասասթայի, այսինքն՝ Արտաքսերքսեսի յոթերորդ տարում է եղել: Բայց ո՞ր Արտաքսերքսի՝ առաջինի՞, թե՞ երկրորդի: Եթե դա Արտաքսերքսես I–ն էր, ուրեմն, իրոք, Ք. ա. 458 թվականն է, իսկ եթե Արտաքսերքսես II–ն է, ապա ստացվում է, որ Ք. ա. 398/397 թթ. է: Անշուշտ, եթե հիմնվենք Սուրբ Գրքի տվյալների վրա, ապա տպավորություն կստեղծվի, որ իբր Եզրասը Նեեմիից շուտ է Պաղեստին եկել: Ցավոք սրտի, հնագիտությունը չափազանց աղոտ է լուսաբանում այս հարցը՝ ի համեմատություն Նեեմիի. մեր ձեռքում բավականաչափ նյութեր կան, որոնք հաստատում են Նեեմիի՝ Ք. ա. 445/444 թթ. Պաղեստին գալու փաստը: Մեծամասնությունը, սակայն, հակվում է այն տեսակետին, որ Արթասասթայի գահակալության յոթերորդ տարին Արտաքսերքսես I–ի գահակալության յոթերորդ տարին է, այսինքն՝ Ք. ա. 458 թ.[1]:

1 **Free J. P.** Op. cit. P. 247. Թոմպսոնի ժամանակագրության հերթագայության և հաշվարկման եղանակի մասին տես **Thompson J. A.** Op. cit. P. 196-198.

Երուսաղեմ գալով՝ Եզրասը Բաբելոնից իր հետ բերած գանձերը Տաճարին հանձնեց և ողջակեզներ ու այլ զոհաբերություններ մատուցեց՝ չհաշված Իսրայելի ողջ տան մեղքերը մաքրելու համար տասներկու արջառները (Բ Եզր. 8. 32, 33, 35): Այս փաստն ապացուցում է, որ այնժամ 12 ցեղերն էլ կային, հետևաբար, ինչպես պնդում են ոմանք, տասը ցեղերը չէին անհետացել: Նույնն են ապացուցում նաև պեղածոները: Ըստ դրանց՝ ժողովրդի զգալի մասը գերության չէր քշվել: Սարգոն II–ը հաղորդում է, որ ինքը Սամարիայի բնակիչներից 27,970 հոգու է գերեվարել: Այս թիվը հյուսիսային թագավորության բնակչության ընդամենն աննշան տոկոսն է կազմում, ըստ այդմ, բոլոր ցեղերը երբեք էլ չեն քշվել, էլ ուր մնաց որ անհետանային[1]:

Նեեմիի գիրքն ընթերցելիս՝ դարձյալ ժամանակագրության խնդրին ենք բախվում: Այս մարգարեի գործունեությունը, եթե հետևենք Սուրբ Գրքին, սկսվում է Արտաքսերքսեսի գահակալության քսաներորդ տարում (Նեեմի 1. 1 2. 1), սակայն չի նշվում, թե որի օրոք՝ առաջինի՞, թե՞ երկրորդի: Նախորդ գլխի խնդրո առարկա «էլեփանտինյան պապիրուսների» հայտնաբերման շնորհիվ հարցն իր վերջնական լուծումը գտավ: Սույն պապիրուսների արամերեն բնագրերը (գրվել էին Նեեմիից հետո՝ Ք. ա. 408/407 թթ.) հավաստեցին, որ այս Արտաքսերքսեսը, անկասկած, Արտաքսերքսես I–ն է, ինչպես հետևում է նախորդ գլխից, որտեղ արծարծվում էր այս դարակազմիկ հնագիտական գտածոների թեման:

Հետևաբար Ք. ա. (446) 445/444 թթ. վերջում Նեեմին իր եղբայր Անանիայից (եբր. Հանանի) և Երուսաղեմից եկած մի քանի այլ հրեաներից իմացավ անմխիթար վիճակի մասին: Ի շարս այլոց՝ նրանք խոսում էին նաև այն մասին, որ թշնամի հարևանները կարող են դյուրությամբ հարձակվել քաղաքի վրա, որովհետև Երուսաղեմի պարիսպը քանդված է: Այս չարագույժ լուրերից Նեեմին արտասվեց, օրեր շարունակ սուգ արեց և աղոթքի կանգնեց (Նեեմի 1. 1–4): Արտաքսերքսես I–ն արտոնեց կառուցել պա-

1 **Free J. P.** Op. cit. P. 247-248.

րիսպը, հանձնարարական նամակ տվեց պարսից իշխանությունների համար, ում հետ Նեեմին պետք է հանդիպեր Եփրատի մյուս կողմում: Շուրջ 2,000 կմ երկարությամբ այս ճամփորդության ընթացքում Նեեմիին ուղեկցում էին զորահրամանատարներ ու հեծյալներ (2. 7–9) նրա տրամադրության տակ դրված՝ հավանաբար Արտաքսերքսեսի կարգադրությամբ, քանզի չի նշվում, որ Նեեմին ինքն ուղեկցող պահակախումբ խնդրած լիներ:

Շնորհիվ հնագիտական պեղածոների՝ այս հեռավոր ճամփորդությունն (Նեեմի 2) ու Երուսաղեմի պարիսպների նկարագրությունները (Նեեմի 2–3) մեր աչքերի առաջ ասես շունչ են առնում: Հնագիտությունը մեծավ մասամբ բացահայտում է Նեեմիի ձեռամբ[1] երուսաղեմյան պարիսպների կառուցման հետ կապված անցքերի էությունը: Մի ժամանակակից հետազոտող գրում է. «Նեեմիի տեղագրական բնագրերը չափազանց արժեքավոր են, նույնիսկ Հովսեպոս Փլաբիոսի ցանկացած մեջբերումից անհամեմատ առավել, և ոչ միայն այն բանի համար, որ բովանդակում է ականատեսի՝ երեք անգամ կրկնվող (Նեեմի 2. 11–15 3. 12,31–39) նկարագրությունը, որն անհամեմատ ավելի հանգամանալից է, քան Հովսեպոսինը, այլ առավելապես այն բանի համար, որ երեք դեպքերում էլ խոսքը Հին Կտակարանի միևնույն քաղաքի մասին է՝ բաբելոնյան գերությունից առաջ և հետո: Նեեմիի Երուսաղեմ գալու ժամանակը ժամանակագրորեն չափազանց հեռու է այն օրերից, երբ Հերովդեսը սրբազան տարածքը (Տաճարի հողերը) հարթելուն և ընդարձակելուն ուղղված լայնածավալ գործունեություն էր ծավալել»:

Հնագիտության դոկտոր Ք. Քենյոնի անցկացրած պեղումները թույլ տվեցին ավելի լավ հասկանալու հնագիտության առաջ ծառացած խնդիրները, որոնց ցայսօր էլ բախվում ենք:

Տաճարից հարավ ընկած արևելյան լանջի նեղ ցցվածքը հետազոտելիս պարզվեց, որ այդ շրջանն ընդհուպ մինչև գերություն բնակեցված է եղել: Նաբուգոդոնոսորի հարձակման հետևանքով անհետացել են շինությունների ու տների պատերը, բլրի լանջերը

1 **Simons J.** Jerusalem in the Old Testament. Leiden,1952. P. 437ff.

ծածկվել են անհամար շուռ տված քարերով[1]: Այս հայտնագործությունը հաստատեց այն, ինչ գրել էր Նեեմին՝ Երուսաղեմի պարիսպները տեսնելով. «Ես անցա Աղբյուրի դռնով՝ Թագավորի ջրավազանի մոտով: Այնտեղ տեղ չկար, որ ես իմ գրաստին հեծած՝ կարողանայի անցնել» (Նեեմի 2. 14): Այս տեսարանը՝ այդ վայրն իր մեջ առած ավերակներով էր պայմանավորված: Գրեթե կասկած չի հարուցում, որ Նեեմիի տեսած պարիսպները բլրի հենց այդ մասում[2] էին, իսկ արքունի ջրավազանը հարկ է նույնացնել կամ Սիլոամի աղբյուրի, կամ էլ մոտակա Բիրկեթ–ալ–Համրայի հետ:

Քենյոնին հաջողվեց բացել Նեեմիի պարսպի մի մասը[3], որն իբրև Երուսաղեմի պարիսպ, իր իսկ տեղում կանգուն էր մնացել ընդհուպ մինչև Տիտոսի ձեռամբ Ք. հ. 70 թ. Երուսաղեմի ավերումը, թեպետ իր գոյության այդ ընթացքում նրա որոշ հատվածներ նորոգվել ու ամրացվել էին: «Այս պեղումների կարևոր արդյունքներից ելնելով՝ Երուսաղեմի հետազոտություններին նվիրված որոշ հայտնի աշխատասիրություններ պետք է շտկվեն հատկապես այն տեղերում, որտեղ շոշափվում է Նեեմի պարսպի հարցը»,– գրում է հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնը[4]:

Երուսաղեմի պարսպի կառուցումը զարմանալիորեն կարճ ժամանակում ավարտվեց: Սուրբ Գրքում ասվում է. «Պարիսպն ավարտվեց Իլուլ (օգոստոսի վերջ սեպտեմբերի սկիզբ) ամսի քսանհինգին՝ հիսուներկու օրվա ընթացքում» (Նեեմի 6. 15): Այս կարճ ժամանակահատվածը, որի ընթացքում պարիսպը կանգնեցվեց (շինարարությունը սկսվեց հուլիսի վերջում և ավարտվեց սեպտեմբերի կեսերին), ոմանց սրբազան հեղինակի ճշմարտապատմությունը կասկածի տակ առնելու տեղիք տվեց: Բայց հարցի լուծումը դյուրին է, եթե նկատի առնենք երկու փաստ. 1) Նեեմին պատմում է, որ ինքը տեսել է, որ Երուսաղեմի «պարսպի մեջ կային ճեղքեր, որ նրանք մաքրել էին, և որ նրա դռներն այրված

1 **Kenyon K.** Jerusalem, Excavating 3000 Years of History. L,1967. Tabl. № 9.
2 **Kenyon K.** Op. cit. Pict. 6. P. 57.
3 **Kenyon K.** Op. cit. Tabl. № 54, 55.
4 **Thompson J. A.** Op. cit. P. 200.

էին կրակից» (Նեեմի 2. 13): Հետևաբար պարիսպը հիմնավեր չէր. նրա մի մասը կանգուն էր: Բացի այդ շինանյութ բերելու կարիք չկար, հենց դա է, որ շատ ժամանակ է խլում. այն ձեռքի տակ էր՝ նորոգման համար անհրաժեշտ քանակով: Ավելին, բոլոր աշխատողները ջանք չէին խնայում և անձնուրացաբար էին աշխատում: 2) Աշխատում էին շատ արագ, քանզի, ինչպես վկայում է սրբազան բնագիրը, այս գործը սամարացիների և հարևան այլ ժողովուրդների անբարյացկամությունն էր հարուցում: Այս ժողովուրդներն այնքան նախանձ, զայրույթ ու վախ էին տածում, որ հրեաներն իրենց ապահով չէին զգում: «Լինում էր ժամանակ, երբ զենքը մի ձեռքին, օգնում էր եղբորը, իսկ մյուս ձեռքով եղբորը տալիս էր խիճը կամ շաղախը: Ամեն մի շինարար իր մեջքին ուներ սուսեր և իր ազդրի վրա՝ միասայրի սուսեր. և այդպես շինում էին Երուսաղեմի պարիսպը: Եղջերափողը փչողը կանգնած էր նրանց մոտ» (Նեեմի 4. 17–18)՝ թշնամուն ետ մղելու ազդանշան տալու համար: Բացի այդ, ըստ սրբազան բնագրի՝ այլ միջոցներ էլ էին ձեռք առնվել, որպեսզի աշխատանքներն արագ ու անխափան ընթանային և որ ապահովված լիներ շինարարների անվտանգությունը:

Հույժ անբարենպաստ պայմանները, որոնցում աշխատում էին վարպետներն ու բանվորները, շտապողականությունն ու հապճեպությունը, և առհասարակ այն ամենը, ինչը հանգամանքների թելադրանքով էր պայմանավորված, վավերացվում է նաև հնագիտության կողմից: Գեհոնի աղբյուրից հարավ–արևելք ընկած փոքրիկ բլրի վրա պեղումներից պարսպի մի մասը բացած անգլիացի գիտնական Ջ. Հարրոու Դանկանը գրում է, որ օգտագործվել են ոչ մեծ, չհղկված, տձև և անհարթ քարեր, որոնց մի մասն անսովոր փոքր է և թվում էր, թե մեծ քարերից պոկված բեկորներ են, ասես (շինարարները) հարկադրված ձեռքի տակ ընկած ամեն մի նյութ օգտագործած լինեին: Մեծ ճեղքերն ու սնամեջ տեղերը խցվում էին ցեխից ու խճից հապճեպորեն պատրաստված շաղախով[1]:

1 **Keller W.** Ἡ Βίβλος… Σ. 431.

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՐՍՊԱՊԱՏՈՒՄԸ ԽԱՓԱՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Արդեն խոսել ենք այն մասին, որ Նեեմիի նախաձեռնած Երուսաղեմի պարսպապատումը հրեաների դրացի ժողովուրդների դիմադրությանը հանդիպեց: Այս ախոյանների մեջ առավել վտանգավոր էին՝ Սանաբալատը, Ամմոնի ծառա Տուբիան և Գեսամ(Գեշեմ) Արաբացին (Նեեմի 2. 10,19; 4. 1,3,7; 6. 1,2 և այլն): Սրանք դավեր նյութեցին Նեեմիի դեմ, սակայն վերջինս լիովին խափանեց նրանց ծրագրերը (Նեեմի 2. 19 և շար. 4. 6):

Մեր օրերում հնագիտությունն աշխարհին հրեաների հարևան ազգերի մասին առատ նյութեր տրամադրեց, իսկ ինչ վերաբերում է Սանաբալատին և Գեշեմին առնչվող դիպվածին, ապա մինչև իսկ համապատասխան բնագրեր գտնվեցին:

Այսօր Սանաբալատի անունը հայտնի է «Էլեփանտինյան պապիրուսների» բնագրերից մեկից, որը գրի է առնվել Ք. ա. 407 թվից ոչ ուշ: Ըստ երևույթին սույն անունը բաբելական է (Սինուբալլիտ), սակայն Սամարիայի կուսակալի պաշտոնատարը բաբելացի չէր: Նրա որդիների անունները (Դելայահ և Սելեմյահ) բաբելական չէին, այլ հրեական, քանզի «յահ» վերջավորություն ունեն, որը հին եբրայական Յահվե (Աստված) բառից է: Հավանաբար Սանաբալատը սինկրետիկ կրոնի հետևորդ էր, ինչպես Էլեփանտինի հրեաների պարագայում էր: Այս հրեաների՝ Հրեաստանի կուսակալին հղած նամակում հույս է փայփայվում, որ իրենց տաճարը կվերականգնվի, ապա ասվում է հետևյալը. «Այս ամենի մասին գրել ենք Դելայահին և Սելեմյահին՝ Սամարիայի Սանաբալատ կուսակալի որդիներին հասցեագրված մեր նամակում»[1]:

Գիտնականների ձեռքին նույնպես Եգիպտոսից հայտնաբերված հնագիտական նյութեր կան նաև Սանաբալատի զինակից և համախոհ Տուբիայի մասին: Այս նյութերը Գերզայում՝ եգիպտական Ֆայյում օազիսում երևան հանված «Ջենոնի պապիրուսնե-

1 **Cowley A.** Aramaic Papyri of the Fifth Century B. C. Oxford: Clarendon Press, 1923. P. 144. Արամեական պապիրուս №30; **Thompson J. A.** Op. cit. P. 200-201.

րից» են, որոնք գրի են առնվել Ք. ա. III դ. Պտղոմեոս II Փիլադելֆիոսի գահակալության օրոք (Ք. ա. 285–246 թթ.) և հաճախակի են հիշատակում Պաղեստինը: Պապիրուսներից մեկի հեղինակն Ամմոնի (շրջան Հորդանանի արևելյան մասում) կուսակալ Տուբիան է: Նամակում հաղորդվում է, որ Տուբիան Պտղոմեոսին զանազան կենդանիներ, այդ թվում՝ նժույգներ, շներ և ուղտեր է ուղարկում[1]: «Այս Տուբիան,– գրում է հնագետ Ֆրին,– անկասկած Նեեմիի հակառակորդ, Նեեմիի գրքում հիշատակված Տուբիա Ամմոնացու ժառանգն է» (2. 10)[2]:

Ամմոնի շրջանում Տուբիա տան գոյության անուղղակի ապացույց է հետևյալ փաստը, որի մասին հնագետ Թոմպսոնն ասում է. «Թեկուզ այս փուլում այս անձին անմիջականորեն վերաբերող նյութեր չունենք, բայց նրա ընտանիքի մասին բավական տեղեկություններ կան: Ինքը՝ անունը, հուշում է, որ նա պաշտում էր Յահվեին, քանի որ նրա անունն ունի «յահ» վերջավորություն (Տուբիահ): Նրա ընտանիքը Ք. ա. առնվազն V–ից մինչև II դարը Հորդանանի քաղաքական իշխանությունն իր ձեռքում էր պահում: Արակ–ալ–Ամիրում՝ կենտրոնական Հորդանանի մի գողտրիկ անկյունում (գրեթե այսօրվա Ամմանի դիմաց), մի քանի գեղեցիկ ժայռափոր դամբարաններ կան, որոնցից մեկի վրա արամերեն (Ք. ա. III դ.) փորագրված է «Տուբիա» անունը: Այս գերեզմանները Եգիպտոսում Պտղոմեյանների թագավորության շրջանից են»[3]: Այդ նույն տեղում ավերակներ կան, որոնք ոմանց կարծիքով պալատի, իսկ մյուսների կարծիքով՝ Տուբիա տան վերջին կուսակալների կողմից կառուցված դամբարանի մնացորդներ են[4]: Այս ամենի, ինչպես նաև «Զենոնի պապիրուսների» վրա հիմնվելով՝ պրոֆեսոր Թոմպսոնը եզրակացնում է. «Այսպես, եթե այս պահին Նեեմիի օրոք ապրած Տուբիային վերաբերող ուղղակի նյութեր չկան էլ, ապա ակներև էլ է, որ մենք բոլոր հիմքերն

1 **Wright G. E.** Biblical Archaeology. P. 204; **Vincent L. H.** La Palestine dans le papyrus ptolemaigue de Gerza// Revue Bibligue. Avril,1920.
2 **Free J. P.** Op. cit. P. 249.
3 **Albright W. F.** The Archaeology of Palestine. L., 1956. P. 143 ff.
4 **Wright G. E.** Op. cit. P. 204. Albright W. F. Op. cit. P. 149. ff. Free J. P. Op. cit. P. 249-250.

ունենք ենթադրելու, թե Հորդանանում հետագա դարերում էլ ապրած Տուբիաներն աղերսներ ունեն Նեեմի ժամանակների Տուբիայի հետ»[1]:

Երուսաղեմի պարսպապատումը խափանելու փորձ ձեռնարկած հրեաների երրորդ հարևանը Գեսամ Արաբացին էր (Նեեմի 2. 19 6. 1,2): Սուրբ Գրքից զատ այս մարդու մասին մինչև վերջերս ոչինչ հայտնի չէր: Եբրայական բնագրում նա հիշատակվում է Գեշեմ անվամբ (6. 6): Վերջին պեղումները արգասաբեր էին Գեսամի մասին իրենց տեղեկություններով: Նրա անունն այժմ հայտնի է Հեգրայում (Արաբիա) հայտնաբերված մի արձանագրությունից: Սրանից զատ կարևոր նյութ է հայտնաբերվել Եգիպտոսին սահմանակից մի տաճարում, որը հավանաբար արաբներին է պատկանել (նրանց ազդեցությունն այս տարածքի վրա էլ էր տարածվում):

Նեեմիի օրոք Հորդանան գետից դեպի արևելք, ինչպես և հարավ ընկած ընդարձակ շրջանի տերերը Դեդանի արքաներն էին: Չնայած որ նրանք գտնվել են պարսից տիրապետության տակ, այնուհանդերձ, մի լայնածավալ տարածք են վերահսկել: Դեդանի արքաները բազմաթիվ և բազմաբնույթ արձանագրություններ են թողել, որոնցից մեկում ասվում է. «Խադիրի որդի Նիրանը գրեց իր անունը Դեդանի տիրակալ Աբդի և Սահրայի որդու՝ Գասմի օրերում»[2]: «Աբդ (ծառա)՝ Դեդանի տիրակալ» արտահայտությունը հիշեցնում է Սուրբ Գրքի «Ամմոնի ծառա Տուբիա»–յին: Տուբիան «ծառա» է կոչված. այսպես էր կոչվում նաև Դեդանի տիրակալը: Վավերագրի մյուս բնորոշ առանձնահատկությունը pht (այսինքն՝ pahat) բառի գործածությունն է, որը թարգմանաբար «տիրակալ» է նշանակում: Այս նույն բառը հանդիպում է նաև Բ Եզրասի գրքում՝ իբրև Pahat–Moab, այսինքն՝ Փաաթմովաբ անձնանվան բաղկացուցիչ (Բ Եզր. 8. 4 10. 30, Նեեմի 3. 11 7. 11 10. 14): Հնագետ Օլբրայթը նկատում է, որ «Մովաբի տիրակալ» իմաստ պարունակող անունը դյուրությամբ կարող էր ածանցվել այդպիսի տիրակալներից մեկի անունից, ով իր անվամբ էր կնքել ողջ

1 **Thompson J. A.** Op. cit. P. 202-203.
2 **Olmstead A. T.** History of the Persian Empire. Chicago,1980. P. 295

գերդաստանին: Pahat բառի գործածությունը պատշաճ չէր լինի, եթե բաբելացիների և պարսիկների տիրապետությանը նախորդող ժամանակների մասին լիներ խոսքը, քանզի առնվազն մինչև Ք. ա. 645 թ. ինքը՝ Մովաբը, դեռ իր հարկատու թագավորներն ուներ[1]: «Սույն փաստերը,– ամփոփում է հնագետ Թոմպսոնը,– Գեսամի անունից բոլորովին անկախ մեզ եզրակացնել են տալիս, որ Հեգրայի արձանագրությունը թվագրվում է պարսից տիրապետության ժամանակով»[2]:

Այս արձանագրությունն ընդհուպ մինչև վերջին ժամանակները մեր միակ առձեռն պատմական նյութն էր, սակայն նորագույն հնագիտական հայտնագործությունները օգնեցին վերջնականապես պարզել Գեսամի ինքնությունը: Դեդանի արքաների (եգիպտական Դելտայի հյուսիս–արևելքում) հսկողության տակ գտնվող տարածքի մերձակայքում գտնվեցին Խան–Ալլաթ հյուսիս–արաբական դիցուհու մեհյանի ավերակները: Շատ տարիներ առաջ այդ դիցուհուն պաշտողները կռատանն արծաթյա անոթներ էին նվիրաբերել: Երեք փոքրիկ արծաթե թասերի վրա արամերեն մակագրություններ կան: Բոլոր հատուկ անուններն արաբական են՝ բացառությամբ մեկի: Մեզ համար հատկապես ուշագրավ է մի արձանագրություն, որտեղ ասվում է. «Կեդարի արքա Գեսամի (Գուսամի) որդի Կայենի ընծան»[3]: Կեդարը գտնվում է Արաբիայի հյուսիս–արևմուտքում, որտեղից Գեսամի անվամբ մի գրություն ևս երևան հանվեց: Այս վավերագրերը դյուրությամբ Ք. ա. V դարով են թվագրվում: Հիմնվելով այդ թվում նաև Խան–Ալլաթ տաճարի գտածոները հետազոտած և հրապարակած Ի. Ռաբինովիչի հետազոտությունների վրա՝ Թոմպսոնը համարում է, որ հավանաբար Կեդարի արքա Գեսամի որդի Կայենն այն Գեսամի որդին է, որը փորձել էր խափանել Նեեմիի գործունեությունը, քանզի նամակի տեսակը Ք. ա. մոտ 400 թ. թվագրություն է մատնանշում[4]:

1 **Albright W. F.** The Biblical Period. Blackwell, Oxford,1950. P. 64, note 131.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 201.
3 Տես Ի. Ռաբինովիչի հոդվածը (Rabinowitz) «Journal of Near Eastern Studies» հանդեսում 15,1956. P. 2,5-9,tabl. 6,7.
4 **Thompson J. A.** Op. cit. P. 202.

Մշտապես համալրվող հնագիտական նյութերը վկայում են, որ Գեսամի օրոք Արաբական թագավորությունը բավական ընդարձակ էր. ընդգրկում էր հյուսիսային Արաբիան, հին Եդոմը, Սինայի շրջանն ու Նեղոսի դելտայի մի մասը, ինչպես նաև, հավանաբար, Հուդայի հարավային մասը, որտեղ ոչ մեծ բագիններ են հայտնաբերվել՝ հար և նման Հարավային Արաբիայում գտնվածներին[1]: Այսպես արաբացի Գեսամ արքան բավական մեծ տարածքների էր տիրում, իսկ պարսից թագավորները դեռ Կամբյուսեսի ժամանակներից բարիդրացիական հարաբերություններ ունեին արաբացի տիրակալների հետ: Ուստի հզոր Գեսամի յուրաքանչյուր գործողություն պարսից արքունիքում, ինչպես որ Նեեմիին խանգարելու պարագայում էր, կարող էր մեծապես ներգործել Նեեմիի հանդեպ պարսից արքայի վերաբերմունքի վրա[2]:

Փաստորեն Գեսամ Արաբացին ոչ միայն իրական անձ էր, ինչպես այդ մասին վկայում է Սուրբ Գիրքը, այլև Նեեմիի վտանգավոր ախոյանը: Սակայն Աստված, ինչպես առաջ, պաշտպանեց իր ժողովրդին, խափանեց նրա թշնամիների ծրագրերը և Նեեմիի ձեռնարկածը բարեհաջող ավարտին հասցրեց, այնպես որ վերջի-վերջո Երուսաղեմի պարսպապատումը հասավ իր լրումին:

ԽԵՑԵՂԵՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԸ

Պեղումները Պաղեստինում արգասավորվեցին բազմաթիվ կենցաղային իրերի հայտնաբերմամբ, որոնք օգնում են ավելին իմանալու պարսից տիրապետության ժամանակաշրջանի մասին:

Օրինակ՝ գոյություն ունի խեցեղենի մի հրաշալի տարատեսակ, որը պատկանում է այսպես կոչված պարսից շրջանին կամ երկաթե դարի III շրջանին: Սակայն հատկորոշ է, որ հնագետներին Պաղեստինում հունական բրուտագործական իրերի յուրա-

1 **Albright W. F.** The Archaeology of Palestine. L.,1956. P. 143 ff.
2 **Thompson J. A.** Op. cit. Kitchen K. A. Op. cit. P. 160.

հատուկ տեսակ է հանդիպում, ինչը Միջերկրականի արևելյան ավազանում հունական հարաճուն ազդեցության խոսուն վկայությունն է: Թելլ–ան–Նասբայում՝ Հուդայի պարսկական փոքրիկ գավառի մայրաքաղաքում (Երուսաղեմից հյուսիս), հայտնաբերված կավե անոթները ցույց են տալիս, որ Աթենքի ծաղկման շրջանում Ատտիկայի և Պաղեստինի միջև աշխույժ առևտրական հարաբերություններ են գոյություն ունեցել[1]: Հավելումն սրա՝ Պաղեստինի սրտում հունական ազդեցության մասին են խոսում Ք. ա. VI դարին պատկանող Սյուքեմի պեղածները[2]:

Այս գտածոներից մեզ համար առավել հետաքրքրություն են ներկայացնում մետաղյա դրամները: Շատ հավանական է, որ առաջին մետաղադրամներն ի հայտ են եկել լիդիական թագավորների օրոք, երբ Կրեսոս արքան Ք. ա. 530–ականներին շրջանառությունից հանեց այսպես կոչված սպիտակ ոսկու կտորները և փոխարինեց դրանք մաքուր ոսկու մետաղադրամներով: Հետագայում պարսիկներն ընդօրինակեցին այս պրակտիկան: Մարերն ու պարսիկներն իրենց մետաղադրամների վրա «Մեծ արքայի» դիմապատկերն էին դրոշմում: Նրանց օրինակին հետևեցին Հոնիական կղզիների և Իտալիայի հունական գաղութները, իսկ քիչ անց հույն վաճառականներն արդեն իրենց գործարքներում Միջերկրականի արևելյան կողմերում սկսեցին հունական պոլիսների խորհրդանշանների դրոշմվածքով հնչուն դրամներ գործածել:


Կարմրապատկեր սկահակ անվանի հույն վարպետ Պոլիգնոտոսի դրվագազարդմամբ (ստամնոս) Ք. ա. մոտ 420 թ. :

Զորօրինակ՝ Էգինայի խորհրդանշանը կրիա էր, Աթենքինը՝ բու: Հետագայում աթենական մետաղադրամների վրա մի կողմից բու, մյուս կողմից ձիթենու ճյուղ սկսեցին պատկերել: Բացի այդ, հունական մետաղադրամների՝ դրախմների այլ

1 **McCown C. C.** Tell en Nasbeh. Baltimore,1947. I,62.
2 Տե՛ս Քեմփբելի հոդվածը (Campbell E. F.) «Bulletin of the American Schools of Oriental Research», հանդեսում, №161. Feb.,1961. P. 52 ff.

տեսակներ էլ գոյություն ունեին: Մեզ համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում երկու պարագա՝ մետաղադրամների վրա բուի պատկերն ու զանազան տեսակի դրախմների գոյությունը: Պաղեստինում հնչուն դրամը Ք. ա. երևան եկավ V դարում: Պեղումներից պարզ դարձավ, որ Ք. ա. արդեն III դարից դրանց շրջանառությունն զգալիորեն աճում է: Ականավոր հնագետ Օլբրայթը գրում է. «Ատտիկյան մետաղադրամի օրինակով կտրած, բայց եբրայերեն և արամերեն Յեհուդ (այսինքն՝Հուդա) գրությամբ արծաթյա դրամների մեծ քանակություն է հայտնաբերվել: Ք. ա. V դարի երկրորդ կեսում ատտիկյան մետաղադրամներ ընդօրինակում էին տեղերում, իսկ արդեն հաջորդ դարում բարբարոսների մոտ դրախմների պատկերների չափազանց բազմազան ձևափոխությունների ենք հանդիպում. աթենական բուն թեև պահպանվեց, սակայն գործնականում անճանաչելի էր»[1]:

Հերակլեսը հաշվեհարդար է տեսնում իրեն զոհաբերել փորձող եգիպտացի քրմերի հետ: Հունական կարմրապատկեր սկահակ (Ք. ա. 470 թ.):

Այս փաստերը պարզաբանում են Ք. ա. V դարի երկրորդ կեսին պատկանող Նեեմի և Բ Եզրաս գրքերի որոշ համարներ: Հրեաների՝ Տաճարի գանձարանին հանձնած ընծաները բաղկացած էին վաթսունմեկ հազար մաքուր երկդրամյան* ոսկուց (ըստ հուն. բնագրի, իսկ եբր. և սլավ. բնագրերում՝ դրախմ) և հինգ հազար մնաս արծաթից. բացի այդ, խոսվում է հազար դրախմ արժողությամբ քսան ոսկյա գավաթների մասին և հիշատակվում նաև «քսան հազար դահեկան» ոսկի, «երկու հազար երկու հարյուր մնաս արծաթ» և ևս՝ «երկու հազար մնաս արծաթ» (Բ Եզր. 2. 69; 8. 27, Նեեմի 7. 70–72): Հիմնվելով այս երկու աստվածաշունչ գրքերի վերոբերյալ տեղերի վրա՝ ոմանք

1 **Albright W. F.** Archaeology of Palestine. P. 143.

* Տես գրաբ. Աստվածաշունչ, 1997 թ. Բ Եզր. 2. 69 համարը՝«ոսկի դիդրաքմայս»: Երկդրամյանն ու դիդրաքման (դրախմ) նույն են:

ասում են, թե «մնասների», «երկդրամյանների» և «դահեկանների» գործածությունը հուշում է, որ այս գրքերն անհամեմատ ուշ, այն է՝ Ք. ա. 250–ականներին են գրվել, քանզի, ինչպես քննադատներն են պնդում, հունական մետաղադրամներն Ալեքսանդր Մեծի (Ք. ա. մոտ 330 թ.) նվաճումներից հետո են տարածվել: Սակայն 1931 թ. Բեթ – Զուրում (Երուսաղեմից մի քանի կմ հարավ) անցկացված պեղումների արդյունքում, երբ պարսից տիրապետության շրջանի (Ք. ա. 530–330 թթ.) շերտում վեց դրախմ գտնվեց, պարզ դարձավ, որ դրախմները Պաղեստինում հայտնի են եղել դեռևս պարսից ժամանակներից: Այսպիսով վեճերը տեղի տվեցին, քանզի Եզրասն ու Նեեմին լիովին կարող էին Ք. ա. 450 թ. երկդրամյաններից խոսել:

Սուրբ Գրքի ճշմարտացիությունը վավերացնող բոլոր այս փաստերը թույլ են տալիս նաև այն եզրակացությանը գալ, որ պարսիկները հրեաներին մեծ ինքնավարություն էին շնորհել, մինչև իսկ քահանայապետերը կարող էին ատտիկյան օրինակով հրեական դրամ հատել[1]:

Ք. Ա. V ԴԱՐՈՒՄ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՊՐՈՂ ՀՐԵԱՆԵՐԸ

Մինչ հրեաների՝ հունական գայիսոնի ներքո հայտնվելու ժամանակներին (այն բանից հետո, երբ Ալեքսանդր Մեծը պարսից պետության գոյության վերջը դրեց) անդրադառնալը, հարևանցի ծանոթանանք, թե ինչպես էին նրանք ապրում արտերկրում:

Ք. ա. V դարում այդպիսիք շատ էին. ոմանց հարկադրել էին լքել հայրենիքը, մյուսները կամովին էին հեռացել: Այդ հրեաներին առնչվող՝ հնագիտության ընձեռած տեղեկությունները մեծապես լուսաբանում են սրբազան բնագրերը և հաստատում դրանց պատմական արժանահավատությունը:

1 **Thompson J. A.** Op. cit. P. 206. **Keller W.** Ἡ Βίβλος… Σ. 434.

Թեկուզ վերցնենք աքսորյալ հրեաներին ուղղված Երեմիա մարգարեի հորդորն այն մասին, որ նրանք տներ կառուցեն, ապրեն այդ տներում, այգիներ տնկեն և ուտեն դրանց պտուղներից, բազմանան ու չնվազեն և հոգ տանեն այն երկրի բարգավաճման մասին, որտեղ ապրում են իբրև աքսորյալ (Երեմ. 29. 5–7): 1889 թ. հնամենի Նիպպուրում (Բաբելոնից հարավ) Փենսիլվանիա համալսարանի հնագիտական արշավախմբի պեղումներից 5,4x2,75մ մակերեսով մի սենյակում մեծաքանակ թրծակավե սալիկներ հայտնաբերվեցին: Այս՝ թվով յոթ հարյուր սալիկները, Արտաքսերքսես I–ի (Ք. ա. 465–424 թթ.) և Դարեհ II–ի (423–404 թթ.) գահակալության տարիներին են պատկանում, որոնց մեջ, սակայն, Արտաքսերքսես II–ի (Ք. ա. 423–400 թթ.) տիրակալության շրջանից մի սալիկ էլ կար: Այս սենյակը, որի մեջ հուսալիության համար ասֆալտով խցանված մեծ կավե անոթներում վերը նշված սալիկներն էին զետեղված, Մուրաշու հրեական վաճառական ընտանիքի արխիվը պարունակող գաղտնարանն էր: Այսօրվա լեզվով այն այսպես կկոչվեր. «Մուրաշուի տուն և որդիներ: Միջազգային բանկ: Ապահովագրում, վարձակալություն, վարկեր, անշարժ և շարժական գույքի վաճառք: Գտնվում է Նիպպուրում, իսկ բաժանմունքները՝ բոլոր քաղաքներում»: Այս հրեա ընտանիքը մեծ փութաջանությամբ հետևում էր Երեմիայի հորդորին, և այս եղանակով նրան հաջողվեց 150 տարվա ընթացքում մեծ ազդեցություն ունենալ բաբելացիների և հրեաների կյանքի վրա: Վաճառքի, վարձակալության, տոկոսով (20%) վարկերի զանազան փաստաթղթերը անգրագետ մարդիկ եղունգների դրոշմով էին վավերացնում: Նեեմիի գրքում խոսվում է վարկերի ծանր տոկոսների (20%), գրավի և հիփոթեքի մասին: Գրքում մասնավորապես ասված է. «Նրանք ասում էին. «Մեր որդիների և մեր դուստրերի կերակուրը վերջացավ, գնանք մի բան գնենք, որ ապրենք»: Իսկ ոմանք ասում էին. «Մեր դաշտերն ու այգիները գրավ դնենք, ցորեն առնենք և ուտենք»: Կային ոմանք, որ ասում էին. «Մեր ունեցվածքը ծախեցինք, ոսկի ու արծաթ առանք և տվեցինք թագավորի հարկը» (Նեեմ. 5. 2–4):

Այսպիսով «Մուրաշու և որդիներ» ընկերությունը հաստատեց Նեեմիի այս խոսքերը: Մեր տրամադրության տակ այդ նույն արխիվից բազմաթիվ անուններ, ստացականներ ու պայմանագրեր կան, որոնք վկայում են, որ այս հրեա բանկիրներն առևտրական հարաբերություններ են ունեցել պարսիկների, մարերի, քաղդեացիների, արամեացիների ու նաև, ինչը տվյալ դեպքում մեծ հետաքրքրություն է ներկայացնում, այն հրեաների հետ, ովքեր այդ ժամանակ ազատ քաղաքացիներ էին: Այդ նույն արխիվում զգալի քանակով հրեական անուններ էլ կան. խոսուն վկայություն է այն բանի, որ աքսորյալներից շատերը Պաղեստին չվերադարձան և Բաբելոնում մնալով՝ անշեղորեն հետևում էին Երեմիայի հորդորին: Հատուկ նշանակություն է ձեռք բերում այն փաստը, որ դրանց մեջ շատ տարածված էր Եսթերի գրքում հիշատակված Մուրթքե անունը[1]:

Եթե Նիպպուրի հրեաները հողագործությամբ և առևտրով էին զբաղվում, հրեաներով բնակեցված եգիպտական Էլեփանտին կղզին ռազմական և վարչական կետ էր: Էլեփանտինի արամերեն բնագրերում, որոնք մեր տրամադրության ներքո դրեց հնագիտությունը, խոսվում է Գեբ և Սուհեն ամրոցների մասին: Գեբ ամրոցը գտնվել է Նեղոսի նեղ կղզյակներից մեկի վրա՝ ժամանակակից Ասուանի դիմաց, իսկ Սուհենը՝ հենց Ասուանում: Սուհենը Եգիպտոսի հարավային սահմանն է համարվում: Սուրբ Գրքում հիշատակվում է «Մակդոդից մինչև Սուհեն» արտահայտությունը (Եզեկ. 29. 10 30. 6): Մակդոդը Սուեզի մոտ՝ հյուսիսային Եգիպտոսում է գտնվել: Այսպիսով Մակդոդից մինչև Սուհեն արտահայտությունը պետք է հասկանալ «Եգիպտոսի մի ծայրից մինչև մյուսը»:

1893 թ. Ասուան այցելելիս՝ ամերիկացի ճանապարհորդ Չարլզ Ուիլբուռնին հաջողվեց Նեղոսի առաջին շեմի (Կահիրեից մոտ 1080 կմ դեպի հարավ) մոտ գտնվող Էլեփանտին կղզում մի քանի արամերեն պապիրուսներ ձեռք բերել: 1904 թ. երկու անգլիացի ճանապարհորդներ՝ լեդի Սեսիլը և սըր Ռոբերտ Մոնդը, ուրիշ պապիրուսների տեր դարձան. ինչ–որ պապիրուսներ էլ ըն-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 213-215; Keller W. ‘Η Βίβλος… Σ. 402-404

կան գերմանացի գիտնականների ձեռքը: Մինչ 1914 թ. այս պապիրուսների բնագրերը մեծավ մասամբ հրապարակվեցին, ինչի շնորհիվ էլ ոչ քիչ տեղեկություններ ստացանք Ք. ա. 500–400 թթ. Էլեփանտինի հրեական գաղութի կյանքի մասին: Սույն պապիրուսները պայմանագրերի և նամակների, ունեցվածքի փոխանցման, պաշտոնական կամ մասնավոր փաստաթղթեր են[1]:

Ըստ Օլբրայթի՝ Էլեփանտինյան պապիրուսները գրվել են Ք. ա. 587 թ.–ից փոքր–ինչ ուշ՝ Պաղեստինից գաղթած հրեաների սերունդների ձեռամբ[2]: Նրանց Եգիպտոս փախչելու մասին վկայում են Երեմիայի գրքի եբրայական բնագրի 41–45 գլուխները (հուն. բնագրում՝ 48–51 գլուխները):

Այս պապիրուսներից տեղեկանում ենք, որ ունեցվածքի առքուվաճառքը կատարվում էր հենց այնպես, ինչպես նկարագրում է Երեմիա մարգարեն (Երեմ. 32. (հուն. 39) 8–14). այս ընթացակարգը բաբելացիներն էին սահմանել, իսկ պարսիկները՝ փոխառել: Այս պապիրուսներում հիշատակված է նաև Ռեում Բաալտիմը, այսինքն՝ Բ Եզրաս գրքի (4. 8) Ռեում խորհրդականը (ըստ եբր. բնագրի), որն այլ բարձրաստիճան անձանց հետ միասին թշնաբար էր տրամադրված Նեեմիի և նրա՝ Երուսաղեմի պարիսպները կառուցելու փորձերի նկատմամբ: Այս նույն բնագրերից տեղեկություններ ենք քաղում նաև այն բարձրաստիճան անձանց տիտղոսների մասին, ում պարսկերեն pekid էին անվանում, և ովքեր հիշատակվում են պարսկական բնագրերում և Սուրբ Գրքում (Եսթեր. 2. 3, Նեեմի 11. 9 և այլն): Ինչպես տիտղոսների, այնպես էլ որևիցե պարսկական գաղութի վերակացուների և դատավորների գործունեության մասին տեղեկությունները ոչ միայն մեզ համար լուսաբանում են այդ տարածքների կառավարման բնույթը, այլև, ինչպես գրում է պրոֆեսոր Թոմպսոնը, հարուստ նյութեր ընձեռում սրբազան բնագրերն ըմբռնելու համար: Այդ իսկ պատճառով մենք մշտապես համոզվում ենք, որ Սուրբ Գրքում ամեն անգամ

1 Սույն բնագրերի թարգմանությունները և ուսումնասիրությունները տես **Pritchard J. B.** Ancient Near Eastern Texts. Princeton,1955. P. 222 ff; **Kraeling E. G.** The Brooklyn Museum Aramaic Papyri. Yale, 1953; **Cowley A.** Aramaic Papyri of the Fifth Century B. C. Oxford, 1923.

2 **Albright W. F.** Recent Discoveries in Bible Lands// Young's Analytical Concordance to the Bible. N,Y.: Funk and Wagnalls Co., 20ed.,1936. P. 36.

գործածված է հենց այն տիտղոսը, որը որոշակի նշանակություն ուներ պարսիկների մոտ յուրաքանչյուր առանձին վերցրած դեպքում, ըստ որի էլ այն հիշատակվում էր[1]:

Ամենից գրավիչ բնագրերից մեկը Ք. ա. 408/407 թթ. Հուդայի կուսակալին հղած նամակն է, որում Գեբ ամրոցի հրեաներն Էլեփանտին կղզում տաճար կառուցելու թույլտվություն էին խնդրում: Այս նամակը թույլ է տալիս բավականաչափ ստույգ պատկերացնել այն ժամանակվա Պաղեստինի կյանքը: Այդ նույն պապիրուսում հիշատակված է նաև Նեեմիի թշնամի Սանաբալատի (Նեեմի 2. 10 և հաջորդ համարները) ու նրա երկու որդիների անունները, որոնց մասին մենք արդեն խոսել ենք: Հավելումն սրա՝ այս պապիրուսը լուծեց Նեեմիի կյանքի թվագրության հարցը. նրա գործունեությունը վերագրվում է Արտաքսերքսես I–ի ժամանակներին: Սույն նամակում հիշատակվում է քահանայապետ Հովնանի անունը, ով հաջորդեց Ելիասիբ քահանայապետին, ինչպես հաղորդվում է Սուրբ Գրքում (Նեեմի 12. 22,10,11): Բացի այդ, հրեա պատմիչ Հովսեպոսը հիշատակում է ոմն պարսիկ զորահրամանատարի, ում անունը Վաղոսիս էր, և Հովհան անունով ոմն քահանայապետի[2]: «Վաղոսիս» անունը հոլովված է նաև վերոհիշյալ նամակում: Այսպես ուրեմն՝ այս բոլոր տվյալների հիման վրա եզրակացնում ենք, որ Նեեմին ապրել է Ք. ա. 407 թ.: Եվ քանի որ նա Երուսաղեմ է եկել Արտաքսերքսեսի գահակալության քսաներորդ տարում, իսկ Արտաքսերքսեսը թագավորել է Ք. ա. 465–ից մինչև 425–ը, ապա ստացվում է, որ Նեեմին Երուսաղեմ է եկել Ք. ա. 445/444 թթ.: Այսպես՝ հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնը գրում է. «Պաղեստինից հարյուրավոր մղոններ հեռու գտնվող Եգիպտոսում հայտնաբերված մի քանի արամերեն պապիրուսներ զարմանալիորեն օգնում են մեզ ստույգ թվագրել Սուրբ Գրքում հիշատակված անձի գործունեության ժամանակը»[3]:

Թեև Ք. ա. V դարի վերջը հրեական պատմության չլուսաբանված շրջաններից է, այդուհանդերձ, հնագիտության շնորհիվ որո-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 218-219.
2 **Հովսեպոս Փլաբիոս,** Հրեական հնախոսությունը, XI,7,1(297).
3 **Thompson J. A.** Op. cit. P. 225.

շակի տեղեկություններ ունենք այդ ժամանակների վերաբերյալ: Այսպես, 1962 թ. գիտնականների ձեռքն ընկավ Սամարիայի պապիրուսների մի մեծ հավաքածու, որը լուսաբանեց 40–ամյա մի շրջան՝ Ք. ա. 375–ից մինչև 335 թվականը: Եվ չնայած որ այդ պապիրուսների բովանդակությունը Թոմպսոնի բնութագրությամբ «սուղ է և տարտամ», այնուամենայնիվ, «դրանք Պաղեստինի պատմության դեռևս մութ այդ շրջանի մասին շատ անհրաժեշտ տեղեկություններ են պարունակում: Իրոք, չկա մեկ այլ այդքան քիչ ուսումնասիրված շրջան, ինչպես Ք. ա. IV դարն է: Այդ պապիրուսներն այսօրվա դրությամբ (Սամարիայի) մի շարք կուսակալների անուններ են տալիս, զորօրինակ՝ Սանաբալատ I, Սանաբալատի որդի Դելայահ՝ Սանաբալատ II, Սանաբալատ II–ի որդի Անանիա և Սանաբալատ III»[1]:

Ինչ վերաբերում է Ք. ա. IV դարին, ապա այս շրջանը դիտարկելիս՝ հայացքներն ուղղվում են առավելապես մակեդոնացի զորահրամանատար Ալեքսանդր Մեծին:

ՏՅՈՒՐՈՍԻ ԱՎԵՐՈՒՄԸ

Զափազանց հետաքրքիր, ինչ–որ չափով սարսափազդու է Ք. ա. 332 թ. Տյուրոս քաղաքի կործանման մասին պատմությունը, ինչը հաստատում է, որ Տերը հավատարիմ է Իր խոսքի կատարմանը:

Ավելի քան 250 տարի առաջ Եզեկիել մարգարեն ցնցող պարզությամբ և ապշեցուցիչ ճշգրտությամբ կանխասել էր այդ ամենը: «Ահա Ես քո դեմ եմ, Տյուրոս, քո դեմ եմ դուրս բերելու բազում ազգերի, ինչպես որ ծովը դուրս է գալիս իր ալիքներով: Նրանք կործանելու են Տյուրոսի պարիսպները, կործանելու են նրա աշտարակները: Հողն էլ հոսեցնելու են նրա վրայից ու այն դարձնելու են լերկ ապառաժ: Ծովի մեջտեղում նա լինելու է ուռկաններ գցելու տեղ, որովհետև Ես խոսեցի»,– ասում է Տեր Աստված...:

1 **Thompson J. A.** Op. cit. P. 225; **Kraeling E. G.** Op. cit. P. 120.

«Ավերելու են (թշնամիները) ամրոցներդ, կողոպտելու՝ ունեցվածքդ, ինչքդ, կործանելու են պարիսպներդ, տապալելու՝ ցանկալի ապարանքներդ, ծովն են թափելու քարերդ, փայտերդ ու հողդ... Քեզ լերկ ժայռաստանի եմ վերածելու, և լինելու ես ուռկաններ գցելու տեղ...» (Եզեկ. 26. 3–5,12,14):

Երրորդ տողի մարգարեությունը կատարվեց ոչ շատ տարիներ անց. Նաբուգոդոնոսորի (Ք. ա. 605–562 թթ.) զորքը Տյուրոսի վրա սլացավ, պաշարեց քաղաքը և տասներեք տարի (Ք. ա. 585–573 թթ.) հնազանդեցրեց իրեն: Սակայն քաղաքը հանձնվելուց առաջ նրա բնակիչներն իրենց ունեցվածքով տեղափոխվեցին Տյուրոսի դիմաց՝ 900 մ հեռավորության վրա գտնվող կղզի: Նաբուգոդոնոսորը գրավեց ցամաքային Տյուրոսը: Այդ քաղաքը հիմնահատակ ավերվեց, սակայն կղզու վրա կառուցված նոր քաղաքը շարունակեց բարգավաճել ու ծաղկել մինչ Ալեքսանդր Մեծի՝ (Ք. ա. 333–332 թթ.) Միջերկրականի այդ շրջանում հայտնվելը:

Ալեքսանդրի՝ Տյուրոսի վրա հարձակմամբ իրականացան նաև Եզեկիելի գրքի 26–րդ գլխի մարգարեության մյուս համարները: Ալեքսանդրի օրով ծովային Տյուրոսի պաշարման նախապատրաստությունը տևեց յոթ ամիս: Քաղաքը գրավելու համար մակեդոնացի զորապետը ցամաքը կղզու հետ միացնող լիրք (ամբարտակ, ծովապատնեշ) գցեց: Ամբարտակ կառուցելու համար լիբանանյան փայտանյութ ու հինավուրց քաղաքի փլատակներն օգտագործվեցին: Սակայն քանի որ շինարարական աշխատանքներ անցկացնելուն սաստիկ խոչընդոտում էին Տյուրոսի նավատորմիղն ու կղզու պարիսպների ետևում պատսպարված տյուրոսցիների հարձակումները, Ալեքսանդրը վճռեց համապատասխան նավատորմիղ ստեղծել իր համար: Արդարև, Բիբլոսի, Արադի և Կիպրոսի (Կիպրոսից 120 նավ) թագավորներն Ալեքսանդրի տրամադրությանը հանձնեցին իրենց նավատորմիղները: Այսպիսով թվով 220 նավից բաղկացած նավատորմիղի աջակցությամբ, որը բայց և այնպես տյուրոսյան նավատորմից փոքր էր, Ալեքսանդրն ավարտեց ամբարտակի կառուցումն ու խորտակեց հակառակորդի նավերի մի մասը: Այդժամ նա ամբարտակի վրա-

յով մեծ պաշարողական սարքեր անցկացրեց, որոնցից յուրաքանչյուրը 50 մ բարձրություն ուներ և քսանհարկանի էր: Քաղաքի պարիսպներից ավելի բարձր այս սարքերի միջոցով էլ հաջողվեց գրավել Տյուրոսը: Գերյալ բնակիչներին (ըստ Արիանոսի՝13 000 և 30 000՝ ըստ Դիոդորոսի) ստրկության վաճառեցին[1]:

Ալեքսանդր Մակեդոնացի (արձանի գլուխ Պերգամոնից, Ք. ա. II դարի կես): Կոստանդնուպոլիս, Հնագիտական թանգարան:

Այսպիսով Եզեկիելի մարգարեությունն այն մասին, որ քաղաքի քարերը, ծառերն ու հողը ծովը կթափվեն, ի կատար ածվեց ապշեցուցիչ ճշգրտությամբ. չէ՞ որ Ալեքսանդր Մեծը, ինչպես արդեն նշել ենք, ամբարտակ կառուցելիս իբրև շինանյութ հին քաղաքի ավերակներն օգտագործեց, որոնք ծովն էին լցվում[2]: Այս ամենից հետո հին քաղաքից միայն լերկ ապառաժներ մնացին, որոնց վրա ձկնորսները ուռկաններ էին փռում ու չորացնում: Միով բանիվ, սա մարգարեության «կատարման օրինակ է՝ նույնիսկ մանրուքներում անհավատալիորեն ճշգրիտ»[3]:

ԵՍԹԵՐԻ ԳԻՐՔԸ

Եսթերը հինկտակարանյան ոչ մեծ գիրք է Քսերքսես I–ի օրոք (Ք. ա. 486–465 թթ.) տեղի ունեցած դեպքերի մասին, ում Հին Կտակարանը Ասսուիր* (Ախաշվերոշ) է անվանում: Եսթերը շատ «բարդ» գիրք է այն առումով, որ մեծավ մասամբ հնարավոր չէ գրքում հիշատակված անձանց մասին որևիցե տեղեկություն գտնել, եթե նկատի ունենանք ոչ սուրբգրային աղբյուրները: Գրքում հիշատակված անձանց՝ Ասթինե թագուհու, Համանի և Մուրթքեի մասին վկայող ոչ սուրբգրային բնագրեր

1 **Rogers R. W.** Op. cit. P. 300.
2 **Free J. P.** Op. cit. P. 263. -264.
3 **Jauncey J.** Science Returnes to God. P. 93.
* Հայերեն բնագրում՝ Արտաշես:

չկան, բացառությամբ Հովսեպոս Փլաբիոսի աշխատասիրության: Սակայն պեղումները, ինչպես նաև ընդհանուր պատմության այլ նյութերը ցույց են տալիս, որ աստվածաշունչ այս գրքի սրբազան հեղինակը քաջատեղյակ է անցուդարձին և այդ ժամանակներին հատկորոշ մանրամասնություններին:

Քսերքսես I–ը (Ասուիր) պատմական անձ է: Գրքում տրված նրա բնութագիրը՝ հատկապես այն, որ նա հեշտասեր էր, լիովին համահունչ է Հերոդոտոսի կողմից իր «Պատմության» մեջ տրված նրա նկարագրին: Քսերքսեսը Պերսեպոլիսում ընդարձակեց և ավարտին հասցրեց իր կանանոցի համար նախատեսված կառույցը, ինչպես այդ մասին վկայում են պեղածոները[1]: Հայտնի են նաև նրա զազրելի արյունապիղծ կապերը[2]:

Բացի այդ, նրա ապարանքի կահավորանքի նկարագրությունը՝ թանկարժեք վրանները, գույնզգույն վարագույրները, ոսկյա և արծաթյա գահավորակները, միանգամայն համապատասխանում է այն պերճամոլ ցուցադրական ճոխությանը, որով զարդարվում էին պարսից պալատները: Դարեհի և Քսերքսես I–ի (Ասուիր) ոստան Սուսայում կատարված պեղումները չափազանց հարուստ նյութեր հայթայթեցին, որոնք հաստատեցին պալատի պատերի և այլնի հարդարանքի ճոխությունն ու շքեղությունը[3]: Պալատը 10 117 քառ. մ մակերես էր զբաղեցնում, ուր կային 72 սյուներից բաղկացած դահլիճ, կանանոց, արքունի գանձարան և այլն: Հարկ է հիշատակել նաև հոյաշեն գահադահլիճը, որը 36 մատնեքավոր[4] սյուներով էր զարդարված, որոնցից յուրաքաչյուրը մոտ 20 մ բարձրություն ուներ.

Սուսայում Դարեհ I -ի պալատի սյան խոյակը (Ք. ա. մոտ 500 թ.): Փարիզ, Լուվր:

1 **Olmstead A. T.** History of the Persian Empire. Ch. 20.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 194.
3 **Olmstead A. T**. Op. cit. P. 166-171; **Ghirshman R.** Iran. L.,1954. P. 165-167.
4 Մատնեք - Երկայնակի ակոսիկ սյան վրա - *խմբ.*:

սրանք տանիքը պահելու համար նախատեսված լիբանանյան մայրու փայտից պատրաստված հենարաններ էին: Սյուների խոյակները պսակված էին ցուլի գլխի, մասամբ և իրանի քանդակե կերտվածքներով: Պատերի քիվերն ու դահլիճի ներքին մասի ծոփորները զարդարված էին վարդ պատկերող գույնզգույն հախճասալիկներով և այլն[1]: Հնագետները չափազանց գունեղ են նկարագրում այս պալատը, որի շինարարությունն սկիզբ է առել Դարեհ I–ի օրոք: Նրանք բոլորն էլ ընդգծում են, որ պալատը կառուցվել է փայտանյութի լավագույն տեսակներից, զարդարվել ոսկով, արծաթով և թանկարժեք ակներով ու եբենոսյան սևափայտով. շինարարական աշխատանքների մեջ ներգրավվել են ողջ թագավորության վարպետները[2]: Քսերքսեսի ժամանակների Սուսա քաղաքի պալատի գտածոներն այնքան շատ ու տպավորիչ էին, որ փարիզյան Լուվրն այդ գանձերի ցուցադրության համար երկու վիթխարի դահլիճ հատկացրեց[3]:

Եսթերի պատմությունը դյուրությամբ թվագրվում է Քսերքսեսի գահակալության տարիներով, քանի որ նա քսանմեկ տարի է գահակալել. իսկ այդ գրքի անցքերը դուրս չեն գալիս նրա գահակալության 12–րդ, հնարավոր է նաև 13–րդ տարվա ժամանակագրական շրջանակից (Եսթ. 3. 7,12): Երրորդ տարում Քսերքսեսի կազմակերպած խնջույքը հավանաբար համընկնում է նախքան Հունաստան ներխուժելը հրավիրած մեծ խորհրդի հետ, իսկ նախքան Եսթերի թագուհի դառնալը, անցած չորս տարիները լիովին կարող էին համապատասխանել այն ժամանակահատվածին, երբ Քսերքսեսը Հունաստանում լինելով՝ բացակայում էր (Ես թ. 1. 3 2. 16), ինչպես այդ մասին հայտնում է Հերոդոտոսը:

Ըստ Եսթեր գրքի բոլոր մեկնիչների՝ գրքում տեղ գտած շատ սովորույթներ ու բարքեր լիովին համապատասխանում են պարսից իրականությանը: Զորօրինակ՝ խնջույքի նախապատրաստությունն ու դրա պերճությունը (1. 6–8), պալատականների՝ թագավորի առաջ երկրպագությունը (3. 2), բարենպաստ և անբարեն-

1 **Price I. M.** The Dramatic Story of Old Testament History. N. Y.: Revell, 2 nd ed., 1935. P. 387.
2 **Ghirshman R.** Op. cit. P. 165 ff.
3 **Price I. M.** The Monuments and the Old Testament. P. 39.

պաստ օրերի մասին սնոտիապաշտական պատկերացումները (3. 7), սգավորների՝ արքունիք մտնելու արգելքը (4. 2), կախաղանը՝ իբրև պատժի առավելագույն չափ (5. 14), արքայի սիրելիին արքայական հանդերձներ շնորհելը (6. 8–9), թագավորական հրովարտակներով սուրհանդակներ («կնիգոնոշ») ուղարկելը (3. 13 8. 10). այս ամենը այն ժամանակների պարսից սովորույթներից են, որոնք մեր օրերում քաջ հայտնի են պեղումներից բացված գրավոր հուշարձանների շնորհիվ: Սրանից զատ Եսթերի գրքում հանդիպում են հիմնականում առօրյա վարչական և առևտրական բնույթի բազմաթիվ պարսկական բառեր: Ըստ հնագիտության պրոֆեսոր Ջոզեֆ Ֆրիի՝ բոլոր այս փաստերը վկայում են պարսկական կյանքին ու բարքերին Եսթեր գրքի հեղինակի քաջածանոթության մասին: Իհարկե, որոշ անձանց վերաբերող տեղեկությունների բացատրության և ճշգրտման ժամանակ դեռ կարող են դժվարություններ առաջանալ, սակայն կարելի է հուսալ, որ լրացուցիչ հնագիտական նյութեր կհայթայթվեն, որոնք կլուսաբանեն շատ անցքեր՝ ի հայտ բերելով դրանց պատմականությունը[1]:

Եսթերի գրքի 2–10 գլուխներում բերված փաստերը համընկնում են Ք. ա. 479 թվից հետո Քսերքսեսի կյանքի շրջանին, երբ նա Պլատեայի ճակատամարտում պարտվելուց հետո վերադարձել էր[2]: Այս շրջանում Եսթերը Պարսկաստանի թագուհի դարձավ և, հետևաբար, ի վիճակի էր իր ժողովրդին՝ հրեաներին փրկել Համանի լարած որոգայթներից, որը մինչ այդ արքային հորդորում էր բնաջնջել հրեաներին (3. 8, 9, 13):

1 **Thompson J. A.** Op. cit. P. 195-196.
2 **Price I. M.** The Dramatic Story of Old Testament History. P. 388.

ՊՏՂՈՄԵՅԱՆՆԵՐԸ: ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՐԵՆԻ

Ք. ա. V դարից ծայր է առնում Պարսից տիրապետության անկումն ու մայրամուտն Արևելքում. հույներն էլ ավելի ազդեցիկ են դառնում, սակայն նրանց հզորությունն իր գագաթնակետին կհասնի Ալեքսանդր Մեծի օրոք:

Ալեքսանդր Մեծը ծնվել է Ք. ա. 356 թ.: Քսան տարեկանում ժառանգում է դավաճանաբար սպանված իր հոր գահը: 331 թ.–ից ի վեր այս երիտասարդ մակեդոնացին արդեն Արևելքի տերն էր: Սակայն 323 թ. Բաբելոնում վաղաժամ մահը ընդհատեց 33–ամյա զորավարի գործունեությունը: Մինչև Հիմալայների ստորոտ ընդարձակված նրա անծայրածիր կայսրությունը գրեթե մի ակնթարթում փլուզվեց:

Նրա դիադոքոսները (հաջորդները – *խմբ.*) և հետևորդները այդ լայնածավալ կայսրությունը տրոհեցին Մակեդոնյան (հյուսիսային Հունաստանը ներառյալ), Սելևկյանների (Թրակիայից

Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհ III -ի միջև Իսոսում տեղի ունեցած ճակատամարտը պատկերող խճանկար (Ք. ա. II դար): Նեապոլ, Ազգային թանգարան:

Ա. Մակեդոնացու մարմարե քարադագաղը (Ք. ա. մոտ 320 թ.): Կոստանդնուպոլիս, Օսմանյան թանգարան:

մինչև Հնդկաստանի սահմանները) և Պտղոմեյանների (Նեղոսի ափին) թագավորությունների: Պտղոմեյաններից Հրեաստանի կախյալ վիճակն ավելի քան հարյուր տարի տևեց, սակայն հետագայում Սելևկյաններին հաջողվեց ընդարձակվել հարավում, իսկ Անտիոքոս III Մեծը (Ք. ա. 223–187 թթ.) Ք. ա. 198 թ. նվաճեց Պաղեստինը: Դանիել մարգարեի գրքի 11–րդ գլուխը ծածուկ կանխասացություններ է բովանդակում այս դեպքերի մասին:

Մեր տրամադրության ներքո Պտղոմեյան շրջանին վերաբերող մեծածավալ հնագիտական նյութեր կան, որոնք զգալիորեն պարզաբանում են Աստվածաշնչի համապատասխան տեղիները: Հրեաների դրացիների վերաբերյալ էլ նյութեր կան, որոնք քաղում ենք Պտղոմեոս II–ի գահակալության շրջանում ապրած ոմն բարձրաստիճան այրի՝ Զենոնի արխիվից («Զենոնի պապիրուսներ»): Այդ նույն աղբյուրն ընդարձակ տեղեկություններ է հաղորդում նաև այժմյան Հորդանանի տարածքում տեղի ունեցած անցուդարձի մասին[1]:

Ավելին, Ք. ա. III դարով թվագրվող երկու եբրայա–արամեական պապիրուսներն ու Վերին Եգիպտոսի Էդֆուից և Զավիաթ–ալ–Մայթին տեղանքից երևան հանված ութ խեցեբեկորները նույնպես վկայում են Եգիպոսում հրեաների ներկայության մասին: Գոյություն ունեն նաև հնամենի ալեքսանդրյան գերեզմանների տապանագրեր ու Ալեքսանդրիայի շրջակայքից գտնված մետաղադրամների մակագրություններ: Գրություններում հանդիպող անունները հիմնականում սուրբգրային, արամեական և հունական ծագման են[2]:

1 **Thompson J. A.** Op. cit. P. 233.
2 **Albright W. F.** From the Stone Age to Christianity…P. 349.

Պտղոմեոս II Փիլադելփոսը (Ք. ա. 285–246 թթ.) իր գահակալության տարիներին թիկնազորի պետին՝ Արիստեոս Ալեքսանդրացուն ուղարկում է Երուսաղեմ՝ Եղիազար քահանայապետի մոտ՝ նրանից Հին Կտակարանի Հնգամատյանի բնագիրն ստանալու խնդրանքով, որպեսզի այն հունարենի թարգմանվի: Այս մասին հաղորդում է ինքը՝ Արիստեոսը, ըստ որի՝ հրեա քահանայապետը թարգմանության համար բնագրի հետ նաև 72 իմաստուն դպիր ուղարկեց, ովքեր նաև բանասերներ էին: Հարկ է նշել, որ հրեա պատմիչ Հովսեպոս Փլաբիոսն ընդունում է Արիստեոսյան բնագրի («Արիստեոսյան նամակի») պատմականությունը[1]:

Հին Կտակարանի թարգմանությունը միանգամայն անխուսափելի էր, քանզի հունարեն լեզուն ու դպրությունն Ալեքսանդր Մեծի նվաճումների արդյունքում տարածվել էին ողջ օյկումենայով՝ աշխարհի բնակելի տարածքով: Այն օրերին Եգիպտոսում շուրջ մեկ միլիոն հրեա էր ապրում, որոնց մայրենի լեզուն հունարենն էր: Պտղոմեոս I Սոտերիոսի (Ք. ա. 323–285 թթ.) կողմից կառուցված 180 մ բարձրություն ունեցող Ալեքսանդրյան փարոսի՝ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկի հովանու ներքո՝ Ալեքսանդրիայի մոտ գտնվող Փարոս կղզում, թարգմանիչները ձեռնամուխ եղան օրենսդրական գրքերի (Հնգամատյանի) թարգմանությանը: Ըստ Արիստեոսի՝ 72 թարգմանիչներն առանձնաբար էին աշխատում: Իսկ երբ ավարտեցին աշխատանքը և համեմատեցին թարգմանությունները, տեսան, որ բնագրերը բացարձակապես նույնական են: Հաջորդ հարյուր տարվա ընթացքում հունարենի թարգմանվեցին Հին Կտակարանի նաև մյուս բոլոր գրքերը: Ք. ա. մոտ 132 թ. ոչ միայն Հնգամատյանը (Օրենքի գրքերը), այլև Մարգարեներն ու այսպես կոչված Գրվածքները,

Պտղոմեոս II Փիլադելփոս՝ Եգիպտոսի արքա Ք. ա. 285-246 թթ.: Արձանի գլուխ, Նեապոլ:

1 **Հովսեպոս Փլաբիոս**, Հրեական հնախոսությունը, XII,2, 5, 6,11,12(50,53,86,100).

այսինքն՝ Հին Կտակարանի բոլոր գրքերն արդեն թարգմանված էին և օգտագործվում էին հելլենացած հրեաների կողմից: Հրեա պատմագիր Էվպոլիմը Ք. ա. II դ. կեսերին օգտվում էր Մնացորդաց գրքերի հունարեն թարգմանությունից, իսկ պատմիչ Արիստեոսը Ք. ա. I դարի սկզբում՝ Հոբի գրքի թարգմանությունից: Այս թարգմանությունը կոչվեց Յոթանասնից՝ ըստ աշխատանքին լծված թարգմանիչների թվի և ցայսօր էլ այդպես է կոչվում[1]: Իսկ եթե ավելի ստույգ լինենք, ապա թարգմանիչները 72–ն էին, սակայն հարմարության համար այդ թիվը կրճատվեց ու կլորացվեց՝ դառնալով «Յոթանասնից թարգմանություն»:

Հունարեն Յոթանասնիցը վաղագույնն է Հին Կտակարանի եբրայերեն բնագրից այլ լեզուների թարգմանության պատմության մեջ: Ք. ա. II դարի կեսերին այն իրենից ամբողջական Սուրբ Գիրք էր ներկայացնում, որը աշխարհով մեկ սփռված հելլենացած հրեությունն ըստ ամենայնի ընդունում էր սրբազան սկզբնագիր–աղբյուրին հավասար, ինչպես վկայում է հրեա պատմիչ Փիլոնը: Նա անձամբ օգտվել է բացառապես այդ թարգմանությունից և այն աստվածաշունչ համարել՝ յոթանասուն թարգմանիչներին «մարգարեներ և մեծ գիտակներ» անվանելով: Հրեա պատմիչ Հովսեպոսից տեղեկանում ենք, որ այս թարգմանությունը կենցաղավարել է նաև Պաղեստինում: Բացի այդ, հայտնի է, որ հրեա–քրիստոնյաները Հին Կտակարանի Յոթանասնից թարգմանությունը Եկեղեցու ընկալյալ բնագիրը դարձրին: «Թեպետ մեր տրամադրության տակ այն ժամանակվա Յոթանասնից թարգմանության որևէ հարազատ ձեռագիր չկա,– գրում է հնագետ Թոմպսոնը,– սակայն բացարձակապես պարզ է, որ Օրենքը թարգմանվել է Ք. ա. 300–250 թվականների միջև»[2]: Յոթանասնից թարգմանության մանրազնինության մասին երախտավոր պրոֆեսոր Պ. Ի. Բրացիոտիսը գրել է. «Քրիստոնեական Եկեղեցին այս թարգմանությունը ժառանգեց սինագոգից և առաքյալների օրինակով դարերի ընթացքում օգտվում էր նրանից, իսկ նրա որոշ մասերից օգտվում են նաև առ այսօր՝ իբրև պաշտոնական

1 Յոթանասնիցի թարգմանության մասին առավել հանգամանալից տես **Μπρατσιώτης Π. Ι.** Εἰσαγωγὴ εἰς τὴν Παλαιὰν Διαθήκην. Ἀθῆναι,1975. Σ. 548-556.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 234.

Աստվածաշունչ (...): Վաղուց ի վեր Մի, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական Եկեղեցին այս թարգմանության մեջ Աստվածային նախախնամության ձեռքն է տեսնում՝ ըստ Եվսեբիոսի՝ այն աստվածային տնօրինության գործ նկատելով: Այս թարգմանությունը մեծ հարգանք է վայելում նաև Հռոմեական կաթոլիկ եկեղեցում»[1]:

Եգիպտոսում հայտնաբերված այդ ժամանակներին վերագրվող մեկ այլ գտածո էլ կա՝ այսպես կոչված «Նաշ (Nash) պապիրուսը», որը եբրայերեն լեզվով գրված տաս պատվիրաններ բովանդակող մի փոքրիկ պատառիկ է[2]: Սա վկայում է այն մասին, որ Ք. ա. III դարում Եգիպտոսում դեռևս ապրում էին եբրայերեն կարդալ իմացող որոշ հրեաներ:

Բացի այդ, պեղումների շնորհիվ լույս աշխարհ եկած այդ ժամանակաշրջանի մետաղադրամներն ու անոթները հունական ներկայության մասին են վկայում: Հուդայի հարավ–արևմուտքում (Հին Կտակարանի Մարեսա քաղաքում, ժամանակակից Թելլ–Սանդա–Հաննան) որմնանկարներով դամբարաններ գտնվեցին: Մակագրությունները հունական, փյունիկյան և եդոմական անուններ են պարունակում: Սա շատ կարևոր վայր է, քանի որ Պտղոմեոս II–ն այստեղ սիդոնացիների գաղութ էր հիմնել՝ Ապոլլոֆանոսի գլխավորությամբ, որի դամբարանի տապանագիրը պահպանվել է: Դամբարանները զարդարված են վայրի բնության հրաշագեղ գունավոր տեսարաններով: Դրանցից մեկի վրա կանթեղների շարքեր են պատկերված, որոնք, ըստ հնագետ Օլբրայթի՝ Սողոմոնի Տաճարի երկու մեծ արտաքին սյուների մասին տեղեկությունների հուսալի աղբյուր են[3]: Մարեսայի ավերակնե-

1 **Μπρατσιώτης Π. Ι.** Εἰσαγωγὴ…Σ. 561-562 Հարկ է նշել, որ Յոթանասնիցի բնագիրը 1200 տարով հին է այսպես կոչված մասորեթյան բնագրից, որը Հին Կտակարանի միակ հայտնի եբրայական բնագիրն է: Մասորեթյան բնագիրը մասորեթների՝ հրեա բանասերների աշխատանքի արգասիքն է, ովքեր փորձում էին, ինչպես իրենք էին ասում, «պահպանել» և «ավանդել» «աղավաղումներից» սրբագրված Սուրբ Գրքի սրբազան բնագիրը:

Սակայն, ցավոք սրտի, պարզվեց, որ ժամանակի հոլովույթը չէ, որ աղավաղում է բնագիրը: Նշենք, որ Սուրբ Գրքի մասորեթյան բնագրի գոյություն ունեցող հնագույն ձեռագիր մատյանը Կահիրեի սինագոգի ձեռագիրն է, որը թվագրվում է Ք. հ. 895 թվականով և բովանդակում է միայն Մարգարեների գիրքը: Մյուս բոլոր մասորեթյան հրեական ձեռագրերը ուշ շրջանի են և թվագրվում են X-XIV դարերով:

2 **Albright W. F.** Op. cit. P. 345,350.

3 **Albright W. F.** Archaeology and the Religion of Israel…P. 144-146. Մջբ. ըստ **Thompson J. A.** Op. cit. P. 235.

ը, հավասարապես նաև տապանաքարերի մասին նյութերը, Ք. ա. III դ. այդ շրջանի կատարյալ հելլենականացման խոսուն վկայություններն են, հանգամանք, որը հաջորդ դարում Մակաբայեցիների ապստամբության պատճառ կդառնա:

Վերջապես, Երուսաղեմից հյուսիս ընկած Բեթել քաղաքում (ժամանակակից Թելլ–ան–Նասբ) և Սյուքեմում հելլենիստական շրջանի մեծաքանակ մետաղյա դրամներ հայտնաբերվեցին, ինչը Պտղոմեյանների իշխանության և ազդեցության մասին է վկայում:

Թեև Պտղոմեյանների օրոք հրեաները մեծավ մասամբ խաղաղություն ու բարօրություն էին վայելում (նրանք Եգիպտոսում գրեթե բոլոր իրենց համայնքներում սինագոգեր կառուցեցին, իսկ Ալեքսանդրիան ժամանակի ընթացքում հրեության կարևոր կենտրոն դարձավ), սակայն իրավիճակը փոխվեց, երբ Սելևկյանները նվաճեցին Պաղեստինը:

ՍԵԼԵՎԿՅԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՆԵՐԸ

Սելևկյանների արքա Անտիոքոս IV Եպիփանը (Ք. ա. 175–163 թթ.) հալածում էր հրեաներին: Եվ քանի որ բռնի ուժով կամենում էր իր երկրում կրոնական միասնություն հաստատել, որպեսզի այդ եղանակով հասնի նաև իր բոլոր հպատակների քաղաքական միասնությանը, ուստի վճռեց հրեական կրոնը արմատախիլ անել, իսկ իրենց՝ հրեաներին, հելլենականացնել: Հին Կտակարանի Մակաբայեցիների առաջին և երկրորդ գրքում պատմվում է նրա ձեռնարկած գործողությունների (հրեաների հալածանք, Տաճարի պղծում, հրեաներին կուռքեր պաշտելու հարկադրում, սրբազան բնագրերի ոչնչացում) և հրեաների կողմից դրանց դիմակայելու մասին: Ամեն ինչ սկսվեց Մոդիում նախանձախնդիր քահանա Մատաթիայի քաջարի ընդվզումից (Ա Մակ. 2. 1–70), որը շարունակեցին նրա որդիներ Հուդան, Հովնաթանն ու Շմավոնը, քանզի բարեպաշտ Մատաթիան կտակեց նրանց շարունակել պայքարը: Մակաբայեցիների (ըստ գերիշխող մի տեսակետի՝ «մակաբայեցի» բառը եբրայական «մակկաբ» բա-

Սելևկոս Ի՝ Ասորիքի արքա Ք. ա. 312-281 թթ.՝ Սելևկյան հարստության հիմադիր:

Անտիոքոս Ի Սոտեր, Ասորիքի արքա Ք. ա. 281-261 թթ., հարստության հիմադիր Սելևկոս Ի-ի որդին:

ռից է ածանցվել, որը թարգմանաբար «մուրճ» է նշանակում) կամ Հասմոնյանների, ինչպես նրանց անվանում է իրենց նախնու՝ Մատաթիայի հոր անունով հրեա պատմիչ Հովսեպոսը, ապստամբությունը պատմության ամենից հերոսական էջերից է: Մատաթիայի ավագ որդին՝ Հուդան՝ զորավարական տաղանդով օժտված այս այրը, վերջիվերջո հոգևոր և աշխարհիկ իշխանությունն իր ձեռքն առավ: Այսպիսով նրանից է սերում Հասմոնյան քահանայապետ–իշխանների շարքը, որը շուրջ հարյուր տարի կառավարում էր անկախ Հրեաստանը (Ք. ա. 165–63 թթ.), այսինքն՝ ընդհուպ մինչև հռոմեացի Պոմպեոսի կողմից Պաղեստինի նվաճումը:

Հնագիտական հետազոտությունները բավական լավ են լուսաբանել այս ժամանակաշրջանի անցուդարձը: Հնագիտությունն իր տեղեկությունները քաղում է իրենց պատմական հուշարձաններով հայտնի զանազան շրջաններից, որոնց մեջ հատկապես աչքի են ընկնում Բեթսուրան, Սամարիան, Մարեսան և Գազերը: Նվաճված ժողովուրդներին հելլենականացնելու նպատակով հույներն իրենց ենթակա տարածքներում քաղաքներ էին հիմնում: Պաղեստինի բազում քաղաքներ վերաբնակեցվեցին. դրանցում հույն գաղութաբնակներ հաստատվեցին: Այսպես օրինակ՝ Սամարիայի բնակչությունը մակեդոնացիներից էր կազմված, ծովափնյա քաղաքներ Գազան, Ասկաղոնը, Կեսարիան և Պտղոմայիդան հունական դարձան: Եվ ինչպես Հորդանան գետի արևելքում հելլենականացված քաղաքները, այնպես էլ լեռնային շրջաններում որոշ տարածքներ (Բեթ–Սանը՝ նույն ինքը Սկյու-

Անտիոքոս IV: Նեապոլ, Ազգային թանգարան:

թոպոլիսը, Գազերն ու արդեն հիշատակված Սամարիան) հունական դարձան: Պտղոմեյաններն այդպիսի բուռն գործունեություն արդեն ծավալել էին Հորդանանում. Ամմանը նրանք վերանվանել էին Փիլադելփիայի:

Ք. ա. III դարի մի արձանագրություն (Հորդանանի կենտրոնական մասում գտնվող Արակ–ալ–Էմիրայի մի հիմնավեր դամբարանից հայտնաբերված) որոշ տեղեկություններ է պարունակում Տուբիայի մասին, ով մի խումբ այլ մարդկանց հետ խոչընդոտում էր Երուսաղեմի պարսպապատմանը[1]:

Այս գերեզմանի հարևանությամբ մի շինություն կա, որը ոմանք դամբարան, իսկ ոմանք էլ պալատ են համարում՝ հունական ոճով առյուծների քանդակապատկերներով և կորնթոսյան սյուներով կառուցված լինելու պատճառով: Ոմանք էլ կարծում են, որ դրանք ամրոցի մնացորդներ են: Այն ոչ մեծ բարձունքի վրա հսկայական աղյուսաձև քարերից է կառուցված՝ ոչ մեծ արհեստական լճով ու պարիսպներով օղակված[2]: Ենթադրում են, որ շինությունը կառուցվել է Ք. ա. 175 թ.[3]:

Բեթսուրի (այժմյան Կիրբեթ–ատ–Տուբակա) պեղումները գիտնականների տրամադրության տակ նյութեր դրեցին, որոնք լուսաբանում են ճակատամարտերը և առհասարակ այստեղ տեղի ունեցած Մակաբայեցիների առաջին գրքում նկարագրված պատմական անցքերը: Ըստ երևույթին առաջին քաղաքն այստեղ կառուցվել է պարսից տիրապետության շրջանում հրեաներին

1 Տես «Երուսաղեմի պարսպապատումը խափանելու փորձեր» գլուխը:
2 **McCown C. C.** The Araq el-Emir and the Tobiads// Biblical Archaeologist. Sept.,1957. P. 66,68.
3 **Albright W. F.** The Archaeology of Palestine. L.,1956. P. 149 ff; **Thompson J. A.** Op. cit. P. 239.

եղոմացիներից պաշտպանելու նպատակով. չէ՞ որ այս քաղաքն իշխող դիրք ուներ Երուսաղեմից Քեբրոն տանող հնամենի ճանապարհի վրա՝ Հրեաստանի և Եղոմի սահմանագլխում: Պտղոմեյանների օրոք սա արդեն հարուստ քաղաք էր, որքան հնարավոր է դատել պեղումներից հայտնաբերված մետաղադրամներից: 300–ից ավելի մետաղյա դրամներ են գտնվել, որոնք պատկանում են Սելևկյանների և Մակաբայեցիների դարաշրջանին, այսինքն՝ Ք. ա. 175 թ.–ից մինչև 104 թ.: Դրանցից 162 –ի վրա դրոշմված են Անտիոքոս IV Եպիփանի և Անտիոքոս V Եվպատորի անունները: Այսպիսով, մետաղադրամներն ինչ–որ չափով լուսաբանում են քաղաքի պատմությունն Անտիոքոս IV Եպիփանի նվաճումից մինչև մակաբայեցի Հովհաննես I Հյուրկանոսը: Քաղաքի պատմությունը, որի մասին պատմում են մետաղադրամները, ընդհատվում է Ք. ա. մոտ100 թ.:

ՊԵՂԱԾՈՆԵՐ ԲԵԹՍՈՒՐԻՑ, ԳԱԶԵՐԻՑ, ՄԱՐԵՍԱՅԻՑ ԵՎ ՍԱՄԱՐԻԱՅԻՑ

Հնագետները Բեթսուրի բլրի գագաթին մեծ ամրոցի հիմքեր բացեցին, ըստ որի էլ կարելի եղավ եզրակացնել, որ քաղաքը երեք անգամ է գրավվել: Հնագետներն ապացուցեցին, որ Պտղոմեյանների կառուցած առաջին ամրոցը գրեթե հիմնահատակ ավերվել է, իսկ նրա տեղում կառուցվել է նախորդի չափերը գերազանցող մեկ ուրիշը: Ամենայն հավանականությամբ, այն Հուդա Մակաբայեցին է հիմնել Ք. ա. մոտ 165–163 թթ. (հմմտ. Ա Մակ. 4. 61): Սակայն որոշ ժամանակ անց այս ամրոցն էլ գրավվեց, ավերակվեց, ապա Ք. ա. շուրջ 161 թ. Սելևկյանների Վակհիդ զորավարի կողմից զուտ հունական ոճով վերակառուցվեց[1]: Այսպիսով հնագիտական հայտնագործությունների հիման վրա վերարտադրված պատկերը լիովին համահունչ է այն ամենին,

1 **Albright W. F.** The First Campaign of Excavation at Beth-Zur // Bulletin of the American Schools of Oriental Research, № 43. P. 10

ինչն այս առնչությամբ ավանդվում է Հին Կտակարանի Մակաբայեցիների Ա և Բ գրքերում:

Բեթսուրում հայտնաբերված մետաղյա դրամները մեզ օգնում են ավելի լավ հասկանալու պատմությունը: Ըստ որում պատմության մեջ բացեր կան ընդհուպ մինչև Ք. ա. 145 թ., ինչը մեզ հասցնում է Հովնաթանի և Շմավոնի ժամանակներին, երբ ամրոցը կրկին հրեաների ձեռքն ընկավ:

Բեթսուրի գտածոների մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հռոդոս կղզուց բերված գինու խոշոր անոթների կանթերի մեծ հավաքածուն, որոնք հայտնի են «Հռոդոսի անոթների կանթեր» անվամբ: Յուրաքանչյուրի վրա առկա է բրուտի անունը: Կավե անոթների այսպիսի քանակության առկայությունը վկայում է այս քաղաքում հունական զորքի ներկայության մասին: Ինչպես ասում է Ռայտը՝ «նրանք բոլորն էլ (հույները) հայրենական արտադրության ներմուծված գինին գերադասում էին խաղողից պատրաստված տեղական արտադրանքից»[1]:

Գազեր (Գազարա) քաղաքը, որն ի վերջո նվաճվեց Շմավոն Մակաբայեցու կողմից, ռազմավարական կարևոր տեղում էր գտնվում: Նա պաշտպանում էր Հուդայի մատույցներն արևմուտքից և վերահսկում մեծ առափնյա ճանապարհը: Ըստ Սուրբ Գրքի՝ այս քաղաքը կատաղի մարտերից հետո գրավվեց: Նրա բնակիչները տեղահանվեցին և փոխարինվեցին հրեա գաղութաբնակներով: Հետագայում Շմավոնն ամրացրեց քաղաքն ու բնակվեց այդտեղ (Ա Մակ. 13. 43–48): Փլատակներում հայտնաբերված մի ուշագրավ արձանագրության մեջ գրված է. «Պաբրասն ասում է՝ թող Շմավոնի պալատը հրո ճարակ դառնա»: Հնագետներն այդ քաղաքում հունական արվեստի ստեղծագործությունների և ճարտարապետության բազմաթիվ նմուշներ գտան, զորօրինակ՝ վերոհիշյալ հելլենական կավե անոթները, որոնք թվագրվում են Ք. ա. 175–150 թվականներով և օգնում այդ շրջանի ժամանակագրությունը որոշելու: Պաբրասը, որի անունն արդեն հիշատակել ենք, հավանաբար Շմավոն Մակաբայեցու հետապնդած տեղա-

1 **Wright G. E.** Biblical Archaeology. L.,1957P. 209,col. 1; Keller W. ‘Η Βίβλος…Σ. 453.

ցիներից մեկն է, ով կատաղությունից իրեն կորցրած՝ պատի վրա խազմզել էր վերոբերյալ անեծքը[1]:

Հնագետները Մարեսա քաղաքում (եբր. բնագրում հիշատակվում է Հեսու 15. 44, Միք. 1. 15 և Երեմ 26. 18 հատվածներում) պտղոմեյական մետաղադրամներ գտան. փաստ, որը հաստատում է, թե քաղաքն այնժամ նրանց տիրապետության տակ է եղել: Սելևկյանների օրոք այն հույների ձեռքում էր, ինչպես այդ մասին հայտնում է Սուրբ Գիրքը (Բ Մակ. 12. 33–35), մինչև որ Ք. ա. 110 թ. Հովհանես I Հյուրկանոսի գահակալության օրոք այն վերջնականապես հրեաներինը դարձավ:

Հելլենիստական շրջանի Սամարիան որոշակի հետաքրքրություն է ներկայացնում. բազմաթիվ վկայությունների համաձայն՝ այն հունական տիրապետության տակ է գտնվել: Ինչպես արդեն ասել ենք, այնտեղ հայտնաբերված կավե անոթների մոտ տաս հազար կանթերը քաղաքում հունական զինվորների ներկայության ապացույց են[2]: Ի լրումն սրա՝ հելլենական դարաշրջանի հոյակերտ պարիսպների փլատակներ գտնվեցին, իսկ գլխավորը՝ կլոր աշտարակների վեհասքանչ բեկորներ, որոնք թվագրվում են Ալեքսանդր Մեծի դարաշրջանով, ով այս քաղաքը հույներով էր բնակեցրել: Տեղեկությունների համաձայն՝ Սամարիան վերակառուցել է Պերդիկկոսի կողմից, որը նրա ներկայացուցիչն էր: Պարիսպների ավերակներ էլ հայտնաբերվեցին, որոնք կառուցվել էին Մակաբայեցիների ժամանակներում: Վերջապես Ք. ա. 107 թ. քաղաքը գրավվեց Հովհաննես I Հյուրկանոսի կողմից[3]:

1 **Thompson J. A.** Op. citP. 242.
2 **Wright G. E.** Op. cit.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 243.

ԳՏԱԾՈՆԵՐ ՍՅՈՒՔԵՄԻՑ, ԲԵԹԵԼԻՑ ԵՎ ՀՈՊՊԵԻՑ: ՀԱՍՄՈՆՅԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԸ

Սյուքեմը հելլենիստական շրջանում հիմնահատակ ավերվեց: Հիմնվելով այս փաստի վրա՝ եզրակացնում ենք, որ այն կործանվել է Ք. ա. 107 թվին Հյուրկանոսի կողմից: Անտիոքոս VIII–ի Ք. ա. 121–120 և մեկ ուրիշ 112–111 թվակիր արձանագրությամբ մետաղադրամները վկայում են Սյուքեմի գրավման մասին, որը հրեաներն ազատագրեցին միայն հռոմեական տիրապետության շրջանից առաջ[1]: Որ Սյուքեմը հելլենիստական շրջանում է ընկել, երևում է այդտեղ հայտնաբերված մետաղյա դրամներից, որոնցից շատերը պատկանում են այդ ժամանակաշրջանին. մեկը՝ Ալեքսանդր Մեծի գահակալության (Ք. ա. մոտ 333–323 թթ.), իսկ մնացյալը՝ զգալի թվով մետաղադրամները՝ Պտղոմեյանների (Պտղոմեոս I–ից մինչև Պտղոմեոս V–ը, ում օրոք Պաղեստինը Սելևկյանների ձեռքն անցավ) ժամանակներին: Ուրիշ բազմաթիվ մետաղադրամներ էլ գտնվեցին, որոնք Սելևկյանների տիրապետության ապացույց են ծառայում և թվագրվում են Անտիոքոս III–ի (Ք. ա. 223–187 թթ.) և նրան հաջորդած տարիներով: Ամենաուշ շրջանի մետաղյա դրամները վերագրվում են Ք. ա. 110 թվին: « Ելնելով այս ամենից՝ ակներև է դառնում, – եզրակացնում է Թոմպսոնը, – որ Սյուքեմը հունական տիրապետության ժամանակ ծանր օրեր է ապրել, իսկ երբ աղմուկն ու աղաղակն անցան, քաղաքը վերստին կառուցվեց ու ամրացվեց: Հնագետները չորս շերտեր բացեցին, որոնք վկայում են առաջին գրավման և վերջնական ամայացման շերտերի միջև քաղաքի՝ զանազան ժամանակաշրջաններում գրավված լինելու մասին: Ինչ վերաբերում է վերջին երկու շրջաններին, ապա քաղաքն այլևս պարիսպներով չի օղակվել»[2]:

1 **Wright G. E., Toombs L. E.** The Third Campaign at Balatah (Schechem) // Bulletin of the American Schools of Oriental Research, №161. Feb.,1961. P. 45 ff.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 243.

Ք. ա. 135 թվից մինչև 63 թիվն ընկած ժամանակահատվածին վերաբերող հնագիտական այլ նյութեր էլ ունենք: Սակայն առավել ծավալուն են Հովհաննես I Հյուրկանոսից մինչև հռոմեացիների՝ այստեղ իշխանության գալն ընկած ժամանակահատվածն ընդգրկող նյութերը: Այս օրերին գրավվեց Բեթել քաղաքը, որի պեղումներից երևան հանվեցին Հովհաննես Հյուրկանոսի (Ք. ա. 134–104 թթ.), Ալեքսանդր Յաննեոսի (Ք. ա. 103–76 թթ.) և հաջորդ կառավարիչների մետաղյա դրամներ: Այդ նույն վայրում Հերովդեսի մետաղադրամների բացակայությունը խոսում է այն մասին, որ այդժամ այդ տարածքը նրա իշխանության տակ չի եղել:

1946 թ. Հոպպեում մեծ քանակությամբ բացարձակ միանման մետաղադրամներ գտնվեցին՝ Ալեքսանդր Յաննեոսի 851 հնչուն դրամներ՝ «Ալեքսանդր թագավոր» գրությամբ: Հավանաբար Հոպպեում Ալեքսանդրի համար դրամ հատող փողերանոց է եղել[1]:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Հասմոնյանների օրոք դրամահատությանը վերաբերող որոշ պատմական նյութեր: Ա Մակաբայեցիներ գրքում (15. 2–9) հիշատակված Դեմետրիոս I Սոտերի որդի Անտիոքոս VII Սիդեթի՝ Շմավոնին՝ հրեաների քահանայապետին ու կառավարչին հղած նամակում ասվում է, որ Սելևկյան Անտիոքոսն արտոնում է Շմավոնին իր իսկ դիմապատկերով իր երկրի համար դրամ հատել: Սակայն որոշ կասկածներ կան գտնված այս դրամները Շմավոնին պատկանելու շուրջ: Ոմանց կարծիքով Մակաբայեցիների մետաղյա դրամները շրջանառության մեջ մտան Անտիոքոս VII–ի մահից հետո (Ք. ա. 129 թ.): Սակայն կասկած չի հարուցում այն փաստը, որ Հովհաննես I Հյուրկանոսը (Ք. ա. 134–104 թթ.) դրամ է հատել, որի մի երեսին դրոշմվել են ծաղիկներ, մրգեր, աստղեր, խարիսխներ և առհասարակ Սինայական օրենսդրության երկրորդ պատվիրանին չհակասող պատկերներ: Հակառակ երեսին

1 **Kindler A.** The Jaffa Hoard of Alexander Janneus//Israel Exploration Journal. T. 4.,1954. P. 170 ff.

պատկերվում էին վարդեր, ծաղկեպսակներ և հին եբրայերեն մի գրություն՝ «Հովհաննես քահանայապետ և հրեաների համայնք»:

Ալեքսանդր Յաննեոսն իր դրամների վրա դրվագում էր «արքա» տիտղոսը՝ մի մասի վրա հունարեն, մյուսի վրա հին եբրայերեն գրերով: Նրա խորհրդանշանն էր՝ արմավենին, շուշանն ու անիվը: Հյուրկանոս II–ի (Ք. ա. 63–40 թթ.) օրոք մետաղյա դրամների վրա միայն «հովվապետ» տիտղոս էր գրված, բայց այդ ժամանակներում իրավիճակն արդեն փաստացի վերահսկում էին հռոմեացիները:

Թեև հելլենիստական ժամանակշրջանին առնչվող հնագիտական նյութերն իրոք տպավորիչ են, այդուհանդերձ, այդ ժամանակներին վերաբերող մեր գիտելիքները առավելապես հարստացնում են գրավոր աղբյուրները՝ ի մասնավորի Հովսեպոս Փլաբիոսի երկասիրությունները: Հունական ավերակների վիթխարի մասը գտնվում է գետնի մակարդակից ավելի բարձր, ուստի և ավերվել է, ողողվել անձրևաջրերով, իբրև շինանյութ օգտագործվել հռոմեացիների, արաբների և այլ ժողովուրդների կողմից: Չնայած դրան՝ արդեն հայտնի նյութերը (ինչպես նաև գտնվելիքը) անգին են և լրացնում են այն, ինչը գիտենք գրավոր աղբյուրներից:

ՔՈՒՄՐԱՆԻ ԿԱՄ ՄԵՌՅԱԼ ԾՈՎԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

1947–ից մինչև 1964 թվականները Հրեական անապատի (Մեռյալ ծովից հյուսիս–արևմուտք)՝ հատկապես Քումրանի շրջանի զանազան քարայրներում բազմաթիվ ձեռագրեր գտնվեցին: 1947 թ. երիտասարդ բեդվին Մուհամադ–ադ–Դիբը Քումրանի դժվարամատչելի քարայրներից մեկում պատահաբար հայտնաբերեց առաջին յոթ պապիրուսները: Այս ձեռագրերի բովանդակությունը մեծ հետաքրքրություն առաջրեց մասնագետների՝ աստվածաբանների, կրոնագետների, հնագետների, բանասերների, պատմաբանների, սոցիոլոգների, հնագրագետների և այլոց աշխարհում: Արդյունքում այս վայրերը մանրակրկիտ կերպով հետազոտվեցին.

գիտնականները բազմաթիվ քարայրներ հայտնագործեցին, ինչպես նաև՝ շինությունների ավերակներ (Երուսաղեմից 10 կմ հարավ), որոնցում ապրել է Քումրանի հրեական վանական երբեմնի մեծ համայնքը:

Քումրանի հնօրյա բնակավայրի փլատակները:

Ք. հ. 66–70 թթ. ընկած ժամանակահատվածում՝ հենց այն պահին, երբ հռոմեական տասներորդ լեգեոնը Հորդանանի հովտով դեպի Երուսաղեմ էր շարժվում, այս վանական համայնքը մեծ խնամքով թաքցնում էր վերոհիշյալ ձեռագրերը: Օրհասական պահին հրեա ճգնավորները հոգ էին տանում, որ այս բնագրերը հնարավորին չափ անխաթար պահպանվեն: Ծոգ ու չոր կլիմայի շնորհիվ այս ձեռագրերը, մոտ երկու հազար տարի լավ պահպանվելով, հասան մեզ:

Արժե մի քանի ընդհանուր գծերով ներկայացնել Քումրանի հրեական համայնքը: Տարբեր կարծիքներ կան այս համայնքի նպատակների շուրջ՝ հատկապես Եսսենացիների՝ «Ցադոկի որդիների» կամ «Ցադոկի որդիների հերձվածի» (կամ Դամասկոսի) և քրիստոնյաների միջև առկա աղերսների առնչությամբ: Այս հարցերի շուրջ չենք ծավալվելու, քանզի դրանք տվյալ գրքի խնդիրների մեջ չեն մտնում: Պարզապես կփորձենք ներկայացնել համայնքի կյանքի և կազմակերպման ընդհանուր պատկերը:

Ք. ա. II դարավերջի բեկումնային ժամանակներում բարեպաշտ հրեաները հավատում էին, որ մեղսավոր աշխարհի վերջը գալիս է, մոտենում են դատաստանն ու պատիժը, որոնց մասին բարձրագոչ հայտարարում էին Հին Կտակարանի մարգարեները: Ուստի շատ հրեաներ, ովքեր հավատում էին, որ իրենք Աստծո ընտրյալներ են, լքեցին քաղաքները, հեռացան իրենց համերկրացիներից և ապաստանեցին Քումրանի շրջանում: Քումրանի հրեաները հավատում էին, որ իրենք մնացած հավատացյալներից վերջիններն են: Համայնքի անդամների գործածած անուն-

Եբրայերեն բնագրով Աստվածաշնչի ժամանակակից մագաղաթագալար:

ները մատնանշում էին Իր ժողովրդի հետ կնքած Աստծո ուխտը: Այսպես՝ նրանք «ընտրյալներ», «Բարձրյալի սրբեր», «լուսո որդիներ», «սուրբ ժողովուրդ», «համայնքի չքավորներ» և «Իսրայելի ու Ահարոնի համայնք» էին կոչվում: Նրանք հավատում էին, որ իրենք են Աստծո օրենքը պահողները և կամենում էին ապրել դրա համեմատ: Ուսումնասիրում էին օրենքը (Թորան) և փորձում այն մեկնաբանել ըստ այն եղանակի, որը նրանց սովորեցրել էր «բարեպաշտության ուսուցիչը» (կամ «բարեպաշտ ուսուցիչը»). ուսուցիչն իրենց սովորեցրեց քայլել սրբության շավիղներով և թե ինչպես է պետք ապրել՝ այս բեկումնային պահին Տիրոջը ծառայելու համար: Նրանք հավատում էին, որ Աստված իրենց Սուրբ Գիրքը մեկնելու հատուկ շնորհ է պարգևել: Համայնքի անդամներն սպասում էին Մեսիայի գալստյան դարաշրջանին: Իսկ մինչ այդ պետք է համայնքի խիստ օրենքներին ենթարկվել՝ Աստծուց հեռացած Իսրայելի և բովանդակ աշխարհի մեղքերի քավության համար:

Համայնքը համայնական վանքի օրինակով էր կազմակերպված: Նրա անդամները քահանաներ (այսինքն՝ Ցադոկի որդիները) ու աշխարհականներ էին: Նվիրապետության մեջ առաջին տեղում քահանաներն էին, ապա ղևտացիները, երեցներն ու մնացյալ հավատացյալները: Հավատացյալները հազարյակների, հարյուրյակների, հիսնյակների և տասնյակների էին բաժանված: Երեք քառորդով քահանաներից բաղկացած տասներկու հոգանոց խորհրդի (բարձրագույն ատյանի տեսակ) վրա էր դրված համայնքի կարգ ու կանոնի պահպանության պարտականությունը: Եթե որևէ մեկը կամենում էր համայնքին անդամագրվել, ապա

պետք է փորձության բազմաթիվ աստիճաններով անցներ: Իսկ համայնքի լիիրավ անդամ դառնալիս՝ պետք է Մովսեսի օրենքին հավատարիմ լինելու, դրա համաձայն ապրելու և չար մարդկանցից ու նրանց գործերից խուսափելու երդում տար: Այր ու կին կարող էին անդամագրվել համայնքին, ամուսնությունն ու ընտանեկան կյանքն արգելված չէր:

Համայնքային կյանքը զանազան տեսակի գործողություններում էր արտահայտվում, որոնց մեջ գլխավորը մկրտությունն ու աղոթքով համատեղ ճաշն էր: Դրանց մասնակցում էին համայնքի բոլոր անդամները, ովքեր զանազան զբաղմունքներ ունեին՝ բրուտներ, գրագիրներ, գրիչներ, հողագործներ: Հատուկ ժամեր էին սահմանված աղոթքի, խոկման և աշխատանքի համար: Համայնքի անդամները ողջ գիշեր օրենքն էին ուսումնասիրում՝ երեք հսկումների (հերթափոխի) բաժանված հերթականությամբ: Սահմանված կարգը խախտելու դեպքում պատժվում էին: Փաստորեն Քումրանի վանական համայնքը քահանաներն էին ղեկավարում: Նրանք միմյանց շաղկապված էին Հին Կտակարանով, որը զորուգիշեր ուսումնասիրում և ընդօրինակում էին: Դա «վախճանաբանական» համայնք էր, որի անդամները լարված սպասում էին չարի շուտափույթ գահավիժմանն ու երկրի վրա Աստծո արքայության հաստատմանը[1]:

Քումրանի առաջին նորաբնակները հավատում էին, որ աշխարհի վախճանը շատ մոտ է. նրանք կարծում էին, որ այդ պահը նշանավորվել է Ք. ա. 63 թ. հռոմեացիների Պաղեստին ներխուժմամբ: Սակայն անհասկանալի պատճառներով առժամանակ հեռանում են Քումրանից և բնակվում Դամասկոսում, որտեղից էլ, Հերովդեսի մահից հետո, կրկին դառնում իրենց տեղերը: Նրանք Քումրանում մնացին մինչև Ք. ա. 68 թ., երբ հռոմեացիներն սկսեցին ճնշել հրեաների ապստամբությունը: Ինչ–որ առումով վախճանն իսկապես հասավ, բայց ոչ այնպես, ինչպես ակնկալում էին Քումրանի համայնքի անդամները:

1 **Fritsch C. T.** The Qumran Community. N. Y.,1956. P. 75.

Հիմնականում տասնմեկ փոքրիկ քարայրներում և համայնքային շինության ավերակներում հայտնաբերված Կումրանի ձեռագրերը թվագրվում են Ք. ա. 100 թվականով կամ նույնիսկ ավելի վաղ շրջանով: Այսպիսով դրանք Հին Կտակարանի պահպանված գրչագրերից հնագույններն են: Մինչ դրանց հայտնագործումը, մեր տրամադրության ներքո միայն Եգիպտոսում հայտնաբերված «Նաշ պապիրուսն» էր, որը թվագրվում է Ք. ա. III դարով: Սակայն այն ընդամենը եբրայերենով տաս պատվիրանները բովանդակող փոքրիկ պատառիկ էր[1], այնինչ Քումրանի ձեռագրերը բավական ամբողջական են և գործնականում պարունակում են բոլոր հինկտակարանյան գրքերը:

Քումրանի ձեռագրերի մեծ մասը գրի է առնված կաշվի վրա՝ փայտի կամ երկաթի այրումով ստացված ածխանման նյութից պատրաստված թանաքով: Սրանք Ք. ա. մոտ IX դարում մագաղաթի վրա գրված «Հալեպյան կոդեքսից՝ ձեռագիր մատյանից» 1000 տարի առաջ են կազմվել[2]: Սակայն պապիրուսի վրա գրված ձեռագրեր էլ կան: Ձեռագրերից մեկն իրար կցված պղնձե թերթեր են՝ վրան խազած տառերով: Բոլոր այս բնագրերը գրված են եբրայերեն, արամերեն, իսկ մի քանիսն էլ հունարեն լեզուներով:

Նախքան Քումրանյան գտածոները՝ մեր ունեցած Հին Կտակարանի եբրայերեն վաղագույն ձեռագիրը IX դարից է (չհաշված «Նաշ պապիրուսը»), ուստի բնական է, որ Հին Կտակարանով զբաղվողները միշտ էլ փափագել են առավել հին ձեռագրեր հայթայթել: Այդժամ կարելի կլիներ վաղեմագույն ձեռագրերի բնագրերը ժամանակակից հրեական բնագրի հետ համեմատել: Բաղդատումն ի հայտ կբերեր արդի բնագրի հարազատությունը: Այժմ Քումրանի ձեռագրերը Հին Կտակարանի բնագրերի պատմությունը գրեթե հազար տարով ետ են տանում, որովհետև այս բնագրերը թվագրվում են Ք. ա. առնվազն 100 թվականով, գուցե և ավելի վաղ շրջանով[3]: Այս հանգամանքը ձեռագրերի հայտնա-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 234.
2 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 259.
3 **Bruce F. F.** Second Thoughts on the Dead Sea Scrolls. Grand Rapids,1956. P. 34,44. **Burrows M.** The Dead Sea Scrolls. L.,1956. P. 73-122. Երկու հղումներն էլ

բերումը դասում է «մեր օրերի հնագիտական ամենատպավորիչ հայտնագործությունների շարքին»[1]:

Քումրանի ձեռագրերում ամփոփված են Հին Կտակարանի բոլոր գրքերի բնագրերը, բացառությամբ Եսթերի գրքի[2]՝ թերևս հեթանոս աշխարհի նկատմամբ չեզոք դիրքորոշում ունենալու պատճառով: Ձեռագրերը բովանդակում են նաև բնագրեր անվավեր, երկրորդական ու պարականոն գրքերից: Մեկնություններ էլ կան, օրինակ՝ Ամբակում մարգարեի գրքի, ու նաև հարասություններ, ինչպես «Ծածուկք Ծննդոց գրքի»[3]: Բացի այդ, ձեռագրերը պարունակում են դասագրքեր, աղոթքների և օրհներգերի ժողովածուներ, Քումրանի հրեական համայնքի կյանքին, պաշտամունքին ու կազմակերպմանն առնչվող բարոյախրատական և ուսուցողական բնույթի բնագրեր:

Այսպես ուրեմն՝ բոլոր այս ձեռագրերը՝ Մեռյալ ծովի տաս ամբողջական պապիրուսե մագաղաթագալարներն ու հազարավոր պատառիկները, որոնք նախապես շուրջ 600 ձեռագրի մաս են կազմել, գրական աղբյուրների մի պատկառելի ժողովածու են կազմում, որն ընդգրկում է բովանդակ Հին Կտակարանն ու նաև Քումրանի անապատի համայնական վանական համայնքի կյանքին վերաբերող այլ կրոնական տրակտատներ, ստեղծագործություններ ու աշխատասիրություններ[4]:

Քումրանի (կամ Մեռյալ ծովի) ձեռագրերի աստվածաշնչական բնագրերի խորազնին համեմատությունը Հին Կտակարանի

ըստ Thompson J. A. Op. cit. P. 264.

1 **Thompson J. A.** Op. cit. P. 249.

2 **Vermes G.** The Dead Sea Scrolls in English. Pelican Books, 2 nd ed., L.,1975. P. 12 (Այս աշխատանքը լրացված և ուղղված վերահրատարակվել է 1990թ.: **Vermes G.** The Dead Sea Scrolls (in English). 3 rd ed., Penguin Books,1990). Հարկ է նշել նաև Քումրանի համայնքի և ձեռագրերի մասին հետևյալ աշխատանքները, **Βέλλας Β. Μ.** Ἐκ τῶν χειρογράφων τῆς Νεκρᾶς Θαλάσσης· Τὸ Βιβλίον τοῦ Πολέμου τῶν Υἱῶυ τοῦ Φωτὸς κατὰ τῶν Υἱῶυ τοῦ Σκότους (Ἀνάτυπον). Ἀθῆναι, 1965. **Γράτσεας Γ. Σ.** Στοιχεῖα Εἰσαγωγῆς εἰς τὰ χειρόγραφα τῆς Νεκρᾶς Θαλάσσης (Βίβλος καὶ Κουμράν). Ἀθῆναι. 1974. **Σιώτης Μ. Α.** Τὰ χειρόγραφα τῆς Νεκρᾶς Θαλάσσης. Α΄. Ἱστορία ἀνευρέσεως καὶ περιγραφὴ αὐτῶν. Ἀθῆναι,1961. **Σιώτης Μ. Α.** Αἱ τελευταῖαι ἀνακαλύψεις' Αρχαίων χειρογράφων. Ἀθῆναι. 1986.

3 **Βέλλας Β. Μ.** Ἑβραϊκὴ Ἀρχαιολογία…Σ. 246. Οἰκονόμος Η. Τὸ βιβλίον τῆς Ἐσθήρ. Ἀθῆναι,1967.

4 Տեմ Vermes G. Op. cit. P. 12..

բնագրերի հետ թույլ է տալիս հանգելու հետևյալ կարևոր եզրակացությունների.

1. սույն հնամենի ձեռագրերն ընդհանուր առմամբ համընկնում են արդի մասորեթյան բնագրերին: Հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնը նկատում է. «Այն տեղերում, որտեղ Քումրանի սուրբգրային բնագրերի և մասորեթյան բնագրի միջև տարընթերցվածքներ են նկատվում, պատճառն այն է, որ դրանք (Քումրանի բնագրերը) հաճախ հետևում են հունական Յոթանասնիցին, որը մի շարք տեղերում տարբերվում է հրեականից: Բացի այդ, պարզ է, որ այդ ժամանակներում հրեական Աստվածաշնչի գրչագրեր գոյություն ունեին, որոնք տարբերվում էին թե՛ ժամանակակից մասորեթյան և թե՛ Յոթանասնիցի հունական բնագրերից»[1]: Ի շարս այլոց՝ Քումրանի բնագրերի քննությունը ցույց տվեց, որ շատ դեպքերում Յոթանասնիցի բնագիրն անհամեմատ ավելի ստույգ է, քան առ այսօր համարվել է[2]:

Օքսֆորդի համալսարանի հունգարացի պրոֆեսոր Գեզա Վերմեսը՝ Հրեական հետազոտությունների բրիտանական ընկերության առաջին նախագահը, նշում է, որ Քումրանի այս նորագյուտ նյութերը ձեռք բերած Սուրբ Գրքի բնագրերի և դարերի ընթացքում նրա ձեռագրական ավանդույթի հետազոտողներն ու մասնագետները «այժմ ի զորու են իրենց եզրակացություններում առավել մեծ ճշտության հասնելու, ի զորու են հետևել այն ուղուն, որով անցել է սուրբգրային բնագիրը մինչ ներկայիս իր իսկական տեսքն ստանալը: Ընդսմին, նրանք ի զորու են ցույց տալ, որ բնագիրը վերջին երկու հազարամյակի ընթացքում ընդհանուր առմամբ անփոփոխ է մնացել»[3]:

2. Հարկ է ուշադրություն դարձնել, որ Քումրանի սուրբգրային ձեռագրերի մեջ ամենամեծն ու ամենաամբողջականը՝ Եսայու գրքի երկու, Սաղմոսարանի ու Ղևտական գրքի մեկական պապիրուսներն են: Հատկանշական է, որ «Եսայու գրքի ձեռագիրը գրեթե բացարձակապես համընկնում է այսօր մեր ունեցած մա-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 264.
2 Տես **Vos H. F.** Op. cit. P. 56.
3 **Vermes G.** Ibid.

սորեթյան բնագրին»[1]: Այս պապիրուսը «ենթադրաբար գրվել է Ք. ա. I դարի սկզբում»[2]:

3. Քումրանի բնագրերը պարզորոշ ցույց են տալիս, որ մասորեթյան բնագիրը շատ հին է: Թեպետ այն իր վերջնական տեսքը միայն հաջորդ դարերում է ստացել, նրա կազմության սկզբնավորումը թվագրվում է առնվազն Ք. ա. I դարով: Հավանաբար յոթանասուն թարգմանիչները Եգիպտոսում դույզն–ինչ այլ բնագրից են օգտվել, որը, սակայն, Պաղեստինում հայտնի էր, ինչը հաստատվում է Քումրանյան նյութերով:

Բացի այդ, այն փաստը, որ «Դանիելի գրքի ոչ թե մեկ, այլ բազմաթիվ օրինակների բազում պատառիկներ են հայտնաբերվել, այս գրքի՝ Ք. ա. 100 թվից շատ առաջ գրված լինելու խոսուն վկայությունն է, քանզի գրքերը ձեռքով էին արտագրվում, և շատ ժամանակ էր անցնում նախքան բնագրի բազմացումն ու լայն տարածումը»[3]:

4. Մեռյալ ծովի պապիրուսները ցույց տվեցին, որ այդ տարիներին հայտնի և Պաղեստինում կենցաղավարող հրեական Սուրբ Գրքի՝ իրարից տարբերվող զանազան խմբագրություններ գոյություն ունեին: Ուստի հրեաները սուր անհրաժեշտություն ունեին որոշելու, թե որն է պետք ճանաչել իբրև միակ ընկալյալ բնագիր: Ի վերջո ռաբբիները քրիստոնեական դարաշրջանում կատարեցին իրենց ընտրությունը: Նրանք գործում էին ավանդության (մասորայի) համաձայն, որը գերիշխում էր քրիստոնեական դարաշրջանի առաջին դարերում: Չի բացառվում, որ հինկտակարանյան մեջբերումների առկայությունը, որոնց հանդիպում ենք Նոր Կտակարանում և որոնց տեղը Հին Կտակարանում դժվարությամբ ենք գտնում, բացատրվի այն հանգամանքով, որ Հին Եկեղեցու ժամանակներում տարբեր բնագրեր են կենցաղավարել[4]:

5. Քումրանի ձեռագրերի երևան գալու առաջին ամիսներին և նախքան բնագրերի մանրազնին հետազոտությունը որոշ գիտ-

1 **Vos H. E.** Op. cit. P. 55-56.
2 **Short A. R.** Op. cit. P. 45.
3 **Short A. R.** Op. cit. P. 46.
4 **Thompson J. A.** Op. cit. P. 264-265.

նականներ հավասարության նշան էին դնում Քումրանի համայնքի անդամների կյանքի ու ուսմունքի և վաղքրիստոնեական Եկեղեցու միջև: Նույնիսկ կարծիք հայտնվեց, որ քրիստոնեության ակունքները հարկ է փնտրել Քումրանյան համայնքում: Սակայն ըստ Թոմպսոնի՝ «առավել հանգամանալից վերլուծությունը ցույց է տալիս, որ այս պատկերն իրականությանը չի համապատասխանում: Այս երկու համակարգերի միջև վիթխարի անջրպետ գոյություն ունի: Եվ բացարձակապես որևիցե հիմք չկա համարելու, որ քրիստոնեությունը կապված է Քումրանի աղանդի հետ»[1]: Այսպիսով, Կումրանի համայնքը «Քրիստոսի Եկեղեցու նախատիպը չէ: Այս համայնքը միանգամայն այլ նպատակներ էր հետապնդում»[2]:

6. Բացարձակապես չկան նաև ուղղակի և անուղղակի կապեր Տեր Հիսուս Քրիստոսի անձի ու առաջին քրիստոնյաների և Քումրանի համայնքի միջև: Քումրանի «Բարեպաշտության ուսուցիչը» երբեք իրեն Մեսիա չի համարել, համայնքի անդամները՝ նույնպես, բացի այդ որևիցե տեղեկություն չկա այն մասին, թե ինչպես է նա մահացել: Մեր Տեր Հիսուս Քրիստոս ապրել է Քումրանի մարդկանցից միանգամայն տարբեր կյանքով: Տիրոջ և այս համայնքի վարդապետություններում կարող էին նման գաղափարներ շրջանառվել, սակայն դա պայմանավորված է նախ նրանով, որ Տերն ընդունում էր այն նույն սրբազան բնագիրը, որից համայնքն էր օգտվում, և երկրորդ՝ Նա մարդեղացել և երկրի վրա ապրել է այն ժամանակ, երբ շատերն էին խոսում միևնույն մեծ ճշմարտություններից: Աստվածամարդ Տեր Հիսուս Քրիստոս բազմաթիվ կարևորագույն կողմերով է Քումրանի մարդկանցից տարբերվում, ինչպես Իր կյանքով և շփումների բնույթով, այնպես և Իր վարդապետություններում պարփակված առանձնահատուկ զորությամբ[3]:

---

1 **Tompson J. A.** Op. cit. P. 267; **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 266

2 **Short A. R.** Op. cit.

3 **Tompson J. A.** Op. cit. P. 268; **Fritsch C. T.** Op. cit. P. 116-124; **Bruce F. F.** Op. cit. P. 131-137; **Greystone G.** The Dead Sea Scrolls and the Originality of Christ. L., 1955.

7. Քումրանի և Նոր Կտակարանի բնագրերում հանդիպող լեզվի ու մտքի շարադրման նմանությունները միանգամայն բնական են: Դա բացատրվում է նրանով, որ առաջին քրիստոնյաները՝ հանձին Աստվածամարդ Տիրոջ, տեսնում էին սպառիչ և կասկածի տեղիք չտվող պատասխանն այն բարեպաշտ հրեաների ակնկալիքների, ովքեր, Քումրանի համայնքին անդամագրված մարդկանց նման, հոգնել էին այդ ժամանակներում իշխող չարությունից ու հավատուրացությունից: Քումրանացիներն այդ ժամանակներին բնորոշ մարդկանց՝ Մեսիայի լարված ու բուռն սպասման վառ օրինակն էին: Բացի այդ, Հին Կտակարանի որոշ գրքերի մեկնություններ բովանդակող Քումրանի ձեռագրերը ցույց են տալիս, որ այս համայնքը մեկնում էր Սուրբ Գիրքը տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների լույսի ներքո, և որ մեկնիչներն «իրենց՝ Մեսիային սպասող հատուկ միություն էին համարում»[1]:

Մեսիայի սպասումը պսակվեց Աստվածամարդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայտնությամբ: Տիրոջ Անձի այս մեսիական կողմը Կումրանի մարդկանց կատարյալ հիասթափություններով լի սպասելիքների սրտառուչ և զգայացունց հակադրության վկայությունն է:

1 **Short A. R.** Op. cit. P. 46.

Մաս II

Նոր Կտակարան

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԻԹԽԱՐԻ ԵՎ ՀԱՐԱՃՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պետք չէ զարմանալ որ հնագիտությունը, ի տարբերություն Հին Կտակարանի՝ ավելի քիչ նյութեր է ընձեռում Նոր Կտակարանի վերաբերյալ: Դրա բացատրությունը դյուրին է. բանն այն է, որ Հին Կտակարանում տեղ գտած անցքերն ընդգրկում են մոտ երկու հազար տարվա ժամանակահատված՝ նահապետների ժամանակներից սկսյալ և հաջորդ ժամանակաշրջանը ներառյալ:

Բարի հովիվը: Անտիկ արձան: Լատերանյան թանգարան:

Մովսեսից մինչև Եզրաս մոտ 1000 տարի է: Իսկ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հասարակական առաքելությունից (ըստ Մատթեոս առաքյալի առաջին Ավետարանի ժամանակագրական շղթայի) մինչև Գործք Առաքելոցի ժամանակահատվածի վերջը հազիվ դարի մեկ երրորդը կազմի: Եթե այս ժամանակահատվածին նաև հավելենք Հովհաննես ավետարանչի երեք թղթերին ու Հայտնության գրքին նախորդող պատմական անցքերը, հանրագումարում վաթսուն տարի կստանանք:

Ավելին, Հին Կտակարանում նկարագրվող անցքերը բազմաթիվ երկրներում են ծավալվում՝ ընդգրկելով աշխարհագրական լայնածավալ տարածք՝ Եգիպտոս, Հորդանան, Պաղեստին, Ասորիք, Իրաք, Իրան (Պարսկաստան): Հին Կտակարանը ներկայացնում է Իսրայելից ժողովրդի տառապալից և խռովահույզ պատմությունը, այնինչ Նորը՝ հիմնականում Աստվածամարդ Տիրոջ պատկերն ու վարդապետությունը, ինչպես նաև՝ առաքյալների կյանքն ու քարոզչական գործունեությունը (միայն ընդհանուր գծերով) և սակավաթիվ այլ անձանց խոսքերը: Այս ամենը գերազանցապես տեղի է ունեցել Պաղեստինում, Կիպրոսի մի քանի քաղաքներում, Ասորիքում, Փոքր Ասիայում, Հունաստանում, Մալթայում և Հռոմում:

Հնագետների և Նոր Կտակարանի բնագրագետների միջև վիճահարույց հարցեր գրեթե չկան: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Միջերկրականի պատմության հունա–հռոմեական շրջանը, նախքան նորագույն պեղումներ սկսելը, անհամեմատ ավելի լավ էր ուսումնասիրված, քան արևելյան երկրների պատմությունը:

Նորկտակարանյան շրջանի վերաբերյալ հնագիտական նյութերն ավելի աղքատիկ են հինկտակարանյանից նաև այն պատճառով, որ Նոր Կտակարանի հետ կապված վայրերը դարերի ընթացքում մշտապես խիտ բնակեցված են եղել: Սա դժվարացնում է հնագետների աշխատանքները. դյուրին չէ խիտ բնակեցված շրջաններում պեղումներ անցկացնել:

Հազվագյուտ չեն նաև այն դեպքերը, երբ հնագիտական աշխատանքները խաթարվում են կամ երկար ժամանակով կասեցվում ռազմաքաղաքական պատճառներով: Պաղեստինում, ինչպես և այլ երկրներում, որտեղ քայլել են առաքյալները և հատկապես Պողոս առաքյալը, կան վայրեր, որոնք գործնականում անհնար է պեղել:

Չնայած դրան, ինչպես նկատում է հնագետ Օլբրայթը՝ «սուրբգրային պատմության այս շրջանի (այսինքն՝ Նոր Կտակարանի շրջանի) հնագիտությունը հիմա էլ վիթխարի և տարեց-

տարի աճող կարևորություն ու նշանակություն է ձեռք բերում»[1]: Բացի այդ մեր թվարկության I դարում, երբ ծավալվում էին Նոր Կտակարանի բոլոր անցքերը, արդեն հարուստ գրականություն կար: Ժամանակ առ ժամանակ հնագետների ձեռամբ ձեռագրերից, մետաղյա դրամների գրություններից և հինավուրց փլատակներից երևան հանված հարուստ գրավոր նյութերը միշտ էլ շատ օգտակար են եղել և դեռ կլինեն:

Նախքան հնագիտական այլ պեղածոների քննությունն սկսելը, հարկ է, թեկուզև մի քանի խոսքով, անդրադառնալ Նոր Կտակարանի բնագրերի առկա ձեռագրերին[2]: Իհարկե, որքան հայտնի է, տվյալ պահին Նոր Կտակարանի բոլոր գրքերի բնօրինակները կորսված են: Չնայած դրան, ինչպես իրավացիորեն նշվում է՝ «հետազոտողներն իրենց խնդիրը տեսնում են Հիսուսի միջավայրը և շրջապատը վերարտադրելու և այն վայրերի որոնման մեջ, ուր Նա ապրել, ուսուցանել և մահացել է»: Սակայն «Հիսուսի կյանքը կապված չէ մի այնպիսի բանի հետ, որն աշխարհում նյութական հետքեր է թողնում, զորօրինակ՝ արքայական պալատներ, տաճարներ, ռազմական արշավանքներ, հրո ճարակ դարձած քաղաքներ ու երկրներ»: «Այստեղ (հետազոտողների համար) միմիայն մի ուղեկից կա», այն է՝ Նոր Կտակարանը: Ասենք, որ «հունահռոմեական պատմության ոչ մի անցք, դասական մատենագրի ոչ մի ձեռագիր իր՝ ավելի ուշ շրջանում աշխարհը ողողած հնամենի պատճենների քանակով, նույնիսկ հեռավոր կերպով չի հասնում Նոր Կտակարանի ձեռագրերի թվին: Դրանք հազարներ են, ընդ որում վաղեմագույն ձեռագրերի (Նոր Կտակարանի մատենագիրների) և Քրիստոսի ժամանակների միջև ընդամենը մի քանի տասնամյակ է ընկած»[2]:

---

1 **Albright W. F.** The Archaeology of Palestine. Fully revised. Penguin Books, 1960. P. 238.

2 Այս հարցի շուրջ ամփոփ, բայց կարևոր ու լավ փաստարկված աշխատություն կա՝ **Σιαμάκης Κ.** Ἡ παράδοσι τοῦ κειμένου τῆς Ἁγίας Γραφῆς. Ἔκδ. Ἰ. Μητροπόλεως Ἐδέσσης, Πέλλης καὶ Ἀλμωπίας, Θεσσαλονίκη,1995.

2 **Keller W.** Ἡ. Βίβλος…Σ. 462.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունահռոմեական հնադարի դասական մատենագրի ոչ մի ստեղծագործություն օժտված չէ հարազատության այն աստիճանով, ինչպիսին Նոր Կտակարանի բնագրեր բովանդակող ձեռագրերի պարագայում է: Նոր Կտակարանի գրչագրերի քանակն անհամեմատ ավելի մեծ է, քան որևէ անտիկ հեղինակի ստեղծագործությունների պատճենները: Մեր գրադարանները բառացիորեն առլեցուն են Նոր Կտակարանի գրչագրերով: Մեր տրամադրության տակ եղած նրա ձեռագրերի քանակն անցնում է 4000–ի սահմանագիծը, որոնցից մի քանիսը IV դարով են թվագրվում: Առանձնակի ուշագրավ է հետևյալ հանգամանքը. դասական ստեղծագործությունների բնագրեր պարունակող վաղեմագույն ձեռագիր օրինակը վերագրվում է IX դարին, այնինչ Նոր Կտակարանի հնագույն ձեռագրերը (մեծ կամ փոքր աստիճանի կցկտուր պապիրուսներ) թվագրվում են Քրիստոսի ապրած ժամանակից ընդամենը մի քանի տասնամյակ ուշ շրջանով[1]:

Հարյուր տարի առաջ Նոր Կտակարանի հնագույն ձեռագիրը IV դարում կազմված Վատիկանի B կոդեքսն* էր: Սակայն այդ ձեռագիր մատյանն այնքան էլ ամբողջական չէ: Բացի այդ, այն պահվում է Վատիկանի գրադարանում և 1481 թվից ի վեր անմատչելի է ձեռագրագետների համար: Այսպես, երբ 1845 թ. անգլիացի ականավոր գիտնական և ձեռագրագետ Թրեջելզը ձեռագիրն ընդօրինակելու նպատակով Հռոմ այցելեց, գրադարանավարները նրան արգելեցին իր հետ գրչածայր ու թուղթ տանել սրահ: Իսկ երբ գերմանացի աստվածաբան և ձեռագրագետ Կոստանդին ֆոն Թիշենդորֆը 1846 թ. փորձեց նույն բանն անել, նրան թույլատրեցին օրական ընդամենը երեք ժամ աշխատել բնագրի հետ: Իսկ երբ համարձակվեց մի քանի էջ պատճենել,

1 **Σιαμάκης Κ.** Ἡ παράδοσι…
* Կոդեքս – Ձեռագիր մատյան:

Հռոմի պապի ներկայացուցիչները իսկույն ևեթ խլեցին գրադարան այցելելու թույլտվությունը[1]:

1844, 1853 և 1859 թվերին ֆոն Թիշենդորֆը Սինայի սուրբ Եկատերինա վանքում ի մի հավաքեց մոտ 350 թ. թվագրվող մի ձեռագրի ամբողջական բնագիրը, որն այդ օրվանից ի վեր «Սինայական ձեռագիր մատյան» (ℵ – Ալեֆ կոդեքս) անվամբ կնքվեց: Ժամանակագրորեն Վատիկանյան ձեռագիր մատյանն ավելի հին է, սակայն ամբողջական չէ: Իր հերթին Սինայական կոդեքսը բովանդակում է ողջ Նոր Կտակարանը և Հնի զգալի մասը: Ներկայումս պահվում է Բրիտանական թանգարանում:

1627 թ. Կոստանդնուպոլսի պատրիարք Կյուրեղ Լուկարիսը անգլիական թագավոր Կառլ II–ին Հին և Նոր Կտակարանների մեկ այլ ձեռագիր նվիրեց, որը կազմվել է V դարի առաջին կեսին Ալեքսանդրիայում: Նույն Բրիտանական թանգարանում պահվող այս ձեռագիր մատյանն «Ալեքսանդրյան» (կոդեքս A) է կոչվում և ընդգրկում է Աստվածաշնչի բովանդակ բնագիրը՝ բացառությամբ մի քանի առանձին հատվածների:

1931 թ. Նոր Կտակարանի 126 ձեռագրեր (պապիրուսե) հայտնաբերվեցին: Մոտ 240 թվականին պատկանող այս ձեռագրերը Եգիպտոսից են: Եգիպտոսից պապիրուսների ևս մեկ հավաքածու ընդգրկում է Հովհաննու Ավետարանի գրչագիրը, ինչպես նաև Պետրոսի և Հուդայի թղթերը: Սույն գրչագիրը վերագրվում է երկրորդ դարի վերջին:

1935 թ. Կ. Գ. Ռոբերտսը մի բնագիր հրապարակեց, որը պապիրուսե մի փոքրիկ պատառիկ էր: Այն գտնվել է 1920 թ.. մի երեսին պահպանվել էր Հովհաննու Ավետարանի բնագրի մի հատված (18. 31–33), իսկ մյուսին՝ նույն գլխի 37–38 համարները: Խոսքը ձեռագրի թերթի մի հատվածի մասին է, որը ենթադրաբար 130 էջ է պարունակել: Այս պապիրուսի պատառիկը տրամադրել էր Ջոն Ռայլենդսը, ով այն պահում էր Մանչեսթրում՝ իր անձնական գրադարանում: Ինքը՝ պապիրուսը, այնքան էլ մեծ չէ, սակայն չափազանց արժեքավոր է: Հնագետները պնդում են, որ սույն բնա-

1 **Short A. R.** Op. cit. P. 49.

գիրն իր գրության ժամանակով վերագրվում է Տրոյանոս կայսեր դարաշրջանին (գահակալել է 98 թ. մինչև 117 թ.) կամ էլ, ինչն առավել հավանական է, բնագիրն ի հայտ է եկել 135 թ. մահացած Ադրիանոսի օրոք[1]:

Այսպես այս ձեռագիրն այսօր Աստվածաշնչի բոլոր հայտնի ձեռագրերից ամենահինն է: Նրա վիթխարի արժեքը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ձեռագրի շնորհիվ հաստատվում է հետևյալ փաստը. այն է՝ Հովհաննու Ավետարանը գոյություն ուներ և կենցաղավարում էր Եգիպտոսում՝ ավետարանչի մահից շատ չանցած:

Սըր Ֆրեդերիկ Քենյոնը, այս դարակազմիկ վավերագրի արժեքն ընդգծելով, գրում է. «Ինչ էլ որ լինի՝ սա իրեղեն ապացույց է, որն աստվածաբանական աչառությունների վրա չի խարսխվում, և քանի որ այս փաստն ընդունվում է պապիրուսների թվագրման ոլորտի բոլոր մասնագետների կողմից, տվյալ բնագիրը կարելի է հատկորոշել իբրև հավաստի վկայություն: Այսպիսով, ըստ առկա փաստերի՝ Հովհաննու Ավետարանի մատենագրման ժամանակը կարելի է վերագրել I դարին, քանզի մինչ լայն տարածում գտնելը ինչ–որ ժամանակ պետք է անցներ: Ըստ քրիստոնեական ավանդության՝ սկզբից ևեթ սույն բնագրի գրության ժամանակը I դարի վերջն է համարվել: Նոր Կտակարանի մյուս գրքերի վերաբերյալ շատ բան չգիտենք: Անկասկած համատեսական Ավետարանները (Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի) զգալիորեն ավելի վաղ շրջանից են, քան չորրորդ Ավետարանը (...): Բաուերի դպրոցի գերքննադատական տեսությունները դադարեցին գոյություն ունենալուց իրենց իսկ անճշմարտացիության պատճառով»: Այնուհետև Քենյոնը եզրակացնում է. «Նոր Կտակարանի գրքերի իսկությունը, ինչպես և ընդհանուր ամբողջականությունն ու ճշտությունը, կարող են վերջնականապես հաստատված համարվել»[2]:

1 **Albright W. F.** The Archaeology of Palestine…P. 239 Տես նաև «Ἐκκλησία» հանդեսը Ἔτος 14, № 19,9 Μαΐου 1936, Σ. 146

2 **Vos H. F.** Op. cit. P. 51-52; **Kenyon F. G.** The Bible and Modern Scholarship. L., Murray,1948. P. 21,52.

1935 թ. Հ. Ի. Բելլն ու Տ. Կ. Սկիտը ևս մեկ պապիրուսե պատառիկի բնագիր հրապարակեցին, որն իր չափերով գերազանցում էր Ջոն Ռայլենդսի գրադարանի օրինակին: Այս պատառիկը Բրիտանական թանգարանում է պահվում: Բելլի և Սկիտի պապիրուսը (չորս էջ) հիմնականում չորս Ավետարանների և հատկապես Հովհաննեսի Ավետարանի վրա հիմնված Քրիստոսի կյանքի մասին մասնակի պատումներ է բովանդակում: Այս պապիրուսի էջերին «Բառ առ բառ Հովհաննու Ավետարանից արտահայտություններ[1]» հայտնաբերվեցին: Այն թվագրվում է Ջ. Ռայլենդսի գրադարանի օրինակի ժամանակով՝ II դարի կեսով[2]:

Հնագետ սըր Ֆ. Քենյոնի եզրահանգումից հետևում է, որ հայտնաբերված Նոր Կտակարանի ձեռագրերը պատեհություն ընձեռեցին այնքան մոտենալու Ավետարանների գրության ժամանակին, որ կարողացանք զգալ, ինչպես նկատում է Վոսը. «սուրբ առաքյալների շնչառությունը»[3]: Այսպես ուրեմն՝ Հիսուսի կյանքի և Ավետարանների կազմության միջև ընկած ժամանակահատվածն այնքան կարճ է, որ անհնարին է դարձնում Աստվածամարդու պատմական անձնավորության շուրջ լեգենդներ և առասպելներ հյուսելը: Հետևաբար Ավետարանների հեղինակները Քրիստոսին նկարագրեցին այնպիսին, ինչպիսին որ էր իրականում, այսինքն՝ Աստծո Որդի և Բան, Ով շատ տեղերով շրջեց՝ «բարիք անելով և սատանայից բռնվածներին բժշկելով» (Գործք. 10. 38), և ի վերջո խաչվեց, հարություն առավ ու երկինք համբարձվեց:

Այսօր Նոր Կտակարանի վաղեմի ձեռագրերը դասական մատենագիրների ձեռագրերի հետ բաղդատելիս՝ այսպիսի պատկեր է հառնում մեր առաջ:

1. Արդեն հիշատակել ենք, որ Նոր Կտակարանի ձեռագրերի թիվն անցնում է 4000–ի սահմանագիծը, որոնցից մի քանիսը IV դարից են, իսկ քիչ թե շատ կցկտուր պապիրուսե պատառիկները մինչև իսկ վերագրվում են II դարին: Նշենք, որ այլ հին

1 Տես «Ἐκκλησία» հանդեսը, նույն տեղում:
2 **Albright W. F.** Op. cit. P. 239; **Kenyon F. G.** Op. cit. P. 22,23.
3 **Vos H. F.** Op. citP. 52.

մատենագիրների ձեռագրեր շատ քիչ են պահպանվել: Ճիշտ է, 79 թ. Վեզուվ հրաբխի ժայթքմամբ լավայի տակ առնված Հերկուլանիում (Կամպանիայում՝ Իտալիայի հարավի հնագույն շրջանում) քաղաքում Ռայլենդսի և Բրիտանական թանգարանի պապիրուսներից ավելի հին հունարեն ձեռագրեր հայտնաբերվեցին, որոնք, այնուամենայնիվ, սակավաթիվ մասնագետների հետաքրքրությունն են շարժում: Հուլիոս Կեսարի «Նոթեր Գաղղիական պատերազմի մասին» երկի բնագրի ընդամենը ինը կամ տաս պատշաճ գրչագրեր կան, ընդ որում դրանցից հնագույնն ընդօրինակվել է Կեսարի մահից 900 տարի անց (այսինքն՝ մոտ 850 թ.): Նույնն է նաև Թուկիդիդեսի «Պատմության» պարագայում. մեզ հայտնի են այդ ստեղծագործության ութ ձեռագրեր, որոնցից վաղեմագույնը թվագրվում է 900 թվականով: Նույնն է նաև բազմաթիվ դասական հեղինակների պարագայում: Սակայն Նոր Կտակարանի դեպքում մենք առնվազն 40 ձեռագիր ունենք, որոնց տարիքն անցնում է 1000 տարուց[1]:

2. Վերջին նկատառումը հարկադրում է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա. հռչակավոր հույն և հռոմեացի մատենագիրների ստեղծագործությունները և առհասարակ դասական հնադարից մեզ հասած ձեռագրերը ոչ միայն Նոր Կտակարանի ձեռագրերից քիչ են, այլև նաև ավելի ուշ շրջանից են: Այսպես՝ Հոմերոսի՝ մեզ հասած հնագույն բնագիրը պատկանում է XIII դարին: Տակիտեսի միակ հնագույն բնագիրը թվագրվում է վերածննդի դարաշրջանին անմիջապես նախորդող ժամանակով: Բացառությամբ, թերևս, մի քանի պատառիկների՝ առհասարակ հույն դասականների ստեղծագործությունների՝ IX դարից վաղ ընդօրինակված ձեռագրեր գոյություն չունեն[2]: Պլատոնի երկասիրությունների ձեռագրերից ամենավաղը IX դարով է թվագրվում, այսինքն՝ Պլատոնի գործերի ստեղծումից տասներկու դար անց[3]:

1 **Short A. R.** Op. cit. P. 50.
2 **Τρεμπέλας Π. Ν. Ἀ**πολογητικαὶ Μελέται, Τ. Ε΄, Ἰησοῦς ὁ ἀπὸ Ναζαρέτ. Ἔκδ. «Ὁ Σωτήρ», Ἀθῆναι. Σ. 39.
3 Տե՛ս «Ἐκκλησία» հանդեսը, էջ 146.

3. Նոր Կտակարանի հունարեն բնագրի ձեռագրերի այս զանգվածին հարկ է դասել նաև ավետարանական բնագրերով ծիսամատյանների ավելի քան մեկուկես հազար օրինակները, որոնք մեծավ մասամբ կազմված են ծիսական տարեկան շրջանում կարդացվող ավետարանական ընթերցվածքներից: Կան 15 հին լեզուներով թարգմանություններ նույնպես, զորօրինակ՝ հին ասորականը («Պեշիթան», որը թարգմանաբար նշանակում է հասարակ), ղպտիականը և մյուսները, որոնք վկայում են տվյալ թարգմանությունների համար հիմք ծառայած հունական սկզբնաղբյուրի գոյության մասին: Ի լրումն սրա՝ Հին Եկեղեցու հայրերի երկասիրություններում բազմաթիվ նորկտակարանյան մեջբերումներ կան այլ՝ ավելի վաղ, բայց ներկայումս կորսված ձեռագրերից:

4. Նոր Կտակարանի ձեռագրերի առատ նյութը ոչ միայն աստվածաշունչ բնագրերի ստույգ թվագրության հնարավորություն է ընձեռում, այլև օգնում է վավերացնել այդ բնագրերի արժանահավատությունը: Անշուշտ, բոլոր այս ձեռագրերում որոշ տարընթերցվածքներ են նկատվում: Այսօրինակ տարբերությունները բացատրվում են ընդօրինակման ժամանակ թույլ տրված հնարավոր սխալների կամ էլ այս կամ այն շրջանում հունարեն բառամթերքի գործածության տարբերությունների հանգամանքով, ինչպես նաև գրչի՝ բնագիրը շտկելու կամայական փորձերով՝ ենթադրելով, թե իր նախորդը սխալ է թույլ տվել: Համենայն դեպս այս տարբերություններն աննշան են և ամենևին չեն աղավաղում բնագրի իմաստը: Այս կապակցությամբ երջանկահիշատակ պրոֆեսոր Պ. Ն. Տրեմբելասը նկատել է, որ Նոր Կտակարանի անվանի քննադատներ Ֆ. Ուեստկոտի և Ֆ. Ի. Ա. Հորտի կարծիքով՝ «Ավետարանի բնագրի 7/8–ը կասկածի տեղիք չի տալիս, իսկ մնացյալը՝ 1/8–ը, մասամբ բաղկացած է մի շարք բառերի շտկումներից և տարընթերցվածքներից, որոնք չնչին են: Բնագրի բովանդակությանը վերաբերող տարընթերցվածքները սակավա-

թիվ են և ծավալային հարաբերակցության առումով կարող են գնահատվել իբրև ողջ բնագրի մեկ հազարերորդից էլ պակաս»[1]:

5. Սրբազան բնագրերի գրիչների բարեպաշտությամբ, ուշադրությամբ և բարեխղճությամբ բացատրվող այս զարմանահրաշ ֆենոմենն առավել ցնցող է, եթե հաշվի առնենք հին մատենագիրների ստեղծագործությունների գրչագրերում հանդիպող սխալները: Տեղին է հիշատակել այն փաստը, որ միայն հռոմեացի բանաստեղծ Հորացիոսի զանազան ձեռագրերում հանդիպող տարընթերցվածքներից կարելի է երեք հատոր կազմել: Իսկ հռոմեացի կատակերգու Տերենտիոսի վեց կատակերգությունների՝ Ավետարանի ձեռագրերից հազար անգամ պակաս պահպանված գրչագրերը՝ 30 000 տարընթերցվածքներ են պարունակում, ինչպես հայտնում է Ե. Դյուպլեսսին[2]: Շորտն արդարացիորեն նկատում է. «Ուշագրավ է ոչ թե այն, թե որքան մեծ են տարբերությունները», որոնք նկատվում են Նոր Կտակարանի հին ձեռագրերի մեծ մասի մեջ, «այլ տարբեր ձեռագրերում սրբազան բնագրերի արտասովոր և ցնցող միօրինակությունը»:

6. Վերջում կարելի է նշել հետևյալը. քանի որ հնագիտության շնորհիվ լույս աշխարհ հանված հնամենի ձեռագրերը մասնագետների կարծիքով մեծաթիվ նոր տվյալներ չեն պարունակում արդեն հայտնիների համեմատ, ապա դա միմիայն վկայում է այն մասին, որ Նոր Կտակարանի բնագրի ավանդման հարազատությունն անբասիր է:

«ՀԵՐՈՎԴԵՍ ԱՐՔԱՅԻ ՕՐՈՎ»

Ըստ աստվածաշնորհ ավետարանիչ Մատթեոսի՝ Քրիստոս ծնվեց «Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հերովդես արքայի օրով» (Մատթ. 2. 1): Նա նաև ասում է, որ Հերովդեսը «մարդ ուղարկեց և կոտորեց այն բոլոր մանուկներին, որ Բեթղեհեմում և նրա սահմաններում էին գտնվում և երկու տարեկան ու

1 **Τρεμπέλας Π. Ν. Ἀ**πολογητικαὶ Μελέται, … Σ. 40
2 Անդ:

դրանից ցած էին» (Մատթ. 2. 16), որպեսզի այս եղանակով, ինչպես ինքն էր խորհում, սպանի նաև մանուկ Հիսուսին:

Ո՞վ էր այս Հերովդեսը, երբ է ապրել, իշխել և մահացել, ի՞նչ բարքերի տեր մարդ էր. այս ամենը քաջ հայտնի է մեծաթիվ աղբյուրներից, ինչպես նաև հնագիտության շնորհիվ, որի օգնությամբ հայտնաբերվեցին այդ դարաշրջանի ճարտարապետական կառույցների ավերակները: Հերովդեսը եդոմացի էր, Հակոբի եղբայր Եսավի հեռավոր զարմից: Եդոմացիներն ապրում էին Եդոմի շրջանում, որի գլխավոր քաղաքը Քեբրոնն էր: Հովհաննես II Հյուրկանոսն իրեն ենթարկեց եդոմացիներին՝ ստիպելով նրանց հուդայականություն ընդունել և թլպատվել: Հերովդեսի պապ Անտիպասը Ալեքսանդր Յաննեոսի կողմից Հրեաստանի կուսակալ էր նշանակվել: Անտիպասին (մահացել է 78 թ.) փոխարինեց իր որդի Անտիպատրոսը: Ներգաբարո և սնապարծ Անտիպատրոսը համագործակցում էր Հովհաննես II Հյուրկանոսի և հռոմեացիների հետ, ինչի արդյունքում հռոմեացի կայսր Հուլիոս Կեսարը հաստատեց Հրեաստանի «կուսակալի» նրա տիտղոսը (47 թվին), իսկ Հասմոնյան Հյուրկանոս II–ին նշանակեց Երուսաղեմի «քա-



Օգոստոս կայսրը: Արձանի գլուխ: Հռոմ, Ազգային թանգարան (Թերմերի թանգարան):



Հուլիոս Կեսար: Մարմար, Հռոմ: Վատիկանի թանգարան:

հանայապետ և էթնարքոս*»: Հետագայում Անտիպատրոսը (մահացել է 43 թ.) իր երկրորդ որդի Հերովդեսին Գալիլիայի (հյուսիսային Պաղեստին) կուսակալի պաշտոնը շնորհեց:

Հերովդեսը երիտասարդ հասակից սկսեց իր քաղաքական կարիերան: Շնորհիվ իր եռանդի՝ արագ մեծ հաջողությունների հասավ և դարձավ Հրեաստանի չորրորդապետ: Ապա Օգոստոսի օժանդակությամբ (հետագայում՝ Ք. ա. 31 թ. – 14 թ. հռոմեական կայսր) Հրեաստանի թագին տիրացավ: Այդ ժամանակ հռոմեացիների օգնությամբ, իսկ հետագայում նաև Անտիգոնոսի դեմ կայծակնային ռազմական գործողությունների և Երուսաղեմի երեքամսայա պաշարման շնորհիվ, Դավթի քաղաքում նստեց գահին (Ք. ա. 37 թ.):

Նրա խիստ, եսասեր, սնապարծ ու դաժան բարքերն ամենասարսափելի կերպով դրսևորվեցին: Իր գահակալությունն սկսեց Հասմոնյանների ողջ ցեղը սրի քաշելով, մահապատժի ենթարկեց Անտիգոնոսին (Արիստոբուլոս II–ի որդուն, Հովհաննես II Հյուրկանոսի եղբորը)՝ իր քառասունհինգ կողմնակիցների հետ միասին: Իր աներորդի Արիստոբուլոսին (իր Մարիամնա կնոջ եղբորը) նշանակեց Երուսաղեմի Տաճարի քահանայապետ: Սակայն վերջինիս քահանայապետությունը երկար չտևեց. Հերովդեսի հրամանով նրան խեղդեցին, որոշ տեղեկությունների համաձայն՝ Հորդանան գետում կամ լողավազանում լողանալիս: Հերովդեսը կորստյան մատնեց նաև Հյուրկանոս II–ին, որոշ ժամանակ անց՝ իր կնոջը՝ Մարիամնային և նրա մայր Ալեքսանդրային: Բացի այդ, հրամայեց ողջ–ողջ այրել երկու դպիրների, ովքեր Տաճարի դարպասից հանել էին հռոմեական ոսկյա արծիվը: Ի շարս այլոց՝ սպանեց իր իսկ քրոջ երկու ամուսիններին և իր երկու որդիներին՝ Ալեքսանդրին և Արիստոբուլոսին: Իսկ իր մահից հինգ օր առաջ իր մանկլավիկներին ուղարկեց իր որդուն՝ Անտիպատրոսին սպանելու[2]: Հրեաները, ովքեր այդպես էլ նրան յուրային չհամարեցին, քանզի եղոմացի էր, նրան «հրեաների թագավոր»

* Ազգի առաջնորդ, կառավարիչ:
2 **Free J. P.** Op. cit. P. 276; **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 482.

էին անվանում՝ հակադրելով այդ տիտղոսը մեկ ուրիշին՝ «հրեական թագավորին»[1]: Եսսենացիները նույնպես նրան երբեք չէին վստահում: Նա կարող էր հույսը միայն վերազգային ոգով տրամադրված հրեաների աջակցության վրա դնել:

Կյանքի վերջին տարիներին ծայրահեղ խռովքի մեջ էր. դյուրագրգիռ էր, բարկացկոտ՝ բազմաթիվ սպանությունների պատճառով (բացի վերոհիշյալներից, սպանում էր անձամբ կամ հրամայում էր սպանել նաև ուրիշ շատերի, համայնքներով էր ոչնչացնում մարդկանց), բայց առավելապես տվայտում էր իր կնոջ սպանության պատճառով, որին՝ մահից հետո էլ շարունակում էր սիրել: Ուստի միշտ մի լեռնային ամրոցից մյուսն էր տեղափոխվում՝ հանգիստ ու խաղաղություն գտնելու համար, այնինչ առաջ Մեռյալ ծովի արևելքում գտնվող Քաղղիրոյի աղբյուրների ջրերում էր ապաքինություն փնտրում:

Մահը վրա հասավ յոթանասուն տարեկանում: Հրեա պատմիչ Հովսեպոս Փլաբիոսը նրան անվանում է «երբևէ իշխած ամենաանագորույն բռնակալ»: Եվ հավելում. «Նրա կարճ կառավարման ընթացքում հրեաներն այնքան ահ ու սարսափ վերապրեցին, ինչքան որ նրանց նախնիները՝ մի վիթխարի ժամանակաշրջանում՝ Բաբելոնից ելնելուց սկսած և Քսերքսեսի գահակալությամբ վերջացրած, երբ նրանք ետ վերադարձան»[2]:

Այսպիսին էր Հերովդեսը, որի թագավորության օրով ծնվեց Քրիստոս Փրկիչը: Այս թագավորի սարսափելի նկարագիրն իր լրումին է հասնում մանուկների կոտորածով, ինչպես այդ մասին պատմում է աստվածաշնորհ ավետարանիչ Մատթեոսը: Չափազանց դիպուկ է այս անմարդկային եղոմացու անձնավորության մասին խոսքը. «Նա իշխանության եկավ, ասես աղվես, կառավարեց, ինչպես վագր և մահացավ շան պես»: Հնագիտությունն օգնեց լույս սփռելու Հերովդեսի կյանքի բոլոր կողմերի վրա: Այս ամենը հնարավոր դարձավ շնորհիվ նրա տիրապետության ժամանակներից մեզ հասած գտածոների, քանզի Հերովդես Մեծի

1 **Cornfeld G.**,Freedman D. N. Op. cit. P. 253.
2 **Keller W.** ‘Η Βίβλος…

(այսպես էին նրան անվանում) դարաշրջանի բազում ճարտարապետական կառույցներ պեղվեցին, ինչպիսիք են՝ Երուսաղեմի Տաճարը, արքունիքը, հնամենի Սամարիան, որը վերակառուցվել էր նրա կողմից և Սեբաստիա վերանվանվել, Պաղեստինի զանազան ամրաշինական կառույցները, ինչպես նաև Պտողեմայիդայի (Ակրա), Դամասկոսի, Սիդոնի, Բիբլոսի, Բեյրութի, Լատակիայի (Լաոդիկեի) և Անտիոքի հանրային շինությունները[1]:

ՀԵՐՈՎԴԵՍ ԱՐՔԵՂԱՅՈՍԸ: ՀԵՐՈՎԴԵՍ ԱՆՏԻՊԱՍԸ

Ըստ Մատթեոս ավետարանիչի՝ կույս Մարիամի և Հիսուս մանկան հետ միասին թաքնված Հովսեփը, լսելով, որ Հրեաստանի թագավորն արդեն Հերովդեսի որդի Արքեղայոսն է, վախեցավ ետ վերադառնալ: Ուստի երազում Աստծուց հրաման առնելով՝ գնաց Գալիլիայի կողմերը և բնակվեց Նազարեթում (Մատթ. 2. 21–22), քանզի Գալիլիայում այդ օրերին իշխում էր Հերովդեսի մյուս որդին՝ Անտիպասը:

Արքեղայոսին և Անտիպասին առնչվող պատմական անցքերն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրվեցին նաև հնագիտության շնորհիվ: Պեղումներն արգասավորվեցին այդ ժամանակաշրջանի շինությունների, մետաղադրամների և արձանագրությունների հայտնաբերմամբ, որոնք լուսաբանեցին սրբազան բնագրերում նկարագրված անցքերը:

Իր մահից ոչ շատ առաջ Հերովդեսն իր երեք որդիների միջև բաժանեց թագավորությունը: Ավագ որդին ժառանգեց հայրական գահն ու թագավորի տիտղոսը, հետևաբար՝ իշխանությունը Հրեաստանի, Սամարիայի և Եդոմի հյուսիսային մասի վրա: Մյուս որդին՝ Անտիպասը, ժառանգեց չորրորդապետի տիտղոսն ու Գալիլիայի և Բերեայի իշխանությունը: Չորրորդապետի պաշտոն ստացավ նաև Հերովդոսի երրորդ որդին՝ Փիլիպպոս II–ը՝ Իտուրիայի, Տրաքոնիայի, Վաթանիայի և Ավնանիայի վրա իշ-

1 **Tompson J. A.** Op. cit. P. 286; **Free J. P.** Op. cit. P. 279,280.

խելու իրավունքով: Դաժանաբարո և գազանաբարո Հերովդեսի մահից հետո հրեաները շունչ առան, սակայն, երբ պարզվեց, որ իշխանությունն անցել է նրա որդիներին, զայրույթով լցվեցին: Այսպես օրինակ՝ միայն Հերովդեսի ընտանիքն ու վարձկաններն Արքեղայոսին թագավոր ճանաչեցին, իսկ ժողովուրդը վճռականորեն դեմ էր տրամադրված: Այդ ժամանակ Արքեղայոսը Հռոմ փախավ, որտեղ հույսեր էր փայփայում իր համար «թագավորի» տիտղոսի պաշտոնական ճանաչում գտնել, բայց Հրեաստանի ժողովրդի ծայրահեղ դժգոհությանն իրազեկ հռոմեացի կայսրը շատ զգույշ ու ողջամիտ վարվեց՝ Արքեղայոսին «էթնարքոսի» կոչում շնորհելով: Այսպես Ք. ա. 4 թվականին այդժամ արդեն մահ գտած Հերովդեսի փոխարեն Պաղեստինում երեք Հերովդեսներ կային՝ Հերովդես Արքեղայոսը, Հերովդես Անտիպասը և Հերովդես Փիլիպպոս II–ը[1]:

Կալիգուլա կայսրը

Հետևաբար ավետարանիչ Մատթեոսի՝ Արքեղայոսին իբրև թագավոր հորջորջումը ստույգ է, քանզի Եգիպտոսից Սուրբ Ընտանիքի վերադարձին Արքեղայոսը դեռ «թագավորի» տիտղոս ուներ:

Հերովդես Անտիպասն ու Հերովդես Փիլիպպոսը շարունակում էին իշխել իրենց տիրույթներին՝ մեկը մինչև 39 թ., մյուսը մինչև 34 թ.: Այլ էր Արքեղայոսի՝ Հերովդեսի որդիներից վատթարագույնի պարագան, ով ամեն ինչում իրեն դրսևորեց իբրև իր հոր «արժանի» զավակ: Առաջին ժողովրդական խռովության ժամանակ նա իր զորքը Երուսաղեմի վրա տարավ, ինչի արդյունքում երեք հազար մարդ սպանվեց, այնպես որ Տաճարի ամբողջ գավիթը դիակներով էր լցված: Մինչ Հռոմում Արքեղայոսն ու Անտիպասը փորձում էին Օգոստոս կայսեր՝ Արքեղայոսին թագավորական իշխանություն շնորհելու համաձայնությունն ստանալ,

1 **Thompson J. A.** Op. cit. P. 292.

ալեկոծությունների նոր ալիքը հրեական և հռոմեական զորքերի միջև լուրջ բախումների հանգեցրեց: Ջինված ընդհարումներն իրենց գագաթնակետին հասան Տաճարի պարիսպների առաջ. մինչ հռոմեացիների վրա քարեր էին նետում, սրանք հրկիզեցին Տաճարի ծածկով գավիթը, ներխուժեցին Տաճար ու կողոպտեցին այն, ինչի արդյունքում ժողովրդական ալեկոծություններն ընդգրկեցին բովանդակ Հրեաստանը: Ի վերջո հռոմեացիներին հաջողվեց հաղթել. մոտ երկու հազար մարդ խաչը հանվեց՝ չհաշված ռազմական գործողությունների ընթացքում սպանվածներին:

Ահա թե ինչ էր տեղի ունենում Հուդայում, երբ Հովսեփը որոշեց սուրբ Մարիամի և մանուկ Հիսուսի հետ վերադառնալ Պաղեստին: Այդ իսկ պատճառով նախընտրեց Գալիլիան, ուր չորրորդապետ էր ավելի մեղմաբարո Անտիպասը:

Բռնակալ Արքեղայոսը կրկին հրեաների վրդովմունքն առաջացրեց, երբ քշեց իր կնոջն ու կնության առավ մինչ այդ արդեն երկու անգամ ամուսնացած մի կնոջ: Սակայն նրա գործողությունները նաև հռոմեացիների դժգոհությունն առաջացրին, քանզի նա մեծ վատնողությամբ և եռանդով շինարարության էր լծվել: Այս պատճառով էլ հռոմեացիները պաշտոնանկ արեցին նրան և աքսորեցին գաղղիական Վիեննա քաղաքը, որտեղ էլ նա մահացավ[1]:

Հերովդես Անտիպասի՝ Գալիլիայի չորրորդապետի անունը բազմիցս է հանդիպում Նոր Կտակարանի էջերում: Քրիստոսը նրան «աղվես» (Ղուկ. 13. 32) անվանեց, այսինքն՝ նենգաբարո, քանի որ Դավթի գահը հափշտակած Կեսարի դրածոն էր: Սա այն նույն Անտիպասն է, ում մոտ Պիղատոսն ուղարկեց Քրիստոսին: Այդ ժամանակ Երուսաղեմում գտնվող Անտիպասը, իր զորականներով նրան նվաստացնելուց և ծաղրելուց հետո, նորից ետ՝ Պիղատոսի մոտ ուղարկեց: Անտիպասի՝ Պիղատոսին մատուցած շինծու սիրալիրության շնորհիվ նրանք կրկին բարեկամներ դարձան (Ղուկ. 23. 1–2):

1 **Հովսեփոս Փլաբիոս,** Հրեական հնախոսությունը, XVII,13,1-2:

Սա այն նույն Հերովդես Անտիպասն է, ում հանդիմանում էր Հովհաննես Կարապետը. բանն այն է, որ նաբաթացիների արքա Արետասի դստերը կնության առած Անտիպասը բաժանվեց նրանից, ետ ուղարկեց և ապօրինի կերպով եղբոր (Հերովդես Մեծի և Մարիամնայի որդի Հերովդես Փիլիպպոսի) կնոջ հետ էր ապրում: Հերովդիան Արիստոբուլոսի՝ Անտիպասի եղբոր դուստրն էր: Հետևաբար Անտիպասը միաժամանակ նրա հորեղբայրն ու տեգրն էր: Այս կինն ու նրա դուստրը՝ Սաղոմեն, ապրում էին Անտիպասի տիրույթների Տիբերիա մայրաքաղաքում: Իսկ երբ Հովհաննես Կարապետը հանդիմանեց Հերովդես Անտիպասին, վերջինս բանտարկեց նրան Մահերունթ ամրոցում, ապա ի հաճույս Հերովդիայի հրամայեց գլխատել նրան (հմմտ. Մատթ. 14. 1–12, Մարկ. 6. 14–25, Ղուկ. 9. 7–9): Անտիպասի ամոթալի կյանքն Արետաս թագավորի հետ պատերազմի հանգեցրեց: Իսկ երբ Հռոմի կայսր դարձավ Կալիգուլան, գահընկեց արեց Անտիպասին և Գաղղիա աքսորեց՝ երբեմնի Հերովդես Մեծի տիրած բոլոր տիրույթների վրա թագավոր կարգելով Հերովդիայի եղբայր Հերովդես Ագրիպպաս Ի–ին:

ՀԵՐՈՎԴԵՍ ՓԻԼԻՊՊՈՍ II-Ը ԵՎ ՀԵՐՈՎԴԵՍ ԱԳՐԻՊՊԱՍ Ի-Ը

Հերովդես Փիլիպպոսի անունն ընդամենը մեկ անգամ է հոլովվում Նոր Կտակարանում: Նրա մասին խոսում է Ղուկաս ավետարանիչն այն համարում, որտեղ հաղորդվում է Հովհաննես Կարապետի գործունեության մասին և ուրվագծվում են պատմական շրջանակները, որի սահմաններում գործում էր Մկրտիչը: Ղուկասն ասում է. «Տիբերիոս կայսեր իշխանության տասնհինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կուսակալ էր Հրեաստանի և Հերովդեսը՝ չորրորդապետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպպոսը՝ չորրորդապետ Իտուրացիների ու Տրաքոնացիների երկրի, Լյուսանիասը՝ չորրորդապետ Աբիլենեի...» (Ղուկ. 3. 1):



Տիբերիոս: Մարմար: Սանկտ-Պետերբուրգ: Պետական Էրմիտաժ:

Այսպիսով, Փիլիպպոս II–ը Պիղատոսի ժամանակակիցն էր ու Ք. ա. 4 թվից մինչև Ք. հ. 34 թ. Պաղեստինի հյուսիս–արևելյան կողմերի չորրորդապետը:

Նրա կինն իր խորթ եղբոր՝ Փիլիպպոս I–ի և Հերովդիայի դուստր Սաղոմեն էր: Այս ամուսնությունը կայացավ այն բանից հետո, երբ Սաղոմեն պարեց և փոխարենը Հովհաննեսի մահապատժին հասավ[1]: Փիլիպպոսը լավ կառավարիչ էր, բոլոր Հերովդեսներից լավագույնը[2]: Իր եղբայրների նման գեղեցիկ շինություններ կառուցողի հռչակ էր վայելում: Նրա անունը կապված է երկու քաղաքների կառուցման հետ՝ փիլիպպոսյան Կեսարիայի, որի մասին հիշատակում են Մատթեոսն ու Մարկոսը (Մատթ. 16. 13, Մարկ. 8. 27) և Հուլիասի՝ կառուցված ի պատիվ Օգոստոս կայսեր դուստր Հուլիայի: Հուլիասն Ավետարանից (Մատթ. 11. 21) քաջ հայտնի Բեթսայիդա հնամենի քաղաքն է:

Կեսարիան նախկինում Պանեաս էր կոչվում: Իսկ Կեսարիա կոչվեց ի պատիվ կայսր Տիբերիոսի: Հերովդես Փիլիպպոս II–ը մահացավ Հուլիասում 34 թվին, իսկ նրա չորրորդապետությունը Ասորիքի կառավարչի իշխանության տակ էր գտնվում ընդհուպ մինչև 37 թ., երբ Կալիգուլա կայսրն այն հանձնեց Հերովդես Ագրիպպասին:

Գործք առաքելոց գրքում Հերովդես Ագրիպպասի անունը (37–44 թթ.) երկու անգամ է հոլովվում. երբ նրա հրամանով Հովհաննես ավետարանիչ առաքյալի եղբայր Հակոբոսը մահապատժի ենթարկվեց, իսկ Պետրոս առաքյալը բանտ նետվեց (Գործք 12. 1–4,11,19), և երբ Աստծո հրեշտակը նրան սարսափելի հիվանդությամբ պատուհասեց այն բանից հետո, երբ նրա հրապարակային

1 **Հովսեպոս Փլաբիոս,** Հրեական հնախոսությունը, XVIII, 5,4:
2 Նույն տեղը XVIII,4,6.



Ծովափնյա Կեսարիան: Այն թատրոնը, որտեղ հրեշտակը հարվածեց Հերովդեսին (Գործք. 12. 19-23):

խոսքը թատրոնում ունկնդրելիս՝ աստվածացրին նրան: Աստծո հրեշտակի հարվածից որդերը սկսեցին ուտել նրա մարմինը, իսկ քիչ օրեր անց նա վախճանվեց (44 թ., հմմտ. Գործք 12. 21–23):

Հնագիտության շնորհիվ մեր տրամադրության տակ եղած փաստերը հաստատում են այս անցքերի իսկությունը: Այսպես՝ մենք իմացանք, որ Ագրիպպաս I–ն Արիստոբուլոսի որդին էր, ով իր հերթին Հերովդես Մեծի և Մարիամնայի որդին էր: Արիստոբուլոսը կնության առավ իր զարմուհի Բերենիկեին՝ Հերովդեսի քրոջ՝ Սաղոմեի դստերը: Այսպիսով Ագրիպպաս I–ը Հերովդեսների հարստության հետ մոտիկ արյունակցական կապեր ուներ: Նա կրթություն էր ստացել Հռոմում, որտեղ դարձել էր Տիբերիոս կայսեր թոռան դաստիարակը և Կալիգուլայի մտերիմ ընկերը: Սակայն այն բանից հետո, երբ Տիբերիոսի դեմ արտահայտվեց, վերջինս նրան բանտ նետեց: Կայսր դառնալով՝ Կալիգուլան ազատ արձակեց Ագրիպպասին՝ ընդ որում նրան Հերովդես Փիլիպպոսի չորրորդապետությունը շնորհելով: Հետագայում Ագրիպպասին անցան Աբիլինեի (Հերմոն լեռից դեպի հյուսիս) և Անտիպասի ու Արքեղայոսի կառավարած շրջանները: Այսպիսով Հերովդես Ագ-

ріպպաս I–ը դարձավ իր պապ Հերովդես Մեծի բոլոր տարածքների կառավարիչը, իսկ Հռոմի կայսրը նրան թագավորի տիտղոս շնորհեց[1]:

Իբրև Մովսեսի օրենքի նախանձախնդիր պահապան՝ նա հալածում էր քրիստոնյաներին, ուստի և մահապատժի ենթարկեց Հովհաննեսի եղբորը՝ Հակոբոսին, ինչպես արդեն խոսել ենք այդ մասին, և բանտարկեց Պետրոսին՝ ավելի ուշ նրան սպանելու մտադրությամբ, սակայն առաքյալը հրաշքով փրկվեց: Ագրիպպասը հրամայեց սպանել առաքյալին հսկող զինվորներին(Գործք 12. 19): Ագրիպպասի մահվան նկարագրությունը, ինչպես այդ մասին պատմում է Ղուկաս ավետարանիչը (Գործք 12. 21–23), համընկնում է հրեա պատմիչ Հովսեպոս Փլաբիոսի՝ այդ դեպքի նկարագրությանը[2]: Այս երկու բնագրերի համադրությամբ ի հայտ եկած ոչ մեծ անհամաձայնությունները հաստատում են, որ Ղուկասն «իր ձեռքի տակ Հովսեպոսի բնագիրը չի ունեցել և պատմում է անկախ դրանից»[3]:

Ղուկաս ավետարանիչը Հերովդես Ագրիպպաս II–ին՝ Ագրիպպաս I–ի որդուն և Հերովդես Մեծի ծոռանը, հիշատակում է Պողոս առաքյալի դատին մասնակցելու առնչությամբ: Հրեաստանի կուսակալ Փեստոսը խորհրդակցում էր Ագրիպպաս II–ի հետ, թե ինչպես վարվի Պողոսի հետ (Գործք 25. 13–26,32): Ագրիպպաս II–ը «Տաճարի և նրա գանձերի պահապանն էր ու բացի այդ, քահանայապետի պաշտոնատվության իրավունքը նրան էր վերապահված»[4]: Ներոնն ամրապնդեց Հռոմի բարեկամ համարվող Ագրիպպաս II–ի իշխանությունը: Ուստի և երբ հրեաները հռոմեացիների դեմ ապստամբեցին, Ագրիպպասը վերջիններիս կողմն անցավ: Իսկ երբ հռոմեացիները 70 թ. գրավեցին Երուսաղեմը, թույլ տվեցին նրան բնակվել Հռոմում, որտեղ նա «պրետոր» դարձավ և 100 թ. յոթանասունհինգ տարեկան հասակում մահացավ[5]:

---

1 **Thompson J. A.** Op. cit. P. 295-296.
2 **Յովսեպոս Փլաբիոս,** նշված աշխատությունը, XIX,8,2:
3 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὰς Πράξεις τῶν Ἀποστόλων. Ἔκδ. «Ὁ Σωτήρ», Ἀθῆναι. Σ. 370.
4 **Τρεμπέλας Π. Ν.** Ἔνθ ᾽ ἀνωτ. Σ. 628. Thompson J. A. Op. cit. P. 296.
5 **Free J. P.** Op. cit. P. 281,282.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐԸ

Պեղումներից երևան հանված մետաղադրամները լույս են սփռում Նոր Կտակարանում հիշատակված անցքերի և անձանց վրա: Առաջին անգամ մետաղադրամները շրջանառության մեջ մտան Ք. ա. մոտ VII դարում: Իսկ հռոմեական տիրապետության օրոք դրանց գործածությունն արդեն համատարած էր: Այսօր Նոր Կտակարանի հետազոտողների տրամադրության տակ այդ վաղնջական ժամանակներից հասած զարմանալիորեն բազմազան մետաղադրամներ կան: Խնդրո առարկա դարաշրջանում Պաղեստինի տարածքում շրջանառվում էին հռոմեական, հունական, հելլենիստական պետությունների, ինչպես նաև իրենց՝ հրեաների հատած մետաղյա դրամները:

Ավետարանում հունական մետաղադրամների հինգ տեսակ է հիշատակվում: Դրանցից երկուսը՝ «տաղանդն»* ու «մնասը», ըստ էության, արծաթի կշռի չափ էին: Հրեաների, հույների և հռոմեացիների մոտ այս քաշը տարբեր դարաշրջաններում տարբեր էր: Այսպես՝ արծաթե տաղանդը կարող էր 22 կամ 45 կգ քաշ ունենալ: Նմանապես հայտնի էին «ոսկե տաղանդը», որը կարող էր 27 կամ 45 կգ կշռել և «ոսկե մնասը»: Ոսկե քանքարը (Մատթ. 18. 24 25. 15) մոտավորապես հավասար էր 240 ոսկե լիրայի[2]: Հնագետ Թոմպսոնի կարծիքով արծաթե քանքարը հավասար էր 960 ամերիկյան դոլլարի[3]: Համապատասխանաբար արծաթյա մնասը հավասար էր մոտ 16 ամերիկյան դոլլարի[4]: Այլոց

Հռոմ: Սատուրնի մեհյանի սյունաշար:

* Կամ քանքար:

2 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὸ κατὰ Ματθαῖον. Ἔκδ. «Ὁ Σωτήρ», Ἀθῆναι. Σ. 339

3 **Thompson J. A.** Op. cit. P. 306.

4 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὸ κατὰ Λουκᾶν. Σ. 537.

կարծիքով մնասը չորս ոսկյա լիրայի արժողություն ուներ: Մնացյալ երեք տեսակները ԱՄՆ 16 ցենտին հավասար արծաթյա «դրախմ» էին կոչվում (Ղուկ. 15. 8,9): Շրջանառության մեջ էր նաև երկդրամյանը (դիդրաքման)՝ ԱՄՆ 32 ցենտի արժողությամբ արծաթե մետաղադրամը[1]:

Նոր Կտակարանում հիշատակված են հետևյալ հռոմեական մետաղադրամները՝ ա) «դահեկանը»՝ մոտ 20 ԱՄՆ ցենտին հավասարար արծաթե մետաղադրամը (Մատթ. 18 28, 20. 2,9,10,13 և այլն), բ) «նաքարակիտը»՝* ԱՄՆ 1 ցենտի մեկ տասներորդ մասին հավասար պղնձե մետաղադրամը, գ) «դանգին»՝** (Ղուկ. 12. 6) մեկ և մեկ քառորդ ցենտի արժողությամբ, դ) պղնձե «լուման»՝ (Մարկ. 12. 42), որն սկզբնապես հռոմեական մետաղադրամ էր և ցենտի մեկ տասներորդ մասից պակաս արժողություն ուներ[4]:

Արծաթե դահեկանն այն մետաղադրամն է, որը հերովդեսականները ցույց տվեցին Տիրոջը, երբ Նրան փորձում էին (Մատթ. 22. 19–21): Մետաղադրամի մի երեսին պատկերված էր կայսրի գլուխը հետևյալ գրությամբ՝ «TI. CAESAR DIVI. AVG. F. AVGVSTVS», ինչը թարգմանաբար նշանակում է՝ «Կայսր Տիբերիոս Օգոստոս, աստվածային Օգոստոսի որդի»: Իսկ հակառակ երեսին գրված էր. «PONTIF. MAXIM. », այսինքն՝ «Միապետ Ծայրագույն»:

Հերովդես Մեծն ու նրա հաջորդները, պրովինցիաների կառավարիչները և այդ իրավունքով օժտված այլ անձինք ևս հատում էին սեփական դրամները: Հավանաբար ամենից շատ տարածված է եղել «լուման», քանզի այսօր էլ պեղումների ժամանակ դրանք մեծ քանակությամբ են հայտնաբերվում: Երկու լումա Տաճարի գանձանակի մեջ գցեց այրի կինը, ում արարքը գովեց Քրիստոս (Մարկ. 12. 41–44): Այս նույն մետաղադրամն է հիշատակվում Քրիստոսի՝ կեղծավորներին հասցեագրված հանդիմա-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 306,307.

2* Արևելահայերեն թարգմանության մեջ՝ դահեկան:

3* Արևելահայերեն թարգմանության մեջ՝ «դահեկան», որը դարձրյալ սխալ է, տես գրաբար համապատասխան բնագրերը:

4 Անդ, P. 307.

նություններում, ովքեր ըստ աստվածային դատաստանի՝ իրենց վերջին գրոշն (լումա) էլ պիտի վճարեն (Ղուկ. 12. 59):

Միշտ իսկական տոն է, երբ պեղումների ժամանակ հնագետների ձեռքը մետաղադրամներ են ընկնում, քանզի դրանց միջոցով կարելի է թվագրել գտածոները, շինությունները, մարդկանց կյանքի ժամանակը: Զորօրինակ՝ Կումրանի համայնքի ավերակներում գտնված մետաղադրամների հետազոտության արդյունքում հնագետներն այն եզրակացությանը հանգեցին, որ կումրանյան համայնքը հիմնվել է Ք. ա. 100 թվից ոչ շատ առաջ և ամայացել Հերովդես Մեծի օրոք, վերականգնվել է Արքեղայոսի ժամանակ և գոյատևել 70 տարի:

Պակաս չօգնեցին 70 թ.–ից ոչ ուշ կառուցված Մասադա հնամենի ամրոցում հայտնաբերված մետաղադրամները: Հնագետ Լ. Քեդմանը գրում է. «Նվազագույն իսկ կասկած չկա, որ Մասադայի երեք մետաղադրամները հայտնաբերվել են հենց այն նույն տեղում, որտեղ ընկել են համարյա 1900 տարի առաջ՝ ամրոցը պաշտպանող հրեաների ձեռքից»[1]:

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր Կտակարանի պատմական ստուգության և արժանահավատության հաստատմանն էապես նպաստում են նաև հնագիտության շնորհիվ երևան եկած գրություններն ու մակագրությունները: Ամենից գրավիչ հունարեն գրություններից կցանկանայինք առանձնացնել 1871 թ. ֆրանսիացի հետազոտող Կլերմոն Գաննոյի հայտնաբերածը, որը ներկայումս պահվում է Կոստանդնուպոլսի թանգարանում[2]: Բնագիրը կազմված է հունարեն գլխագրերով գրված յոթ տողից, որը, հավանաբար, զետեղված է եղել Հերովդեսի ձեռամբ կառուցված Տաճարի պարսպի վրա՝ բացառապես հրեաների համար նախատեսված ներսի

1 **Kadman L. A.** Coin Find at Masada//Israel Exploration Journal. T. 7,№1. P. 61ff.
2 **Aibridht W. F.** Recent Discoveries in Bible Lands. N. Y.,1955. P. 112; Parrot A. Le Musee du Louvre et la Bible. Paris,1957. P. 142.

Հունարեն գրություն Երուսաղեմի Տաճարից:

տեղամաս հեթանոսների մուտքն արգելելու նպատակով: Գրությունը ծանուցում է. «Օտարերկրացիներից և ոչ մեկին թույլ չի տրվում մտնել Տաճարի սրբարանի պարսպից ներս: Ով բռնվի, ինքը մեղավոր կլինի դրան հետևող մահվան մեջ»[1]:

Գրության առաջին կեսը Տաճարի տարածքից 50 մետր հեռավորության վրա է հայտնաբերվել: Սակայն հնագետները համակարծիք են այն բանում, որ այս հնամենի գրությունը հենց Տաճարից է: Այս գրությունն էլ ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում, եթե ուշադրություն դարձնենք այն փաստի վրա, որ Պողոս առաքյալը հրեաների կողմից ամբաստանվում էր թե իբր Տաճար հելլեններ է բերել (մասնավորապես Տրոփիմոս Եփեսացուն), որով էլ պղծել է սրբավայրը (Գործք 21. 28): Սույն գրության երկրորդ կեսը հայտնաբերվեց 1935 թ. Հնությունների պաղեստինյան բաժանմունքի կողմից պեղումների ժամանակ անցկացված սուրբ Ստեփանոսի դարպասների կողքին՝ ավերակների մեջ[2]:

Ոչ նվազ հետաքրքիր մեկ այլ հունարեն գրություն հայտնաբերվեց 1913–1914 թթ. Օփալ բլրի հարավային լանջին Ռայմոնդ Վայլլիի կողմից անցկացված պեղումներից: 1920 թ. հրապարակված այս բնագիրը հրեական սինագոգի գրության մի հատված է: Օլբրայթի կարծիքով այն Պաղեստինում հրեական սինագոգի գոյության ամենահին վկայությունն է: Գրությունում ասվում է ինչ–որ սինագոգի կառուցման մասին ոմն «Բեթթենի որդի Թեո-

1 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὰς Πράξεις τῶν Ἀποστόλων...Σ. 575

2 **Parrot A.** Op. cit. P. 144; Iliffe J. H. The Thanatos Inscription from Herod's Temple// Quarterly of the Department of Antiquities of Palestine, VI,1937. P. 1-3; Museum Catalogue. Palestine Archaeological Museum. P28.

դոտոսի՝ քահանայի և սինագոգի պետի, սինագոգի պետի որդու և սինագոգի պետի թոռան ձեռամբ»: Քանի որ Թեոդոտոսը, ըստ հնագետների, հավանաբար իր անունը վերցրել է հռոմեացի Բեթթենների (Բեթթինների) տոհմից, ապա այդ դեպքում նա կամ իր նախնիներից մեկն Իտալիայի ազատարձակներից է, քանզի ազատարձակ ստրուկները սովորաբար վերցնում էին իրենց ազատություն շնորհած նախկին տիրոջ անունը: Հետևաբար Թեոդոտոսի հրեա նախնին Պոմպեոսի օրոք (Ք. ա. 63 թ.) իբրև գերի Իտալիա էր տարվել: Սույն արձանագրությունն էլ ավելի մեծ հետաքրքրություն է առաջացնում, եթե հաշվի առնենք այն փաստը, որ Ղուկասը Գործք առաքելոցում հիշատակում է լիբերտինացիների (ազատագրյալների) սինագոգը: Նա գրում է. «Ոմանք այն ժողովարանից, որ կոչվում էր լիբերտինացիների... Ստեփանոսի հետ վիճելու ելան» (6. 9): Օլբրայթը գտնում է. «Հետևաբար, լուրջ հիմքեր կան այս սինագոգն առնչել լիբերտինացիների սինագոգի հետ, որի մասին խոսվում է Գործքում» (6. 9)[1]: Նման մի միտք է արտահայտում նաև հնագիտության պրոֆեսոր Թոմպսոնը՝ ավելացնելով. «Իրավունք ունենք այն եզրակացությանը հանգելու, որ խնդրո առարկա սինագոգը կառուցվել է I դարի սկզբում, երբ Քրիստոս ապրում էր Նազարեթում»[2]:

Այլ գրություններ, ինչպես նաև I դարով թվագրվող անոթների վրա արված կարճ մակագրություններ էլ հայտնաբերվեցին: Արձանագրություններ պեղվում են ողջ Պաղեստինով մեկ: Դրանցից առավել հետաքրքրական են Կեսարիայում ջրմուղի կառուցմանը վերաբերողները, սակայն այժմ դրանք չենք քննելու: Այս արձանագրությունները Նոր Կտակարանում նշված դեպքերից առաջ և հետո Պաղեստինում հռոմեացիների քաղաքական և մշակութային ներկայության հստակ և արժանահավատ ապացույցներ են:

1 **Albright W. F.** Archaeology of Palestine. Fully revised. P. 172.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 317,318; **Cornfeld G.,Freedman D. N.** Archaeology of the Bible; Book by Book. P. 295; Free J. P. Op. cit. P. 310.

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Հռոմեական շրջանի պաղեստինյան շիրիմները հետաքրքիր տեղեկություններ են բովանդակում Նոր Կտակարանում տեղ գտած անցքերի և անձանց մասին: Հնագետները հաճախ դրանցում կավե անոթների բեկորներ, մետաղյա և ապակյա իրեր, մետաղյա դրամներ և տապանագրեր են գտնում: Մեծ դամբարանները նախատեսվում էին բազմաթիվ մարդկանց թաղման համար, ընդ որում դամբարանի մուտքը փակում էին կլորավուն քարով: Այդ քարերից մի քանիսն այնքան հսկայական էին, որ քարը տեղաշարժելու համար մի քանի մարդու ջանք էր պահանջվում: Փոքր չափերի դամբարանների պարագայում նույնպես մուտքը կլորավուն քարով էր ծածկվում: Հնագետ Թոմպսոնը նկատում է. «Նմանօրինակ գտածոները բացատրում են, թե ինչու էին յուղաբեր կանայք շփոթվել Տիրոջ գերեզմանի մուտքի վեմը մի կողմ գլորվելու համար, քանզի Հովսեփ Արիմաթիացին «Մի մեծ քար, որպես կափարիչ, գերեզմանի դռան առաջ գլորեց» (Մատթ. 27. 60): «Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մոտեցավ, դռնից վեմը մի կողմ գլորեց» (28. 2)[1]: Նույն բանն է ասվում նաև Տիրոջ ընկեր Ղազարոսի գերեզմանի մասին. «Սա մի քարայր էր, որի վրա մի քար էր դրված» (Հովհ. 11. 38, 39, 41):

Դամբարաններում հաճախ զարդարված քարադագաղներ էին զետեղում, որի մեջ հանգչում էր հանգուցյալի աճյունը: Հնագետների տրամադրության տակ արդեն հարյուրավոր այդպիսի արամերեն և հունարեն տապանագրերով քարադագաղներ կան: Շնորհիվ այդ գրությունների՝ շատ բան իմացանք այդ ժամանակների անունների, ընտանեկան և հասարակական հարաբերությունների մասին:

Այսպես մեզ հայտնի դարձան I դարում առավել տարածված անունները, ինչպես՝ Անանիա, Ղազարոս, Շմավոն, Հուդա, Հով-

1 **Thompson J. A.** Op. P. cit. P. 320-321.

սեփ, Սափիրա, Մարիամ, Մարթա, Եղիսաբեթ, Սաղոմե, Հովհաննես, Ապփիա: Հնագետներին նույնիսկ «Հովսեփի որդի Հիսուս» անունը հանդիպեց: Անտարակույս, այս անունները որևիցե աղերս չունեն Նոր Կտակարանում հիշատակված կոնկրետ պատմական անձանց հետ, սակայն սրբազան նորկտակարանյան բնագիրն ուսումնասիրող յուրաքանչյուր ոք, շնորհիվ այս գտածոների, համոզվում է, որ Նոր Կտակարանի էջերում հիշատակված անունները բնորոշ են այդ ժամանակների համար[1]:

Հրեա հեղինակները Սուրբ Գիրքը քննադատելիս՝ պնդում էին, որ ռաբբի (արամերեն բառ, որ ուսուցիչ է նշանակում) կոչումը I դարում գործածական չի եղել: Սակայն շիրմազարդերի, հուռութքների դագաղների և քարադագաղների հետազոտության արդյունքում հաջողվեց կտրականապես հերքել այդ կարծիքը, քանզի տապանագրերում հանդիպում է «վարդապետ» կամ «ռաբբի» կոչումը: Այսպես՝ ոմն Թեոդոտիոն «ուսուցիչ» է հիշատակվում, որը Ավետարանում գործածված այդ նույն սովորական կոչումն է[2]:

Հնագետները հույսեր են փայփայում Երուսաղեմից ոչ հեռու գտնվող մեծ գերեզմանատանն առաջին քրիստոնյաների գերեզմաններ գտնել: Արդեն 1873 թ. ֆրանսիացի Կլերմոն Գաննոն հայտնեց Ձիթենյաց լեռան վրա հանգստարանի հայտնագործության մասին, որտեղ մոտ երեսուն քարադագաղ կար: Դրանցից մեկի վրա Հուդա անունն էր փորագրված՝ խաչի պատկերով հանդերձ: Նաև խաչի զուգորդությամբ Հիսուս անունը հանդիպեց: Այս երկու վկայությունները մատնացույց էին անում, որ այդտեղ քրիստոնյաների աճյուններ են հանգչում: 1945 թ. պրոֆեսոր Սուկենիկը տեղեկություն ստացավ, որ Երուսաղեմի արվարձարանում ինչ–որ գերեզման կա, որը մանրակրկիտ զննության ենթարկեց Հրեական հնությունների թանգարանը: Հետազոտությունները թույլ տվեցին հնագետներին եզրակացնելու, որ գե-

1 **Free J. P.** Op. cit. P. 300; **Thompson J. A.** Op. cit. P. 409-410; **Albright W. F.** The Archaeology of Palestine. Fully revised,1960. P. 244.

2 **Thompson J. A.** Op. cit. P. 322; **Free J. P.** Op. cit. P. 299. 300; **Albright W. F.** Op. cit. P. 244.

ռեզմանը I դարի կեսերին է վերագրվում: Հատկապես ուշագրավ էր գերեզմանում հինգ քարադագաղների առկայությունը, որոնցից երեքի վրա արամերեն Սիմոն, Բարսաբա, Սիմոնի և Մաթայի (Մաթանիա անվան կարճ ձևը) դուստր Մարիամի անուններն էին գրված, իսկ երկուսի վրա՝ հունարեն: Վերջին երկու անունների շուրջ հնագետները համակարծիք չեն: Սուկենիկը համոզված է, որ գերեզմանը քրիստոնեական ընտանիքի է պատկանում: Ըստ նրա՝ խոսքը Գործքում հիշատակված ընտանիքի (1. 23) մասին է, որտեղ հանդիպում ենք Բարսաբա կոչված Հովսեփին, ում դավաճան Հուդայի փոխարեն առաջարկում էին 12 առաքյալների թվին դասել: Սակայն Բարսաբա կոչված ոմն Հուդա նույնպես Երուսաղեմի առաքելական ժողովից հետո Պողոսի և Բառնաբասի հետ ուղարկվածներից մեկն էր (Գործք 15. 22): «Հավանաբար այս ամենը լոկ տեսություն է,– նկատում է հնագետ Թոմպսոնը,– որը, սակայն, պարզորոշ է դարձնում այն նյութը, որը դեռ պիտի իմաստավորեն հնագետները Եկեղեցու վաղքրիստոնեական կյանքի առնչությամբ: Չի բացառվում, որ Սուկենիկի տեսական դատողությունները ճիշտ լինեն»[1]:

1968 թ. Երուսաղեմի երկու դամբարանաքարայրներում (Հիբաթ–հա–Միվտար) 15 քարադագաղներ գտնվեցին: Դրանցից տասներեքը լեցուն էին մարդկային ոսկորներով: Հաշվարկման արդյունքում պարզվեց, որ բոլոր տասնհինգ քարադագաղներում 35 կմախք կա: Դրանցից հինգի վրա բռնի մահվան պարզորոշ հետքեր կան. երկուսը մահացել էին այրվելուց, մեկը՝ աղեղից, մյուսը՝ լախտից, վերջինը՝ խաչվելուց: Վերջին դեպքը առանձնակի ուշագրավ էր: Կմախքի տերը 20–25 տարեկան էր: Նրա անունը, համաձայն գրության, Հովնանե Բեն Հեզքել է: Նա երեք մեխերով էր գամված եղել: Երկուսը մխրճվել էին ձեռքերի դաստակների մեջ, երրորդը՝ միանգամից երկու կրունկների մեջ: Երրորդ գամը պահպանվել էր սկզբնական դրության մեջ և 17–18 սմ երկարություն ուներ: Հավանաբար խաչվածը հենվել էր ինչ–որ նեցուկի վրա. նրա ծնկները դուրս էին ցցվել և մի ոտքը մյուսի

1 **Thompson J. A.** Op. cit. P. 324.

վրա էր գտնվել այնպես, որ հնարավոր էր եղել մի գամի միջոցով միանգամից երկու ոտքը բևեռել: Սրանից զատ, հուժկու հարվածի հետևանքով նրա երկու ոլոքները՝ սրունքի մեծ ոսկորները, ջարդված էին: Աճյունի մանրակրկիտ զննումը տանջալից մահվան մասին էր վկայում[1]: Թոմպսոնը նկատում է. «Խաչելության եղանակը հիշեցնում է այն, ինչը նկարագրված է Հովհաննու Ավետարանում (19. 31–34)»[2], այսինքն՝ այն եղանակը, որով խաչել էին մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

ՊՈՆՏԱՑԻ ՊԻՂԱՏՈՍՆ ՈՒ ՏԻՏՈՍԸ

Նոր Կտակարանը ձևական և մակերեսային կերպով ընթերցողը գիտի, որ Պաղեստինում I դարում իշխում էր Հերովդեսների ընտանիքը, սակայն կարկամում է, թե ինչու Քրիստոսին խաչելուց առաջ՝ դատելու ժամանակ, կուսակալ Պոնտացի Պիղատոսի ձեռքը հանձնեցին (Մատթ. 27. 2,11): Սակայն այս փաստն իր բացատրությունն ունի: Հռոմեական Հրեաստան պրովինցիան ենթակա էր Հերովդես Արքեղայոսի՝ Հերովդես Մեծի որդու իրավասությանը: Սակայն այն բանից հետո, երբ Արքեղայոսը գահընկեց եղավ և Գաղղիա աքսորվեց, Հուդան ընկավ հռոմեացի «կուսակալի» իշխանության տակ, որն ուղղակիորեն ենթարկվում էր հռոմեական կայսրին:

Արքեղայոսի վտարումից հետո Պիղատոսը Հուդայի վրա իշխած թվով հինգերորդ կուսակալն էր: Ըստ պատմիչ Հ. Փլաբիոսի՝ Պոնտացի Պիղատոսը տաս տարի շարունակ կուսակալ է եղել[3]: Այս տասնամյակը հավանաբար ընկնում է 26 թ. –ից մինչև 36 թ. կամ այլ տեղեկությունների համաձայն՝ 27 թ. –ից մինչև 37 թ.[4]: Պոնտացի Պիղատոսից զատ Նոր Կտակարանում հիշատակվում

1 **Haas N.** Anthropological Observations on the Skeletal Remains from Giv'at ha-Mivtar// Israel Exploration Journal. T. XX, №1-2,1970. P. 49-59,tabl. 22-24.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 325.
3 **Հովսեպոս Փլաբիոս**, Հրեական հնախոսությունը, XVII, 4, 2:
4 **Wilson J. M.** Pilate Pontius// International Standard Bible Encyclopaedia. Chicago, 1930. P. 2396.

Տիտոս կայսրը (Ք. հ. 79-81 թթ.): Արձանի գլուխ, Մյունխեն:

են ևս երկու կուսակալներ՝ Անտոնիոս Ֆելիքսը (52–59 կամ 60 թթ.) և Պորկիոս Փեստոսը (60–62 թթ.): Ընդհուպ մինչև 70 թ. –ը՝ Երուսաղեմի ավերումը հռոմեացիների կողմից, այդպիսի տասնչորս կուսակալներ են հայտնի: Հետևաբար Քրիստոսին Պիղատոսի մոտ տարան, որովհետև «միայն նա կյանքի և մահվան վրա իշխանություն ուներ, ինչն այլ կերպ jus gladii էր կոչվում (սրի իրավունք), և միայն նրա հաստատելուց հետո էր դատավճիռն ի կատար ածվում»[1]:

Պոնտացի Պիղատոսի այնպիսի ժամանակակիցներ, ինչպիսիք հրեա պատմիչ Հովսեպոս Փլաբիոսն ու Փիլոն Ալեքսանդրացին (Ք. ա. 25 թ. մինչև 50 թ.) էին, նրան բնութագրում էին իբրև բռնակալ, ժողովրդին չարչարող և կաշառակեր: «Նա անագորույն էր, և նրա դաժանությունը չգիտեր, թե ինչ է գութը: Նրա կառավարման շրջանում Հրեաստանում իշխում էին կաշառակերությունն ու բռնությունը, գողությունը, հալածանքը, նվաստացումը, առանց դատավճիռ կայացնելու մահապատիժն ու անսահման դաժանությունը»,– գրում է Փիլոն Ալեքսանդրացին[2]:

Հռոմեացի զորավար Տիտոսի անունը կապված է 70 թ. Երուսաղեմի սարսափելի ավերման հետ: Տաճարի ու քաղաքի ավերման մասին միանգամայն հստակ մարգարեացել էր Տերը (Ղուկ. 21. 5–6 20. 23–24, տե՛ս նաև Մատթ. 24. 1–36, Մարկ. 13. 1–32): Մոտավորապես 50 թվից է սկսվում հռոմեացիների դեմ հրեաների ապստամբությունը: Ժողովրդական ընդվզումները բռնկվեցին Սամարիայում և Երուսաղեմում: Իրավիճակն էլ ավելի սրվեց, երբ

1 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὸ κατὰ Ματθαῖον. …Σ. 479.
2 **Keller W.** Ἡ Βίβλος…Σ. 499.

Տիտոսի հաղթական կամարը: Յոթթևյան աշտանակի պատկերը:

Պաղեստինի կուսակալ դարձավ Պորկիոս Փեստոսը (60–62 թթ.): Սակայն վիճակը գնալով ավելի ու ավելի էր վատթարանում, իսկ երբ կուսակալ դարձավ Փլորոսը (64–66 թթ.), ապստամբությունն արդեն հասել էր իր գագաթնակետին:

Հռոմեացիներն անմիջապես արձագանքեցին, սակայն նրանց ժամանակավոր պարտությունը հրեաներին սրտապնդեց, այնպես որ ապստամբությունը, չնայած հրեաների անմիաբանությանը, ընդգրկեց գրեթե ամբողջ Պաղեստինն: Այդ ժամանակ

Հռոմ, Տիտոսի կամարը:



Հռոմ: Փլաբիոսների ամֆիթատրոնը (այսինքն՝ կոլիզեումը)՝ Վեսպասիանոս և Տիտոս կայսրերի ձեռամբ կառուցված (ավարտվել է 80 թ.): Բազմաթիվ քրիստոնյաների նահատակության վայրը:

կարգ ու կանոն հաստատելու համար Ներոնը Վեսպասիանոս զորավարին ուղարկեց: Սակայն իր ստանձնած առաքելությունը դեռ չկատարած՝ Ներոնի ինքնասպանության մասին լուրեր են ստացվում: Հռոմում մեկ տարի տևած ներքին խլրտումներից հետո Վեսպասիանոսը կայսր է հռչակվում: Այդ է պատճառը, որ նա փութով վերադառնում է Հռոմ, իսկ Պաղեստինում սկսածը հանձնարարում իր որդի Տիտոսին:

70 թ. ողբերգական դեպքերը լիովին հաստատեցին Տիրոջ կանխասացությունը: Երուսաղեմի պաշարյալների կյանքի սարսափելի պայմանները՝ սովը, որն ստիպում էր մայրերին մորթել, տապակել ու ուտել սեփական երեխաներին, կոտորածը, Տաճարը լիովին ոչնչացրած հրդեհը և գերեվարությունը քաջ հայտնի են բոլորին: Ըստ Հովսեպոս Փլաբիոսի՝ 97 000 հրեա գերեվարվեց՝ չհաշված հռոմեացիների ձեռամբ խաչը հանվածներն ու սրախողխող եղածները, ապա ավելացնում է, որ հռոմեացիները երեք ամսում միայն մի դարպասից 115 800 հրեաների դիեր հանեցին: 71 թ. Տիտոսը Հռոմում հանդիսավոր նշեց իր հաղթանակը, որի ընթացքում ցուցադրվեցին 700 գերյալ հրեաներ ու թանկարժեք ավարը, այդ թվում նաև մաքուր ոսկուց ձուլած յոթթևյան աշտանակն ու առաջավորության հացի սեղանը: Այսօր յուրաքանչյուր մարդ կարող է ի նշանավորումն այդ արշավի հավերժացման կա-

ռուցված Տիտոսի վիթխարի հաղթակամարի վրա տեսնել հրեաների համար նվիրական այդ երկու իրերի բարձրաքանդակ պատկերները:

Հրեական ապստամբությունը շարունակվեց 70 թվից հետո էլ, ինչը պատճառ դարձավ 66–70 թթ. արյունահեղ պատերազմից մազապուրծ եղած մեծ թվով հրեաների ստրկության վաճառվելուն: Հրեա ստրուկները բոլոր ժողովուրդների մեջ ցրվեցին: Տերը կանխասել էր. «Նրանք սրի պիտի քաշվեն, գերի պիտի տարվեն բոլոր հեթանոսներից» (Ղուկ. 21. 24): 66–70 թթ. և 132–135 թթ. հրեաների հատած մետաղադրամների վրա հիշատակված է՝ «ազատագրության տարի»[1]: Սակայն, ավաղ, ազատագրման փոխարեն հրեաներին պարտություն, կործանում և աշխարհով մեկ սփռում բաժին հասան: Աստվածային արդարադատությունն այսպիսի սարսափելի կերպով իսրայելական ժողովրդին հեռացրեց աշխարհի ժողովուրդների ընդհանրությունից, «մինչև որ լրանան հեթանոսների ժամանակները» (Ղուկ. 21. 24):

Հնագետները ջանում են գտնել թեկուզ աննշան հնություններ, որոնք լույս կսփռեին I դարի Պաղեստինի և հատկապես Երուսաղեմի անցուդարձի վրա: Սակայն այսօրվա դրությամբ այդպիսի գտածոներն այնքան էլ շատ չեն:

ՀԵՐՈՎԴԵՍԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ

1968 թ. պրոֆեսոր Բ. Մազարի՝ Երուսաղեմի Տաճարի շուրջ անցկացրած պեղումները՝ ժամանակակից Իսրայել պետության տարածքում երբևէ կատարված հնագիտական հետազոտություններից ամենահետաքրքրականը, I դարի Երուսաղեմի մասին վկայող բավական հարուստ նյութեր երևան հանեցին: Այս պեղումները վավերացրին Հովսեպոս Փլաբիոսի «Հրեական հնախոսությունը» և «Հրեական պատերազմի մասին» աշխատություններում տեղ գտած ճարտարապետական և տեղագրական ման-

1 **Tompson J. A.** Op. cit. P. 301.

Երուսաղեմի Հերովդես արքայի պալատի փլատակները:

րամասների ստուգությունը[1]: Այս և այլ տվյալների հիման վրա մենք ի զորու ենք հասկանալու, թե ինչ էր իրենից այն օրերին ներկայացնում Երուսաղեմը:

Երուսաղեմը Մակաբայեցիների ապստամբության հետևանքով սաստիկ ավերածությունների էր ենթարկվել, սակայն Հերովդեսը հոգ էր տանում ոչ միայն ավերվածի վերականգնման մասին, այլև քաղաքի շուրջ պաշտպանական պարիսպ կառուցեց, կարգի բերեց ճանապարհները, քաղաքը շենացրեց վեհաշուք կառույցներով, այդ թվում՝ թատրոնների ու նախ և առաջ՝ նոր Տաճարի կառուցումով: Ի շարս այլոց՝ այսու Հերովդեսը փորձում էր հրեաների բարեհաճությունն ու վստահությունը շահել, ում համար, ինչպես արդեն ասել ենք, նա անցանկալի եղոմացի էր: Քաղաքի կենտրոնական մասի ամենաբարձրադիր վայրում նա իր համար պալատ կառուցեց, որի վրա վեր էին խոյանում երեք հռչակավոր աշտարակները՝ Հիպպակոսը, Փասայելը և Մարիամնան: Առաջինը, որ 40 մ բարձրություն ուներ, կառուցվել էր ի պատիվ իր ընկեր Հիպպակոսի, երկրորդը՝ 30 մ բարձրությամբ՝ եղբայր Փասայելի, երրորդը՝ 25 մ բարձրությամբ՝ իր սիրելի կին Մարիամնայի: Մինչև օրս դրանցից միայն մի հատված է պահպանվել, հավանաբար Փասայելի աշտարակից, որը ներկայացնում է այսպես կոչված «Դավթի աշտարակի» մի մասը: Հերովդեսի պալատից սկիզբ էր առնում լայն ու հզոր պարիսպ: Հովսեպոս Փլաբիոսը հայտնում է երկրորդ պարսպի մասին ևս, որն սկսվում էր առաջին պարսպի

1 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 256-257; **Thompson J. A.** Op. cit. P. 338.

Հերովդես Մեծի կառուցած Երուսաղեմի Տաճարի մանրակերտը:

«Գեննափ» դարպասից և հասնում «Անտոնիային», այսինքն՝ Անտոնիա ամրոցին[1], որոնք մենք կարող ենք նույնականացնել:

Մասնագետները շատ բանավիճեցին այս երկրորդ պարսպի շուրջ, սակայն այդպես էլ վերջնական եզրակացության չհանգեցին: Ասենք, որ այս պարսպի ստույգ տեղորոշումը ակադեմիական հետաքրքրության ոլորտի հարց չէ: Գտնելով այդ տեղը՝ մենք ի զորու կլինենք նաև նույնականացնել Գողգոթան, որտեղ խաչվել էր Քրիստոսը, քանզի Տերը, ինչպես հայտնի է, «չարչարվեց դռնից դուրս» (Եբր. 13. 12, հմմտ. Մատթ. 27. 33, Հովհ. 19. 17)[2]:

Հերովդեսը վերականգնեց Տաճարի հյուսիսային կողմի պարիսպը, որը նախկինում պաշտպանական ամրության դեր էր կատարում: Վերջին տարիներին Լ. Գ. Վենսանի մասնակցությամբ կատարված լայնածավալ պեղումները նպաստեցին այդ պարսպի տեղադրության առավել ստույգ տեղորոշմանը, որն իր չորս անկյուններից յուրաքանչյուրում մեկական աշտարակ ուներ: Անտոնիա ամրոցի և Տաճարի միջև որոշ տարածություն կար, որը հրեաները շրջափակել էին հռոմեացիների դեմ իրենց առաջին

1 **Հովսեպոս Փլաբիոս**, Հրեական պատերազմի մասին, V,4,2:
2 **Thompson J. A.** Op. cit. P. 337.

ապստամբության ժամանակ: Քրիստոսի օրով այս ամրոցում էր տեղակայվում հռոմեական կայազորը, որը Տաճարի տարածքում, հատկապես մեծ տոներին, կարգ ու կանոն էր պահպանում: Հենց այս զորանոց տարան Պողոս առաքյալին, երբ հրեաները ցանկանում էին սպանել նրան, որովհետև, ինչպես իրենք էին ասում, պղծել էր Տաճարը՝ այդտեղ հեթանոս բերելով (Գործք 21. 27–40, հատկապես 34–րդ համարը): Ժամանակակից հետազոտողները՝ մասնավորապես Վենսանն ու Օլբրայթը, գտնում են, որ դա հենց այն տեղն է, որտեղ Տերը դատի համար Պիղատոսի առաջ կանգնեց[1]:

Անտոնիա ամրոցից հարավ էր գտնվում Տաճարի տարածքն ու ինքը Տաճարը: Հերովդեսն ամբարտակների ու լիցքերի միջոցով ընդարձակեց տարածքն ու Ք. ա. 20–19 թթ. վերականգնողական աշխատանքների լծվեց: Բուն շինությունը տասնութ ամսում ավարտվեց[2], բայց կառույցի արտաքին և ներքին հարդարանքների հետ կապված հետագա աշխատանքները շարունակվեցին ընդհուպ մինչև Ք. հ. 64 թիվը: Հրեաները Քրիստոսին ասացին. «Քառասունվեց տարում շինվեց այս տաճարը» (Հովհ. 2. 20): «27 թ. հնչած այս խոսքերը,– նշում է Թոմպսոնը,– կարևոր նշանակություն ունեն Քրիստոսի քարոզչական առաքելության ժամանակը ստույգ որոշելու համար»[3]:

Տաճարի մանրամասն նկարագրության վրա կանգ չենք առնի: Ուշադրությունը կբևեռենք միայն մեզ հետաքրքրող տեղերի վրա՝ Նոր Կտակարանում հիշատակված անձանց ու դեպքերի առնչությամբ:

Մենք այսօր էլ կարող ենք Ողբի պատի մեջ տեսնել Հերովդեսի դարաշրջանի ճարտարապետությանը բնորոշ Տաճարի շինության ժամանակ օգտագործված հղկված մեծ քարերը: Հավանաբար հենց այս քարերը Քրիստոսի աշակերտներից մեկին դրդեցին ասել Նրան. «Վարդապետ, տե՛ս, ինչպիսի՛ քարեր են, ինչպիսի՛ շինվածք», որին ի պատասխան հնչեց. «Տե՛սնո՞ւմ ես այդ

1 **Thompson J. A.** Op. cit. P. 338.
2 **Հովսեպոս Փլաբիոս**, Հրեական հնախոսությունը, XV, 11,1-6:
3 **Thompson J. A.** Op. cit. P. 339.

բոլոր շինությունները, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դրանից քար քարի վրա չպիտի թողնվի, որ չքանդվի» (Մարկ. 13. 1,2): Իրոք, այս վեհաշուք կառույցները քանդվեցին Տիտոսի ձեռամբ: Կանգուն մնաց միայն չնչին մասը:

Այս հոյակերտ Տաճարը վեր էր խոյանում Ձիթենյաց լեռան դիմաց: Այն սրբազան քաղաքի ամենաշլացուցիչ և ամենագեղեցիկ կառույցն էր: 50 մ բարձրություն ունեցող Տաճարի ճակատն արևելահայաց էր՝ կառուցված բաց գույնի մարմարից, իսկ ողջ գեղազարդը ոսկեզօծ էր: Գավթի և նախագավթի կենտրոնական մասում գտնվում էր սյունաշարով շրջապատված սրբարանը: Ըստ Հ. Փլաբիոսի՝ սրբարանը շողշողում էր՝ ասես «ձյունով ծածկված լեռ»:

Հերովդեսի կառուցած Տաճարի վիթխարի գավիթ տանող դարպասներն ութն էին: Երկուսը հարավային կողմում էին, չորսը՝ արևմտյան, մեկը՝ հյուսիսային, իսկ վերջինը՝ արևելյան, հավանաբար այն տեղում, որտեղ այսօր գտնվում է այսպես կոչված Ոսկե դարպասը: Հրեա պատմիչ Հ. Փլաբիոսը և Միշնան[1] միայն մի դարպաս են հիշատակում քաղաքի արևելյան կողմում և հնարավոր է, որ դարպասը, որով հանդիսավոր կերպով Երուսաղեմ մտավ Տերը, գտնվելիս լիներ այդ տեղում կամ ոչ հեռու (Մարկ. 11. 11, Մատթ. 21. 10, Ղուկ. 19. 28–48): Այս դարպասով էր անցնում Բեթանիայից Տաճար տանող ճանապարհը: Հ. Փլաբիոսը շատ է գրում Հերովդեսի Տաճարի գեղաշեն սրահների (ծածկավոր պերիստիլների) և գավիթների մասին: Այդ ութ դարպասներից մեկով Տաճարի տարածք մտնողը անմիջապես հայտնվում էր հեթանոսների գավիթ կոչվող չափազանց մեծ գավթում կամ արտաքին գավթում, ուր հեթանոսներն ազատ ելումուտ կարող էին անել: Գավթի հարավային կողմում էր գտնվում արքայական նախագավիթը (սրահը), իսկ արևելյան մասում՝ Սողոմոնի նախագավիթը (սրահը): Եվ հենց այս՝ Սողոմոնի սրահում էր «Հիսուս շրջում» Նավակատիքի տոնին (Հովհ. 10. 22–23, Գործք 3. 11 5. 12):

1 «Միշնա» բառը «ուսում» է նշանակում: Դա Ք. հ. I- III դդ. ռաբբունական տրակտատների ժողովածու է՝ հրեաների «բանավոր» օրենքը, այսինքն՝ այն օրենքը, որը խարսխվում էր Հնգամատյանի վրա և ի սկզբանե բանավոր ավանդվում:

Հ. Փլաբիոսը այսպես է նկարագրում Տաճարի տարածքի հարավ–արևելյան թևը. «Հովիտն այնքան անդնդախոր էր, որ վերևից նայելիս գլուխդ պտտվում էր, ավելին՝ այստեղ դեռ ահռելի սրահ էր կառուցված, այնպես որ յուրաքանչյուրի մոտ գլխապտույտն սկսվում էր նախքան հայացքը կհասներ հովտի հատակին, որովհետև այստեղ վերջինիս խորությանը գումարվում էր սրահի բարձրությունը»[1]: Հ. Փլաբիոսի նշած անկյունային մասը, հավանաբար, ինչպես գրում է Թոմպսոնը, «Տաճարի աշտարակն» է, որի վրա սատանան կանգնեցրեց Քրիստոսին, որպեսզի փորձի Նրան (Մատթ. 4. 5)[2]:

Հեթանոսների գավթի ինչ–որ մասում հավաքվում էին վաճառողները, գնորդներն ու լումայափոխները, որոնց Տերը դուրս հանեց (Մարկ. 11. 15): Նախորդ գլխում արդեն խոսել ենք հեթանոսների գավիթը հրեաների գավթից բաժանող ճաղաշար ցանկապատի գրության մասին, որը մահվան սպառնալիքով արգելում էր հեթանոսների մուտքը ներս:

Գեղեցիկ դարպասները նախ կանանց գավիթ էին տանում: Այն այս անունով էր կնքված ոչ թե այն պատճառով, որ բացառապես կանանց համար էր նախատեսված, այլ այն բանի համար, որ Տաճարի թույլատրելի մասից ամենահեռավորն էր, որտեղ թույլատրվում էր նրանց մտնել: Գեղեցիկ դարպասի մոտ էին նստած մուրացկան կույրերը, կաղերը և աղքատները: Այս դարպասի մոտ Պետրոս և Հովհաննես առաքյալները բժշկեցին ի ծնե կաղին (Գործք 3. 2): Հենց կանանց գավթում էր, որ մի աղքատ այրի կին գանձանակի մեջ «երկու լումա գցեց» (Մարկ. 12. 41–44): Կանանց գավթի ետևում գտնվում էր Իսրայելի կամ տղամարդկանց գավիթը, ուր մտնել կարող էին Մովսեսի օրենքի համեմատ մաքուր աշխարհականները, որին հաջորդում էր քահանաների գավիթը: Այստեղ էր զետեղված ողջակեզի զոհասեղանը, որին սպասավորում էին ղևտացիները: Քահանաների գավթի խորքում գտնվում էր սրբարանը կամ սրբությունը և սրբություն սրբոցը: «Տաճարի

1 **Հովսեպոս Փլաբիոս**, Հրեական հնախոսությունը, XV,11,5:
2 **Thompson J. A.** Op. cit. P. 340-341.

առջևի բակից երկփեղկանի դարպասների միջով, որոնք միշտ բաց էին, կարելի էր Տաճար մտնել: Մուտքը փակված էր սպիտակ, երկնագույն, ծիրանի և կարմիր գույների համադրությամբ վարագույրով»[1]: Սրբություն սրբոցը պետք է զարդարված լիներ գերազանցապես ոսկեջրած սպիտակ քարով: Այդ ժամանակվա մարդիկ սովոր էին, ինչպես ասում էր Տերը նրանց հանդիմանելիս, երդվել «Տաճարի մեջ եղած ոսկու վրա» (Մատթ. 23. 16):

Ցավոք սրտի, այսօր Տաճարից ու նրա երբեմնի մեծավայելչությունից ոչինչ չի պահպանվել: Տաճարի մասին ամենից շատ տեղեկություններ բովանդակում են Հ. Փլաբիոսի աշխատությունները, ինչ–որ բան ի զորու ենք քաղել Նոր Կտակարանից և գրեթե ոչինչ՝ հնագիտությունից: Դժվարությունը պայմանավորված է նրանով, որ Տաճարի ողջ տարածքը հընթացս դարերի միշտ սրբավայր է եղել: 70 թվին Երուսաղեմի անկմամբ Տաճարն ու նրա շրջակա բոլոր շինությունները հիմնահատակ ավերվեցին: Հետագա տարիներին այստեղ հառնում էին միանգամայն այլ կառույցներ: 133 թ. Անդրիանոս կայսրը հրեական Տաճարի փլատակներում Զևսի արձանն ու բագին կանգնեցրեց, որի վրա զոհաբերություններ մատուցեց: Հետագայում՝ Հուստինիանոսի օրոք այդ տեղում քրիստոնեական եկեղեցիներ կառուցվեցին: VII դ. արաբները քանդեցին եկեղեցիները և արդեն պատրաստի քարերից ու սպիտակ մարմարից կառուցեցին Օմարի հռչակավոր մզկիթը, որը կանգուն է առ այսօր և մահմեդականների պաշտամունքային վայրերից սրբազնագույններից մեկն է: Խաչակիրները այս տարածքը քրիստոնեական սրբավայր դարձրին:

Բայց XII դ. Սալահեդդինի օրոք այն կրկին մահմեդական սրբավայրի կարգավիճակ ստացավ: Այս դրությունը պահպանվեց մինչև մեր օրերը, չնայած որ Երուսաղեմը կրկին գրավեցին խաչակիրները, իսկ ավելի ուշ՝ անգլիացիները: Այսպիսով երբեմնի փառահեղ հրեական Տաճարի ողջ տարածքը ներկայումս մահմեդական սրբավայր է համարվում: Ըստ այդմ, չնայած այն բանին, որ այստեղ, անկասկած, չափազանց առատ տեղեկատ-

1 **Βέλλας Β. Μ.** Ἑβραϊκὴ Ἀρχαιολογία…Σ. 148.

վական նյութեր են անթեղված, ավաղ, պեղումներ անցկացնելու որևիցե հնարավորություն չկա:

Անգլիացի հնագետ, պրոֆեսոր Դ. Գարնսթագը, ի մի բերելով Հերովդեսի ժամանակների Երուսաղեմի հետազոտությունների հիման վրա ստացված արդյունքները, գրում է. «Իր պատմության ողջ ընթացքում ո՛չ կրոնը, ո՛չ քաղաքն այդպես էլ երբեք առավել դյութիչ պատկեր չկերտեցին: Արևելյան երկնակամարի ֆոնի վրա այդքան հրաշագեղ պատկերված հունահռոմեական ճարտարապետության ռիթմն ու ներդաշնակությունը գործնականում ի դերև էին հանում Հերովդեսի կառույցների չափազանց մեծ լարվածությունը և քաղաքի ավանդական քաոսին սլացիկություն ու նրբագեղություն հաղորդում»[1]:

ՊԱՂԵՍՏԻՆԻ ԵՎ ԱՍՈՐԻՔԻ I ԴԱՐԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Անժխտելի է, որ Երուսաղեմը I դարում Պաղեստինի և Ասորիքի քաղաքների մեջ առաջինն էր: Սակայն, ցավոք սրտի, այսօրվա դրությամբ հնագիտական պեղումներով հաջողվել է բացահայտել միայն նրա գաղտնիքների փոքր մասը:

Պրոֆեսոր Թոմպսոնը գրում է. «Մենք կանխազգում էինք, որ հինավուրց Երուսաղեմը դեռ բազում խնդիրներ կառաջադրի հնագետներին ու հետազոտողներին: Ավետարանն ուսումնասիրող և քննող մարդու համար շատ դժվար է խորհրդածել խնդիրների շուրջ, որոնց լուծումը Երուսաղեմի հողի մեջ է անթեղված: Մենք իրավունք ունեինք հուսալու, որ ժամանակն ու հնամենի քաղաքի առանձին հատվածները վերակառուցելու անհրաժեշտությունը դարակազմիկ գտածոներ ի հայտ կբերեն: Իսկ այս պահին պետք է բավարարվենք թեկուզև առձեռն տեղեկություններով»[2]: Թոմպսոնը ծանոթագրության մեջ ավելացնում է. «Վերջին տարիներին երկու հետաքրքիր աշխատություններ լույս տեսան, որոնք հետազոտողներին և գիտնականներին հարուստ նյութեր ընձեռեցին

1 **Keller W.** Ἡ Βίβλος…Σ. 495.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 352.

այն քաղաքի մասին, որտեղ Տիրոջ քարոզների մեծ մասն է հնչել, որտեղ Նա մահացել է և թաղվել՝ Ս. Սիմոնսի «Երուսաղեմը Հին Կտակարանում» (Լեյդեն, 1952 թ., անգլերեն լեզվով) և Գ. Վենսանի ու Ա. Մ. Ստևի «Հին Կտակարանի Երուսաղեմը» (Փարիզ,1954 թ., ֆրանսերեն լեզվով)»: Սակայն միայն Երուսաղեմում չէ, որ ծավալում էին Նոր Կտակարանում նկարագրված անցքերը: Դրանք տեղի են ունեցել նաև Պաղեստինի, Ասորիքի, Կիպրոսի, Փոքր Ասիայի, Հունաստանի և Իտալիայի այլ քաղաքներում:

Հնագիտության շնորհիվ մենք դրանց մասին տեղեկություններ ստացանք, սակայն դեռ շատ պեղվելիք շրջաններ կան: Առայժմ սահմանափակվենք Պաղեստինի և Ասորիքի քաղաքներով:

1. Հայտնի է, որ նորկտակարանյան ժամանակներում Փյունիկիան հռոմեացիների իշխանության տակ էր գտնվում: Մեզ գլխավորապես հետաքրքրում են երեք փյունիկյան քաղաքներ՝ Տյուրոսը, Սիդոնն ու Պտղոմայիդան (Ակքովը՝ ժամանակակից Աքրան):

ա) Քրիստոս մի անգամ շրջել է Տյուրոսի և Սիդոնի «կողմերում» կամ «սահմաններում» (Մատթ. 15. 21–28, Մարկ. 7. 24–30), որտեղ տեղացիները գալիս էին Նրա մոտ՝ Նրան լսելու և իրենց հիվանդություններց կազդուրվելու (Մարկ. 3. 8, Ղուկ. 6. 17): Սրբազան բնագիրը չի ասում, այցելե՞լ է Քրիստոս Տյուրոս, թե՞ ոչ: Սակայն հայտնի է, որ փյունիկ–ասորի մի կին, որն ապրում էր քաղաքի արվարձաններում, իր հավատի շնորհիվ արժանացավ իր՝ պիղծ ոգուց տառապող դստեր բժշկմանը Տիրոջ ձեռամբ: Մենք նախորդ գլուխներից մեկում[1] արդեն բավականաչափ հանգամանալից խոսել ենք Տյուրոսի մասին՝ քաղաքը Ալեքսանդր Մակեդոնացու կողմից գրավելու առնչությամբ: 1947 թ., ինչպես նաև հաջորդ տարիների պեղումները լույս աշխարհ հանեցին հռոմեական ժամանակների կարևոր գտածոներ՝ մետաղադրամներ, գրություններ, փողոցներ, ավելի քան հինգ մետր լայնքով սրահներ, բազմաթիվ կանաչ և սպիտակ մարմարից սյուներ, խճանկարներ (հատուկ տեսակի, միայն Տյուրոսին բնորոշ), ձիարշա-

1 Տես «Տյուրոսի ավերումը» գլուխը:

վարան, քարաղագաղներ և այլն: Պեղումները շարունակվում են, ինչով էլ կրկին ու կրկին հաստատվում է կայսր Ադրիանոսի՝ Տյուրոսին տված բնութագրի իսկությունը, այն է՝ «փյունիկյան մետրոպոլիա*»[1]:

բ) Սիդոնը գտնվում է Տյուրոսից հյուսիս: Պատկառելի քանակով հնագիտական պեղածոները մեզ շատ հարուստ տեղեկություններ են ընձեռում հռոմեական շրջանի քաղաքային կյանքի մասին:

գ) Պտղոմայիդան (Ակքով) հիշատակվում է միայն Գործք առաքելոցում, որտեղ խոսվում է Պողոս առաքյալի երրորդ քարոզչական ճամփորդության մասին (Գործք 21. 7): Գրություններից իմանում ենք, որ Ներոնի օրոք Անտիոքից Պտղոմայիդա տանող ճանապարհը վերջանում էր այստեղ: Պեղումների արդյունքները թույլ տվեցին լույս սփռելու քաղաքի ճակատագրի վրա՝ քանանական ժամանակներից մինչև մեր օրերը:

2. Փիլիպպյան Կեսարիան այն տեղն էր, որտեղ Պետրոս առաքյալն արեց իր հռչակավոր խոստովանությունը՝ վկայելով, որ Տերը Քրիստոսն է՝ Կենդանի Աստծո Որդին (Մատթ. 16. 13–20, Մարկ 8. 27–30): Հնում այս քաղաքը Պանեաս էր կոչվում (կամ Պանեասյան Կեսարիա), բայց Ք. հ. 3 թ. Հերովդես Փիլիպպոսը, ի պատիվ Օգոստոս կայսեր, քաղաքը վերանվանեց Փիլիպպյան Կեսարիա: 70 թ. հրեաների՝ հռոմեացիներից կրած պարտությունից հետո քաղաքը կրկին սկսեց անվանվել Պանեաս, իսկ այսօր Բանյաս է կոչվում: Հռոմեական շրջանում քաղաքի կորիզը հիմնականում հույներն էին կազմում, ուստի Փիլիպպոսը թույլատրում էր հեթանոսական զոհասեղաններ կառուցել:

Դժվարամատչելի ժայռում փորված անձավն ինքնին Պանի պաշտամունքի գոյության վկայությունն է: Ագրիպպասի ժամանակների հունական արձանագրությունները հավերժահարսերին նվիրված բագինի գոյության խոսուն վկայություններն են: Այս

* Մետրոպոլիա - Հին Հունաստանում քաղաք (պոլիս) - պետության անվանումը՝ օտար աշխարհում իրենց իսկ հիմած բնակավայրերի վերաբերմամբ:

1 **Jidejian N.** Tyre throug the Ages. Beirut, 1969. Ch. 7. P. 84-113; **Tompson J. A.** Op. cit. P. 354.

քարանձավից է իր սկիզբն առնում Հորդանան գետի գլխավոր ակունքը: Սակայն հնագիտական պեղումների միջոցով դեռ բազում հայտնագործություններ պետք է արվեն:

3. Բեթսաիդայի հարցում որոշ դժվարություններ կան: Ըստ երևույթին Հերովդես Փիլիպպոսը, ի պատիվ Օգոստոսի դստեր՝ Հուլիայի, Հուլիաս անվանած իր մայրաքաղաքը կառուցեց այն տեղում, որտեղ գտնվում էր հինավուրց Բեթսայիդան: Սակայն դեռ չեն կատարվել քաղաքի տեղորոշման հնագիտական աշխատանքներ: Մինչև 1987 թ. համարվում էր, որ հնամենի Բեթսայիդան գտնվել է Գալիլիայի բլուրների վրա ծվարած ժամանակակից Հիրբեթ–ալ–Արաջի դիմաց: Ելնելով այն հանգամանքից, որ Տիրոջ կյանքի ժամանակով թվագրվող հնագիտական շերտը հրդեհի հետքեր է կրում, Քրայելինգը նշում է, որ դա ոչ այլ ինչ է, քան Քրիստոսի խոսքերի կատարումը. «Վա՛յ քեզ, Բեթսայիդա» (Մատթ. 11. 21)[1]: Սակայն 1987 թ. հոկտեմբերի վերջին հաղորդագրություն ստացվեց, որ գերմանացի գիտնական Պիկսները հնամենի Բեթսայիդայի տեղադրությունը տեղորոշել է Հիրբեթ–ալ–Արաջից երեք կմ հյուսիս ընկած ժամանակակից Աթ–Թելլոյի տարածքում: Իսրայելացի հնագետներից մեկը՝ դոկտոր Ռամի Արավը, ասում է. «Մենք այն եզրակացության հանգեցինք, որ քաղաքը ծաղկում էր Հիսուսի ապրած ժամանակներին մոտ ժամանակաշրջանում և ավերվել էր հռոմեացիների դեմ ապստամբության արդյունքում»[2]:

4. Կափառնայումը (նշանակում է Նաումի տուն կամ աղոթքի տուն) բավական հաճախ է հանդիպում Ավետարանում: Մատթեոս ավետարանիչը Կափառնայումն անվանում է Տիրոջ քաղաք՝ «Իր քաղաք» (Մատթ. 9. 1), որովհետև, ինչպես նշում է ս. Հովհաննես Ոսկեբերանը, «մշտապես այդտեղ էր գտնվում»[3]: Հենց այստեղ է Քրիստոսն սկսել քարոզել՝ քաղաքն Իր առաքելության կենտրոն դարձնելով: Այստեղ Նա բազում մարդկանց բժշկեց,

1 **Kraeling E. G.** Bible Atlas. 1956. P. 388ff. Մեջբերումս ըստ **Thompson J. A.** Op. cit. P. 356.

2 Ἑστία, 27 Ὀκτ., 1987. Σ. 4.

3 **Ս. Հ. Ոսկեբերան**, Մատթեոսի Ավետարանի մեկնությունը: Ճառ 19. 1:- Խմբ. ծնթ.:

այդ թվում նաև հարյուրապետի ծառային և Պետրոսի զոքանչին (Մատթ. 8. 5–17, Մարկ. 1. 21–34 2. 1–12): Այստեղ կատարվեց ձկան և արծաթե դրամի հրաշքը, որով Քրիստոսը վճարեց տուրքը (Մատթ. 17. 27): Կափառնայումի ճանապարհին աշակերտների միջև վեճ ծագեց, թե ո՞վ է իրենցից մեծը (Մարկ. 9. 33–37) և Կափառնայումի մոտակայքում նրանք Տիրոջը տեսան, «որ քայլում էր ծովի վրայով» (Հովհ. 6. 19): Այստեղ է, որ հնչեցին կարևորագույն ուսուցումները, ինչպես, օրինակ, կենաց հացի մասին ուսուցումը (Հովհ. 6. 32–33): Սակայն այդ քաղաքի բնակիչների անխորտակելի հպարտության պատճառով Տերը «վա՛յ քեզ» ահարկու խոսքն ասաց: Հետագայում Կափառնայումն ամբողջությամբ հողի մեջ թաղվեց, իսկ նրա ստույգ տեղադրության մասին վեճերը երկար ժամանակ չէին մարում: Համարվում է, որ այդ տեղում գտնվում է արդի Թելլ–Խումը (Թանխում հրեական անվանման արաբական համարժեքը): «Կափառնայում» սկզբնական անվանումն այժմ հաստատված է մի արամերեն գրության հիման վրա՝ հայտնաբերված պրոֆեսոր Սուկենիկի պեղումների ժամանակ, որոնք կատարվում էին Յարմուքի գետաբերանի մոտ գտնվող Համաթ Հեդերի մի հինավուրց սինագոգում: Այս վավերագրի մեջ խոսվում է ընծաներ բերող մարդկանց մասին: Նրանց մեջ հիշատակվում է Կափառնայումից (Կեփար Նաում) ոմն Դոսիթեոս[1]: Կափառնայումի ավերակները մոտ երկու հազար մետր տարածք են զբաղեցնում Գենեսարեթ լճի ափի երկայնքով: Բայց այսօրվա դրությամբ շատ քիչ հնություններ է հաջողվել պեղել: Գ. Կորնֆելդի և Դ. Ն. Ֆրիդմանի կարծիքով ամենից նշանակալի են հետևյալ գտածոները.

ա) Գերմանացի հնագետներ Գ. Քոլի և Ս. Վացինգերի ջանքերի շնորհիվ հայտնաբերված III– IV դդ. սինագոգի փլատակները: Սինագոգը վերականգնվեց Գ. Օրֆալիի կողմից: Ոմանք ենթադրում են, որ դա այն ժողովարանի ավերակների ու հիմքի վրա է

1 **Kraeling E. G.** Op. cit. P. 377.

կառուցված, ուր հաճախ գալիս ու ուսուցանում էր Հիսուս (Մարկ. 1. 2) [1]:

բ) Պետրոս առաքյալի տունը: Այս տունը կառուցվել է Ք. ա. մոտ I դարում, իսկ Ք. հ. I դարի կեսում վերածվել կրոնական գործունեության կենտրոնի, եկեղեցու, հանդիպման վայրի: Կափառնայումում ապրած ծագումով հրեա քրիստոնյաները բավականին շատ էին, ովքեր էլ պահպանեցին այդ մասին կենդանի ավանդությունները: Տան պատերի վրա գրությունները վկայում են այն մասին, որ մարդիկ հավատացել են Հիսուսին՝ Քրիստոսին՝ Տիրոջը, Բարձրյալին՝ Ողորմածին, պատվել Պետրոս առաքյալին՝ իբրև տեղական սուրբ: V դարի կեսերին (ոչ հրեա) քրիստոնյաները մկրտարանով հանդերձ զարմանալի ութանկյուն եկեղեցի կառուցեցին, որի ավերակները հայտնաբերվեցին 1971–1977 թթ.: Սուրբ երկիր այցելած իսպանուհի ուխտավորը հայտնում է. «Ծայրագույն առաքյալ Պետրոսի տունը եկեղեցու էր վերածվել»: Ըստ մեկ այլ ուխտավորի (մոտ 570 թ.)՝ Պետրոսի տունն Աստծուն պաշտելու վայր էր դարձել[2]:

5. Քրիստոսի կանխասած վայրերը միայն Կափառնայումին ու Բեթսայիդային չէին վերաբերում, այլև Քորազինին, որը, ըստ Հերոնիմոսի, Կափառնայումից երկու հռոմեական մղոն հեռավորության վրա էր գտնվում (հմմտ. Մատթ. 11. 21–31, Ղուկ. 10. 10–13): Ներկայիս Քորազինը գտնվում է Կափառնայումից 4 կմ հյուսիս, այնտեղ, որտեղ Քենազեն է գտնվում: Քաղաքում պահպանվել են այդ տարածաշրջանում ամենուր հանդիպող բազալտից կառուցված սինագոգի ավերակները: Ժողովարանը թվագրվում է II դարի վերջով և III դարի սկզբով: Չափազանց ուշագրավ է շինության հեռավոր մասում զետեղված պատվո աթոռը՝ ուղղված դեպի ժողովարանում հավաքվողները: Աթոռի վրա նստում էին հյուրերն ու ծերերը, ովքեր ուսուցանում էին ժողովրդին: Ըստ հնագետ Թոմպսոնի՝ «համարվում է, որ այստեղ գտնվում է «Մովսեսի աթոռի» նմուշներից մեկը, որի մասին խոսվում է Մատթեո-

1 **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 491.
2 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 280.

սի Ավետարանում (23. 2): Աթոռը բազալտից էր պատրաստված և ուներ գրություն», որում նշվում էր բարերարի անունը: «Նմանօրինակ գահ հայտնի է նաև Համմաթում (Տիբերիայից հարավ): Հավանաբար այն սինագոգում, ուր Տերն էր այցելում Կափառնայումում, այդպիսի մի «Մովսեսի աթոռ» կար, որի վրա գրված էր այն պատրաստող հարյուրապետի անունը»[1]:

Կափառնայումի շրջակայքը հիշարժան է նրանով, որ այստեղ Տերը հինգ նկանակի և երկու ձկան միջոցով հինգ հազար հոգու կերակրեց (Մատթ. 14. 21): Ուշագրավ է, որ Կափառնայում և Տիբերիա քաղաքների միջև գտնվող լճի ափին ծվարած Տաբգաթում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերած հնամենի եկեղեցու հատակին պահպանվել էր մի հրաշագեղ խճանկար: Նրա վրա պատկերված էր զամբյուղ՝ մեջը հաց, կողքին՝ երկու ձուկ: Հավանաբար այս պատկերը մատնանշում է հինգ հազար հոգու հրաշքով կերակրումը:

6. Տիբերիա քաղաքը կառուցվել էր համանուն լճի մոտ: Նոր Կտակարանում այն միայն մեկ անգամ է հիշատակվում: Այս քաղաքը Հերովդես Ագրիպպասի տիրույթների մայրաքաղաքն էր, սակայն հրեաները երբեք չսիրեցին այդ քաղաքը, քանզի կառուցված էր հին գերեզմանոցի վրա: Իբրև Հերովդես Մեծի երկրորդ որդու թագավորության գլխավոր քաղաք՝ կարևոր նշանակություն է ունեցել, և, անկասկած, նրա ընդերքում չափազանց հետաքրքիր հնություններ են անթեղված: 1955 թ. և հաջորդ տարիների պեղումների արդյունքում հայտնաբերվեցին Հերովդես Անտիպասի ժամանակներին բնորոշ հատկանիշներով հնօրյա բաղնիքներ:

7. Գալիլիայի արևմուտքում են գտնվում Նազարեթը, Կանան և Նայինը: Այս քաղաքների աշխարհագրական դիրքը բավական դյուրին է տեղորոշվում, անգամ եթե մեր ձեռքի տակ աննշան քանակով հնագիտական գտածոներ լինեին: Գ. Ե. Ռայթն ու Ֆ. Վ. Ֆիլսոնը նշում են. «Հրաշալի է, որ մենք Հիսուսի առաքելությանն ու կյանքին առնչվող առավել կարևոր վայրերին ծանոթանալու հնարավորություն ունենք: Ստույգ հայտնի են Նրա

1 **Thompson J. A.** Op. cit. P. 360.

ծննդավայրը՝ Բեթղեհեմը, և Նազարեթը, որտեղ անցել է Նրա մանկությունը: Ինչ վերաբերում է Գալիլիա լճին, Կանային, Նայինին, Կափառնայումին և Քորազինին, ապա դրանց հարցում էլ որևիցե կասկած լինել չի կարող»[1]: Ռայթի և Ֆիլսոնի միտքը ճիշտ է: Սակայն ցայսօր այդ քաղաքների մասին հանգամանալից տեղեկություններ չկան: Այսօր Նազարեթում բազմաթիվ տաճարներ կարելի է տեսնել, սակայն, թերևս, «այս բոլորից միակ հնամենի հուշարձանը աղբյուրն է, որից սուրբ կույսը ջուր էր վերցնում, քանզի այդ տարածքի միակ աղբյուրն է: Հնամենի սինագոգներից մեկը, որը վերակառուցվել և այժմ գործող տաճար է, հավանաբար այդ վաղնջական դարաշրջանի մասին վկայող նյութեր կարող է տրամադրել (...): Ոմանք հակված են կարծելու, որ Նոր Կտակարանի Նազարեթը գտնվելիս է եղել ժամանակակից Նազարեթից որոշ հեռավորության վրա»[2]: Այդուհանդերձ հնագետներն այստեղ ահռելի քարանձավներ, հացահատիկի շտեմարաններ, ձեթի մեծ անոթներ և խորհրդանշական պատկերներ հայտնաբերեցին: Սրանք Նազարեթի առաջին քրիստոնյաների հոգևոր կյանքի վերաբերյալ չափազանց հետաքրքիր նյութեր են[3]:

8. Կանան արդի Հիրբեթ Կանան է (Հովհ. 2. 1,11 4. 46): Նայինն այսօր իր հնօրյա անունը պահպանած գյուղ է:

9. Միջերկրականի ծովեզրին ծվարած Կեսարիան առաքյալների ժամանակ Հուդայի վարչական մայրաքաղաքն էր: Այս քաղաքում է քարոզել Փիլիպպոսը (Գործք 8. 40), և երկու տարի կալանքի տակ պահվել Պողոս առաքյալը: Այստեղ է ապրել Կոռնելիոս հարյուրապետը, և քարոզել Պետրոս առաքյալը (Գործք 11. 11 12. 19):

Քաղաքը կառուցել էր Հերովդես Մեծը և անվանել՝ ի պատիվ Օգոստոս կայսեր: Դա Հերովդեսի շինարարական մեծ նվաճումներից մեկն էր: 1961 թ. պեղումներն արգասավորվեցին մի հոյակերտ հռոմեական թատրոնի, ինչպես և կամարներով ու խողովակներով մի սքանչելի հռոմեական ջրմուղի հայտնաբերմամբ:

1 **Wright G. E., Filson F. V.** The Westminster Historical Atlas. L.,1953. P. 94.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 361.
3 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 284.

Այստեղի ամենանշանակալից գտածոների շարքից կարելի է առանձնացնել մի հազվագյուտ գրություն՝ Պոնտացի Պիղատոսի՝ Հրեաստանի կուսակալի անվամբ՝ թվագրված Քրիստոսի խաչելության թվականով: Այսօր այդ գրությունը Երուսաղեմի ազգային թանգարանում է պահվում[1]:

10. Սամարիան Հերովդես Մեծի ձեռամբ կառուցված ամենից գեղաշեն քաղաքն էր: Ք. ա. 27 թ.–ին նա ձեռնամուխ եղավ քաղաքի կառուցման լայնածավալ շինարարական աշխատանքներին և այն Սեբաստե անվանեց՝ ի պատիվ իր ժամանակակից կայսեր Օգոստոսի (Σεβαστός– լատիներեն Օգոստոսի հունարեն համարժեքն է): Ի պատիվ նույն Օգոստոսի՝ Հերովդեսը նույնիսկ վեհաշուք մեհյան կառուցեց, որի փլատակները հասել են մինչև մեր օրերը: Տաճարն այնքան բարձրաբերձ էր, որ նրա տանիքից պարզ եղանակին կարելի էր տեսնել Միջերկրական ծովը: Մարգադաշտի և քաղաքային հրապարակի ավերակներ էլ գտնվեցին: Այս քաղաքում ավետարանում էր Փիլիպպոս առաքյալը. նրա քարոզը շատ արգասաբեր էր: Այստեղ է, որ պատժի ենթարկվեց Սիմոն մոգը (Գործք 8. 5–25): Այս քաղաքում առաջին քրիստոնյաներն էլ բավական հաջող քարոզեցին (Գործք 1. 8 8. 4–6): Իսկ Պողոս առաքյալի դարձի գալը նպաստեց Սամարիայի մերձակայքում նորաստեղծ եկեղեցիների խաղաղություն վայելելուն (Գործք 9. 31): Որևիցե տեղեկություն չունենք Տիրոջ՝ այս քաղաք այցելության մասին: Հնարավոր է այն պատճառով, որ քաղաքը խիստ հելլենականացված էր, իսկ Տերը գերազանցապես միայն հրեաների մեջ էր քարոզում: Հնագետներն իրենց պարբերական պեղումների ժամանակ մշտապես այստեղ նյութեր են որոնում[2]:

11. Ոմանք նահապետների ժամանակներից քաջ հայտնի և հինավուրց Սյուքեմ քաղաքը նույնացնում են Հովհաննեսի Ավետարանի Սյուքար քաղաքի հետ (4. 5): Մյուսների կարծիքով Սյուքարն ու Սյուքեմը տարբեր քաղաքներ են: Հնագետ Թոմպսո-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 285-286.
2 Անդ, էջ 281-283. և 364-365:

նը նկատում է. «Հավանաբար պետք է սպասել Հիսուսին հայտնի քաղաքի մասին առավել համոզիչ տվյալների ի հայտ գալուն»[1]:

12. Երիքով: Այստեղ Նոր Կտակարանում հիշատակված զանազան իրողություններ են տեղի ունեցել, զորօրինակ՝ կույրերի բժշկումը (Մատթ. 20. 30 Մարկ. 10. 46) և Զակքեոս մաքսապետի ապաշխարությունը (Ղուկ. 19. 1–10): 1950 թ. հռոմեական դարաշրջանի Երիքովի պեղումներին ձեռնամուխ եղած ամերիկացի հնագետները ճարտարապետության մեջ հռոմեական ոճի ազդեցությունը փաստող բազմաթիվ նյութեր գտան: Հնագետ Դ. Լ. Կելսոն գրում է. «Ո՞վ կարող է մտածել, որ Նոր Կտակարանի Երիքովը Հռոմի մի մասն է, որը հրաշքով ինչ–որ մի կախարդական թռչող գորգով Տիբեր գետի ափերից Վադի Քելթի ափեր է բերվել...Իտալիայի սահմաններում այս կարգի շինության հանդիպելիս՝ վերագրում են Տիբերիոսի գահակալության ժամանակներից ոչ ուշ շրջանի»[2]:

Այդ նույն վայրից, որտեղ ամերիկացի հնագետներն աշխատանքներ էին կատարում, դույզն–ինչ դեպի արևմուտք պեղումների ժամանակ մեծ կառույց (88 x 45 մ) հայտնաբերվեց: Ավերակներից երևան հանված մետաղյա դրամները վկայում են, որ կառույցը թվագրվում է Հերովդես Մեծի, Արքեղայոսի և Ագրիպպասի կառավարման ժամանակով, այսինքն՝ հավանաբար նաև այս կառույցը տեսած Տիրոջ օրով: Անշուշտ, Հերովդեսի այս կառույցը ծանոթ էր նաև մաքսապետ Զակքեոսին (Ղուկ. 19): Ակնհայտ է, որ Հերովդեսի և նրա հաջորդների շինությունները հռոմեական արվեստի ազդեցությամբ են կերտվել: Չնայած Երիքովի այս գտածոներին՝ այնուամենայնիվ հնագետների գործունեության համար դեռ լայն ասպարեզ կա:

13. Մեր տրամադրության ներքո անհերքելի ապացույցներ կան, որ արդի Բեթղեհեմն իրոք մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի ծննդավայրն է: Արդեն փիլիսոփա և մարտիրոս Հուստինոսի ժամանակներում (մոտ 150 թ.) կենդանի ավանդություն կար

1 Անդ, էջ 365:
2 **Kelso J. L.** The Frist Campaign of Excavation in N. Testament Jericho // Bulletin of the American Schools of Oriental Research. Dec.,1950. P. 19.

Բեթղեհեմ: Ծննդյան բազիլիկա: 14 կանթեղներով լուսավորված արծաթե աստղը մատնանշում է Հիսուս Քրիստոսի ծննդյան ստույգ վայրը:

Ծննդյան քարանձավի տեղադրության մասին: Հին մատենագիրները հայտնում են, որ այդ քարանձավը պղծվել է Ադրիանոսի կողմից և մոտ 140 թ.–ից օգտագործվել Ադոնիա դիցուհուն պաշտամունք մատուցելու համար: Սակայն սրա շնորհիվ էլ աստվածային Ծննդավայրի մասին ավանդությունը պահպանվեց[1]: Քարանձավի գոյության մասին վկայում է նաև Հերոնիմոսը, ով ապրել է այնտեղ: Ի վերջո Կոնստանդին Մեծը (323–337 թթ.) սրբազան վայրը մաքրեց հեթանոսական պաշտամունքից և քարանձավի վրա կառուցեց Ծննդյան եկեղեցին[2]:

325 թ. եպիսկոպոս Մակարիոս Երուսաղեմացին Կոնստանդին Մեծին հայտնեց, որ Բեթղեհեմում մի քարայր կա, որը տեղացիները Քրիստոսի Ծննդյան վայրն են համարում[3]: Կայսրն իսկույն ևեթ կարգադրեց այս քարանձավը ներառող եկեղեցի կառուցել:

1 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 280.
2 **Kraeling E. G.** Op. cit. P. 361ff.
3 **Free J. P.** Palestine and The Birth of Christ // Christian Victory Magazine. Denver, Colo. June,1940,sect. on «The Manger».



Բեթանիա: Արդար Ղազարոսի գերեզմանը:

Շինարարությունն սկսվեց 326 թվին: Հետագայում այս եկեղեցին բազմիցս վերակառուցվել է, սակայն Ծննդյան սուրբ քարայրը ցայսօր պահպանել է իր նախասկզբնական տեսքը:

Ի մի բերելով այն ամենը, ինչ հայտնի է այսօր Ծննդյան քարանձավի մասին, որը գտնվում է եկեղեցու տակ և ունի 9,9 մ երկարություն և 3,9 մ լայնություն, հնագետ Թոմպսոնը նկատում է. «Գործնականում կասկած չկա, որ սա այն նույն քարայրն է, որը հայտնի է եղել IV դարի քրիստոնյաներին և, անտարակույս, այս ավանդությունն սկիզբ է առնում էլ ավելի խոր հնադարում: Բայց մենք 325 թ. վերաբերյալ հնագիտական տվյալներ չունենք: Ավանդությունը միշտ չէ, որ սխալական է, յուրաքանչյուր ավանդության մեջ ճշմարտության տարրեր պետք է տեսնել»[1]:

14. Քրիստոսի այցելած առավել հայտնի տեղերից մեկը Բեթանիան է՝ Երուսաղեմից դեպի հարավ–արևելք: Այստեղ է, որ Ղազարոսի քույր Մարիամը Տիրոջը թանկարժեք յուղով օծեց, այստեղ է, որ Տերը չորս օրվա մեռելին հարություն տվեց (Հովի. 12. 3, 11): Բեթանիան հիշատակվում է նաև Տիրոջ չարչարանքներին առնչվող պատումներում (Մարկ. 11. 1 14. 3): Ըստ Հովհաննես ավետարանչի՝ այդ տեղը Երուսաղեմից մոտ «տասնհինգ աս-

1 **Thompson J. A.** Op. Cit. P. 366-367; Caiger S. L. Archaeology and the N. Testament. L., 1948. P. 77 ff.

պարեզ» կամ շուրջ 2 700 մետր էր հեռու (Հովհ. 11,18)՝ կես ժամվա ոտքի ճանապարհ: Այսօր Բեթանիան Ալ–Ազարիա է կոչվում, այսինքն՝ «Ղազարոսի վայր»: Բեթփագեն Բեթանիայի մոտ էր գտնվում (Մատթ. 21, 1), հավանորեն ավելի հյուսիս–արևմուտք, բայց նրա տեղադրության նույնականացման հարցում կատարյալ վստահություն չկա:

Քրիստոսի օրով Սուրբ երկրում ապրում էին հրեաներ, հույներ, փյունիկեցի–քանանացիներ և այլ ժողովուրդների սակավաթիվ ներկայացուցիչներ: Հրեաները սփռված էին ամենուր: Հույներն այստեղ Ալեքսանդր Մակեդոնացու զորքի հետ էին հայտնվել՝ երկրի կենտրոնական մասում և Գալիլիայում գաղութներ հիմնելով: Հարավում ապրում էին եդոմացիք: Հորդանանից դեպի արևելք ընկած շրջանում գտնվում էր Դեկապոլիսը (Մատթ. 4. 25, Մարկ. 5. 20), այսինքն՝ հունական տաս միավորյալ քաղաքները, որոնց մեջ էին մտնում Գերասան, Գադարան, Փիղադեղփիան, Սկյութապոլիսը, Աբիլան, Հիպպոսը և Պեղղան: Պաղեստինի հյուսիս–արևմտյան մասը բնակեցված էր հեթանոս փյունիկեցի–քանանացիներով: Հորդանանի ափի երկայնքով, հույներից ու արաբներից բացի, Արաբական թերակղզու հյուսիսում՝ Եփրատի և Կարմիր ծովի միջև, բնակվում էին նաև նաբաթացիները, որոնց թագավորության մայրաքաղաքը Պետրան էր: Նաբաթացիները բավական հզոր էին, և միայն հռոմեացիներին հաջողվեց նրանց ընկճել (Ք. հ. 106 թ.): Նաբաթացիների ամենահռչակավոր թագավորն Արետաս IV–ն էր (Ք. ա. 9 թ. մինչև Ք. հ. 40 թ.), ում Քրիստոսի ժամանակ պատկանում էր նաև Դամասկոսը: Սա այն նույն «Արետաս արքա»–ն է, որի նահանգային կառավարիչը հսկողության տակ էր պահում Դամասկոսը՝ Պողոս առաքյալին բռնելու համար, ով նրանից փախչելիս բավական չարչարանքներ կրեց, երբ նրան զամբյուղի մեջ թաքցրած՝ գիշերվա քողի ներքո պարսպից ցած իջեցրին (Բ Կորն թ. 11. 32): Արետասի անունը քաջ հայտնի է՝ շնորհիվ Նեգև անապատում գտնվող Ավդատեում

հայտնաբերված մետաղադրամների ու գրությունների[1]: Հերովդես Անտիպասի առաջին կինն Արետաս IV–ի դուստրն էր:

Քրիստոսի ժամանակների Պաղեստինի և Ասորիքի ժողովուրդների ու գլխավոր քաղաքների վերաբերյալ վերը նշվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ մեր հնագիտական գիտելիքներն այս հարցի շուրջ բավական սուղ են: Բայց, ինչպես գտնում է հնագետ Թոմպսոնը, հույս կա, որ հընթացս ժամանակի այս գիտելիքները կբազմապատկվեն: «Պաղեստինի բազմաթիվ քաղաքներում եռանդագին պեղումներ են ընթանում, այդ թվում՝ նաև Նոր Կտակարանում հիշատակված քաղաքներում: Այստեղ ամեն ինչ չէ, որ հետազոտված է, մեծ հույսեր ենք կապում գալիք որոնումների և հետազոտությունների հետ»:

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ ԵՎ ՂՈՒԿԱՍԻ

1994 թ. դեկտեմբերին լույս տեսած լոնդոնյան «Թայմս» թերթի համարներից մեկում մի հոդված էր հրապարակվել, ըստ որի Մատթեոսի Ավետարանն ավելի վաղեմի է, քան առ այսօր ընդունված էր համարել: «Թայմսը» հրապարակել էր Կարստեն Պետեր Թիդի՝ պապիրուսաբանության գերմանացի հետազոտողի հետ հարցազրույցը:

Դոկտոր Թիդի պնդմամբ՝ Օքսֆորդի Մագդալեն քոլեջի գրադարանին պատկանող երեք փոքրիկ պատառիկները, որոնք պարունակում են Մատթեոսի Ավետարանի բնագրից հատվածներ (ավելի ստույգ՝ 26–րդ գլխի 10 համարներ), վերագրվում են ոչ թե Ք. հ. II դարին, ինչպես կարծվում էր, այլ I դարին (70 թ.–ից առաջ կամ հետո), և գրվել են, ըստ երևույթին, Քրիստոսի համբարձումից անմիջապես հետո: Այսինքն՝ ըստ Թիդի տեսակետի՝ ժամանակի մեջ յոթանասուն կամ ութսուն տարով դեպի ետ ճեղքում էր կատարվել, այնինչ մինչ օրս ամենից հին համարում ունեցողը պապիրուսը թվագրվում էր 120 թվականով:

1 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. p. 314.

Այս պատառիկները Մագդալենի քոլեջում պահվում էին 1901 թ.–ից ի վեր և նախապես համարվում II դարի գործ: Բայց այդ օրվանից ի վեր ոչ ոք չէր ուսումնասիրել «Մեռյալ ծովի պապիրուսները», ինչպես կոչվում էին դրանք, որովհետև դրանք այլևս Սուրբ Գրքի հետազոտողների հետաքրքրությունը չէին շարժում: Ի գիտություն հայտնենք, որ այս պատառիկները 1901 թ. Լուքսորում (Եգիպտոս) ձեռք էր բերել ոմն անգլիացի պաստոր Չարլզ Հյուլիտտը և նվիրաբերել Մագդալեն քոլեջի գրադարանին: Հյուլիտտը մահացավ 1908 թ. Սիցիլիայում՝ այդ պապիրուսների մասին ոչ մի տեղեկություն չթողնելով, որոնց լուսանկարչական պատճենները միայն 1953 թ. լույս տեսան: Այդ պապիրուսի մյուս երկու հատվածները պահվում են Իսպանիայում և Մատթեոսի 3–րդ և 5–րդ գլուխներից մեջբերումներ են: Թիդը՝ գերմանական Պադեբորն քաղաքի Հիմնարար էպիստեմոլոգիական (իմացաբանական) ինստիտուտի (Basic Epistemological Research) տնօրենը, 1994 թ. այցելեց Օքսֆորդ և Մագդալեն քոլեջի պապիրուսների առաջին լիարժեք հետազոտություններն անցկացրեց:

Դոկտոր Թիդը «Թայմսում» հայտարարեց, որ Մագդալենի պապիրուսները, ըստ ամենայնի դատելով, գրվել են Ք. հ. I դարում տարածված եղանակով և ավելացրեց. «Ձեռագրերի նույնիսկ թռուցիկ ուսումնասիրության դեպքում կարելի է հասկանալ, որ դրանք մի ամբողջ դար ավելի վաղ են գրվել, քան ի սկզբանե ընդունված էր համարել»:

Թիդի պնդումները հրապարակվեցին նաև գերմանական հատուկ ամսագրում «Zeitschrift für Papyrologie» (հունվար, 1995 թ.):

Քառասներկուամյա Թիդի այն պնդումը, որ Մատթեոսի Ավետարանն ականատեսի ձեռամբ Քրիստոսի կյանքի դեպքերի անմիջական գրառումն է, արդեն մասնագետների շրջանում բանավեճեր է առթել: Այդ կարծիքի իրավացիության ու հիմնավորվածության հաստատման դեպքում Սուրբ Գրքի մեկնության պատմությունը կնշանավորվի մի նոր էջի բացմամբ: «Թայմս» թերթի կարծիքով Թիդը մի մարդ է, ով, հավանորեն, փոխեց քրիստո-

նեության մասին մեր պատկերացումները: Մենք, սակայն, դեռ պիտի սպասենք[1]:

XIX դարի վերջում Նոր Կտակարանի բնագրի այսպես կոչված ժխտական քննադատության կողմնակիցները, զորօրինակ՝ ռացիոնալիստ Ֆ. Կ. Բաուրը, չէին ընդունում Ղուկասի Ավետարանի և Գործք Առաքելոցի պատմականությունը: Նրանց կարծիքով Ղուկաս ավետարանչի այս երկու գործերը Նոր Կտակարանի ամենաթույլ գրքերն են: Նրանց պնդումներն այս կարևոր գրքերի առավել մանրազնին ուսումնասիրության պատճառ դարձան, ինչի արդյունքում պարզվեց, որ սուրբ Ղուկասը հիանալի պատմիչ է: Այս բանին մեծապես նպաստեց նաև հնագիտությունը, որն ապացուցեց, որ պատմական, աշխարհագրական, տեղագրական իրողությունները, ինչպես և Ղուկասի երկու գրքերում, մանավանդ Գործք առաքելոցում նկարագրված քաղաքական մթնոլորտը, գրված են I դարի անցուդարձի հստակ և քաջ իմացությամբ: Այսպես՝ սըր Ու. Մ. Ռամսեյը, ում աշխատություններում հերքվելով հերքվեցին Բաուրի և նրա «դպրոցի» պնդումները, առանձնակի բարձր է գնահատում Ղուկասի պատմական հոտառությունը՝ «վեր դասելով նրան մյուս պատմիչներից»[2]:

Ղուկասի Ավետարանը քննողն առանց որևէ դժվարության կարող է արձանագրել, որ մատենագիրը ձգտում է իր նկարագրած անցքերը միևնույն պատմական հարթության մեջ զետեղել, ինչպես նաև որոշակի պատմական շրջանակի մեջ առնել դրանք: Այսպես՝ նա գրում է, որ Զաքարիա քահանան հրեշտակից լուր առավ «Հրեաստանի Հերովդես թագավորի օրով» որդի ունենալու մասին (Ղուկ. 1. 5), և «այն օրերին Օգոստոս կայսեր կողմից հրաման ելավ՝ ամբողջ երկրում մարդահամար անելու համար: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցավ, երբ Կյուրենիոսը կուսակալ էր Ասորիքում» (Ղուկ. 2. 1): Նա գրում է, որ Հովհաննես Մկրտիչն իր քարոզչությունը սկսեց ծավալել «Տիբերիոս կայսեր իշխանության տասնհինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղա-

1 Տես «Time» հանդեսը, 23. 01. 1995, p. 43, նաև «Ναυτεμπορική», 28. 12. 1994, «Ἑστία», 27. 12. 1994, «Καθολική», 14. 03. 1995 թերթերը:

2 **Ramsay W. M.** St. Paul the Traveller and the Roman Citizen. L., 1897. P. 7 ff.

տոսը կուսակալ էր Հրեաստանում, և Հերովդեսը՝ չորրորդապետ Գալիլիայի, և նրա եղբայր Փիլիպպոսը՝ չորրորդապետ Իտուրացիների ու Տրաքոնացիների աշխարհի, Լյուսանիասը՝ չորրորդապետ Աբիլենեի, և Աննայի ու Կայիափայի քահանայապետության օրով» (Ղուկ. 3. 1–2):

Աստվածաշնորհ ավետարանչի այս տեղեկությունները պատմաբաններին ու հնագետներին նետած յուրատեսակ մարտահրավեր էին: Նախորդ գլուխներում բավականաչափ շատ ենք խոսել այն մասին, թե երբ են իշխել Հերովդես Մեծն ու նրա հաջորդները: Հիշեցնենք, որ Հերովդեսը գահակալել է 37 թ.–ից մինչև մեր թվարկության 4 թվականը, ինչը նշանակում է, որ Հովհաննես Կարապետը և մեր Տեր Հիսուս Քրիստոսը ծնվել են Հերովդեսի մահից ոչ շատ առաջ, այն է՝ մ. թ. ա. մոտ 4 թ.: Այսօր արդեն լիովին ապացուցված է, որ «V դարում թույլ տված սխալի պատճառով Տիրոջ Ծննդյան տարեթիվը սխալաբար համարել են Հռոմի հիմնադրման 753 թվականը, որը իրական ժամանակագրությունից երեք կամ չորս տարով ուշ էր»[1]: Մյուսները, իրենց հերթին հիմնվելով Մատթեոսի Ավետարանի վկայության վրա (2. 1), Քրիստոսի Ծնունդը վերագրում էին մեր թվարկությունից առաջ 5 թվականի վերջին կամ 6 թվականին, քանզի Հռոմի հրամանով մարդահամարը անց էր կացվել մ. թ. ա. 9–8 թթ., բայց հրեաների դիմադրության պատճառով հետաձգվել էր և ապա միայն մ. թ. ա. 7–6 թթ. անցկացվել: Սըր Ու. Մ. Ռամսեյը պնդում է, որ դա Ղուկասի՝ Քրիստոսի Ծննդյան առնչությամբ վկայակոչած հենց նույն մարդահամարն է (Ղուկ. 2. 1–3): Հետևաբար, ելնելով այս մարդահամարից Քրիստոսի Ծննդյան իրադարձությունը հարկ է վերագրել մ. թ. ա. 6 թ.–ին[2]:

Օգոստոսի և Կյուրենիոսի մարդահամարի ժամանակի ստույգ անցկացման (Ղուկ. 2. 1) վերաբերյալ կարող ենք ասել հետևյալը. անշուշտ, ավետարանչի «ընդ ամենայն տիեզերս» չի նշանակում «բովանդակ աշխարհով» մեկ, այլ խոսքը Հռոմի տիրապետու-

1 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὸ κατὰ Λουκᾶν. Ջ. 34.
2 **Free J. P.** Op. cit. P. 285. Ramsay W. M. Was Christ Born at Betlehem? L., 1898. P. 174 ff; **Thompson J. A.** Op. cit. P. 378-379.

թյան ներքո գտնվող տարածքների բնակչության մարդահամարի մասին է:

Նկատի առնելով Ղուկասի այս հաստատակամությունը, որով նա անդրադառնում է վերոհիշյալ մարդահամարին, երրորդ ավետարանչի պատմականությունը ժխտող գիտնականները հետևյալ փաստարկներն առաջ քաշեցին. ա) պատմությունը լռություն է պահպանում այսպիսի մարդահամար անցկացնելու մասին, բ) Կյուրենիոսը Ասորիքի կուսակալ է եղել առնվազն տաս տարի ավելի ուշ, գ) անհեթեթ է ենթադրել, որ մարդիկ պետք է թողնեին իրենց տները միայն այն բանի համար, որ իրենց հաշվառեին:

Այս առարկություններին պատասխանում ենք.

1) բնակչության մարդահամարներ անցկացվել են վաղնջական ժամանակներից՝ հարկահավաքության անհրաժեշտությամբ պայմանավորված: Բացի այդ, ուրիշ ի՞նչ եղանակով Հռոմը կկարողանար վիթխարի գումարներ գանձել գեղաշուք ճարտարապետական շինություններ կառուցելու, իշխանների և ժողովրդի շռայլ կյանքն ապահովելու, մեծածախս բանակ և վարչական համակարգ պահելու համար: Հնագիտության հայթայթած պապիրուսների վկայության համաձայն՝ Հռոմեական կայսրության մեջ յուրաքանչյուր տասնչորս տարին մեկ բնակչության մարդահամար էր անցկացվում: Մարդահամարը տարածվում էր «հռոմեական քաղաքացիների», ինչպես նաև Իսպանիայի, Գաղատիայի, Եգիպտոսի, Ասորիքի և Պաղեստինի բնակչության վրա: Պապիրուսները հայտնում են Ք. ա. 9–ից մինչև 6 թթ. անցկացված մարդահամարի մասին[1]: Կղեմես Աղեքսանդրացին (155–220 թթ.), մարդահամարի համակարգը հիշատակելով, ասում է, որ այն, իբրև այդպիսին, առաջին անգամ կիրառվել է Քրիստոսի Ծննդյան տարուց սկսյալ: Պապիրուսների բնագրերը հայտնում են յուրաքանչյուր տասնչորս տարին մեկ անցկացված մարդահամարի մասին, այն է՝ 90 թ.–ին, 104 թ.–ին, 118 թ.–ին, 132 թ.–ին՝ մինչև 230 թ.: Մարդահամարի հիշատակումներ կան նաև Պլինիոսի և Տակիտեսի մոտ՝ 35–ին, 48–ին, 61–ին, և 74–ին: Սըր Ու. Մ. Ռամ-

1 **Free J. P.** Op. cit. P. 285-286; **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 463.

սեյն ընդգծում է, որ մենք Եգիպտոսում 36 և 62 թթ. անցկացված մարդահամարի, ինչպես նաև 20 թվի և 48 թվի մասին անուղղակի տեղեկություններ ունենք: Միայն տեղեկություններ չունենք Ք. հ. 6 թվականի մարդահամարի մասին, որի մասին հավանորեն հաղորդում է Ղուկաս Ավետարանիչը (Գործք 5. 37), բայց մենք կարող ենք ենթադրել, որ այն այնուամենայնիվ անց է կացվել: Իսկ դրանից ոչ շատ առաջ անցկացված մարդահամարը պետք է որ Ք. ա. 8 թվին կայացած լիներ:[1]

Հետևաբար Ղուկասի Ավետարանի հակառակորդների այն կարծիքը, թե պատմությունը լռություն է պահպանում Ղուկասի հիշատակած մարդահամարի վերաբերյալ, դյուրությամբ հերքվում է: Սուրբ Ղուկասը ճիշտ է:

2) Ըստ հրեա պատմիչ Հովսեպոս Փլաբիոսի՝ Կյուրենիոսն Ասորիքի կուսակալ է եղել Ք. հ. 6 թվին: Այդ ժամանակ է տեղի ունեցել հրեաների վրդովմունքն առաջացրած մարդահամարը: Բայց Քրիստոսը ծնվել է ոչ թե մ. թ. 6 թվականին, այլ, ինչպես արդեն նշել ենք, մ. թ. ա. մոտ 4 թվականին: Այնպես որ Քրիստոս արդեն տաս տարեկան էր, երբ Կյուրենիոսը «կառավարում» էր Ասորիքում: Ի՞նչ անել սրա հետ:

Հունարեն ἡγεμονεύοντος (Ղուկ. 2. 2) բառը նախապես «ընդհանուր իմաստ է ունեցել և նշանակել է տարբեր աստիճանի վարչական պաշտոն»: Ղուկաս ավետարանիչը «չի ճշտում, որ Կյուրենիոսը այդ ժամանակ legatus է եղել՝ պաշտոն, որը նա զբաղեցրել է Ք. հ. 6 թ.»[2]: Հետևաբար, «ի դատաւորութեան Ասորւոց Կիւրենեայ»* արտահայտությունն ըստ էության նշանակում է«հսկողություն, դատավորություն»**՝ այդ բառի տարբեր իմաստներով:

1828 թ. Հռոմում մի գրություն հայտնաբերվեց, որում հայտնվում էր, որ Կյուրենիոսը երկու անգամ է զբաղեցրել Ասորիքի կու-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 378.
2 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὸ κατὰ Λουκᾶν. Σ. 84.
* Ըստ գրաբար բնագրի:
** Դատավորություն անել նշանակում է նաև կառավարել:

սակալի պաշտոնը[1], սակայն նրա ծառայությունը մեկը մյուսից տարբերվել է: Այդ գրության մեջ ասվում է նաև, որ «Պ. Սուպլիկիոս Կյուրենիոս դուումվիրը (բարձրագույն վարչական պաշտոն ինքնավարություն ունեցող քաղաքներում ու գաղութներում) Ք. ա. 6 թ. ոչ շատ առաջ Ասորիք զորք ուղարկեց»[2]: Ֆ. Ֆ. Բրյուսը վստահ է, որ այդ վկայության համաձայն՝ Կյուրենիոսը վերը նշված պաշտոնն զբաղեցրել է հավանաբար Ք. ա. 10–ից 7 թվերի արանքում, երբ իբրև Ասորիք–Կիլիկիա պրովինցիայի ռազմական գծով կայսերական լիազոր՝ Փոքր Ասիայի լեռնային ցեղերից մեկի՝ homanadenses–ի դեմ (խոսքը այնժամ Տավրոս լեռան վրա բնակվող մի բարբարոս ցեղի մասին է)[3] զորք ուղարկեց: Ճիշտ որ, Ռամսեյն առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Պիսիդյան Անտիոքում մի գրություն գտավ, որը վավերացրեց Ասորիքում Կյուրենիոսի կառավարման երկու ժամկետների փաստը: Ուստի Կյուրենիոսը կարող էր վարչական պաշտոն զբաղեցնել և այն ժամանակ, երբ Քրիստոս ծնվեց, և հավասարպես ավելի ուշ՝ Ք. հ. 6 թ., երբ արդեն կուսակալ էր[4]:

Բացի այդ, Ղուկասը չի ասում, որ ինքը՝ Կյուրենիոսն է Քրիստոսի Ծննդյան տարում անցկացրել մարդահամարը: Նա ասում է պարզ–հասարակ. մարդահամարը եղավ «ի դատաւորութեան Ասորւոց Կիւրենեայ»: Այդ նույն ժամանակ, ինչպես գրում է Թոմպսոնը, «Կյուրենիոսի, միաժամանակ նաև օրինավոր կուսակալ Սենտիոս Սատուրնիի վրա արտակարգ լիազորություններ էին դրվել»[5]: Այնպես որ Ղուկասն այս հարցում բացարձակապես ճիշտ է: Քրիստոսի Ծննդյան տարում իրոք մարդահամար անցկացվեց: Հենց այդ նույն ժամանակ, այսինքն՝ Ք. ա. մոտ 4 թ. Կյուրենիոսը Հռոմի տված կարևոր հանձնարարությամբ և հատուկ լիազորություններով էր այդտեղ գտնվում, թեկուզև ոչ կուսակալի կարգավիճակով, ինչպես դա ավելի ուշ՝ Ք. հ. 6 թ. եղավ:

1 **Free J. P.** Op. cit. P. 286.
2 **Robinson A. T.** Op. citP. 128.
3 **Bruce F. F.** Are the N. Testament Documents Reliable? P. 85.
4 **Free J. P.** Op. cit. P. 286.
5 **Thompson J. A.** Op. cit. P. 379.

3) Եգիպտոսում առաջին հռոմեացի նոմարքոսի՝ Գայիոս Վիբիոսի վճիռը պարունակող, 104 թվականով թվագրվող մի պապիրուսում ասվում է. «Քանի որ եկել է ըստ յուրաքանչյուր տան մարդահամարի անցկացման ժամանակը, անհրաժեշտ է նկատվում հարկադրել բոլոր նրանց, ովքեր այս կամ այն պատրվակով իրենց մշտական բնակության վայրերի սահմաններից դուրս են գտնվում, վերադառնալ իրենց տները, որպեսզի կայացրած վճռի համեմատ ավարտին հասցվի մարդահամարը»[1]: Ռամսեյը նշում է, որ գոյություն է ունեցել երկու տեսակի մարդահամար: Ըստ առաջինի՝ մարդուն հաշվառում էին այն տեղում, որտեղ նա գտնվում էր մարդահամարի օրը: Դա պետական ծառայողների հսկայական բանակ էր պահանջում, իսկ հռոմեական կայսրերն այդքան հոգսաշատ միջոցառում անցկացնելու հնարավորություն չունեին: Իսկ ըստ մյուս տեսակի՝ յուրաքանչյուր մարդ պարտավոր էր վերադառնալ իր մշտական բնակության վայրը և մնալ այնտեղ մինչև հաշվառման ենթարկվելը[2]:

104 թ.–ի պապիրուսը հաստատում է, որ մարդահամարն ընտանիք առ ընտանիք է անցկացվել: Միանգամայն ակներև է, որ եթե անգամ Պաղեստինում այսպիսի մարդահամարի վերաբերյալ ուղղակի վկայություններ չունենայինք էլ, ապա նմանօրինակ միջոցառման անցկացման փաստը Եգիպտոսում ապացուցում է, որ մարդահամարի այսպիսի եղանակը տեղ ուներ Հռոմեական կայսրության տարածքում: Հետևաբար, եթե դա տեղի է ունեցել Հռոմին ենթակա Եգիպտոսում, նույնը կարող էր նաև Պաղեստինում տեղի ունեցած լինել[3]: Այնպես որ այս հարցում էլ Ղուկասն իրավացի է:

Վերջապես մեր ունեցած երկու վավերագրերը փարատեցին Աբիլենեի չորրորդապետ Լյուսիանոսի անձի շուրջ առկա կասկածները, որի մասին խոսվում է Ղուկասի գրքում (3. 1): Ոմանք դա ավետարանչի «կոպիտ սխալին, ժամանակավրիպությանն» են վերագրում, քանզի առ այսօր հայտնի Լյուսիանոսը մահկանա-

1 **Blaiklock E. M.** Out of the Earth. Grand Rapids,1957. P. 14.
2 **Short A. R.** Archaeology Gives Evidence. P. 54.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 378.

ցուն կնքել է Ք. ա. 34 թ. և դժվար թե ապրեր ավետարանչի նշած ժամանակներում (Ք. հ. 24 թ.), այսինքն՝ իր մահից 58 տարի անց: Բայց վերոհիշյալ երկու գրություններն էլ հաստատեցին Ղուկասի իրավացիությունը: Վավերագրերից մեկում Լյուսիանոսը հիշատակված է ոմն Ջինոդորի հետ և չորրորդապետ է կոչված: Մյուսում խոսվում է «Լյուսիանոս չորրորդապետի»՝ Տիբերոսի ժամանակակցի մասին, այսինքն՝ խոսքը Ք. հ. 14 թ.–ից մինչև 29 թ.–ի մասին է[1]: Անկասկած, Ղուկասը նկատի ուներ այս Լյուսիանոսին՝ հայտնի չորրորդապետին, և ոչ թե Ք. ա. 34 թ. սպանված Պտղոմեոսի որդի Լյուսիանոսին[2]: Ուշագրավ է, որ, երբ 1913 թ. Ա. Պլամմերը գրում էր իր՝ Ղուկասի Ավետարանի հիասքանչ մեկնությունը, իսկ այս փաստերը դեռ հնագիտության կողմից հաստատված չէին, նա, համոզված լինելով Ղուկասի ճշմարտապատմության մեջ, նկատում է. «Ղուկասի ճշմարտապատմությունն այնպիսին է, որ առանց ծանրակշիռ ապացույցների անհնարին կլիներ նրա պատումներից թեկուզև ինչ–որ մեկը ժխտել՝ իբրև, անկասկած, կոպիտ սխալ»[3]: Եվ ահա բավական ծանրակշիռ ապացույցներ ի հայտ եկան: Պարզվեց, որ ավետարանիչն այս հարցում էլ բացարձակապես իրավացի է:

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Ու. Մ. Ռամսեյի «Պողոս առաքյալը՝ ճանապարհորդն ու հռոմեական քաղաքացին» հրաշալի աշխատության մեջ ուշադրությունը հատկապես բևեռվում է Ղուկաս ավետարանչի պատմական հավաստիության վրա, որով նա առաջնորդվել է Գործք Առաքելոց գիրքը մատենագրելիս: Սակայն այն օրից, ինչ Ռամսեյը 1897 թ. գրեց իր գիրքը, հնագիտությանը հաջողվեց հարստացնել մեր գիտելիքները Գործքում շոշափված անունների և անց-

1 **Creed J. M.** The Gospel According to St. Luke. L.,1950. P. 309.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 379-380. Ըստ Թրեմբելասի՝ Ղուկասի Ավետարանի մեկնության (էջ 125)՝ Լյուսիանոսի մահվան տարեթիվը Ք. ա. 36 թվականն է:
3 **Plummer A.** St. Luke, International Critical Commentary. Edinburgh,1913. P. 50.

Կղոդեոս կայսրը ընտանիքով, (կամեյոն) Վիեննա: Գեղարվեստապատմական թանգարան:

քերի վերաբերյալ: Այսպիսով այսօր մենք ավելի շատ հիմքեր ունենք համաձայնելու Ռամսեյի հետ այն բանում, որ «Ղուկասը առաջնակարգ պատմիչ է և ոչ միայն այն բանի համար, որ նրա ձեռամբ շարադրված անցքերն արժանահավատ են, այլև որ նա իսկական պատմական հոտառություն ունի (...): Այս մատենագրին պետք է մեծագույն պատմիչների շարքին դասել»[1]:

Այժմ հնագիտության լույսի ներքո դիտարկենք որոշ անցքեր, որոնք տեղ են գտել Գործք առաքելոցում, և որոնք Ղուկասի՝ իբրև մեծագույն պատմիչներից մեկի պերճախոս վկայությունն են:

1. Ըստ ս. Ղուկասի՝ Անտիոքում հավատացյալների մեջ Ագաբոս մարգարեն, Սուրբ Հոգով լցված, մարգարեացավ, որ «ամբողջ աշխարհում մեծ սով է լինելու, որը և եղավ Կղոդեոս կայսեր օրով» (Գործք 11. 28): Ռամսեյը զարմանահրաշ նյութեր հավաքեց, որոնց հիման վրա «դյուրությամբ հաստատվեց» սովի փաստը[2]: Պատմագիր Սվետոնիոսը Կղոդեոս կայսեր օրոք «մշտական անբերրիության» մասին է վկայում, որոնք պարենի սղությամբ պայմանավորված՝ գների բազմապատիկ աճ էին առաջացնում: Դիոն Կասսիոսն ու Տակիտոսը Հռոմում երկու անգամ սովի բռնկման մասին տեղեկություններ են հաղորդում, փաստ, որը մատնանշում է Միջերկրականի ավազանում սովի մասին, քանզի Հռոմը միշտ էլ դրսից է հացահատիկ ներմուծել: Եվսեբիոս պատմիչը տեղեկացնում է Հունաստանում, իսկ վավերագրերից մեկը՝ Փոքր Ասիայում բռնկված սովի մասին: Այս ամենը վկայում է, որ Կղոդեոսի (41–54 թթ.) օրոք մեկը մյուսի հետևից հացահատիկի

1 **Ramsay W. M.** The Bearing of Recent Discovery on the Trustworthiness of the N. Testament. L., 1915. P. 222.
2 **Ramsay W. M.** St. Paul the Traveller and the Roman Citizen. P. 48 ff.

անբերրիություն է եղել, որի արդյունքում կայսրության զանազան շրջաններում մեծ սով է առաջացել[1]:

Ագաբոսի կանխասած սովը, որն իրոք շուտով տեղի ունեցավ, Հովսեպոս Փլաբիոսի հիշատակած 44–48 թթ. միջև՝ հավանաբար 46 թվի սովն էր: Այդժամ Հրեաստանի կուսակալներն էին Կուսպիոս Փուդասը (44–46 թթ.)[2] և Տիբերիոս Հուլիոս Ալեքսանդրը (46–48 թթ.): Այս սովն Անտիոքի քրիստոնյաներին մղեց օգնության ձեռք մեկնել Երուսաղեմի սովյալներին, իսկ Պողոսը Բառնաբասի հետ (մոտ 46 թ.) այդտեղ եկավ՝ Անտիոքի Եկեղեցուց Երուսաղեմի Եկեղեցուն սիրո ընծաներ բերելով:

2. Ըստ Գործքի (13. 5–6)՝ Պողոս առաքյալը Բառնաբասի և վերջինիս եղբորորդի Մարկոսի հետ նավարկեցին Կիպրոս և Սալամինա հասան, ապա շրջելով կղզում՝ հասան Պափոս: Այդ քաղաքում նրանք հանդիպեցին հռոմեական բդեշխի փոխանորդ Սերգեոս Պողոսին: Այս անունը հայտնաբերվեց Կիպրոսի վավերագրերից մեկում: Ըստ Ռամսեյի՝ Սոլայում (Կիպրոսի հյուսիսային ծովեզր) երևան հանված այդ վավերագրում նշվում է, որ գրված է «Պողոսի բդեշխության ժամանակ»[3]: Սրանից զատ, Կղոդեոսի օրոք Հռոմում «Տիբերի կուսակալ» է եղել Լուկիոս Սերգեոս Պողոսը[4], ում, շատ հավանական է, հետագայում նշանակեցին Կիպրոսի բդեշխի փոխանորդ: 1912 թ. Ռամսեյը Անտիոքում I դարի կեսերին պատկանող մի վավերագիր գտավ, որում գրված էր. «Լուկիոս Սերգեոս Պողոս կրտսերին՝ հռոմեական ճանապարհների չորս վերակացուներից մեկին...»[5]: Նա մեկ այլ գրություն էլ գտավ, ուր խոսվում էր Սերգիա Պողոս անվամբ մի կնոջ մասին: Ըստ Ռամսեյի՝ այդ անձինք Պափոսի բդեշխի փոխանորդ Սերգեոս Պողոսի ուստրն ու դուստրն էին: Ռամսեյը հատուկ շեշտադրում է գրության մեջ առկա վկայությունները, որոնք խոսում

1 **Bruce F. F.** The Book of Acts. Greand Rapids, 1954. P. 243.
2 **Հովսեպոս Փլաբիոս**, Հրեական հնախոսությունը, XX, 2, 5 և 5, 2:
3 **Ramsay W. M.** Op. cit. P. 74.
4 **Bruce F. F.** Op. cit. P. 264.
5 **Cobern C. M.** The New Arhaeological Discoveries and Their Bearing upon the N. Testament. N. Y.: Funk ahd Wagnalls, 9 th ed., 1929. P. 539.

են այն մասին, որ Սերգիան քրիստոնեուհի էր և երեխաներին քրիստոնեական ոգով էր դաստիարակում[1]:

Ռամսեյը նշում է, որ «Պողոս» բառի ուղղագրության հարցում էլ ավետարանիչն իրավացի է: Բանն այն է, որ լատիներենում այդ անունը գրվում է երկու «լ»–ով՝ Paullus, մինչդեռ հունարենում՝ միայն մեկով[2]: Այսպիսով ապացուցվեց նաև, որ ս. Ղուկասի գիրքն ուղղագրական առումով էլ է անբասիր:

Ըստ ս. Ղուկասի՝ Սերգեոսը բդեշխի փոխանորդի տիտղոս ուներ (Գործք 13. 7): Հնագետների հետազոտությունները ցույց տվեցին, որ իրոք այդպիսին է եղել Կիպրոսի հռոմեացի կուսակալի տիտղոսը առաքյալների՝ կղզի այցելելու ժամանակ: Սկզբում կղզին Հռոմեական կայսրության ինքնավար պրովինցիա էր, սակայն Օգոստոսն այն հռոմեական սենատի տնօրինությանը հանձնեց, որն այսպիսով հայտնվեց բդեշխների իշխանության ներքո: Այս փաստը հաստատվում է Կիպրոսում հնագետների կողմից հայտնաբերված այդ ժամանակվա մետաղյա դրամներով: Նկատենք, որ 35 տարվա ընթացքում Կիպրոսում հռոմեական կառավարման չորս ձև է փոխվել: Այդուհանդերձ Ղուկասը, անցուդարձի իր քաջատեղյակությամբ, սխալ թույլ չի տվել՝ Սերգեոս Պողոսին ներկայացնելով այն տիտղոսով, որն իրականում նա ունեցել է[3] [1]:

3. Ս. Ղուկասը հայտնում է, որ առաքյալները ողջ շրջանն անցնելով՝ Պերգեից Պիսիդյան Անտիոք եկան (Գործք 13. 14): Ստրաբոնն այս քաղաքը անվանում է «Պիսիդյայի Անտիոք»: Քաղաքը շրջանի գլխավոր ռազմա–քաղաքական կենտրոնն էր, որը գաղատական Փռյուգիա էր կոչվում: Եվ ճիշտ որ, գրություններից մեկում խոսվում է ոմն «շրջանային հարյուրապետի» մասին, ով հավանաբար հատուկ առաքելությամբ էր այդտեղ ժամանել[4]: Ղուկասը միանգամայն ճիշտ և բացարձակապես ստույգ հաղոր-

1 **Cobern C. M.** Op. cit. P. 540
2 **Cobern C. M.** Op. cit. P. 539, note 91.
3 Տես **Kerr C. M.** Σέργιος Παύλος // International Standard Bible Encyclopaedia. Chicago, 1930.
4 **Ramsay W. M.** Op. cit. P. 103.

դում է. «Եվ Աստծո խոսքը ամբողջ գավառում տարածվում էր» (Գործք 13. 49), այսինքն՝ ամբողջ անտիոքյան գավառում:

Սակայն առաքյալների հաջող քարոզչությունն Անտիոքում հրեաների դիմադրությանը հանդիպեց, ովքեր մինչև իսկ կանանց գրգռեցին նրանց դեմ հալածանքներ սկսելու (Գործք13. 50): Ղուկաս ավետարանիչն այս մանրամասնության մեջ էլ է ճիշտ, որովհետև ինչպես նկատում է Ռամսեյը, եթե Աթենքում կամ հոնիական ինչ–որ քաղաքում դա անհարիր կլիներ, այստեղ կանանց այդ գործողությունները հարիր էին Փոքր Ասիայի ներքին մասերում գտնվող քաղաքների կենսակերպին ու բարքերին[1]:

4. Պողոս առաքյալը Կորնթացիների թուղթը գրելիս՝ ի շարս այլոց ընդգծում է, որ ծառայել է Աստծուն՝ իրեն վտանգի ենթարկելով գետերի ձմեռային վարարումներից ու իր բոլոր ճամփորդությունների ժամանակ ուղեկցվող ավազակային հարձակումներից: Կոնիբիարն ու Խոուսոնը համարում են, որ այս խոսքերով Պողոս առաքյալը մատնացույց է անում Պերգեից Անտիոք ճամփորդությունը: Սա հաստատվում է Պիսիդյայի շրջակայքում (որտեղ գտնվում է Անտիոքը) հայտնաբերված պեղածոներով: Ռամսեյը հիշատակում է Պիսիդյայի շրջակայքում գտնված հին արձանագրությունները, որոնցում խոսվում է շրջանում կարգ ու կանոնին, անվտանգությանն ու խաղաղությանը կոչված զինյալ ոստիկանների ու զինվորների մասին: Այլ վավերագրերում խոսվում է կամ ավազակների հետ բախումների, կամ էլ գետերում խեղդվելու մասին[2]:

5. Ս. Ղուկասը պատմում է, որ առաքյալներն Իկոնիոնը թողնելով՝ եկան «լիկայոնացիների Լյուստրա և Դերբե քաղաքները» (Գործք14. 6): Սակայն այնպիսի հռոմեական մատենագիրներ, ինչպիսիք Ցիցերոնն ու Ստրաբոնն են, ասում են, որ Իկոնիոնը գտնվում է Լիկայոնիում: Սրա հիման վրա Նոր Կտակարանի բնագրի բազում քննադատներ սկսեցին պնդել, որ Գործք առաքելոցը իբր թե Ղուկասի ձեռամբ չի գրվել, և որ դա արժանահա-

1 **Ramsay W. M.** Op. cit. P. 102.
2 **Free J. P.** Op. cit. P. 316.

վատ բնագիր չէ, ընդ որում անհամեմատ ավելի ուշ շրջանում է մատենագրված: Այդուհանդերձ 1910 թ. Փոքր Ասիայում Ռամսեյի կողմից երևան հանված գտածոներն ապացուցում են, որ Իկոնիոնը պատկանում էր ոչ թե Լիկայոնին, այլ Փռյուգիային[1]: Այլ հնագիտական պեղածոների վկայության համաձայն՝ Իկոնիոնի բնակիչներն իրենք իրենց, ինչպես և առհասարակ բոլորը, նրանց փռյուգիացի էին համարում: Ռամսեյն այնքան մեծ նշանակություն էր տալիս Ղուկաս ավետարանչի գրքի ստուգությանը, որի խոսքերի համաձայն Իկոնիոնը Լիկայոնում չէր գտնվում, որ երբ համոզվեց, որ Իկոնիոնը լիկայոնական քաղաք չէ, արմատապես փոխեց իր վերաբերմունքը Գործք առաքելոցի նկատմամբ, որին մինչ այդ նայում էր՝ իբրև «անստույգ ու ուշադրության ոչ արժանի» բնագրի[2]:

Բացի այդ, Քսենոփոնը Ք. ա. 401 թ. Իկոնիոնն իբրև փռյուգիական քաղաք է հիշատակում: Բանասիրական և հնագիտական (գրավոր) վկայություններ էլ կան, որոնք հավաստիացնում են, որ Իկոնիոնը մինչև 295 թ. փռյուգիական քաղաք է համարվել[3]: Այսպիսով, ինչպես նշում է Թոմպսոնը՝ «Թեպետ Իկոնիոնը տնտեսական նկատառումներով էին կապում Լյուստրայի և Լիկայոնի քաղաքների հետ, իրականում վարչական առումով Իկոնիոնը Փռյուգիային էր պատկանում: Սա ցնցող տպավորություն գործեց Ռամսեյի վրա, որովհետև ցույց էր տալիս, որ Ղուկասը հավաստի և ստույգ կերպով էր իրազեկված այսքան կոնկրետ մանրամասնության մասին»[4]:

---

1 **Free J. P.** Archaeology and the Accuracy of Luke: II. Luke's Geography//His Magazine, August,1944.

2 **Ramsay W. M.** The Bearing of Recent Discovery on the Trustworthiness of the N. Testament…P. 35 ff.

3 **Bruce F. F.** Op. cit. P. 288.

4 **Thompson J. A.** Op. cit. P. 384. Պողոս առաքյալը Գործք առաքելոցի 14-րդ գլխի 6-րդ համարում Լյուստրան գործածել է իգական սեռով (ἡ Λύστρα), իսկ 14-րդ գլխի 8-րդ համարում՝ չեզոք սեռով (τὰ Λύστρα). «Ըստ Ռամսեյի՝ Ղուկասը չէր կարող այնքան անուշադիր լինել, որ չնկատեր բառի սեռի այդ փոփոխությունը: Այսպիսով, նա դիտավորյալ է Լյուստրա քաղաքի անվանումն իգական սեռով գործածել, քանզի այդ ժամանակ, ըստ երևույթին, քաղաքի իգական սեռով անվանումն ընդունված է եղել իրենց՝ բնակիչների մոտ»: (Jacquier E. Les Actes des Apφtre. Paris 1926; Մեջ. ըստ **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὰς Πράξεις τῶν Ἀποστόλων….Σ. 409)

6. Պողոս առաքյալը Լյուստրայում բժշկեց ի ծնե քայլելու անզոր կաղի: Այս տեսնելով՝ քաղաքի բնակիչներն սկսեցին լիկայոներեն խոսել (այսինքն՝ իրենց մայրենի լեզվով). «Աստվածներ, մարդկանց կերպարանքով, իջան մեզ մոտ» (Գործք 14. 8–11): «Ամերիկացի Ս. Ստերրեթը այժմյան Քաթին–Սառայի մոտ Lustra անվանման հիշատակությամբ մի մակագրություն գտավ քարե բագինի վրա, ինչը, անկասկած, հռոմեական այս գաղութի տեղադրությունն է մատնանշում»[1]: 1919 թ. Լյուստրայի մոտ հայտնաբերված երկու վավերագրեր նույնպես հաստատում են այս քաղաքում Զևսի և Հերմեսի պաշտամունքի գոյության փաստը[2]: Ք. ա. III դ. կեսերին վերագրվող այդ գրություններից մեկում ասվում է լիկայոնական անուններով երկու մարդկանց կողմից Հերմեսի արձանը Զևսին նվիրաբերելու մասին: Մյուսում հիշատակվում են «Զևսի քրմերը»: Ավելին, 1926 թ. Լյուստրայի մոտ քարե զոհասեղան հայտնաբերվեց՝ նվիրված «նրան, ով աղոթքներ է լսում (հավանաբար Զևսին և Հերմեսին)»: Բոլոր այս փաստերից կարելի է եզրակացնել՝ այս շրջանի բնակիչների մոտ շատ տարածված է եղել այս երկու աստվածների պաշտամունքը[3]: Այդ իսկ պատճառով մարդկանց առաջին հակազդեցությունը ի ծնե կաղի՝ հրաշքով բժշկության նկատմամբ հետևյալն էր. լռակյաց Բառնաբասին Զևսի, իսկ ավելի զրուցասեր Պողոսին Հերմեսի տեղ ընդունեցին: Վավերագրերը ցույց են տալիս, որ տվյալ շրջանների խոսակցական լեզուն լատիներենն էր, սակայն, ըստ երևույթին, տեղացիներն իրար հետ շփվում էին մայրենի լեզվով, մանավանդ հուզված վիճակում, ինչպես Պողոս առաքյալի հրաշքի պարագայում էր: Սակայն լիկայոներեն արձանագրություններ չեն հայտնաբերվել: «Հավանաբար,–նշում է Թոմպսոնը,– այդ լեզուն գիր չի ունեցել»[4]:

1 **Holzner F. F.** Παῦλος/μτφρ. Ἱερ. Κοτσώνη. Ἔκδ. «Δαμασκός», Ἀθῆναι. 1948. Σ. 132.
2 **Bruce F. F.** Op. citP. 291.
3 **Bruce F. F.** Op. cil. P. 292.Տես նաև Calder W. M. Lystra// International Standard Bible Encyclopaedia.
4 **Tompson J. A.** Op. cit. P. 385.

7. «Կհանդիպենք Փիլիպպեում»– այսպիսին է այն հռչակավոր արտահայտությունը, որը Կեսարի ուրվականը հասցեագրեց Բրուտոսին՝ Փիլիպպեի ճակատամարտում նրան պարտություն գուշակելով: Եվ ճիշտ որ, Ք. ա. 42 թ. Անտոնիոսի և Օկտավիանոսի լեգեոններն իրենց նշանավոր հաղթանակը տարան Բրուտոսի և Կասիոսի զորքի նկատմամբ, ովքեր հռոմեական հանրապետությունը դիկտատուրայից փրկելու համար սպանել էին Հուլիոս Կեսարին: Այստեղ՝ հենց նույն տեղում՝ Փիլիպպեի պարիսպների մոտ, 49–50 թթ. «Քրիստոսի զորքի» մեկ ուրիշ քաջարի զորական Պողոս առաքյալը պատմական հաղթանակ տարավ՝ փոխելով եվրոպական աշխարհամասի մշակույթը. նա այստեղ հիմնեց Եվրոպայում առաջին քրիստոնեական Եկեղեցին (հմմտ. Գործք16. 12–40):

Մեծ է հնագիտության ավանդը Փիլիպպեում Պողոս առաքյալի հաջող առաքելության ըմբռնման գործում: Այս քաղաքը Ք. ա. 168 թ. Հռոմի իշխանության տակ ընկավ: Բրուտոսի և Կասիոսի պարտությունից հետո Օգոստոսը կամեցավ իր վետերաններին այդտեղ բնակեցնել և հռոմեական գաղութ հիմնել: Ավելի ուշ նրանց միացան նաև հռոմեացի այլ քաղաքացիներ, որի արդյունքում Փիլիպպեն վերածվեց չափազանց փոքրիկ Հռոմի՝ իր հրապարակով, թատրոնով, ֆորումով (այն տեղը, որտեղ գտնվել են դատարանը, գանձատունը և այլն), միջնաբերդով և քաղաքային պարիսպներով: Պարզվում է, որ ս. Ղուկասն իրավացի է, երբ քաղաքը Կողովնիա (այսինքն՝ հռոմեացի գաղութարարների քաղաք) է անվանում (Գործք 16. 12): Հնագետների ձեռքի տակ եղած վավերագրերի համաձայն՝ Ասիայի, Բութանիայի ու Մակեդոնիայի որոշակի քաղաքներ իրոք գաղութների կարգավիճակ ունեին[1]:

Ղուկասն ասում է, որ Փիլիպպեն «Մակեդոնիայի առաջին գավառի մեկ քաղաքն էր»* (16. 12): Ֆ. Ջ. Ա. Հորտը՝ Նոր Կտակարանի ամենաականավոր հետազոտողներից մեկը, պնդում է, որ

1 **Tompson J. A.** Op. cit. P. 386.

* Գրաբարում՝ «որ է առաջին վիճակ Մակեդոնացւոց»:

առաքյալը սխալ է թույլ տվել՝ μερίς («մաս») բառն օգտագործելով՝ իր պնդումը հիմնավորելով նրանով, որ «μερίς բառը երբեք պարզապես գավառ, պրովինցիա կամ էլ ինչ–որ աշխարհագրական բաժանում չի նշանակել: Երբ այն գործածվում է երկրի կամ մեկ այլ բանի առումով, ապա նշանակում է մաս կամ մասնիկ»: Քանի որ ոչ մի հեղինակ, եթե մտադրվեր ասել ἡ ἐπαρχία ἐκεῖνη τῆς Μακεδονίας («սա Մակեդոնիայի գավառն է»), չէր գրի τὸ μερίδιον ἐκεῖνο τῆς Μακεδονίας («սա Մակեդոնիայի մասնիկն է»), Հորտը պնդում է, որ բնագրում ի սկզբանե ինչ–որ սխալ է եղել. ընդօրինակողներից մեկը կամենալով այն շտկել՝ փոխել է բառը և μερίς գրել: Սակայն Եգիպտական Ֆայյումում հայտնաբերված գտածոների հիման վրա պարզ դարձավ, որ այնտեղի գաղութարարները, որոնցից շատերը սերում էին Մակեդոնիայից, որտեղ գտնվում էր Փիլիպպեն, պրովինցիայի շրջանները զանազանելու համար հենց այս μερίς բառն էին գործածում: Այսպիսով, ըստ պրոֆեսոր Ֆրիի, հնագիտական գտածոները «ցույց են տալիս, որ Ղուկասը քաջատեղյակ է եղել Մակեդոնիայի աշխարհագրական եզրաբանությանը, քանզի նա հունարենի ամենաականավոր ժամանակակից փորձագետներից մեկն էր: Այսօր բոլոր հետազոտողները համակարծիք են, որ Ղուկասը μερίς բառը տեղին է գործածել, այնպես, ինչպես այն օգտագործում էին Մակեդոնիայում: Հնագիտությունը «շտկեց» Հորտի սխալը և կրկին ապացուցեց Ղուկասի իրավացիությունը»[1]:

Հնագիտության շնորհիվ հնարավոր դարձավ վավերացնել նաև Ղուկասի հետևյալ արտահայտությունը. «Շաբաթ օրը քաղաքից դուրս ելանք դեպի գետափ (հավանաբար Գանգիտ), որտեղ հրեաները սովոր էին աղոթք անել» (Գործք 16. 13): 1914–1938 թթ. Փիլիպպեում պեղումներ կատարած Ֆրանսիայի հնագետները հաստատեցին Գործքի տեղագրական տեղեկությունների ստուգությունը[2]: Նմանօրինակ հաստատումները, ինչպես նշում է պրոֆեսոր Թոմպսոնը, առանձնակի կարևորվեցին, քանզի արդ-

1 **Free J. P.** Op. cit. P. 320; Cobern C. M. Op. cit. P. 546.

2 **McDonald W. A.** Archaeology and St. Paul's Journeys in Greek Lands//Biblical Archaeologist. May,1940. P. 20.

յունքում ստացանք «ստույգ տեղեկություններ այն տեղի մասին, ուր Եվրոպայում առաջին անգամ Բարի լուրն էր քարոզվել»[1]: Այս նույն տեղում Պողոս առաքյալն առաջինը Լիդիային՝ փոքրասիական Թյուատիր քաղաքից ծիրանի զգեստներ վաճառող կնոջը, դարձի բերեց:

Սակայն գուշակություններ անող չար ոգով բռնված մի հարցուկ պարմանուհի աղախնի բժշկումն աղջկա տերերին կատաղության հասցրեց, որովհետև շահի աղբյուրից կտրվեցին: Այդ պատճառով բռնեցին Պողոսին ու Շիղային և իշխանավորների՝ զորագլուխների մոտ տարան, որոնք էլ նրանց գանահարելու հրաման տվեցին, ապա բանտ նետեցին: Ղուկասը քաղաքի վերոհիշյալ իշխաններին στρατηγοί է անվանում, թեպետ հռոմեացի այս պետերին duumviri (բարձրագույն վարչական պաշտոն թեմաներում՝ գավառներում և գաղութներում) է անվանում: Հայտնաբերված վավերագրերից հայտնի դարձավ, որ այս իշխանավորներին քաղաքավարությունից ելնելով՝ նաև «ստրատիգամներ» (զորականներ) էին անվանում[2]: «Իր խոսքում,–գրում է Ֆրին,– լավ կրթված Ղուկասը գերադասում էր գործածել այն ժամանակվա ուսյալ և բարեկիրթ մարդկանց, քան ռամիկների բառապաշարը»[3]:

8. Թեսաղոնիկեից հայթայթված հնագիտական նյութերը դեռ բավարար չեն՝ Գործքի պատումներն այդ քաղաք այցելած առաքյալների կապակցությամբ լուսաբանելու համար, քանզի քաղաքը վերակառուցվել է և շատ հնություններ շարունակում են ժամանակակից շինությունների հիմքերի տակ մնալ: Բայց և այնպես երևան հանված պեղածոների շնորհիվ կրկին հաջողվեց հաստատել Ղուկաս ավետարանչի բնագրի պատմական ճշմարտիացիությունը:

Գործքում (17. 5–6) ասվում է. «Իսկ հրեաները նախանձեցին և վերցնելով գռեհիկ, անօրեն մի քանի մարդկանց ... Յասոնին և եղբայրներից ոմանց, քարշ տվին քաղաքապետների մոտ», քանզի կարծում էին, որ պատսպարել է առաքյալներին: Ընդսմին այդ մարդիկ գոռում էին. «Սրանք, որ աշխարհը հուզեցին, այստեղ էլ

1 **Thomson J. A.** Op. cit. P. 388.
2 **Bruce F. F.** Op. cit. P. 444.
3 **Free J. P.** Op. cit. P. 321.

են հասել, որպեսզի մեր քաղաքն էլ խռովեցնեն»:

Արիոպագոս: Հուշատախտակ Պողոս առաքյալի քարոզության վայրում:

ա. Ոմանց կարծիքով Ղուկասի գործածած (πολιτάρχαι) եզրն ստույգ չէ: Սակայն Թեսաղոնիկեի տարածքում 19 վավերագրեր գտնվեցին, որոնք պատկանում են Ք. ա. II – Ք. հ. III դդ. ժամանակահատվածին և վկայում են, որ այնտեղ պոլիտարքոսներ (քաղաքապետներ) կային: Դրանցից հինգն ուղղակիորեն առնչվում են Ք. հ. I դարի սկզբի, իսկը վեցը՝ II դարի Թեսաղոնիկեի քաղաքապետերի հետ[1]:

բ. Հնագիտական պեղումները լույս սփռեցին άναστατόω (հուզել) բայի իրական իմաստի վրա: Հրեաները մեղադրում էին առաքյալներին քաղաքը «հուզելու»* մեջ: Եգիպտոսում մի հնամենի ձեռագիր նամակ գտնվեց, որը որդին գրել էր Ալեքսանդրիա տեղափոխված հորը: Երեխան գանգատվում է հորն այն բանի համար, որ մայրն իրեն ասել է. «Դու ինձ վրդովեցնում ես»: Տվյալ դեպքում բառը գործածված է ս. Ղուկասի գործածած բայի նույն իմաստով[2]:

9. Ինչ վերաբերում է Պողոս առաքյալի՝ Աթենք այցելելու առնչությամբ Գործք առաքելոցի պատումներին, բացի երեք դրվագներից, որևիցե այլ դեպք նշելու կարիք չկա, քանզի հինավուրց քաղաքի այժմյան ավերակները ս. Ղուկասի նկարագրությունների հստակ արտացոլումներն են:

ա. Սրբազան մատենագրի այն խոսքը, որ «քաղաքը կռապաշտության մեջ էր», լիովին համահունչ է Քսենոփոնի, Պետրոնիոսի, Պավսանիասի և այլոց վկայություններին: Տվյալ փաստը

1 **Bruce F. F.** Op. cit. P. 344.

* «Հուզել» բայը, ինչպես նաև գրաբար բնագրի «խռովել»-ը գրեթե նույն իմաստներն ունեն՝ հոգի ալեկոծել, վշտացնել, տխրություն պատճառել, վրդովել, փոթորկել և այլն: Թեև արդի հայերենում ստորև բերվող նամակում նշված դեպքի համար ավելի պատշաճում են «վրդովեցնել» կամ «վշտացնել» բայերը:

2 **Free J. P.** Op. cit. P. 321.

հաստատվում է նաև քաղաքի տարածքում հայտնաբերված բազմաթիվ արձաններով ու բագիններով: Բացի այդ քաղաքը միայն Պողոսի զարմանքը չէ, որ հարուցել է. նման հոգեվիճակ վերապրել են Սոֆոկլեսը, Պավսանիասը և Հովսեպոս Փլաբիոսը...[3]

բ. Ըստ ս. Ղուկասի՝ Պողոս առաքյալն Աթենքում մի բագին է տեսնում՝ «Անծանոթ Աստծուն» գրությամբ (Գործք 17. 23): Ըստ Պավսանիասի և Փիլոստրատոսի վկայությունների՝ Հունաստանի և ի մասնավորի Պալլաս քաղաքի համար այսպիսի բագինները սովորական բան էին[2]:

գ. Պողոս առաքյալի բանավեճը աթենական ագորայում (քաղաքի կենտրոնական հրապարակում) մեր կարծիքով բնական և արժանահավատ է, ինչի մասին վկայում են պեղումները, ագորայի վերականգնումն ու հատկապես մեր տեղեկությունները փիլիսոփաների և մասնավորապես Սոկրատեսի՝ այդտեղ վարած բանավեճերի մասին: Ղուկասն այդ տեղը, ուր հնչեց Պողոս առաքյալի խոսքը, որտեղ և սովորաբար բանավիճում էին, անվանում է արեոպագոս:

10. Հինավուրց Կորնթոսի մասին, ուր Պողոսը Պալլաս քաղաքից եկավ, այժմ գրեթե ամեն ինչ գիտենք: Աստծո հրամանով Պողոսն այնտեղ մեկուկես տարի մնաց՝ «ուսուցանելով նրանց Աստծո խոսքը» (18. 11):

Այդ ժամանակներում Կորնթոսը հռոմեական Աքայա պրովինցիայի առևտրական և վարչական կենտրոնն էր: Հետագայում այն առաքյալի շնորհիվ դարձավ նաև միսիոներական կենտրոն, քանզի այդ քաղաքը յուրատեսակ խաչմերուկ էր, որտեղ գալիս և որտեղից սփռվում էին Միջերկրայքի չորս ծագերով մեկ: Քրիստոնեություն ընդունողները Քրիստոսի Բարի լուրի նախանձախնդիր քարոզիչներ էին դառնում: Շատերն են գտնում, որ Հռոմի առաջին եկեղեցին հիմնվել է հենց Կորնթոսում քրիստոնեություն ընդունած նավաստիների և վաճառականների միջոցով: Սա օգնում է պարզաբանելու նաև այն փաստը, որ Պողոս առաքյալը

3 **Bruce F. F.** Op. cit. P. 355.

2 **Պավսանիաս** I, I, 4: **Փիլոստրատոս**, Ապողոնիայի կյանքը, VI, 3: Տես նաև **Bruce F. F.** Op. cit. P. 355.

մինչ Հռոմ գնալն արդեն այդ քաղաքից շատ շատերի հետ ծանոթ էր:

Ք. ա. 146 թ. Կորնթոսը գրեթե հիմնահատակ ավերվել էր հռոմեացի զորական Մումիայի զորքերի կողմից: Սակայն հարյուր տարի անց, նկատի առնելով քաղաքի աշխարհագրական շահեկան դիրքը, Հուլիոս Կեսարը հրամայեց այն վերստին կառուցել, բնակեցնել՝ դարձնելով Հռոմի գաղութ: Ք. ա. 27 թ. Կորնթոսը դառնում է Աքայա պրովինցիայի մայրաքաղաքը և այնպիսի հզորության հասնում, որ Պողոսի այցելության ժամանակ (51 թ.) արդեն աշխույժ, հարուստ առևտրական քաղաք էր՝ մոտ յոթ հարյուր հազար բնակչությամբ:

Ապոլլոնի մեհյանի մնացորդները Կորնթոսում (Ք. ա. VI դ. կես):

Ըստ երևույթին Տիրոջը հաճո էր, որ հնօրյա Կորնթոսի պեղումները լիակատար ձևով իրականացվեին: 1858 թ. ամեհի երկրաշարժը հարկադրեց բնակիչներին լքել քաղաքն ու բնակություն հաստատել մոտ վեց–յոթ կմ հեռու մի վայրում: 1896 թ. հունական կառավարությունը թույլ տվեց Ռ. Բ. Ռիչարդսոնի գլխավորությամբ Դասական հետազոտությունների ամերիկյան դպրոցի մի խումբ գիտնականների պեղելու տարածքը: Բավական երկար տևած և այս պահին լիովին ավարտված պեղումների ընթացքում հարուստ հնագիտական նյութեր հայթայթվեցին:

Կորնթոս: Հինավուրց քաղաքի փլատակները:

ա) Ս. Ղուկասը գրում է, որ Պողոս առաքյալը Կորնթոսում հանդիպում է Ակյուղաս անունով մի հրեայի և նրա կնոջը՝ Պրիսկիղային,

ովքեր նոր էին եկել Իտալիայից՝ համաձայն հռոմեացի Կղոդեոս կայսեր հրամանի, որով բոլոր հրեաները Հռոմից պետք է հեռանային: Եվ որովհետև Ակյուղասը Պողոսին արհեստակից էր, հավանաբար նաև քրիստոնյա, առաքյալը նրա տանը մնաց (Գործք 18. 1–3): Սվետոնիոսի հայտնած տեղեկություններից գիտենք, որ Կղոդեոսը «Հռոմից քշեց ոմն Քրեստոյի (Chresto) կողմից միշտ ալեկոծվող հրեաների»[1]: Գիտնականներից ոմանց կարծիքով՝ ««Chrestus»–ն ամենայն հավանականությամբ Քրիստոսն է. Փրկչի անունն այնքան հաճախ է հնչել հրեաների շուրթերից, որ Սվետոնիոսին մոլորեցրել է՝ մտածել տալով, որ խոսքը այդժամ ապրող ոմն մարդու մասին է: Սվետոնիոսի գործածած բառապաշարից կարելի է եզրակացնել, թեկուզ և մասամբ, որ ալեկոծությունները կրոնական տարաձայնություններով էին պայմանավորված»[2]: Մյուսները «կարծում են, որ ալեկոծությունների պատճառը հռոմեացի հրեաներն են եղել, ովքեր հակառակվել են քրիստոնեական միսիոներների քարոզին»[3]: Ամեն դեպքում 49 թ. Կղոդեոսի հրամանով հրեաները, որոնց մեջ էին նաև Պրիսկիղան ու Ակյուղասը, արտաքսվեցին: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ Ղուկասը բավականաչափ իրազեկված էր Հռոմում կատարվող դեպքերի մասին: Այս ընտանիքը, Կորնթոսում հյուրընկալելով Պողոսին, այնուհետև նրա հետ մեկնեց Եփեսոս, որտեղ և բնակություն հաստատեց՝ Եփեսոսի եկեղեցին հիմնելով:

բ) Ուր էլ որ գնար Պողոս առաքյալը, սովորաբար սինագոգում էր քարոզում: Կորնթոսը բացառություն չէր: Ամեն շաբաթ օր Պողոսը քարոզում էր այնտեղի սինագոգում՝ փորձելով հրեաներին և հույն նորադարձներին (հրեություն ընդունած հեթանոսներին) համոզել, որ Հիսուսը Քրիստոսն է (18. 4):

Հին Կորնթոսի տարածքը պեղելիս՝ Ղեքեոն տանող ճանապարհի մոտ մեծ քար գտնվեց (ինչպես կարծվում է՝ սինագոգի բարավորը): Նրա վրա խազված յոթ հունարեն տառեր կան՝ΓΩΓΗΕΒΡ: Հնագետներն այսպես են վերծանում դրանք՝

1 **Suetonius.** The Twelwe Caesars. Claudius. 25. Penguin Classics,1957. P. 197.
2 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὰς Πράξεις τῶν Ἀποστόλων. Σ. 498.
3 **Bruce F. F.** Op. cit. P. 368.

(ΣΥΝΑ)ΓΩΓΗ ΕΒΡ(ΑΙΩΝ) («հրեական սինագոգ»)[1]: Ըստ Ա. Դ. Դայսմանի՝ այս մակագրությունը թվագրվում է Ք. ա. 100 թ.–ից մինչև Ք. հ. 200 թ.–ի միջև ընկած ժամանակահատվածով, թեպետ ոմանք գտնում են, որ այն չի կարող պատկանել նախաքրիստոնեական ժամանակաշրջանին: Ու. Ա. Մակդոնալդը համառորեն պնդում է, որ վավերագիրը Կորնթոսում Պողոս առաքյալի ապրած ժամանակներից ավելի ուշ շրջանի է: Նա գրում է. «Տառերի գրության անփույթ ոճն ապացուցում է, որ վավերագիրը, ըստ այդմ նաև սինագոգը, որի հետ աղերսներ ունի վավերագիրը, Պողոս առաքյալի ժամանակներից անհամեմատ ավելի ուշ են երևան եկել: Սակայն, – հավելում է Մակդոնալդը,– տրամաբանական է ենթադրել, որ երկու սինագոգերն էլ՝ սա և նրան նախորդողը, որտեղ առաքյալը «ամեն շաբաթ օր քարոզում էր», գտնվում էին միևնույն տարածքում»[2]:

գ) Սուրբ Ղուկասի համաձայն՝ երբ Պողոս առաքյալի քարոզչական առաքելությունն սկսեց պտուղներ տալ, հրեաները ելան նրա դեմ և դատարան տարան: Այդ օրերին Աքայայի բդեշխի փոխանորդը Գաղիոնն էր (Գործք 18. 12): Ռամսեյը բդեշխի փոխանորդի՝ Աքայայում իշխելու առնչությամբ գրում է. «Աքայան կառավարում էին բդեշխի փոխանորդները՝ Ք. ա. 27 թ.–ից մինչ Ք. հ. 15 թ. և Ք. հ. 44 թ.–ից ի վեր: Սա երկրորդական պրովինցիա էր և կառավարվում էր հռոմեացի զորականների կողմից, ովքեր մինչ այդ պաշտոնն ստանձնելը պրետորներ էին»[3]: Հետևաբար Գործքի հեղինակի հայտնած Գաղիոնի տիտղոսը հավաստի է:

Ո՞վ էր, սակայն, այդ Գաղիոնը: Մեզ մեկ Գաղիոն է հայտնի՝ Ավագ Սենեկայի (ապրել է Ք. ա. մոտ 50 թ.–ից մինչև Ք. հ. 40 թ.) որդին և կրտսեր Սենեկայի՝ փիլիսոփայի (կյանքի տարիները Ք. ա. 3 թ.–ից մինչև Ք. հ. 65 թ.) եղբայրը: Այս Գաղիոնը որդեգրվել էր հռետոր Լուկիոս Հունիոս Գաղիոնի կողմից և երախտագիտորեն վերցրել նրա անունը: Նրա լրիվ անունը հնչում է այսպես՝

1 **Deissmann A.** Light from the Ancient East. L.,1927. P. 16.
2 **McDonald W. A.** Archaeology and St. Paul's Journeys in Greek Lands. Part III: Corinth// Biblical Archaeologist. Sept.,1942. P. 41.
3 **Ramsay W. M.** Op. cit. P. 258.

Լուկիոս Հունիոս Աննոս Նովատ Գաղիոն: Դելֆիում հայտնաբերված գրությունը հիշատակում է Կղոդեոս կայսեր Ք. հ. 52 թ. հրովարտակը, որում հիշատակվում է Աքայայի բդեշխի փոխանորդ Գաղիոնը[1]: Գրությունից կարելի է գլխի ընկնել, որ Գաղիոնն այս պաշտոնին էր նշանակվել փոքր–ինչ ավելի շուտ՝ հավանաբար Ք. հ. 51 թ. կեսերին: Սենեկան հայտնում է, որ Գաղիոնն Աքայայում հիվանդանում է և հանգստանալու նպատակով ճամփորդության մեկնում: Հետագայում նա հաստատվում է Հռոմում և Ներոնի զտումների շրջանում սպանվում Սենեկայի և նրա ընտանիքի մյուս անդամների հետ[2]:

Հնագիտության շնորհիվ հայտնի է նույնիսկ այն տեղը, որտեղ գտնվում էր Գաղիոնի գլխավորած դատարանը: Այն ագորայի կենտրոնում էր՝ մի չքնաղ բարձունքի վրա, որը բաժանում էր ստորին՝ հյուսիսային մասը, ավելի վեր գտնվող հարավայինից: Ագորայի երկու մասերն իրար միացած էին աստիճանների միջոցով: Այդ նույն տեղում մի մարմարապատ գեղաշեն շինություն գտնվեց, որը հռետորների ամբիոնն էր[3]:

դ) Ըստ ս. Ղուկասի՝ Պողոս առաքյալի՝ Գաղիոնի առաջ կանգնելու դրվագի հանգամանալից շարադրանքն օգնում է ճշտել առաքյալի Կորնթոս գալու տարեթիվը: Հնագետ Ֆրիի կարծիքով բոլոր այս պատումներից բխում է, որ Գաղիոնը նոր էր այդ պաշտոնին նշանակվել: Եվ քանի որ Դելֆիում երևան հանված Կղոդեոսի հրովարտակից «հետևում է, որ Գաղիոնը պետք է որ Կորնթոսում լիներ Ք. հ. 51–52 թթ.», և քանի որ «Կղոդեոսի հրամանի համաձայն հենց նոր պաշտոն ստանձնածները Հռոմից իրենց պրովինցիաներն էին մեկնում հունիսի մեկին, ստացվում է, որ Գաղիոնը պետք է Աքայա ժամանած լիներ մոտ 51 թ. հուլիսին»: Իսկ քանի որ Պողոսը Կորնթոսում տասնութ ամիս է մնացել, իսկ Գաղիոնի առաջ կանգնելուց հետո ևս շատ օրեր (18. 11,18), կարելի է ենթադրել, որ նա Կորնթոս է ժամանել Ք. հ. 50 թ. սկզբում[4]:

1 **Deissmann A.** Paul. L., 1926. P. 261 ff., 272.
2 **Bruce F. F.** Op. cit. P. 373 ff.
3 **Broneer O.** Corinth // Biblical Archaeologist. Dec.,1951. P. 91 ff.
4 **Free J. P.** Op. cit. P. 323; Keller W. ‘Η Βίβλος…Σ. 526.

ե) Կորնթոսի պեղումները, որտեղ երկու տարին մեկ ի պատիվ Պոսեյդոնի Իսթմոսյան խաղեր էին անցկացվում, քաղաքային թատրոն ու ամֆիթատրոն երևան հանեցին: Իհարկե, հենց սա նկատի ուներ առաքյալը, երբ գրում էր. «Չգիտե՞ք, թե նրանցից, որ ասպարեզում վազում են, – թեև բոլորն են վազում, – միայն մեկն է առնում հաղթության մրցանակը» և այլն (Ա Կորնթ. 9. 23–27):

Երաստոսի արձանագրությունը Կորնթոսում:

զ) Հայտնի է, որ Կորնթոսում է Պողոս առաքյալը գրել «Առ Հռոմեացիս» իր թուղթը: Նամակի վերջում Պողոսը Հռոմի քրիստոնյաներին ողջույններ է հղում նաև Երաստոսից՝ քաղաքի գլխավորից (Հռոմ. 16. 23): Այս նույն անձի մասին է խոսքը նաև Տիմոթեոսի երկրորդ թղթում (4. 20). «Երաստոսը մնաց Կորնթոսում»: 1929 թ. Կորնթոսի պեղումների ընթացքում Տ. Լ. Շիրի արշավախմբի կողմից հայտնաբերվեցին սալարկուղու մնացորդներ՝ հետևյալ արձանագրությամբ՝ ERASTUS PRO: AED: S: P: STRAVIT, այսինքն՝ ERASTUS PROCURATOR AEDILIS և այլն, ինչը թարգմանաբար նշանակում է «Պրոկուրատոր և Էդիլ* Երաստոսի միջոցներով գցվեց այս սալարկուղին»: Ա. Վ. Վուդվորդը «Journal of Hellenic Studies» (Հունական հետազոտությունների հանդես)–ում գրում է. «Այս պեղածոն ապացուցում է, որ սալարկուղին վերագրվում է Ք. հ. I դարին, և շատ հնարավոր է, որ բարերարը նույն ինքը՝ Երաստոսն է՝ Հռոմեացիս թղթում հիշատակված Պողոս առաքյալի ընկերը»[1]: Արձանագրությունը հայտնաբերվել է թատրոնի կողքով անցնող ճանապարհի հյուսիսային եզրի մոտ՝ ոչ մեծ քառակուսի հարթակի վրա: Տառերը

* Հին Հռոմում տրիբունի օգնական՝ հասարակական շենքերի ու մեհյանների, ճանապարհների, տոնակատարարությունների, քաղաքը պարենով մատակարարելու և հասարակական կարգ ու կանոնի պահպանման գծով:

1 **Bruce F. F.** Are the N. Testament Documents Reliable? P. 92; **Thompson J. A.** Op. cit. P. 400.

փորվել են, ապա առաջացած փոսիկներում՝ իբրև կապակցող նյութ, կապար ու բրոնզ լցրել[2]:

Հարցն այն է, թե լատիներեն aedilis բառը (Էդիլ, քաղաքային մագիստրոս) հունարեն οἰκονόμος–ի իմաստն ունի՞, թե՞ ոչ: Արդեն ապացուցված է, որ Հռոմի բարձրաստիճան անձանց՝ հռոմեացի լիներ, թե հույն, պարտականությունների մեջ էր մտնում նաև գանձապահությունը, ինչը նշանակում է, որ գանձապահի և Էդիլի պաշտոնների միջև լիովին կարելի է հավասարության նշան դնել*: «Այս պահին գիտնականների մեծամասնությունը,– գրում է Թոմպսոնը, – համակարծիք են այն բանում, որ ոչ մի լուրջ խոչընդոտ չկա արձանագրության Երաստոսին Պողոս առաքյալի վկայակոչած «տնտես» Երաստոսի հետ նույնացնելու համար»[1]:

է) Այն, ինչ կորնթացիներին գրում է Պողոս առաքյալը մարմնի առաքինության, մաքրության ու սրբության և քաղաքում տարածված մեծ անառակության մասին, դարձյալ լիովին հաստատվում է այդ ժամանակների բազմաթիվ աղբյուրներով: Սա հայտնի է նաև քաղաքի հարավ–արևելքում վեր խոյացող Ակրոկորնթոսի (վերին քաղաք, ակրոպոլիս) պեղումներից: Ակրոկորնթոսի (մոտ 600 մ բարձրություն ունի) գագաթի վրա հայտնաբերվել է Պանդեմոսյան Աֆրոդիտեի մեհյանը, որտեղ անառակության դիցուհուն պաշտում էին օրգիական տոնակատարությունների ժամանակ, ինչպես փյունիկյան Աստարտի պարագայում էր: Այս պաշտամունքը հնամենի Կորնթոսի մեծ անառակության հարահոս աղբյուրն էր:

ը) Պողոս առաքյալն Առ Կորնթացիս իր Ա թղթում խոսում է մսի տաղավարի** մասին, որտեղ զոհաբերված անասունների միս էր վաճառվում (Ա Կորնթ. 10. 25): Հնագիտությունը պարզաբանեց աստվածաշնորհի առաքյալի այս տեղեկությունը: Կորնթոսում ամերիկյան արշավախումբը հին քաղաքի մսի տաղա-

2 **McDonald W. A.** Op. cit. P. 46.

* Բանն այն է, որ հունարեն բնագրում գործածված է «տնտես» բառը, որը սլավոնեռենում թարգմանված է «գանձապահ», իսկ գրաբարում՝ «շահապ»՝ քաղաքագլուխ իմաստով

1 **Thompson J. A.** Op. cit. P. 400.

** Հայերեն բնագրում՝ «սպանդանոց»:

վարի մասին, որն իր հերթին ագորայի հյուսիսային հատվածում առևտրական սրահների մեծ համալիրի մաս էր կազմում, գրություն գտավ[1]: Ագորայի արևմտյան մասում երբեմնի հայտնաբերված խանութների շարքից փոքր–ինչ ներքև հնագետները լավ մտահոգացված խողովակների համակարգ գտան, որոնք շրջապատում էին գերազանց սալարկված առևտրական հրապարակը: Այս խողովակների միջոցով լեռներից մշտապես սառնորակ ջուր էր մատակարարվում՝ շուտ փչացող մթերքները սառը վիճակում պահելու համար[2]:

Կորնթոսում պեղված՝ Օգոստոսի դարաշրջանով թվագրվող հունարեն մակագրությունում կարդում ենք՝ «Մսավաճառ Լուկիաս»: Այդ շրջանում ավերակված մեհյանների առկայությունը, որոնցից մեկն ագորայի հյուսիսում գտնվող Ապոլլոնի դորիական տաճարն էր, ապացուցում է, որ այնտեղից զոհաբերված անասունների միսն ագորա էր բերվում, որտեղ և վաճառվում էր[3]:

11. Ներկայումս հինավուրց Եփեսոսը, որտեղ Պողոս առաքյալի առաքելությունը չափազանց արգասաբեր էր, այն քաղաքներից է, որոնք ամբողջովին կամ գրեթե ամբողջովին են պեղվել: Այսինքն՝ հնագիտական պեղածոները լուսաբանում են նաև Ղուկասի պատումներից այն հրաշալի հատվածը, որը «բովանդակ Գործք առաքելոց գրքի ամենապատկերավոր դրվագն է նկատվում»: Սա իր վրա հոգեբանական ծայրաստիճան հավաստիության կնիք է կրում, այնպես որ յուրաքանչյուր տառի մեջ նկարագրվող դեպքերի անմիջական ականատեսն է երևում»[4]:

Պողոսի օրոք Եփեսոսը Ասիա պրովինցիայի բդեշխի փոխանորդի նստավայրն էր: Այդ, ինչպես և իր աշխարհագրական դիրքի պատճառով, Եփեսոսը Փոքր Ասիայի կարևորագույն քաղաքն էր: Միջերկրական ծով թափվող Կաիստրայի գետաբերանից ոչ հեռու հառնած այս քաղաքը, հիրավի, դարձել էր Արևմուտքի և Արևելքի հանդիպման վայրը: Պողոսի կյանքի ժամանակներում մեծավ մասամբ հույներից կազմված Եփեսոսի բնակչության

1 **Thompson J. A.** Op. cit. P. 397.
2 **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 524
3 **Thompson J. A.** Op. cit. P. 397.
4 **Τρεμπέλας Π. Ν.** Ἔνθ ’ ἀνωτ. Σ. 529.

թիվն անցնում էր երեք հարյուր հազարի սահմանագիծը: Առաքյալի այցելության ժամանակ քաղաքը դեռ փառահեղ և շլացնող էր՝ կրոնական տեսանկյունից Արտեմիս դիցուհու պաշտամունքի խոշորագույն կենտրոն հանդիսանալով:

1350 թ.–ից քաղաքն աստիճանական անկման փուլ է թևակոխում. այն ամայանում է, հողով ծածկվում և դարեր շարունակ անթեղված մնում, մինչև XIX դարի վերջը, երբ նրան քնից արթնացրեցին հնագետի բահն ու բրիչը: 1863 թ. մայիսին այս տարածքում կանոնավոր պեղումներ սկսվեցին անգլիացի ճարտարապետ Ջ. Թ. Վուդի գլխավորած արշավախմբի կողմից և շարունակվեցին ընդհուպ մինչև 1874 թ.: 1896 թ. Ավստրիական հնագիտական ինստիտուտի երկու ներկայացուցիչների՝ Օտտո Բենդորֆի և Ռուդոլֆ Հեբերդեյի ժամանումով այդ տարածքի հետազոտությունները նոր փուլ թևակոխեցին: 1904–1905 թթ. Դ. Գ. Խոգարդի ղեկավարած պեղումներն անց էին կացվում Բրիտանական ինստիտուտի միջոցներով: Վերջապես 1954 թ. ավստրիացիները վերսկսեցին պեղումները:

Վուդի խնդրո առարկան Արտեմիսի մեհյանն էր: Սակայն համառ աշխատանքի վեց տարիներ պետք է անցնեին, նախքան քաղաքային պարիսպներից շուրջ երկու կիլոմետր հեռավորության վրա կռատան հայտնաբերումը: Հների կողմից «աշխարհի յոթ հրաշալիքների» շարքին դասված այս տաճարի տեղադրությունը որոշելուց հետո էլ դեռ հինգ երկարուձիգ տարիներ էին հարկավոր պեղումները վերջնականապես ավարտելու համար:

Մեհյանը նվիրված չէր հունական դիցարանի դիցուհիներից մեկին՝ որսի հովանավորուհի Արտեմիսին: Եփեսոսյան Արտեմիսը փյունիկյան Աստարտայի տարատեսակն էր՝ օրգիական պաշտամունքով հանդերձ: Դիցուհին «մարդկային ցեղի վերարտադրության զորության խորհրդանիշն էր»[1]:

Մեհյանը միաժամանակ նաև յուրատեսակ բանկ էր: Այն այնքան սրբազան և անձեռնմխելի վայր էր, որ ոչ միայն եփեսացիները, այլև օտարերկրացիներն իրենց խնայողություններն ի պահ

1 **Τρεμπέλας Π. Ν.** Ἔνθ ᾽ ἀνωτ. Σ. 530.

էին դնում անմիջապես դիցուհու անդրիի հետնամասում գտնվող գանձարանում: Բացի այդ, դիցուհուն բազմաթիվ և թանկարժեք ընծաներ էին նվիրաբերվում, որից մեհյանը հետզհետե հարստանում էր: Գրություններից մեկում հիշատակություն կա ոմն Վիբիուս Սալյուտարիուսի (Vibius Salutarius) ձեռամբ նվիրաբերված 29 ոսկյա և արծաթյա արձանների մասին:

ա) Ըստ ս. Ղուկասի՝ «Դեմետրիոս անունով մի արծաթագործ, որ Արտեմիս դիցուհու մեհյանի արծաթե մանրաքանդակներն էր պատրաստում...», մի անգամ ժողովելով ոսկերիչներին, մանրաքանդակներ և մեհյանի համար փոքրիկ ընծաներ պատրաստող վարպետներին ու նույն արհեստով զբաղվող նրանց աշակերտներին, գրգռեց նրանց Պողոս առաքյալի դեմ: Այս մարդիկ իրենց գործից մեծ շահ ունեին: Հետևաբար շատերի՝ Քրիստոսի հավատքին գալը վնաս կպատճառեր նրանց բարեկեցությանն ու մեհյանին (Գործք 19. 24–27): «Դեմետրիոսի ճառը շահամոլության ու կրոնական բնազդների, տեղական հայրենասիրության և սնոտիապաշտության ճարպիկ զուգորդություն էր»[1]: Արծաթագործների շահույթները հատկապես բազմապատկվում էին արտեմիսիոնը (մեր մարտ–ապրիլը) մոտենալիս, քանզի այդ ժամանակ է, որ շատերը սլանում էին դիցուհուն պաշտելու ու նրան ընծաներ մատուցելու կամ մեհյանում ի պահ դրված խնայողությունները ետ վերցնելու:

Ցայսօր հնագետներին չի հաջողվում այդպիսի ոսկե կամ արծաթե ναΐδια (մանրաքանդակ մեհյաններ) և դիցանդրիներով խորշեր գտնել: Սրա բացատրությունը, ի դեպ, դյուրին է. չէ՞ որ նախ և առաջ հենց այս առարկաներն են նվաճողների ավարը դառնում: Բնավ չի բացառվում, որ այդ իրերից շատ–շատերը քրիստոնեություն ընդունած իրենց իսկ տերերի կողմից վերաձուլված լինեին[2]: Սակայն մեհյանին նվիրաբերված բազում ընծաների մեջ տաճարի թրծակավե և մարմարե քանդակներ գտնվեցին[3]:

1 **Holzner J.** Op. cit. P. 354.
2 **Vos H. F.** Op. cit. P. 115.
3 **Thompson J. A.** Op. cit. P. 402.

Բացի այդ, «վավերագրերից մեկում հայտնվում է Արտեմիսի մեծաքանակ, երկուսից վեց լիտր կշռող [2] ոսկե և արծաթե արձանների մասին, որոնք նվիրաբերվել էին դիցուհուն և զետեղվել մեհյանում»: Փառասեր հռոմեացի նվիրատուն, «կամենալով, որ հնարավորին չափ շատ ժողովուրդ իր ընծաներով հիանա, մինչև իսկ հատուկ երթուղի էր հաստատել, որով ի պատիվ դիցուհու տոնակատարության՝ մեհյանից ամֆիթատրոն և ետ պետք է ընթանար նվիրաբերություններն ուղեկցող թափորը»[1]:

Սա հաստատում է այն փաստը, որ առաքյալի քարոզներից շատ մարդիկ նյութական ահռելի վնասներ էին կրում և խիստ տրամաբանական է թվում, որ այս ողջ խառնամբոխը նրա դեմ էր տրամադրված և շատ հեշտ կարող էր բորբոքվել, ինչպես այդ մասին պատմում է ավետարանիչը:

բ) Սուրբ Ղուկասի պատումների ապշեցուցիչ ստուգությունն ի հայտ է գալիս նաև Արտեմիս դիցուհու պաշտոնական տիտղոսը մեզ ավանդելու մեջ: Ղուկասն ասում է. «Երբ այս լսեցին, լցվեցին բարկությամբ. աղաղակում էին ու ասում. «Մեծ է եփեսացիների Արտեմիսը» (Գործք 19. 28): Մոլեռանդորեն տրամադրված եփեսացիներն այդ պահին զանգվածային ներշնչանքի ազդեցության տակ էին, որը մարդկության պատմության հոլովույթում քաջ հայտնի երևույթ է: Դիցուհու այսօրինակ մեծարումն իր արտացոլումն է գտել նաև Եփեսոսի տարածքում պեղված մի վավերագրում:

գ) Ուշագրավ է այն փաստը, որ Արտեմիսի՝ հռոմեացի սնապարծ երկրպագուի (տե՛ս վերը) մասին պատմող վավերագիրն օգնեց անգլիացի հնագետ Վուդին գտնելու այն դարպասները, որոնցով տոնական երթի ժամանակ անց էին կացնում այդ ընծաները դեպի դիցուհու մեհյան: Դարպասը, վավերագրի համաձայն, Մագնեսիական էր կոչվում: Հայտնաբերելով դարպասը՝ Վուդը շարունակեց իր որոնումներն այդ ուղղությամբ և, վավերագրում նշված ուղու վերջնակետին հասնելով, ուղիղ իր որոնումների նպատակի առաջ կանգնեց: «Հողի ու քարի յոթ մետրանոց շերտի տակ նա գերազանց սալարկված գավթի մնացորդներ, սյու-

1 **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 520.

ների վիթխարի բեկորներ, հսկայական քարից կերտված ճակտոններ գտավ. ահա այն՝ Արտեմիսի մեհյանը»[1]: Մեհյանը կառուցվել էր Ալեքսանդրիայի աշխարհահռչակ ճարտարապետ Դինոկրատոսի կողմից: Սակայն Ալեքսանդր Մակեդոնացու ծնվելու գիշերը նախկին տաճարը հրկիզվում է: Հետագայում վերակառուցվում է, իսկ Ալեքսանդրն ավարտին է հասցնում, այն էլ այնպիսի վեհաշուք ու ճոխ հարդարանքներով, որ մեհյանը հիացմունքի առարկա դառնալով՝ տակավին հնադարում ճանաչվում է «աշխարհի յոթ հրաշալիքներից» մեկը: Տաճարում տեղադրված էր Արտեմիսի սևաթույր անդրին՝ կերտված խաղողի որթից, որը, ըստ առասպելի, երկնքից էր ընկել: Տաճարը, որ 102,9 մ երկարություն և 49,2 մ լայնություն ուներ, կառուցվել էր 125,4 մ երկարություն և 71,7 մ լայնություն ունեցող բարձունքի վրա: Տանիքը պահում էին 1,8 մ տրամագիծ ունեցող հարյուր սյուներ՝ 18 մ բարձրությամբ: Դրանցից մի քանիսի խարիսխները ծածկված էին հրաշագեղ փորագրադրվագներով: Կռատունը կառուցվել էր սպիտակ, երկնագույն, կարմիր և դեղին մարմարով, իսկ դրվագազարդման համար առատորեն ոսկի էր կիրառվել: Մեծ բագինի (զոհասեղանի) շուրջ Խոգարտի (1904 թ.) պեղումները հաստատեցին նրա՝ ներսից դատարկ լինելու ենթադրությունը: Երբ այն բացեցին, այնտեղից թանկարժեք ակեր, մետաղադրամներ, բրոնզյա, ոսկյա, փղոսկրյա և



Եփեսոսյան Արտեմիս: Հելլենիզմի դարաշրջանի (Ք. ա. III - II դդ.) հունական բնօրինակի հռոմեական պատճեն: Մարմար, Նեապոլ, Ազգային թանգարան:

1 Անդ:

արծաթյա իրեր թափվեցին՝ պատրաստված ձեռամբ այնպիսի արծաթագործ վարպետների, ինչպիսին Դեմետրիոսն էր[1]:

Ահա թե ինչպիսին էր Արտեմիսի տաճարը, որին սնանկացում էր սպառնում, ինչպես իր արհեստակիցներին հավաստիացնում էր Դեմետրիոսը: Հենց այդ պատճառով էլ սպառնալիքը լսելուն պես զայրույթով և մոլեռանդությամբ լի եփեսացիները աղաղակեցին. «Մեծ է եփեսացիների Արտեմիսը»:

դ) Ապա բռնելով Պողոսի երկու ուղեկիցներին՝ Գայիոսին և Արիստարքոսին՝ ամբոխը սլացավ դեպի թատրոն: Այդ տարածքի պեղումներն արդեն ավարտվել են: Թատրոնը գտնվում է Պիոն լեռան արևմտյան լանջին: Քաղաքի ամենաբուռն ծաղկման շրջանում այն 148,5 մ տրամագիծ և հանդիսականների համար 25 000 աթոռ ուներ: Իսկ ավելի ուշ կարող էր «ավելի քան 50000 հանդիսատես տեղավորել»[2]: Թատրոնը՝ Եփեսոսում պահպանված ամենամեծ կառույցը, քաղաքային նավահանգստի հետ կապված էր մարմարով սալահատակված վեհաշուք ճանապարհով՝ այսպես կոչված Արկադիոսական ճանապարհով, որի լայնքը 10,8 մ էր, իսկ երկայնքը՝ 520,5 մ: Ճանապարհի երկու կողմերում՝ պերիստիլներ[3], իսկ նրանց ետևում տաղավարներ և պահեստներ էր վեր խոյանում[4]:

Հանցագործության մեջ մեղադրվող Պողոսի ուղեկիցներին թատրոնի հրապարակ բռնի տանելու փաստը լուսաբանվում է մի վավերագրով, ըստ որի ինչ–որ մեկին «ամբոխը թատրոն քարշ տվեց»:

ե) Ապա ս. Ղուկասը պատմում է, որ Պողոսը, լսելով այդ մասին, ցանկանում է ամբոխի մեջ մտնել՝ իր ընկերներին պաշտպանելու համար, բայց աշակերտներն արգելում են այդ անել: Ասիարքոսները՝ ասիացի պետերն էլ, ովքեր նրա բարեկամներն

1 **Keller W.** ‘Η Βίβλος…Σ. 402; **Vos H. F.** Op. cit. P. 114; **Thompson J. A.** Op. cit. P. 402.

2 **Τρεμπέλας Π. Ν.** Ἔυθ΄ ἀνωτ. Σ. 533.

3 Պերիստիլ - Ուղղանկյուն սրահ՝ չորս կողմից ծածկավոր սյունաշարերով շրջապատված, բազմաթիվ անտիկ բնակելի և հասարակական շինությունների հիմնական մասը: - Խմբագրի ծանոթագրություն:

4 Տես **Thompson J. A.** Op. cit.

էին, աղաչեցին այդ չանել (Գործք. 19. 31): Ղուկասի գործածած եզրաբանությունն այս հարցում էլ անսխալ է: Ասիարքոսները կամ Ասիայի գերագույն քրմերը հետևում էին կայսերական պաշտամունքի կատարմանը: Օկտավիանոս Օգոստոսը Եփեսոսին թույլատրել էր, ի շարս այլոց, Հռոմի և Կեսարի պաշտամունքի համար նախատեսված սրբազան տեղամաս ունենալ: Փաստորեն «Արտեմիսի պաշտամունքը միակ տարրը չէր, որ Եփեսոսին արևելյան գունագեղություն էր հաղորդում: Քաղաքում ու ողջ պրովինցիայում ավելի, քան որևիցե այլ տեղում, կայսրերի պաշտամունքը փթթում էր»[1]: Թվով ընդամենը տաս ասիարքոսներին ընտրում էին մեծահարուստներից և մեկամյա ժամկետով: Նրանք գլխավորում էին ժողովրդական ժողովներն Ասիա պրովինցիայում, պատասխանատվություն էին կրում Օգոստոսին նվիրված մեհյանի վիճակի համար, հայտարարում էին կայսեր պաշտամունքի հետ կապված մրցությունների բացումը: Այս կոչումը նրանք պահպանում էին նաև ծառայության մեկ տարին բոլորելուց հետո էլ, այնպես որ Պողոսի օրով Եփեոսում տաս գործող ասիարքոսներ կային, իսկ շատերի (80–ից ավելի) համար այդ տիտղոսը պարզապես պատվավոր էր: Նրանցից ոմանք, հեթանոսներ լինելով, «Պողոսի բարեկամներն էին. նրանց առինքնում էր շարադրված վարդապետության գեղեցկությունը»[2]: Բացի այդ, նրանց համակրանքն ու հանդուրժողականությունը Պողոսի նկատմամբ բացատրվում է նաև այն դիրքորոշմամբ, որ սովորաբար ընդունում էին խռովությունների ու ժողովրդական հուզումների ժամանակ[3]: Այսպիսով Ղուկասն իրավացի է, երբ գրում է, որ որոշ ասիարքոսներ կամենում էին արգելել Պողոսին՝ թատրոնում կատաղած ամբոխի մեջ մտնել:

զ) Այն պահին, երբ ժողովուրդը զայրացած բղավում էր. «Մեծ է Եփեսոսի Արտեմիսը», այդ իրարանցմանը, ինչպես գրում է Ղուկասը, միջամտեց քաղաքի ոմն գլխավոր քարտուղար*, որպեսզի

1 **Holzner J.** Op. cit. P. 291.
2 **Τρεμπέλας Π. Ν.** Ἔνθ ᾽ ἀνωτ. Σ. 534.
3 **Parvis M. M.** Archaeology and St. Pauls Journeys in Greek Lands. Part IV: Ephesus// Biblical Archaeologist. Sept.,1945. P. 67 ff.
* Գրաբարում՝ «դպրապետ»:

խաղաղեցնի ամբոխին: Քարտուղարը, որի ճառը հայտնի է մեզ, հանգստացնում էր նրանց՝ զանազան փաստարկներ բերելով, մե՛րթ հաճոյանալով, մե՛րթ սարսափեցնելով, և վերջիվերջո ցրեց այդ ամբոխը: Իր խոսքում նա Եփեսոսը մեծ Արտեմիսի և Դիոպետեոսի սպասավոր անվանեց (19. 35–40):

Հնագիտությամբ հաստատվում է հնադարում քարտուղար–դպիրի պաշտոնի գոյությունը (*γραμματεύς)* և պարզաբանվում, թե ինչ է նշանակել *νεωκόρος* («սպասավոր») եզրը: Եփեսոսի դեկրետները, վավերագրերն ու մետաղյա դրամները վկայում են ծերակույտում, ավագանու խորհրդում, դիմայում՝ ժողովրդական ժողովում, ու «բոլոր եփեսացիների» մոտ քարտուղարների գոյության մասին. վերջինս, հավանաբար, նույնական էր ժողովրդի քարտուղարի հետ: Նա բոլորից ամենաազդեցիկն էր. կայսրության ժամանակներում դա հասարակ պետական պաշտոն չէր, այլ ղեկավար, ով օրհասական պահին, իրոք, կարող էր միջամտել, քանզի ժողովրդին հանգստացնելու համար անհրաժեշտ իշխանությամբ և իրավասությամբ էր օժտված: Նա դեմագոգ չէր, այլ իր առաքելությունը գիտակցող, տեղի ունեցողի համար պատասխանատվություն կրող պաշտոնյա: Դատելով ժողովրդին դիմելու կերպից՝ կարող ենք ասել, որ լավ հոգեբան և մարդկային հոգու քաջ գիտակ էր:

Այս բառը նշանակել է մեհյանի ստրուկ–հավաքարար (հունարեն νεώς – «մեհյան» և κορέω «ավլում եմ, թափում, մաքրում»): Այստեղ, սակայն, սույն բառը այլ՝ պատվավոր տիտղոսի իմաստով է գործածված: Սա ապացուցվում է բազում վավերագրերով[1]: Եգիպտոսում և Փոքր Ասիայում այս եզրը լայնորեն գործածվել է ինչպես անհատի, այնպես էլ (հազվադեպ) մարդկանց մեծ խմբերի բնութագրման համար: Օրինակ՝ Հովսեպոս Փլաբիոսը, Իսրայելի մասին խոսելով, ասում է, որ նա «Աստծո տաճարի պահապանն էր»[2]: Եփեսոսի պարագայում այս անունն իբրև պատվավոր տիտղոս էր օգտագործվում: Հպարտությամբ և ինքնագոհությամբ

1 **Parvis M. M.** Op. cit. P. 80.
2 **Հովսեպոս Փլաբիոս**, Հրեական պատերազմի մասին, V. 9, 4 (384):

քաղաքն իրեն Արտեմիսի սպասավոր (*νεωκόρος)* էր անվանում, քանզի իրեն դիցուհու նվիրյալ էր համարում, ինչը նշանակում է նաև Արտեմիսի և նրա պաշտամունքի պահապան և պաշտպան:

է) Պողոսի՝ Եփեսոսում ծավալած քարոզչական գործունեությունն առնչվում է նաև նախկինում մոգությամբ զբաղվողների կախարդության գրքերի այրման հետ (19. 19): Եփեսոսը պեղելիս բազմաթիվ այդօրինակ գրքեր գտնվեցին, որոնցից մեկը ներկայումս պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում[1]:

12. Պենտեկոստեի օրն առաքյալների քարոզն իրենց մայրենի լեզուներով լսողների մեջ, ինչպես վկայում է ս. Ղուկասը, կային փռյուգիացիներ, եգիպտացիներ ու հռոմեացիներ (Գործք 2. 10): Նրանցից շատերը ժառանգներն էին այն հրեաների, ովքեր վաղուց հեռացել էին Պաղեստինից, հաստատվել այլ երկրներում, մոռացել եբրայերենը և այդ պահին խոսում էին միմիայն իրենց բնակության երկրների լեզուներով: Պեղումները վավերացնում են այդ փաստը:

Այսպես՝ Փոքր Ասիայի հնամենի Փռյուգիայի տարածքում Ռամսեյի կողմից անցկացված պեղումներն ապացուցեցին, որ նորկտակարանյան ժամանակներում այդ շրջանում բավականին շատ հրեաներ էին ապրում: Ք. ա. մոտ 200 թ. հրեական ընտանիքները Բաբելոնից Փռյուգիա տեղափոխվեցին: Հընթացս ժամանակի նրանց թիվն աճեց, նրանք հարստացան ու մոռացան մայրենի լեզուն[2]:

Ըստ պեղումների՝ հրեաներն ապրում էին նաև Եգիպտոսում՝ Կահիրեից մոտ 74 կմ դեպի հարավ–արևմուտք ընկած մեծ օազիսում՝ Ֆայյումում: Այնտեղ Սամարիա անվամբ մեծ հրեական գաղութ կար, որի բնակիչները, ի շարս այլոց, վաշխառուներ, ոստիկանության սպաներ և հարկահավաքներ էին[3]: Բացի այդ, Ալեքսանդրիայի տարածքի քառորդ մասը հրեաներով էր բնակեցված: Ըստ Փիլոնի՝ քաղաքի բնակչության երկու հինգերորդը հրեաներ էին:

1 **Free J. P.** Op. cit. P. 324.
2 **Cobern C. M.** Op. cit. P. 417.
3 **Cobern C. M.** Op. cit. P. 65,79.

Այդ նույն ժամանակներում հրեաների ներկայությունը Հռոմում նույնպես իրեղեն ապացույցներ ունի: *Via Portuensis* մեծ գերեզմանատանը 119 տապանագիր է գտնվել, որոնք հրեական անուններ են բովանդակում, զորօրինակ՝ Հակոբ, Հուդա, Աննա, Ռեբեկա[1], ընդ որում գրություններից մի քանիսն են ուղեկցվում յոթթևանի աշտանակի պատկերով:

13. Սուրբ Ղուկասը պատմում է, թե ինչպես Պետրոսը Սուրբ Հոգուն ստած Անանիային և Սափիրային պատժեց: Երկար ժամանակ գիտությունը, բացառությամբ Սուրբ Գրքի այս վկայության, Սափիրա անվան գոյության մեկ այլ փաստ չուներ: Սակայն 1933 թ. նորկտակարանյան ժամանակների աճյունակալների և այլ առարկաների հետազոտությանը նվիրված մի քանի հնագիտական աշխատություններ լույս տեսան: Այդ առարկաներից մեկի վրա գտնվեց Սափիրա անունը[2]: Այսպես ապացուցվեց այդ անվան գոյությունը Գործք առաքելոց գրքում տեղ գտած անցքերի դարաշրջանում:

14. Ըստ Գործք առաքելոցի՝ (8. 27–38) Փիլիպպոսը սովորեցրեց, մկրտեց և եկեղեցու զավակ դարձրեց Եթովպիայի Կանդակա թագուհու ներքինուն: Նուբիայի (1908–1909 թթ.) տարածքում գտնվող Մակ–Այվերի պեղումները համոզիչ նյութեր տվեցին Կանդակա ընդհանրական անվամբ թագուհիների գոյության մասին: Այս բառը պարզապես «թագուհի» է նշանակում, ինչպես Եգիպտոսում «փարավոն» բառը, իսկ հետագայում նաև «պտղոմեոսը», որ առհասարակ թագավոր էր նշանակում: Գործք առաքելոցում հիշատակված Եթովպիան տարբերվում է մեր իմացած երկրից: Այդ երկիրը գտնվում էր Եգիպտոսի հարավ–արևմուտքում՝ հասնելով Ասուանից մինչև Խարտում (Մերովե հին թագավորություն): Նորկտակարանյան ժամանակներում Նուբիայի բնակիչները շարունակում էին իրենց թագուհուն Կանդակա անվանել[3]:

---

1 **Cobern C. M.** Op. cit. P. 517,518.

2 The Haverford Symposium on Archaeology and the Bible/Ed. By Elihu Grant. N. Haven:

3 **Barton G. A.** Op. cit. P. 30. Մեջբերումն ըստ **Free J. P.** Op. cit. P. 311.

15. Հնագիտությունն օգնեց պարզելու նաև Ֆելիքսի և Փեստոսի անձերի ինքնությունը, որոնց առաջ կանգնեցրին Պողոս առաքյալին: Արդարև, Ֆելիքսը Հուդայի կուսակալն էր (Ք. ա. 52–60 թթ.), ում կինը՝ Դրուսիղան, Ագրիպպաս կրտսերի քույրն էր: Պորկիոս Փեստոսն այն անձն է, ում առաջ Պողոսն արդարանում էր իրեն ուղղված ամբաստանություններից՝ կայսրից դատ պահանջելով (26. 1–32): Հռոմի կայսրն այդժամ Ներոնն էր: Եթե ոչ կայսրությունը, ապա գոնե պրովինցիաները նա լավ էր կառավարում այդ օրերին, և ոչինչ չէր գուժում այդ հրեշի հետագայում անելիք գործերի մասին[1]:



Ներոն կայսրը (37-68 թթ.): Մարմարե արձանի գլուխ: Հռոմ, Ազգային թանգարան (Թերմերի թանգարան):

16. Պողոս առաքյալը Մելիտե կղզու մոտ նավաբեկության մասին խոսելիս՝ հայտնում է, որ այդ տեղից ոչ հեռու գտնվում էին «ագարակները Պոպիլուս անունով մի մարդու, որը կղզու գլխավորն էր» (Գործք 28. 7): Մալթա կղզում հայտնաբերված երկու վավերագրերում (մեկը հունարեն, մյուսը լատիներեն) հիշատակվում է այդ տիտղոսը[2]: Հետևաբար այս պատվական տիտղոսը, որն ըստ Ղուկասի ուներ Պոպիլուսը, իսկ և իսկ այն եզրն է, որով կոչում էին Մելիտե կղզու հռոմեացի կուսակալին:

Բավականաչափ մեծ ուշադրություն դարձրինք ինչպես Ավետարանի, այնպես էլ Գործք առաքելոցի՝ Ղուկաս ավետարանչի երկու գրքերի վրա: Ըստ մեզ՝ դա կարևոր է, քանի որ Նոր Կտակարանի այս երկու գրքերն էլ և հատկապես Գործք առաքելոցը ապացուցում են, թե ինչպիսի ապշեցուցիչ մանրակրկիտությամբ է ավետարանիչը գրել գրքերը: Նա բազմաթիվ հավաստի տեղեկություններ է տալիս աշխարհագրության ու քաղաքականության, տեղական բարքերի ու սովորությունների, պետերի ու բարձրաս-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 298.
2 **Bruce F. F.** The Book of Acts. P. 523.

տիճան անձանց տիտղոսների, կրոնական ավանդույթների, տեղագրական մանրամասների, հունական, հռոմեական, ասիական ու եվրոպական քաղաքների շենքերի տեղադրության մասին: Մեծավ մասամբ հնագիտության շնորհիվ է, որ ի հայտ եկան այն տեղեկությունները, որոնք հաստատում են աստվածաշնորհ հեղինակի գրվածքների իսկությունը: Բայց, ինչպես գրում է պրոֆեսոր Թոմպսոնը, «Հնագիտության անդաստանում զարմանալի սխրագործությունները դեռ նոր են սկսվում»[1]:

Հատկորոշ է նաև Էդվարդ Մեյերի՝ հավանաբար այս պահին Ք. հ. I դարի պատմության բնագավառում ամենախոշոր հեղինակության խոսքը, ըստ որի՝ Ղուկասի Ավետարանն ու Գործք առաքելոցը «անտիկ ժամանակներից մեզ հասած ամենահետաքրքիր երկասիրություններից են»[2]:

Մանոթագրություն

1. Հավանաբար ընթերցողի համար հետաքրքիր կլինի իմանալ, որ բդեշխի փոխանորդ Սերգեոս Պողոսը Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու սուրբ է:

2. Խոսքն այստեղ լիտրի՝ հռոմեական կշռաչափի՝ հռոմեական ֆունտի մասին է: Այս կշռաչափը հիշատակվում է Նոր Կտակարանում (Հովհ. 19. 39):

ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Հնագիտությունն անմասն չմնաց նաև Հովհաննու Ավետարանին առնչվող որոշ խնդիրների պարզաբանումից:

1. Այս Ավետարանի գրության տարեթվին առնչվող հարցերը գործնականում իրենց վերջնական լուծումը գտան 1935 թ., երբ Մանչեսթրի Ջոն Ռայլենդսի գրադարանում Ռոբերտսի կողմից պապիրուսե մի պատառիկ հայտնաբերվեց: Վերն արդեն հանգամանալից արծարծել ենք այդ դարակազմիկ հնագիտական հայտ-

1 **Thompson J. A.** Op. cit. P. 405.
2 **Short A. R.** Op. cit. P. 56-57.

նագործության բովանդակության, արժեքի և նրա շուրջ մասնագետների կարծիքների վերաբերյալ հարցերը[1]:

2. Հանգամանալից կերպով անդրադարձել ենք նաև «ռաբբի» և «ուսուցիչ» բառերին, որոնք հանդիպում են այդ Ավետարանում ու որոշ հեղինակների կասկածներին, ովքեր կարծում են, թե այդ բառերը իբր Հովհաննու ժամանակներից ավելի ուշ են գործածության մեջ մտել: Հնագիտական տվյալները հավաստում են, որ «ռաբբի» և «ուսուցիչ» բառերը լայնորեն օգտագործվել են մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրով: Ապացուցված է նաև այն, որ այնպիսի անուններ, ինչպիսիք են՝ Ղազարոսը, Մարթան, Մարիամը, Եղիսաբեթը, Սաղոմեն, շատ տարածված են եղել I դարում: Սակայն այս մասին էլ ենք բավականաչափ խոսել[2]:

3. Հովհաննեսը պատմում է, թե ինչպես դատի ժամանակ Պիղատոսը Տիրոջը դուրս բերեց պրետորիայից*, իսկ ինքը նստեց բեմի** վրա, այն տեղը, որ Քարահատակ է կոչվում, իսկ եբրայերեն (արամերեն)՝ Կապպաթա (Հովհ. 19. 13): «Քարահատակ» բառը քարերով սալահատակված կամ խճանկարով պատված տեղ է նշանակում, իսկ եբրայերեն (արամերեն) «Կապպաթան»՝ «բարձունք, բլուր»[2]:

Մինչև վերջերս կասկածներ կային Պիղատոսի պրետորիայի տեղադրության շուրջ: Բայց «*Dames de Sion*» («Սիոնի քույրեր») և ֆրանցիսկյան Գանահարության վանքերի պեղումների արդյունքում ներկայիս Տաճարի հյուսիս–արևմտյան մասում հայտնաբերվեց Կապպաթա կոչվող տեղը[3]: Այնտեղ, որտեղ առաջ գտնվում էր «Անտոնիա» ամրոցը, այսպես կոչված «*Ecce Homo*» («Այս մարդը») կամարի տակ հնագետների կողմից բացվեցին Քարահատակի մնացորդները: Ողորկ, մեծ չափերի, հռոմեական ոճով սալարկված քարե հատակը 2,500 մ^2–ուց ոչ պակաս մակե-

1 Տես «Նոր Կտակարանի գրքերի ժամանակագրությունը» գլուխը:
2 Տես «Հռոմեական ժամանակների պաղեստինյան դամբարանները» գլուխը:
* Պրետորիա - Այն տեղը, որտեղ նստում է պրետորը:
** Բեմ - Բարձր տեղ ատյանում, դատավորական աթոռ:
2 **Τρεμπέλας Π. Ν.** Ὑπόμνημα εἰς τὸ κατὰ Ματθαῖον. Ἰωάννην. Σ. 661. **Albright W. F.** The Archaeology of Palestine. P. 245.
3 **Vincent L. H.** Le Lithostrotos. L. 1983.

րես էր զբաղեցնում: Ժամանակին այս քարերը կազմում էին «Անտոնիա» ամրոցի գավիթը, որը գտնվում էր ժայռոտ բլրի վրա և լիովին կարող էր արամերեն Կապպաթա կոչվել: «*Ecce Homo*» կամարը անհամեմատ ավելի ուշ ժամանակով է թվագրվում, ինչը նշանակում է, որ գավթի մաս չի կազմել: Ամերիկացի հնագետ Օլբրայթի կարծիքով «Քարահատակի տեղադրությունը ճշգրիտ որոշվեց պրոֆեսոր Վանսանի փայլուն որոնումների արդյունքում, որն այդ տեղում ուշադրություն դարձրեց բլրի ժայռոտ կարկառների վրա, ինչպես նաև «*Dames de Sion*» և ֆրանցիսկյան Գանահարության մենաստաններում վաղուց անցկացված պեղումների շնորհիվ»[1]: Պրոֆեսոր Թոմպսոնը, վկայակոչելով Վանսանի եզրակացությունները, նկատում է. «Չնայած դեռ որոշ կասկածներ կան նշված տեղը բիբլիականի հետ նույնացնելու հարցում, այդ միտքը, այնուամենայնիվ, հիմնավոր է»[2]:

4. Օլբրայթը վստահաբար պաշտպանում է նաև այն տեսակետը, որի համաձայն Երուսաղեմի մոտ գտնվող Այենոնը, որտեղ մկրտում էր Հովհաննեսը, «որովհետև այնտեղ շատ ջրեր կային» (Հովհ. 3. 23), գտնվում էր այժմյան Սյուքեմ և Նաբլուս քաղաքների տարածքում: Այստեղ առ այսօր Սաղեմ անունով գյուղ կա, որի շրջակայքում գտնվում է Այնուն գյուղը: Սաղեմն ու Այնունը գտնվում են աղբյուրներով առատ Վադի Ֆարահ («Ֆարահի հուն») շրջանից ոչ հեռու[3]:

5. Սյուքարի ջրհորի մոտ սամարացի կնոջ հետ խոսելիս՝ Քրիստոս անպայման պետք է նաև տեսած լիներ Գարիզիմ լեռան վրայի տաճարի ավերակները: Հնագիտությունն օգնեց տեղորոշելու այդ տաճարը: Սամարացի կինը ցույց տվեց Գարիզիմ լեռան կողմը, որտեղ (4. 20) Ք. ա. 400 թ. կառուցվել, իսկ Ք. ա. 128 թ. Հովհաննես Հյուրկանոս I–ի կողմից ավերվել էր տաճարը: Ադրիանոս կայսեր օրոք (Ք. հ. 117–138 թթ.) հռոմեացիները նույն տեղում Յուպիտերի մեհյանը կանգնեցրին: Իսկ սամարացիներն

1 **Albright W. F.** Op. cit. P. 245.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 411.
3 **Albright W. F.** Op. cit. P. 247; **Thompson J. A.** Op. cit. P. 410-411.

առ այսօր այդ լեռան վրա տոնական զատկական զոհաբերություն են կատարում[1]:

6. Վերջին ժամանակներս մասնագետների մոտ մեծ հետաքրքրություն կա Ոչխարի ավազանի գոյության, իսկության և նշանակության նկատմամբ, որտեղ Տերը բժշկեց ավելի քան 38 տարի կաթվածահար վիճակում պառկած մի մարդու: Եբրայերեն Բեթհեզդա կոչվող այս ավազանը հայտնաբերվեց ս. Աննայի եկեղեցու ետևի բլրի հյուսիսային մասը պեղելիս, այնտեղ, որտեղ նախկինում կանգնած էր Սողոմոնի Տաճարը: Այսպես ապացուցվեց, որ Հովհաննեսն իր պատումների այս հատվածում էլ բացարձակապես իրավացի է[2]:

7. Բոլորովին վերջերս հնագետները երևան հանեցին նաև Կայիափա քահանայապետի (Ք. հ. 18–36 թթ.) տան ավերակները: Հնագետներն այն բացեցին Սիոնի բլրի վերևում՝ հինավուրց քաղաքի ազնվականների թաղամասը պեղելիս: Պահպանվել են մի քանի կամարակապ սենյակներ, ինչպես և ձեռագործ առարկաների որոշ քանակություն, որոնք հայտնաբերվեցին Մագեն Բրոշի արշավախմբի կողմից[3]:

Հնագետ Թոմպսոնը, նկատի առնելով բոլոր այս և մասնագետների համար հետաքրքրություն ներկայացնող որոշ այլ գտածոներ, այն եզրակացությանը հանգեց, որ Հովհաննեսի Ավետարանի հարազատությունն անվիճելի է. «Հնագիտական տվյալները մեզ համոզում են, որ սկզբնագիրը կազմվել է մեր թվարկության I դարի կեսին: Ոչ մի այնպիսի բան չկա, որը ստիպեր մեզ բնագիրը թվագրել մեր թվարկության II դարով, քանզի շատ ու շատ բաներ համընկնում են հենց առաջին դարի իրողությունների հետ»[4]:

1 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 288,289.
2 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 289-290
3 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 291.
4 **Thompson J. A.** Op. cit. P. 414.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ

XX դ. առաջին տասնամյակում Ուիլյամ Ռամսեյը «Ուղերձներ յոթ ասիական Եկեղեցիներին» խորագրով գիրք գրեց[1]: Հիսուն տարի անց «Յոթ Եկեղեցիների ուղերձները» խորագրով նոր գիրք լույս տեսավ, որի հեղինակը Ուիլյամ Բարկլեյն էր[2]: Գրքում փորձ է արվում նկարագրել Հայտնության երկրորդ և երրորդ գլուխներում ներկայացված յոթ Եկեղեցիները և պատմել նրանց ակունքների, առաջացման և միմյանց հետ հարաբերությունների մասին: Այս նպատակի համեմատ էլ հնագիտական բազմաբնույթ նյութեր օգտագործվեցին: Մեր օրերում հնագիտությունն օգնում է վերարտադրելու այն քաղաքների պատկերները, որտեղ գտնվել են այդ Եկեղեցիները, հասկանալ, թե ինչպիսին են եղել I դարի վերջում, գիտակցել, թե այդ ժամանակներում ինչ խնդիրներ են ծառացել նրա առաջ, և ինչ նկատի ուներ Հայտնության գրքի սրբազան մատենագիրը: Սակայն հնագիտությունն ի զորու չէ մեզ օգնել հասու լինելու այդ Եկեղեցիների զավակների հավատալիքներին:

1. Նախորդ գլխում մենք մանրամասնորեն խոսեցինք Եփեսոս քաղաքի մասին՝ իբրև Արտեմիս դիցուհու պաշտամունքի կենտրոն: Քաղաքի բնակչությունը, ի շարս այլոց, պաշտում էր կայսրին և զբաղվում ամեն տեսակ կախարդություններով: Հետագայում Եփեսոսում բույն դրեցին զանազան գնոստիկյան հերձվածներ: Չնայած այս ամենին՝ Պողոս առաքյալին հաջողվեց շատ բան անել այդ քաղաքում (Գործք 19): Այդտեղ բավական երկար ժամանակ ապրեց նաև Հովհաննես Աստվածաբանը՝ այդտեղից էլ Երկնքի արքայություն տեղափոխվելով: Հետագայում Եփեսոսում գումարվեց III Տիեզերաժողովը (431 թ.): Հայտնության գրքում Եփեսոսի Եկեղեցին մեծ դրվատանքի է արժանանում (2. 2–3,6), թեպետ նրա հասցեին սպառնալիքներ էլ են հնչում (2. 4–6):

1 **Ramsay W. M.** The Letters to the Seven Churches of Asia. L.,1904.
2 **Barclay W.** Letters to the Seven Churches. L.,1957.

Ի վերջո Սուրբ Հոգին շարժեց նրա «աշտանակներն իրենց տեղերից» (2. 5), և երբեմնի հարուստ Եփեսոս քաղաքն ու երբեմնի ծաղկուն եփեսոսյան Եկեղեցին՝ ընդհանուր գնահատությամբ «Ասիայի մայր թեմը», անկում ապրեցին: Նախկին փայլից միայն ավերակակույտ մնաց ու ոչ հեռու գտնվող մահմեդական փոքրիկ Այասսոլուկ գյուղը, որի՝ թարգմանաբար «սուրբ Աստվածաբան» (ἅγιος θεολογός) նշանակող անունը պահպանում է սիրո առաքյալի հիշատակը:

Պատմոս: Այն քարանձավը, ուր ս. առաքյալ Հովհաննես Աստվածաբանը հայտնություն ստացավ:

2. Զմյուռնիա հունական գաղութը հիմնվել է Քրիստոսի ծննդից ավելի քան հազար տարի առաջ: Քաղաքը Եփեսոսից դեպի հյուսիս 6,5 կմ հեռավորության վրա՝ մեծ ծովածոցի խորքում էր գտնվում և նավաստիների քաղաք էր:

Զմյուռնիան Հռոմի հետ շատ սերտ կապեր ուներ: Բնակիչներն իրենց քաղաքն «Ասիայում առաջինն» էին համարում. հետաքրքիր է, որ այդ բանը նրանք նույնիսկ իրենց մետաղադրամների վրա էին դրոշմում: Անտիկ հեղինակները հաճախ էին «զմյուռնիական պսակի» մասին խոսում: Հավանաբար դա ծաղկե դրասանգ էր, որը կրում էին Կիբելա դիցուհուն պաշտողները: Քաղաքի լեգենդար հիմնադիրն ամազոնուհի Զմյուռնիան է համարվել, ում պատկերը՝ պսակը գլխին, որսորդուհու և զինվորուհու տեսքով, նույնպես դրոշմվում էր մետաղադրամների վրա[1]: Հնարավոր է Սուրբ Հոգու՝ «Ես քեզ կյանքի պսակը պիտի տամ» արտահայտությունը հատուկ նշանակություն ու շատ մեծ կարևորություն է ունեցել զմյուռնացիների համար, ովքեր մանկուց լսել են «զմյուռնիական պսակի» մասին: Քրիստոնեական Զմյուռնիան, ինչպես վայել է Քրիստոսի Եկեղեցուն անդամագրվածին,

1 **Ramsay W. M.** Op. cit. P. 266 ff.

պիտի կրի այս պսակը: Ռամսեյը Սուրբ Հոգու «եղիր հավատարիմ մինչև մահ» խոսքում (2. 10) Հռոմին հավատարմության հիշատակությունն է տեսնում, որը հեթանոսական Զմյուռնիան երդվել էր պահել: Առաքյալի խոսքը՝ Քրիստոսի նկատմամբ այսպիսի հավատարմություն դրսևորելու հավատացյալներին ուղղված կոչ էր: Ցավոք սրտի, այս շրջանի պեղումները շատ դանդաղ են առաջ գնում, քանզի հինավուրց քաղաքի մեծ մասն անթեղված է ժամանակակից շենքերի տակ: Սակայն հստակ նշմարվում են հին թատրոնի և մի քանի այլ շինությունների մնացորդները[1]:

3. Պերգամոնը պրովինցիայի մայրաքաղաք էր: Այն ծովից 122 կմ, իսկ Զմյուռնիայից դեպի հյուսիս՝ 28 կմ հեռավորության վրա էր գտնվում: Այստեղ բազում աստվածների էին պաշտում, բայց բոլորից առավել՝ Ասկլեպոսին՝ բժշկության հովանավորին: Նրա խորհրդանիշը՝ օձը, պատկերված էր այն ժամանակվա բազմաթիվ մետաղադրամների վրա: Բացի այդ քաղաքը կայսերական պաշտամունքի կենտրոն էլ էր. Օգոստոսի օրոք՝ Ք. ա. 29 թ., այդ պաշտամունքի համար հատուկ մեհյան կառուցվեց: Պաշտում էին նաև Զևսին, Աթենասին և Դիոնիսիոսին[2]:

Պերգամոնը հպարտանում էր իր իսկ կրոնական մեծ նշանակությամբ, քանզի պրովինցիայի կայսերական պաշտամունքի առաջին և առայժ միակ կենտրոնն էր: Օգոստոսի մեհյանը մետաղյա դրամների վրա էլ էր պատկերվում: Սատանայի աթոռի մասին Հովհաննեսի խոսքը (2. 13) հնարավոր է, որ հենց կայսեր պաշտամունքը նկատի ունենար, թեև կարող էր նաև վերաբերել նրան, որ Պերգամոնը առավել, քան մյուս քաղաքները, լի էր կուռքերով: Պերգամոնի քրիստոնյաներին իրական վտանգ էր սպառնում՝ հեթանոսական ազդեցությունն ու Բաղաամի և նիկողայոսյանների վարդապետությունները (2. 14–15): Հավատով աննկունները կարող էին հալածանքների ենթարկվել: Հայտնության գրքի գրության ժամանակ արդեն մի նահատակ (μάρτυς տառացիորեն

1 **Thompson J. A.** Op. cit. P. 416.
2 **Ramsay W. M.** Op. cit. P. 284.

«վկա») կար. «Անտիպաս անունով Իմ վկան հավատարիմ եղավ Ինձ» (12. 13):

Պեղումներից երևան հանված շատ հնություններ Պերգամոնի, հատկապես նրա ակրոպոլիսի[1] երբեմնի փառահեղության և կարևորության պերճախոս ապացույցներից են: Ամենանշանակալից գտածոներից են Զևսի հսկայական զոհասեղանի ավերակները, որը կառուցված է եղել երեք հարյուր մետր բարձրություն ունեցող ապառաժի վրա՝ թևածելով բովանդակ քաղաքի վրա[2]: Զոհարանը վերականգնվել և տեղափոխվել էր Բեռլին, որտեղից էլ հայտնվեց Ռուսաստանում[3]: Բացի այդ, բացվեցին Տրայանոս և Ադրիանոս կայսրերի պաշտամունքին նվիրված մեծ մեհյանի մնացորդները[4]: Բայց հնագետներին Պերգամոնում դեռևս շատ աշխատանք է սպասվում: Հայտնության գրքի կազմության ժամանակ դա շատ հարուստ քաղաք էր՝ քաղաքական, մշակութային և կրոնական կենտրոն: Ասկլեպոսի մեհյանում բժշկություն ստանալու նպատակով բազում երկրպագուներ էին շտապում հայտնվել Պերգամոնում: Պերգամոնը նաև հնադարի ականավոր բժիշկ Գալենի հայրենիքն էր:

4. Փոքրիկ միջերկրածովյան Թյուատիրը գտնվում էր Լիդիայում՝ Սարդիկեի և Պերգամոնի միջև: Այն Ապոլլոնի և Սիբիլլայի պաշտամունքի կենտրոնն էր: Ապոլլոնը թյուատիրացիների հովանավորն էր, իսկ նրա պաշտամունքը կապված էր կայսերական պաշտամունքի հետ: Քաղաքը Ք. ա. 300–ականներին է հիմնադրվել Անտիոքոս I–ի կողմից՝ իբրև ռազմական բնակավայր, և հընթացս ժամանակի վերաճել առևտրական կենտրոնի: Նրա տարածքում պեղված բազմաբնույթ բովանդակությամբ վավերագրերը պատմում են ամենատարբեր արտադրանքների ու նրանց մասին, ովքեր պատրաստում էին բրդի ու քաթանի գործվածքներ,

1 Ակրոպոլիս - Հին հունական քաղաքի բարձրադիր և գեղազարդ մասը՝ այսպես կոչված վերին քաղաքը, ամրոց (պատերազմի դեպքում՝ ապաստարան): - Ծնթ. խմբագրինն է:

2 **Cobern C. M.** The New Archaeological Discoveries. N. Y.,1918. P. 563 ff.

3 Էրմիտաժում և Պուշկինի անվան կերպարվեստների թանգարանում այս բագինի համար հատկացված սրահներ կան: - Ծնթ. խմբագրինն է:

4 **Thompson J. A.** Op. cit. P. 416-418.

ներկում դրանք, մշակում ու վաճառում կաշի, խեցեգործությամբ զբաղվում, հաց թխում, զանազան մետաղական իրեր արտադրում[1]: Գործք առաքելոցը պատմում է ոմն «ծիրանի զգեստներ վաճառող» Լիդիայի մասին, որը նույնպես Թյուատիր քաղաքից էր (Գործք 16. 14):

Թյուատիրի Եկեղեցու եպիսկոպոսին պատգամ է հղում Նա, Ով, Հովհաննու վկայությամբ, Աստծո Որդին է. «Ում աչքերը նման են կրակի բոցի և Նրա ոտքերը՝ շիկացած պղնձի» (2. 18): Թյուատիրի Եկեղեցին, որին հասցեագրված է Սուրբ Հոգու յոթ պատգամներից ամենամեծը, «ընկավ»՝ լրջորեն չդիմագրավելով կռապաշտների պաշտամունքներին: Հարկ է նշել, որ հենց այստեղ է Ք. հ. 150 թ. հաջորդող ժամանակներում ծաղկել Մոնտանոսի հերձվածը:

5. Սարդիկեն Թյուատիրից 65 կմ դեպի հարավ է գտնվում՝ մի քանի առևտրական ճանապարհների խաչմերուկում: Իր ժամանակին խոշոր քաղաք և սկզբնապես հարուստ Լիդիա պրովինցիայի մայրաքաղաքն է եղել: Խոր անցյալում բլրի վրա կառուցված Սարդիկեն անառիկ ամրոց էր, սակայն ժամանակի ընթացքում քաղաքը հովիտ իջավ, իսկ ամրոցը նոր քաղաքի ակրոպոլիսը դարձավ: Սարդիկեի հովանավորուհին Արտեմիսի հետ նույնացվող Կիբելա դիցուհին էր: Նրան նվիրված մեհյանի փլատակները պահպանվել են առ այսօր: 98 մ երկարություն և 49 մ լայնություն ունեցող տարածքի վրա հիմա էլ կարելի է տեսնել երկու ամբողջական և բազմաթիվ փշրված սյուներ, իսկ մեհյան տանող սրբազան ճանապարհի երկայնքով՝ մի քանի թևավոր առյուծների արձաններ: Ք. հ. 17 թ. քաղաքը երկրաշարժից ավերվեց, բայց հետագայում Ադրիանոս կայսրը վերականգնեց այն: Հայտնության գրքի գրության ժամանակ Սարդիկեն իր բնակիչների հարստության ու անբարոյականության պատճառով վատ համբավ ուներ, ուստի և Սարդիկեի Եկեղեցու եպիսկոպոսին հղած պատգամում հորդորվում է արթուն մնալ, որովհետև Տերը, «ինչպես գող», հանկարծակի կգա (3. 1–6): Համենայն դեպս Սարդիկեի քրիստոնեական

1 **Ramsay W. M.** Op. cit. P. 325.

կյանքն իսկապես խղճալի վիճակում էր, ինչպես և, ասենք, ինքը՝ եպիսկոպոսը, ում Սուրբ Հոգին ասում է. «Դու, որ կենդանի եղողի անուն ունես, բայց մեռած ես» (3. 1):

Պեղումների ժամանակ այս շրջանում գտնվեց Արտեմիս–Կիբելայի մեհյանը, որը հետագայում եկեղեցու էր վերափոխվել[1]: Այդտեղ նաև բազում վավերագրեր հայտնաբերվեցին: Դրանից ամենանշանավորը գրված է լիդիերեն և արամերեն լեզուներով և թվագրվում է պարսից արքա Արտաքսերքսի գահակալության տասներորդ տարով: 1958 թ. սկսյալ՝ անցկացվող պեղումները պարբերական բնույթ են ունեցել, որի արդյունքում լիդիական, պարսկական և հելլենիստական ու ավելի ուշ շրջաններին պատկանող շինությունների մնացորդներ բացվեցին: Մեծ քանակությամբ խեցեղենը, մետաղյա դրամները, բրոնզե իրերը, լիդիերեն, հունարեն և լատիներեն լեզուներով գրությունները, բազմաթիվ ճարտարապետական, քաղաքաշինական ու քանդակագործական հուշարձանները, հիասքանչ խճանկարներն ու տարբեր դարաշրջաններից պահպանված շատ–շատ այլ հնություններ հնագիտության տեսանկյունից Սարդիկեն դարձնում են Փոքր Ասիայի ամենահարուստ շրջաններից մեկը: Հնագետների ձեռամբ բացված ամենից հետաքրքիր հուշարձանների շարքին են դասվում հրեական սինագոգը (թվագրվում է Ք. հ. 17 թ.–ից փոքր–ինչ ուշ) և Արտեմիսի մեհյանը[2]:

6. Փիղադեղփիան գտնվում է Սարդիկեից 52 կմ հարավ–արևելք: Անտիկ ժամանակներում գինեգործության կենտրոն էր, որի հովանավորը համարվել է Դիոնիսիոսը: Քաղաքը ռազմավարական առումով կարևոր դիրք է ունեցել, քանզի փակում էր Փռյուգիայի մուտքը: Սակայն այժմ պետք է «բաց դուռ» դառնար, ինչպես Աստծո Հոգին ազդարարում է Փիղադեղփիայի Եկեղեցու եպիսկոպոսին (Հայտ. 3. 8): Քաղաքը նոր առաքելություն ունի, ինչպիսին ունեցել է հելլենիստական մշակույթի տարածման կենտրոն հանդիսացած ժամանակ: Այսօրվա դրությամբ առձեռն

1 **Cobern C. M.** Op. cit. P. 565 ff.
2 **Thompson J. A.** Op. cit. P. 420-422.

հնագիտական նյութերը սահմանափակվում են սակավաթիվ վավերագրերով ու մետաղադրամներով, այնպես որ Փիղադեղփիայի տեղեկությունների մեծ մասը բաժին է ընկնում գրավոր աղբյուրներին[1]: Քաղաքն իր անվանումով պարտական է իր հիմնադրին՝ Պերգամոնի արքա Ատտալոս II Փիղադեղփին (Ք. ա. 159–138 թթ.): Թուրքերն այն «Ալլահ–Սեր» են անվանում կամ «Աստծո քաղաք» և այս առումով անմիջապես հիշողության մեջ հառնում են այս քաղաքին ուղղված Սուրբ Հոգու խոսքերը. «Ով հաղթի, նրան իմ Աստծո տաճարին սյուն պիտի դարձնեմ.... և նրա վրա պիտի գրեմ իմ Աստծո անունը և իմ Աստծո քաղաքի անունը» (Հայտ. 3. 12):

7. Լավոդիկեն կառուցվել է Անտիոքոս II–ի (Ք. ա. 264–246 թթ.) կողմից Լիկոս գետի հովտում՝ Փիղադեղփիայից 78 կմ հարավ–արևմուտք: Հովհաննես ավետարանչի օրոք այն արհեստի և առևտրի կարևոր կենտրոն էր: Լավոդիկեն հռչակավոր էր նաև իր բժիշկներով, հատկապես ակնաբույժներով. ահա թե ինչու Լավոդիկեի Եկեղեցու եպիսկոպոսին հղված պատգամում խոսվում է «աչքերի դեղի» մասին, որը պետք է օգտագործել տեսնելու համար (3. 18): Սուրբ Հոգու պատգամի բնագիրը ստույգ պատկերացում է տալիս քաղաքի նյութական և բարոյական վիճակի մասին, քաղաք, որն այնքան թշնամաբար արձագանքեց քրիստոնեական Եկեղեցու կանչին, երբ հոգևոր առումով իր թշվառ գոյությունն էր քարշ տալիս: Ռամսեյը նկատում է, որ Լավոդիկեի Եկեղեցու եպիսկոպոսի խոսքերում առկա եսասիրությունն ու ինքնահիացումը. «Հպարտ եմ և առավել հարստացա ու ոչ մի բանի կարոտ չեմ» (3. 17), գաղջ՝ ոչ տաք, ոչ սառը, լավոդիկեցիների ճիշտ բնութագիրն է[2]:

Այս քաղաքում անցկացված սակավաթիվ պեղումների արդյունքում բացվեցին քանդակների հատվածներ, մարմարի արժեքավոր տեսակների բեկորներ, որոնք օգտագործվել են իբրև ճարտարապետական գեղազարդային տարրեր, հիմքեր և այլն, որոնք

1 **Thompson J. A.** Op. cit. P. 422.
2 **Ramsay W. M.** Op. cit. P. 416-419.

պերճության մեջ ընկղմված քաղաքի մնացորդներն են: Ահա թե ինչու լավոդիկեցիները «ոչ սառը և ոչ տաք էին», ու բոլորն էլ փորձում էին Աստծուն մամոնայի հետ հաշտեցնել:

8. Հնագիտությունը լուսաբանում է նաև Հայտնության գրքում տեղ գտած որոշ պատկերներ ու խորհրդանիշներ.

ա) առաքյալը Փիղադեղփիայի Եկեղեցու եպիսկոպոսին հասցեագրված պատգամում, ի շարս այլոց, ասում է. «Ով հաղթի, նրան իմ Աստծո տաճարին սյուն պիտի դարձնեմ. և նա այնտեղից այլևս դուրս չի գալու. և նրա վրա պիտի գրեմ իմ Աստծո անունը» (3. 12): Սույն պատկերի իմաստը Պաղեստինի, Պալմիրայի և Փոքր Ասիայի զանազան շրջանների հնագիտական պեղածոների լույսի ներքո է պարզաբանվում: Բարերարների՝ Գալիլիայի ժողովարաններին մատուցած նվերները բավական հաճախ համապատասխան ընծայագրերով էին ուղեկցվում: Կափառնայումի սինագոգի սյուներից մեկի վրա կարելի է կարդալ հետևյալ հունարեն մակագրությունը. «Մակիմայի որդի Հերովդեսի ու նրա ժառանգների կողմից»: Կա մեկ այլ արամերեն լեզվով համանման մակագրություն:

բ) Յոթ կնիքներով կնքված (5. 1 6. 1–7) գրքի պատկերը, որը հարկ է մեկը մյուսի հետևից բացել, հիշեցնում է մեզ, թե ինչ խնամքով էին հներն օտարներից գրավոր բնագրերի բովանդակությունը պահպանում: Թագավորները, վաշխառուները, վաճառականներն ու անշարժ գույքի տերերը կեղծիքներից ապահովվելու համար հասարակ կամ բաղադրյալ կնիքներ էին օգտագործում՝ իրենց ստորագրությանը վկայի անունը հավելելով, որը հենց այդտեղ էլ նշվում էր[1]: Միով բանիվ, սուրբ առաքյալն այդ պատկերի միջոցով կամենում է ասել, որ յոթ կնիքներով կնքված գրքում նկարագրված Տիրոջ դատաստանն ու պատիժն առժամանակ գաղտնի կմնան և կբացվեն հավատարմատար անձի կողմից՝ վկաների ներկայությամբ:

9. Եգիպտոսում երևան հանված պապիրուսներն ու խեցեբեկորները պարզաբանում են Հայտնության հեղինակի լեզվի մեջ

1 **Cornfeld G.**, Freedman D. N. Op. cit. P. 331.

առկա այսպես կոչված սոլեցիզմներն ու օտարաբանությունները (սոլեցիզմ–շարահյուսական սխալ, օտարաբանություն–օտար լեզուների բառեր գործածելը, լայն իմաստով՝ սխալ խոսք:– Ծնթ. խմբ.): Որպես օրինակ հաճախ բերվում են առաջին գլխի 4, 5, 6 համարները. «Շնո՛րհ ձեզ և խաղաղությո՛ւն Նրանից, որ է, որ էր և որը գալու է... և Հիսուս Քրիստոսից՝ հավատարիմ վկայից... որ սիրեց մեզ... և մեզ թագավորներ դարձրեց... Նրան փա՛ռք», տասնչորսերորդ գլխի 19 համարը. «Եվ հրեշտակը նետեց իր գերանդին...Աստծո ցասման* մեծ հնձանի մեջ» (*ληνός*՝ «գերանդի» բառը սովորաբար արական սեռով է գործածվում, սակայն Հայտնության բնագրում այդ բառի ածականն ու հոդը իգական սեռով են դրված, ընդ որում ինքը՝ բառը, արական սեռի քերականական հատկանիշներ ունի: Այսպիսի «սոլեցիզմներն» ու «օտարաբանությունները» ոմանց առիթ են տալիս պնդելու, որ Հովհաննեսը իբր թե Հայտնությունը գրել է նախքան Ավետարանը և այդ պահին դեռ պատշաճ կերպով հունարեն չգիտեր: Բայց կասկածից վեր է, որ Հայտնության գիրքը գրվել է Ավետարանից հետո՝ 95 թվին: Հնագիտությունն այս հարցում էլ է օգնության հասնում՝ յուրովի բացատրելով Հովհաննես Աստվածաբանի Հայտնության լեզվական առանձնահատկությունները:

ա) Եգիպտոսի հնագիտական գտածոներն ապացուցեցին, որ *λήνος* բառը կարող էր թե՛ արական (ὁ ληνός), թե՛ իգական (ἡ ληνός) սեռով գործածվել (Հայտ. 14. 19), և սա բավական տարածված երևույթ էր ժամանակի լեզվում: Պապիրուսներից մեկում այդ նույն բառը երկու սեռերով էլ գործածված է: Ի լրումն սրա՝ Նոր Կտակարանի հնագիտության այլ տվյալներ էլ ապացուցում են, որ իբր թե «անփութության» պատճառով թույլ տրված «սոլեցիզմները», «օտարաբանություններն» ու «սխալները» իրականում ընդամենը քերականական առանձնահատկություններ, խոսքի դարձվածքներ են՝ բնորոշ մեր թվարկության I դարի բնակչության միջին խավերի լեզվին[1]:

---

* Հայերեն բնագրերում պակասում է «ցասման» բառը:

1 **Free J. P.** Op. cit. P. 333.

բ) Ոմանց կարծիքով էլ. «Հայտնությունը բովանդակում է եբրայերենին (արամերենին) հատուկ արտահայտություններ»: Նոր Կտակարանի գրության ժամանակներին պատկանող մեզ հասած պապիրուսները վկայում են հօգուտ նրա, որ նախկինում տիպիկ եբրայերեն կամ սեմական նկատվող դարձվածքներն իրականում այդպիսին չէին և առաքելական ժամանակներում գործածվել են ոչ հրեաների կողմից[1]:

գ) Տիսսենի կարծիքով Հայտնության լեզվում առկա հին եբրայական լեզվին բնորոշ ոճական առանձնահատկությունները միանգամայն բնական են հինկտակարանյան պատկերներ ու արտահայտություններ գործածող գրվածքի համար: Ավելին, Հայտնության գրքի մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տալիս առանց որևէ չափազանցության ասելու, որ սույն գրքի բնագրի և Հովհաննես առաքյալի մյուս գրքերի միջև բնորոշ նմանություն գոյություն ունի (համեմատեք, օրինակ, այնպիսի բնորոշ բառեր և արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Բան», «ով հաղթի», «կենդանի ջուր», «գառ» և այլն) [2]:

դ) Պրոֆեսոր Բրացիոտիսն ուղղափառության ավանդության ոգով գրված իր՝ ըստ ամենայնի օրինակելի «Հովհաննես Աստվածաբանի Հայտնությունը» գրքում անաչառորեն ու ազնվորեն պնդում է. «Վերջին տարիների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Հայտնության լեզուն ըստ էության մեր թվարկության առաջին դարի վերջի հելլենական կոյնե[3] է՝ ժողովրդական լեզվին ամենամերձավոր տեսակի մեջ: Այս եզրակացությունն արվել է այդ դարաշրջանի հուշարձանների՝ ի մասնավորի Մարկոսի Ավետարանի, ինչպես նաև Եգիպտոսի տարածքում գտնված բազմաթիվ պապիրուսների ու խեցեբեկորների վերլուծության հիման վրա[4]: Անկասկած, այս աստվածաշունչ գրքի բովանդակության

1 **Cobern C. M.** The New Archaeological Discoveries and Their Bearing upon the N. Testament. 1929. P. 115.

2 **Thiessen H. C.** Introduction to the N. Testament. Grand Rapids: Eedermans,1943. P. 320. Մեջբ. ըստ **Free J. P.** Op. cit. P. 333.

3 Կոյնե - Ք. ա. IV դ. Հին Հունաստանում հոնիական բարբառի տարրերով ատտիկյան լեզվի հիմքի վրա ձևավորված համաժողովրդական լեզու: - Խմբ. ծնթ.:

4 **Μπρατσιώτης Π. Ι.** Ἡ Ἀποκάλυψις τοῦ ἀποστόλου Ἰωάννου. Ἀθῆναι. 1950. Σ. 22.

առնչությամբ հնագիտական հետազոտությունների առաջ դեռ գործունեության ընդարձակ ասպարեզ կա: Հայտնության յոթ Եկեղեցիների վայրերում ապագայում անցկացվելիք պեղումները մեզ դեռ շատ բան կպատմեն այս՝ աստվածաբանական, հոգևոր և պատմական տեսանկյուններից կարևորագույն նորկտակարանյան գրքում արծածված հասարակության հոգևոր և նյութական մշակույթի խնդիրների մասին[1]:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՂԹԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՏԱԾՈՆԵՐԸ

Մեր տրամադրության տակ Պողոս առաքյալի նամակներին վերաբերող մեծաքանակ նյութեր չկան, սակայն այդ քիչն էլ մեծ գիտական հետաքրքրություն է ներկայացնում:

1. Մի անգամ՝ հարյուր տարի առաջ, մի գյուղացի հռոմեական Ասիյան ճանապարհից ոչ հեռու գտնվող իր բանջարանոցը փորելիս՝ մեծ գերեզմանաքարի դեմ առավ, որի վրա հետևյալ արձանագրությունը հայտնաբերվեց. «Կրիպտա* Կեսարի ընտանիքի անդամների համար»: Վկայություններ կան, որ այս դամբարանի առաջին թաղումները Քրիստոսի կյանքի ժամանակաշրջանից են, իսկ վերջինները՝ Ք. հ. 66 թ.: Հայտնի է, որ Պողոս առաքյալն իր՝ Փիլիպպեցիներին գրած թուղթն ավարտում է ողջույններով, որը նա փոխանցում է Հռոմի Եկեղեցու հավատացյալների անունից և մանավանդ «Կեսարի տնից» (Փիլ. 4. 22): Սրա հիման վրա մենք

Հարկ է նշել, որ պրոֆեսոր Բրացիոտիսը համակողմանիորեն է ուսումնասիրում Հայտնության լեզվին առնչվող հարցը՝ պատշաճ տեղ հատկացնելով դրան, և այս եղանակով լիովին սպառում թեման:

1 Հանգամանորեն տես **Thompson J. A.** Op. cit. P. 422-423, ինչպես նաև Blaiklock E. M. Op. cit. Ch. 6. P. 54; Նաև **Ramsay W. M.** The Letters to the Seven Churches of Asia.

* Կրիպտա - 1. Ժայռափոր կամ թաղակապ ստորգետնյա անցում, որտեղ քրիստոնյաները հավաքվում էին պաշտամունք մատուցելու ու նաև ննջեցյալներին թաղելու համար, հետագայում՝ ստորգետնյա մատուռ:

կարող ենք եզրակացնել, որ «Կեսարի տնից» ոմանք քրիստոնյաներ են եղել:

Գյուղացու հայտնաբերած դամբարանի տարածքում պեղումներ կատարող հնագետները մեծ հետաքրքրությամբ նշում էին, որ իրենք բազմիցս հանդիպել են Պողոս առաքյալի Առ Հռովմայեցիս թղթից հայտնի անունների (16. 1–23), և որ այդ անուններից մի քանիսն այդ ժամանակներում այնքան էլ տարածված չեն եղել: Զորօրինակ՝ Տրիփոս, Տրիփոն, Ուրբանոս, Ստաքես, Երմաս, Փիղողոգոս, Պատրոբա և Հուղիա: Այդ օրվանից ի վեր այլ գերեզմանոցներ էլ բացվեցին, որոնք գիտության մեջ «աղավնատներ» կոչվեցին, քանզի իրենց տեսքով աղավնաբներ էին հիշեցնում: Աղավնատներում գտնվեցին նաև այլ ազնվատոհմիկ ընտանիքների (հիմնականում հեթանոսական) աճյունատուփեր: Դրանց վրայի արձանագրություններում հանդիպում են Պողոս առաքյալի Առ Հռովմայեցիս թղթի վերջին գլխում հիշատակված նույն անունները: Ի շարս այլոց՝ այնտեղ Ամպղիա և Ուրբանոս անունների հետ հիշատակվում է նաև Ապեղես անունը: Այս գերեզմանները դույզն–ինչ ավելի ուշ շրջանից են, բայց ոչ այնքան, որ բացառվեր այդ մարդկանց՝ Պողոս առաքյալի հետ ծանոթ լինելը[1]: Երաստոս անվան մասին մենք խոսել ենք վերը[2]:

2. Պողոս առաքյալն իր նամակների հարազատությունը վավերացնում էր վերջում հավելած արտահայտությամբ. «Այս ողջույնի գիրը իմ ձեռքինն է՝ Պողոսինը» (Ա Կորնթ. 16. 21, Կող. 4. 18, Բ Թեսաղ. 3. 17): Այսպես էին իրենց նամակները եզրափակում շատ հեղինակներ, ում գրվածքները պահպանվել են պապիրուսի վրա: Այսպիսի բնագրի օրինակ է 66 թ. օգոստոսի 24–ով թվագրված մի նամակ՝ գրված ոմն քաղաքացու կողմից իր պրովինցիայի պետին: Նամակի մեծ մասը գրված է գրագրի կողմից և միայն վերջում հեղինակը մի քանի արտահայտություններ է հավելում՝ այն էլ, ի տարբերություն նախընթացի, ոչ այնքան գեղեցիկ ձեռագրով[3]:

1 **Short A. R.** Op. cit. P. 57.
2 Տես «Գործք առաքելոց» գլուխը:
3 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 315.

Հռոմեական ֆորում: Սրբազան ճանապարհ:

3. Պողոս առաքյալը հիշատակում է, որ Երուսաղեմի քրիստոնյաներին Մակեդոնիայի և Աքայայի հավատացյալներն օգնության ձեռք են մեկնել և այդ օգնությունը κοινωνία է անվանում՝ նպաստ կամ հանգանակություն (Հռոմ. 15. 26, Ա Կորն թ. 16. 1): Այս վերջին եզրին հանդիպում ենք 63 թ. օգոստոսի 4–ով թվագրվող խեցեբեկորներից մեկի վրա: Ըստ այդ բնագրի՝ ազգությամբ հույն Պեկիսոսի որդի ոմն Պսենամունիսը 4 դրախմ և մեկ օբոլոս* է ստացել Իզիդա դիցուհուն նվիրաբերելու համար: Այսօրինակ հանգանակություններ հավաքելը տիպական երևույթ էր անտիկ ժամանակների համար[1]:

Պողոս առաքյալը:
Ք. հ. VI դ. կես: Ռավեննա:

4. Ինչպես հայտնի է, մեր Տեր Հիսուս Քրիստոսը յուրաքանչյուր շաբաթ օր հրեական ժողովարան մտնելու և այնտեղ Հին Կտակարանից ընթերցումներ անելու սովորություն ուներ (Ղուկ. 4. 16 և մյուս համարները): Այդպես էլ Պողոս առաքյալն իր այցելած յուրաքանչյուր քաղաքի սինագոգ էր մտնում և ավետարանում (տե՛ս օրինակ՝ Գործք 13. 5 14. 1): Ընդհուպ մինչև մեր օրերը, բացի լիբերտինացինե-

* Հին հույների մանր արծաթե մետաղադրամ, դրախմի մեկ վեցերորդ մասը:
1 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 316.

րի սինագոգի՝ այդ ժամանակների միակ արձանագրությունից, մեր թվարկության առաջին դարով թվագրվող ոչ մի սինագոգ չի հայտնաբերվել[2]: Հնարավոր է, որ Տիտոսի ձեռամբ 70 թ. Երուսաղեմի գրավումից և 131 թ. Ադրիանոս կայսեր կողմից Բար–Կոխբայի ապստամբությունը ճնշելուց հետո գործնականորեն բոլոր սինագոգներն ավերված լինեին: Կափառնայումի[2] սինագոգը կառուցվել է Փրկչի Ծննդից համարյա երկու հարյուր տարի հետո[3]: Գալիլիայում բազմաթիվ ժողովարանների ավերակներ բացվեցին, բայց բոլորն էլ թվագրվում են մեր թվարկության երկրորդ դարի վերջով և ավելի ուշ շրջանով[4]: Այս ցուցակի վերջին երկու ժողովարաններից մեկը գտնվում էր Մասադայում՝ Հերովդեսի ամրոցում, մյուսը՝ Հերովդիոնում՝ թագավորի ամառային ապարանքում[5]:

5. Առ այսօր հայտնաբերված չեն նաև I դարի եկեղեցիներ: Այս պահին պեղված ամենահին եկեղեցին, որի թվագրությունը կասկած չի առաջացնում, կառուցվել է III դարում: Այս եկեղեցին հայտնաբերվել է Միջագետքում՝ Եփրատի ափին գտնվող Դուրա–Եվրոպոս տեղանքում: Այն շինության մնացած մասից բաժանված և աղոթատան վերածված հասարակ սենյակ էր[6]: Այն կացարանի ընդհանուր ներսակողմի նկատմամբ խիստ հակադրություն է կազմում, օրինակ՝ պատերը որմնանկարներով են պատված[7]: Իհարկե, քրիստոնյաների առաջին խորանները կատակոմբներում էին, սակայն դրանք էլ Ք. հ. I դարից անհամեմատ ավելի ուշ շրջանով են թվագրվում:

---

2 Տես «Գրություններ և մակագրություններ» գլուխը:
2 Այս սինագոգի մասին տես «I դարի Պաղեստինի և Ասորիքի քաղաքները» գլուխը:
3 **Free J. P.** Op. cit. P. 334-335.
4 **Thompson J. A.** Op. cit. P. 358.
5 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 295.
6 **Burrows N.** What Mean These Stones? P. 207; **Albright W. F.** The Archaeology of Palestine. P. 248-249.
7 **Cornfeld G., Freedman D. N.** Op. cit. P. 317. Այստեղ էլ կարելի է ծանոթանալ այդ եկեղեցու հատակագծին:

ՊԱՊԻՐՈՒՍՆԵՐՆ ՈՒ ԽԵՑԵԲԵԿՈՐՆԵՐԸ ԼՈՒՅՍ ԵՆ ՍՓՌՈՒՄ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Պապիրուսները Նոր Կտակարանի բնագրի որոշ մանրամասներ պարզաբանող ամենից հետաքրքիր ու նշանակալից գտածոներն են: Ընդհուպ մինչև XVI դարը Եվրոպա միայն սակավաթիվ պապիրուսե պատառիկներ էին հասնում: 1752 թ. Հերկուլանիումի պեղումներն արգասավորվեցին դրանց որոշ քանակության հայտնաբերումով. պապիրուսները 79 թ. Վեզուվ հրաբխի լավայի ու մոխրի շերտի տակ էին առնվել: XVIII դ. վերջին Եգիպտոսից սկսում են պապիրուսներ բերել: Եվ չնայած եգիպտացի գյուղացիներն այրում էին պապիրուսները՝ դրանց արձակած ծխի անուշահոտությունն ըմբոշխնելու համար, այդուհանդերձ XIX դարում վերջապես Եվրոպա բերվեցին բազմաթիվ ցայսօր կարևոր նկատվող պապիրուսներ: Կահիրեից 93–111 կմ հարավ–արևմուտք գտնվող Ֆայյումյան շրջանն, արդարև, պապիրուսագետների «ոսկեբեր հանքերակն» էր: 1877 թ. Ֆայյումյան շրջանում գտնվող հնամենի Կոկորդիլոսապոլից (հետագայում այն վերանվանվեց Արսինոյայի) Վիեննա ուղարկվեց պապիրուսների մեծ քանակություն: 1889–1890 թթ. Գուրոբի պեղումների ընթացքում սըր Ֆլայնդերս Պետրին պապիրուսներով փաթաթված մումիաներ հայտնաբերեց և դրանք գիտնականների քննությանը հանձնեց: Հետագայում Եգիպտոսում հատուկ պապիրուսների որոնմամբ էին զբաղվում Գրենֆելլը, Հանտը և Հոգարտը: Որոնումներն արգասավոր էին հատկապես Նեղոսի արևմտյան ափին սփռված Օկսիրինխոս քաղաքում: Գտնված առաջին իսկ պապիրուսե պատառիկի վրա հանդիպեց κάρφος բառը (բառացիորեն՝ «խոտ, հարդ, փոքրիկ ճիպոտ, ցողուն», որ թարգմանվում է «շյուղ» (Մատթ. 7. 3–5)): Երբ պատառիկը փո-

շուց ու կեղտից մաքրվեց, պարզվեց, որ Հիսուս Քրիստոսի խոսքերի ժողովածու է, որը մոտավորապես III դարով է թվագրվում[1]:

Այս պահին բոլոր պապիրուսներն էլ մանրազնին քննության են ենթարկվում, որի արդյունքում մենք հարուստ տեղեկություններ կստանանք թե՛ այդ ժամանակների հասարակական–քաղաքական, մշակութային և կրոնական, թե՛ Նոր Կտակարանի բովանդակության վերաբերյալ:

Արժեքավոր նյութեր են պարունակում նաև օստրակոնները[2]՝ փշրված կավե անոթների բեկորները, որոնց վրա թանաքով նամակներ, ստացականներ էին գրում և նշումներ անում: Նախկինում պեղումների ժամանակ այս խեցեբեկորները, իբրև անպիտան բաներ, դեն էին նետում: Մեր օրերում դրանք խնամքով հավաքում են, վերլուծում վավերագրերի բովանդակությունը, քանզի երբեմն, ի շարս այլոց, այն կարող է օգնել Նոր Կտակարանի բնագիրն ընկալելու:

Պապիրուսների բնագրերը մեծավ մասամբ հունարեն են, սակայն դա բնավ էլ այն հունարենը չէ, որով գրում էին հնադարի մեծ հեղինակները: Դա Նոր Կտակարանի լեզուն է՝ այսպես կոչված կոյնեն: Դժվար է այս լեզվի ուսումնասիրության մեջ գերագնահատել պապիրուսների նշանակությունը, քանզի ըստ մի ժամանակ տարածված կարծիքի՝ Ավետարանի լեզուն եբրայերենի ուժեղ ազդեցությունը կրած հունարենի մի տարատեսակ էր: Նոր Կտակարանի բնագիրը հետազոտող գիտնականների կողմից կազմվեց այն բառերի մեծ ցանկը, որոնք, ըստ նրանց, պատկանում էին այսպես կոչված «սուրբգրային» կամ «եկեղեցական» հունարենին: Իհարկե, ընգծվում էր, որ Նոր Կտակարանի մատենագիրները «հորինում», «ստեղծում» էին այս բառերը, երբ որոշակի գաղափար արտահայտելու անհրաժեշտություն էին զգում: Չնայած այդ ցանկը մի ժամանակ 550 բառ էր բովանդակում, այսօր պապիրուսների շնորհիվ նվազել է մինչև հիսունի. այս պահին այդ հիսուն բառերը, բացի սուրբգրային բնագրերից, որևիցե

1 **Thompson J. A.** Op. cit. P. 425-426.

2 Հանգամանալից տես **Deissman A.** Light from the Ancient East/English transl. L.,1927. P. 50 ff.

այլ տեղ արձանագրված չեն: Այսպիսով, պապիրուսներն ու խեցեբեկորները մեզ ծանոթացնում են I դարի համար սովորական բառապաշարի հետ: Գերմանացի պրոֆեսոր Ադոլֆ Դայսմանը՝ Նոր Կտակարանի մեկնության մասնագետը, ով այս խնդրի մանրակրկիտ հետազոտությամբ է զբաղվում, արտահայտվել է հօգուտ նրա, որ Նոր Կտակարանի լեզուն արհեստական, հորինված չէ: Դա հունարեն կոյնեն է, լեզու, որով խոսում ու գրում էին Նոր Կտակարանի կազմության ժամանակներում, և այդ լեզուն բոլորին հասկանալի էր[1]:

Պապիրուսներն ու խեցեբեկորները մեզ նաև ոչ սուրբգրային նամակագրական առատ նյութեր են տալիս, ինչն ապացուցում է, որ Պողոս առաքյալի՝ իր Թղթերում գործածած նամակագրության եղանակը համահունչ է իրեն ժամանակակից ավանդույթին: Այդ ժամանակների նամակներում կան աղոթքներ, պաղատանքներ և ողջույններ հիշեցնող առ Աստված գոհություններ, որոնք հանդիպում են Պողոսի և մյուս առաքյալների թղթերի սկզբում ու վերջում: Մի շարք տեղիներում հանդիպում ենք գործնականորեն պապիրուսների բնագրերին հար և նման արտահայտությունների՝ հմմտ. 3 Հովհ. 3. 2, Հռոմ. 1. 8, Ա Կորն թ. 1. 4, Փիլ. 1. 3, Ա Թեսաղ. 1. 2, Բ Թեսաղ. 1. 3, Ա Կորնթ. 6. 19 և այլն:

Պապիրուսների և խեցեբեկորների բնագրերը չափազանց արժեքավոր են, քանզի այդ ժամանակվա մարդկանց կյանքի բոլոր ոլորտների՝ ազգակցական կապերի, երեխաների դաստիարակության, կրոնի, հարկադրման համակարգի, աշխատանքի, սննդի, հագուստի և այլնի մասին մանրամասն տեղեկություններ են բովանդակում: Մենք իմանում ենք, թե ինչպես էր կատարվում բնակչության մարդահամարը (վերն արդեն խոսել ենք այդ մասին), դաստիարակի գործունեության (ինչը լույս է սփռում առաքյալի՝ Գաղատացիների թղթում գործածած բառերի վրա (Գաղ. 3. 24)), ստրկության նշանակության, փրկագնի և ազատ արձակելու մասին. այսինքն՝ կարող ենք ավելի լավ հասկանալ և ստույգ մեկնել առաքելական խոսքերը: Պապիրուսներում հե-

1 Հանգամանալից տես **Cobern C. M.** The New Archaeological Discoveries and Their Bearing upon the N. Testament. P. 30.

տևյալ բառերի ենք հանդիպում. ἀπαρχή («պտուղ»), որ օգնում է հասկանալ Հռոմ. 8. 23–ի իմաստը[1], ἐρωτῶ (այսինքն՝ «աղաչել») այն իմաստով, որը ծանոթ է մեզ Ղուկ. 11. 37–ից և Ա Թեսաղ. 4. 1–ից, Κύριος (Տեր)*՝ իբրև աստվածային տիտղոս, ἀρραβών՝ (առհավատչյա**) այն իմաստով, որը գործածված է Բ Կորն թ. 1. 22, 5. 5 և Եփես. 1. 14–ում, ἀπέχω Մատթ. 6. 16–ի իմաստով (այսինքն՝ «ստանալ»), σφραγίζω այն նշանակությամբ, ինչպիսին որ ըստ Հռոմ. 15. 18–ի է*, ἀτάκτως՝ ըստ Բ Թեսաղ. 3. 11–ում գործածված նշանակության**, ὑποπιάζω նույն իմաստով, ինչ Ղուկ. 18. 5–ում է և այլն[1]:

Հնագետ Թոմպսոնը, այս հարցի քննությունն ամփոփելով, գրում է. «Սուրբգրային բնագրերի, ոչ սուրբգրային պատմության ու հնագիտական գյուտերի զարմանահրաշ զուգորդումն այնքան արգասաբեր էր, որ այժմ միանգամայն լավատեսորեն կարող ենք ապագային նայել: Երկար դարերի աշխատանքի հնարավորություն է կանխատեսվում»[2]:

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՋԱՏԱԳՈՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ունենք ընդամենը մի որոշ քանակի հնագիտական պեղածոներ քննեցինք, որոնք հավաստում են, որ Աստվածաշնչում նկարագրված անցքերը հիրավի եղելություններ են, իսկ անձինք ու աշխարհագրական անունները՝ հիրավի իրական: Տե՛սանք, թե ինչպես են մեկնաբանվում Ծննդոց գրքում տեղ գտած դեպքերը, որոնց արժանահավատությունը որոշ գիտնականների

1 **Moulton J. H., Milligan G.** Vocabulary of the Greek N. Testament. L., 1957. P. 54; **Milligan G.** Here and There Among the Papyri. L.,1923. P. 94 ff.

* Ըստ Հր. Աճառյանի Արմատական բառարանի՝ այս բառից է մեր կիրակին՝ շաբաթվա առաջին օրը, որ նշանակում է՝ Տերունական կամ Տերունի, այսինքն՝ Տիրոջը նվիրված օր:

** Հայերեն բնագրերում «այդ իսկ են»:

* Գրաբարում «կնքեալ»:

** Գրաբարում «ստահակութեամբ», որ «անկարգություն» իմաստն ունի:

6 **Thompson J. A.** Op. cit. P. 431-441; Free J. P. Op. cit. P. 293-294.

7 **Thompson J. A.** Op. cit. P. 442.

կողմից վիճարկվում էր, թե ինչպես են հաստատվում Ելից, Հեսու Նավե, չորս Թագավորությունների և երկու Մնացորդաց գրքերի, ինչպես նաև մարգարեների քարոզչական գործունեությանն առնչվող բազմաթիվ այլ եղելություններ: Իմացանք, թե ինչպես են լուսաբանվել նորկտակարանյան ժամանակներում տեղի ունեցածներն ու այդ դարաշրջանում ապրած անձանց ինքնությունը, թե ինչպես են հնագիտական հայտնագործությունները դեն նետել ու հերքել ռացիոնալիստների և Սուրբ Գրքի՝ այսպես կոչված ժխտական կամ բարձրագույն քննադատության ենթադրությունները:

Թերևս արժե շոշափել իրենց՝ հնագետների մի քանի հատկորոշ բնութագրումներ իրենց իսկ աշխատանքի կարևորության վերաբերյալ: Արդ՝ մենք այստեղ դրանցից մի քանիսն ենք մեջբերելու, բայց համարձակվում ենք հուսալ, որ այդ սակավաթիվ կարծիքները կօգնեն լավագույնս գիտակցելու, թե ինչ է արդեն արել և դեռ ինչ պետք է անի սուրբգրային հնագիտությունը:

Ջոն Հոպկինսի համալսարանի պրոֆեսոր, ականավոր հնագետ Վ. Ֆ. Օլբրայթը գրում է. «Ոչ մի կասկած չկա, որ հնագիտությունն զգալիորեն վավերացրել է Հին Կտակարանի գրքերի պատմականությունը»[1]:

Ելյան համալսարանի պրոֆեսոր Միլլար Բարրոուզը նկատում է. «Ամբողջությամբ վերցրած՝ հնագետների աշխատանքը, անկասկած, զորացրեց Աստվածաշնչի բնագրի հավաստիության նկատմամբ հավատը: Հնագետներից շատերն են փաստել, որ Պաղեստինի պեղումների արդյունքներին իրենց ծանոթությունը սուրբգրային բնագրերի նկատմամբ էլ ավելի մեծ ակնածանք և վստահություն տածելու պատճառ է դարձել»: Եվ շարունակում է. «Հնագիտությունը շատ դեպքերում հերքում է Գրքի ժամանակակից քննադատների ենթադրությունները: Ի հայտ է բերում, որ նրանց կարծիքները խարսխված են սխալ և իրականության նկատմամբ թյուր ենթադրությունների և բռնազբոսիկ սխեմաների վրա: Այսպիսին է գիտության մեջ հնագիտության իրական

1 **Albright W. F.** Op. cit. P. 176. Մեջբերումս ըստ **Vos H. F.** Op. cit. P. 121.

ավանդը. այդ վաստակը ոչ կարելի է նսեմացնել, ոչ էլ նվազեցնել»[1]:

Սըր Ֆրեդերիկ Քենյոնը՝ Բրիտանական թանգարանի նախկին տնօրենը, գտնում է, որ «Հին Կտակարանի այն մասի վերաբերյալ, առ որը XIX դ. երկրորդ կեսին ուղղված էր ջախջախիչ քննադատությունը, արդարացի կլինի ասել, որ հնագիտության փաստերը օգնում են վերականգնել նրա հավաստիության հանդեպ հավատն ու մեծացնել նրա արժեքը, իսկ մեր գիտելիքների ընդլայնումը Աստվածաշունչ Մատյանի գրքերի հոգևոր խորության և այն միջավայրի մասին, որտեղ դրանք ստեղծվել են, վերջին հաշվով այս գրքերի ընկալումն ավելի մատչելի է դարձնում: Հնագիտությունը տակավին իր վերջին խոսքը չի ասել, սակայն եղած արդյունքներն էլ արդեն զորացնում են հավատն առ այն, որ մեր գիտելիքների ընդլայնումից ու խորացումից Սուրբ Գիրքը միմիայն շահում է»[2]:

Իր կյանքի երկարուձիգ տարիները Պաղեստինի պեղումներում անցկացրած ամերիկացի հնագետ Նելսոն Գլյուկն ասում է. «Հարկ է ամենայն որոշակիությամբ հայտարարել, որ ցայսօր ոչ մի հնագիտական պեղածո սուրբգրային որևիցե տեղեկության չի հակասել: Բացարձակապես այն ամենը, ինչ հայտնաբերվել է, ուղղակի, թե անուղղակի հաստատում է Աստվածաշունչ Մատյանում նկարագրված անցքերի պատմականությունը, և հենց այդ պեղածոների միջոցով սուրբգրային բնագրի նկատմամբ առաջացած պատշաճ հարգանքը մերթ ընդ մերթ ապշեցուցիչ հայտնագործությունների է հանգեցնում: Բոլոր այս գտածոները ոչ այլ ինչ են, եթե ոչ Սուրբ Գրքի բովանդակած անհավանականորեն ստույգ պատմական տեղեկությունների ընդարձակ խճանկարի պատառիկներ»[3]:

Թեպետ մեծ է հնագիտության ավանդը Սուրբ Գրքի մասին մեր գիտելիքների ընդլայնման անդաստանում, այդուհանդերձ,

1 **Burrows M.** What Mean These Stones? P. 1,291-292. Մեջբերումս ըստ **H. F. Vos.** Op. cit. P. 121-122.
2 **Kenyon F.** The Bible and Archaeology. P. 279. Մեջբերումս ըստ **Vos H. F.** Op. cit. P. 122
3 **Glueck N.** Rivers in the Desert. N. Y.:Farrar, Straus and Gudahy, 1959. P. 31.

դեռ բավական շատ սպիտակ բծեր են մնում. մենք այնքան էլ շատ բան չգիտենք Մովաբի, Եդոմի, Եգիպտոսի և ուրիշ երկրների, քաղաքների և անցքերի մասին, որոնք տեղ են գտել Սուրբ Գրքում: Անշուշտ, շատ հայտնագործություններ կատարվեցին, որոնք լույս սփռեցին Աբրահամի և նրա զավակների ժամանակների մշակույթի վրա, որը ռացիոնալիստները մի ժամանակ կիսաբարբարոսական էին համարում, շատ բան իմացանք Մովսեսի մասին, ում վերաբերյալ ոմանք հանդգնում էին ասել, թե գրել չի իմացել: Բացի այդ Մեռյալ ծովի պապիրուսները ապացուցեցին Հին Կտակարանի բնագրի հարազատությունը, որից ցայսօր օգտվում ենք: Ցավոք սրտի, պապիրուսների հետազոտությամբ ձեռք բերված արդյունքների մեծ մասը դեռ հասարակայնության սեփականությունը չի դարձել, թեև դրանց հայտնաբերումից ի վեր տասնամյակներ են անցել:

Ավելացնենք, որ սուրբգրային տվյալները, անկասկած, ապացուցում են, որ սուրբգրային աշխարհագրությունն ու տեղագրությունը բացարձակապես արժանահավատ են, որ Աստվածաշնչում տեղ գտած անցքերը ստույգ են անգամ իրենց ամենաանշան մանրամասնություններում:

Այդուհանդերձ հետազոտությունների համար լայն ասպարեզ է մնում: Չիկագոյի համալսարանի Արևելյան ինստիտուտի աշխատակից, ասուրագետ Էդվարդ Կյերն իր «Նրանք կավի վրա էին գրում» խորագրով արդարև հափշտակող գրքում, որը նվիրված է կավե սալիկների և դրանց բովանդակության վերծանությանը, ենթադրում է, որ բաբելոնյան կավե սալիկների 99% տակավին անթեղված է հողում»[1]:

Չիկագոյի համալսարանի Արևելյան ինստիտուտի աշխատակից, պատմաբան, Մերձավոր Արևելքի երկրների մասնագետ Ա. Տ. Օլմստեդը իր մահից ոչ շատ առաջ՝ 1945 թ., ասել է, որ պեղումներից երևան հանված մոտ 500 000 կավե սալիկները դեռ սպասում են իրենց վերծանմանն ու գնահատմանը[2]: Բացի այդ, ըստ

1 **Chiera E.** They Wrote on Clay. P. 233.
2 **Olmstead A. T.** History, Ancient World and the Bible//Journal of the Near Eastern Studies/Published by the Department of Oriental Languages and Literatures of the University of Chicago. T. 2, №1, Jan., 1943. P. 32.

հնագետ Ֆրիի, Պաղեստինում դեռ երկու հարյուր բլուրներ կան, որոնց մեջ ամբողջ քաղաքներ են թաղված, և դրանցից միայն մի քանիսն են հիմնավորապես ուսումնասիրվել: «Մենք դեռ չենք հասել այն փուլին,– շարունակում է Ֆրին,– երբ պեղումներ անցկացնելիս կարող ենք հանդիպել ավելի վաղ պեղումներից մեզ արդեն հայտնի հնագիտական նյութերի: Այս ամենն իմանալով՝ ցնծում ես հնագիտության անդաստանում բացվող հեռանկարներից»[1]:

Պրոֆեսոր Թոմպսոնը Ֆրիի կարծիքին հավելում է հետևյալը. «Շատ տեղերում պեղումներն ավարտված չեն, իսկ որոշ տեղերում դեռ սկսված էլ չեն: Եթե նախորդ արշավախմբերն այսքան հետաքրքրական արդյունքներ տվեցին, ապա ի՞նչ կարող է մեզ սպասել ապագայում»[2]:

Բացի վերը նշված այս ամենից, մինչև վերջ չպարզված քումրանյան պապիրուսների խնդիրը դեռ մնում է: Դրանց միայն ոչ մեծ մասն է հետազոտված. հիմնական ուսումնասիրությունները, որոնք շատ ժամանակ կպահանջեն, դեռևս առջևում են:

Նախքան սույն գրքում վերջակետ դնելը, կցանկանայի ընդգծել ամենակարևորը, որը երբեք չպետք է մոռանա նրա ընթերցողը. Սուրբ Գիրքն աստվածաշունչ է* և ո՛չ հնագիտությունից, ո՛չ էլ մարդկային գիտելիքի որևիցե այլ բնագավառից իր ճշմարտացիության, հարազատության և արժանահավատության հաստատում չի ակնկալում:

Սըր Ֆրեդերիկ Քենյոնը գրում է. «Ըստ իս՝ այն ճշմարիտ և իրապես կարևոր բանը, որ կարող ենք ասել հնագիտության մասին, նրա՝ Սուրբ Գրքում ասվածի ճշմարտացիությունն ապացուցելու կարողությունը չէ, այլ նրա իմաստի պարզաբանումը... Հնագիտության վաստակը Սուրբ Գրքի ուսումնասիրության անդաստանում նախ և առաջ այն է, որ օգնում է առաջ շարժվել՝ առավելագույնս ըմբռնելով Սուրբ Գրքի և հատկապես Հին Կտակարանի հոգևոր խորությունները... Իր սահմանները մշտապես ընդլայնող գիտելիքի խնդիրը Հին Կտակարանի գրքերի հեղինա-

1 **Free J. P.** Op. cit. P. 340
2 **Thompson J. A.** Op. cit. P. 443.
* Այսինքն՝ Աստծո շնչով գրված՝ գրաբարում՝ աստուածաշունչք՝ ըստ Բ Տիմ. Գ. 16-ի:

կության հաստատումն է՝ դրանց իմաստի բացատրությամբ հանդերձ: Երբեմնի այնքան ավերիչ քննադատությունը ներկայումս, ճիշտ կլինի ասել, պաշտպանական դիրք է բռնել, և յուրաքանչյուր մարդ այժմ կարող է ուսումնասիրել Աստվածաշունչը՝ վստահ, որ ինչ էլ դեռ մտադրվի ասել արդի գիտությունը, Աստծո խոսքն ընդ մեզ է հավիտյան»[1]:

Նույն տեսակետն է արտահայտում նաև Օլբրայթը. «Չնայած որ հնագիտությունը ճշտում է հինավուրց Պաղեստինի պատմությունն ու աշխարհագրությունը, ի զորու չէ Իսրայելի հավատքի մեծ հրաշքը բացատրել. հրաշք, որը եզակի է համաշխարհային պատմության մեջ: Ընդ որում հնագիտությունը կարող է անգնահատելի օգնություն ցուցաբերել՝ այդ հրաշքը տրամաբանական փաստարկներով հաստատելու այն մտածող մարդկանց համար, ում տեսադաշտը լոկ նեղ նյութապաշտական՝ մատերիալիստական նկատառումներով չի սամանափակվում»[2]:

Այսպես՝ Սուրբ Գրքում ավանդվածի մեծ մասը, որը կազմում է նրա աստվածաշունչ բնագրի իմաստը, չի կարող ոչ մի հնագիտական վկայություններով ստուգվել և իրեղեն ապացույցներով հաստատվել: Այդ ամենը հավատքի հարց է: Նման հարցերում հնագիտությունն էլ, ցանկացած այլ գիտություն էլ անզոր են օգնելու: Մեր հոգու թշնամին խտրություն չի դնում միջոցների մեջ՝ Սուրբ Գրքի բովանդակության կապակցությամբ մեր մեջ անհավատության և կասկածի սերմեր ցանելու համար: Այդ իսկ պատճառով մենք էլ, հետամտելով պահպանել խոր ու անսահման հավատն առ այն, որ Սուրբ Գիրքը Աստծո խոսքն է և աստվածաշունչ է, օգտագործում ենք գիտության՝ մեզ ընձեռած բոլոր միջոցներն ու բոլոր ապացույցները, որպեսզի վկայենք, որ ամենաչար սատանան ու նրա արբայնակները միշտ ստում ու զրպարտում են:

Այսպես, հավատացյալը, օգտագործելով ոչ սուրբգրային աղբյուրների փաստարկները, զորացնում ու հաստատում է իր հավատն առ այն, որ Աստվածաշունչը աշխարհի միակ և կատար-

1 **Short A. R.** Op. cit. P. 59.
2 **Albright W. F.** Op. cit. P. 255.

յալ ճշմարտությունն է, որ Տեր Հիսուս Քրիստոսը, Ում մասին որ է Սուրբ Գիրքն իր առաջին իսկ էջից մինչև վերջինը, «ճանապարհը և ճշմարտությունը և կյանքն» է (Հովհ. 14. 6), և շարունակում է ընթանալ իր շավիղներով՝ լավատեսությամբ և ուրախությամբ համակված: Նմանապես հավատացյալը արիաբար պայքարում է աստվածամարտ, հակաքրիստոնեական և մարդատյաց ուժերի դեմ՝ օգտագործելով իր ունեցած բոլոր միջոցները:

Ահա սա է Սուրբ Գրքի ուսումնասիրության անդաստանում հնագիտության մեծ և նշանակալի ավանդի երախտիքը:



ՀԱՎԵԼՎԱԾ


Ա
Բ
Գ
Դ
Մեծ ծով (Միջերկրական)
Տյուրոս
Հերմոն լեռ
Իսրայելը Նոր Կտակարանի ժամանակաշրջանում
Փիլիպպոս Կեսարիա
ԻՏՈՒՐԵԱ
Պտողեմայիդա
Բեթսայդա
ՏՐԱԽՈՆԻՏԻՍ
Կանա
Գենեսարեթ
Մագդալա
Գալիլեայի լիճ
Սեփորիս
Տիբերիա
Նազարեթ
ԳԱԼԻԼԵԱ
Գադարա
Նային
ԴԵԿԱՊՈԼԻՍ
Սկյութոպոլիս
Կեսարիա
Այենոն (Երուսաղեմի մոտակայքում)
Սամարիա
Գերասա
Սյուքար
Գարիզիմ լեռ
Հորդանան գետ
Անտիպատրիս
Հոպպե
ՍԱՄԱՐԻԱ
ԲԵԹԵԼ
Լյուդդա
Երիքով
Երուսաղեմ
Բեթփագե
Բեթանիա
Ամորհորդանանյան Բեթանիա
Ազոտոս
Բեթլեհեմ
Հորդանան գետակ
ՀՈՒԴԱ
Սոդերոս (բանտ)
Գազա
Մեռյալ ծով
Մասադա
ՆԱԲԱԹԵԱ
ԻԴՈՒՄԵԱ
1 Հուդա, նեղոմեական նահանգ
2 Գալիլիա և Բերեա. Հերովդես Անտիպասի թագավորությունը
3 Փիլիպպոսի չորրորդապետությունը
0 10 20 30 40 կմ
0 5 10 15 20 25 մղոն

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ*

Ագաբ Շմիդտ-189
Աբա(մ)րամ-71
Աբարգի-63
Աբդ-323
Աբդի-323
Աբել-28
Աբենրայիմ-219
Աբեսաղոմ-85, 104
Աբեսսա-149
Աբեսսա-89
Աբիբահաղ-223
Աբիմելեք-184, 185
Աբովյան Խ.-42
Աբուրհան-72
Աբրահամ (Աբրամ)-13, 19, 37, 47, 58, 59, 60, 62, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71,72, 73, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 84, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 96, 98, 101, 102, 103, 104, 105, 106, 109, 110, 111, 112, 156, 159, 160, 170, 173, 210, 272, 273, 309, 478
Ագաբոս մարգարե-426, 427
Ագաթանգեղոս-288
Ագար-80, 81, 82
Ադադ դիք-249
Ադադ-Նիրարի-230
Ադամ-25, 55
Ադոնիա դիցուհի-414
Ադրամելեք (Ադադ-Միլքի) դիցուհի-248, 256, 275
Ադրիանոս-293, 370, 406, 414, 456, 461, 462, 471
Ազայել-219, 226, 227, 228, 229
Ազուր-251
Աթենաս-460
Աթրահատ-47
Ալան Գարդիներ-144, 245
Ալան Ռոու-196, 197
Ալեքսանդր Մակեդոնացի կամ Մեծ-294, 295, 316, 328, 333, 334, 335, 339, 341, 349, 350, 405, 416, 447
Ալեքսանդր Յաննեոս-351, 352, 375
Ալեքսանդր Պոլիգոստորոս-295
Ալեքսանդրիա-376
Ալլենբի-78
Ալկայոս-295
Ալֆրեդ Տրոբետտի-52
Ակյուղաս-437, 438
Ահարոն Սմիթ-45
Ահարոն-125, 137, 149, 354
Աղա Հուսեյն-41
Աճառյան Հրաչյա-475
Ամազիս (Յահմոս)-137
Աման-194
Ամասիս II (Ամոսիս կամ Ահմոսիս)-286
Ամարփաղ-97, 99, 100
Ամբակում մարգարե-293, 357
Ամենհոտեպ II-135
Ամենհոտեպ III-204
Ամենոփիս III-158
Ամենոփիս IV (Ամենհոտեպ կամ Էխնաթոն)-158, 171, 172
Ամիլ-Մարդուկ-296
Ամհոսիս I (Ամոսիս, Ամասիս)-129
Ամմոն-321, 323
Ամոն-147, 149, 181, 218, 311
Ամոս մարգարե-111, 230, 231, 232
Ամպղիա-469
Ամրի-202, 214, 219, 220, 221, 222, 223, 245
Անաթ-163
Անանիա (Հանան)-317, 333, 390, 452
Անգե մարգարե-312
Անդրեաս Կրետացի-141
Անիտտու-98
Աննա սուրբ-420, 452, 457
Անտիգոնոս-376
Անտիոքոս I Սոտեր-345, 461
Անտիոքոս III Մեծ-340, 350
Անտիոքոս IV Եպիփան-344, 347
Անտիոքոս V Եվպատոր-347
Անտիոքոս VII Սիդեթ-351
Անտիոքոս VIII-350
Անտիպատրոս-375, 376
Անտոնիոս Ֆելիքս-394
Անտոնիոս-432
Աշշուր-214
Աշշուրբանիպալ-242
Աշուրբանիպալ (Սարդանապալ)-12, 20, 24, 35, 277, 278
Աշուրնասիրպալ-214
Ապեղես-469
Ապիփա-391
Ապոլլոն-443, 461
Ապոլլոֆանոս-343
Ապպիոն-115
Ապսուն-20, 26
Ապրիես-367
Առան-59, 68

** Կազմող՝ Հ. Նիկողոսյան*

Ասա-217, 219, 245
Ասանեթ-120, 125
Ասարհադոն (Ասսորհադդոն)-256, 257, 260, 275, 277, 278, 311
Ասենափար-277
Ասենափար-311
Ասեր (Ասրային)-72, 182
Ասերա-154
Ասթինե-335
Ասկլեպոս-460, 461
Աստարտ (Աստարտա, Իշտար)-163, 195, 196, 197, 226, 233, 245, 292, 305, 444
Աստված-7, 8, 9, 10, 11, 15, 22, 24, 27, 28, 39, 45, 48, 49, 52, 54, 55, 59, 65, 80, 81, 82, 85, 87, 102, 103, 106, 109, 120, 132, 134, 137, 138, 139, 141, 142, 143, 145, 147, 151, 156, 157, 158, 159, 161, 162, 165, 166, 169, 170, 177, 178, 181, 182, 187, 191, 194, 204, 206, 216, 218, 222, 223, 226, 227, 230, 232, 233, 234, 244, 247, 255, 256, 261, 268, 272, 275, 280, 282, 283, 286, 288, 293, 305, 305, 307, 313, 321, 325, 333, 354, 371, 378, 382, 383, 406, 429, 436, 450, 462, 463, 464, 465, 466, 474, 480
Աստվածածին-141
Աստրյուկ-11
Ատտալոս II Փիղադեղփի-464
Արամ-219
Արարիչ-19, 39, 109, 141
Արետաս IV-416, 417
Արետաս-381
Արթասասթա-316
Արիանոս-335
Արիոպագոս-435
Արիոք (Արիուք)-97, 100
Արիստարքոս-448
Արիստեոս Ալեքսանդրացի-341
Արիստոբուլոս II-376, 381, 383
Արծրունիներ-256
Արնա-241
Արսիս (Նարսիս)-316
Արտաշես (Ախաշվերոշ, Ասարսոյեր, Արսասես, Արսաաս, Արտաքսերքս, Ասսուիր)-315, 335, 463
Արտաքսերքս I-315, 316, 317, 329, 332
Արտաքսերքս II-316
Արտաքսերքս III-316, 317, 318
Արտեմիս դիցուհի-444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 458, 462, 463
Արրիգիուք (Արրիգուք)-97
Արփաքսադ-55
Աքաաք-202, 214, 221, 222, 223, 224, 225, 226, 227, 228, 230, 237
Աքազ (Իոաքազ)-216, 236, 237, 247, 248, 249
Աքիման-184

Բաաս-217, 219
Բաթուել-79
Բահաղ-84, 153, 154, 163, 164, 165, 170, 189, 222, 223, 224, 226, 227, 246, 260
Բաղդան-257
Բաղդասար-294, 295, 296, 298, 299, 300, 301, 304
Բաուեր-370
Բաուր Ֆ. Կ.-419
Բառնաբաս-427, 431
Բարթոն Գ. Ա.-120
Բար-Կոխբա-471
Բարսաբա (Հովսեփ)-392
Բարտոն Ջորջ Ա.-155
Բարրոուզ Միլլար-127, 154, 188, 220, 250, 300, 476
Բեբի-123
Բեդի-123
Բեթթեն-388
Բել-35
Բելլ Հ. Ի.-371
Բեյդ Վ. Ֆ.-104
Բենադադ-226
Բեն-Ամոն (Ուն-Ամուն)-311
Բենիամին բար Իոնա-293
Բենիամին-72, 176, 177
Բերենիկե-383
Բերիթ-184, 185
Բերոսոս-281, 295
Բերոսոս-41
Բիլալամա-151, 152, 154
Բիր-Ռակեբ-232
Բլիսս-259
Բոոս-83, 104
Բոտտա Ժ. Պ.-12
Բուրուշխաթումի-98
Բրացիոտիս Պ. Ի.-59, 342, 466, 467, 468
Բրյուս Ֆ. Ֆ.-423
Բրուտոս-431, 432

Գաալյահ Կորնֆելդ-211, 408
Գադ-182, 234
Գալեն-461
Գաղիոն-439, 440
Գամարիա-269

Գայ Պ. Լ. Օ.-201, 202
Գայիոս Վիբիոս-424
Գայիսոն-448
Գասմի-323
Գարնսթագ Դ.-404
Գարսթանգ-174, 175
Գեդդ Ս. Ի.-263, 276
Գեդեոն-184, 186, 187, 188
Գեզա Վերմես-358
Գեսամ (Գեշեմ, Գուսամ) Արաբացի-321, 323, 324, 325
Գիգլամեշ-23, 24, 31, 35, 36, 37, 38, 39, 40, 46, 47, 56, 57, 278
Գիրիգոր Տաթևացի-8
Գնունիներ-256
Գոթողիա-246
Գոռ-232
Գոտլիբ Շումախեր-217
Գորդոն Լաունդ-201
Գուդեյա տիրակալ-310
Գույյա-83
Գուրոբ-472
Գրենֆելլ-472
Գրետա Խորտ-138, 139, 141

Դագոն-84, 153, 154, 180, 188, 189, 195, 196, 197
Դայսման Ադոլֆ Դ.-439, 474
Դան-182
Դանիել մարգարե-281, 282, 288, 289, 290, 291, 294, 295, 296, 297, 299, 301, 302, 303, 304, 340, 359
Դավիթ Ն. Ֆրիդման-211, 408
Դավիթ-104, 149, 150, 182, 186, 192, 193, 194, 195, 198, 199, 230, 376, 380, 398
Դարեհ I-310, 312, 313, 314, 315
Դարեհ I-336, 337
Դարեհ II-315
Դարեհ III-316, 339
Դարեհ Մարի-302, 303
Դեբորա-184
Դելայահ (Սանաբալատ II)-333
Դելայահ-321
Դեմետրիոս I Սոտեր-351
Դեմետրիոս-445, 448
Դինոկրատես-447
Դիոդորոս Սիկիլիացի-89, 90, 107, 166, 274
Դիոն Կասսիոս-426, 432
Դիոնիսիոս-460, 463
Դիոպետեոս-450
Դյակոնով Ի. Մ.-54
Դյուպլեսս Ե.-374
Դոսիթեոս-408
Դուգերտի Ռ. Պ.-300
Դուդու-120
Դումուզ (Թամմուզ)-56, 57
Դրուսիղա-453

Եբեր-55
Եզեկիա թագավոր-32, 249, 250, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 260, 261, 274
Եզեկիել մարգարե-279, 280, 281, 282, 283, 284, 285, 304, 333, 334, 335
Եզրաս-125, 240, 277, 305, 307, 309, 310, 311, 312, 313, 315, 316, 317, 323, 327, 328, 331, 365
Եթան-194
Ելիասիբ-332
Եղա-238
Եղիա մարգարե-214, 222, 226, 252
Եղիազար-81, 341
Եղիակիմ (Հովաքիմ, Հովակիմ, Հեքոնիա, Հոաքիմ, Իհոքիմ, Հաուք, Հաքինու, Յահուդու)-264, 265, 266, 267, 269, 279, 282, 285, 289, 297
Եղիբահաղ-223
Եղիսաբեթ-390, 455
Եղիսե մարգարե-222, 227, 252
Ենոս-55
Ենոք (Հանոխ)-58
Եպիփան Կիպրացի-53
Եսայի մարգարե-7, 8, 9, 215, 236, 241, 247, 249, 250, 251, 252, 255, 256, 258, 260, 273, 275, 293, 307, 358
Եսավ-82, 375
Եսթեր-330, 331, 335, 337, 338, 357
Եվա-25
Եվիլմարոդաք (Ամիլ-Մարդուք)-289, 290
Եվիլմարոդաք-264
Եվսեբիոս-59, 343, 426
Երաստոս-441, 442, 469
Երեմիա մարգարե-111, 181, 189, 262, 267, 268, 269, 270, 271, 272, 279, 280, 285, 286, 287, 288, 296, 304, 329, 330, 331
Երմաս-469
Եփրոն Քեթացի (Քետացի)-71, 77

Զաբուղոն (Զաբիղանին)-72
Զակքեոս-413
Զաքարիա մարգարե-312
Զաքարիա քահանա-419
Զելլին-185
Զենոն-321, 322, 340
Զևս-403, 431, 460, 461

Զինոդոր-425
Զորոբաբել-308, 312

Էա աստված-35
Էբերս-118
Էդվարդ Գ. Աչեսոն-134
Էդվարդ Կյեր-478
Էդվարդ Մեյեր-312 , 454
Էթնարքոս-376
Էլ-224
Էնգբերգ Ռ.-128
Էնիլ դից-35
Էն-մեն-բարագեսի-56
Էն-մեն-լու-աննա-56
Էռնստ Ռայթ-170, 205
Էվպոլիմ-342
Էտանան-56

Թալմի-184
Թամար-80
Թանթանա-312, 313
Թարա-59, 62, 67, 68, 73
Թարգաղ-97, 98
Թեթմոզիս (Թութմոս I)-137
Թեյլոր Ջ. Է.-60, 255
Թեոդոտիո-391
Թեոդոտոս-388, 389
Թեոդորետոս Կյուրացի-86, 87
Թեոփիլոս Անտիոքացի-41, 137
Թեոֆիլ Գ. Ֆինչես-299
Թի-91
Թիամաթ (Թիամթա, Թամթու)-20, 25,26
Թիգլաթ-պալասար III
(Թագղաթփաղասար,
Թգլատպալասար, Փուա կամ
Փանոք)-215, 233, 234, 235, 236,
237, 238, 242, 247
Թիգլաթ-պալասար IV-211
Թիլ-281, 282
Թոմպսոն Ջ. Է.-75, 76, 85, 141, 157,
161, 164, 166, 167, 171, 176, 187,
194, 196, 202, 203, 212, 216, 223,
224, 226, 227, 249, 280, 285, 296,
302, 307, 308, 311, 322, 324, 331,
332, 333, 342, 350, 358, 360, 385,
389, 390, 392, 393, 400, 402, 404,
409, 412, 415, 417, 423, 430, 431,
433, 442, 454, 456, 457, 475, 479
Թոմպսոն Ռ. Քեմբել-60, 62, 273, 275
Թուդխալիա (Թութխալիյասա)-99
Թուդխալիա I-100
Թուդխաղ-97
Թութանհամոն-113, 204
Թութմոս III-118
Թութմոս III-135
Թուլլոհ-145
Թուկիդիդես-12
Թուկիդիդես-372
Թուփկիտիլլա-82
Թրեմբելաս-425
Թրեջելզ-368

Ժան դե Ռիկ-45

Իբարտուտու-56
Իզիդա դիցուհի-232, 470
Իլիչ-Սվիտիչ Վ. Մ.-54
Իսահակ-72, 76, 77, 79, 83, 84, 101,
102, 157, 158, 159
Իսմայել-81, 82
Իսրայել-85, 125, 130, 134, 168, 354
Իվանով Վ. Վ.-54
Իրադ (Գայերիդադ)-58

Լաբան-64, 70, 80, 82, 173
Լաբասի-Մարդուկ-297
Լաբյունետոս II-297
Լայն Դ. Գ.-223
Լանգդոն-38
Լեման Մ.-77
Լենտցեն Հ.-305
Լիա-77, 80, 82
Լիպիտ-Իշտրա-74, 151, 153, 154
Լյաշեվսկի-40
Լյուդովիկոս-11
Լյուսանիաս-381, 420, 424, 425
Լոկ-11
Լոպուխին Ա. Պ.-58
Լուկիաս-443
Լուկիոս Հունիոս Գաղիոն (Լուկիոս
Հունիոս Աննոս Նովատ
Գաղիոն)-439, 440
Լուկիոս Սերգեոս Պողոս-427, 428, 454

Խադիր-323
Խամսին-140
Խան-Ալլաթ դիցուհի -324
Խոգարդ Դ. Գ.-444
Խոուսոն-429
Խուր-121
Խուր-127

Կաիստրայի գետաբերան-443
Կալիգուլա-379, 381, 382, 383
Կամբյուսես-310, 312, 325
Կայգեր-243
Կայեն (Գեսամի որդի)-324
Կայեն-28, 29, 30,

Կայիափա-420, 457
Կայլ Մ. Գ.-105, 107, 144, 145, 169, 249, 265
Կայնան-55
Կանաա-266
Կանդակա-452
Կառլ II-369
Կարստեն Պետեր Թիդ-417, 418
Կեդար-209
Կելսոն Դ. Լ.-413
Կիբելա դիցուհի-459, 463
Կլավդիոս Ռիչ-12, 41
Կլարենս Ս. Ֆիշեր-196, 201, 223, 226
Կլերմոն Գաննո-387, 391
Կլերմոն Գանո-221
Կղեմես Ալեքսանդրացի-23, 421
Կղոդեոս-426, 427, 438, 440
Կյաերս Խ.-181
Կյերան Արևելյան-75
Կյուրենիոս-419, 420, 421, 422, 423
Կյուրոս Մեծ-59, 295, 298, 301, 303, 304, 305, 306, 307, 308, 310, 312, 313
Կոդեր-294
Կոնիբիար-429
Կոնստանդին Մեծ-414
Կոռնելիոս-411
Կոստանդին ֆոն Թիշենդորֆ-368, 369
Կուպեր-102
Կուսպիոս Փուդաս-427
Կուրպազախ-82
Կրաելինգ Գ.-303
Կրոուգոր Ջ. Բ. -223
Կրոուֆտ Ջ.-231

Հաթշեփսուտ-91
Հակոբ (Հակուբիլին)-72
Հակոբ Մծբնացի-46
Հակոբ նահապետ-64, 70, 72, 76, 77, 80, 82, 83, 84, 85, 114, 115, 117, 123, 124, 127, 149, 150, 158, 159, 173, 375, 452
Հակոբ-խուր-127
Հակոբյան Պ.-42
Հակոբոս-382, 384
Հակուուբին-265
Համան-335, 338
Համմուրաբի(Համուրապպի)-50, 66, 74, 75, 80, 90, 97, 99, 100, 103, 151, 152, 153, 154, 155, 157
Հանտ-472
Հաու-294
Հաուպերտ-269
Հարրոու Դանկան Ջ.-320
Հեզաբել-221, 222, 223, 224, 225, 227
Հեղի-191
Հենրի Լեյարդ-12, 228, 253, 273
Հենրի Կրեսուիկ Ռոուիլսոն-12, 295
Հենրի Ռոուիլսոն-314
Հենրի Օ.-100
Հենրի Ֆրանկֆորտը-30
Հենրիխ Ե.-305
Հենրիխ Լենզե-24
Հենրիխ Հայնե-9
Հեու-227, 228, 229, 230
Հեսու քահանայապետ-312
Հեսու-7, 70, 126, 173, 174, 175, 176, 181, 187, 190, 214, 221, 264, 279, 476
Հերակլես-327
Հերկուլանիում-472
Հերմես-431
Հերոբովամ I-213, 221
Հերոբովամ I-217, 218, 223
Հերոբովամ II-217, 221, 230, 233
Հերոդոտոս-50, 53, 124, 175, 207, 288, 292, 295, 297, 336
Հերոնիմոս-409, 414
Հերովդես (Մակիմայի որդի)-465
Հերովդես Ագրիպպաս I-381, 382, 383, 384, 410, 413
Հերովդես Ագրիպպաս II-384, 453
Հերովդես Անտիպաս-375, 378, 379, 380, 381, 410, 417, 419, 461, 471
Հերովդես Արքեղայոս-378, 379, 380, 383, 386, 387, 393, 398, 399, 400, 401, 404, 410, 411, 412, 413, 420
Հերովդես Փիլլիպպոս II-378, 379, 381, 382, 383, 406, 407
Հերովդես-159, 318, 351, 355, 374, 375, 376, 377, 378, 379
Հերովդիա-381, 382
Հեքոնիա-264, 267
Հիպպակոս-398
Հնեմիոթեպ-149
Հնեմիոթեպ-92
Հոբ-8, 342
Հոբաբ-160
Հոբաղ-222
Հոբաղ-29
Հոգարտ-472
Հոթոր (Հռագուել)-160
Հոմերոս-372
Հոսափատ-245
Հոսիա-261, 263, 264
Հովաբ-149
Հովաթամ-249
Հովաս-227, 230

Հովարդ Քարթեր-114
Հովաքազ-229, 230, 264
Հովհան Ոսկեբերան-9, 48, 86, 407
Հովհաննես I Հյուրկանոս-347, 349, 350, 351, 352, 456
Հովհաննես Աստվածաբան-243, 365, 369, 370, 371, 382, 384, 391, 393, 399, 402, 408, 411, 412, 415, 416, 453, 454, 455, 456, 457, 458, 460, 462, 464, 466, 467, 474
Հովհաննես Կարապետ-381, 420
Հովհաննես Հյուրկանոս II (Հասմոնյան)-352, 375, 376
Հովհաննես Մկրտիչ-419
Հովնաթան-344, 348
Հովնան-273, 332
Հովնանե Բեն Հեզքել-392
Հովնանե-288
Հովսեպոս Փլաբիոս-41, 53, 58, 68, 108, 115, 226, 281, 318, 332, 336, 341, 342, 345, 352, 377, 380, 382, 384, 393, 394, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 422, 427, 436, 450
Հովսեփ-78, 103, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 129, 148, 149, 231, 378, 380, 390
Հորամ-227
Հորացիոս-374
Հորվարդ Ֆ. Վոս-273, 371
Հորտ Ֆ. Ի. Ա.-373
Հորտ Ֆ. Ջ. Ա.-432, 433
Հուդա (Մատաթիայի որդի)-344, 345
Հուդա (Յակուդա)-80, 230, 260, 266, 281, 297, 369, 390, 391, 392, 452
Հուդա Մակաբայեցի-347
Հուլիա-382, 407
Հուլիոս Կեսար-372, 375, 380, 432, 437, 449, 468, 469
Հուղիա-469
Հուստինիանոս-147, 403, 413
Հռութ-83, 104

Ղազարոս-390, 415, 416, 455
Ղամեք (Լամեք)-58, 150
Ղովտ-59, 94, 95, 96, 103, 104, 105, 106, 109
Ղուկաս ավետարանիչ-14, 244, 370, 381, 386, 389, 394, 397, 401, 413, 417, 421, 422, 423, 424, 425, 426, 428, 429, 430, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 443, 445, 446, 448, 449, 451, 452, 453, 454, 470, 475
Ղուկաս Էլլադացի-291

Մաաքա-245
Մագեն Բրոշ-457
Մադիան-160
Մազար Բ.-397
Մաթա (Մաթանիա)-392
Մաթթան-246
Մաթթանիա-269
Մաթուսաղա-55
Մալլոուան Մ. Ե. Լ.-273
Մակ-Այվեր-452
Մակարիոս Երուսաղեմացի-414
Մակդոնալդ Ու. Ա.-439
Մայներցգագեն-78
Մանայեմ (Մենահիմ)-233, 234, 235, 236, 240
Մանասե-234, 260, 261
Մանեթոն-116, 137
Մասեկ-81
Մատաթիա-344, 345
Մատթեոս ավետարանիչ-10, 365, 370, 374, 375, 377, 378, 379, 381, 382, 385, 386, 390, 393 394, 399, 401, 402, 405, 406, 407, 408, 409, 410, 413, 416, 417, 418, 420, 472, 475
Մարդուկ աստված-20, 22, 292, 294, 298, 305
Մարթա-391, 455
Մարիամ (Ղազարոսի քույր)-415
Մարիամ (Մաթայի դուստր)-392
Մարիամ սուրբ-378, 380, 391, 455
Մարիամնա-376, 381, 383, 398
Մարկոս (Բառնաբասի եղբորորդի)-427
Մարկոս ավետարանիչ-370, 381, 382, 386, 401, 402, 405, 406, 408, 409, 413, 415, 467
Մարոդաք Բաղդան -257, 258
Մաքս Մյուլլեր-52
Մեանդրոս-226
Մեթթաանիա (Սեդեկիա)-264, 266, 267, 268, 271
Մելքիսեդեկ-96
Մեղքոմ-260, 263
Մենդելսո ն Ի.-103
Մերի-Ռան-120
Մերնեբթան (Մերնեպտան կամ Միրնբատիհ)-135
Միկ Թ. Ջ.-29
Միշնա-401
Մողոք դիք (Մուղյուք կամ Մաղիք)-248
Մոնթգոմերի-304
Մոնտգոմերի Յ.-212
Մոսա-221, 222

Մովսես (Ք. ա. 1500-1400 թթ.)-153
Մովսես (Ք. ա. մոտ 1450 թ.)-156
Մովսես Խորենացի-12, 31, 215, 256, 288
Մովսես մարգարե-11, 19, 20, 20, 23, 24, 32, 37, 48, 77, 84, 90, 95, 101, 104, 113, 121, 125, 132, 133, 134, 136, 137, 139, 140, 141, 145, 147, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 165, 166, 167, 168, 169, 171, 172, 173, 261, 355, 365, 384, 402, 409, 410, 478
Մուհամադ-ադ-Դիբ-352
Մումիա-437
Մուշեղյան Ա.-31
Մուրթքե-330, 335

Յաբին-184
Յահուդան Ա.-119
Յամին-209
Յանգխամ-121
Յաոշ-270
Յասոն-434
Յասպեր Մասկալին-44
Յիգայել Յադին-175, 202, 237
Յուպիտե-456

Նաբոնիդ-12, 51, 262, 262, 290, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 304, 307
Նաբոպալասար-276, 281, 282
Նաբուգոդոնոսոր II-50, 53, 262, 264, 265, 267, 270, 279, 280, 281, 282, 284, 286, 287, 288, 289, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 302, 303, 304, 305, 309, 311, 318, 334
Նաբուեստր-265
Նայտ-119
Նաշվի-79
Նապոլեոն-12, 135
Նասրաք (Նասրոք)-275
Նավե-173, 174, 176, 214, 279, 476
Նավիլլ-129
Նավում մարգարե-214, 273, 275, 276
Նաքոր-59, 67, 68, 69
Նեբրոթ-53
Նեեմի-309, 310, 312, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 327, 328, 329, 330, 331, 332
Նելսոն Գլյուկ-95, 97, 106, 160, 161, 210, 211, 245, 246, 477
Նեսրաք դիք-256
Ներգեղ Սարասար (Ներգալ-Շարեցեր)-296, 297
Ներիա-269
Ներոն-384, 396, 406, 440, 453
Ներսես Շնորհալի-8
Նեքավով-263, 264
Նիկոլայ II-43
Նիկողայոս Դամասկացի-41
Նինուրտուա-158
Նիրան-323
Նոյ-31, 32, 34, 36
Նուգույա-80
Նուրի-43

Շամաշ-262, 263
Շամշի Ադադ I-102
Շամպոլյոն-12
Շարուհի-149
Շեդեր Հ. Հ-312
Շեմա-217
Շեֆֆեր Կլոդ Ֆ. Ա. -153, 165
Շիղա-434
Շիր Տ. Լ.-441
Շմավոն Մակաբայեցի-344, 348, 351, 390
Շմիդտ Վ.-52
Շուբադ-63
Շուտրուկ-Նախունտ-257
Շպիգելբերգ-244, 245
Շտեյնդորֆ-218

Չարլզ Լեոնարդ Վուլլի-38, 39, 40, 59, 60, 62, 63, 68, 69
Չարլզ Հյուլիտտ-418
Չարլզ Ուիլբուռն-330

Պաբրաս-348
Պանդեմոսյան Աֆրոդիտե-442
Պավսանիաս-107, 293, 435, 436
Պատրոբա-469
Պարույր Սկայորդի-215
Պարրո Ա.-66
Պեդրո Բերրուգետե-192
Պեկիսոս-470
Պենտափրես-112
Պետափրես-117, 118, 120, 125
Պետրոնիոս-435
Պետրոս-369, 382, 384, 402, 406, 408, 409, 452
Պերդիկկոս-349
Պիեռ Կորտեժյանի-136
Պիեռ Մոնթե-130
Պիկսներ-407
Պիղատոս Պոնտացի-380, 381, 382, 393, 394, 400, 412, 419, 455

Պլամմեր Ա.-425
Պլատոն-372
Պլինիոս-421
Պոզներ Գ. -102
Պոլ Էմիլ Բոտտա-242
Պոլիգնոտոս-326
Պողոս առաքյալ-7, 366, 384, 388, 392, 400, 406, 411, 412, 416, 425, 427, 429, 430, 431, 432, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 445, 448, 449, 451, 453, 458, 468, 469, 470, 474
Պոմպեոս-345, 389
Պոչաևցի Ս. Հոբ-40
Պոպիլուս-453
Պոսեյդոն-441
Պորկիոս Փեստոս-384, 394, 395, 453
Պուշկին Ա. Ս.-181, 461
Պսամետիկոս I-286
Պսենամունիս-470
Պտղոմեոս I Սոտերիոս-341, 350
Պտղոմեոս II Փիլադելփոս-322, 340, 341, 343
Պտղոմեոս V-350
Պտղոմեոս-137, 425
Պրիսկիղա-437, 438
Պրիտչադի Ջ. Բ.-79

Ջեկ Ֆինեգան-241
Ջեյմս Էրվին-46
Ջեյմս Լեսլի Ստարկեյ-254, 268
Ջեյմս Ջոնսի-140
Ջոզեֆ Հորներ-234
Ջոզեֆ Պ. Ֆրի-28, 52, 88, 89, 91, 92, 95, 104, 106, 110, 111, 129, 134, 146, 156, 167, 168, 197, 218, 226, 232, 236, 250, 269, 285, 296, 322, 338, 433, 434, 440, 479
Ջոն Թրավեր-250
Ջոն Հոպկինս-476
Ջոն Ուիլսոն-134
Ջոն Ռայլենդս-369, 371, 372, 454
Ջոսեր-93, 122
Ջորջ Ռայներ-223
Ջորջ Սմիթ-51
Ջորջ Քամերոն-314

Ռաբինովիչ Ի.-324
Ռագավ-68
Ռահաբ-174
Ռամա-58
Ռամզես (Ռե տաճարի)-120
Ռամզես II (Սեզոստրիս)-129, 130, 131, 132, 135, 136, 138, 199
Ռամզես III-109
Ռամի Արավ-407
Ռամսեյ Ու. Մ.-419, 420, 421, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 439, 451, 458, 460, 464
Ռայթ Գ. Ե.-410, 411
Ռայմոնդ Պ. Դուգերտի-300
Ռայմոնդ Վայլլի-388
Ռայտ Գ. Էռնստ-185, 348
Ռասոն (Ռեզոն)-236, 236, 237, 247
Ռաքել-64, 80, 82
Ռաֆայել-44
Ռեբեկա-66, 77, 79, 452
Ռենդլ Շորտ Ա.-286, 374
Ռեում Բաալտիմ-331
Ռիմ-Սին-100, 303
Ռիչարդսոն Ռ. Բ.-437
Ռոբերտ Կոլդվեյ-265, 290, 294
Ռոբերտ Մոնդ-330
Ռոբերտս Կ. Գ.-369, 454
Ռոբերտսոն Ա. Թ.-52
Ռոբինսոն Գ. Լ.-218
Ռոբովամ-217, 218, 244, 245
Ռոուլի Գ. Գ.-85
Ռուբեն-234
Ռուդոլֆ Հեբերդեյ-444

Սալահեդդին-403
Սալմանասար (Սաղմանասար III)-214, 228, 229, 239
Սահրա-323
Սաղմանասար V-215, 240, 241
Սաղոմե-381, 382, 383, 391, 455
Սամանասար (Շեշբացար)-308
Սամեր-220
Սամուել մարգարե-190, 191, 192
Սամփսոն-180
Սանաբալատ (Սինուբալլիտ)-321
Սանաբալատ I-333
Սանաբալատ III-333
Սանասար (Շարեցեր)-275
Սանքինիաթոն-108
Սավուղ-191, 194, 195, 196, 197, 198, 279
Սարա (Սառա)-59, 77, 80, 81, 91, 160
Սարասար-256
Սարգոն I (Նարամ-Սին)-62, 262
Սարգոն II -215, 239, 240, 241, 242, 243, 251, 252, 317
Սարդուրի II-31
Սափան-261
Սափիրա-452
Սափիրե-391
Սեբեոս-288

Սեթի I-121, 136
Սեթի II-123, 138
Սելեմյահ-321
Սելևկոս I-345
Սելլասար-99
Սեհոն-70
Սեմ-55
Սենեկա Ավագ-439, 440
Սենեկա փիլիոփա-439, 440
Սենեքերիմ (Սինաքերիբ, Սեննաքիրիմ)-242, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 273, 274, 275, 277
Սենուսերթ-131
Սենտիոս Սատուրն-385, 423
Սեսիլ-330
Սեսոստրիս-22
Սերգիա Պողոս-427, 428
Սերուբ-66, 68, 73
Սեփորա-160
Սթիվենսոն-205
Սիբիլլա-461
Սիդնեյ Սմիթ-300
Սիմոն մոգ-412
Սիմոն-392
Սիմոնս Ս.-405
Սինաքերիբ-211
Սինլիքեուննինի-47
Սինու աստված-305
Սինուհեթ-70, 73, 172, 173
Սիսարա-149
Սկիտ Տ. Կ.-371
Սոկրատես-436
Սողոմոն թագավոր-161, 198, 199, 200, 201, 203, 204, 205, 206, 207, 208, 209, 210, 211, 212, 213, 217, 218, 237, 262, 279, 284, 285, 310, 343, 401, 457
Սոմերս-11
Սովա-239
Սուլուլի-Իշտար-83
Սուկենիկ-250, 391, 408
Սուսակիմ (Շեշենոկ I)-218, 219
Սուսակիմ (Շեշենոկ III)-244
Սուրբ Երրորդություն-27, 37, 49
Սուրբ հոգի-19
Սոփոնիա մարգարե-276
Սոֆոկլես-436
Սպեյսեր Ե. Ա.-25
Սպինոզա-11
Սվետոնիոս-426, 438
Ստաբես-469
Ստերրեթ Ս.-431
Ստև Ա. Մ.-405
Ստեփանոս սուրբ-388, 389
Ստրաբոն-108
Ստրաբոն-428, 429

Վալտեր Մայեր-27
Վակիիդ-347
Վաղոսիս-332
Վայդներ Ե. Ֆ.-265
Վայզման Դ. Զ.-266, 302
Վանսան-456
Վասիլիադիս Ն.-12
Վասիլիադիս Ն.-49
Վացինգեր Ս.-408
Վելլաս Վ. Մ.-115
Վենսան Լ. Գ.-399, 400, 405
Վեսպասիանոս-396
Վերներ Կելլեր-45, 129, 140, 145, 252, 277
Վիբիուս Սալ յուտարիուս-445
Վիլյամ Ռամսեյ-14
Վլադիմիր Ռոսկովիցկի-43, 44
Վոլտեր-11
Վուդ Ջ. Թ.-444, 446
Վուդվորդ Ա. Վ.-441
Վուլու-79

Տաբել-236
Տակիտես-372
Տակիտես-421
Տակիտոս-426
Տատիանոս-137
Տարմիյա-83
Տեր, տես նաև *Աստված*-34, 109, 141, 145, 159, 166, 229, 243, 258, 261, 272, 276, 279, 286, 293, 305, 306, 312, 333, 360, 361, 366, 386, 390, 393, 397, 399, 400, 401, 402, 403, 405, 406, 409, 410, 412, 415, 437, 455, 457, 462, 465
Տերենտիոս-374
Տեր-Միքելեան Արշակ -11
Տիբերիոս Հուլիոս Ալեքսանդր-427
Տիբերիոս-381, 382, 383, 386, 413, 419, 425
Տիմոթես-7, 441
Տիսսեն-467
Տիտոս-319, 394, 395, 396, 397, 401, 471
Տոպորով Վ. Ն.-54
Տուբիա (Տուբիահ)-321 , 322, 323, 346
Տրայանոս-461
Տրդատ թագավոր-288
Տրեմբելաս Պ. Ն.-373
Տրիփոս-469

Տրոյանոս-370
Տրոփիմոս Եփեսացի-388

Ցադոկ-353
Ցերիբահաղ-223
Ցիցերոն-429

Ուեստկոտ Ֆ.-373
Ութ-Նապիլտիմ-31
Ութ-Նապշտիմ
Ուիլյամ Բարկլեյ-458
Ուիլյամ Ֆլինդերս (Ֆլայնդերս) Պետրի-12, 32, 112, 146, 286, 472
Ուլմարոդաք (Եվիլմարոդաք, Եվիլմերոդաք)-296, 297
Ումմանմանդ-98
Ունու-Ամոն-181
Ուորեն Չ.-12
Ուտնափիշտիմ-40
Ուր Նամմու-51, 62
Ուրբանոս-469
Ուրի Նաննար (Նաննան, Նա-ան-նան)-50, 52, 63, 65, 66

Փաաթմովաբ-323
Փակեե-215, 237, 238, 247
Փակեիա-236
Փաղեկ-67
Փասայել-398
Փավստոս Բուզանդ-288
Փեներուզ Հ.-107
Փիլադելփիա-346
Փիլադելփիոս-322
Փիլիպպոս I-382,
Փիլիպպոս առաքյալ-411, 412, 452, 468, 474
Փիլոն Ալեքսանդրացի-342, 394, 451
Փիլոստրատոս-436
Փիղոողոգոս-469
Փիտ Տ. Էրիկ -120
Փիփի I-173
Փսոմփթոմբանե-120

Քալքոլ-193
Քամ-53
Քեդման Լ.-387
Քեթթուրա-160
Քեթլին Քենյոն-157, 271, 318, 319
Քեղքիա-261
Քեմփբել-326
Քիթչեն Կ. Ա.-93, 97, 106, 111
Քինգ Լ.-273
Քինգսբորոուլորդ-175
Քիրամ-199, 206, 208
Քլեյն Ֆ. Ա.-221
Քոդողագոմոր (Քեդորլաոմերոմ)-95, 97, 100
Քոթիլ-209
Քոլ Գ.-408
Քուդուրմաբուգա-100
Քութուչուլուշա I-100
Քուսարսաթեմ-186
Քսենոփոն-295, 430
Քսերքսես I (Ասսուիր)-315, 335, 336, 337, 338, 377
Քրայելինգ-407
Քրեստո-438
Քրիստոս (Մեսիա)-8, 22, 138, 159, 162, 175, 360, 361, 365, 367, 368, 371, 374, 377, 380, 386, 389, 393, 394, 399, 400, 405, 406, 407, 408, 409, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 420, 421, 422, 423, 436, 438, 445, 455, 456, 459, 460, 466, 468, 470, 473, 481

Օգ-70
Օգոստոս Օկտավիանոս-159, 375, 376, 379, 382, 386, 406, 407, 411, 412, 419, 420, 428, 432, 443, 449, 460
Օզիա (Օզիաս, Ազարիա)-230, 233, 246, 247, 249
Օլբրայթ Վիլյամ Ֆ. -15, 73, 76, 92, 99, 103, 105, 121, 125, 129, 130, 132, 143, 144, 150, 153, 169, 174, 177, 178, 183, 184, 188, 189, 192, 193, 194, 195, 196, 198, 200, 205, 212, 223, 240, 245, 250, 265, 268, 272, 285, 288, 302, 305, 309, 312, 323, 327, 331, 343, 366, 384, 388, 389, 400, 419, 420, 456, 476, 480
Օլմստեդ Ա. Տ.-478
Օպենհեյմ Ա. Լ.-102
Օսե մարգարե-230, 238, 239, 240, 260
Օտտո Բենդորֆ-444
Օտտո Եսպերսեն-52
Օրֆալի Գ.-408
Օքոզիա-227, 246

Ֆայֆեր-190, 204
Ֆելիքս-452
Ֆերնան Նավարրա-44, 45
Ֆիլսոն Ֆ. Վ.-410, 411
Ֆիցջերալդ Գ. Մ. -196
Ֆլայնդրես Փեթրի-112
Ֆլորոս-395
Ֆրեդերիկ Քենյոն-370, 371, 477, 479
Ֆրիդրիխ Պարրոտ-42

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբենեզր-189
Աբիլա-416
Աբիլաքք-236
Աբիլենե-381, 383, 420, 424
Աբուսիմբլեյ-135
Ագորա-440, 443
Ազեկա-270
Ազոտ-182
Ազոտոս (Աշդոդ)-188, 251, 252
Աթենք-115, 326, 429, 435, 436
Աթ-Թելլո-407
Ալ-Ազարիա-416
Ալալախ-94, 191, 192
Ալեքսանդրիա-59, 340, 341, 344, 369, 435, 447, 451
Ակրոկորնթոս-442
Ահմեթա-313
Աղե քաղաք-246
Ամառնա-171
Ամերիկա (նախակոլումբոսյան)-31, 38
Ամման-188, 322, 346
Ամմոն-237, 248, 322
Ամմու-89
ԱՄՆ-15, 25, 28, 40, 60, 168, 386, 405, 406
Այասսոլուկ գյուղ-459
Այենոն-456
Այն Հավարա-146
Այնուն-456
Անգլիա-38, 60
Անկարա-71
Անոբ-173
Անտիոք-378, 406, 426, 427, 429
Անտոնիա ամրոց-399, 400
Անտոնիա ամրոց-455, 456
Աշդուդիմմու-252
Աշշուր-68
Ապողղոնիա-436
Ապսու-25
Ասիա-117, 143, 215, 307, 432, 443, 449, 459
Ասկաղոն-248, 345
Ասոր ամրոց-237
Ասոր-112, 175, 184, 237, 284
Ասորեստան-102, 148, 199, 214, 215, 225, 226, 228, 229, 233, 234, 235, 237, 238, 239, 240, 241, 247, 251, 252, 256, 257, 258, 260, 263, 275, 276, 279
Ասորիք-66, 69, 70, 89, 97, 98, 99, 114, 116, 117, 142, 143, 156, 186, 206, 212, 233, 242, 247, 248, 266, 281, 345, 366, 382, 404, 405, 417, 419, 421, 422, 423, 471
Ասուան-122, 330, 452
Ասուանի ամբարտակ-135
Ասուր-200, 201, 202, 203, 206
Ավարիս (Պեր-Ռամզես)-113, 127, 130
Ավդատե-416
Ավետյաց երկիր-99, 155, 159, 173, 213, 279
Ավնանիա-378
Ավստրալիա-31
Ատտիկա-326
Արաբական անապատ-277
Արաբական թերակղզի-416
Արաբիա-246, 300, 301, 323, 324, 325
Արադ-334
Արակ-ալ-Ամիր-322
Արակ-ալ-Էմիրա-346
Արարատ լեռ-40, 41, 42, 43, 44, 48
Արարատի երկիր-256
Արգիշտիխինիլի-31
Արեգ-286
Արևելյան Միջերկրական-53
Արևմտյան Ասիա-148
Արմավիր-31
Արվարդ-266
Արրափխի-68
Արփաչիե-28
Արփաքսադ (Արփախշադ)-68
Արքաների հովիտ-138
Աքաբ-277
Աքաբա ծոց-208, 209
Աքաբայան նեղուց-160
Աքայա-436, 437, 439, 440, 470
Աքքադ-61, 67, (շումերերեն Կի-ուրի)
Աֆրիկա-209

Բաալաթ-203
Բաբ-ադ-Դրա-106
Բաբ-ադ-Դրայ-95
Բաբելոն (Աքքադ-266)-12, 37, 42, 54, 75, 53, 54, 61, 64, 66, 67, 74, 97, 98,

125, 262, 264, 265, 266, 267, 279, 280, 281, 282, 283, 285, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 303, 304, 305, 307, 308, 313, 314, 316, 317, 329, 330, 339, 377, 451
Բաբելոնիա-68, 69, 80, 102, 233, 235, 257, 262, 283
Բադ-տիբիրա-58
Բալթիմոր-15
Բահր Լուտ-108
Բաղդադ-30, 62, 67, 151, 152
Բասրա-60, 255
Բեէղսեպփոն-143
Բեթանիա-415, 416
Բեթել-85, 88, 112, 176, 177, 183, 185, 195, 217, 231, 344, 350, 351
Բեթ-Զուր-328
Բեթղեհեմ-90, 374, 410, 413, 414
Բեթորոն-203, 210
Բեթսամյուս-202
Բեթսայիդա-382, 407, 409
Բեթ-Սան (Սկյութոպոլիս)-345
Բեթսան (Սկյութոպոլիս)-95, 176, 195, 196, 197,198, 218, 416
Բեթսուր (Բեթսուրա, Կիրբեթ-ատ-Տուբակա)-309, 345, 346, 347, 348
Բեթփագե-416
Բեյրութ-378
Բենի Հասան-89, 149, 150, 193
Բեռլին-461
Բերեա-378
Բերսաբե-245
Բերրի մահիկ-277
Բիբլոս-94, 181, 199, 206, 265, 334, 378
Բիրկեթալ-Համրա-319
Բիրս Նիմրութ-50
բլուր, հին Ուր)-60, 297
Բողազ-Քյո-71
Բութանիա-432

Գաբաա-178, 194, 195, 196, 245
Գաբավոն-175, 218
Գադարա-416
Գազա-180, 208, 248, 252, 345
Գազեր (Գազարա)-200, 201, 202, 203, 345, 346, 348
Գալիլիա լիճ-411
Գալիլիա-70, 236, 237, 376, 378, 380, 381, 407, 410, 416, 420, 465, 471
Գաղաադ-237
Գաղատիա-421
Գաղղիա-381, 393
Գամիր (Գամիրք կղզի)-111
Գայի-88, 173
Գանգիտ գետ-433
Գասիոնգաբեր-208, 209, 245, 247, 284
Գարիզիմ լեռ-184, 456
Գեբ ամրոց-330, 332
Գեբաղ-199
Գեթ-231
Գեհոնի աղբյուր-258, 320
Գեղբուա-194
Գենեսարեթ լիճ-408
Գեննեսարեթ լիճ-175
Գեսեմ (Գոսոմ)-126, 127, 128, 131, 154, 172
Գերասա-416
Գերարա-109, 180
Գերզա-321
Գեփ-252
Գիբա ամրոց-219
Գոզա-240
Գողգոթա-399
Գոմոր-95, 103, 104, 106, 107, 109, 293

Դամասկոս-215, 219, 226, 227, 228, 229, 237, 238, 247, 353, 355, 378, 416
Դան-96, 217
Դեդան-323, 324
Դելտա-324
Դելֆի-440
Դեկապոլիս-416
Դեյր-ալ-Բահրի-91
Դեյր-ալ-Մեդինա-138
Դերբե-429
Դիլբաթ-72
Դոբան (Դեբոն)-221
Դուրա-Եվրոպոս-471
Դոփա կամ Ռափա-146

Եգիպտոս-23, 30, 60, 70, 83, 84, 85, 88, 92, 93, 94, 110, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 119, 120, 122, 123, 124, 125, 127, 128, 130, 132, 133, 134, 136, 137, 138, 139, 140, 141, 142, 143, 147, 149, 154, 168, 171, 177, 193, 199, 213, 218, 239, 244, 252, 253, 263, 264, 267, 271, 272,

280, 285, 286, 287, 307, 311, 314, 315, 321, 322, 323, 330, 331, 332, 338, 341, 343, 344, 356, 359, 366, 369, 370, 379, 418, 421, 422, 424, 435, 450, 451, 452, 465, 467, 472, 478
Եդոմ-99, 123, 161, 237, 248, 252, 198, 325, 347, 378, 478
Եզեկիայի թունել-259
Եթովպիա-131, 142, 452
Ելաթ (Ելոթ)-208, 209
Ելոն-218
Եկատերինա վանք-133, 134, 147, 369
Եկբատան-313
Եկրոն (Ակկարոն)-252
Եղիմ-146
Եմաթ Ռաբա-231
Եմեն-209
Ենոմի ձոր-258, 260
Ենոք-28
Եվրոպա-71, 434, 472
Երիքով-95, 134, 149, 173, 174, 413
Երկգետ-69
Երուսաղեմ-15, 32, 43, 77, 78, 88, 104, 200, 202, 203, 204, 205, 210, 213, 217, 231, 237, 247, 249, 250, 255, 256, 258, 264, 267, 268, 269, 271, 272, 274, 275, 279, 281, 282, 283, 284, 288, 306, 307, 308, 309, 310, 311, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 323, 325, 326, 328, 331, 332, 341, 344, 346, 347, 353, 375, 376, 378, 379, 380, 384, 388, 391, 392, 394, 396, 397, 398, 399, 401, 403, 404, 405, 412, 415, 427, 456, 470, 471
Եփեսոս-438, 443, 446, 448, 449, 450, 451, 458, 459
Եփրատ գետ-35, 40, 42, 49, 61, 67, 68, 69, 189, 198, 214, 263, 264, 280, 290, 294, 295, 312, 318, 416, 471
Եփրատի հովիտ-66
Եփրեմի լեռներ-238

Զավիաթ-ալ-Մայթին-340
Զմյուռնիա-459, 460

Էգեյան ծով-110, 111
Էգեյան կղզիներ-111
Էգինա-326
Էդեսսա (ասորերեն՝ Ուրֆա)-68, 69
Էդֆու-340
Էլամ (Ելամ)-97, 98, 100, 102, 257
Էլեփանտին կղզի-122, 287, 288, 330, 331
Էշնուաննա-30, 74, 151, 153, 154
Էջմիածին-42, 46
Էրիդու-56, 58
Էրման Ա.-120

Թադգղում-97
Թամար-203
Թանաք-174, 218
Թանիս-130, 143
Թարա (Թերխա)-68
Թարսիս-209, 210, 245
Թեբե-113, 118, 128, 138, 181, 193, 292, 311
Թեթսամյուս-188
Թել Հերմելեյ-152
Թել-Ասմար-151
Թել-Ավիվ-180, 280, 311
Թելեյլաթ-ալ-Հասսուլի-95
Թելլ- ալ-Մուկղայրե (Ձյութե
Թելլ-ադ-Դուվեյրե-268
Թելլ-ալ-Ամառնա-118, 172, 177
Թելլ-ալ-Էզ (Ավալոն)-202
Թելլ-ալ-Հուսն-196
Թելլ-ալ-Մասկութ-129, 144
Թելլ-ալ-Մասկութ-130
Թելլ-ալ-Մութեզելլիմ-201
Թելլ-ալ-Ռետաբա-130
Թելլ-ալ-Ֆուլ-195
Թելլ-Ակսաս-130
Թելլ-Ակսաս-187
Թելլ-ան-Նասբ-344
Թելլ-ան-Նասբա-326
Թելլ-ան-Նասբիհ-104
Թելլ-Ասմար-30
Թելլ-ար-Ռիմախ-230
Թելլ-Բեյթ-Միրսիմ (Դաբիր)-105, 168, 169, 173, 202, 265
Թելլ-Դեֆենահ-286
Թելլ-Թայնաթ-205, 206
Թելլ-Խում (Թանխում)-408
Թելլ-Կազիլ-180
Թելլ-Կազիլե-311
Թելլ-Կազիլեհ-209
Թելլ-Հասսունա-29
Թելլ-Շեվ-202

Թելլ-Սանդա-Հաննան-343
Թեկուա-231
Թեյմա քաղաք-299
Թեյմա օազիս-298
Թեսաղոնիկե-434, 435
Թերգաղ (Թիդ'ալ)-99
Թեփե-Գավրա-25
Թիմսահ լիճ (Կոկորդիլոսների լիճ)-126
Թիֆլիզ-11
Թյուատիր-434, 461, 462
Թոբել-Կայեն-58
Թուրքիա-40, 43, 44, 46
Թրակիա-339

Իլինոյս-28
Իկոնիոն-429, 430
Իսոս-339
Իսպանիա-210, 418, 421
Իսրայել (Բիթ-Ումրի)-19, 32, 61, 76, 83, 105, 128, 144, 145, 146, 147, 156, 159, 166, 173, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 186, 189, 191, 194, 199, 200, 213, 214, 215, 216, 218, 219, 220, 221, 222, 223, 224, 226, 227, 228, 229, 230, 231, 233, 234, 236, 237, 241, 243, 244, 276, 279, 282, 286, 304, 309, 317, 366, 397, 450, 480
Իտալիա-326, 372, 389, 405, 413, 438
Իտուրացիների երկիր-381
Իտուրիա-378
Իրան-40, 44, 102
Իրաք-48, 50, 67, 68, 69, 230, 275, 322, 366

Լագաշ-310
Լավոդիկե-464
Լատակիա (Լաոդիկե)-378
Լարակ-56
Լարաքա-58
Լարսա-99, 100
Լաքիս-173, 188, 253, 254, 259, 268, 269, 270
Լեբնա-173
Լեյդեն-405
Լիբանան-206, 207, 310, 311
Լիդիա-77, 434, 461, 462
Լիկայոն-429, 430
Լիկոս գետ-464
Լիտվա-31
Լյուստրա-429, 430, 431
Լոնդոն-20, 253, 451
Լուկսոր-136
Լուքսոր-218, 418

Խաթթի երկիր-266
Խամաֆ (Խամաթ)-205
Խառան-59, 65, 66, 68, 69, 72, 79, 87, 88, 102, 277, 298
Խարտում-452
Խորասաբադ-242
ԽՍՀՄ-40, 44

Կադես-144, 171
Կահիրե-45, 89, 113, 136, 149, 287, 330, 343, 451, 472
Կամպանիա-372
Կայեն-58
Կանա (Հիրբեթ Կանա)-410, 411
Կապադովկիա-98
Կապտարա կղզի-112
Կառնակի տաճար-218, 244
Կատնա-98, 102
Կարիաթարիմ-189
Կարիաթ-Զեֆեր (Սեֆեր)-249, 265
Կարմիր ծով-143, 144, 145, 160, 208, 314, 416
Կարքեմիշ-60
Կափառնայում (Կեփար Նաում)-407, 408, 409, 410, 411, 465, 471
Կաֆտոր-111
Կեդար-324
Կեդրոնի հովիտ-258
Կենտրոնական Եգիպտոս-118
Կեսարիա (Պանես)-345, 382, 389, 383, 406
Կիլիկիա-423
Կիպրոս կղզի-153
Կիպրոս-84, 200, 334, 366, 405, 427, 428, 454
Կիրբեթ Կերաք-95
Կիրբեթ-ան-Նահաս-160
Կիրկուկ-68
Կյուրեն-237
Կոկորդիլոսապոլ (Արսինոյա)-472
Կողովնիա-432
Կոպենհագեն-52
Կոստանդնուպոլիս-42, 152, 259, 297, 335, 369

Կորնթոս-436, 437, 438, 439, 440, 441, 442, 443
Կումրան-387
Կուպրե ծով-108
Կուսսարա-98
Կրեսոս-326
Կրետե կղզի-111, 112

Հադաթու-226
Համադան-313
Համաթ Հեդեր-408
Համատ-298
Համմաթ-410
Հայաստան-31, 40, 275
Հարավային Արաբիա-209, 210, 211, 212, 325
Հարավային Եմեն-211, 212
Հարավային Կովկաս-70
Հարավային Միջագետք-69, 87
Հեգրա-323, 324
Հեզրայել հովիտ-196, 227
Հերկուլանի-372
Հերմոն լեռ-383
Հերովդիոն-471
Հիբաթ-հա-Միվտար-392
Հիմալայներ-339
Հին Արևելք-13, 14, 20, 23, 60, 66, 233, 277
Հին Եգիպտոս-114, 117, 120, 121, 122, 124, 127, 128, 135, 146, 148, 168
Հիպպոս-416
Հիրբեթ-ալ-Արաջ-407
Հյուսիսային Եգիպտոս-113, 330
Հյուսիսային Միջագետք-58, 76, 79, 85, 87, 97, 102
Հյուսիսային Սիրիա-84, 143, 153
Հյուսիսարևմտյան Արաբիա-212
Հնդկաստան-31, 126, 209, 340
Հոնիական կղզիներ-326
Հոպպե (Յաֆֆա)-310, 350, 351
Հորդանան-70, 94, 95, 96, 99, 103, 106, 107, 108, 173, 182, 188, 221, 322, 323, 340, 345, 346, 353, 366, 376, 407, 416
Հուդա (Յակուդ)-32, 105, 125, 159, 213, 216, 218, 221, 224, 227, 230, 231, 236, 237, 238, 243, 244, 245, 246, 247, 248, 250, 252, 253, 254, 261, 264, 266, 267, 269, 270, 271, 272, 274, 279, 282, 283, 289, 308, 325, 326, 332, 343, 348, 380, 393, 411, 453
Հուլիաս-382, 407
Հունաստան-14, 291, 314, 337, 339, 366, 426, 436
Հռոդոս կղզի-348
Հռոմ (Հռոմեական կայսրություն)-23, 91, 96, 113, 174, 251, 287, 366, 368, 369, 375, 379, 381, 383, 384, 395, 396, 413, 420, 421, 422, 423, 424, 426, 427, 428, 432, 436, 437, 438, 440, 441, 442, 449, 452, 453, 459, 460, 466, 468
Հրեական անապատ-352
Հրեաստան-243, 246, 285, 306, 309, 321, 340, 345, 347, 374, 375, 376, 378, 379, 380, 381, 384, 393, 394, 411, 419, 420, 427

Ձիթենյաց լեռ-247, 391, 401

Ղեքեոն-438
Ղովտի ծով-108

Մագդող-144
Մադիամ-144
Մադրիդ-45
Մալթա կղզի-453
Մալթա-366
Մակդոդ-330
Մակեդդով-170, 176, 184, 185, 188, 193, 200, 201, 202, 203, 217, 219, 263, 284
Մակեդոնիա-432, 433, 470
Մահերունթ ամրոց-381
Մանչեսթր-369, 454
Մասադա ամրոց-387, 471
Մարաստան-237, 303, 305
Մարեսա (Հեսու)-343, 345, 349
Մարի (Միջին Եփրատ)-66, 67, 72, 79, 93, 97, 98, 102, 103, 111
Մարկոսի Մայր եկեղեցի-33
Մելիտե կղզի-453
Մեմփիս (Սպիտակ պատ)-118, 292
Մեմփիս-91
Մենեփթա-123
Մենզալե լիճ-145
Մեռա-146
Մեռյալ Ծով (Քումրան)-94, 95, 106, 107, 108, 109, 160, 352, 357, 353, 355,

356, 357, 358, 359, 360, 361, 377, 418, 478
Մետրոպոլիա-406
Մերձավոր Արևելք-22, 30, 53, 56, 102, 103, 105, 111, 116, 152, 186, 187, 195, 200, 201, 206, 207, 208, 252, 284, 294, 304, 339, 478
Մեքսիկա-58
Միջագետք-23, 24, 25, 28, 29, 38, 39, 47, 48, 49, 54, 58, 61, 62, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 86, 87, 88, 89, 90, 91, 93, 95, 97, 98, 99, 100, 124, 125, 126, 154, 157, 158, 186, 193, 226, 248, 263, 278, 280, 284, 290, 302, 316, 365, 471
Միջագետքյան Ասորիք-69
Միջերկրական ծով (Միջերկրայք)-88, 98, 108, 165, 200, 208, 209, 286, 310, 314, 326, 334, 366, 411, 412, 426, 436, 443
Միցպա ամրոց-104
Մոդի-344
Մոնրեալ-21
Մոնրեալ-84
Մոսկվա-43, 181
Մոսուլ-242
Մոսուլի շրջան-213
Մովաբ-221, 222, 237, 248, 252, 323, 324, 478
Մորիա լեռ-204

Յամինա-72
Յարմուքի գետաբերան-408
Յորղան-Թեփե-75

Նաբլուս-456
Նաբոթ-224, 225
Նազարեթ-378, 389, 410, 411
Նային-410, 411
Նար-ազ-Զերկա-187
Նաքոր-66, 72, 79
Նաքոր-68
Նեապոլ-339, 341, 447
Նեբի Յունուս բլուր-274, 278
Նեբրովթ (Նեբրոթ)-214, 225, 228, 240, 252, 273
Նեգև անապատ-101, 246, 416
Նեգևի շրջան-245, 246
Նեղոս գետ-122, 126, 139, 140, 141, 142, 171, 287, 330, 340, 472
Նեղոսի դելտա-113, 114, 126, 127, 129, 286, 325
Նեղոսի երկիր-113, 114, 115, 123, 280
Նեղոսյան շեմեր-122
Նեփթաղիմի երկիր-236
Նիծիր լեռ-35, 40, 48
Նինվե-25, 28, 34, 35, 37, 47, 62, 215, 240, 242, 253, 254, 257, 263, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 292, 295
Նիպպուր (Նիֆֆեր)-54, 280, 282, 308, 329, 330
Նյու-Յորք-40
Նուբիա-60, 452
Նուզի (Նուզու)-70, 75, 76, 79, 80, 81, 82, 83

Շոմրոն (Սոմորոն)-240
Շումեր-61, 67, 99
Շուրուպպակ-35, 38, 39, 56

Ոթոմ-143
Ովն-129

Չիկագո-43, 168, 201, 314
Չինաստան-175

Պադեբորն-418
Պալլաս-436
Պալմիրա-465
Պաղեստին-47, 66, 68, 69, 70, 73, 76, 87, 88, 89, 90, 94, 96, 98, 100, 101, 102, 105, 109, 110, 111, 114, 119, 137, 142, 143, 160, 169, 171, 172, 176, 177, 178, 179, 181, 182, 186, 188, 193, 195, 198, 203, 212, 233, 242, 244, 248, 253, 264, 277, 279, 281, 283, 286, 291, 304, 307, 308, 314, 315, 316, 325, 326, 327, 328, 330, 331, 332, 333, 340, 342, 344, 345, 350, 355, 359, 366, 376, 378, 379, 380, 382, 385, 388, 389, 393, 395, 396, 397, 404, 405, 416, 417, 421, 424, 451, 465, 471, 476, 477, 479, 480
Պանարիոն-53
Պանեաս (Բանյաս)-406
Պարսից ծոց-277
Պարսկական նեղուց-38, 99

Պարսկաստան-289, 305, 306, 314, 338, 366
Պափոս-427
Պեղղա-416
Պետրա-416
Պետրոգրադ-43
Պերգամոն-335, 460, 461, 464
Պերգե-428, 429
Պերսեպոլիս-314, 336
Պիոն լեռ-448
Պիսիդյան Անտիոք-423, 428
Պիփոմ-123
Պլատեա-315
Պոլինեզիա-31
Պսիդիա-429
Պտղոմայիդա (Ակքով, Աքրա)-405, 406
Պտղոմեյան-340
Պտողեմայիդա (Ակրա)-378
Պրետորիա-455

Ջաբալ Մուսա լեռ-146
Ջազիրա-67
Ջեբել Աբու Հասան բլուր-144
Ջեբել Մուսա-147
Ջորդանվիլլ-40
Ջուբեյլ-199

Ռագավ-68
Ռամա-190
Ռամեսե (Փի-Ռամսին, Թանիս)-128, 129, 143, 172, 280
Ռաս-Շամրա (հնում՝ Ուգարիթ)- 84, 143, 151, 153, 154, 155, 156, 157, 158, 164, 165, 183, 184, 186, 189, 193, 194, 245, 246, 252, 260
Ռավենա-470
Ռափիդիմ-146
Ռուսաստան-40, 44, 461

Սաբա-210, 211, 212
Սալամին-315
Սալամինա-427
Սակկարա-91, 93
Սաղեմ-456
Սամալ-232
Սամալա-205
Սամարիա (Սեբաստե)-184, 213, 215, 220, 223, 225, 231, 232, 238, 239, 240, 242, 243, 244, 248, 277, 317, 321, 333, 345, 346, 349, 378, 394, 412, 451
Սանտա-Մարիա Մաջորե եկեղեցի-91, 96, 174
Սարդիկե-461, 462, 463
Սարդինիա-200, 210
Սեբաստիա-378
Սելլասար-99, 100
Սենաար-48, 67, 97, 99, 100
Սերաբիտ-ալ-Խադեմ-146
Սերուք-68
Սև ծով-70
Սիդոն (Առան)-214, 229, 378, 405, 406
Սիլով (Սելով)-181, 188, 189, 190
Սիլովամի ավազան-258, 259, 260, 319
Սիկիմ-184, 185
Սինա լեռ (Քորեբ)-133, 134, 142, 144, 146, 147, 151, 152, 157, 159, 170, 171, 369
Սինայական թերակղզի-145, 146, 167
Սինայի շրջան -325
Սինտիմուս (Սիդդիմ)-108, 109
Սիոն լեռ-204, 231, 258, 260, 305, 457
Սիպպար-56, 262
Սիրիա-102, 186, 205, 219, 232, 277
Սիցիլիա-21
Սիցիլիա-418
Սիցիլիա-84
Սյուքար-412
Սյուքեմ-88, 239, 326, 344, 350, 412, 456
Սոդոմ-95, 103, 104, 105, 106, 107, 109, 293
Սոլա-427
Սոկքոթ (Սոքքոթ)-130, 143, 144, 187
Սուեզի ջրանցք-133, 144, 208, 286, 330
Սուզ-153, 289
Սուզա-313
Սուհեն ամրոց-330
Սուսա-75, 313, 314, 336
Սուրբ Երրորդություն վանք-40
Սպիտակ նավահանգիստ-153
Ստորին Եգիպտոս-113, 116, 118

Վադի Գարադել-146
Վադի Քելթի գետ-413
Վադի Ֆարահ (Ֆարահի հուն)-456
Վադի-Թումիլաթ-126, 130, 144
Վադի-Ֆեյրան-147
Վաթանիա-378

Վատիկան-368, 375
Վենետիկ-33
Վերին Եգիպտոս-112, 138, 193, 340
Վերին Երուսաղեմ-159
Վերին Եփրատ-60
Վերին Միջագետք-100
Վիեննա-426, 472

Տաբգաթ-410
Տավրոս լեռ-423
Տափնաս-286, 287
Տիբեթ-31
Տիբեր գետ-413
Տիբերիա-381, 410, 427
Տիգրիս գետ-61, 67, 69, 70, 75, 213, 214, 228, 273
Տյուրոս-199, 206, 208, 214, 229, 230, 333, 334, 335, 405, 406
Տրաքոնացիների երկիր-381
Տրաքոնիա-378

Ուգարիթ (Փյունիկիա)-84, 94, 97, 153, 154, 191, 192,
Ուիտոն-28
Ուր-30, 38, 40, 48, 51, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 68, 69, 79, 88, 272, 292, 297, 305
Ուրարտու (այսինքն՝ Արարատ)-40
Ուրեք-23, 24, 38, 39, 46
Ուրուկ (Օրեխ, Էրեխ)-23, 56, 57, 58, 68

Փաանախ-202
Փարիզ-221, 313, 336, 405
Փեկա-123
Փենով (Ֆեյնան)-161
Փիդոն-128, 280
Փիդոն-129, 130, 131
Փիլիպպե-432, 433
Փիղադեղփիա-416, 463, 464, 465
Փի-Ռամսի-Մերի-Ամոն-131
Փյունիկիա-200, 206, 211, 225, 271, 405
Փոքր Ասիա-14, 47, 70, 77, 98, 102, 277, 314, 366, 405, 423, 426, 429, 430, 443, 450, 451, 463, 465
Փռյուգիա-428, 430, 451, 463

Քաբոր-240
Քադեշ-130
Քաթին-Սառա-431
Քալաք (Քաղան)-214, 228, 231
Քաղա-240
Քաղդեա (Քաղդեացվոց երկիր)-37, 59, 67, 69
Քանան (Քանանացվոց երկիր)-59, 64, 66, 85, 88, 89, 94, 112, 114, 124, 143, 151, 154, 156, 159, 160, 162, 171, 172, 173, 175, 176, 177, 179, 180, 182, 183, 186, 187, 197, 211, 213, 233, 239, 272
Քաշմիր-31
Քարահատակ (Կապպաթա)-455, 456
Քեբրոն-77, 78, 105, 168, 184, 265, 309, 347, 375
Քենազեն-409
Քերմել-208
Քիշ-38, 39, 56, 257
Քոբար գետ-280, 282
Քորազին-409, 411
Քույունջիք բլուր-274, 275, 277
Օկսիրինխոս-472
Օմարի մզկիթ-403
Օրոնտես գետ-94
Օփալ բլուր-388
Օփեր (Օփիր, Սոփեր, Սոփիր-209, 210, 245
Ֆայյում կամ Ֆայյումյան շրջան-433, 472
Ֆայյում օազիս-321, 451
Ֆեյրան կամ Ֆարրան (Սինայի մարգարիտ)-146
Ֆիլադելֆիա-25, 60

Ֆրանսիա-433

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք թարգմանչի 7

Ինչ է տալիս հնագիտությունը Աստվածաշնչի ուսումնասիրությանը.....13

Մաս I
Հին Կտակարան

Աշխարհի և մարդու արարչագործությունը 19
Հինկտակարանյան շաբաթը.....26
Քաղաքները, նվագարանները, մետաղները 28
Համաշխարհային ջրհեղեղը.....31
Բաբելոնյան աշտարակը 48
Առաջին մարդկանց երկարակեցությունը.....54
Աբրահամը և Ուր քաղաքը 59
Աբրահամի օրոք ապրող ժողովուրդները.....69
Հինկտակարանյան նահապետների դարաշրջանի օրենքները,
բարքերն ու սովորույթները 74
Աբրահամի պանդխտությունը.....88
Առաջին պատերազմը Սուրբ Գրքում 94
Հին Կտակարանի պատմական հավաստիության այլ ապացույցներ.....101
Սոդոմի և Գոմորի կործանումը 104
Աբրահամը և փոշտացիք.....109
Հովսեփն ու իսրայելացիները Եգիպտոսում 112
Իսրայելացիները Գեսեմ երկրում 126
Փիդոն և Ռամեսե քաղաքները.....128
«Մովսես» անունը: Աղյուսաշինությունը: Ելք գրքի փարավոնը 132
Տասը պատիժները.....137
Եգիպտոսից դեպի Սինա 142
Սալիկներ՝ հինկտակարանյան ժամանակների
տեսարանների պատկերներով 148
Հին Կտակարանի օրենքը 151
Քանանը՝ երկաթի և պղնձի երկիրը.....159
Հին Կտակարանի «մութ» տեղերի լույսը 162
Վկայության խորանը.....166
Յոթթևանի աշտանակը: Կուռքեր պաշտելու արգելքը.....168
Մովսեսի հետախույզների տեղեկությունները.....171
Քանանի նվաճումը.....173

Դատավորաց գիրքը և հնագիտությունը 176
Իսրայելը և փղշտացիք 178
Իսրայելը և քանանացիները 183
Իսրայելը, արամեացիները և մադիամացիները 186
Տապանակը Դագոնի մեհյանում: Սեղանի ավերումը 188
Սավուղ արքան և Դավիթ երաժիշտը 191
Սավուղի սարսափելի մահը 194
Սողոմոնի գահակալությունը և նրա փոխհարաբերությունները
փյունիկեցիների հետ 198
Սողոմոնի բերդաքաղաքներն ու ռազմական բազաները 200
Սողոմոնի Տաճարը 204
Սողոմոնի նավատորմը 208
Սաբայի դշխոն 210
Ասորեստանցիներն ու Սուրբ Գիրքը 213
Հերոբովամ, Ռոբովամ, Բաաս, Ասա թագավորները 217
Ամրի թագավորը 219
Աքաաբն ու Հեզաբելը 222
Հեուի և Հովասի դինաստիան 227
Խնջույքները, փղոսկրով հարդարված գահավորակներն
ու թանկարժեք նյութերը 230
Ասորեստանյան թագավորները և նրանց փոխհարաբերությունները
Իսրայելի թագավորության հետ 233
Սամարիայի անկումը 238
Հուդայի թագավորությունը 244
Եզեկիա արքան 249
Հոսիայի թագավորումն ու գործերը 281
Հեքոնիա արքան աքսորում 264
Սեդեկիան և Երուսաղեմի անկումը 267
Նինվեն՝ մեծ քաղաքը 272
Հրեաների ապրելավայրը բաբելոնյան գերության մեջ 279
Գերության վերաճած արտաքսումները 281
Եզեկիել մարգարեն 283
Երեմիա մարգարեն Եգիպտոսում 285
Նաբուգոդոնոսորն ու նրա գահաժառանգները 288
Դանիել մարգարեի գիրքը 290
Կյուրոսի՝ հրեաներին ազատագրելու հրովարտակները 304
Վերադարձ գերությունից 308
Երուսաղեմի Տաճարի վերականգնումը 310
Երուսաղեմի պարսպապատումը 316
Երուսաղեմի պարսպապատումը խափանելու փորձեր 321
Խեցեղենի տեսակներն ու մետաղադրամները 325

Ք. ա. V դ. Պաղեստինի սահմաններից դուրս ապրող հրեաները 328
Տյուրոսի ավերումը 333
Եսթերի գիրքը 335
Պտղոմեյանները: Հին Կտակարանի թարգմանությունը հունարենի.....339
Սելևկյաններն ու Մակաբայեցիները 344
Պեղածոներ Բեթսուրից, Գազերից, Մարեսայից և Սամարիայից.....347
Գտածոներ Սյուքեմից, Բեթելից և Հոպպեից: Հասմոնյանների
ժամանակների մետաղադրամները.....350
Կումրանի կամ Մեռյալ ծովի ձեռագրերը 352

Մաս II
Նոր Կտակարան

Նոր Կտակարանի հնագիտության վիթխարի և հարաճուն
նշանակությունը 365
Նոր Կտակարանի գրքերի ժամանակագրությունը 368
«Հերովդես արքայի օրով».....374
Հերովդես Արքեղայոսը: Հերովդես Անտիպասը.....378
Հերովդես Փիլիպպոս II-ը և Հերովդես Ագրիպպաս I-ը 381
Նոր Կտակարանի դարաշրջանի մետաղադրամները 385
Գրությունները և մակագրությունները 387
Հռոմեական դարաշրջանի պաղեստինյան դամբարանները.....390
Պոնտացի Պիղատոսն ու Տիտոսը.....393
Հերովդեսի Երուսաղեմը 397
Պաղեստինի և Ասորիքի I դարի քաղաքները 404
Ավետարան ըստ Մատթեոսի և Ղուկասի.....417
Գործք առաքելոց 429
Ավետարան ըստ Հովհաննեսի.....454
Հովհաննես Աստվածաբանի Հայտնությունը 458
Պողոս առաքյալի թղթերին վերաբերող գտածոները 468
Պապիրուսներն ու խեցեբեկորները լույս են սփռում
Նոր Կտակարանի բովանդակության վրա 472
Սուրբգրային հնագիտության ջատագովական նշանակությունը 475

Հավելված

Պաղեստինի քարտեզը.....482

Անվանացանկ 483
Տեղանունների ցանկ 493
Բովանդակություն 501

ՆԻԿՈԼԱՅ ՎԱՍԻԼԻԱԴԻՍ

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը ռուսերենից՝
Գրիգոր Դարբինյանի

Գիտական խմբագիր՝
Տ. Շահե վրդ. Անանյան
Լեզվառճական խմբագիր՝ Անահիտ Ավետիսյան

Բաժնի տնօրեն՝ Շահե Վրդ. Անանյան

Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Գևորգ եպս. Սարոյան, Զաքարիա վրդ. Բաղումյան, Գարեգին աբդ. Համբարձումյան, Ա. Մադոյան, Պ. Հովհաննիսյան, Գ. Տեր-Վարդանյան

Էջադրումը՝ Ղևոնդ քահանա Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2014

Տպագրված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարանում

Թուղթ՝ օֆսեթ 80 գր., չափը՝ 70x100 1/16,
ծավալը՝ 504 էջ, տպաքանակը՝ 300: